



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հրատարակչությունը, չհետապնդելով որևէ եկամուտ, ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի համացանցային կայքերում ներկայացնում է իր հայագիտական հրատարակությունները: Գիրքը այլ համացանցային կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ հրատարակչության համապատասխան թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

ՄԱՐԳԻՍ ԱՅՎԱԶՅԱՆ

ՈՒՐԱՐՏԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ

ԲԱՆԱՊԱՇԱՐ

ԵՎ

ՊԱՏՄԱՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ – 2008

ՀՏԴ 809.198.1
ՊՄԴ 81.23
Ա 551

This publication has been supported by a subvention from the
"SPURK-DIASPORA"
Organization (Los Angeles, USA)



SPURK-DIASPORA
ORGANIZATION
Tel: (818)234-1594

Սարգիս Այվազյան

Ա 551 Ուրարտերեն-հայերեն. բառապաշար և պատմահամեմատական
քերականություն: - Եր.: ԵՊՀ հրատ., 2008, 400 էջ:

Աշխատությունը հեղինակի «Վանի սեպագիր արձանագրությունները» առաջին (2003 թ.) և երկրորդ (2006 թ.) գրքերի վերաշարադրանքն է՝ լրացումներով և ուղղումներով համդերձ: Այն պարունակում է նաև բազմաթիվ նոր տվյալներ և դիտողություններ. աշխատությունում ամբողջությամբ նորովի է ներկայացված հնչյունաբանության բաժինը:

Աշխատությունը նվիրված է Վանի սեպագիր արձանագրությունների լեզվի՝ ուրարտերենի և հայերենի փոխհարաբերությունների խնդրին: Մանրամասն քննարկվում են ընդհանուր բառարմատները և ուրարտերենի քերականական և հնչյունական համակարգերը՝ հայերենի համեմատությամբ: Փորձ է արվում ներկայացնելու այս լեզուների պատմահամեմատական քերականությունը՝ ելնելով այն տեսակետից, որ ուրարտերենի հիմքում ընկած է հայերենը:

Նախատեսված է մասնագետների՝ հայագետների, ուրարտագետների և Վանի սեպագիր արձանագրություններով հետաքրքրվող ընթերցողների համար:

ՊՄԴ 81.23

ISBN 978-5-8084-0989-7

© Ս. Ռ. Այվազյան, 2008 թ.

ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ

1. **Ընդհանուր տեղեկություններ:** Ուրարտերենով գրված տեքստերը մեզ են հասել Վանի սեպագիր արձանագրությունների (այսուհետև՝ Վանի արձանագրություններ)¹ միջոցով, որոնք քվազվում են մ.թ.ա. 9-6-րդ դարերով: Առաջին արձանագրությունները գրված են ասուրերեն, հետագայում՝ սկսած Իշպուիհնի I-ից, հիմնականում միայն ուրարտերեն: Ցավոք, երկլեզվյա արձանագրությունները շատ քիչ են: Փաստորեն մինչև այժմ հայտնի են երկու այդպիսի արձանագրություն², որոնք մեզ են հասել վնասված վիճակում, և մեկ, այսպես կոչված, քվազի երկլեզվյա արձանագրություն, որում տեքստը մասամբ գրված է ասուրերեն, մասամբ՝ ուրարտերեն:

Մեզ հայտնի արձանագրությունների ընդհանուր քիվը մոտ 600 է, որոնց մի զգալի մասը ընդամենը մի քանի բառ պարունակող մեկ տողանոց, հիմնականում կրկնվող արձանագրություններ են՝ գրված զանազան առարկաների վրա: Չզալի քիվ են կազմում նաև կրկնությունները³: Վանի արձանագրությունները կադապարային բնույթ ունեն, որտեղ շատ են կրկնվող արտահայտությունները: Այդ է պատճառը, որ Վանի արձանագրություններում վկայված բառապաշարը չի անցնում 300-ի սահմանը: Դրանցից միայն 200-250-ի իմաստն է քիչ քե շատ արժանահավատ ստուգաբանված, ընդ որում՝ այդ նույն պատճառով զգալի թվով քառեր հայտնի են միայն իրենց մոտավոր, բավական ընդհանուր իմաստներով⁴: Ինչ վերաբերում է արձանագրությունների

¹ Վանի բազավորությունում օգտագործվել է նաև մեհենագիրը: Այդ մասին տե՛ս Ա.Մավսիսյան, 1998:

² Խոսքը վերաբերում է Կելիշինի [KYKH 30] և Տոփուզավայի [KYKH 387] արձանագրություններին՝ ասուրական և ուրարտական զուգահեռ տեքստերով: Ինչպես նաև՝ վերջերս Մավանայից և Մերգեհ Ջարվանից հայտնաբերված Տոփուզավայի արձանագրության կրկնօրինակներին:

³ Օրինակ, 1949 թ. Կարմիր բլուրից հայտնաբերված բրոնզե քստերի վրա առկա է 67 արձանագրություններ՝ հետևյալ կարճ գրությամբ. ⁴ Sars-du-ri-(e/i) NIG [KYKH 310-376]:

⁴ Վանի արձանագրություններում վկայված քառերի առավել ամբողջական ցանկը տե՛ս Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 431-476:

գրին, ապա դրանք գրված են ասուրա-բարելական սեպագրերի նոր ասուրական տարատեսակով: Հազվադեպ օգտագործված են առավել վաղ շրջանի, ինչպես նաև՝ միայն ուրարտերենի հատուկ ձևեր (տես I.3 կետ 3)⁵:

2. Ուսումնասիրման պատմությունը: Վանի թագավորության արձանագրությունների մասին առաջինը տեղեկություններ է հաղորդում պատմահայր Մովսես Խորենացին՝ վերագրելով դրանք Ասորեստանի առասպելական թագուհի Շամիրամին⁶: 1827թ. ֆրանսիական ասիական ընկերության կողմից Վան գործուղված Ֆ.Շուլցը ընդօրինակում է մոտ չորս տասնյակ արձանագրություններ՝ դրանով իսկ հիմք դնելով Վանի՝ հետագայում ուրարտական կոչված սեպագիր արձանագրությունների գիտական ուսումնասիրման գործին: Սկզբնական շրջանում գիտնականները հայտնում էին իրարամերժ կարծիքներ: Այսպես, օրինակ՝ Ա. Մորտմանը դրանց լեզուն համարում էր հայերենը, Լ.Դե Ռոբերը այն դիտում էր որպես սեմական լեզու: XIX դարի վերջում նշանավոր ասուրագետներ Ս.Գյույարը և Ա.Սեյսը պարզում են, որ Վանի սեպագիր արձանագրությունները գրված են ասուրական սեպագրերով, որոնք այդ ժամանակ արդեն բավարար չափով հայտնի էին: Պարզվում է, որ այդ արձանագրությունների մի մասի լեզուն ասորերենն է, իսկ մյուս առավել մեծ մասին անհայտ մի լեզու, որը և հետագայում կոչվեց «ուրարտերեն»։ Ս.Գյույարը հիմնվելով վերծանման համակցման մեթոդի վրա՝ տալիս է անձանոթ լեզվի առանձին միավորների արժեքները և կատարում որոշ հատվածների մոտավոր թարգմանությունները: Շարունակելով Ս.Գյույարի գործը՝ Ա.Սեյսը թարգմանում և հրատարակում է այն ժամանակ հայտնի ուրարտական արձանագրությունները: Հետագայում հայտնաբերված ասուրա-ուրարտական երկլեզվյա արձանագրությունները հնարավորություն են տալիս ստուգելու և ճշգրտելու այդ թարգմանությունները⁷: 1900 թ. Հ.Սանդալյանը փորձ է կատարում ուրարտական արձանագրությունները հասկանալ հայերենի հիմքով՝ հրատարակելով ուրարտական արձանագրությունների իր ժամանակի առավել ամբողջական հավաքածուն հայերեն և ֆրանսերեն թարգմանություններ

⁵ Այդ մասին տես նաև И.Дьяконов, 1963, էջ 18-21:

⁶ Մովսես Խորենացի, 1981, էջ 66:

⁷ Այս մասին առավել մանրամասն տես Գ.Ջահուկյան, 1988, էջ 127-131: Վանի արձանագրությունների հայտնաբերման և վերծանման մասին տես նաև Գ.Ղափանցյան, 1940, էջ 5-10 և այլն:

րով⁸: Սակայն վերջինիս տեսակետը մերժվում է Ա.Սեյսի, Հ.Աճառյանի կողմից⁹ և գիտության մեջ հաստատվում է ուրարտերենի՝ որպես առանձին լեզու լինելու տեսակետը, որը ոչ մի առնչություն չունի հայերենի հետ: Միևնույն ժամանակ տարածվում է այն կարծիքը, թե ուրարտերենը գտնվում է մերձավոր ցեղակցական կապի մեջ խուտիերենի հետ՝ կազմելով այսպես կոչված խուտիա-ուրարտական լեզվաընտանիքը: Խորհրդային գիտնականներից այս տեսակետը առավել ակտիվ ձևով պաշտպանում են Ի.Դյակոնովը, Մ.Խաչիկյանը¹⁰:

3. Հայերենի հետ լեզվական առնչությունների հարցը և սույն աշխատության նպատակները: Ա.Մորտմանից և Հ.Սանդալյանից զատ տարբեր ժամանակաշրջաններում հայ-ուրարտական լեզվական ընդհանրություններով զբաղվել են բազմաթիվ այլ գիտնականներ: Նշենք Գ.Ղափանցյանի, Հ.Աճառյանի, Գ.Ջահուկյանի, Ն.Հարությունյանի, Մ.Խարայեկյանի, Ի.Դյակոնովի, Ռ.Իշխանյանի, Վ.Սարգսյանի, Հ.Կարապետյանի, Մ.Խաչիկյանի և այլոց անունները, որոնք իրենց մի շարք աշխատություններում տարբեր առիթներով անդրադարձել են հայ-ուրարտական առնչություններին՝ մատնանշելով այդ երկու լեզուներին հատուկ բազմաթիվ ընդհանրություններ՝ հիմնականում մնալով սակայն ուրարտերենի՝ որպես հայերենից զատ առանձին լեզու լինելու տեսակետի սահմաններում: Մեկնաբանելով առկա ընդհանրությունները հիմնականում սոսկ որպես պարզ փոխառություններ՝ նրանք շեշտը դնում են ուրարտերենի՝ հայերենի վրա ունեցած հնարավոր ազդեցության վրա:

Այս հարցի վերաբերյալ առանձին կարծիք է հայտնել Գ.Ղափանցյանը: Ելնելով ասիանիկ կոչված լեզվախմբի գոյության տեսակետից՝ նա հայերենը համարում է խառնածին լեզու՝ ուրարտական ենթաշերտով¹¹: Քերականական և տիպարանական ընդհանրություններից նա մասնավորապես նշում է երկու լեզուներում x-ով սկսվող բառերի բացակայությունը, սեռական հոլովի –i մասնիկի առկայությունը ուրարտերեն

⁸ J.Sandalgian, 1900:

⁹ Տես Հ.Աճառյան, 1940, I, էջ 172-190:

¹⁰ Տես И.Дьяконов „Сравнительно-грамматический обзор хурритского и урартского языков“, ПС, 1961. նույնի „Хуррито-урартский и восточнокавказские языки“, ДВ, 3, 1978 և այլն; М.Хачикян, 1985:

¹¹ Տես Г.Капанян, 1975, էջ 212-213:

նում¹² և այլն: Ռ.Իշխանյանը փորձելով տարբերել Վանի թագավորության բնակիչների խոսակցական և Վանի արձանագրությունների լեզուն, վերջինս կոչում է «նոր խոտիերեն» համարելով այն մեռած լեզու արդեն իսկ Վանի թագավորության շրջանում¹³: Իսկ Վ.Սարգսյանը ելնում է այն տեսակետից, որ բասկերի նախնիները գաղթելով Հայկական Լեռնաշխարհից և/կամ հարակից շրջաններից՝ իրենց հետ տարել են տեղի լեզվանյութը, որը բասկերենում, շատ դեպքերում, պահպանվել է համեմատաբար անխաթար վիճակում՝ հատկապես հատուկ անուններում: Նա մատնանշելով, որ հայերենը արագ փոփոխվող լեզու է՝ հատկապես քերականությունը, առաջարկում է նախագրային շրջանի հայերենի վերականգման համար գործածել լեզվի ներքին վերականգման մեթոդը՝ զուգորդելով այն բասկերենի և ուրարտերենի տվյալների հետ (որոնք նա համարում է հայերենին ցեղակից լեզուներ)՝ կատարելով ուրարտերեն-հայերեն-բասկերեն եռակողմ համեմատում [Վ.Սարգսյան, 1998]: 2001-ին հայերենի և ուրարտերենի առնչությունների հարցին կրկին անդրադարձավ Գ.Ջահուկյանը: Նա հետազոտելով ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերը՝ կարծիք հայտնեց, թե՛ չի բացառվում, որ ուրարտերենի հիմքում ընկած է հայերենը [ՊԲՀ, 2001, 1, էջ 125-129]:

Ինչ վերաբերում է հայերենի և ուրարտերենի քերականական ընդհանրությունների համակարգված ուսումնասիրմանը, ապա մասնագրականություն բացակայում է: Փաստորեն մինչև այժմ մասնագետները բավարարվել են միայն այս երկու լեզուների քերականական նմանություններին կամ տարբերություններին վերաբերող ընդհանուր բնույթի հատուկեմտ դիտողություններով և տիպաբանական ընդհանրությունների մատնանշումով: Նման մոտեցմանը նպաստել է գիտական շրջանակներում կարծրացած այն կարծիքը, որ այս երկու լեզուները միանգամայն տարբեր են, պատկանում են տարբեր լեզվաընտանիքների և հետևաբար նմանությունները կարող են վերաբերել սոսկ բառապաշարին՝ պայմանավորված փոխադարձ փոխառություններով: Չեռնամուխ լինելով սույն աշխատությանը՝ նպատակ դրվեց ոչ միայն անդրադառնալ այս երկու լեզուների զուգահեռ բառարմատներին և հարակից

հարցերին, այլև մանրամասն քննարկել քերականական ընդհանրությունները և տարբերությունները: Աշխատության վերջում, որպես օրինակ, կանդրադառնանք ուրարտական մի քանի արձանագրությունների և նրանց առանձին հատվածների ընթերցմանն ու թարգմանություններին, որոնք հիմնված են հայ-ուրարտական լեզվական ընդհանրությունների և դրանցով պայմանավորված ուրարտերենի որոշ ճշգրտումների վրա: Նման ընթերցումների գետնդուրը սույն գրքում պատահական չէ և կոչված է ամրապնդելու մեր այն տեսակետը, ըստ որի՝ հնարավոր է, որ իրականում ուրարտերենը հնագույն հայերենի մի բարբառ է: Համեմայն դեպս, ինչպես կտեսնենք, հայ-ուրարտական լեզվական ընդհանրությունները հնարավոր չէ պայմանավորել սոսկ փոխառություններով կամ ազդեցություններով:

4. Աղբյուրները: Աշխատությունում հիմնականում օգտվել ենք տարբեր ժամանակաշրջաններում ուսումնասիրողների կողմից հրատարակված Վանի արձանագրությունների վանկագիր լատինատառ տառադարձություններից (գրադարձություններից), որոնք, որպես կանոն, ուղեկցվում են հրատարակչի կողմից արված թարգմանություններով և մանրամասն մեկնաբանություններով¹⁴: Նման տառադարձությունը հնարավորություն է տալիս անհրաժեշտության դեպքում վերականգնել բուն սեպագրերը: Որոշ դեպքերում, արձանագրությունների վնասված լինելու կամ այլ պատճառներով առաջացած կասկածելի հատվածների ճշգրտման համար, օգտվել ենք ձեռքի տակ եղած սեպագրի բնագրերի լուսանկարներից և/կամ գծանկարներից: Ինչ վերաբերում է ուրարտերենի քերականության լուսաբանմանը, ապա այստեղ օգտվել ենք ինչպես ավանդական, այնպես էլ նոր ուղղության ներկայացուցիչների աշխատություններից:

5. Դժվարությունները: Հայերենի և ուրարտերենի քերականության, և ընդհանրապես այս երկու լեզուների համեմատության հարցում առկա դժվարությունները կարելի է բաժանել երեք հիմնական խմբի:

ա) Ուրարտական սեպագիր արձանագրություններում գործածվող ասուրա-բաբելական գրի անկատարություն, որը հիմնականում պայմանավորված է այդ համակարգի հնչյունական կազմի սակավությամբ (զանազանում է ընդամենը 23-24 հնչյուն) և անմիարժեքությամբ (պոլի-

¹² Այս դիտողությունը հետագայում անարդարացիորեն անհրաժեշտ ուշադրության չի արժանացել. ըստ երևույթին դրան նպաստել է այն հանգամանքը, որ մասնագետները ուրարտերենում -i-ի կողքին որպես սեռական հոլովի մասնիկ առանձնացնում են նաև -e-ն և -e1-ն (մանրամասն տես՝ V.2.5):

¹³ Այս մասին տես Ռ.Իշխանյան, 1994:

¹⁴ Հիմնականում օգտվել ենք Ն.Հարությունյանի և Գ.Մելիքիշվիլու, իսկ նամակների և փաստաթղթերի դեպքում՝ նաև Ի.Դյակոնովի հրատարակած ուրարտական արձանագրությունների առավել ամբողջական դիվաններից: Անհրաժեշտության դեպքում օգտվել ենք նաև այլ աղբյուրներից:

մորֆիզմով), երբ յուրաքանչյուր սեպագիր նշանին կարող է համապատասխանել մի քանի վանկային արժեք և՛ հակառակը:

բ) Ուրարտերենի մեզ հասած և հասկանալի քերականական նյութի աղճատվածությունը՝ պայմանավորված արձանագրությունների ոճական միատիպությամբ և կաղապարայնությամբ: Դա հատկապես զգալի է բայերի խոնարհման համակարգի պարզաբանման հարցում:

գ) Հայերենի բազմաթիվ քերականական ձևերի նախնական վիճակի (խոսքը ուրարտական սեպագրերի ստեղծման ժամանակաշրջանում հնարավոր վիճակի մասին է) վերականգնման անհնարիություն և/կամ անհուսալիություն: Այս երևույթը հիմնականում պայմանավորված է ուրարտերենի և հին հայերենի (այսուհետև՝ հայերենի)¹⁵ մեզ հասած գրաբար գրավոր աղբյուրների միջև առկա ժամանակային մեծ տարբերությամբ (1000-1300 տարի), այդ ընթացքում հայերենի կրած զգալի փոփոխություններով, հատկապես քերականական համակարգում, և զգալի քանակի օտար տարրերի ներմուծմամբ: Այս ամենի արդյունքում հայերենի բազմաթիվ քերականական ձևերի ծագումը և նախագրային շրջանի վիճակ(ներ)ը հայագիտական շրջանակներում մինչ այժմ մնում է(են) անհայտ կամ վիճելի:

6. Համեմատման մեթոդիկան: Եթե խոսենք հայերենի և ուրարտերենի համեմատության մասին՝ նկատի ունենալով միևնույն լեզվի տարբեր ժամանակային վիճակները, և եթե առաջին վիճակը (ուրարտերենը) ներկայացնենք b-ով, իսկ երկրորդը (հայերենը)՝ c-ով, ապա ընդհանուր առմամբ պետք է նկատի ունենալ հետևյալ հնարավոր իրավիճակները. 1) c=b, 2) b→c և 3) c≠b: Սակայն իրականությունը կարող է տարբերվել վերոնշյալ պատկերից. այստեղ պետք է նկատի ունենալ նաև տարածքային (աշխարհագրական) գործոնը, որի արդյունքում c և b վիճակների միջև հնարավոր են նաև բարբառային տարբերություններ: Բարբառային տարբերություններ են առկա հենց նաև c-ի և b-ի սահմաններում¹⁶: Տեսականորեն համեմատությունը հնարավոր է անցկացնել b-ից c-ն կամ հակառակը, ինչպես նաև փորձել շարժվել երկու ուղղությամբ էլ: Եթե նկատի ունենանք հայերենի հնդեվրոպական ծագումը, ապա նշված երկու վիճակներին պետք է հավելել նաև երրորդը՝ հնդեվրոպական նախալեզուն: Եթե այն նշենք a-ով, ապա հնարավոր են

հետևյալ իրավիճակները. 1) a=b=→c, 2) a→b=→c, 3) a→b, 4) b→c: Նկատի ունենալով մեզ հասած ուրարտական տեքստերի ոճական միատիպությունը և դրանով պայմանավորված առկա քերականական նյութի սահմանափակությունն ու հատվածայնությունը՝ ուրարտերենը և հայերենը համեմատելիս՝ ուրարտերենից շարժվել ենք դեպի հայերենի նյութը (b=→c), հնարավորության դեպքում մասնակիորեն օգտվել ենք հայերենի համեմատական քերականության ընձեռած նյութից՝ տալով նաև հնդեվրոպական կամ ցեղակից լեզուների վիճակը: Ուրարտերենի՝ որպես ենթադրվող հնդեվրոպական լեզվի (a→=b) առանձին դիտարկումներ չեն արվել: Այսպիսով, մեր կողմից ընտրված մեթոդիկան անփոփոխ ներկայացնում է հետևյալ սխեման:

ա) Նախ տրվում է ուրարտերենի այս կամ այն քառարմատի, ձևային կամ քերականական կարգի վերաբերյալ մասնագիտական գրականությունում եղած պատկերը, հակասությունների կամ տարածայնությունների դեպքում տվյալ հարցը մանրամասն քննարկվում է ուրարտական տեքստերում առկա համապատասխան վկայությունների համատեքստում: Անհրաժեշտության դեպքում տվյալ հարցի վերաբերյալ ներկայացվում է նաև մեր տեսակետը՝ մանրամասն պարզաբանումներով և հիմնավորումներով.

բ) Ներկայացվում են հայերենի տվյալները: Զննարկվող նյութը համեմատվում է ինչպես ձևի, այնպես էլ (քերականական) իմաստի առումով: Նկատի ունենալով, որ ուրարտական շրջանում հայերենի շատ տարբեր կարող են ներկայացված լինել իրենց հին ձևերով, անհրաժեշտության դեպքում տրվում է նաև համեմատական լեզվաբանության, լեզվի ներքին վերականգնման կամ այլ մեթոդներով վերականգնված հայերենի նախնական վիճակը:

գ) Հնչյունական համապատասխանությունների հարցը լուծվում է ելնելով մեզ հայտնի ուրարտ. տեղանունների և առավել հուսալի ստուգաբանվող հասարակ անունների հայերեն տարբերակների հետ համադրմամբ (մանրամասն այս մասին տես I.3 և II.4):

դ) Որպես կանոն, համեմատվում է միայն հայերենի և ուրարտերենի նյութը այլ լեզուների հետ (այդ թվում և խոտիերենի, որի հետ, հատկապես հին խոտիերենի, ուրարտերենն ունի որոշակի նմանություններ), համեմատություններ կատարվել են միայն առանձին դեպքերում¹⁷:

¹⁵ Եթե խոսվում է արդի հայերենի կամ հայերենի որևիցե մի բարբառի մասին, ապա տեղում կատարվում է համապատասխան նշում այդ մասին:

¹⁶ Գ.Մելիքիշվիլին, օրինակ, ուրարտական տեքստերում առկա որոշ տարբերությունները բացատրում է «մուծածիրյան» բարբառի գոյությամբ [1960, էջ 82-89]:

¹⁷ Մասնագիտական գրականությունում հայերենի և խոտիերենի լեզվական առնչությունների հարցը նույնպես հիմնականում սահմանափակվել է որոշ զուգահեյությունների

ե) Տրվում է ամփոփ եզրակացություն քննարկվող նյութի և կատարված համեմատության վերաբերյալ:

7. **Տառադարձությունը և հնչյունադարձությունը:** Տառադարձման հարցում, խառնաշփոթից խուսափելու նպատակով, ուրարտական տեքստերի որևիցե մի հատվածի կամ առանձին բառերի մեջբերումները ներկայացվում են տվյալ հեղինակի (հրատարակողի) կողմից տրված տառադարձությամբ և քարգմանությամբ՝ առանց որևէ փոփոխության, իսկ նյութի վերաշարադրանքի դեպքում՝ ըստ մեր կողմից ընդունված ձևի: Ընդհանուր առմամբ աշխատությունում գործածվել է երեք տիպի տառադարձություն. 1) ուրարտերենի համար ավանդաբար ընդունված վանկազիր տառադարձություն (ինչպես նշեցինք, այս ձևով տրվում են հիմնականում մասնագիտական գրականությունից արված ուրարտական տեքստերի մեջբերումները), 2) մեր կողմից առաջարկվող այլընտրանքային վանկազիր տառադարձություն (այս երկուսի հիմքում էլ ընկած է ասուրա-քարեխական սեպագիր գրային համակարգի համար ընդունված լատինատառ տառադարձման համակարգը. դրանք երկուսն էլ դուրս չեն գալիս այդ համակարգի սահմաններից), 3) հնչյունական տառադարձություն (հնչյունադարձություն), որը հնարավորինս ճշգրտորեն է արտացոլում տվյալ բառի իրական արտասանումը: Այս վերջինը հնարավոր է գործածել միայն այն բառերի/ձևությունների դեպքում, որոնց հայերեն զուգահեռները հայտնի են և որոնց համապատասխան արտասանությունը տվյալ դարաշրջանում մույնպես հայտնի է: Ըստ այդմ, այն շատ դեպքերում կրում է պայմանական քնույթ: Տառադարձման/հնչյունադարձման հիշյալ ձևերը տարբերակելու համար երկրորդը տրվում է սովորական, իսկ երրորդը՝ ուղղանկյուն փակագծերում: Բերենք մի օրինակ. ուրարտ. al-zi/e-na «արձան, ժայռ» - հայ. արձան, ի-ա «արձան, ժայռ» բառի համար.

ուսումնասիրմամբ՝ որպես կանոն դրանք դիտարկելով ուրարտերենի միջոցով հայերենին անցած բառաձևեր: Մինչդեռ հայ-խուռիական լեզվական առնչությունների կանոնավոր ուսումնասիրումը կարող է ոչ միայն զգալիորեն օժանդակել հայ-ուրարտական լեզվական առնչությունների պարզարանմանը, այլև կարևոր դեր խաղալ հայագիտության և խուռագիտության մեջ:

1) al-zi-na - ավանդական վանկային տառադարձություն (գրադարձություն)¹⁸,

2) (al-ze-na) - առաջարկվող վանկային տառադարձություն (գրադարձություն),

3) [arjēna] - հնչյունադարձություն:

Ստորև ներկայացնում ենք ուրարտերենի հնչյունադարձման համար մեր կողմից գործածված նշանները՝ հայերենի համապատասխան տառահնչյուններին զուգահեռ:

Աղյուսակ 1

Ուրարտերեն	Հայերեն	Ուրարտերեն	Հայերեն
a	ա	z	զ
u	ու	ž	ժ
e	ե	s	ս
i	ի	š	շ
o	ո	j	յ
ə	ը	č	չ
ē, ei	է	č	ճ
b	բ	j	ձ
p	պ	c	ց
p̄	փ	s	ծ
φ	ֆ/ (< *p)	l	լ
d	դ	ł	ղ
ł	տ	r	ր
t	թ	ř	ռ
g	գ	m	մ
k	կ	n	ն
q	ք	y	յ, (զ < *y)
h	հ	w	ւ, (զ < *u)
x	խ	v	վ

¹⁸ Նոր սերնդի շատ ուրարտագետներ մույնպես մերժում են ավանդական տառադարձությունը՝ առաջարկելով այլընտրանքային տարբերակներ: Տե՛ս, օրինակ, Ի. Դյակոնովի աշխատությունները [1971, էջ 24-58; ДБ, 5, էջ 133-140] և այլն:

I. ԳԻՐ

I.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սեպագիր համակարգը ստեղծել և առաջինը կիրառել են շումերները: Հետագայում այն փոխառնվեց տարածաշրջանի մի շարք այլ ժողովուրդների կողմից, որոնցից յուրաքանչյուրը դա հարմարեցրեց իր լեզվի պահանջներին՝ կատարելով որոշակի փոփոխություններ այդ համակարգում: Ուրարտացիները առաջին անգամ այդ համակարգը սկսեցին կիրառել մ.թ. IX դ.-ից՝ սկզբում գործածելով նոր ասուրերեն լեզուն, այնուհետև՝ հիմնականում ուրարտերենը: Հիմնվելով աքքադական (ասուրա-բաբելական) սեպագիր համակարգի վրա և պարզեցնելով այն՝ նրանք ուրարտերեն լեզվի համար ստեղծեցին իրենց սեփական սեպագիր համակարգը, ինչը և կիրառեցին մինչև Ուրարտուի անկումը (VI դ. մ.թ.): Նկատի առնելով այս հանգամանքը՝ մենք ստորև համառոտակի կանդրադառնանք աքքադական (ասուրա-բաբելական) սեպագիր համակարգին:

I.2 ԱԶԶԱԳԱԿԱՆ (ԱՍՈՒՐԱ-ԲԱԲԵԼԱԿԱՆ) ՍԵՊԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՆՉՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նշվեց, աքքադացիները սեպագիր գրային համակարգը փոխ են առել շումերներից: Վերջիններս, սեպագիր գրային համակարգը ստեղծելիս, յուրաքանչյուր առարկա/երևույթ արտացոլող պատկերանշանի (հետագայում՝ սեպանշանի) տակ հասկանում էին մի քանի գաղափար/երևույթ, ինչի արդյունքում յուրաքանչյուր սեպանշան ուներ արտասանման մի քանի տարբերակ: Աքքադացիները այն փոխ առնելով շումերներից՝ սեպանշաններից շատերին հավելեցին նաև համապատասխան առարկաների/երևույթների իրենց լեզվին համապատասխանող տարբերակները: Այսպես, օրինակ, շում. «տուն» գաղափարին համապատասխանող սեպանշանը, որը շումերերենում տառադարձվում է é, աքքադերենում ստացավ նաև bit (աքք. bitum «տուն») վանկային արժեքը: Խուլ բաղաձայնները ձայնեղներով, իսկ ձայնեղները խուլներով փոխարինելով՝ նրանք էլ ավելի բազմացրին ամեն մի սե-

պանշանին համապատասխանող հնչյունական (վանկային) արժեքների թիվը: Օրինակ՝ վերոհիշյալ bit-ին հավելեցին նաև pit, pid և bid արժեքները: Աքքադացիները շատ դեպքերում կատարեցին նաև ձայնավորների փոխարինում, ինչի արդյունքում, օրինակ, luh-ին համապատասխանող սեպանշանը ստանում է նաև՝ laḥ, liḥ արժեքները: Մյուս կողմից՝ շումերերենին հատուկ էր համանունների առատությունը, ինչի արդյունքում տարբեր սեպանշանները կարող էին արտասանվել միակերպ ինչը նույնպես, ժառանգվում է աքքադական սեպագիր համակարգի կողմից: Շումերները գաղափարագիր գրված բառերը կոնկրետացնելու նպատակով հաճախ գործածում էին հատուկ որոշիչ նշաններ (դետերմինատիվներ), որոնք դրվում էին գաղափարագիր բառի առջևից կամ վերջից և բնորոշում էին այն խումբը/տեսակը, որին պատկանում էր տվյալ բառը (բույս, փայտե առարկա, թռչուն, մարդ և այլն): Աքքադացիները շումերներից փոխառնելով նշված հատկությունը և՛ էլ ավելի առաջ գնացին այս հարցում՝ գաղափարագրերին հաճախ հավելելով նաև տվյալ բառի հնչյունագիր վերջավորությունը: Դա հնարավորություն տվեց ճշգրտելու նաև, օրինակ, տվյալ գաղափարագիր բառի հոլովը/բայածևը:

Արդյունքում աքքադական սեպագիր համակարգը ստանում է հետևյալ հիմնական հատկությունները:

1. Սեպագիր նշանների մեծ մասը կարող են ըմբռցվել ինչպես գաղափարագիր (շումերոգրամ) և/կամ որոշիչ նշան, այնպես էլ համապատասխան հնչյունական (վանկային) արժեքով: Յուրաքանչյուր սեպանշան կարող է ունենալ կամ ձայնավորի՝ a, i, e, u, և /կամ բաղաձայն(ներ)ով և ձայնավորով կազմված c[onsonent]v[ocal], vc, cvc տեսքի հնչյունակապակցության (վանկի) արժեք(ներ):

2. Սեպանշանների մեծ մասին հատուկ է բազմանշանակությունը, այսինքն յուրաքանչյուր սեպանշանին համապատասխանում է մի քանի, երբեմն մեկ տասնյակից ավելի հնչյունական (վանկային) արժեքներ: Եվ հակառակը՝ միևնույն վանկը կարող է արտահայտվել տարբեր սեպագիր նշաններով: Նման վարքագիծը հատուկ է սեպագիր լեզուների մեծ մասին: Այսպես, օրինակ, միևնույն սեպանշանը կարելի է կարդալ ինչպես du, այնպես էլ՝ tù, tû, gub, kub, qub ... և հակառակը՝ du-ի կողքին կա նաև՝ dû, dù, du₄, ... և այլն (համարակալումը կատարվում է ըստ վկայման հաճախականության):

3. Փակ վանկերի վերջին բաղաձայնը հերթագայվում է նույն շարքի

այլ հնչյուններով (օրինակ՝ *bad=bač=bat*, *ad=ač=at* և այլն): Այլ դիպքերում նման հերթագայումը պարտադիր չէ և կախված է կոնկրետ նշանից և գործածման ժամանակաշրջանից, օրինակ՝ *tar=čar=dar* =*tír=čír*, *ta=dá=čá*, *tur=čùr* և այլն:

Փաստորեն, գործնականում, շատ բաղադրյալներ անհնար է տարբերել իրարից: Այսպես, գրեթե միշտ *d* հնչյունը պարունակող հնչյունախմբերը (վանկերը) արտացոլող նշաններում *d*-ի փոխարեն նույն հաջողությամբ կարելի է կարդալ *t* (հաճախ նաև *t*) և՛ հակառակը: Տ-ն հիմնականում զուգորդում է *s*-ին, *b*-ն՝ *p*-ին, *z*-ն՝ *s*-ին և *š*-ին և այլն:

4. Ցանկացած բաղադրյալով և *i*-ով կազմված վանկերը (*ic*, *ci*) արտացոլող նշանները ունեն նաև *e*-ով տարբերակը: Օրինակ՝ *ti=te*, *li=le*, *ri=re*, *ir=er*, *iš=eš*₁₅ և այլն:

5. *Cvc* տեսքի փակ վանկերը (օրինակ *qub*-ը) գրում կարող են ներկայացվել նաև *cv-vc* (*qu-ub*) ձևով, որը արտասանվում է *cvc* (*qub*):

6. Գաղափարագիր գրված բառերը կոնկրետացնելու նպատակով գործածվում են հատուկ որոշիչ նշաններ (դետերմինատիվներ), որոնք դրվում են գաղափարագիր բառի առջևից կամ վերջից: Այդ նույն նպատակով դրանց հաճախ հավելվում է նաև տվյալ բառի հնչյունագիր վերջավորությունը¹⁹:

1.3 ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՄԵՊԱԳԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուրարտական սեպագիր համակարգը ստեղծված լինելով աքքադական (նոր ասորական) նախատիպի հիման վրա՝ նրանից ժառանգել է հիմնական հատկությունները: Այնուամենայնիվ այն որոշակիորեն տարբերվում է աքքադականից (առավել պարզ է): Ուրարտական սեպագիր համակարգին հատուկ են հետևյալ հիմնական հատկությունները/առանձնահատկությունները:

1. Ուրարտական սեպագրերը իրենց ձևով մեծ մասամբ նմանվում են նոր ասորական սեպագրերին: Մակայն արձանագրությունների մեծ մասում (դրանք հիմնականում քարի վրա գրված արձանագրություններն են), ի տարբերություն աքքադականի, սեպանշանների սեպերը չեն

հատվում: Աքքադական սեպագիր համակարգում գործածվող ավելի քան 600 սեպանշաններից ուրարտ. տեքստերում վկայված են մոտ 200-ը (տեսականորեն, իհարկե, ուրարտ. տեքստերում կարող է գործածվել ցանկացած նշան):

2. Ուրարտական սեպագրերում գերակշռում են *CV* տեսքի սեպանշանները (մոտ 60): Նվազ հազվադեպ են *CVC* (որպես կանոն, վկայված են միայն ձայնորդով կամ Տ-ով վերջացողները) և *VC* տեսքի սեպանշանները: Ուրարտական սեպագրերում բացակայում են *vk*, *ih*, *uh*, *im*, *um*, *en*, *in*, *un* և *ut* նշանները, որոնք սովորական են ասորերենի համար: Չայնավորների համար գործածվում են *a*, *i*, *e*, *u* և *ú* նշանները:

Ուրարտական սեպագիր համակարգին, ինչպես և աքքադականին, հատուկ է սեպանշանների բազմանշանակությունը (թեև առավել նվազ ձևով): Օրինակ *hi/e*-ին համապատասխանող սեպանշանն ունի նաև *ti/é* և *tí/é* ընթերցումները, *gu*-ինը՝ *qú*, *ár*-ինը՝ *ub*, *ku*-ինը՝ *šù*, *tuš* և այլն: Մյուս կողմից, ուրարտերենում նույնպես, ինչպես որ աքքադերենում, միևնույն ձայնավոր հնչյունը կամ վանկը կարող է արտահայտվել տարբեր սեպանշանների միջոցով, օրինակ՝ *tú/tu*, *ar/ár*, *šu/šú/šù*, *he/hé*, *te/te*, *u/ú* և այլն:

3. Ուրարտական արձանագրությունները պարունակում են նաև միայն իրենց հատուկ, խիստ սակավաթիվ առանձնահատկություններ, որոնք առկա չեն ասորական գրում: Օրինակ *TUR* սեպանշանը ունի նաև *pu*_x հնչյունական արժեքը, ինչը բացակայում է մյուս բոլոր լեզուներում:

4. Ուրարտական տեքստերում հաճախակի հանդիպում են *ze-el-be* - *ze-le/i-be*, *ni-ir-be* - *ni-ri/e-be*, *ta-ar-ma* - *ta-ra-ma* - և այլ նմանատիպ հերթագայություններ: Որոշ հետազոտողներ հիմնվելով այս և որոշ այլ հանգամանքների վրա և նկատի ունենալով, որ ուրարտական տեքստերում *VC* տեսքի նշանները հազվադեպ են հանդիպում, իսկ որոշներն ընդհանրապես չեն հանդիպում (տես վերը՝ կետ 2)՝ հնարավոր են համարում, որ *CV* տեսքի նշանները ուրարտերենում ընթերցվեն նաև *VC* ձևով [G.Wilhelm, էջ 120]: Մակայն եթե վերոնշյալ օրինակների համար դա իրական է թվում, ապա նույնը չի կարելի ասել՝ *ar-a-ne/ar-ne*, *a-šá-ze-e/áš-ze-e*, *wa-(a)-al-du-/wa-la-du-*, *al-a-su-(i)-ne/al-su-(i)-ne* և այլ

¹⁹ Ասորական սեպագրերի առանձնահատկությունների մասին մանրամասն տես, օրինակ, W.Soden, 1948; J.Huehnergard, Ch.Woods, WAL(2004), էջ 220-230; Л.Липин, 1964, էջ 11-20; М.Хачикян, 1985, էջ 23-32 և այլն:

նմանօրինակ հերթագայումների համար²⁰: Ինչ վերաբերում է ^{URU}Er-e-bu-ne/^{URU}Er-bu-ne, ^MEr-e-ku/^MEr-ku, qi-ra/qi-ú-ra և այլ նմանօրինակ հերթագայումներին, ապա այստեղ ամենայն հավանականությամբ գործ ունենք հնչյունափոխության հետ (տե՛ս II.3):

5. Ուրարտական արձանագրություններում, ինչպես որ արքայականում, գաղափարագիր գրված բառերը կոնկրետացնելու նպատակով գործածվում են հատուկ որոշիչ նշաններ (դետերմինատիվներ), ինչպես նաև հնչյունագիր հավելումներ: Վերջիններս կցվում են գաղափարազրին՝ վերջից:

6. Ուրարտական արձանագրություններում տողադարձ չի թույլատրվում, իսկ տողերը, իբրև կանոն, լրացվում են ամբողջությամբ, այսինքն՝ դատարկ տարածություն տողավերջում նույնպես չի թույլատրվում: Այս պահանջները պահպանելու նպատակով ուրարտական արձանագրություններում ձայնավորները հաճախ կրկնվում են, անկախ տվյալ ձայնավորի կրկնակի, երկար կամ կարճ լինելուց, օրինակ՝ ma-ni-ni/é և ma-a-ni-ni/é-e, ^MMe/i-nu-(ú)-a և ^MMe/i-i-nu-a և այլն: Այս հանգամանքը հաճախ թույլ է տալիս ճշգրտել շատ ուրարտական բառերի տառադարձումն այն դեպքերում, երբ առկա է անմիարժեքություն՝ պայմանավորված նշանների երկդիմությամբ: Օրինակ, բերված բառերում ma-a-ni-ni/é-e և ^MMe/i-i-nu-a տարբերակների առկայությունը թույլ է տալիս դրանք տառադարձել համապատասխանաբար mani=ne և ^MMinua ճշգրիտ ձևերով՝ խուսափելով հնարավոր անմիարժեքությունից՝ պայմանավորված me/i և ni/é նշանների երկդիմությամբ: Իսկ եթե լեզվում առկա է՝ գրում ձայնավոր նշաններով արտացոլվող հնչյուններից կազմված հնչյունախումբ, ապա այն միշտ վկայվում է երկու կամ ավելի ձայնավոր նշանների տեսքով, օրինակ՝ su-ú-i- «նետել, ձգել», -cu-ú-(ú)-le (եզ. թվի առաջին դեմքի սուբյեկտի հոգ. թվի երրորդ դեմքի օբյեկտի անցողական բայերի անցյալ կատարյալի վերջավորություն)²¹ և այլն:

7. Ուրարտերենում նկատվում է vi/v հերթագայում, ինչպես, օրինակ՝ -kai/ka (տողի), -ci-i-e/ci-e (i հոլովման բառերի տրա-

²⁰ Նման վարքագիծը հատուկ է նաև այլ սեպագիր համակարգերին: Օրինակ, խեթերենում առկա նմանօրինակ երևույթի համար տե՛ս И.Фридрих, 1952, էջ 49-50, կետ 25-26:

²¹ Ըստ երևույթին, բերված օրինակներում կրկնակի u-ն պետք է ընթերցել [-uw-] կամ [-ow-]:

կանի վերջավորություն), ainei/anei, aišei/ašei, alsuine/alsune և այլն: Այս երևույթը հավանաբար պայմանավորված է գրի առանձնահատկություններով: Ինչպես ցույց են տալիս ուր. -ka(i) - հայ. -կայ, ուր. a(i)nei/aišei - հայ. - այն /այս զուգահեռները, նման դեպքերում i-ն արտացոլում է [y] հնչյունը: Դրա օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ i հոլովման բառերի տրականի -ci-i-e/ci-e վերջավորությունն ուշ շրջանում հաճախ գրվում է -ci-ge-(e):

8. Ուրարտական տեքստերում բառավերջի ձայնավորին հաճախ հաջորդում է հավելյալ e, որի ինչ լինելը այնքան էլ պարզ չէ, ինչպես՝ uie/ui, manae/mana, au(i)e/aui և այլն (տե՛ս V.2.3 կետ 2):

9. Առայժմ պարզ չէ ուրարտական տեքստերում առկա i/g հերթագայման խնդիրը: Այն ունի հստակ արտահայտված ժամանակային բնույթ (g-ով տարբերակները հանդիպում են միայն Արգիստի²² I-ից հետո): Այստեղ, ըստ երևույթին, ի դեմս նշված հերթագայության, մենք գործ ունենք հնչյունափոխության հետ՝ դրա արտացոլմանը գրում: Սակայն չի բացառվում, որ այն հետևանք է ինչ-որ ուղղագրական քարեփոխման, թեև նման քարեփոխման որևէ այլ հետք ուրարտական տեքստերում չի նկատվում (տե՛ս II.3 կետ 6, V.2.6 կետ 2բ, V.2.8 կետ 2, VI.3 կետ 2 և ծան. 635):

²² Մովորաբար այս ամուսն արտասանվում է «Արգիշտի» կամ «Արգիշթի», մեզ առավել հավանական է թվում «Արգիստի» տարբերակը:

II. ՀՆՉՑՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

II.1 ՀՆՉՑՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ինչպես արդեն նշվեց, ուրարտական սեպագրերը ստեղծվել են ասուրական (նոր ասուրական) մախատիպի հիման վրա, այդ պատճառով մենք ստորև համառոտակի կանդրադառնանք վերջինիս:

1. Ասուրերենի հնչյունական համակարգի համառոտ քննությամբ: Ասուրական սեպագրերը զանազանում են 24 հնչյուն՝ 4 ձայնավոր (a, i, e, u), 18 քաղածայն և 2 կիսածայնավոր (տե՛ս Աղյուսակ 2): Ինչպես արդեն նշվեց սեպանշանների քազմանշանակության (պոլիմորֆիզմի) պատճառով ասուրական տեքստերում շատ դեպքերում հնարավոր չի լինում ճշտել իրական հնչյունները: Ընդհանուր առմամբ ասուրերենում նկատվում են d/ժ/տ (d-ն և ժ-ն գործնականում գրեթե չեն տարբերվում), b/բ, g/k/q, s/z/ժ, շ/s և այլ նշանների հերթագայումներ: Որոշ դեպքերում նշված նշանները ընդհանրապես չեն զանազանվում (տե՛ս I.2): Ինչ վերաբերում է ասուրերենի այլ հնարավոր հնչյունների քանակին և գրում նրանց արտացոլմանը, ապա այս հարցը մինչ այժմ մնում է ասուրերեն լեզվի ուսումնասիրության առավել խնդրահարուցներից մեկը: Դատելով եղած տվյալներից՝ ասուրական գրում [h]-ն արտացոլվում է կամ Կ-ով կամ գրոյով (չի գրվում): Օտար անունների [o] հնչյունը (առանձին կամ քաղածայն(ներ)ի հետ) արտացոլվում է u-ով: Աֆրիկատների համար հիմականում գործածվում են միևնույն նշանները՝ z, s, ժ: Կիսածայնավոր [y]-ի համար գործածվում է i և a նշանների հարադրումից կազմված յa նշանը (երկրարքառը), որն ունի յa, յu, յi, յe ընթերցումները: [W]-ն փոխանցվում է հատուկ նշանով, որը հավասարապես կարող էր ընթերցվել՝ wa, wi, we և wu (երբեմն մակ՝ aw, iw, ew և uw): Ուշ շրջանում, կապված ասուրերենում [w] հնչյունի կորուստի հետ, այն ընթերցվում է

pe/i, իսկ օտար անուններում [w]-ն հաճախ փոխանցվում է ն-ով և այլն²³:

Աղյուսակ 2

Ասուրական սեպագրերում արտացոլվող քաղածայն հնչյունները

Արտասանության տեղը	Արտասանության ձևը		Աղմկային				Չայնորդներ			
	պայթականներ		շփականներ		ոգային	կորային	կիսածայնավոր	փրկանոցներ		
	խուլ	ձայնեղ	խուլ	ձայնեղ						
Կրկնաշրթնայիններ	p	b			m		w			
Ատանցայիններ	հասարակ	t	d	s	z	n	l	r		
	էմֆաթիկ (emphatic)	ʈ		ʂ						
Ջնայիններ	միջնակեզվային			ʃ, ʒ			j			
	ետնակեզվային	k	g	h						
	էմֆաթիկ (emphatic)	q								

2. Ուրարտերենի հնչյունական համակարգին վերաբերող ընդհանուր տեղեկություններ: Ուրարտական սեպագիր համակարգը զանազանում է նույնքան հնչյուններ, որքան նրա ասուրական մախատիպը (24 հնչյուն՝ 4 ձայնավոր (a, i, e, u), 18²⁴ քաղածայն և 2 կիսածայնավոր, տե՛ս վերը՝ կետ 1): Սակայն քազմաթիվ նշանների համար, հատկապես քաղածայնների դեպքում, պարզ չէ, թե վերջիններս ինչպիսի հնչյունական արժեք(ներ)ով են հանդես գալիս: Այդ պատճառով ուրարտերեն քաների ներկայումս ընդունված արտասանությունը խիստ պայմանական է: Իրականում սեպագիր լեզուների դեպքում գրավոր տեքստերի առկայությունն ինքնին դեռևս խիստ անբավարար է տվյալ լեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրման հարցում: Ուստի բուն արձանագրություններից ստացված տվյալներին զուգահեռ՝ հատկա-

²³ Մանրամասն ասուրերենի հնչյունական համակարգի մասին տե՛ս, օրինակ, J.Huehnergard, Ch.Woods, WAL(2004), էջ 230-241; Л. Липин, 1964, էջ 26-43; М. Хачикян, 1985, էջ 23-27 և այլն:

²⁴ Ուրարտական գրի կողմից ասուրական խուլ շփական ճ-ի զանազանման հարցը պարզ չէ:

պես կարևորվում է տվյալ լեզվի համեմատումը նրան ցեղակից՝ կենդանի կամ հայտնի հնչյունական հստակ համակարգով լեզուների հետ: Խոռոչները, որը ըստ ընդունված կարծիքի համարվում է ուրարտերենի ցեղակից, տվյալ դեպքում ոչնչով չի կարող օգնել, քանի որ մախ՝ վերջինիս մոտ ցեղակցական կապն ուրարտերենին այնքան էլ ակնհայտ չէ, և, երկրորդ՝ խոռոչների հնչյունական համակարգը նույնակն հստակ պարզաբանված չէ, իսկ եղած տվյալներն էլ ցույց են տալիս, որ դրանք զգալիորեն տարբերվում են իրարից: Այս պարագայում կարևորվում է ուրարտերենի և հայերենի ընդհանուր բառերի և ձևայինների հնչյունաբանական համեմատությունը:

3. Ուրարտերենի հնչյունական համակարգը մասնագիտական գրականությունում: Ուրարտերենի հնչյունական համակարգի պարզաբանման առաջինը առավել մանրամասն անդրադարձել են Վ.Բենեդիկտը [1958], Ի.Դյակոնովը [1963, էջ 18-21, 29-31; 1979, էջ 54-58; ДВ, 5, 1988, էջ 135-140 և այլն]: Վերջինս, հենվելով հիմնականում խոռոչների տվյալների և ուրարտական տեքստերում վկայված տեղանունների ու որոշ այլ բառերի՝ հայերենում և անտիկ աղբյուրներում առկա զուգահեռ ձևերի վրա, փորձել է որոշակի հստակեցում մտցնել ուրարտերենի հնչյունական համակարգում: Ավելի ուշ այս հարցին անդրադարձել են նաև Մ.Խաչիկյանը [1985, էջ 33-34 և այլն], Գ.Ջահուկյանը [1987, էջ 417-445] և Գ.Վիլիելմը [2004, էջ 121-124] և այլոք: Եղած տվյալները ամփոփ ներկայացնում են հետևյալ պատկերը (ստորև ներկայացվող շարադրանքը հիմնականում տրված է Ի.Դյակոնովի և Մ.Խաչիկյանի վերնշյալ աշխատությունների հիման վրա):

3.1 Չայնավորներ:

ա) Չայնավորներից վերականգնվում են [a], [i], [e], [o], [u] և [ə] պարզ ձայնավորները, որոնցից [a]-ն գրում ներկայացվում է a-ով, [i]-ն՝ i-ով, [e]-ն և [ə](ci/e)-ն՝ e-ով, [o]-ն և [u]-ն՝ u-ով (գրում չեն զանազանվում): Երկար ձայնավորների կարգ չի նշվում: Գրում հաճախ կրկնակի արտացոլվող ձայնավորների առկայությունը բացատրվում է՝ 1) դատարկ տեղերը լրացնելու, 2) ci/e տեսքի նշանների ձայնավորի ճշգրտման և 3) ձայնավորների սղումը արտացոլելու պահանջով:

բ) Իրրև հնարավոր երկրաբառեր Գ.Վիլիելմը [2004, էջ 122] նշում է [ai], [au], [ei], [eu], [ia], [ie], [iə], [ua], [ue], [uə], [ui] հնչյունական կապակցությունները՝ առանձնացնելով դրանցից որոշները:

3.2 Բաղաձայններ: Նշվում է, որ ուրարտերենի բաղաձայնային համակարգը եռաշարք է, առնվազն զոմե պայթականների և ետատամնային շփականների համար: Որոնց համար բացի խուլերից և ձայնեղներից ենթադրվում է բաղաձայնների և սեկ շարք:

ա) Պայթականների համար ուրարտերենում գործածվում են՝ b, p, d, t, ʈ, ɡ, k, ʑ նշանները (դրանք արտացոլող սեպանշանները): Ենթադրվում է, որ 1) կրկնաշրթնային b-ն արտացոլում է [b], p-ն՝ [p] և երրորդ շարքը ներկայացնող [pʰ] (տեղանուններում համապատասխանում է հայ. փ-ին և հուն, ֆ-ին) հնչյունները, 2) մմանապես, առանմային d-ն արտացոլում է [d], t-ն՝ [t], իսկ ʈ-ն՝ երրորդ շարքը ներկայացնող [tʰ] (տեղանուններում համապատասխանում է հայ. տ-ին և հուն, օ-ին) հնչյունները, 3) ետնալեզվային ɡ-ն արտացոլում է [g] (հնարավոր է խիստ քմայնացված) և կիսաձայնավոր [ɣ] (տե՛ս ստորև՝ կետ դ), k-ն՝ [k], իսկ ʑ-ն՝ [kʰ] (այլալեզու աղբյուրներում վկայված է k-ով) հնչյունները:

բ) Օփականների ճշգրտման խնդիրը, ինչպես որ ասուրերենի համար, առավել բարդ է: Դրանց համար ընդհանուր առմամբ գործածվում են s, ʃ, ʒ, z, ɬ նշանները, իսկ վերականգնվող շրթնային շփականների դեպքում, որոնց համար ուրարտ. սեպագրերում հատուկ նշաններ չկան, մաս b, u և p նշանները: Ենթադրվում է, որ 1) [v] (համապատասխանում է հայ. վ-ին) և [f] շրթնային շփականները գրում համապատասխանաբար ներկայացվում են b/u-ով և p/b-ով, 2) առանմային [s]-ն արտացոլվում է ʃ-ով, [ʒ]-ն և [j]-ն՝ z-ով (հայ. ձ և ջ), իսկ [cʰ]-ն՝ ʒ-ով (հայ. ծ), 3) ɬ-ի տակ ենթադրվում է [ɬ], [ɣ] և [h] հնչյունները, 3) հնարավոր է համարվում նաև [č], [čʰ] և [c] աֆրիկատների առկայությունը:

գ) Չայնորդների մեջ նկատվում է r/l տատանում: Մ.Խաչիկյանը [SMEA, XXXIV, 1994, էջ 111-113], հիմնվելով խոռոչների և հայերենի տվյալների վրա, ենթադրում է երկուական r-ի և l-ի առկայություն խոռոչներում և ուրարտերենում, որոնք հայերենում համապատասխանաբար ներկայացվում են r/r-ով և /r-ով, իսկ խոռոչներում՝ -rr-ով և -ll--ով:

դ) Կիսաձայնավոր [w]-ն ներկայացվում է u-ով և w(˘)-ով, իսկ [ɣ]-ն՝ i-ի, ց-ի և y(i)-ի միջոցով: Ընդ որում ց-ն և y-ն որոշ դեպքերում հերթազայում են միմյանց:

3.3 Բաղաձայնային հնչյունախմբեր: Սեպագիր համակարգը բացառում է երեք, իսկ բառասկզբում և բառավերջում մակ երկու բաղաձայններով կազմված հնչյունախմբերի արտացոլումը գրում: Մակայն դա չի նշանակում, որ սեպագիր լեզուներում դրանք չեն եղել: Ենթադրվում, որ նման դեպքերում գրում ստիպողաբար հայտնվող հավելյալ ձայնավորն ուղղակի չէր կարդացվում: Ընդհանուր առմամբ ուրարտերենում բաղաձայններով կազմված հնչյունախմբերի մեջ գերակշռում են պայթակաձայնի չսկսվողները:

Ուրարտերենում, ինչպես որ տարածաշրջանի մի շարք այլ լեզուներում, r-ով սկսվող բառեր չկան (Rusa անձնանունը, ըստ երևույթին, փոխառյալ է):

II.2 ՇԵՇ

Ուրարտերենին, ըստ երևույթին, հատուկ է ուժային շարժական շեշտը, որը դրվում է մախավերջի վանկի վրա²⁵: Մրա հետևանքով բառավերջի i-ն գտնվելով շեշտահաջորդ վիճակում՝ թուլանում է՝ վերածվելով [ə]-ի կամ ընկնում է (գրում e), ինչպես՝ ulguše - ulgušiane, alsuiše - alsuišiane, gunuše - gunušiane, uštipte - uštipthane, Minuaše - Minuašiane, šue - šuiane - և այլն (տե՛ս մակ IV.1 կետ 1): Բացառություն են կազմում i-ով վերջացող որոշ բառեր, ինչպես՝ ebani(i), esi(i), armu=zi(i) և այլն: Մրանց վերջնավանկի i-ն գրում հաճախ արտացոլվում է կրկնակի: Ըստ այդմ չի բացառվում, որ նշված դեպքերում մենք գործ ունենք երկար i-ի ([iː]-ի) հետ, որը չի թուլանում: Ուշագրավ է, որ նշված բառերի սեռականի համար գրում բացակայում է -ci/e-e-i տեսքի (հավելյալ e-ով) վկայությունները (տե՛ս V.2.5), ինչը չի բացառում, որ դրանց սեռականի իրական վերջավորությունը կարող է լինել [-i]-ն (գրում -ci/e-i): Ընդհանուր առմամբ ուրարտերենի շեշտը հիշեցնում է հայերենի վերջընթեր ուժային շեշտը: Այն նույնպես շարժական է և ընկնում է անունների ուղղական հոլովի հիմքային ձայնավորի, իսկ թեք հոլովների դեպքում՝ վերջավորության վրա: Մրա հետևանքով

²⁵ Ուրարտերենի շեշտի մասին տե՛ս И.Дьяконов, 1979, էջ 58; М.Хачикян, 1985, էջ 42-43; G.Wilhelm, 2004, էջ 123 և այլն:

ուղղական հոլովում շեշտահաջորդ ձայնավորը ընկնում է, ինչպես՝ *սուրո > սուր (ուղղ.), բայց՝ *սուրոյո > սուրոյ (սեռ.):

II.3 ՀՆՉՑՈՒՆԱՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ուրարտական տեքստերում նկատվում են հնչյունափոխության հետևյալ հիմնական դեպքերը²⁶:

1. Չայնավորի հավելում: Ուրարտական տեքստերում հանդիպող՝ ze-el-be/ze-le/i-be, ni-ir-be/ni-ri/e-be, ta-ar-ma-/ta-ra-ma- և այլ նմանօրինակ հերթագայումները, ըստ երևույթին, պայմանավորված են ուրարտ. սեպագրերի առանձնահատկություններով և ոչ մի կապ չունեն իրական հնչյունափոխության հետ (տե՛ս I.3 կետ 4): Ուրարտերեն որոշ բառերի ուղիղ ձևերի վերջում առկա հավելյալ e-ն կամ դրա բացակայությունը հավանաբար նույնպես պայմանավորված է գրի առանձնահատկությամբ և երկու դեպքում էլ արտասանվել է միակերպ, ըստ երևույթին [ə] կամ [Ø] (տե՛ս I.3 կետ 6): Ինչ վերաբերում է ^{URU}Er-e-bu-ne/^{URU}Er-bu-ne, ^mEr-e-ku/^mEr-ku, qi-ra/qi-ú-ra և այլ նմանօրինակ հերթագայումներին, ապա, այստեղ ամենայն հավանականությամբ առկա է ձայնավորի հավելման կամ անկման երևույթ:

2. Հնչյունի անկում: Նկատվում են հետևյալ դեպքերը:

ա) D-ով կամ t-ով վերջացող որոշ բայահիմքերին հավելվող մի շարք բայերի հոգնակի սուբյեկտի - (i)t- մասնիկից առաջ այդ d/t-ի և հաջորդող ձայնավորի անկում, ինչպես՝ zat=u= < *zad=(i)t=u=, šidi=št=u= < *šidi=št=(i)t=u=: Բերված օրինակները հնարավոր է մեկնաբանել մակ իրրև d-ի նույնացում (առնմանում) t-ին՝ հետագա -t(i)t- > t անցումով կամ ուղղակի ենթադրել -t/d(i)t- > t անցում:

բ) R-ով վերջացող բայահիմքերին հավելվող ըղձականի =u=li=ie վերջավորության u ձայնավորի անկում՝ հիմքային այդ r-ի հետագա նույնացումով և միաձուլմամբ հաջորդող l-ին, ինչպես՝ teli=ie < *tel=li=ie < *ter=u=li=ie, tuli=ie < *tul=li=ie < *tur=u=li=ie: Ի հակադրություն սրանց ունենք ur=u=li=ie օրինակը՝ սպասվելիք uli=ie-ի փոխարեն:

²⁶ Տե՛ս Г.Меликишвили, 1964 էջ 22-28; G.Wilhelm, 2004, էջ 123-124 և այլն:

գ) -Rš-ով վերջացող որոշ հիմքերի առանց š-ի տարբերակների առկայություն, ինչպես՝ *ħarħarš-*/*ħarħar-*, *qapqarš-*/*qapqar-*: Այս երևույթը հնարավոր է ներկայացնել նաև իբրև միաձուլում՝ *rš* [rs] > [r/ř] (հմմտ. հայ. *rs > r2/n անցումը, ինչպես՝ թորշ-/թոռ- < *tor-s, թարշ-ամ-/թառ-ամ- < *tʃs, մա(ր)շ-եմ-/մառ-ել «ցորենը կամնելով մանրել», քերևս նաև մարս-եմ «մարսել» < *mʃ-s) և այլն:

դ) Հոգնակի սեռական-տրականի -aue վերջավորության u[u/o/w] (կիսա)ձայնավորի անկում՝ որոշ վկայություններում:

ե) Իբրև ձայնավորի անկում կարելի է դիտարկել նաև *qi-ra/qi-ú-ra*, *ebaniuke/ebanike* և այլ նմանատիպ հերթազայումները (տե՛ս նաև վերը՝ կետ 1):

զ) Գ.Վիլիելմը [2004, էջ 123] ենթադրում է -lv-ով, -rv-ով և -nv-ով վերջացող բառահիմքերի v ձայնավորի անկում՝ հոգնակիության -ne-/-na- մասնիկից առաջ: Ենթադրելով այդ մասնիկի n-ի հետագա նույնացում և միաձուլում հիմքի l/r/n քաղաձայններին, ինչպես՝ *ebane=le* < **eban=ne=le* < **ebani=ne=le*, *erele=le* < **erel=le=le* < **erele=ne=le* և այլն: Մի շարք պատճառներով այս տեսակետը մեզ կասկածելի է թվում (մանրամասն տե՛ս V.2.2 կետ 1):

3. Զայնավորի փոփոխում: Ուրարտերենի i հոլովման բառերի հիմքակազմ i-ն, սեռականի i ցուցիչից և պատկանելիության -he/hi-մասնիկից առաջ, որպես կանոն, վերածվում է e-ի (V.2.5 կետ 2): Սակայն պահպանվում է համաձայնեցման հարաբերական -ne-/-na-մասնիկից առաջ (տե՛ս V.2.11 կետ 2): Տե՛ս նաև II.2:

4. Զայնավորի հերթազայում: Ուրարտական տեքստերում հանդիպում են մի շարք բառեր, որոնցում առկա է ձայնավորի փոփոխում/հերթազայում, ինչպես՝ *barzu/i=dibi=du(ne)*, *egurušu/e* և այլն: Ուրարտերենում առկա է նաև u/w տեսքի հերթազայում, ինչպես՝ *eue/ewe*, ⁴*Uarubaine/Warubaine* և այլն, ինչը պայմանավորված է գրի առանձնահատկությամբ և ըստ երևույթին երկու դեպքում էլ արտասանվել է [w]:

5. Առնմանում: Իբրև առնմանման դեպք Գ.Վիլիելմը [2004, էջ 124] նշում է -všt- ածանցով կազմված բայերը, որոնցում հիշյալ ածանցի v ձայնավորը նույնանում է նախորդող ձայնավորին, ինչպես՝ *am=ašt-*,

ul=ušt-, *šid=išt-* և այլն²⁷: Առնմանման այլ հնարավոր դեպքերի համար տե՛ս վերը՝ կետ 2ա-բ և 2գ:

6. Պատմական հնչյունափոխության դեպքեր: Ուրարտական արձանագրություններում վկայված են որոշ հերթազայումներ, որոնք ունեն ժամանակային բնույթ, այսինքն այս կամ այն տարբերակի կիրառումը բնորոշ է միայն որոշակի շրջանի արձանագրություններին: Դրանց թվին են դասվում հետևյալները:

ա) Ուրարտերենի [i] և [o] հոլովման բառերի տրականի և ուղևորականի վերջավորությունների և -vie/-vge դերբայական մասնիկների մեջ նկատվում է i/g հերթազայում, որը ունի հստակ արտահայտված ժամանակային բնույթ (ց-ով տարբերակները հանդիպում են միայն Արգիստի I-ից հետո): Դատելով հայերենի տվյալներից՝ ուրարտ. տրական հոլովի այս -g- մասնիկը պետք է արտասանել [j] - հայ. ջ, որը կարող է գալ *y-ից՝ հայերենին հատուկ *y > ջ անցումով: Ըստ այսմ այստեղ, ըստ երևույթին, ի դեմս նշված հերթազայության մենք գործ ունենք հնչյունափոխության հետ՝ դրա արտացոլմանը գրում: Սակայն չի քացառվում, որ այն հետևանք է ինչ-որ ուղղագրական բարեփոխման: Այդ դեպքում պետք է ենթադրել, որ կամ նշված դիրքերում i-ն արտացոլում է [j] հնչյունը կամ ց-ն՝ [y] (տե՛ս նաև I.3 կետ 9, V.2.6 կետ 2բ, V.2.8 կետ 2 և VI.3 կետ 2):

բ) Վաղ շրջանի ուրարտական տեքստերի ուղևորական հոլովի հոգնակի թվի -(n)a(i)edi (<(n)a+edi) վերջավորության փոխարեն հետագայում առկա է -a(i)di: Սա հնարավոր է դիտարկել ինչպես ձայնավորի անկման, այնպես էլ -aie- եռաբարբառի (հնչյունախմբի) պարզեցման՝ երկբարբառեցման դեպք (տե՛ս նաև V.2.8 կետ 2բ):

գ) Եթե ենթադրենք, որ ուրարտերենի հոգնակի ուղևորականի -(n)a(i)di (<(n)a + edi) վերջավորության կողքին առկա -(n)ašte (<* (n)aš+edi) տարբերակի -(n)aš- քաղադրիչը ուրարտերենի հոգնակիության -(n)a- ցուցիչի հնագույն ձևն է, ինչպես որ կարծում են որոշ հետազոտողներ (տե՛ս V.2.8 կետ 2), ապա այստեղ

²⁷ Եթե ուրարտական տեքստերում հաճախակի հանդիպող *bura ašt-u-be* բառակապակցությունն իրականում պետք է կարդալ *burašt-u-be*՝ իբրև -ašt- ածանցով կազմված բայ (տե՛ս III.2.4 կետ 4), ապա այստեղ ունենք վերոնշյալ կանոնից շեղում:

գործ ունենք aš [as] > a հնչյունափոխության արդյունքի հետ²⁸ (տե՛ս V.2.8 կետ 2դ): Ըստ այդմ, ուրարտերենի համար պետք է ենթադրել նաև [sd] > [st/st̥] անցում՝ ձայնեղի խուլացում [s]-ից հետո:

7. Դրափոխում: Որոշ հետազոտողներ իբրև դրափոխության օրինակ նշում են տեղ ցույց տվող -hali և -alhe/-ulhe ածանցները և ^{GIS}ú-du-li «խաղողի քուփ» բառի վկայությունը: Վերջինս նրանք նույնացնում են նույնիմաստ ^{GIS}ul-de-ի հետ [Г.Меликишвили, 1964, էջ 27]: Մակայն առաջին դեպքում կասկած է հարուցում -ulhe տարրերակի առկայությունը, իսկ երկրորդում՝ ^{GIS}ú-du-li-ն ակնհայտորեն պետք է կարդալ ^{GIS}du-li (հմմտ. հայ. տղի «վայրի խաղողի մի տեսակ», տե՛ս ծան. 89):

8. Հնչյունափոխության այլ դեպքեր: Ուրարտական տեքստերում նկատվում են նաև եզակի օրինակներով վկայված հնչյունափոխության այլ դեպքեր, ինչպես, օրինակ, andani/adani (ձայնավորի ռնգայնացում (*)) և այլն: Դրանց մենք այստեղ չենք անդրադառնա:

II.4 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ

II.4.1 ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ (ՃՇԳՐՏՄԱՆ) ՄԵԹՈԴԸ

Ինչպես արդեն նշվեց, սեպագիր լեզուների հնչյունական համակարգի վերականգնման գործում առանձնակի նշանակություն է ստանում դրանց համեմատումը վերջիններիս հետ սերտորեն առնչվող և/կամ ցեղակից՝ կենդանի կամ լավ հայտնի այլ լեզուների հետ: Ոչ պակաս կարևոր է նաև տարրեր լեզուներով վկայված տեղանունների հնչյունաբանական ուսումնասիրումը: Ուստի ուրարտերենի հնչյունական կազմի ճշգրտման հարցում առանձնապես կարևորվում է վերջինիս և հայերենի հնչյունաբանական համեմատումը²⁹: Հատկապես եթե նկատի ունենանք, որ ներկայումս զգալի արժեքավոր նյութ է կուտակված հայ-ուրարտական լեզվական ընդհանրությունների վերհանման գործում: Այս նպատակին հասնելու համար մենք հետևում ենք հետևյալ կարգին:

²⁸ Հմմտ. հայերենի *s > h անցման հետ:

²⁹ Ուրարտերենի և հնդեվրոպական նախալեզվի համեմատության համար տե՛ս Г.Джаукян, 1963; 1967; Т.Гамкрелидзе, ..., 1984. Չ.Վափանցյան, 1940, էջ 28-30 և այլն:

1. Նախ կազմվում է հայերենում առավել վստահելի զուգահեռ ձևեր ունեցող ուրարտական բառերի (հասարակ անուններ, տեղանուններ) և առանձին ձևույթների ու նրանց հայերեն (որոշ տեղանունների դեպքում նաև հունարեն) տարրերակների համադրական ցանկը (տե՛ս հավելված I): Չայնավորների, ինչպես նաև մ և ն ձայնորդների համադրում ցանկում չի արվում: Դասակարգումը կատարված է ըստ հայերեն զուգահեռ ձևերում վկայված հնչյունների:

2. Խառնաշփոթից խուսափելու նպատակով ուրարտերեն բառերը տրվում են վանկազիր ձևով՝ դասակարգված ըստ առանձին սեպանշանների: Ընդ որում, նույն պատճառով յուրաքանչյուր սեպանշան ներկայացվում է միայն մեկ՝ իր հիմնական հնչյունական արժեքով (բացառությունները և հերթագայության դեպքերը նշվում են առանձին):

3. Հայերենի քնիկ բառերի համար տրվում է նաև դրանց՝ հնդեվրոպական լեզվում վերականգնվող ձևերը:

4. Ստացված արդյունքները համադրվում են: Տրվում են համադրման մանրամասն մեկնաբանություններ ըստ առանձին հնչյունախմբերի (տե՛ս ստորև):

II.4.2 ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ (ՃՇԳՐՏՄԱՆ) ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Չայնավորներ: Հայերեն ա-ին ուրարտական տեքստերում միշտ համապատասխանում է a-ն, որոշ բառերում՝ e-ն³⁰ (օրինակ՝ euri-[ewri-] - արի-որդ, erb-[eɹp-] - աղի-ուց-ան-եմ, šerabae[šerawa(ə)] - ծարաւ, alzena/i[aršena/i] - արծան, n=eb-si/e=ɥ-[n=ewš/i/e=ɥ-] - յ-աւշ-ատ-եմ, aleke[aylek] - ալլակ, zeld-[jerd-] - շարդ-եմ և այլն): Ե-ն և ի-ն համապատասխանաբար ներկայացված են e-ով և i-ով, իսկ ո-ն և ու-ն՝ u-ով: Հայերենի է երկար ձայնավորը (հին [ey] երկբարբառը) ուրարտ. տեքստերում վկայված է ei հնչյունակապակցության/երկբարբառի միջոցով, ինչպես՝ keid=an-, ki/ed=an- - հայ. կետ-, կե/իտ- < *geid-, aueiɥi=ne - հայ. աւետի-ս/ք < *aueid: Գ-րում չարտացոլվող հայերենի ը թույլ ձայնավորը՝ (II.1 կետ 3.3)-ում նշված հնչյունախմբերի դեպքում վկայված է տարրեր ձայնավոր նշանների միջոցով, ինչպես՝ man- - հայ. մն-ամ < *men-ā, tan- - հայ. դն-եմ < *dhē-ne, šuk=ure - հայ. (h)սկ-ող/եմ: Գ-րում

³⁰ Գ.Ջահուկյանը այս երևույթը բացատրում է ուրարտերենում բաց e-ի (= [ə]) հավանական առկայությամբ [1987, էջ 432]:

արտացոլվող ը-ի վկայություններ ուրարտ. տեքստերում չունենք: Ըստ որոշ հետազոտողների ուրարտ. բառերի վերջի e-ն մի շարք դեպքերում արտասանվել է [ə]:

Հայ. ե-ի դիմաց առկա է սեպագիր ie [ye]-ի մեկ վկայություն՝ ieše [yes] - հայ. ես դերանունում, իսկ ի-ի դիմաց սեպագիր e-ի մեկ վկայություն՝ der-- հայ. դիր(առկա է մահ դեր ձևը) բայում:

Հայ.	Ուրարտ.	Հայ.	Ուրարտ.
ա	a, e [æ (*)]	ն	u
ե	e	ու	u
ի	i	ը (զաղտմավանկ)	a, e/i, u, Ø
է (<*եյ)	ei	ը	(*), -e (բառավերջում *)

2. Բաղաձայններ: Ուրարտերեն և հայերեն զոգահեռ բառերի ու առանձին ձևայինների համադրումից ստացվող հայերենի և ուրարտերենի բաղաձայն հնչյունների համապատասխանությունները ամփոփ ենթակայացված են Աղյուսակ 3-ում: Մեկնաբանությունները տե՛ս ստորև:

2.1 Պայթականներ: Եթե նկատի ունենանք, որ սեպագիր համակարգում. 1) da=ta, di/e=ti/e, di/è=ti/è ad=at, du=tu, իսկ tu-ին դիմաց հայերենում ունենք միայն տ-ով ձևեր, 2) ուրարտական տեքստերում առկա են՝ gu/qu, ka/qa, du/tu, tú/tu հերթագայություններ, ապա պայթականների համար նկատվում են հետևյալ օրինակաչափությունները և բացառությունները:

2.1.1 Նկատվող օրինակաչափությունները.

ա) Ուրարտ. b, d, g ձայնեղների դիմաց համապատասխանաբար ունենք հայ.՝ բ, դ, գ ձայնեղները՝ b-ի դիմաց մահ խուլ p-ն: Վերջինս հավանաբար պայմանավորված է սեպագիր համակարգում շրթնային էմֆաթիկ նշանի բացակայությամբ, որի փոխարեն գործածվում է b ձայնեղը:

բ) Ուրարտ. p, t, k խուլերի դիմաց համապատասխանաբար ունենք հայերենի՝ պ, տ, կ խուլերը և՛ փ, թ, ջ խուլ-շնչեղները: Ուշագրավ է, որ ձտ-ն միշտ համապատասխանում է հայ. ստ-ին (դրանք որպես կանոն բնիկ հայ. ձևեր են, որոնց համար փաստորեն ունենք հ.-ե. *st/zd > ուրարտ. ձտ > հայ. ստ):

գ) Ուրարտ. t-ի և q-ի (աքք. էմֆաթիկ հնչյուններ) դիմաց համապատասխանաբար ունենք հայերենի տ և կ խուլերը:

Այսպիսով, պայթականների համար թերևս կարելի է վերականգնել հետևյալ հիմնական համապատասխանությունները.

Ուրարտ.	d	t	g	q	k	b	-	p
	դ	տ	ք	գ	կ	բ	(*)	փ
Հայ.	(թ)	տ			կ	պ	↑	պ
		(դ)				(փ)		

2.1.2 Նկատվող շեղումները.

ա) B ձայնեղի դիմաց, ի հավելումն վերոնշյալի, առկա է մահ խուլ-շնչեղ փ-ի մեկ վկայություն (er-bu/i- «բռնել, հափշտակել» - հայ. աղի-ուց-ան-ել «տկարացնել, քակարդը գցել, որսալ» <*elph):

բ) Հետևյալ բառերում d ձայնեղի դիմաց դ-ից բացի առկա է մահ թ խուլ-շնչեղը՝ ul-de «խաղողի որթ» - հայ. որթ՝ նույնը < *orth, qu-du-la-ni «տաճար, կոթող» - հայ. կոթող՝ նույնը: Իսկ է խուլի դիմաց թ-ից և տ-ից բացի առկա է մահ դ ձայնեղը Բնիկ բառերի համար, բոլոր դեպքերում, այս դ-ն գալիս է հ.-ե. *dh-ից, ի հակադրություն *rt-ից (մահ *rdh-ից) եկող դ-ի, որը ուրարտ. տեքստերում ներկայացված է d-ով: Չի բացառվում, որ հայերենի առաջնալեզվայինների համար նկատվող նշված շեղումները արդյունք են այն բանի, որ տարբեր տեղերից ծագող՝ հայերենի դ-ն և թ-ն ուրարտ. շրջանում զանազանվել են:

2.2 Օփականներ: Ուրարտ. տեքստերում հայերենի շրթնային ձայնեղ վ-ն ներկայացված է b-ով, առաջնալեզվային ձայնեղ q-ն՝ z-ով, իսկ ետնալեզվային ձայնեղ դ-ն՝ երկակի՝ l-ով և r-ով: Առաջնալեզվային խուլ ս-ն և շ-ն՝ համապատասխանաբար ձ-ով և s-ով (sul u=ձt=i=be «ծնկի գալ, գետին ընկնել» - հայ. սող-ալ (սող-ու-մս) բայում հայ. ս-ի դիմաց ունենք s՝ կանոնավոր հանդիպող ձ-ի դիմաց): Ետնալեզվային խ-ն ներկայացված է h-ով, իսկ կոկորդային հ-ն՝ h-ով կամ Ø-ով:

2.3 Կիսաշփականներ (աֆրիկատներ): Հայերենի կիսաշփականներն ընդհանուր առմամբ ուրարտական տեքստերում ներկայացված են z, s, s և g նշաններով: Չայնեղ ձ-ն և խուլ-շնչեղ g-ն ներկայացված են միևնույն նշաններով՝ z-ով և s-ով, իսկ շ-ն՝ z-ով և g-ով:

Վերջնական 3
Հայերենի և ուրարտերենի բաղադրյալ հնչյունների համապատասխանությունները

Ըստ արտասանության տեղի	Ըստ արտասանության մասնի	Շրջանային	Առաջնային վային	Միջնային վային	Ետնային վային	Կոմպոզիտային
Պայթականներ	ձայնակ	p = b	q = d, t		q = ɟ, ʒ/q(1)	
	խուլ	q = b, p	u = d/h, t		q = k, q	
	խուլ-շնչեղ	q = p, b (1')	p = t, d (2)		p = k, q (1')	
	ձայնակ	q = b	q = z d = (')		q = l, r	
Շփականներ	խուլ		u = ʒ, s (1) z = s		q = b	h = ɟ, ɟ
	ձայնակ		d = z, s z = z, ʒ, ʒ/i (')			
Կիսաշփականներ	խուլ		ɟ = ʒ ɟ = (')			
	խուլ-շնչեղ		g = z, s z = s (1'), ʒ/i (1')			
	ոմրային	ɟ = m	g = n			
Չայնորդներ	բերանային		l = l p = l, r n = r			
	կիսաձայնավոր	ɾ = w/w, b, ɟ		j = i/i, ʒ(1), ɟ		

Խուլ-շնչեղ չ-ն հավանաբար ներկայացված է ց-ով և/կամ s-ով (վկայված է հետևյալ կասկածելի օրինակներով՝ -v=ge [-v=č (*)] - հայ. -իչ, -ուչ, -ա(ւ)չ, -(ւ)չ «դերբայակերտ/ածականակերտ ածանցներ», suui=(չ) - «հեռացնել, շարտել» - հայ. չու-եմ, չոգ-այ «հեռացնել, հեռանալ»): Խուլ Ծ-ն ներկայացված է ֆ-ով: Ծ-ի համար վկայություններ չկան, հավանաբար գործածվել են ֆ-ն և/կամ ց-ն: Կիսաշփականների համար վերականգնվում է հետևյալ ընդհանուր պատկերը.

Ուրարտ.	z	ʒ	s	
	ձ	ժ	ց	
g	ջ	*ճ (*)	չ (*)	Հայ.
	ց		ձ	

2.4 Չայնորդներ:

ա) Հայերենի j կիսաձայնավոր Չայնորդն ուրարտական տեքստերում արտացոլված է մի քանի կերպ. 1) բառակազմում, այդ թվում և բարդությունների մեջ, համապատասխանում է i/i-ին, ինչպես՝ jar=ani - հայ. *j-ար-ան, an=j=ardu=ne - հայ. ան+j-արդ-(ար)-ուև. 2) ետձայնակորային դիրքում համապատասխանում է i-ին, որը հաճախ չի գրվում, ինչպես՝ -ka(i) - հայ. -կայ, a(i)šei/a(i)nei - հայ. այս/այև, 3) գրում չի արտացոլվում՝ համապատասխանում է ɟ-ին, ինչպես՝ zani- - հայ. ձայև, -ի, ale/u- - հայ. ալլ/ղ, -ե/ո (տե՛ս նաև I.3 կետ 7). 4) եթե ուրարտ. տեքստերում մի շարք դեպքերում վկայված i/g հերթագայության տակ թաքնված է [y] հնչյունը, ապա ունենք նաև հայ. ջ (< *y) - ուրարտ. i/g համապատասխանություն (տե՛ս նաև I.3 կետ 9; V.2.6 կետ 2բ, V.2.8 կետ 2, VI.3 կետ 2):

բ) Հայերենի l կիսաձայնավոր Չայնորդն ուրարտական տեքստերում արտացոլվում է. 1) b-ով (abeli- - հայ. (j)-աւել-եմ, ʒerabae - հայ. ծարաւ), 2) u/w-ով (eu/we - հայ. եւ, euri- - հայ. աւրի-որդ), 3) ու-ից հետո հաճախ նաև ɟ-ով:

գ) Հայերենի ʒ, ʒ, l և n Չայնորդների դիմաց ուրարտ. տեքստերում համապատասխանաբար ունենք m, n, l և r: Իսկ ահա ր-ն արտացոլվում է երկակի՝ l-ով և r-ով: Նմանապես և ղ-ն (տե՛ս վերը՝ կետ 2.2): Այս և որոշ այլ տվյալներ (տե՛ս II.1 կետ 3.2գ) թույլ են տալիս եզրակացնել, որ ուրարտերենը տարրերակել է երկուական r և l (կոշտ և փափուկ)՝ ինչպես հայերենում (տե՛ս նաև II.1 կետ 3.2գ):

Հայերենի ձայնորդների և շփական դ-ի³¹ համար վերականգնվում է հետևյալ ընդհանուր պատկերը:

Հայ.	Ուրարտ.	Հայ.	Ուրարտ.
մ	m	ռ	r
ն	n	ր	r, l
լ	w/w, b, Ø	լ	l
յ	i/i, g (*), Ø	ղ	l, r

3. Ամփոփում: Ինչպես երևում է հայերեն և ուրարտերեն զոգահեն ձևերի համադրումից ուրարտ. մեկ նշանը հաճախ համապատասխանում է հայերենի երկու և ավելի հնչյունների: Նմանապես՝ հայերենի շատ հնչյուններ կարող են արտացոլվել ուրարտ. տարբեր նշաններով: Այս երևույթը կարող է բացատրվել հետևյալ հիմնական հանգամանքներով:

ա) Մեպագրերին հատուկ p/b, g/k/q, d/t/č, s/š, s/z/š և այլ հերթագայությունների պատճառով շատ դեպքերում անհնար է դառնում ուրարտ. ձևերի ճշգրիտ տառադարձումը, ինչը իր հերթին լրագում է ներկայացվող համադրական պատկերը: Օրինակ, ուրարտ. -ze- (e) [-c] (հայ. -g) ածանցը հնարավոր է կարդալ մահ -sé- (e)՝ հայ. g-ն համապատասխանեցնելով ուրարտ. s -ին, այլ ոչ թե z -ին և այլն:

բ) Հայերենին հատուկ զգալի թվով հնչյունների համար նշանների քացակայությունը սեպագրերում: Որպես հետևանք, հայերենի երկու և ավելի հնչյուններ արտացոլվում են ուրարտ. մեկ նշանի միջոցով: Այսպես, օրինակ, ուրարտ. z-ի դիմաց ունենք հայ.՝ q, ջ, ձ, թերևս մահ g, իսկ g-ի դիմաց՝ q, ջ, թերևս մահ՝ j, չ և ճ (տե՛ս Աղյուսակ 3):

II.4.3 ԲՆԻԿ ԲԱՆԵՐՈՒՄ ՎԿԱՅՎԱԾ ՀՆՉՅՈՒՆԱՓՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԼԵՐԸ

Մեպագիր նշանների բազմանշանակայությունը և եղած նյութի սակավությունն ու հատվածայնությունը աղճատում են հայերենի և ուրարտերենի հնչյունական համադրման ընդհանուր պատկերը: Այդ պատճառով հաճախ զործնականում անհնար է դառնում հնարավոր շատ հնչյունափոխությունների ֆիքսումը: Այնուամենայնիվ բնիկ հայերեն բառերի և ձևայինների ու դրանց ուրարտ. զուգադիպությունների համար

³¹ Ուրարտական շրջանում հայ. դ-ն, ըստ երևույթին, մտա է եղել լ-ին:

նկատվում են հետևյալ հնչյունական տարբերությունները և հայերենին հատուկ հնչյունափոխությունները կամ դրանց քացակայությունը, որոնք մասամբ հստակեցվում են բնիկ հայերեն բառերի և ձևայինների հնդեվրոպական նախատիպերի համադրմամբ:

1. Չայնավորներ:

1.1 Հայ. եղ-ի դիմաց ուրարտերենում ունենք i l, ինչպես՝ ուրարտ. pile [pi/phi] - հայ. պեղ-եմ < *bel/hեղ-եմ³² < *pel: (հայերենի եղ հնչյունախումբը հաճախակի գալիս է հենց իլ-ից³³):

1.2 Հիմքակազմ ձայնավորի փոխարեն այլ ձայնավորի առկայություն. *su-ro > սուրո-յ = šuri [suri] (թերևս զործ ունենք հ.-ե. *-ro/ri ածանցի հերթագայության հետ), *or-th-o > որթո-յ = ulte [ort], *g'ŕ-so > ծառո-յ = šare [šar] և այլն:

1.3 Ի և ի-ա հոլովման որոշ բառերի վերջում -be[-w]-ի առկայություն սպասվելիք -ի-ի փոխարեն (qar=be [qar=w] - հայ. քար, -ի, zel=be [cel=w] - հայ. ցեղ, -ի, n=ir=be [n=ir=w] (*) - հայ. իր, ի-ա):

1.4 Հայերենի եա երկբարբառի դիմաց ուրարտերենում ունենք ia, իսկ ոյ-ի՝ iw կամ ew (պարզ չէ): Ըստ այդմ պետք է ենթադրել, որ հայերենի *ia > եա և *eu > *ել/իլ > ոյ անցումները դեռ չէին կատարվել:

2. Բաղաձայններ: Եղած տվյալներից երևում են բաղաձայններից առնչվող հետևյալ հնչյունափոխությունները կամ դրանց քացակայությունը:

2.1 Հնդեվրոպական *g'-ի, *g'h-ի և *k'-ի դիմաց ուրարտ.՝ š-ի, z/s-ի և š-ի առկայություն, համապատասխանաբար հայերեն ծ (Ես բառում ս), ձ (որոշ դեպքերում q) և ս: Իսկ *g^h-ի, *g^hh-ի և *k^h-ի դիմաց ուրարտ. k-ի, g-ի և Ø/h-ի առկայություն, հայերեն՝ կ, ջ և Ø/h:

*serg'	- erši- [erši-]	- q-երծ.
*eg'	- ieše [yes]	- ես.
*g'ŕ-so	- šare [šar]	- ծառ, -ոյ.
*ŕg'ipi-jo	- aršibe [aršiw]	- արծուի (-ծիլ).
*g'en-os	- šinu- [šino-]	- ծիկ -ի. հին *ծիկո.
*phəlg'-niā	- paršane [paršan]	- *փայղձան > փայծաղն, -ան.
*g'huən-ji	- zani- [janyi-]	- ձայն, -ի.
*g'hō	- z- [z-š-]	- q- կամ ձ.

³² Եթե, իհարկե, ուրարտ. pile-ն չենք կապում հայ. բիր < *bēr «բրել, փորել» արմատի հետ:

³³ Այս մասին տե՛ս, օրինակ, Գ.Ղափանցյան, 1961, էջ 66: 3-45

*bhr̥g'h-	- barzu/i- [barʃu/i-]	- բարծ, -ու/ի.
*g'hu-u (°)	- suui- [ʃuw-]	- ձգ-եմ (°).
*ə(n)k'	- (h)as- [(h)as-]	- հ-աս-ան-եմ.
*k'er	- šer- [seř-]	- սեռ, -ի.
*k'er-no	- šer- [seř-]	- սեռև.
*k'o-ro	- šuri [suri]	- սուր, -ոյ.
*k'o, *k'e	- šu-, ša- [so-, sa-]	- սո-յև, սա- և այլն.
*(e)g ^h a-	- ka-	- կա-լ.
*g ^h on -	- gun- [jun-]	- ջուկ-ջ.
*k ^h -ro	- ule [or]	- որ, -ոյ/ուր-իշ (°).
*k ^h ur	- ure [ur]	- ուր.
*k ^h i	- hi=ne [hi=n]	- (h)ի-ն-չ, գ-ի,...
*jēk ^h ɣ-t	- zieldē [jierd]	- *ջիարդ > լեարդ:

Եթե վանի արձանագրություններում հիշատակվող ag- «անցկաց-
նել, տանել» բայը կապ ունի հայ. ած-եմ < *ag' «անցկացնել, տանել և
այլն» բայի հետ, ինչպես սովորաբար նշում են որոշ ուսումնասիրող-
ներ³⁴, ապա այստեղ գործ ունենք հայերեն ծ-ի ուրարտ. g-ով վկայու-
թյան միակ դեպքի հետ (°): Մյուս բոլոր դեպքերում հնդեվրոպական
*g'-ն արտացոլված է ուրարտ. ֆ-ով, հայ. ծ: Այդ պատճառով ag-
«անցկացնել, տանել» բայը տեղ չի գտել զուգադիպումների մեր ցուցա-
կում:

2.2 Հնդեվրոպական *bh-ի և *ph-ի դիմաց ուրարտ. b-ի, p-ի ([ɸ]-ից
հետո b) առկայություն, համապատասխանաբար հայերեն բ (աւելի բա-
ռում լ) և փ: Իսկ *b-ի դիմաց ուրարտ. p-ի առկայություն, հայերեն պ:
Միջձայնավորային կամ մախարադաձայնային դիրքում հ.-ե.*p-ի դի-
մաց ունենք ուրարտ. w/u, հայ. լ.

*bhr̥g'h-	- barzu/i- [barʃu/i-]	- բարծ, -ու/ի.
*bher	- (=)ber- [ber]	- բեր-եմ.
*bhā	- ba- [ba=]	- բա-ն.
*obhel	- abeli- [aweli-]	- աւելի.
*phoro	- pulu- [poro-]	- փոր, -ոյ.
*phəlg'-niā	- paršane [pařšan]	- *փայղծան > փայծաղն, -ան
*alph	- erb- [eřp-]	- աղփ-ուց-ան-եմ (°).
*sub	- up- [up=]	- (h)ուպ-.

*epi	- eue, ewe [ew]	- եւ.
*ɣg'ipi-jo	- aršibe [aršiw]	- արծուի (-ծիւ) և այլն:

2.3 Հնդեվրոպական *dh-ի և *th-ի դիմաց ուրարտ. t-ի ([r]-ից հետո d)
և d-ի առկայություն, հայերեն՝ դ և թ: Իսկ *d-ի և *t-ի դիմաց ուրարտ.
d(=t)-ի, t-ի ([r]-ից հետո d) առկայություն, համապատասխանաբար
հայերեն՝ տ և թ (ո-ից հետո դ):

*dhr̥g'h-no	- tar=ane [dai=an]	- դառ-ն-ալ, դարծ-ն.
*dhē-r/ne	- ter-, tan- [dən-]	- դիր, դև-եմ.
*or-dh	- n=uld- [n=ord-]	- յ/*ն-որդ-եմ.
*or-tho	- ulde [ort]	- որթ, -ոյ.
*ar-ti/tu	- ardi/u- [ardi/u]	- արդ, -ու/ի.
*geid-	- ke(i)d- [ke(i)t-]	- կետ/կետ.
*ped	- bed- [pəř-]	- հ-ետ, ետ.
*dud	- dudi [tuři-]	- տուտ, -ն.
*dei, *di	- di=ae [ti=a]	- տե-, տի-.
*jēk ^h ɣ-t	- zieldē [jierd]	- *ջիարդ > լեարդ.
*tēu,*tou	- ti(a)- [ti(a)-]	- թիւ, թու-եմ.
*-eu-ti	- -ibte/i- [-iwt/i-]	- *իւթ(ի) > -ոյթ, -ի.
*tol-	- tur- [toř-]	- թոյղ, թող-ում և այլն:

Ինչ վերաբերում է հ.-ե. *t > հայ. յ/ւ/- անցմանը, ապա ստույգ վկա-
յություններ ուրարտական տեքստերում բացակայում են:

2.4 Հնդեվրոպական *gh-ի և *kh-ի դիմաց ուրարտ. g-ի և ք-ի առ-
կայություն, հայերեն՝ գ և խ: Իսկ *g-ի և *k-ի դիմաց ուրարտ. k-ի ([r]-ից
հետո g) և k/q-ի առկայություն, համապատասխանաբար հայերեն՝ կ
(ո-ից հետո q) և կ/ք:

*khal (°)	- ḫarare [xařař]	- խարաղ.
*geid-	- ke(i)d- [ke(i)t-]	- կետ/կետ.
*gu-r	- kure [kur]	- կր-ունկ < *կուր-ունկ.
*gol-	- kur=une [koř=un]	- կող, -ուն-ս.
*kar	- q/kar=be [qar=w]	- քար, -ի.
*kəl-	- kar- [qař-]	- քաղ-եմ.
*-kō/o-n	- -ku/ane [ku/an]	- կ(ն) < կու/ան < *քու/ան (°).
*ark	- alg=ane [arg=an]	- արգ-ել-ք, քք-արգ:

2.5 Վկայված են մաև հետևյալ հնչյունափոխությունները. հ.-ե. *s >
ուրարտ. (-) > հայ. (-), հ.-ե.*sk(*sk') > ուրարտ. z/s > հայ. g, հ.-ե.*j >
ուրարտ. z > հայ. *ջ, հ.-ե.*kj > ուրարտ. s > հայ. չ (°):

³⁴ Տե՛ս, օրինակ, Հ.Աճառյան, 1940, I էջ 172. Գ.Ջահուկյան, 1988, էջ 139:

* jēk ^u -t	- zieldē [jierd]	- *ջիարդ > լեարդ.
* serg'	- erši- [erši-]	- գ-երծ.
* sol(u)-jo (*)	- ulgu- [oljo-]	- ողջ, -ոյ.
* sē-mṛ	- imene [(h)imen]	- հիմն, -ան.
* skel ₁	- zel=be [ceł=w]	- ցեղ, -ի.
* epi	- eue, ewe [ew]	- եւ.
* řg'ipi-jo	- aršibe [aršiw]	- արծուի (-ծիւ).
* kĭ-u, *kĭ-ou	- suui- [čuw/owi-]	- չու-եմ, չոգ-այ (*) և այլն:

2.6 Եթե հայերենին հատուկ, մինչ այժմ քվարկված բոլոր հնչյունափոխությունները Վանի քաղաքության շրջանում արդեն իսկ կատարվել էին՝ և ուրարտերենում արտացոլված են փոփոխված տեսքով, ապա *u > q և *p > h/- հնչյունափոխությունները դեռևս չէին կատարվել: Այսպես *p-ի դիմաց սպասվելիք h/-[h/-]-ի փոխարեն առկա է p (այստեղ պայմանականորեն նշյունադարձված է ֆ-ով), իսկ *u-ի դիմաց, q-ի փոխարեն, w/u.

* pors, *per -	- pare-, par- [par(-)]	- առ, հեռի.
* ped	- bed- [pēt-]	- հ-ետ, ետ.
* uəl, *uəl	- wal=d- [wəl=ɫ-]	- գալ-, գլ-, գիլ.
* uəl	- ware [wal]	- գաղ.
* g'hu-u (*)	- suui- [juwi-]	- ձգ-եմ (*) և այլն:

*u > u/w > q հնչյունափոխության համար հիշատակված բառերին կարելի է ավելացնել նաև ուրարտ. Uełequni - հայ. Գեղաջուկի, ուրարտ. Waša - հայ. Արա-գած, -այ տեղանունները³⁵:

2.7 Առավել ուշ շրջանի Վանի արձանագրություններում՝ -a-(i)-e, -i-(i)-e, -u-(i)-e, -v-(i)-e-de հոլովային վերջավորություններում³⁶ և՛ -v-(i)-e, -v-(i)-u- մասնիկներում i(y)-ի փոխարեն g-ի առկայությունը, ըստ երևույթին, արտացոլում է հայերենին հատուկ *j > ʒ անցումը: Մյուս կողմից՝ ունենք *jēk^u-t > zieldē [jierd] > *ջիարդ > լեարդ անցումը, որտեղ h.-ն *j-ն ուրարտերենում ներկայացված է [j]-ով (գրում z):

2.8 Ուրարտ. r-ի դիմաց հայ. ո-ի, ր-ի և ղ-ի, իսկ l-ի դիմաց՝ լ-ի, ր-ի և ղ-ի առկայությունը վկայում է, որ արդեն այդ շրջանում լ-ն տարբերակվում էր ղ-ից (տե՛ս II.1 կետ 3.2գ):

³⁵ Waša երկիրը իր տարածքով համընկնում է պատմական Արագածոտնին. [Н.Арутюнян, 1985, էջ 13]:

³⁶ v-(i)e / (-v-ge)-ը տրական հոլովի վերջավորությունն է, որից -de մասնիկի հավելումով կազմվում է ուրարտերենի այսպես կոչված ուղեորական հոլովը:

III. ԲԱՌԱՊԱՇԱՐ

III.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեզ են հասել մոտ 350-400 ուրարտերեն բառեր, որոնցից, սակայն, միայն 230-250-ի իմաստն է քիչ թե շատ հայտնի: Համեմատաբար հուսալի թարգմանվող բառերի թիվը մոտ 180-190-ն է: Մոտ 110-120 բառերի իմաստները որոշվում են երկլեզվյա արձանագրությունների և/կամ գուգահեռ տեքստերում առկա գաղափարագրերի միջոցով, մյուսներինը՝ ըստ համատեքստի՝ ենթադրաբար: Ուրարտերենի մեզ հասած բառապաշարը, բացի ընդհանուր գործածման բառերից, պարունակում է հատկապես ռազմական, շինարարական և պաշտամունքային-ժիսական բնույթի բառեր:

Հայերենից գատ առավել մեծ թվով ընդհանուր բառարմատներ, բառեր ուրարտերենը ունի խոտիերենի հետ³⁷: Դրանք մոտ 50-ն են, ինչը կազմում է ուրարտերենի ինքնուրույն թարգմանվող բառերի 20-25%-ը: Դա բավարար չէ այս երկու լեզուների մերձավոր ցեղակցական կապը պնդելու համար: Հատկապես եթե նկատի ունենանք, որ այդ ընդհանուր բառարմատների որոշ մասը առկա է նաև հայերենում, իսկ որոշները ունեն հնդեվրոպական ծագում: Ուրարտերենում առկա են նաև սակավ թվով փոխառություններ այլ լեզուներից:

III.2 ՀԱՅ-ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԸ

III.2.1 ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄԵՐԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Նպատակ չունենալով մանրամասն կանգ առնել հայ-ուրարտական ընդհանուր բառարմատների ուսումնասիրման պատմության և առաջ քաշված տեսակետների վրա³⁸, այնուամենայնիվ համառոտակի ներ-

կայացնենք որոշ հեղինակների կողմից մինչև այժմ կատարված աշխատանքները:

Ա.Մորտմանի անհաջող փորձից հետո (տե՛ս վերը) առավել մանրամասն հայ-ուրարտական լեզվական առնչությունների հարցին անդրադարձել է Հ.Սանդալյանը: Նպատակ ունենալով հիմնավորելու այս երկու լեզուների նույնության տեսակետը՝ նա տալիս է մոտ 150 ընդհանուր բառերից կազմված մի ցուցակ [1900, էջ 317-474], որտեղ տեղ են գտել բազմաթիվ ակնհայտ վրիպումներ և անհաջող մեկնաբանություններ: Այնուամենայնիվ Հ.Սանդալյանի ստուգաբանումների մի զգալի մասը միանգամայն հուսալի են և ցայսօր նշվում են տարբեր հետազոտողների կողմից կազմված հայ-ուրարտական ընդհանուր բառերի շարքում: Հ.Սանդալյանից հետո այս հարցին առավել հանգամանալից անդրադարձել է Գ.Ղափանցյանը: Իր «Ուրարտուի պատմությունը» [1940 թ.], այնուհետև որոշ փոփոխություններով՝ «Հայոց լեզվի պատմություն» [1961թ.] աշխատությունների մեջ նա ներկայացնում է մոտ երեք տասնյակ ընդհանուր բառ. 1) abili-d- «միացնել» - հայ. աւելի, յաւելում, 2) baba «ղեռ, սար» - հայ. բարայ «քլուր», 3) ebani «երկիր» - հայ. աւան, 4) euri «տեր» - հայ. արի-որդ «օրիորդ» (ըստ Ղափանցյանի՝ արի «տեր» + որդ(ի)), 5) ha- «կտրել, բաժանել» (թարգմանությունը ըստ Ղափանցյանի) - հայ. հատ-ան-ել, 6) haš- «զցել» - հայ. հոսել, 7) qi(u)ra «հող, գետին» - հայ. երկիր (< *եկիր), 8) pahini «խոշոր եղջերավոր անասուն» - հայ. պախրե «տավար, արջառ», 9) pili «ջրանցք» - հայ. պեղեմ, 10) šani «աման» - հայ. սան «կաթսա», 11) šerd- «բաժանել, առանձնացնել, քաքցնել» (ըստ Ղափանցյանի՝ «ճեղքել») - հայ. շերտ, 12) uiri «պարարտ» (թարգմանությունը՝ ըստ Ղափանցյանի) - հայ. յոյր «պարարտ», 13) ul- «զնայ, ուղևորվել/տանել, ուղարկել» - հայ. ուղի, ուղեյ, 14) uli- «տոռգել, հոսեցնել» (թարգմանությունը՝ ըստ Ղափանցյանի) - հայ. ուղիս «հոսող ջուր, հեղեղ», 15) u-duli (ըստ Ղափանցյանի՝ «խաղող», Գ.Մելիքիշվիլին թարգմանում է «խաղողի այգի») - հայ. տղի «վայրի խաղող», 16) šue «ծով, լիճ» - հայ. ծով, 17) šiš-uli «ծես, արարողություն» (թարգմանությունը ըստ Ղափանցյանի) - հայ. ծես, 18) urb- «զոհել» - հայ. քրքո. որ(ո)փել «հեղուկը՝ զինին, ջուրը և այլն, բաժակով կամ գդալով վերցնել և նորից թափել ամանը», 19) uruli «հոգի (°)» - հայ. ուրու «տեսիլք, ցնորք», 20) ueli «զորագունդ, խումբ, ջոկատ» - հայ. գեղ, գիւղ, 21) inukani «այդ նույն» - հայ. ինքն, սեռ. ինքեան, 22) išti-ni «այստեղ» -

³⁷ Խոտի-ուրարտական բառային համապատասխանություններն առավել մանրամասն տե՛ս I.Diakonoff, 1971; М.Хачикян, 1985 և այլն: Այս մասին քննադատաբար տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 132-133:

³⁸ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 427-445:

հայ. աստե՛ն, 23) edi-ni «այնտեղից» - հայ. անդե՛ն, 24) meše «տուրք» - հայ. մես-ուրթյուն «նվիրվածություն», մեսիմ «նվիրել» (հայերեն բառերի մեկնաբանությունը ըստ Ղափանցյանի), 25) sutuq- «բաժանել, քակել» (ըստ Ղափանցյանի «ավերել» (*)) - հայ. շտոգանել «քակել, պոկել», 26) arnu-zi «սերունդ» - հայ. գ-արմ, արմատ, 27) šeri «առանձին, քաբուն» (ըստ Ղափանցյանի՝ šeri «ավլցուկ», šer «քարձր») - հայ. սար, 28) ulguše «կյանք, ողջություն» - հայ. ողջ, առողջ, 29) iph- «ջարդել, փշել» - հայ. փխուր, փշուր, 30) kapi «չափի միավոր» - հայ. կապի՛ն «մի չափ», 31) pařari «քաղաք» - հայ. պատ, փաթ: Իր այս, և այլ աշխատություններում Գ.Ղափանցյանը մանրամասն անբարդաբժել է նաև ուրարտ. տեղանունների և անձնանունների ստուգաբանմանը՝ նշելով բազմաթիվ հայ-ուրարտական ընդհանրություններ:

ՀԱՃԱՊՅԱՆԻ ԻՐ «ՀԱՅՈՋ ԼԵՉՎԻ ԿՅԱՏՈՒՄՅԱՆ» 1-ին մասում [1940 թ.] ներկայացնում է ուրարտա-հայկական «նման հնչող» 15 բառ՝ երևույթը համարելով պատահական: Դրանք են 1) abili-d- - հայ. ալեի, յալեիում, 2) atu- - հայ. ուտել, 3) agu- «տանել» - հայ. ածել, 4) arnuše - հայ. «առնուլ», 5) ali-ki - հայ. ալլ ոք, 6) haršarš- - հայ. խարխարել, 7) ieše - հայ. ես, 8) qjura «երկիր» - հայ. գաւառ, 9) paru- - հայ. բռնել, 10) susi «պարիսպ» (*) - հայ. սիւս «պարսպապատ որսատեղի», 11) ši-a- - հայ. չուել, 12) teru- - հայ. դիր, 13) uli - հայ. ալլ, 14) uliše - հայ. ուրիշ, 15) ui- հայ. ու:

Վերջին տասնամյակների ընթացքում հայ-ուրարտական առնչություններին առավել հանգամանալից և բազմակողմանի անդրադարձել է Գ.Ջահուկյանը: Մերժելով ուրարտերենի և խուրիերենի մոտ ցեղակցական լեզուներ լինելու գաղափարը՝ նա առաջ է քաշում հայերենի, որպես հնդեվրոպական լեզվի և «խուրի-ուրարտական» լեզուների հեռավոր ազգակցական կապի վարկածը³⁹: Այդ տեսակետից իր մի շարք աշխատությունների մեջ ի մի բերելով եղած տվյալները՝ նա տարբերում է հայ-ուրարտական զուգադիպումների երեք հիմնական խումբ՝ 1) հեռավոր ցեղակցության բառեր՝ դրանց թվում ընդգրկելով հատկապես դերանունները, սպասարկու բառեր և մի շարք բայեր. 2) ուրարտերենից հայերենին անցած բառեր (փոխառություններ և ենթաշերտային բառեր). 3) հայերենից ուրարտերենին անցած բառեր⁴⁰: Թվարկենք դրանք՝ բաց թողնելով արդեն հիշատակվածները.

³⁹ Г. Джаукян, 1963; 1967:

⁴⁰ Տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 136-150. նույնի „Об урартских заимствованиях в армянском языке“, КНБ, Լենինգրադ 1985, էջ 364-372:

1) te-ae «մեծ» - հայ. , *տե, տի- (տի-եզերք, տի-կին, *տի-այր > տեր քառերում), 2) ultu-ni- «տուտ» - հայ. ուղտ -ու (Ի.Դյակոնով), 3) harar «խաղաղություն» - հայ. խաղաղ, 4) quldini «խուպան, անապատ» - հայ. կորդ «խուպան, անմշակ», 5) ka «կանգնել, հայտնվել» (քարգմանությունը ըստ Ի.Դյակոնովի) - հայ. կա-լ, 6) tar(a)man-a/eli- «ինչ-որ շինություն» (ըստ Ի.Դյակոնովի «աղբյուր, ջրատեղ») (*) - հայ. քրքռ. թարմա «տախտակաշեն վերնատուն, քարձրաշեն հարկաբաժին եկեղեցում, քարձրաշեն հենակառույց վազերի համար, խաղողի վազ», 7) ebani «երկիր» - հայ. ՎՆԵԱՆ, որոշ տեղանունների վերջավորություն, որը հետագայում մասամբ բաղադրվել է իրանական ծագման ավան (ävāb) և վան (vān) բառերի հետ, 8) ale «ասում է, խոսում է» - հայ. աղե՛ «ապա, բայց արդ» (քարացած ձևով), 9) paři/ani- «տավար, նախիր» - հայ. պախրե տավար, նախիր», 10) pulusi(e) «կոթող, արձանագրություն» - հայ. փող, 11) pitulie «ջարդի, ոչնչացնի» (ապառնու ձև) - հայ. քրքռ. (Վան, Խլաթ) պոլիլ «փչանալ, ավերել» (*), 12) šari- «այգի» - հայ. ծառ, -ոյ (հ.-ե. *gʷso), 13) šuri «սուր(*), զենք (*)» - հայ. սուր -ոյ (հ.-ե. *k'o-ro), 14) aršibi (aršibi Միևուս քազավորի ձիու անունը) - հայ. արծուի (հ.-ե. *rǵ'ip(i)io), 15) an-iar-duni «անկախ» - հայ. ան-յար «չհարող, անկախ» (ան- < հ.-ե. *p և յար < հ.-ե. *ar «հարմարեցնել»), 16) zil(i)bi/e «ցեղ, ընտանիք, սերունդ» - հայ. ցեղ -ի (հ.-ե. *skel- «կտրել», որտեղից նաև հայ. ցելուկ «ճեղքել»), 17) bauše «խոսք, հրաման, իր, բան» - հայ. բամ, բան (հ.-ե. *bhā- «խոսել»), 18) andani «համդ(*), գավառ(*), շրջան(*)» - հայ. անդ «արտ», քրքռ. հանդ «արտ, դաշտ, մի օրվա արածելիք արոտ», հանդավար «հող. կալվածք. տուն, տեղ, կողմ», այլև՝ անդի, անդեայ «տավար, նախիր» (հ.-ե. *andh-), 19) burgani - հայ. բուրգն և այլն:

Վ.Մարգարյանը [1998, էջ 110-115] անդրադառնալով այս հարցին՝ ներկայացնում է հայերենի, ուրարտերենի և բասկերենի մոտ երեք տասնյակ զուգահեռ բառարմատներից կազմված մի ցանկ: Այս և այլ հեղինակների կողմից նշվող զուգահեռ բառ(արմատ)ները այստեղ չեն բերվում: Դրանց մասին կխոսվի ստորև՝ ըստ տեղի:

III.2.2 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՌԱՐՄԱՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստորև տրվում է հայ-ուրարտական ընդհանուր բառարմատների, բառերի ցանկը, որտեղ ընդգրկված են ինչպես մինչև այժմ տարբեր հե-

տագուտողների կողմից նշված (մեր կողմից ընտրված առավել հավաստի), այնպես էլ մեր կողմից տրվող ընդհանուր բառերը: Շուրջ 156 բառ: Ուրարտերեն ձևերը բերված են ինչպես տառադարձությամբ, այնպես էլ հնչյունադարձությամբ՝ վերականգնված հայերեն զուգահեռ ձևերի հիմքի վրա: Հարմարության համար սեպագրերի տառադարձույնը կատարվել է հաշվի առնելով համապատասխան բառարմատի հայկական համարժեքը (խոսքը վերաբերում է d/ժ/t, b/p, g/k/q, i/e և այլն տիպի հերթագայումների պատճառով առաջ եկող տարընթերցումների): Այսպես, օրինակ, *qudul-* (վանկագիր *qu-du-la-*) «կոթող, տաճար» - հայ. կոթող «կոթող, տաճար» բառը տրված է *kutul-* (վանկագիր *ku₃-tù-la-*) ընթերցմամբ, իսկ *tara-*ն (վանկագիր *tar-a*) «հզոր, հոյժ, շատ, մեծ, ավագ և այլն» - հայ. տիր «հոյժ, շատ, ամենա և այլն»՝ *ṭira* (վանկագիր *ṭir-a*) ձևով: Բնիկ հայերեն բոլոր բառարմատների և մասնիկների համար տրված են նրանց հնդեվրոպական նախաձևերը: Այն բառերի իմաստային արժեքները, որոնց համար առաջարկվում է նոր քարգմանություն կամ կատարվում է իմաստային մասնակի ճշգրտում, ներկայացված են շեղատառերով⁴¹:

Տառադարձում	Հնչյունադարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
ar-	ar-	առ, առ-ն-ում	*ar-nu-	տալ, բերել ⁴²
ar=ni(u)=še	ar=ni(w)=s	առ-ն-եմ	*ar-ne-	արարք ⁴³
ar=nu-	ar=nu-	յ-ար-(ն-չ)-ե/իմ	*ar	հարել, միանալ
ar=(a)ni,	ar=(ə)ni,	առ-ն,	*ə(n)r-	առն(ական) ⁴⁴

⁴¹ Առկա է ընդամենը երեսուներկու այդպիսի բառ:
⁴² Տրված մեկնաբանությունը ըստ Գ.Ջահուկյանի, ինչը նա համարում է հեռավոր ցեղակցական կապի արդյունք՝ մատնանշելով հ.ե. *ar-ի «հատկացնել, տալ, ստանալ» իմաստը [1980, էջ 365; 1988, էջ 149]: Վ.Սարգսյանը համեմատում է նաև բասկ. *ar* «առնել, վերցնել» բայածիկ հետ [1998, էջ 112]: Հայ. առն-ում «ստանալ» բայը ունի նաև «բերել» իմաստը. օրինակ՝ Առցեք առ իս կուժ մի նոր. եւ բերիս առ նա, Առցես առ քեզ գերիսը մի կարմիր (տե՛ս ՆԲՀԼ, Ա, էջ 509): Հ.Սանդալյանը ուրարտ. *ar* (u)-ն համեմատում է հայ. յ-ար-ել «կցել, հավելել» < հ.ե. *ar բայի հետ [1900, էջ 334]:
⁴³ Տված մեկնաբանությունը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 150]. տե՛ս նաև Հ.Աճառյան, 1940 1, էջ 172: Վ.Սարգսյանը համեմատում է նաև բասկ. *ari* «ամել» ձևի հետ [1998, էջ 113]: Ն.Հարությունյանը կապում է հայ. այր սեռ. առն «այր, տղամարդ» բառի հետ «հերոսություն» իմաստով՝ համեմատելով առն-ական, առն-արար ձևերի հետ [H.Արդյոնյան, 2001(ԿՄԿԻ), էջ 436] (տե՛ս նաև հաջորդը):

Տառադարձում	Հնչյունադարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
ar=še	a(y)r=s	այր, (այր-ք)		այր, պատանի ⁴⁵
ardi=še	ardi=s	արդ, -ի/ու	*ar-ti/tu	կարգ, կանոն, ...
an=i=ardu-	an=y=ardu-	ան + յ-արդ, -ու	- " -	անարդար, մեղավոր
armu=zi	armo=ci	զ-արմ, -ոյ	*or-mo	զարմ, ցեղ, սերունդ ⁴⁶
alzena/i	arjēna/i	արձան, ի-ա	-	արձան, ժայռ ⁴⁷
alg=ani/e	arg=an(i)	արգ-ելք, բք-արգ	*ark	սահման, պատճեշ
ale/u	ayle/o	այլ, -ոյ	*al-jo	ով, այլը, ուրիշը (դեր.),
ale/u=ka/e	ayle/o=ka/	այլ-ակ-	- " -	- " -
ale	ayl/ı	այլ/դ	- " -	այլ բայց, իսկ, ... (շ.)
				ևս, էլի, տակավին, ... (մ)
al=e	al=e	աղ-աղ-ակ-եմ, բքքռ. աղ-աղ-ել	*al-ale	ասել, խոսել, հայտարարել ⁴⁸
abeli-	aweli-	աւելի, յ-աւել-եմ	*obhel	հավելել ⁴⁹

⁴⁴ Ն.Հարությունյանը *ar*-(a)-*ni*-ն քարգմանում է «ուծ(°)»՝ կապելով այն հայ. առն «այր, տղամարդ», փխր. իմաստով «ուծել, արի մարդ» բառի հետ [տե՛ս H.Արդյոնյան, 2001(ԿՄԿԻ), էջ 435]: Վերջինս արձանագրություններում նախորդում է *ušma=še* «հզորություն, բախ» բառին, և ըստ այդմ, *ar* (a) *ni ušma=še* արտահայտությունը պետք է հասկանալ «առնական ուծ, բախի հզորություն» (տե՛ս նաև III.2.3 կետ 4): Ըստ նրևոյթին, արձանագրություններում նույն արմատը վկայված է նաև *ar=še* ձևով (հավաքական իմաստով), «այրեր, պատանիներ» նշանակությամբ (քարգմանությունը ըստ համատեքստի). -*še* վերջավորության համար տե՛ս IV.3 կետ 2: Մյուս կողմից, *ár* նշանը նրան հաջորդող *še*-ի հետ միասին հնարավոր է կարդալ DUMU - «պատանի». նման գրությունը, սակայն, բացակայում է ասուրերենում (այդ մասին տե՛ս Г.Меликишвили, 1960 (ՄԿԻ), արձ. 127 ծան. 3):
⁴⁵ Գ.Ջահուկյանը այն համեմատում է հ.-հ. **rsen* «արու, առնական» ձևի հետ [1963, էջ 95]: Վ.Սարգսյանը համեմատում է նաև բասկ. *ar* «արու» ձևի հետ [1998, էջ 113]:
⁴⁶ Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ղափանցյանի [1940, էջ 39]. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 150:
⁴⁷ Գ.Մելիքիշվիլին այդպես է քարգմանում՝ հենվելով արձանագրություններից մեկում հանդիպող «... *alzinai pulusi...*» դրվագի վրա. տե՛ս ՄԿԻ, էջ 301, ծան.1. H.Արդյոնյան, 2001(ԿՄԿԻ), էջ 434:
⁴⁸ Վկայված է բազմաթիվ արձանագրություններում առկա ներածական բանաձևերում: Հայերեն մեկնության համար տե՛ս. H.Արդյոնյան, ՄԿԻ, էջ 432: Գ.Ջահուկյանը համեմատում է հայ. աղե՝ «հապա, բայց արդ» բառի հետ [1988, էջ 143], իսկ Վ.Սարգսյանը նաև բասկ. *ala-tu* «կանչել, ծայր տալ» բայածիկի հետ [1998, էջ 111]:
⁴⁹ Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ղափանցյանի [1940, էջ 38]. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 149:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
ari=beri-	ai/ri=beri-	առ/(յ)ար-բեր-եմ	ari + *bher	մոտ գալ, ի մեջ գալ և այլն
an-	an-	ան-	*n	ան-, ոչ
ai-	ay-	հ-այ-իմ, ն-այ-իմ (բրբռ. այ-ել)	-	հայացք գցել, ուշադրու- թյուն դարձնել, հետևել (*)
n=a-	n=ay-	ն-այ-իմ	-	սպասել, նայել
andane (*)	andan	անդն	- " -	հանդ (*) ⁵⁰
aš-	as-	հ-աս-(ուց)-ան-եմ	* ə(n)k'	գալ, մտնել, հաս(ց)նել, ...
z=aš-	z=as-	- " -	- " -	- " -
h=aš-	h=as-	- " -	- " -	լսել, իմանալ, տեղեկանալ
ał-	ał/t-	հ-ատ-(ուց)ան-եմ	խեթ (*)	ուտել, հատել, սպառել, ...
h=ał-	h=ał-	- " -	- " -	- " -
z=ał- (±)	z=ał-	զ-ատ-(ուց)-ան-եմ	- " -	առանձնացնել, զատել
ał=qana#ne	ał=qana=n	հ-ատ-ուց-ու-մն	- " -	ընծա, նվեր
ał=qana-	ał=qana-	հ-ատ-(ուց)-ան-եմ	-	ընծայել, նվիրել
ap=ti=ne	ap=ti=n	ափն, -ին	-	ափ, եզր, ծովեզր
aueti=ne	aueti=n	աւտի-ա/ք	*aueid	աւտիս, (բարի) լուր
barzu/i=	barju/i=	բարձու/ի,	*bhrg'h +	ինչ-որ շինության անվա- նում
=dibi-	=fiw- (*)	դի/տի (*)	-	բուրգ, աշտարակ ⁵¹
burgana=ni/e	burgan=an(i)	բուրգն, -ան	-	սար, բլուր ⁵²
baba=ni/e	baba=n(i)	բաբայ	-	խոսք, հրաման, իր ⁵³
ba=u=še	ba=w=s	բա-ն, բա-յ	*bhā	խոսք, հրաման, իր ⁵³
der-	der-	դիր/դեր	*dhē-r	դնել ⁵⁴

⁵⁰ Մյասիս ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 149-150]: Ն.Հարությունյանը բարձրանում է «հետո(*)» [KYKH, էջ 435]: Միզուց պետք է հմնա. հայ. անդ «այնտեղ, այն ժամանակ» տեղի/ժամանակի մակրայի հետ (*):

⁵¹ Հայերեն մեկնությունը Հ.Սանդախյանի, 1900, էջ 324. տե՛ս նաև Ն.Արթուրյան, 1972, էջ 403; Գ.Ջահուկյան, 1988, էջ 141; Н.Арutyюнян, 2001(KYKH), էջ 44:

⁵² Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ղափանցյանի. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 141. Н.Арutyюнян, 2001(KYKH), էջ 440: Հայերեն բաբայ՝ «բլուր» բառի համար տե՛ս Բառ. Երկն., էջ 43: Միայն նույն հեղինակի մոտ է պահպանված նաև ուրարտական տեքստերում վկայված՝ թու-ել «վատնել կամ հարել», մեղա-րոի «լուսին», սոյք «լոյսք», սորայք «լայնք» և այլն բառերը (տե՛ս համապատասխան տեղերում):

⁵³ Իմաստը որոշվում է Կելիշինի և Թփուկավայի երկլեզվյա արձանագրությունների միջոցով, որտեղ ուրարտ. ba=u=še-ն զուգորդում է շուներ. INIM-ին և ասոր. amat-u-ին «խոսք, հրաման», «իր, բան» իմաստներով. տե՛ս Н.Арutyюнян, 2001(KYKH), էջ 440: Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 150]:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
dan-	dān-	դն-ել	*dhē-ne	դնել
dar=ani/e	dar=an(i)	դառն-ամ, դարձն	*dhr-g'h-no	դարձյալ, կրկին
daršu=ane	darsu=an	դա(ր)ս, -ու	-	մարդկանց խումբ
delzu=še	derju/o=s	(հան)-դերձ, -ի/ն	իրան. (*)	պատրաստություն, արդ, կազմություն, սպաս
ei=a (*)	ei=a	է-ական/ություն(*)	*es	լինելի, էական, իրական
erp-	ełp-	աղփ-ուց-ան-եմ	*alph	բռնել, քակարդը ձգել
eue, ewe	ew	եւ	*epi	է ⁵⁵
auri-	ewri-	աւրի-որդ	-	տեր ⁵⁶
erši-	erši-	զ-երծ-(ուց-ան-)եմ	*serg' (*)	բաց/ազատ թողնել, ապ- րեցնել, պահել
ebani	ewani	-աւան, -եւան ⁵⁷	-	երկրամաս, երկիր
ieše	yes	ես	*eg'	ես ⁵⁸
i (*)	i/y-	ի/յ-	*en	ի «նախդիր»
imen-	imen-	հիմն, -ան	*sē-mx (*)	հիմք
ibšu=še	iwsu=s	հիւսն, -ուն-ք/ս	-	աման պատրաստող, հյուսն, դորգար
tarma=ni/e	tarma=n(i)	թարմա (*)	-	ինչ-որ կառույց ⁵⁹

⁵⁴ Հ.Աճառյանը ուրարտ. teru- (=der (u)-) - հայ. դիր համարումը բերում է իր կողմից տրված «նման հնչող բառերի» ցուցակում [1940, I, էջ 172]:

⁵⁵ Հայերեն մեկնումը Հ.Սանդախյանի [1900, էջ 360]: Տե՛ս նաև VIII:

⁵⁶ Կելիշինի և Թփուկավայի երկլեզվյա արձանագրություններում համապատասխանում է շուներ. EN-ին «տեր» իմաստով: Գ.Ղափանցյանը ուրարտական euri-ն նույնացնում է հայ. աւրի-որդ «օրհորդ» բառի առաջին մասի հետ՝ մեկնելով այն՝ աւրի «տեր» + որդ(ի) [1940, էջ 38]: Վ.Սարգսյանը համեմատում է հայ. -ա-ւոր «ունեցող» և քասկ. jaur «տեր» ձևերի հետ [1998, էջ 114-115]:

⁵⁷ Հայերեն մեկնումը ըստ Գ.Ջահուկյանի: Վերջինս այն համեմատում է հայկական որոշ աշխարհագրական անունների -եւան/-աւան վերջավորությունների հետ (Նախճ-եւան/աւան, Ալ-եւան և այլն), հնարավոր համարելով հետագա մասնակի բաղադրումը իրանական ծագում ունեցող աւան (պարթ. āvān) և վան (իրան. vān) բառերի հետ. տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 143: Գ.Ղափանցյանը նույնացնում է հայ. աւան «քնակավայր» բառի հետ [1940, էջ 38]:

⁵⁸ A.Mordtmann, ZDMG, Bd, XXVI, 1872, էջ 525. տե՛ս նաև Հ.Սանդախյան, 1900, էջ 337; Г.Джаукян, 1963, էջ 107; Հ.Աճառյան, 1940, I էջ 172 և այլն:

Տառա-դարձում	Հնչյունա-դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
tep-	tep-	թափ-(անց-)եմ	-	թափել, գցել, անցնել մեջը
ti=(u)-	ti=(w)-	թիւ, թու-եմ	*tēu, *tou	խոսել, ասել ⁶⁰
ti=(i)ne	ti=(i)n	- " -	- " -	անուն
teq-	teq/k-	թեղ-եմ/թակ-եմ (*)	*tek/*tag	թեղել, կոխարտել / թակել
tu-	tu-	թու-ել (*)	-	ոչնչացնել, հարել
tur-	tol-	թոյր, թող-ում	*tol-	1. թողնել, ձգել, դնել նետել 2. թուլացնել (*)
laqu-	laqu-	լաք-ուց-ան-եմ	-	թաքցնել
harari/e	xalal(i)	խաղաղ	*khal (*)	խաղաղություն, դադար ⁶¹
haluli/e	xalol(i)	խաղող	-	խաղող ⁶²
harhar(š)-	xarxar(s)-	խարխար-եմ	-	խարխլել, քանդել ⁶³
hur=išhe	xor=išx	խոր	-	զրիոր, ջրավազան և այլն
šare	šar	ծառ, -ոյ	*g'f-so	ծառ, այգի ⁶⁴

⁵⁹ Թարգմանությունը և մեկնաբանությունը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 143]: Ի.Ղ.յակոնովը թարգմանում է «աղբյուր»՝ համեմատելով խոս. тарман և նույնիմաստ բառի հետ [1971, էջ 66]: Նա այս նույն իմաստն է տեսնում նաև հայ. թարմաջուր բառի առաջին բաղադրիչի մեջ՝ ստուգաբանելով այն իբրև «աղբյուրի ջուր» [1971, էջ 85]: Նույնը կրկնում է նաև Մ.Խաչիկյանը [1985, էջ 55]: Ինչը սակայն չի ընդունում Գ.Ջահուկյանը՝ նշելով, որ հայերենում թարմ նշանակում է «թարմ, նոր», բայց ոչ աղբյուր կամ ջրի հետ կապված որևիցե այլ բան [1988, էջ 143 ծան. 33]: Մյուս կողմից, հայերենում ունենք թուրմ «թուրմ» բառը (հմմտ. նաև թոր-ել «ծորել»), որի մի տարբերակն կարող էր լինել վերոնշյալ тарм (а)-ն «ջուր, հեղուկ» իմաստով:

⁶⁰ Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում ուրարտ. ti=(u)-ն համապատասխանում է ասոր. qabā-ին՝ «խոսել, ասել, հրամայել» իմաստով: Հմմտ. հայ. թու-ել («թիւ-ել» «թվել, ասել», թու-ել «ասել, պատմել»): այս մասին տես Գ.Ջահուկյան 1987, էջ 433: Հմմտ. նաև խոս. tiwe «խառք, բան» [Ն.Արմեց, 1972, էջ 269]: Նույն արմատից է կազմված նաև ուրարտ. ti=(i)ne «անուն» բառը:

⁶¹ Թափուզավայի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասոր. šulmu-ին՝ «խաղաղություն» իմաստով: Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 142]:

⁶² Հայերեն մեկնությունը ըստ Հ.Սանդալյանի [1900, էջ 370]: Մատնանշելով նմանապի բառի հնարավոր առկայությունը նաև խուռիերենում [Н.Мкртчян, Субстратные названия растений в армянском языке, ДВ 4, էջ 27]՝ նույնը կրկնում է Ն. Հարությունյանը [КУКН, էջ 445, 461]:

⁶³ Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 371]. տես նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 141 և այլն: Վ.Սարգսյանը համեմատում է նաև բասկ. karkoil «խարխուլ, ամուռ» ձևի հետ՝ մատնանշելով հայ. խարխուլ տարբերակը [1998, էջ 114]:

Տառա-դարձում	Հնչյունա-դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
šue	šu (šov)	ծով, -ու	-	ծով, լիճ, ջրավազան ⁶⁵
šerab=ac	šeraw=a(ə)	ծարաւ, -ո/ու	-	փափագ, անջրդի
šep-	šep-	ծեփ-եմ	-	ծեփ-ել
šep=urde	šep=ord	- " -	-	ծեփ-ագործ
šep=ane	šep=an	- " -	-	ծեփ-ագործներ
šepi=kane	šepi=kan	- " -	-	ծեփ-ագործ
ka-	ka-	կա-մ	*(e)g ⁶⁶ a-	կանգնել, լինել
-kai	-ka=y	-կա-յ	- " -	առջևը, տեղում
ka=i=ani/e	ka=y=an(i)	կա-յ-ան, -ի	- " -	կայան
karmeh(i)	Karmexi/e	կամախ, -ի	-	պատարագ, ընծա
kap=qar(š)-	kap=qar(š)-	կափ-(ուց-ան-)եմ	-	փակել, խփել, գարկել, որոգայթը գցել և այլն ⁶⁶
kapi	kapi	կապի-ճ	-	«քաշի միավոր» ⁶⁷
ke(i)ʔ=an-	ke(i)ʔ=an-	կէտ/կետ	*geid-	կենտրոնացնել, հավաքել

⁶⁴ Համապատասխանում է շումեր. G15-ին, ասոր. išu «ծառ»: Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 447]. տես նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 149; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 461 և այլն: Վ.Սարգսյանը համեմատում է նաև բասկ. zar «տերևներով և ճյուղերով ցախ» բառածևի հետ [1998, էջ 112]:

⁶⁵ Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 414]. տես նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 149; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 461 և այլն: Մ.Սալվինին հիմնվելով այն իրողության վրա, որ ուրարտ. արձանագրություններում šue-ն ունի «լիճ, ջրավազան (այդ թվում նաև արհեստական)» իմաստները, մերժում է ուրարտ. šue հայ. ծով համապատասխանությունը [SMEA, 43/2(2001), էջ 247-248]: Սակայն նա հաշվի չի առնում այն փաստը, որ ծով հայերենում նշանակում է ոչ միայն «ծով», այլև՝ «լիճ», «ջրավազան (նաև արհեստական)» և նույնիսկ «մետաղական մեծ տաշտ» [ՆԱՀԼ, Ա, էջ 1022-1023]:

⁶⁶ Վկայված է գարգաշս-, գարգաշս- (մեկ անգամ, ըստ Ն. Հարությունյանի վրիպակ է [2001(КУКН), էջ 458]), գարգարս-ս-, գարգարի-ս- ձևերով: Հավանաբար բուն արմատն է գար- հմմտ. մմանապի atqana- < at=qana- ձևի հետ:

⁶⁷ Մորող նյութերի մի շարքի, արձանագրություններում համապատասխանում է շումեր. BANE5-ին: Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 386]. տես նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 447: Հմմտ. նաև իրան. kapīc «քաշի միավոր» և խեթ. kappi ձևերը: Ըստ Հ.Աճառյանի հայերեն բառը ունի իրանական ծագում [ՀԱԲ II, էջ 525]. Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում նաև ուրարտական բառի ծագումը իրանական ինչ-որ աղբյուրից [1987, էջ 434. նույնի 1963, էջ 100 և ծան. 161]. տես նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 451:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
kurune	koʃun	կողն, -ուն	*gol-	կողն, կողմը
kuldi=ne	kordi=ʃn	կորդ	-	խոսված ⁶⁸
kul=(u)-	kor=(u)-	կոր-ուս-ան-եմ, կոր-նչ-իմ	-	փախ(ց)նել, կոր(ցն)ել, անհետ-անալ (-ացնել)
kur-	kur-	կր-ունկ	*gu-r-	ստք, կրունկ
kutul-	kotoʃ-	կոթող, -ի	-	կոթող, տաճառ
hubi	hovi	հովի-տ	*oui	հովիտ, դաշտ ⁶⁹
huš-	hos-	հոս(եց-ուց-ան)եմ	-	հոսել, քափել ⁷⁰
z-	z-, j-	զ-, ձ-	*g'hō	զ-, ձ- «նախդիր» ⁷¹
zani-	jayni-	ձայն-եմ, ձայն, -ի	*g'huən-ji	խոսել, ասել, ձայն տալ
zieldē	jierd	լեարդ < *ջիարդ	*jēkur-t	լյարդ
mana(e)	mana	մամ	իրան.	«քաշի միատր» ⁷²
man-	mən-	մն-ամ	*men-ā	մնալ, լինել ⁷³
mak-	mək-	մկ-ունդ	-	մետել, շարտել
meš(i=n)e	mes	մասն, -ին	*mā-k' ?	բաժին, հարկ, մաս (մասերի) բաժանել
meš-	mes-	մասն-եմ/իմ	-	մի, ոչ ⁷⁴
mi	mi	մի	*mē	

⁶⁸ Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 141]:

⁶⁹ Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ղափանցյանի [1940, էջ 55, ծմ. 1. նաև 1948, էջ 195]: Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում երկուսի էլ փոխառությունը մեկ այլ՝ երրորդ աղբյուրից [1987, էջ 434]: Վ.Սարգսյանը համեմատում է նաև քասկ. obi (hobi) «փոս, իջվածք» ձևի հետ [1998, էջ 114]:

⁷⁰ Հայերեն մեկնությունը ըստ Գ.Ղափանցյանի 1940, էջ 114, ծան. 1. տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 447:

⁷¹ Ն.Հարությունյանը հենվելով ուրարտերենում առկա aš (u/a) – «հետապնդել(»), pžել(»), հետևել (»), քայլել(») – zaš (u) – «հետապնդել (») և ašg (u) – «գրավել» – zašg (u) – «ույնչացնել, սպանել» (քարգմանությունները ըստ Ն.Հարությունյանի) բայերի համանման համատեքստերում հանդես գալու փաստի վրա՝ նրանցում առանձնացնում է z- նախածանցը (zaš (u) – < z=aš (u), zašg (u) – < z=ašg (u) –)՝ նշելով վերջինիս հնարավոր կապը հայ. գ- նախդիրի հետ. [2001(КУКН), էջ 476]: Ալմեայտրեն նույն ածանցն է առկա նաև zač (u) – < za-č (u) – [zə-č (u) –] «անել, տալ» բայում. հմմտ. č (u) – «անել, տալ»: Այս մասին տե՛ս IV.3 կետ 1, III.2.3 կետ 6.2 և կետ 7.4:

⁷² Հայերեն բառը ծագում է իրան. *man «ինչ-որ քաշի միավոր» բառից. հմմտ նաև ասուր. man «ինչ-որ քաշի միավոր». տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 453:

⁷³ Հայերեն մեկնության համար տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 139. հմմտ. նույն նշանակությամբ, խուռ. man բառի հետ [М.Хачикян, 1985, էջ 47]:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
naš-	nax-	նախ	իրան. (°)	առաջ տանել, վարել, բերել, գլխավորել
n=ebsi/e-	n=ewši/e-	յ/*ն-աւշ-(աւ)-եմ	-	մորթել, միսը կտրատել
n=uld-	n=ord-	յ/*ն-որդ-եմ	*n(i)-ordh-	ընդարձակել, ծավալել
sufug-	š(u)ʃog-	շտոգ-ան-եմ	-	բաժանել, քակել, պոկել, անջատել ⁷⁵
ulte	ort	որթ, -ոյ	*or-tho	խաղողի որթ
ulgu=še	oʃjo=s	ողջ, -ոյ	*sol(u)-jo(°)	ողջ, առողջ ⁷⁶
ui(e)	oy	ոչ	*o-k'ʷi (°)	ոչ ⁷⁷
uš-	ošt-	ոստ-ն-ում, ոստ-	*ozdo-s	ի բաց հեռանալ, ցատկել դուրս գալ, ծավալվել
ušta=kune	osta=kun	- “ -	- “ -	«(°)»
ušt=ibte	ost=iwt	ոստ-ոյթ, -ի	- “ -	արշավ, հարձակում
ule	ore/ure	որիշ, ուրիշ	-	ուրիշ ⁷⁸
ur=išhe	ur=išx	ուռ(ն)	-	իր, զենք
ur=išh=use	ur=išx=oc	- “ -	-	դարբնոց, զինանոց, ...
ur=urd-	ur=ord-	- “ -	-	դարբին, զինագործ
ulfu=ne	ulfu=n	ողա, -ու	ասուր.	ուղա ⁷⁹

⁷⁴ Հայերեն մեկնությունը Գ.Ջահուկյանի [1988, էջ 139]:

⁷⁵ Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 415]. տե՛ս նաև Գ.Ղափանցյան 1940, էջ 39; Գ.Ջահուկյան, 1987, էջ 436:

⁷⁶ Կեիշինի երկնազյա արձանագրությունում համապատասխանում է շումեր. TI.LA-ին (ասուր. bašācu) «կյանք, ողջ, կենդանի, գոյություն» իմաստով: Հայերեն մեկնությունը Գ.Ղափանցյանի, 1940, էջ 39. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1987, էջ 428; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 472:

⁷⁷ Հմմտ նաև խուռ. oya՝ նույն նշանակությամբ [М.Хачикян, 1985, էջ 37]:

⁷⁸ Հ.Աճառյանը ule=še-ն (արմատը ule-ն է) համեմատում է հայ. ուրիշ «ուրիշ, այլ» բառի հետ [1940, I էջ 172]՝ նմանությունը համարելով պատահական: Գ.Ջահուկյանը ուրարտ. uli/ule=še «ուրիշ, այլ» բառը կապում է հ.-հ. *al-, *ol- արմատի հետ, որից ունենք հայ. այլ, ոյ < հ.-հ. *al-jo դերբանունը [1988, էջ 139]:

⁷⁹ Արձանագրություններից մեկում ուրարտ. ulfu=ne-ն փոխարինում է շումեր. ANŠU.A.AB.BA-ին՝ «ուղտ» իմաստով [տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), արձ. 173 IV]: Հայերեն մեկնության համար տե՛ս Հ.Սանդալյան, 1900, էջ 442. նույնը կրկնում են Գ.Ջահուկյանը [1988, էջ 141] և Ն.Հարությունյանը [КУКН, էջ 472]:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
ul-	ul-	ուղի, յղ-եմ (< *յ- ուղ-եմ)	*ul-	ուղևոր(վ)վել, գնալ ⁸⁰
ul=u=ճt-	ul=u=st-	հմմտ. յղ-ու-մն < *յ-ուղ-ու-մն	*ulu-st-	ուղղորդել, առաջնորդել
n=ul=u=ճt-	n=ul=u=st-	յ/*ն-ուղ-ու-մն, (տե՛ս նախորդը)	*ni- + նա- խորդը	առաջնորդել, վարել, կա- ռավարել
up=ardu-	up=ardu-	հ-ուպ + արդ, -ու	*sub-artu	հրամայել (*), կարգադ- րել(*)
t=up=ardu-	t=up=ardu-	տ + նախորդը	*dus-+ նա- խորդը	անկարգ (*), անօրեն (*), անիշխան(*)
ur=inc ur-	ur=in ur-	ուր - “ -	*k ^h ur - “ -	տեղ, տարածք զետեղել (*), տարածել (*)
uz(=)gi- (*)	uz(=)gi-	ոյժ-, ուժգին	իրան.	ուժ, զորություն ⁸¹
paʃ=use	paʃ=oc	պատ	աս./շում.	շրջապատ, շրջապարիսպ
paʃ=are	paʃ=al/t (*)	- “ -	- “ -	քաղաք, ամրոց
paʃ=g-	paʃ-	պատ-եմ	- “ -	շրջապատել
pare	paʃ	առ	*pors	առ, մինչև «նախդիր» ⁸²
paʃki/e-	paʃki/e-	պատկ-եմ-ալ	-	հաստատել
paʃi/a=ne	paxi/a=n	պախրե, -ի	-	պախր, տավար ⁸³
par-	paʃ-	հեռ-աց-ուց-ան-եմ	*per	հեռացնել, քշել, տանել ⁸⁴
peʃi	peʃi	հ-ետ, ետ	*ped	հետ, ետ
peʃ-	peʃ-	- “ -	- “ -	շրջել, ետ տալ, դառնալ ...
peʃu=ia=ճe	peʃo/u=ya=s	- “ -	- “ -	վերադառնալիս, հետուայս

⁸⁰ Կելիշինի և Քոփուզավայի երկնեզվյա արձանագրություններում համապատասխանում է ասուր. alāku-ին «զնալ, քայլել» իմաստով [Н.Арутюнян, 2001 (КУКН), էջ 471]: Հայերեն մեկնությունը Գ.Ղափանցյանի [1940, էջ 39]. տե՛ս նաև նույնի „Хайаса - колыбель армян“, էջ 215:

⁸¹ Մեկնարանությունը ըստ Հ.Սանդալյանի [1900, էջ 447]: Այլ հեղինակներ քարզմանում են «խնդրանք, աղաչանք»՝ համեմատելով զուգահեռ ասորական տեքստի tenien-ի հետ. տե՛ս И.Дьяконов, 1963, էջ 92; Г.Вильгельм, ДВ, 5. էջ 95; Г.Мелюкшвили, 1960(УКН), էջ 412; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 461:

⁸² Տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 139:

⁸³ Համապատասխանում է շումեր. GUD-ին «ցուլ, խոշոր եղջերավոր անասուն» իմաստով [տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 457]: Հայերեն մեկնությունը Գ.Ղափանցյանի [1940, էջ 39]. տե՛ս նաև նույնի „Хайаса - колыбель армян“, էջ 215:

⁸⁴ Գ.Ջահուկյանը համեմատում է հայ. հորդ-եմ (< հ.-ն. *per) քայի հետ [1988, էջ 139]. տե՛ս նաև Գ.Ղափանցյան, 1940, էջ 29:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
pile	piil/phi	պեղ/հեղ	*bel/*pel	ջրանցք ⁸⁵
gari/e=ni/e	jari/e=n(i)	ջանն (*)	-	քարայր, քարանձավ
gunu=ճe	jun=s	համա-ջուն-ջ, ջն-(ջ-)-եմ	*g ^h hon	մարտ, կռիվ ...
gunu=ճi=ne	junu=si=n	- “ -	- “ -	մարտական, մարտիկ (*)
ճani/e	san(i)	սան, -ի	-	աման, կարաս ⁸⁶
ճer-	ser-	սեռ, -ի	*k ^h er	տոն, սերունդ
ճere	ser	սեռն	*k ^h er-no	առանձին, զուտ, անխառն
ճul=u=ճt-	soʃ=u=st-	սող-ամ, սող-ու-մն	-	սող-ալ ⁸⁷
ճuri	suri	սուր, -ոյ	*k ^h o-ro	սուր, թուր
ճuk=ure	s(u)k=ol	(h)սկ-ող	խեթ.	հսկող
ճur=iճe (*)	sor=isx	սոր-ա-կալ	-	ախոռ, ձիանոց
ti=ae	ti=a(ə)	տի-, տե-	*dei, *di,	մեծ ⁸⁸
tira	tira	տիր	-	հոյժ, շատ, խիստ, մեծ
tuli ⁸⁹	toli	տուլի	-	խաղողի վազ ⁹⁰

⁸⁵ Հայ. պեղ-եմ-ի հետ համեմատման համար տե՛ս Գ.Ղափանցյան, 1940, էջ 39. Г.Джаукян, 1963, էջ 101:

⁸⁶ Կելիշինի երկնեզվյա արձանագրությունում համապատասխանում է շումեր. (DUG) ԽՐՆ-ին (ասուր. diqāru) «կարաս, աման»: Հայերեն մեկնությունը Հ.Սանդալյանի [1900, էջ 421]. տե՛ս նաև Գ.Ղափանցյան, 1940, էջ 39; Գ.Ջահուկյան, 1988, էջ 141; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 462:

⁸⁷ Կազմված է ճul- (հայ. սող-ամ, սող-ու-մն) արմատից և [-u=st-] հայ. -ու-ստ ածանցից (հմմտ. նաև -ա-ստ/-ի-ստ/-ե-ստ): Հայերեն մեկնության համար տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 436. նույնի 1967, էջ 134:

⁸⁸ Ի.Դյակոնովը համեմատում է խոռ. tēae «քազում, շատ» բառի հետ, որը ընդունում է Ն.Հարությունյանը [КУКН, էջ 469]: Գ.Ջահուկյանը համեմատում է հայ. տե-, տի- «մեծ» արմատի հետ (տի-եզերք, տի-կին, տեր < *տի-այր բառերում)՝ համարելով որպեսզի հայերենից անցած հնարավոր բառ [1988, էջ 141]: Վ.Մարգարյանը համեմատում է նաև բասկ. -te «առատ, շատ» վերջածանցի հետ [1998, էջ 112]: Ըստ երևույթի մեթոդի բառի ճիշտ ձևն է ti=ae, -ae-ն այստեղ պետք է դիտել որպես մասնիկ: Մանրամասն այս մասին տե՛ս VI.3 կետ 2: արթ. Ուրարտ. -a (1) Ե մասնիկի համար տե՛ս նաև И.Дьяконов, 1963, էջ 75-76 և այլն:

⁸⁹ Սովորաբար ընթերցվում է ^{GES}uduli (վանկազիր ^{GES}u-du-li-), սակայն այստեղ ն-ն պակնայտորեն պետք է ընթերցել իր գաղափարազիր իմաստով՝ Օ (ասուր. ŠAM) «րույս», ինչպես որ ունենք ^{GES}šam/šē «գարի, հացահատիկ» (այս մասին քանակոր զրույցում մեզ հուշեց Ա.Դավթյանը):

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
tu, ta	tu, ta	տու, տա-մ, ե-տ, տուր	*dō, *dā, *d	տալ, անել, կատարել
za=(u)- tu-	zə=(u)- tu-	զ- + մախորդը	- " -	անել, կատարել
zei=be	cei=w	տուտ-ն	*dud	ծայր, եզր ⁹¹
zeld- ware	jerd- wał	ցեղ, -ի ջարդ-եմ զաղ	*skel - *uɛl	ցեղ, սերունդ ⁹² ճզմել, կոտորել ⁹³ ամբար, քարատոց, ծածուկ տեղ
wal=ɸ-	wa/əl=ɸ-	զալ-, գլ-, գիլ- (գլ-տ-որ-եմ)	*uəl, *uəl,	հաղթել (նաև վեճի մեջ), հաղթահարել, գլորել, տապալել
pul=use	por=oc	փոր-եմ, վիմ-ա- փոր	*phoro	վիմափոր /սեպագիր ար- ձանագրություն (խոսքը վերաբերում է ուրարտ. կոթողային արձանագրու- թյուններին)
paršane	paɸʃan	փայծաղ, -ամ < *փայլծան	*phəlg'-niā	փայծաղ

⁹⁰ Արձանագրություններից մեկում ^{GE5}u-duli-ը փոխարինում է ^{GE5}uldi-ին՝ «խա-
ղողի թուփ, այգի» իմաստով: Ն. Հարությունյանը ^{GE5}uduli-ն ներկայացնում է որպես
^{GE5}uldi-ի տարբերակ [H.Арутюнян, 2001(КУКН), էջ 472]: Սակայն դրանք տարբեր
բաներ են. առաջինը համապատասխանում է հայ. տղի-ին՝ «վայրի խաղող» [տե՛ս
Գ.Վափանցյան, 1940, էջ 39], իսկ երկրորդը՝ հայ. որթ-ին՝ «խաղողի որթ» [տե՛ս III.2.3
կետ 42]:

⁹¹ Ուրարտ. dudi (e) «սահմանաքար, եզրաքար» բառի բարձրանությունը՝ ըստ
Ի.Դյակոնովի [1963, էջ 71 և 88]: Գ.Ջահուկյանը նմանությունը հայ. տուտ «ծայր, եզր»
բառի հետ համարում է կասկածելի [1987, էջ 437]:

⁹² Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է շումեր.
NUMUN-ին (ասուր. zēru) «ընտանիք, սերմ, ցեղ» իմաստով: Հայերեն մեկնությունը
Գ.Ջահուկյանի. [1988, էջ 150]: Վ.Սարգսյանը համեմատում է հայ. ծիլ բառի. zil
«քողոքոջ» արմատի հետ [1998, էջ 112-113]:

⁹³ Թափուզավայի երկլեզվյա արձանագրություններում համապատասխանում է
ասուր. siācu-ին «նեղ դարձնել, ճզմել» իմաստով [H.Арутюнян, 2001 (КУКН), էջ 476].
ըստ Ծերեթելիի «պատռել» (խոսքը քշամի երկրների մասին է). այս մասին տե՛ս H.Ару-
тюнян, 1966, էջ 28:

Տառա- դարձում	Հնչյունա- դարձում	Հայերեն	Հ. -հ.	Նշանակությունը
pit-	p(i)t-	փթ-(ուր), փթթ-իմ	-	ջարդել, փշրել ⁹⁴
qar-	qał-	քաղ-եմ	*kəl	ենթարկել, ոչնչացնել, հաղթել, պոկել, հանել
qar=be	qar=w	քար, -ի	*kar	քար, ժայռ
š	s	ս	*k'ō, *k'e	մերձավոր առարկաների ցուցական դեր. մասնիկ
(i)=ša-	(i)=sa-	ի + սա, ա-յ-ս	- " -	այս
ai=šci	ay=sē	ա-յ-ս ⁹⁵	*ai- k'ō/e	այս մեկը/քանը
i=šu-	i=so-	տո-յն	*k'ō	այս նույն, սույն
n	n	ն	*no	հեռավոր առարկաների ցուցական դեր. մասնիկ
i=na-	i=na-	ի + նա, ա-յ-ն	- " -	այն
ai=nei	ay=nē	ա-յ-ն	*ai-no	այն մեկը/քանը
i=nu-	i=no-	նո-յն	- " -	այն նույն, նույն
ini/e	in(i)	-ն	- " -	որոշյալ հոդ/դերանուն
դերանվանական մակրայներ				
i=šer=hi-ne	iser=hin	ա-յ-ս-ը(-էն)	- " -	(այս) նույն ժամանակ /տեղում
i=neri=hi-ne	iner=hin	ա-յ-ն-ը(-*էն)	- " -	(այն) նույն ժամանակ /տեղում
e/išti=ne	e/išti=n	աստ(ի), աստ	- " -	այստեղ
edi=ne/a	edi=n/a	այդ/տի	- " -	այնտեղ

⁹⁴ Թափուզավայի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր.
nabālu-ին՝ «ջարդել, քանդել» իմաստով [H.Арутюнян, 2001(КУКН), էջ 458]: Հայերեն
փթոր, փթրիլ «փխրել, փշրել» բառը հանդես է գալիս նաև փթուր, փթուր, փթուար և
այլ ձևերով, ըստ այդմ արմատը պետք է լինի *փիթ-ը կամ *փուր-ը. (եթե ճիշտ է բառի
համեմատումը սեպագիր pit-ի հետ, ապա *փիթ-ը): Գ.Ջահուկյանը այն (ապառ. pit-
ulie ձևով) համեմատում է հայ. բրբռ. (Վան, Խյաթ) պտլիլ «փչանալ, ավերել» ձևի հետ՝
նմանությունը համարելով պատահական [1988, էջ 143]:

⁹⁵ Սովորաբար տրվում է «ինչ-որ ժամանակ, երբ որ» իմաստը՝ կապելով այն aše
«երբ» բառի հետ. տե՛ս, H.Арутюнян, 2001(КУКН), էջ 432:

Հայ-ուրարտական կասկածելի զուգահեռ բառերի շարքին կարելի է դասել նաև բազմաթիվ այլ բառաձևերը: Բերենք դրանցից որոշները (30 բառ).

Տառադարձում	Հնչյունադարձում	Հայերեն	Հ. -ն.	Նշանակությունը
ab- (*)	aw-		*au	հավանել, ցանկանալ ...
ama=ni/e	ama=n(i)	աման	*am-	աման ⁹⁶
arhe	arx	աղիս	-	աղիս, սերունդ
aṣe=ni/e (*)	aṣe=n(i)	ատա, ատո	*atta (*)	հայր ⁹⁷
bura=ne	bura=n	բումն, -ան, բոն-ա-տը	*bhōr-	ստրուկ
bura=št-er- (*)	bura=št-el-	բոն-են, բոն-ան-ալ-եղ-, աղ-	- " -	ստրկացնել աղետ, եղեռն
egu- (*)	ejo-	աջ, -այ	*sædhio-	աջ
ir-	ir-	եր-եր-ամ/իմ (*)	*tres (*)	շարժել, տատանել
i=ar=ani/e	y=ar=an(i)	յ-ար	*ar-	կից կառույց/պատվանդան
iu	yo	յ-ո, ու-ո, ո-ո	*k ^h u-(ro)	երբ, ինչպես, որ, եթե
hi=ne	hi=n	զ-ի, ի-ն-չ (հի-մ)	*k ^h i-	ինչի (համար), ուստի ⁹⁸ (*)
hu-	xu-	խու-են (*)	-	ջարդել, ոչնչացնել, վրան հարձակվել (*)
hare	xal	խաղ	*khal	ճանապարհ, արշավ (*)
karkar=ani/e	karkar=an(i)	կարկառ (*)	-	զրահ
kamn=ahe	kamn=ax	կան(ն)-ուխ	-	կանուխ, նախկինում
mari	mari	մար	հայաս. (*)	ազնվատեմիկ, իշխան
muši/e	muš(i)	հ-մուտ, -ի	*mōd	ճշմարիտ, հավատարիմ (հովիվ)
n=ir=be	n=ir=w	(ն)-իր, ի-ա	*ni-k ^h i-ro	իր, կահ, ունեցվածք
sesti=ne /	šešti=n /	շեշտ, -ի /	- /	շեշտակի, սրընթաց /

⁹⁶ Հայերեն մեկնությունը Հ.Մանդալյանի [1900, էջ 327], նույնը կրկնում է Ն.Հարությունյանը [KYKH, էջ 434]:

⁹⁷ Գ.Ջահուկյանը համեմատում է հայ. քրքռ. արո «ծեր կին», խուտ. attai «հայր» բառերի հետ՝ նմանությունը համարելով «առարկան ցեղակցության» արդյունք [1988, էջ 137]:

⁹⁸ Ի.Դյակոնովը թարգմանում է «այժմ, հիմա»՝ համադրելով խուտ. henne հետ:

Տառադարձում	Հնչյունադարձում	Հայերեն	Հ. -ն.	Նշանակությունը
šešti=ne	sešti=n	սաստ-ն	*k'æsti	սաստիկ, հուժկու
suui-	juwi- / čowi-	ձգ-եմ (<*ձուգ-եմ) չու-եմ, չոգ-այ	*g'hu-μ- (*) / *k ^h i-ω-ou-	ձգել, նետել, շարտել / հեռացնել, տանել
šit-	s(i)t-	ստ-ան-ամ, ստի	*stā-, *sti	կառուցել
šiti=st-	s(i)ti=st-	- " -	- " -	- " -
sale	jar	ձար	-	արո այժ, նոխազ / ուլ (*)
pe(i)	pe(i)	հե-ն/ց-	-	տակ, կից
šure=le	sore=r	սորայ-ք (լայնք)	-	աշխարհ, տիեզերք
šule	suł	սուղ	-	սուղ, սակալ
su=he (*)	šu=xi	շու-ք	*k'ud-ko	նոր, փառահեղ, շքեղ ⁹⁹
ulh-	ulx-	ուղիս	-	հեղեղել ¹⁰⁰
uu=še	wo(y)=s	զոյ-ք	*vōse	ապրուստ (*), (օրա)պարեն (*)

Այսբանով Վանի արձանագրություններում վկայված հայերեն բառարմատների ցանկը չի վերջանում: Բազմաթիվ բառարմատներ պահպանվել են զանազան հատուկ ամուններում: Թվարկենք դրանցից մի քանիսը. Aršibe [Aršiw] «ձիու անուն» - հայ. արծուի (-ծիւ) < *ṛg'ipi-jo «արծիվ», Uški=ane [Oski=an] «լեռան անվանում» - հայ. ոսկի «ոսկի», ^dŠinu=arde [^dŠino=ard] «ինչ-որ աստված» - հայ. ծիս, -ի (հին *ծիսն) < *g'enos «ծին», ^dMel=arde [^dMeł=ard] «լուսնի աստված» - հայ. մեղարդ «Լուսին», Tuar=aš=inei hubi [Towar=aš=in=ei hovi] «ղաշտավայրի անվանում» - հայ. տուարածա-տափ «նույն զաշտավայրի անվանումը» - հայ. տուար «տավար» < *dīp̄rā, ^dŠiu=ine [^dŠiw=in] «արկի, լույսի աստված»¹⁰¹ - հայ. սոյ-

⁹⁹ Համարժեք է շուս. GIBIL-ին «նոր» իմաստով: Հայ. շուս-ք բառի հետ հնարավոր կապի մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1963, էջ 134:

¹⁰⁰ Այսպես ըստ Հ.Մանդալյանի [1900, էջ 422]. տե՛ս նաև Գ.Վափանցյան, 1940, էջ 39: Դա պաշտպանում է նաև Ն.Հարությունյանը՝ հենվելով «KYKH 391» արձանագրության վրա, ուր խոսվում է գետի ջրերի օգտագործման մասին [Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 469]. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1987, էջ 428:

¹⁰¹ Հմմտ. խեթական Šiuni, Šiwanni «լույսի աստված»: Այդ մասին տե՛ս, օրինակ, И.Дьяконов, ДВ, 5 էջ 172 և Ս.Հմայակյան, 1990, էջ 44-46:

ք < *սիւ-ք «լույս-ք», ^d(Կ)alti [^dHałti] (*)¹⁰² «ուրարտական գլխավոր աստվածը» - հայ. հաղթ/յաղթ¹⁰³ (ոմանք այն վերլուծում են ^d(Կ)al=di` di-ի մեջ տեսնելով հայ. «դի» «աստված» բառարմատը: Եթե իրոք այդպես է, ապա բացառված չէ, որ (Կ)al-ը պետք է կապել Վանի արձանագրություններում վկայված al- «տեր» բառարմատի հետ՝ հասկանալով (Կ)al=di-ն «տեր-աստված» իմաստով¹⁰⁴ և այլն: Թերևս հայ. սուրբ, -ոյ < *սուրբո < հ.-ե. *k'ubhro «սուրբ» բառն է վկայված ասուր. արձանագրություններում հիշատակվող Šubria երկրանասի անվան մեջ (համապատասխանում է Սասունին)¹⁰⁵:

Այս ցանկը կարելի է բավական երկար շարունակել: Հատկապես շատ են հայկական արմատները ուրարտական դիցարանում, այդ մասին տես Ջահուկյան, «Հայկական շերտը ուրարտական դիցարանում», ՊԲՀ, 1986 թ., 1, էջ 43-58 :

Բազմաթիվ են նաև Վանի արձանագրություններում հանդիպող այն բառերը, որոնց իմաստային արժեքները անհայտ են, բայց որոնք ունեն իրենց հնարավոր զուգահեռները հայերենում: Ընդ որում վերջիններս ոչ միայն ձևով են համապատասխանում վերոհիշյալ բառերին, այլև իրենց իմաստային արժեքներով միանգամայն համահունչ են համապատասխան դրվագների ընդհանուր իմաստին: Դրանք բոլորը, մեկ երկու բացառությամբ, բաց են թողնված և չեն քննարկվում:

¹⁰² Կելիշինի արձանագրությունում հանդիպում է նաև ^dAldi ձևով, իսկ Սեերի դռան արձանագրություններում՝ ^dDi (մեկ անգամ):

¹⁰³ Տես Վ.Սարգսյան, 1998, էջ 52:

¹⁰⁴ Նախկինում մեր կողմից ուրարտ. ^dḫaldi դիցանվան համար նույնպես գործածվել էր «Հաղթ» ընթերցումը՝ կապելով այն հայ. յաղթ/հաղթ «մեծ» բառարմատի հետ, տես Ս.Ալվազյան, 2003, էջ 23: Սակայն նկատի ունենալով այն հանգամանքը, որ ուրարտական տեքստերում ^dḫaldi-ն մի բանի անգամ վկայված է ^dAldi, իսկ Սեերի Դռան արձանագրությունում մեկ անգամ՝ նաև ^dDi ձևով [KYKH 38 I17], այժմ հնարավոր ենք համարում, որ վերջինս թերևս պետք է բաղդատել (Կ)al=di ձևով, ինչպես որ առաջարկում են որոշ ուսումնասիրողներ՝ առաջին բաղդարիչի մեջ տեսնելով ուրարտ. al «տեր» բառարմատը, իսկ երկրորդում՝ հայ. դի «աստված» բառը, որը կարծես թե վկայված է նաև «Aršibi=di=ne» դիցանունում, հմմտ. ուրարտ. Aršibi=ne (հայ. արծուի, -ծիւ) անվան հետ: Ինչ վերաբերում է al-ին, ապա որոշ ուսումնասիրողներ այս արմատն են տեսնում հայ. աղախիս բառում, որը նրանք վերլուծում են աղ(-)ա-խիս ձևով, որպես թե «տիրաջը խնայող» (տես օրինակ М.Хачикян, 1985, էջ 55): Սակայն բացառված չէ, որ այս al-ը պետք է ընթերցել [ar] ձևով՝ սրա մեջ տեսնելով հայ. ար(ի) բառարմատը (հմմտ. հ.-ե. *ar (i) iо «պետ, տիրող, հրամայող»):

¹⁰⁵ Այդ մասին տես Ա.Մովսիսյան, 2004, էջ 61-62:

III.2.3 ՈՐՈՇ ԶՈՒԳԱՀԵՌ ԲԱՆ(ԱՐՄԱՆՆ)ԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորև ներկայացվում են հայ-ուրարտական ընդհանուր բառերի ցանկում բերված որոշ բառ(արմատ)երի առավել մանրամասն մեկնաբանությունները: Դա վերաբերում է հիմնականում այն բառերին, որոնց իմաստները նորովի են մեկնաբանվում և/կամ հայերեն համապատասխան ձևերի հետ առաջին անգամ են համադրվում: Խառնաշփոթից խուսափելու նպատակով արձանագրություններից կատարված մեջբերումների տառադարձությունները և թարգմանությունները տրված են ըստ աղբյուրի (հրատարակչի):

1. [aylo/e-] (alu=še (եզ. էրգ.), ale=le (հոգ. ուղղ.), ale, alu=ka, ale=ke ... ale=ke, ale=pi (*) և այլն) - հայ. այլ/ղ, այլ, -ոյ < *aljo «ուրիշ»¹⁰⁶: Ըստ Ն.Հարությունյանի Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում alu-še-ն համապատասխանում է ասուր. ša-ին «ինչ, որը և այլն» իմաստով [տես KYKH էջ 434]. ըստ Գ.Մելիքիշվիլու՝ ša-ին կամ šummu-ին «եթե, դեպքում» իմաստով [YKH, էջ 388] (ասուրական ša-մասնիկը բազմիմաստ է և իր հիմնական նշանակությամբ ոչ մի կապ չունի ուրարտ. aylo/e-ի հետ. այն հիշեցնում է անգլերենի the և of մասնիկները): Ուրարտ. alu/e-ն մասնագետների կողմից թարգմանվում է «ով-որ, որը» ընդհանուր իմաստով՝ որպես դերանուն¹⁰⁷, սակայն տարբեր համատեքստերում նրան տրվում է տարբեր իմաստներ՝ «ահա ինչպիսի», «երբ», «այն», «ոմանք», «մյուսները ովքեր» և այլն: Տես հետևյալ օրինակները.

- (1) ... [a]-li me-še "Ar-gi-iš-ti-e "Di-a-ú-ḫi-ni-še [a-r]u-ni - «ահա ինչպիսի հարկ ^IX-ին ^IX-եցին տվեց» [KYKH 174 B1₁₉₋₂₀].
- (2) šú-īa-ni ^{SADU}b[a-b]a-[n]a-ni a-li bi-di-i-a- <di> `a-še ^{SAL}lu-<tú> pa-ru-b[i] - «քննամական խոնքից երբ վերադարձա՝ այր, կին քշեցի» [KYKH 240₅₋₇].
- (3) ^dḫal-di-ni-e ba-du-si-e DUB-t[e] [te-r]u-ú-bi a-li ^{URU}Ar-šu-ni-ú-i-ni [DUB-t]e te-ru-ú-bi a-li i-na-a [^{NA4}]pu-lu-si i-na-a DUB-te te-ru-ú-

¹⁰⁶ Հայ. այլ դերանվան հետ համեմատության համար տես նաև Հ.Սանդալյան, 1900, էջ 324:

¹⁰⁷ Տես Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 434:

b[e] - «Խաղղիին հոյակապ գիր դրեցի, այն քաղաքին՝ Արծունիունիին գիր դրեցի, այն հրաշալի(°) գիրը, հրաշալի(°) արծանագրությունը, դրեցի» [KYKH 40օ.ե.3, 41օ.ե.2] (քավական խրթին և կասկածելի քարգմանություն) .

- (4) ú-la-di ^{KUR}E-ti-ú-ni-e-di a-li áš-ta-a-di ^{KUR}E-ti-ú-ni-a iš-ti-ni-i-e - «ուղևորվեցի դեպի Էթունի, երբ հաստատեցի Էթունիի շնորհիվ(°)» [KYKH 241 F4-5].
- (5) a-li ^{LÚ}ta-áš-mu-še be-di ma-a-nu bi-du-ni - «այն գերիներին(°) որոնք վերադարձել էին՝ ետ տվեցի» [KYKH 53,17] և այլն:

Մեկ այլ՝ alu=še (երգակտիվ հոլով alu-ից) ձևով վկայված է հետևյալ կաղապարային արտահայտությունում.

- (6) alu=še ini DUB-te pitulie... aluše ... aluše ainei /ulie ine(e)le dylie (tiulie ulii ture(e)) aluše ule(e)še tiulie ieše ... - «ով այն գիրը փիլ, ով ..., ով ինչ-որ մեկին/ուրիշին դրանք կատիպի, (կասի գնա ջարդի) մեկ ուրիշը կասի ես ...» [...],

իսկ ale=ke ... ale=ke ձևով՝ հետևյալում.

- (7) aleke zašgubi aleke šeḫere/TI.LA parube - «...ոմանց սպանեցի, ոմանց կենդանի քշեցի» [...].

մեկ անգամ վկայված է ali/e=pi (ale=pi kulu=arš=i=be ...) ձևով, տե՛ս (328)-ը.

Ի.Դյակոնովը սույն բառի մեջ տեմում է նաև շաղկապ՝ «ով որ, որը ...» նշանակությամբ՝ ընդգծելով սակայն, որ վերջինս հոլովվում է¹⁰⁸: Կասկածից վեր է, որ ի դեմս ուրարտ. alu/e-ի գործ ունենք հայ. այլ/այդ բառարմատի հետ, որը հայերենում հանդես է գալիս բազմազան ձևերով և իմաստներով. 1) շ. «բայց, սակայն, այլ, իսկ, և, արդ, ուրեմն ...», 2) մ. «և, և և, տակավին, այսուհետև, նաև, կրկին, էլի, այլ ևս ...» 2) ած. «մնացածը», 3) դեր. (սրանք քնակամաքար հոլովվում են) այլ, -ոյ «այլ, ուրիշ» և այլն: Այս նույն բառարմատն է առկա նաև՝ այլել, այլուր, այլուստ, այլազգ, աղավաղել և այլն բառաձևերում: Այն հանդես է գալիս նաև զանազան դարձվածքներում՝ այլ ոք, այլ և այլ, այլ ընդ այլո և այլն: Իր իմաստներով հայ. այլ բառը միանգամայն համահունչ է վկայված

համատեքստերին, օրինակ՝ (1) «... *ահա ինչպիսի* հարկ ¹X-ին ¹X-եցին տվեց»-ի փոխարեն կարելի է, օրինակ, կարդալ «*հապա/նաև* հարկ ¹X-ին ¹X-եցին տվեց...», (2) «Քշնամական լեռներից *երբ* վերադարձա...»-ի փոխարեն «Քշնամական լեռներից *հապա/արդ* վերադարձա...», (3) «...*այն* քաղաքին՝ Արծունիունիին, գիր դրեցի, *այն* հրաշալի(°) գիրը, հրաշալի(°) արծանագրությունը դրեցի»-ի փոխարեն՝ «...*իսկ* քաղաքին Արծունիունի՝ գիր դրեցի, *մեկ այլ* հրաշալի(°) գիր, հրաշալի(°) արծանագրություն դրեցի», (4) «ուղևորվեցի դեպի ^{KUR}X *երբ* հաստատեցի Էթունիի շնորհիվ»-ի փոխարեն «ուղևորվեցի դեպի ^{KUR}X *և* ašt=a=di (անանցողական բայ) Էթունի(-ին) աստ (տրական հոլով) (դերանվական մակբայների և այլ ետադրությունների մնաց գործածության մասին տե՛ս V.3 կետ 4 և VII.3 կետ 2)», (5) «*այն* գերիներին(°) որոնք վերադարձել էին՝ վերադարձրեց»-ի փոխարեն «*իսկ/բայց* հետը եղած (բառացի «մնացած») գերիներին(°) վերադարձրեց» և այլն: Ինչ վերաբերում է ale/u=ke/a տարբերակին, ապա այն անշուշտ համապատասխանում է հայ. այլ-ի այլակ- տարբերակին: Այն հայերենում առանձին վկայված չէ, սակայն պահպանվել է այլակ-ա-բախել, այլակ-ություն, այլ-այլակ և այլն ձևերում¹⁰⁹ (տե՛ս նաև V.3 կետ 6):

2. [(n=)ay-] (ai-, n=a-) - հայ. ն-այ-իմ, հ-այ-իմ, բրբռ. այ-ել «տեսնել, ուշադրություն դարձնել և այլն»: Վանի արծանագրություններում վկայված է ai- և na- ձևերով:

2.1 [ay-] (ai-): Վկայված է հետևյալ արտահայտությունում.

- (8) ... i-ni pi-i-li-e a-gu-ú-ni qi-ra-ni ši-ra-ba-e ma-nu ú-i a-i-ni-i iš-ti-ni a-i-u-ri - «... այս ջրանցքը անցկացրի, հողը անմարդաբնակ(°) էր մնում, ոչ ոք այստեղ չէր գտնվել (°)» [KYKH 187₃₋₅]:

Մասնագետները սույն բայը սովորաբար կասկածանքով քարգմանում են «գտնվել»՝ կապելով այն aie բառի հետ, որին տրվում է «նստավայր(°)» իմաստը: Վերջինս վկայված է ini É barzidibiduni zaduni ¹Menuai É barzidibiduni tini ¹Menuanii aie - «այն É barzidibiduni սարքեցի, Մինուայի É barzidibiduni է անուը, Մինուայի նստավայր» արտահայտությունում: Մակայն aie բառի «նստավայր» իմաստը, ինչպես նաև բառի գոյությունն ինքնին քավական վիճելի է, մանավանդ եթե barzi=dibi-ն կապում ենք հայ.

¹⁰⁹ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, I, էջ 168-169:

¹⁰⁸ И.Дьяконов, 1979, էջ 76:

բարձու/ի-դիւ- ձևի հետ, «բարձր աստվածներ» իմաստով (այդ մասին տե՛ս ստորև՝ կետ 11): Հայ. այ-ել բայը «նայել, հետևել, ուշադրություն դարձնել» իմաստով միանգամայն համահունչ է (8)-ին, որտեղ ai=u-re[ay=u=i]-ը պետք է թարգմանել «նայող, ուշ դարձնող, հետևող», բառացի՝ այ-ոդ:

2.2 [n=ay-] (na-) «սպասել (°)»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(9) III-še UD^{ME} : na-ú-bi : ^{md}hal-di-ERUM ...- «ներք օր սպասում (°) էի ^{1D}hal-di-ERUM-ին» [KYKH 520₁₅],

որտեղ na=u=be-ն Ի.Դյակոնովը կասկածանքով թարգմանում է «սպասեցի(°)»: Հայերենում նայ-իմ բայը ունի նաև «հետևել, սպասել» իմաստը¹¹⁰:

3. [ař/ri=beri=ř-] (ari=beri=ř-) (այսպես՝ ըստ Մ.Սավլինիի) - հայ. առբեր-եմ (°) «մտտ՝ առաջ քերել», «ի մեջ քերել, մատուցանել» և այլն: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(10) ...^{LU}hu-ra-di-ni-li ú-e-li-du-bi ú-la-di ^{MD}Di-[a]-ú-đi-ni-e-di a-ri-bi(-)e-ri-da-bi ka-i-ú-ki gu-nu-đi-ni-e ^{KUR}I-ga-ra-ab-đu-bi-ni-e URU`ar-da-ka-i - «զինվորներ հավաքեցի գնացի Դիաունիսի, aribi եկավ իմ առջև գործը Իգարաբ-հովիտ երկրի՝ Վարդա քաղաքի առաջ» [KYKH 174 A₁₅₋₂₁].

(11) ^{MA}Ar-giš-ti-še a[-li-e] [LUGÁL^{MEŠ}]Di-a-ú-đi a(°)-ri-bi(-)e-ri-da-bi ka-i-ú-ki - «Արգիշտին ասում է՝ Դիաունիսիի արքան aribi եկավ իմ առջև...» [KYKH 174C₆₋₇]:

Ն.Հարությունյանը a-ri-bi(-e)-ri-da-bi-ն կարդում է երկու բառով՝ a-ri-bi e-ri-da-bi, ինչը նա թարգմանում է «անհապաղ/խսկույն(°) եկավ»¹¹¹: A-ri-bi-ն նա համարում է մակբայ՝ «անհապաղ, խսկույն(°)» նշանակությամբ: Նման իմաստով այն թերևս կարելի է համեմատել հայ. յ-ար միանգամայն «խսկույն» և յ-արել-ան-եմ «հետևել, ամփջապես հետևից գալ» < *ar [ՀԱԲ, III, էջ 384-388] ձևերի հետ¹¹², որտեղ

¹¹⁰ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, III, էջ 29:

¹¹¹ Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 435: Նույն հեղինակը բնագիրը թարգմանելիս սույն բառը թողնում է առանց թարգմանության. տե՛ս նշված աշխ. էջ 181-182:

¹¹² Հմմտ. նաև ar=nu=iale «միացան, հարեցին» բայաձևը (տե՛ս III.2.3 կետ 5):

-e/i-be վերջավորության տակ կարելի է տեսնել հայերենի գործիականի ցուցիչը, որը հայերենում կազմում է նաև մակբայներ: Ըստ այդմ, թե՛ ձևով, թե՛ իմաստով հայերեն գուցահեռը լիովին համահունչ է Ն.Հարությունյանի առաջարկած թարգմանությանը: Մակայն մեզ առավել հավանական է թվում վերոնշյալ հատվածի Մ.Սավլինիի ընթերցումը: Ըստ այդմ էլ մենք այն համեմատում ենք հայ. առբեր-եմ բայի հետ, որը թե՛ ձևով, թե՛ իմաստով ամբողջությամբ համընկնում է ուրարտ. ari-beri=ř=ին, որը Մ.Սավլինին թարգմանում է «գալ, մտտենալ, քերվել, հայտնվել և այլն»¹¹³: Մյուս կողմից՝ չի բացառվում, որ որպես վերոնշյալ բառի առաջին բաղադրիչ պետք է տեսնել հայ. յ-ար «մտտ, կից» (յ-ար-եմ, յ-ար-ն-չ-իւ) բառարմատը: Այդ դեպքում հնարավոր է նաև ari/e-beri=ř- անջատ ընթերցումը՝ (յ-)ար բեր-ել «մտտ քերել, մտտ գալ» մեկնաբանությամբ:

4. [ardi/u-] (ardi=še, eia(=)ardi=še, an=i=ardu=(ne), up=ardu=(ř-), ř=up=ardu=ne) «հրաման, կարգ, իշխանություն» - հայ. արդ, -ի/ու- < *ar-ti/tu «արդ, ձև, կարգ, կանոն և այլն»: Այս արմատից ուրարտերենում ունենք մի շարք կազմություններ, որոնց մասին տե՛ս ստորև:

4.1 [ardi=s] (ardi=še) «հրաման, կարգ»: Իմաստը որոշվում է Թուփուգավայի երկլեզվյա արձանագրությունից: Վկայված է հետևյալ տիպի արտահայտություններում. 1) ter=u=be ardi=še [թվարկվում է զոհաբերությունների ցանկը], 2) հանդես է գալիս զանազան շնորհների ցանկում, որ արքան խնդրում է Խալդի աստծոց¹¹⁴: Առաջարկում ենք առաջին տիպի արտահայտություններում ardi=še-ն հասկանալ *զոհաբերության կարգը, կանոնը*¹¹⁵ (ըստ որի այն պետք է կատարվի) «դրեցի կարգ ... (թվարկվում է թե որ աստծուն երբ, ինչքան և ինչ զոհա-

¹¹³ Տե՛ս M.Salvini, "Die Felsinschrift Argištiš I, bei Ortakent Kreis Hanak", Orientalia, vol. 75, I, 2006, էջ 77-78:

¹¹⁴ Տե՛ս օրինակ՝
- ^{MD}haldinane ^{GIS}KÁ bidine manine ... eia ardi=še arne ušma=še - «Խալդի աստծո զոհերի կողմից թող լինի ... և ուժ, շնորհ, հզորություն» [YKH 448,418₁]:

- manine ^Dšiuine bidine ... ulgu=še pišu=še alsui=še [YKH 95₄].

- manine ^DHaldine bidine ... ulgu=še pišu=še alsui=še [YKH 93₄] և այլն:

¹¹⁵ Այս ձևով է թարգմանում Հ.Կարապոյանը [1981, էջ 45], ինչը ընդունում է նաև Ս.Հմայակյանը [1990, էջ 92, ծճ. 15]:

բերվի)»: Երկրորդ տիպի արտահայտություններում *ողջության, երջանկության* կողքին հիշատակվում է նաև *ardi=še-ն*, որը, նկատի առնելով հայ. արդ արմատի բազմիմաստությունը, կարելի է հասկանալ տարբեր ձևով, ասենք՝ *կարգ, վայելչություն, արդարություն* և այլն: Հմնտ. նաև (12)-(13)-ում վկայված բառիս ժխտական ձևի հետ, որտեղ արքան գոհաբերություն է կատարում աստծո առաջ [an=y=ardu=u(n)] (ան-յ-արդ-ու(ս)) «ամիրավ, մեղավոր, անարդար» չլինելու համար (տե՛ս ստորև՝ կետ 4.3):

4.2 [eia(=)ardi=s] (eia(=)ardi=še): Տե՛ս III.2.3 կետ 16:

4.3 [an=y=ardu=(n)] (an=i=ardu=(ne)) «մեղավոր, անիրավ»: Թարգմանությունը ըստ Ի.Գյակոնովի (Գ.Մելիքիշվիլին կասկածանքով քարգմանում է «անկախ(»)»: Կազմված է հայ. ան- <*ը ժխտական մասնիկից և յ-արդ, -ու <*(en)-ar-tu «արդար, ճշմարիտ և այլն» բառից: ([-u=(n)] վերջավորության համար հմնտ. հայ. յ-արդ-ար-ուև, գ-արդ-(ար)-ուև բառաձևերը): Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(12) ¹X LUGÁL ^{KUR}X a-ni-ia-ar-du-ni ma-ñu ú-i a-i-ni-i LUGÁL iš-ti-n[i] uš-tú-ri - «X արքան՝ X երկրի անկախ (») էր, ոչ մի արքա այստեղ չէր արշավել» [KYKH 241 E₄₁₋₄₃].

(13) ^mRu-sa-ni ^dše-bi-tú-i ^{L⁰}ERUM ^dše-bi-tú-ka-i a-ni-ia-ar-du-ni ¹Ru-sa-a-ni a-ni-i-a-ar-du NU-li-ni - «Ռուշան Սեբիթուի ծառան, Սեբիթուի առաջ մեղավոր էր, Ռուշան թող մեղավոր չլինի (»)» [ԸԲ, 5, էջ 152 IV₁₀₋₁₂/KYKH 392₁₀₋₁₂]:

Գ.Չահուկյանը an=i=ardu-ն համեմատում է հայ. ան-յար «չհարող, անջատ» ձևի հետ¹¹⁶, ինչը անհարմար է, եթե ընդունում ենք Ի.Գյակոնովի առաջարկած «անիրավ, մեղավոր» իմաստը:

4.4 [up=ardu=(t-)] «հրամայել(»), կարգադրել(»), իշխանություն/օրինական ուժ տալ (»)»: Կազմավորված է ուրարտ. [ardu=] - հայ. արդ, ու և [up] - հայ. (h)ուլպ <*sub «կից, մոտ» բառարմատներից: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

¹¹⁶ Տե՛ս Գ.Չահուկյան, 1987, էջ 443:

(14) ^DHal-di-še ú-bar-du-du-ni i-e-še ši-di-iš-tú-bi - «Խալդին կարգադրեց (»), ես կառուցեցի» [KYKH 419₅₋₆]:

(15) ^DHal-di-še ú-bar-du-du-ni i-e-še i-ni ^{GIS}ul-die te-ru-bi - «Խալդին կարգադրեց (»), ես այն խաղողի այգին դրեցի» [KYKH 421₉₋₁₁].

(16) ... a-lu-uš-me tu-bar-du-ni-[e?] ú-bar-a-du-ú-ia-a-[li] a-lu-uš-me LUGÁL-tú-ħi tar-a-g[i] a-ru-ni - «» [KYKH 406_{п.с.21-24}].

(17) ... a-lu-u]š-me tu-bar-[du-ni-e¹¹⁷ ú-bar-a-du-ia]-a-li a-lu-uš-[m]e LUGÁL-[tú-ħi tar-a-gi a]-ru-ni - «» [KYKH 407_{п.с.16-19}].

(18) ... a-lu-uš-me tu-bar-du-ni ú-bar-du-gi a-lu-uš-me LUGÁL-tú-ħi DAN-NU a-ru-ni ... «... որը-ինձ շնորհեց(»), որը-ինձ ... » [Van recto_{7.9} (SMEA 44/1, 2001, էջ 112-143)]:

4.5 [t=up=ardu=ñ] «անկարգ (»), անիշխան, անօրեն (»)»¹¹⁸: Կազմավորված է նախորդից՝ [t-] - հայ. տ- «ոչ, չ-» ժխտական մասնիկի հավելումով: Վկայված է (16)-(18)-ում: Ե.Գրեկյանն դրանք քարգմանում է «... որը-ինձ իշխանությամբ(») օժտեց(»), որը-ինձ քազ(») կամեցավ, որը-ինձ մեծ արքայություն տվեց ...»¹¹⁹: Սակայն, ինչպես տեսնում ենք, [t=up=ardu=-] բառաձևը վկայված է [up=ardu=-] -ի հետ կապակցված՝ միևնույն համատեքստում, որտեղ նախապես խոսվում է արքայի՝ Խալդի աստծո ծառան/ստրուկը լինելու մասին (^mAr-giš-[ti-še] ^mRu-sa-a-ħi-ni-[i-še] ^DHal-di-ni-še ^{L⁰}ERUM-še ... [KYKH 406_{п.с.14-16}, 407_{п.с.12-13}, ...]) և այդ պատճառով մեզ թվում է, որ այնուհետև տեքստում խոսվում է այն բոլոր շնորհների մասին, որ ինքը չունենալով՝ ստացել է Խալդիի կողմից՝ ընդգծելով, թե հատկապես ումից է նա ստացել այդ ամենը: Ըստ իս՝ tu-bar-du-[t=up=ardu-] և ú-bar-du-[up=ardu=] բառ(ախիմք)երը ուրարտերենում ծագում

¹¹⁷ Այսպես ըստ Ն.Հարությունյանի: Հաշվի առնելով այն իրողությունը, որ սեպագիր տն-ն այրուտ չունի փս, ընթերցումը և հակառակը, հակված ենք այն համարել վրիպում, այնուամենայնիվ չբացառելով տն-ի փս, հնարավոր ընթերցումը:

¹¹⁸ Հարությունյանը հետևելով Մ.Խաչիկյանին և Ի.Գյակոնովին՝ այն համեմատում է խուռ. tubae «ուժեղ» բառի հետ և քարգմանում «ամրացնել(»)». տե՛ս Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 435:

¹¹⁹ Ե.Գրեկյան, ՊՐՀ, 2004, 1, էջ 228-229:

են միևնույն ardu- «կարգ, ձև, օրենք և այլն» արմատից՝ է= (հայ. տ-) և (=) up= (հայ. հ-ուպ-) նախածանցներով և համապատասխանաբար մտավորապես պետք է նշանակեն «ամարդար, անօրեն, անկարգ, անհիշխան և այլն» և «արդարացի, օրինական, կարգավորյալ»: Ըստ այդմ նախադասության այս հատվածը ամենայն հավանականությամբ պետք է թարգմանել «... (նրա) ով որ ինձ՝ ամարդարին/անօրենին (տրակ. հոլով (°)) արդարացրեց/օրինական ուժ/հշխանություն տվեց...»: Փաստորեն [է=up=ardu=n] և [an=y=ardu=n] բայածականները կազմված են համապատասխանաբար [up=ardu=] և [*y=ardu=] բառ(ահիմք)երից (վերջինն առանձին վկայված չէ) մի դեպքում՝ է=, մյուս դեպքում՝ an= ժխտական մասնիկների հավելումով: Մրանք երկուսն էլ ունեն մոտ իմաստ և հանդես են գալիս նմանատիպ համատեքստերում, որտեղ խոսվում է ուրարտ. արքայի՝ Խալդի աստծո ստրուկը լինելու և նրա առջև ունեցած «անօրեն/մեղավոր» վիճակի/դիրքի մասին (տե՛ս վերը):

5. [ar=nu-] - հայ. յ-ար-(եց-ուց-ան-)եմ, յ-ար-նչ-իմ < *ar «հարել, միանալ, կից և այլն»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(19) [bur]-ga-la-li LUGAL^{MES} KUR^X-el[i] [a]r-nu-ia-li - «համալրումները (°)՝ KUR^X երկրի թագավորների եկան օգնության» [KYKH 31_{π.c.14-16, o.c.4-5}].

(20) a-li-e-li LUGAL^{MES} [a]r-nu-i-a-li ^mDi-a-ú-hi-ni-e ši-ši-ni MU/ ¹X ŠE.ŠE DÙ - «թագավորները, որոնք օգնության եկան Դիաուխիական թագավորին երեք(°) տարի (անընդմեջ).../ մյուս թագավորներին օգնության եկած ¹X-ին՝ ջարդ տվի [KYKH 174/ՄԿԽ 128 B1₃₃₋₃₇]:

Գ.Մելիքաշվիլին կասկածանքով թարգմանում է «օգնության գալ(°)»: Ն.Հարությունյանը վստահաբար կրկնում է նույնը¹²⁰: Առաջարկվում է ar=nu--ն թարգմանել «հարել, միանալ»՝ կապելով այն հայ. յ-ար-եմ, յ-ար-նչ-իմ «հարել, միանալ այլն» բայի հետ: Նման մեկնաբանումը լիովին համահունչ է քերված վկայություններին, որոնցում «... օգնության եկած (կամ օգնության եկան)» հատվածների փոխարեն կարելի է կարդալ «... միացած (կամ միացան)»: Մյուս կողմից, բացառված չէ ar=nu-ի կապը հայ. առ-ն-ուս(առ-նու-ս) «քմնել, գրավել, տիրել, վերցնել, իրեն քաշել, հաջորդել և այլն» բայի հետ: Այս դեպքում

ուրարտ. -ոս--ի մեջ վստահաբար կարելի է տեսնել հայ. -նու- բայածանցը. (այս ածանցի մասին տե՛ս IV.4 կետ 1):

6. [as-] (aš=(t)-, ɸ=aš-, z=aš-, aš(a)=ze (°), aše) - հայ. հ-աս-(ուց)-ան-եմ < *ə(n)k՝ «հասնել, հասցնել և այլն», հաս-(ոյթ) «հասույթ, ռոճիկ» և այլն: Հայերենում բազմաթիվ իմաստներով հանդես եկող արմատ է: Վանի արձանագրություններում վկայված է aš-, ɸ=aš-, z=aš- և, թերևս նաև, aš=է- (հմմտ. ar=(է)-, suu=(է)-, der=(է)- և այլն), aš(a)=ze ձևերով, որտեղ ɸ- և z- մասնիկները նախածանցներ են (հայ. հ- և գ-/ծ-, տե՛ս IV.3 կետ 1)¹²¹:

6.1 [as-] բայը Գ.Մելիքիշվիլին թարգմանում է «թողնել (°), քնակեցնել (°)» (անցողական) և «հետապնդել(°), զնալ(°)» (անանցողական)՝ համեմատելով այն խոռ. as «նստել, քնակեցնել» բայի հետ¹²², իսկ Ն. Հարությունյանը՝ համապատասխանաբար՝ «հետապնդել(°), քշել(°)» և «հետևել(°), քայլել(°)»¹²³: Առաջին իմաստը ենթադրվում է հետևյալ արտահայտություններում.

(21) a-šú-ni iš-ti-ni ^{L0}X a-šú-ni ^{L0}ZAB.GİR^M[^{ES} iš-ti-ni?] - «թողեց այստեղ ^{L0}X, թողեց գործեր» [KYKH 45₆₋₇].

(22) [^{L10}ir-di^{MES} iš-ti-n[i] a-šú-ú-bi ^{KUR}e-ba-a-ni ^{KUR}e-ba-ni-ú-ki-e-di a-bi-li-du-bi - «կայազոր(°) այստեղ թողեցի, երկիրը երկրիս ավելացրի» [KYKH 241B₂₄₋₄₇].

(23) ^{L0}ir-di iš-ti-i-ni a-šú-ú-bi ^{KUR}X-ɸi-ni-i ^{L0}šia iš-ti-ni e-er-ši-du-bi - «կայազոր(°) այստեղ թողեցի, X-երկրին ^{L0}šia այստեղ նստեցրի» [KYKH 241D₂₈₋₃₂].

(24) i-ú ^{KUR}e-ba-ni/^{KUR}KUR-ni-i áš-ú-la-a-bi - «երբ երկիրը թողեցին» [ՄԿԽ 241C₄₆ 241A₁₂].

¹²¹ Ուրարտ. տեքստերում հայ. գ- նախածանցի հնարավոր վկայության մասին տե՛ս Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 476. տե՛ս նաև ծան. 71:

¹²² Г.Меликишвили, 1960(УКН), էջ 391: Մակայն ուրարտ. aš- բայի համապատասխանությունը խոռ. as «նստել, քնակեցնել» բային քիչ հավանական է իմաստային առումով:

¹²³ Նա արդարացիորեն իմաստով մոտ է համարում սլ (a)-, սժт (a)- բայերին [2001(KYKH), էջ 437-438]: Գ.Ղափանցյանը համեմատում է հայ. հաս-ան-ել բայի հետ վերջինս թարգմանելով «օգնության հասնել»:

(25) [i]-ú É.GAL^{MEŠ} áš-ú-la-a-l[i] - «երբ ամրոցները բողեցին» [KYKH 35_{п.с.28} o.c.35],

իսկ երկրորդ իմաստը՝ հետևյալներում.

(26) su-ú-i-du-lu-ú-bi-[e] a-šú-ú-bi pa-ri-e^{URU}X - «շարտեցի, հետապնդեցի մինչև^{URU}X» [KYKH 177₁₃, 241 E₁₁].

(27) a-šá-di i-ni ha-a-ri-[ni?] ^{URU}A-mu-šá-di - «...գնացի այն ճանապարհով Ամուշա» [KYKH 411₂₂₋₂₃]

(այս բայը հանդիպում է նաև [KYKH 224, 225] արձանագրություններում, վնասված և դժվար թարգմանվող հատվածներում, որոնք այստեղ բերված չեն): Մ.Սալվինին հենվելով Մովանայից և Մերգեհ Քարվանից վերջերս հայտնաբերված և իր կողմից հրատարակված արձանագրություններում առկա ուրարտ. aš=č- (aš=d-) ասուր. erēbu «գալ, մտնել» համապատասխանության վրա՝ առաջարկում է «մտնել, գալ (եկա/մտա խնջույքի)» թարգմանությունը¹²⁴: Առաջարկվող «հասնել, հասցնել, և այլն» թարգմանությամբ վերոհիշյալ արտահայտությունները պետք է կարդալ՝

- «հասցրեց (բերեց) այստեղ^{LÚ}X, հասցրեց գորք» (21).
- «^{LÚ}irdi-ներ այստեղ *hwasgrēg*, երկիրը երկրիս ավելացրի» (22).
- «...այստեղ *hwasgrēh*, ^{KUR}X-ին, ^{LÚ}šia այստեղ թողեցի» (23).
- «երբ երկրին *hասան*» (24).
- «երբ ամրոցներին *hասան*» (25).
- «շարտեցի, *hwasgrēh* մինչև^{URU}X» (26).
- «*hասա* այն ճանապարհով Ամուշա» (27).

6.2 [z=as-] (z=aš-): Գ.Մելիքիշվիլին թարգմանում է «ուժեղացնել(°), ամրացնել(°)»՝ բխեցնելով այն իր կողմից առանձնացվող zaše «հզոր ամուր» բառից, որը Թովուրգավայի երկլեզվյա արձանագրությունում [YKH 264_{26,28}] կասկածանքով համապատասխանեցվում է ասուր. lutu-ին «հզոր, ամուր» նշանակությամբ: Սակայն «ուժեղացնել(°), ամրացնել(°)» իմաստը այնքան էլ չի համապատասխանում համատեքստին: Տե՛ս հետևյալ արտահայտությունները.

(28) su-ú-i-du-[lu-ú-bi] za-šú-bi pa-ri [^{KUR}...] - «շարտեցի z-aš-ubi մինչև []» [KYKH 242C₂₋₃].

(29) a-li ba-di-[i-ni-ni?] ši-a-bi za-šú-ú-[bi pa-ri?] ^{KUR}X - «այլ ba-di [] տարվավ, z-aš-u[bi] X երկիրը» [KYKH 242C₅₋₆].

(30) i-ú DINGIR^{MEŠ}-ú-e tar-a-mu ^{KUR}šú-ri-e-li za-šú-a-li - «երբ (Խալդին) աստվածների(ն) taramu տիեզերքը ամրացրեց (°)» [KYKH 174 A₄]:

Այդ իսկ պատճառով վերոհիշյալ արտահայտություններից երկուսում zaš- բայը Գ.Մելիքիշվիլին չի թարգմանում: Ինչպես արդարացիորեն մշում է Ն.Հարությունյանը, aš- և zaš- բայերի իմաստով մոտ լինելը հատկապես պարզորոշ երևում է արդեն հիշատակված su-ú-i-du-[lu-ú-bi] za-šú-bi pa-ri [^{KUR}...] - և su-ú-i-d[u] za-šú-bi pa-ri []... արտահայտությունների համեմատումից¹²⁵: Բացի այդ, Մ.Սալվինին հենվելով Մովանայից և Մերգեհ Քարվանից վերջերս հայտնաբերված և իր կողմից հրատարակված Թովուրգավայի արձանագրության կրկնօրինակների վրա, համապատասխան տեղում կարդում է aše՝ դրանով իսկ մերժելով zaše բառի առկայությունը վերոնշյալ արձանագրությունում: Առաջարկվող «հասնել, հասցնել և այլն» թարգմանությունը միանգամայն ընդունելի է նաև սույն բառի մյուս վկայությունների համար:

6.3 [h=as-] (h=aš-): Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում [YKH 19yp₃₃] համապատասխանում է ասուրական isime-ին (i₂ šem-ից), որը նշանակում է «լսել»: Հմմտ. նաև խուտ. haš- «լսել, տեղեկանալ»: Հայերենում հաս-ան-եմ բայը ունի նաև «իմանալ, տեղեկանալ, ըմբռնել (դարաբարդի քարբառում նաև ուղղակի «լսել»¹²⁶) իմաստը:

6.4 [as] (aše): Մովորաբար թարգմանվում է «երբ»¹²⁷: Հանդիպում է միատիպ «aše այսինչ բանը արվի, այնինչ բանը թող կատարվի» արտահայտություններում: Հայերենում հաս-ան-եմ բայը ունի նաև ժամանակի իմաստ: Ըստ այդմ, նշված արտահայտությունները կարելի է թարգմանել «կգա/կհասնի (պահը/գործը) այսինչին, թող կատարվի այնինչ բանը»:

¹²⁵ Տե՛ս Н.Арутюнян, 2001 (KYKH) էջ 476 և 254 ծան.14:
¹²⁶ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԱՐ, III, էջ 47:
¹²⁷ Տե՛ս Н.Арутюнян, 1966, էջ 437:

¹²⁴ Տե՛ս М. Salvini, 1984 (ZU), էջ 87, 91, 93:

6.5 [as=(a)c (*)] (aš=(a)ze) «քաժին (ավարի), ռոճիկ» - հայ. հ-աս «քաժին, տուրք, հարկ» [ՀԱԲ, III, էջ 46], հ-աս-ոյթ «հաս, սուտք, ռոճիկ» [ՆԲԷԼ, II, էջ 53]: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (31) ^mMe-nu-ú-a-še a-li-e kam-na-a-ši a-li ^mDi-a-u-ši-ni-i ANŠU.KUR.RA^{MES} ú-ú ^{L0}A.SI^{MES} `a-ša-a-u ^{L0}A.SI^{MES}-aš-te ú-i-ú-ni a-ša-a-zi-e ši-i-ni-e ši-ú-bi ^{L0}hu-ra-d[i-n]a-a ma-si-ni-e i-a-ni a-ša-zi-e [ú-ú]še - «» [KYKH 53₁₈₋₂₃].
- (32) [^{L0}A.]SI^{MES}-na ú-ú-še ma-si-ni i-a-ni aš-zi-e - «» [KYKH 174 BI₂₆]:

Երկու արտահայտություններն էլ դժվար հասկանալի են, այդ պատճառով մասնագիտական գրականությունում ամբողջությամբ չեն քարգմանվում: Թարգմանության փորձ է կատարել Ի.Դյակոնովը՝ aš (a) ze-ի համար առաջարկելով «քաժին» իմաստը¹²⁸: Ն.Հարությունյանը, չքարգմանելով վերոնշյալ արտահայտությունները, սույն բառի համար տալիս է նույն իմաստը, ինչ որ Ի.Դյակոնովը [KYKH, էջ 437]: Մեր կողմից առաջարկվող հայերեն թարգմանությունը կարծես թե հաստատում է «քաժին» քարգմանությունը: Ինչ վերաբերում է -ze վերջածանցին, ապա այն թերևս կարելի է համենատեղ հայ. -g ածանցի հետ (տե՛ս IV.3 կետ 2):

7. [aʔ-] (aʔ=qa(=)naʔ=ne, aʔ=qa(=)naʔ-ʔ, aʔ/ʔ-, ʔ=aʔ-, z=aʔ-(*)) - հայ. հատ-(ուց)-ան-եմ «հատել, կտրել, սպառել, հատուցել, պարտքը տալ և այլն», գ-ատ-եմ «առանձնացնել, զատել, հատուցել»: Հայերենում մեծ զարգացում ապրած և բազմաթիվ իմաստներով հանդես եկող արմատ է: Առկա է նաև յ-ատ-ան-եմ, ն-հ-ատ-եմ, ընդ-հատ-եմ ձևերով:

7.1 [aʔ/ʔ-] «սննկացնել, հատել, մսխել(երկիրը)»: Որոշ արձանագրություններում փոխարինվում է KÙ «ուտել» գաղափարագրով, որից և որոշվում է «ուտել» իմաստը: Մասնագիտական գրականությունում սովորաբար այն համենատեղում է հայ. ուտ-եմ բայի հետ¹²⁹: Վանի արձանագրություններում վկայված է հետևյալ արտահայտություններում.

¹²⁸ И.Дьяконов, 1963, էջ 70:

¹²⁹ Տե՛ս Հ.Աճառյան, 1940, I էջ 171; Գ.Չառուկյան, 1988, էջ 139: Այս ձևը (atú-bi, atú-ni) ի տարբերություն aʔu- և haʔu- ձևերի գրված է t-ով (t-ի փոխարեն)։ մի զուգորդում ունենք երկու տարբեր արմատների հետ (Վանի արձանագրություններում տն վանկի ʔu- արժեքով հանդես գալու համար հմնա. նաև՝ túbardu- [KYKH 407 և 21] և ʔubardu- տարբերակները [KYKH 406 և 21]):

- (33) (URU^{MES} amaštube/GIBIL-be) ... ^{KUR}ebani atube/KÙ-be ... - «քաղաքները այրեցի, երկիրը կեորա ...» [KYKH 241A₈, B₁₆, C₃₆, D₁₃, E₁₄, ...].
- (34) a-lu-še ʔa-lu-li e-[g]u-di GÙB-di a-tu-li-i-e - «ով որ ʔaluli աջ, ձախ ուտի» [KYKH 122₃].
- (35) i-ú tú-šú-ʔa-a-ni ^{KUR}X-di uš-ta-a-d[i] [^{KUR}e-ba] -a-ni a-tú-ú-bi a-ma-aš-tú-ú-bi - «երբ տušuhani դեպի X-երկիր արշավեցի, երկիրը կեորա, այրեցի» [KYKH 44_{π.c.2-3}]:

7.2 [aʔ=u]: Սովորաբար չի քարգմանվում, վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (36) inukani edin(i) [naʔidini/tarini/azibi edani ʔarare] aʔu - «նույնը այնտեղ ... aʔu» [KYKH 241B₅₈, D₅₃, E₅₇]:

7.3 [h=aʔ-] (ʔ=aʔ-) բայը վկայված է մեկ անգամ, վնասված և անհասկանալի արտահայտությունում, որտեղ ընդհանուր առմամբ խոսվում է ինչ-որ երկրների նվաճման մասին:

7.4 [z=aʔ-] «տալ, հատկացնել (ճանապարհ)» - հայ. գ-ատ-եմ «զատել, առանձնացնել և այլն»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

- (37) ʔaš=ia=l=me DINGIR^{MES} zat=u=me ʔare/KASKAL-(e) (ište=di) - «լսեցին ինձ աստվածները, տվեցին ճանապարհ (դեպի այստեղ)» [KYKH 241E_{8,47}, 242BI₁₂, 158₁₀]:

Թեև սույն բառը տեղ է գտել հայ-ուրարտական զուգահեռ բառ(արմատ)երի մեր ցանկում, այնուամենայնիվ նրա առկայությունը միարժեք չէ, քանզի նույն հաջողությամբ այն կարելի է ստուգաբանել zə=ʔu-՝ կապելով ʔu-(d(u)-) «անել, տալ» - հայ. տա-մ, տու, ե-տ բայի հետ:

7.5 [aʔ-] (aʔ=qa(=)naʔ=ne, aʔ=qa(=)naʔ-ʔ) «ընծայական, նվիրական (ած. (*))¹³⁰», «նվիրել, ընծայել» - հայ. հ-ատ-ուց-ումն «տուրք, ընծա, վճատ և այլն», հ-ատ-ուց-ան-եմ «կտրել, պարտքը վերադարձնել, հաշիվ տալ,

¹³⁰ Առավել հավանական է, որ (38)-ում վկայված aʔ=qa(=)naʔ=ne բառը պետք է հասկանալ իրև ածական «զոհաբերության/նվիրատվության համար նախատեսված» (մանրամասն տե՛ս IV.3 կետ 2):

վճարել և այլն»: Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում առկա են հետևյալ զուգորդումները.

(38) ուր. GAL^{MES} aṭ-qa-na-ni i-ú ^dAl-di-ka-a-[i] - (աւ.) rabutim equte kii ina pani ^bḥaldi [] - «մեծ զոհաբերություն, երբ որ Խալդիի առջև...» [KYKH 30_{yp.16, ac.14}].

(39) ուր. aṭ-qa-na-di-tú ... (աւ.) ana equte usaliku... - «զոհաբերության համար տվեցին/ընծայեցին...» [KYKH 30_{yp.29, ac.26}]:

Aṭ=qa(=)na=ṭ- բայը վկայված է նաև հետևյալ արտահայտություններում.

(40) ^bḥal-di-ne-li KÁ-li ba-du-si-e ku-šú-ú-ni aṭ-qa-na-du-ni ^dḥal-di-e EN ŠÚ - «Խալդիի դռները վեհասքանչ (*) կառուցեց, նվիրաբերեց Խալդիին՝ իր տիրոջը» [KYKH 269₇].

(41) ^dIM-ni URU ku-šú-ni [aṭ-q]a-na-du-ni ^bḥal-di-e - «IM-աստծու քաղաքը կառուցեց, նվիրաբերեց Խալդիին» [KYKH 424₂]:

Վերոնշյալ արտահայտություններում խոսքը վերաբերում է նվիրելուն (քաղաք, դռներ) և ոչ թե զոհաբերելուն: Ըստ երևույթին արմատն է aṭ-ը (-qa- մասնիկի համար հմնտ. նաև kap=qa- - հայ. կափ-ուց-ան-եմ): Վ.Մարգսյան կապելով ուրարտ. aṭqanaṭu- «զոհաբերել» և ḥaṭ- «կտրել» բայերը, դրանք համեմատում է հայ. հատ-ել, հատկացն-ել և քասկ. atal «կտոր, քեկոր, մաս», atar «դուռ (հանած կտոր իմաստով)» և zati «կտոր, քեկոր» և այլն ձևերի հետ [1998, էջ 112]:

8. [arg=an(i)] (alg=ani/e) - հայ. արգ-ելք, բուք-արգ < *ark «արգելք, պատնեշ»: Մինչև այժմ ստացել է տարբեր մեկնաբանություններ: Այսպես՝ Գ.Մելիքիշվիլին կասկածանքով թարգմանում է «լեռ(*)»¹³¹, Ի.Դյալկոնովը՝ «սահման(*)», որը պաշտպանում է նաև Ն.Հարությունյանը¹³²: Ս.Հմայակյանը և Հ.Կարազոյանը թարգմանում են «դաշտ»¹³³: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(42) ku-ṭè-a-di pa-ri ^{KUR}Aš-šur-ni-ni ^{KUR}al-ga-ni - «հասա մինչև ասուրական սահմանը» [KYKH 173 IV_{36, 174 B2}].

(43) GUD 2 UDU ^{KUR}al-ga-ni-na-ú-e DINGIR...- «ցույ 2 ոչխար սահմանային երկրի աստվածներին...» [KYKH 38_{18, 31-32}]:

Հայ. սահման քառը իրանական ծագում ունի և ըստ երևույթին հնում հայերենում «սահման» իմաստի համար կիրառվել է *արգ-ան ձևը:

9. [ap=ṭ=an(i)] (ap=ti=ni/e) «կողմ, եզր» - հայ. ափս, -ին «ափ, եզր, ծովեզր» (*): Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(44) [] i-šá-ni ap-ti-ni ^{KUR}X ... []-ni ap-ti-i-ni ^{URU}X pa-ri ^{KUR}X - «այս կողմը X-երկրի... [] կողմը X-քաղաքի մինչև X-երկիրը» [KYKH 44_{B.C.9-13}].

(45) da-a-ni ap-ti-i-ni [] li-e-i ^{NA4}qar-bi-e ^{KUR}X-áš-ta-a-ni ap-ti-ni [] - «այդ կողմը ... X-երկրի այս կողմը» [KYKH 44_{n.c.6-7}].

(46) ku-ṭu-[bi] pa-ri ^{URU}X KUR šá-na ap-ti-ni šu-ú-ni-e - «հասա մինչև X-քաղաքի երկիրը, այդ կողմը ծովի» [KYKH 180₅₋₆].

(47) X LUGÁL^{MES} i-na-ni ap-ti-ni šu-i-ni-a-[ni] ...X LUGÁL^{MES} i-šá-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni - «X արքաներ այն կողմը ծովի... X արքաներ այս կողմը ծովի» [KYKH 389_{5, 12}]:

Բոլոր երեք արձանագրություններն էլ գտնվել են լճերի (Վանա և Սևանա) ափին, այդ պատճառով քառիս «ափ, ծովեզր» իմաստը առավել հավանական է թվում, չնայած ափս հայերենում նշանակում է նաև ընդհանրապես ինչ-որ մի բանի եզր, ծայր: Նման համեմատման դեպքում որշակի կասկած է առաջացնում հավելյալ -ti-ի առկայությունը:

10. [aweiti=an] (^{L0}aweiti=ne) - հայ. ավետի-ուք < *aueid «ավետիս, լավ լուր և այլն»: Ն.Հարությունյանը մեկնում է որպես «տաճարում ծառայողի ինչ-որ մասնագիտություն, քրմական դաս» [1966, էջ 44]: Եթե ճիշտ է հայերեն համեմատությունը, ապա ^{L0}aweiti=ne-ն պետք է հասկանալ, գուշակություններ անող քրմական ինչ-որ մի դաս կամ ծառայող, ավետարեր: Ս.Սարվինին Գյուվելեքի (48) արձանագրությունում վկայ-

¹³¹ Г.Меликишвили, 1960(УКН), էջ 387:

¹³² И.Дьяконов, 1963, էջ 77, 78; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 432:

¹³³ Ս.Հմայակյան, 1990, էջ 11 և 94-95 ծան. 30; Հ.Կարազոյան, 1981, էջ 46 արձ. 6:

ված սույն բառի համար առաջարկում է «գորք, զինվորներ» քարգմանությունը:

(48) ^dhal-di-ni-ni-e ba-ú-ši-ni KÚR ú-ri-e a-ú-e-i-tè-ni ši-ú-bi - «Խալդի-ի հրամանով թշնամական տա-րածքը գորք(“) ուղարկեցի» [SMEA, XLIV/1, 2002, էջ 127]:

Մեզ թվում է, որ առանց մարդ, մասնագիտություն բնորոշող LÚ որոշիչ նշանի սույն բառը այստեղ կարելի է հասկանալ աւետ «բարի լուր», «ողջույն», «պարգև, խոստում» [ՆԲՀԼ I, էջ 358]: (48)-ը հմմտ., օրինակ՝ ... bau=še ši=u=ne - «հրաման/խոսք ուղարկեց» արտահայտության հետ: Ըստ այդմ, aueiṭi=ne ši=u=be արտահայտությունը պետք է քարգմանել «(բարի) լուր/խոստում/պարգև ուղարկեցի»: Միգուցե այս «լուր»-ի տակ կարելի է հասկանալ ինչ-որ գուշակության արդյունք կամ նման մի բան: Ե.Գրեկյանն առաջարկում է KÚR «հակառակորդ, թշնամի» գաղափարագրի փոխարեն այստեղ կարդալ PAP «ամբողջ, ամեն»¹³⁴: Այդ դեպքում նախադասությունը ամբողջությամբ պետք է քարգմանել «Խալդիի հրամանով ամենուր լուր/խոստում/պարգև (ավելիս) ուղարկեցի» (տե՛ս ծան. 168):

11. [barʃu/i=d/tiw(“)=] (barzu/i=d/tibi=d/tu=(ne)) «ինչ-որ շինության անվանում»: Ըստ երևույթին բարդ բառ է՝ կազմված հայ. բարձ, -ու/ի (բարձ-ր, բարձ-եալ) < *bħrǵ’h և դիւ (դի-ք, դիւ-ց) < *dhēs «աստված» կամ տիւ < *diw «լույս» բառերից¹³⁵: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(49) ini ^ēbar-zu/i-di-ib/bi-du-ni za-(a)-du-(ú)-ni (^mMe-nu-(ú)-a-i É bar-^ēbar-z[u]-di-i-bi-i-du-ú-ni ti-i-ni) - «այս É barzu/idibiduni սարքեցի, Մի-նուայի É barzu/idibiduni է անունը» [KYKH 44₄₋₆, 115₃₋₄, 378₄, 116₃₋₅].

¹³⁴ Ե.Գրեկյան, ՊԲՀ, 2004, 1, էջ 224-252:

¹³⁵ Գ.Ջահուկյանը բաժանում է երեք մասի bazi/u=dibi=du(ni)՝ dibi-ի մեջ տեսնելով հայ. տիւ «ցերեկ, լույս» (ըստ իրեն նաև աստված), իսկ duni-ի մեջ հայ. տուն բառը՝ ni-ի բացակայությունը արձանագրություններից մեկում համարելով վրիպակ: Բառն ամբողջապես, նա, կարողում է բարձու/ի-տիւ-ի-տուն «բարձր-աստծո-տուն» [1988, էջ 156]: Միգուցե «տիւ-ի-տուն»-ն պետք է հասկանալ տիւ «լույս», տու «տվող» (վերջինս ուրարտերենում առանձին վկայված է՝ իբրև բայ, տե՛ս III.2.3 կետ 62.1)՝ միասին տիւ-ի-տու «լուսատու(“), մղորակ(“)» իմաստով:

(50) ^mMe-nu-a-i-ni bar-zu-di-bi-du áš-ḫu-li-ni - «Մի-նուայի É barzidibidu ášḫulini» [KYKH 115₁₂].

(51) ... bar-zi-di-bi-du-ni ti-ni - «...barzidibidunit անունը» [KYKH 481, 299_{1,2}]:

12. [dar=an(i)] (dar=ani/e) «երկրորդ անգամ(“), կրկին (”» - հայ. դառն-ամ, դարձն < *dhǵ-g’h «դառնալ, դարձեալ և այլ»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(52) i-nu-ka-ni MU ta-ra-[a]-ni uš-ta-di ^{KUR}ḫ-edī - «նույն տարի դարձյալ արշավեցի դեպի ^{KUR}ḫ» [KYKH 241A₁₃]:

13. [dən-] (dan-) - հայ. դն-եմ < *dhē-ne «դներ»: Ն.Հարությունյանը քարգմանում է «հիմնել» [2001 (KYKH), էջ 33], իսկ Ի.Գյակոնովը՝ «կատարել» [AMI 24, 1991, էջ 13 ծան. 4]: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(53) ^Dḫaldina KÁ bi-di su-ui-ú-li ta-nu-li-ni i-na-a-[ni i-me-na-ni/^ēURU₄-na-ni] e-di-ni ši-du-li-ni - «Խալդիի դների կողմից կշարտվի, թող կատարվի, ina[ni ...] edini թող կառուցվի (ըստ Ն.Հարությունյանի¹³⁶)» [YKH 270_{x1-2}, 247₆₋₇, 424₉₋₁₀, Ay-susi II₄ (Ayanis I)].

(54) a-še ta-nu-li MAS.TUR ^Dḫal-di-e ni-ip-si-du-1[i-i-ni] - «երբ կկատարվի, հորթ Խալդիին թող զոհաբերվի» [YKH 424₁₀].

(55) a-še GUD ši-i-du-li a-i-ni [u]r-bu-a-ši ^dḫal-di-na KÁ t[a-n]u-li-ni a-še ni-qa-li ši-i-du-li ta-nu-li-ni [ur]-bu-a-ši ^dḫal-di-na KÁ - «երբ, «ցույ»-ը կսարքվի, ինչ-որ մեկը urpaši Խալդիի դներում թող կատարի, երբ ուզալի-ն կսարքվի, թող կատարվի urpaši՝ Խալդիի դներում [KYKH 122₅₋₆, 124].

(56) a-še ^{GIS}ul-di ta-nu-li ^Dḫal-di-e 3 UDU TAG ... - «երբ այգի կհիմնվի (կստեղծվի) Խալդիին 3 ցուլ թող զոհաբերվի» [KYKH 38 I₃₀₋₃₁, II₆₁].

¹³⁶ Այս արտահայտության քարգմանության համար տե՛ս IX.1, արձ. թիվ 3, տող. 6-7: Տե՛ս նաև M.Salvini, 2001, էջ 259:

- (57) a-še gi-i su-si-ni bi-di ħar-ħa-ru-li ta-nu-li-i-ni «երբ gi-i su-si-ni bi-di խարխալի՝ բող հիմնվի» [KYKH 392₆₋₇]:

Սովորաբար (tan- ընթերցմամբ) համեմատվում է խուռ. tan- բայի հետ, որտեղից և ստանում է «անել, կատարել, ստեղծել» նշանակությունը: Մեր կողմից առաջարկվող «դնել» իմաստը միանգամայն համահունչ է վերոհիշյալ դրվագներին: Ինչ վերաբերում է խուռիերենից եկող «անել, ստեղծել» տարբերակին, ապա կասկած է առաջացնում ^{GIS}uldi tan=ule «այգի (խաղողի որթ) կհիմնվի (կստեղծվի)» արտահայտությունը, քանիզի այլուստ այգի (^{GIS}uldi, ^{GIS}šari) հիմնելիս վանի արձանագրություններում գործածվում է der- «դնել» - հայ. դիր բայը: Չի բացառվում այս tan--ի համեմատումը հայ. տան-եմ «տանել, կրել» բայի հետ, որը հայերենում ունի նաև «կատարել» իմաստը [ՆԲՀԼ, Բ, էջ 843]:

14. [darsu=an] (daršu=ane, daršu=an=arane) «ժողովուրդ, մարդիկ» - հայ. դա(ր)ս, -ու «դաս, կարգ, մարդկանց խումբ, դասավորելով բազմություն և այլն»: Արձանագրություններում daršu=an=arane-ն զուգորդում է ԾԽ^{ME3}-rani-ին, իսկ daršu=ane-ն՝ ԾԽ^{ME3}-ին՝ նույն իմաստով, ԾԽ նշանակում է «ժողովուրդ, մարդ»: Հ.Աճառյանը դաս բառի հնագույն ձևն է համարում դարս-ը (բրբռ. դարս-ել)՝ ծագումը թողնելով անհայտ¹³⁷: Գ.Ջահուկյանը կասկածանքով հայ. դաս բառը քիսեցնում է իրանական dasa-ից¹³⁸: Վանի արձանագրություններում առկա է [dar-su=] (դարս) ձևը:

15. [derʃu/o=s] (delzu=še) - հայ. հան-դերձ, -ոյ «պատրաստություն, կազմություն, սպաս և այլն»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

- (58) ^IRu-sa-še ^{ID}šar₅-du-ri-ħi-ni-še a-li ʔe-el-zu-še iš-ti-ni te-ru-bi - «Ռուշան՝ Սարդուրիի որդին ասում է՝ ʔelzuše այստեղ դրեցի» [ԸԲ, 5, էջ 132 (KYKH 392₁₋₂)]:

Մ.Մալվինին այն նույնացնում է նմանատիպ արտահայտություններում d/ʔelzu=še-ի փոխարեն հանդես եկող ardi=še «կարգ, հրաման» գոյականի հետ: Ի.Դյակոնովը ընդունում է ardi=še-ի և

d/ʔelzu=še-ի նույնությունը, բայց վերջինս քիսեցնում է ar=d(u)- «տալ» բայից: Ըստ այդմ, ardi=še-ն քարգմանում է «տուրք»: Հայերենում հան-դերձ բառը բազմիմաստ է և ունի հետևյալ հիմնական իմաստները՝ «զգեստ, հագուստ, շոր», «պատրաստություն, կազմություն, սպաս, զարդ», «յարդարել, կազմել» (իբրև բայ), «միասին, մեկ տեղ», «ապագա, հետագա»: Այն համարվում է իրանական փոխառություն: Ուշագրավ է սակայն, որ իրանական լեզուներում առկա է միայն «կարել, կապել» իմաստը, մինչդեռ [derʃo=s]-ը այստեղ հանդես է գալիս «կարգ, կանոն, սպաս» իմաստով՝ իբրև «արդ»-ի հոմանիշ:

16. [ei=a] (ei=a) - հայ. ե-մ «եմ, լինել» (բ.), է «է, գոյ» (գ.) < *es (հմմտ. հայերենի է գոյականից կազմավորված է-ակ, է-ություն «գոյ, եակ, նա որ գոյություն ունի» բառերը): Վկայված է ardi=še գոյականի հարադրմամբ: Տե՛ս, օրինակ, հետևյալ արտահայտությունը.

- (59) ^Dhal-di-ni bi-di ^Dhal-di-na-ni ^{GIS}KÁ bi-di-ni ma-ni-ni ... e-ia ar-di-še ar-ni uš-ma-še - «Մալդիի դռների կողմից բող լինի ... և իշխանություն և ուժ» [KYKH 424₄₋₆]:

Ի.Դյակոնովը eia ardi=še կարդում է միասին (eiardi=še), որպես մեկ բառ՝ «բարեգություն (°)» նշանակությամբ¹³⁹, սակայն ակնհայտորեն eia-ն հանդիսանում է ardi=še «կարգ, կանոն» գոյականը բնութագրող բառ (ածական), ճիշտ այնպես, ինչպես arne-ն բնութագրում է ušma=še «ուժ» գոյականը (տե՛ս (59)): Ըստ այդմ, arne ušma=še-ն պետք է կարդալ «առնական ուժ», իսկ eia ardi=še-ն, քերևս «էական/իրական կարգ/իշխանություն»: Համեմատեք նաև guni ardi=še բառակապակցության հետ հետևյալ նմանատիպ արտահայտությունում. ^Dhal-di=i-na=ne ^{GIS}KÁ bidi=ne gune ardi=še gune ar[...] man=u=le... [YKH 448₆]: Այստեղ gune-ն, որը ըստ Ի.Դյակոնովի նշանակում է «իրական, ճշմարիտ»¹⁴⁰, վկայված է նմանատիպ դիրքում և նույնպես բնորոշում է ardi=še գոյականը:

17. [eʃp-] (erp-) «առևանգել(°), հափշտակել(°), խլել(°)» - հայ. աղվուց-ան-եմ < *alph, «տկարացնել, վայր զցել, թակարդը ձգել, թակարդով բռնել և այլն»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

¹³⁹ Տե՛ս И.Дьяконов, ԸԲ, 5 էջ 172:

¹⁴⁰ Տե՛ս И.Дьяконов, 1963, էջ 88:

¹³⁷ Հ.Աճառյան, ՀԱԲ, I, էջ 625:

¹³⁸ Գ.Ջահուկյան, 1987, էջ 522:

- (60) i-na-ni LUGÁL-e nu-na-bi me-i a-li L⁰A.SI^{MEŠ}-še ir-bi-tú še-ri pa-ar-tú - «այս (ամենը) քազավորին հասավ, իսկ ինչ-որ գորքը վերցրեց՝ առանձին տարավ» [KYKH 241 C₄₆].
- (61) ^mTa-ta-a-še L⁰ERUM ^{SAL}GASAN_x-i MÍN.TUR : ir-bu-ni - «Թաթան՝ տիրուհու ծառան աղջիկ *առևանգեց*» [KYKH 446₆₋₇].
- (62) ...hi-ni : za-ab-zi-gi-e-di hu-šá-a-gi-e : I ANŠU.KUR.RA ir-bu-ú-ni - «...այժմ zaabzigiedi hušagie 1 ձի *առևանգեց*» [KYKH 520_{n.c.16-17}]:
18. [erši=ʔ] (erši=ʔ) - հայ. գ-երծ «ազատ, արձակ, ապահով և այլն» < *serg', որից ունենք գ-երծ-ան-եմ «դուրս հանել», գ-երծ-ուց-ան-եմ «արձակել, ազատել, ապրեցնել, պահել և այլն» և այլ ձևերը: Ուրարտ. բառը սովորաբար քարգնամվում է «քնակեցնել(»), նստեցնել(») մտավոր իմաստով: Վկայված է հետևյալ արտահայտություններում.
- (63) X ME L⁰MEŠ gu]-nu-ši-ni-i e-er-ši-du-(ú)-bi iš-ti-(i)-ni - «X մարտիկներ *քնակեցրի* այստեղ» [KYKH 173 II₃₆, 174 A2₂₁₋₂₂].
- (64) L⁰ir-di iš-ti-i-ni a-šú-ú-bi ^{KUR}X-hi-ni-i L⁰šia iš-ti-ni e-er-ši-du-bi - «կայազոր(») այստեղ *քողեցի*, X-երկրին L⁰šia այստեղ նստեցրի» [KYKH 241D₂₈₋₃₂].
- (65) L⁰UKU^{MEŠ}-ra-[ni] e-di-ni ta-áš-mu-ú-bi pa-ru-bi e-er-ši-du-[bi] ^{KUR}e-ba-ni-ú-ki-e - «մարդիկ այնտեղ գերեցի, հեռացրի, իմ երկրում *քնակեցրի*» [KYKH 241C₄].
- (66) [e-er-š]i-du-bi e-si me-še ¹X-e a[ru-ni] - «*նստեցրի* (իր) տեղը, հարկը ¹X-ին տվեց» [KYKH 174B₁₄₀].
- (67) e-er-ši-du-bi e-si `a-al-du-bi me-ši-ni pi-i - «*նստեցրի* (իր) տեղը, զցեցի հարկի տակ» [KYKH 241C₃₉].
- (68) te-ru-ú-bi ^mUr-za-na-ni [L⁰É]N.N[AM] [e-e]r-ši-du-ú-bi ^{URU}Ar-di-ni-e - «դրեցի ¹Urzana-ին փոխանորդ, *նստեցրի* ^{URU}Ardini-ում» [KYKH 387₇₋₈]:

Հայ. գ-երծ-(ուց)-ան-եմ բայը իր «ազատել, արձակել, բաց թողնել, ապահել, ապրեցնել» իմաստով միանգամայն համահունչ է վերոհիշյալ

դրվագներին: Այսպես, օրինակ, քերված արտահայտությունները հնարավոր է քարգնամել. (65) «մարդիկ այնտեղ գերեցի (»), հեռացրի, իմ երկրում *ազատ արձակեցի* (*բաց թողեցի*), (67) «(նրան) *թողեցի/պահեցի* (իր) տեղը. զցեցի (բառացի՝ գլորեցի) հարկի տակ», (68) «դրեցի ¹Urzana-ին փոխանորդ, *թողեցի/պահեցի* ^{URU}Ardine-ում» և այլն:

19. [tep-] (tep-) - հայ. թափ-եմ «թափել, վրան ցնել, հեղել», թափ-անց-եմ «թափանցել, խրել, անցնել (ներսը, հատակը)»: Ֆ.Քյոնիգը կարդում է šip-, Գ.Մելիքիշվիլին՝ mep- «թաղել» [1960(YKH), էջ 402]: Նույնը կրկնում է Ն.Հարությունյանը: Տե՛ս հետևյալը.

- (69) a-lu-še KI^{TI} me-pu-li-i-e a-lu-še A^{MEŠ} hu-šú-li-e - «ով հողը *թաղի*, ով ջուրը զցի» [KYKH 421₃₅₋₃₆]:

Սակայն Մ.Սալվինին հիմնվելով Այանիսում հայտնաբերված և իր կողից հրատարակված նոր արձանագրության (70) վրա՝ առաջարկում է hip- ընթերցումը (վանկազիր hi-pu/pu_x-)՝ «նետել, զցել» քարգնամությանը [Ayanis I, էջ 272].

- (70) a-lu-še hi-pu_x(TUR)-li-e a-lu-še A^{MEŠ} hu-šú-li-e a-lu-še ... a-lu-še KI^{TI}-a hi[i-pu_x(TUR)-li]-e IZI^{MEŠ} GIBÍL^{MEŠ} - «ով զցի, ով ջրերը ... , ով հողը/գետինը զ[ցի(») կրակի և գետնի վրա» [Ay-Br 12 (Ayanis I)]:

Եթե Մ.Սալվինին առաջարկած hi-pu/pu_x- ընթերցումը ճիշտ է, ապա այն կարելի է ընթերցել նաև té/i-pu/pu_x-¹⁴¹: Այդ դեպքում կարելի է համեմատել հայ. թափ-եմ, թափ-անց-եմ «թափել, տակը անցկացնել, խորքը մտցնել և այլն» բայի հետ:

20. [teq-] - հայ. թեք-եմ < *tek «թեքել, կռել, ծեծել, ծեծելով հարթել և այլն»¹⁴²: Վկայված է հետևյալ տեսքի արտահայտություններում.

- (71) Խալդին ... (հակառակորդ) երկիրը / քաղաքը / արքային *teq-une/=uale* ¹X=kai (առջև):

Սովորաբար քարգնամվում է «տապալել, գետնին փռել»: Հայերեն «թեքել» բայը սկզբնապես նշանակել է «կռել, ծեծելով հարթել», հետագայում նաև «ծռել, թեքել»: Այստեղ հենց «ծռել, թեքել» իմաստն է առավել հարմար, սակայն վերջինս համարվում է ավելի ուշ ձևափոխում:

¹⁴¹ Ուրարտերենում hi/e նշանը ունի նաև t¹/é, t¹/é վկայությունները, տե՛ս, օրինակ, t¹/é-ru-se, ^{KUR}ú-i-t¹/é-ru-še և այլն:

¹⁴² Տե՛ս նաև Գ.Капанцян, 1936, էջ 33; Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 468:

Ըստ երևույթին, պետք է հասկանալ «տրորել(»), կոխորել(»)»: Հավանական է նաև *teq--ի* համեմատումը հայ. թակ-եմ < **təg-* «ծեծել, զանել» բայի հետ¹⁴³:

21. [tu-] - հայ. թու-ել «վատնել կամ հարել» (Բառ. Երևմ. էջ 121) : Թոփուզավայի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր. *naqāru-*ին «կտորել, ոչնչացնել» նշանակությամբ [YKH 264₂₃]: Սովորաբար բխեցվում է *tur-* «ջարդել, փշրել» բայից՝ 1-ից առաջ *r-*ի տղմամբ (*tu=lie* < *tur=(u)lie*), տե՛ս II.3 կետ 2բ: Վկայված է բազմաթիվ անգամ հետևյալ կադապարային արտահայտությունում.

(72) *alu=še ini DUB-te tu=li=e ...* - «ով այն արձանագրությունը կոչնչացնի...» [...]:

Թու-ել բառը «հարել» իմաստով միանգամայն համահունչ է վերոնշյալ արտահայտությանը: Ինչ վերաբերում է այստեղ *tur-* բայը (*r-*ի տղմամբ) տեսնելու տեսակետին, ապա նման մեկնաբանումը նույնպես չի բացառվում:

22. [i/y-] (i-) - հայ. ի < **en* «ի» (նախդիր): Մասնագետների կողմից նման նախդիր Վանի արձանագրություններում չի առանձնացվում¹⁴⁴: Սակայն առնվազն մի քանի դրվագներում այն կարծես թե երևում է: Տե՛ս (44)-(47), որտեղ նմանատիպ համատեքստում մի կողմից ունենք *išani*, *inani*, մյուս կողմից՝ *šana* ցուցական դերանունները: Ըստ այդմ հնարավոր է, որ այս *išani/inani-*ն պետք է կարդալ *i ša=ni*, *i na=ni*¹⁴⁵: Բացառված չէ, որ այս նույն *i-*ն է առկա նաև *i(=)šu=ka=ne*, *i(=)nu=ka=ne* ցուցական դերանուններում (հմմտ. *šu=si=ne* դերանվան և *šu=ke* անհայտ բառի հետ): Մյուս կողմից հնարավոր է, որ ի դեմս նշված ուրարտ. դերանունների բառասկզբի *i-*ի մենք գործ ունենք հայ. ա-յ-ս, ա-յ-ն ցուցական դերանուններում պահպանված | մասնիկի հետ (այս ամենի մասին տե՛ս նաև V.3 կետ 3 և VII.1):

¹⁴³ Հ.Սանդալյանը համեմատում է հայ. թեկն «թիկունք» բառի հետ՝ «թեկն անեալ իմաստով [1900, էջ 432]: Այդ դեպքում ելմանով համատեքստից՝ «... X-kai teq=u=ale» արտահայտությունը պետք է հասկանալ «X-ի առջև թիկունքով դարձրեց (թշմաղիներին)», այսինքն՝ ստիպեց նահանջել:

¹⁴⁴ Մասնագիտական գրականությունում նշվում է միայն *pare-*ն, որը անշուշտ համապատասխանում է հայ. առ նախդիրին (տե՛ս VII.1):

¹⁴⁵ Վերոնշյալ բառերի իմաստով մտա լինելը տե՛ս նաև YKH 28, ծճ. 14:

23. [imen-] (այսպես՝ ըստ Մ.Սալվինիի¹⁴⁶) «հիմք» - հայ. հիմն, -ան, -ուև-ք/ս < **sē-mə* «հիմք»: Այն վկայված է հետևյալ արտահայտություններում.

(73) *i-na-ni-i me-na-ni e-di-ni ši-pu-li-ni ši-du-li-ni me-i e-ši-me-ši el-mu-še ma-nu-ni* - «...» [KYKH 202₅₋₇].

(74) *i-na-[ni-i me-na-ni] e-di-ni ši-du-li-ni mei e-ši-me-ši el-mu-še ma-nu-ni* - «...» [KYKH 424₉₋₁₀, 270₁].

(75) *i-na-na*¹⁴⁷-*ni* ²URU₄-*na-ni e-di-ni ši-pu-li-ni ši-du-li-ni mei e-ši-me-ši el-mu-še ma-nu-ni* - «...» [KYKH 247₇₋₈].

(76) *i-na-na-ni* ²URU₄ *e-di-ni ši-du-li-ni me-i e-ši-me-ši el-mu-še ma-nu-ni* - «այս հիմքերի համար ինչ-որ մեկը թող կառուցի ...» [Ayanis I, Ay-susi II₄]:

Ն.Հարությունյանը հնարավոր համարելով վերջինիս զուգորդումը URU₄ «հիմք» շումերոգրամի հետ¹⁴⁸, միևնույն ժամանակ համապատասխան տեքստերի բարձրանություններում մեզ հետաքրքրող հատվածները չի բարձրանում, իսկ *i-me-na-ni/è*¹⁴⁹-ի փոխարեն ընթերցում է *me-na-ni*՝ սկզբնական *i-*ն վերագրելով նախորդ *inani* (*ina=ne*) դերանվանը, որը նա կարդում է *inani-i*: Լրացուցիչ *i-*ի առկայությունը վերոնշյալ դերանվան վերջում Ն.Հարությունյանը բացատրում է ազատ տարածքը լրացնելու անհրաժեշտությամբ, ինչը քիչ հավանական է: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերոնշյալ դերանունը, որը բազմիցս վկայված է Վանի արձանագրություններում, այլուստ, ոչ մի անգամ *inani-i* ձևով չի հանդիպում: Ուստի ազատ տարածքը լրացնելու համար շատ ավելի հավանական էր *i-na-a-ni/è* գրությունը՝ կրկնակի *a-*ով, ինչը որ բազմիցս վկայված է Վանի

¹⁴⁶ M.Salvini, SMEA, XXII, էջ 164-165; XLIII /1, էջ 254:

¹⁴⁷ Ն.Հարությունյանը, հետևելով Մ.Սալվինին, սխալմամբ կարդում է *inani*, սակայն բնագրում հստակ առկա է *i-na-na-ni*, հմմտ. (76)-ի հետ:

¹⁴⁸ H.Арутюнян, 2001(KYKH), էջ 455:

¹⁴⁹ Բուն արմատը *imen-*ն է. այն այստեղ վկայված է հոգ. բացառականով, որի հետ համաձայնում է *ina(=na)=ane* դերանունը:

արձանագրություններում¹⁵⁰: Սրա օգտին են խոսում նաև այն զուգահեռ արտահայտությունները, որոնցում ուրարտ. «հիմք» բառը վկայված է գաղափարագրի տեսքով: Դրանցում այն գրված է առանց հավելյալ *i*-ի, տե՛ս (75)-(76): Նկատի ունենալով վերոնշյալ փաստերը՝ մենք հակված ենք պաշտպանելու Մ.Սալվինիի առաջարկված *imen-* ընթերցումը, ինչը հաստատվում է նաև հայ. հիմն՝ «հիմք» զուգահեռի առկայությամբ:

24. [^{L0}iwsw=s] (^{L0}ibšw=še) «աման պատրաստող, դուրգար» - հայ. հիսև, -ան, -ու-ք/ս «հյուսն, փայտից առարկաներ պատրաստող, խարատ, դուրգար»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(77) ^dhal-di-iš-me uš-ha-nu-ni hu-ṭu-tu-hi e`a gu-nu-še e`a ip-šu-še - «խալդին-ինձ ընծայեց հաջողություն (°), և մարտ, և քարոթություն (°)» [KYKH 242 AII-AI 28-29, 414₈₋₉].

(78) uš-ha-nu-me ^dhal-di-še EN-[še] [h]u-ṭu-tu-hi e`a gu-nu-š[e] e-ú-e ^{L0}ip-šu-[še] šu-i-ni-i ú-ri-ni-e-[i] - «ընծայեց-ինձ խալդին՝ տերը, հաջողություն (°), և մարտ, և քարոթություն (°) ամբողջ *urinie*» [KYKH 406 յ.Ը.31-34].

(79) uš-ha-nu-[me] ^dhal-di-še EN-ú-še hu-ṭu-[tú-hi e-`a g]u-[nu]-še e-`a ^{L0}[ip-šu]-še [š]u-i-ni-i [ú-ri-ni-e] - «ընծայեց-ինձ խալդին՝ տերը հաջողություն (°), և մարտ, և քարոթություն (°) ամբողջ *urinie*» [KYKH 407 յ.Ը.23-25]:

Բերված արտահայտություններում ^{L0}ipšw=še-ի «քարոթություն (°), քարեգործ (°)» քարգմանությունը տալիս է Ն.Հարությունյանը [2001 (KYKH), էջ 449]: Չելեքիբադի արձանագրության [KYKH 407] նշված հատվածը բոլորովին այլ կերպ է ընթերցում և մեկնաբանում Մ. Սալվինին: Նա ^{L0}[ib-šu]-še-ի փոխարեն կարդում է ^{L0}UTÚL-še, իսկ [ú-ri-ni-e]-ի՝ GÁN: Ըստ այդմ, վերջերս հայտնաբերված և իր կողմից հրատարակված Գյովելեքի արձանագրությունում, որը այս մասով կրկնում է Չելեքիբադի և Հաղիի [KYKH 406] արձանագրությունները, վերոնշյալ հատվածը մեկնաբանում է նորովի: Բերենք այդ հատվածը՝ Մ.Սալվինիի քարգմանությամբ.

(80) uš-ha-nu-me ^dhal-di-še EN-še hu-ṭu-tu-hi e-`a gu-nu-še e-`a ip-šu-še šu-i-ni-i ú-ri-ni-i - «ընծայեց-ինձ խալդին՝ տերը ... և մարտունակություն և տնօրինություն (°) ամբողջ տարածքի վրա» [SMEA XLIV/1, 2002 13-15]:

Մ.Սալվինին, հայտնելով որոշ տարակուսանք սույն համատեքստում UTÚL գաղափարագրի առկայության առնչությամբ, այն կապում է «տուն» գաղափարի հետ՝ քարգմանելով «^{L0}UTÚL-še šu-i-ni-i ur-i-ni-i» հատվածը «...տնօրինություն (°) ամբողջ տարածքի վրա»: UTÚL նշանակում է «աման, անոթ, կնուճ» (ուրարտ. šani - հայ. սան «աման, անոթ, սան»¹⁵¹): ԼՄ որոշիչը բնորոշում է «անձ, մարդկանց տեսակ». այն ուրարտերենում հաճախ կիրառվում է նաև զանազան մասնագիտության տեր մարդկանց նշելու նպատակով, իսկ -še վերջավորությունը ուրարտերենում կամ կազմում է վերացական գոյականներ, կամ ունի հոգնակիակերտ-հավաքական արժեք (տե՛ս IV.3 կետ 2): Ըստ այսմ, ^{L0}UTÚL-še բառացի պետք է նշանակի «հմտություն, արհեստ ընդհանրապես» կամ «ամաներ պատրաստողներ»: Հայերենում հիսև նշանակում է «ատաղձագործ, խարատ, դուրգար», ինչը միանգամայն համահունչ է ուրարտ. ^{L0}ipšw=še-ին: Ըստ այդմ, վերջինս կարող է բառացի նշանակել «հյուսներ, դուրգարներ»: Համապատասխանաբար *gunw=še* (հմտ. հայ. համ-ա-ջու-ն-ջ «կտորած», տե՛ս III.2.3 կետ 53) պետք է նշանակի «մարտունակություն, մարտական՝ արվեստ, հմտություն, շնորհ» կամ «մարտիկներ»: Հատվածը ամբողջությամբ թերևս պետք է կարդալ «...և՛ մարտունակություն, և՛ արհեստավարժություն/տնտեսվարություն (քառացի՝ «հյուսնություն») ամենուրեք»: Իսկ եթե -še [-s]-ն այստեղ ունի հոգնակիակերտ-հավաքական իմաստ, ապա «...և՛ մարտիկներ, և՛ հյուսներ (արհեստավորներ) ամենուրեք»: Վանի արձանագրություններում այս երկու գաղափարների համատեղ հանդես գալը ամենևին էլ զարմամալի չէ, քանզի այնտեղ գրեթե միշտ ռազմական գործողությունների մասին խոսքը զուգակցվում է լայնածավալ շինարարական և տնտեսական գործունեության մասին պատմվող հատվածներով: Մյուս կողմից՝ «հյուսն»-ի, «դուրգար»-ի մասնագիտությունը հնում հաճախ համարվում էր աստվածային:

¹⁵⁰ Տե՛ս, օրինակ, KYKH 247, 270, 275¹⁷, 414, և այլն:

¹⁵¹ Տե՛ս Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 462:

25. [laqu=(t)-] - հայ. [աք-ուց-եալ «թաքուցեալ»¹⁵²: Մովորաբար կասկածանքով թարգմանվում է «վնասել (*)»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (81) me-i ... gi-e-i i-na-ni ar-ni-ú-ši-na-ni la-ku-ia-ni - «...այն արարքները/գործերը չվնասեն» [KYKH 275₆₋₇].
- (82) a-lu-še gi-e-i i-na-a-ni ar-ni-ú-ši-na-ni la-ku-du-li-e - «...ով այն արարքները/գործերը կվնասվի» [KYKH 275₁₇₋₁₈].
- (83) ...e`a DINGIR^{MEŠ} UKKIN^{MEŠ} 3 GUD 30 UDU ú-i-[e] la-ku-ni a-lu-ké ... «» [KYKH 38I₂₅₋₂₆, II₅₁₋₅₂]:

«Թաքցնել» իմաստը միանգամայն համահունչ է վերոհիշյալ արտահայտություններին: Եվ առավել ընդունելի, երբ խոսքը «արարքների» մասին է: Մյուս կողմից, ուրարտ. laku-ն կարելի է համեմատել հայ. եղուկ «ափսոս», «քշվառ» < *lug բառի հետ: Հմտ. մակ եղկ-եմ «մեղադրել, վայ տալ», եղուկ-եմ «քշվառացնել»:

26. [xor=isx] (hur=išhe) «տոգման ինչ-որ կառույց (*)» - հայ. խոր «խոր, խորը տեղ, փոս և այլն»: Հմտ. šur=išhe «ախոռ» (*) - հայ. սոր-ա-կալ «ախոռապետ», ur=išhe «զենք, մետաղյա իր» - հայ. ուռ-ն «կռան, մուրճ» և այլն (ուրարտ. -išhe[-isx] - հայ. -իսխ ածանցի համար տե՛ս IV.3 կետ 2): Վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (84) i-na-ni šu-e [R]u-sa-hi-na-ú-e hu-ri-iš-ḫ[i] [m]a-ni-ni ... «...» [KYKH 391₂₁₋₂₃].
- (85) i-na-ḫi-[n]a-ú-e URU^{ME[Š]} i-ni PA₅ hu-[r]i-iš-ḫi ma-ni-ni ...«այդ քաղաքներին այս ջրանցքը թող լինի *ռռոզի*» [KYKH 406₇₋₈].
- (86) A^{MEŠ} šu-i-ni-n[i] ši-e-d[i]-ú-e i-ku-ka-ḫi-ni-i [ḫ]u-bi-ni-e hu-ri-iš-ḫi ma-ni-n[i]... «ջրերը՝ ծովից šiediae այս հովտին թող *ռռոզի* լինեն» [KYKH 406₁₃₋₁₅]:

Ամենայն հավանականությամբ այն պետք է նշանակի «ջրավազան» կամ նմանատիպ ինչ-որ այլ շինություն: Հավանական է նաև

¹⁵² Տե՛ս Բառ. երկմ., էջ 132; Հ.Աճառյան, ՀԱԲ, II, էջ 270:

քիսեցնել հայ. խոր (խորո-ոչ) «անցք, ծակ» արմատից, որը սովորաբար համարվում է սեմական փոխառություն: Գ.Ջահուկյանը ուրարտ. hur=išhe-ը համեմատում է հ.-ե *ur «ջուր» արմատի հետ [1963, էջ 106]: Իսկ ավելի ուշ՝ հայ. հոր < *per (*) «հոր, խորը տեղ» բառի հետ՝ նմանությունը համարելով պատահական [1987, էջ 436]: Վ.Սարգսյանը համեմատում է բասկ. ur(hur) «ջուր» ձևի հետ [1998, էջ 111]:

27. [šeraw=a(ə)] (šerab=ae) - հայ. ծարաւ, -ո/ու «ծարավ, փափագ»: Գ.Մելիքիշվիլին կասկածանքով թարգմանում է «անմարդարնակ (*), ամայի (*)»: Ն.Հարությունյան համարում է qulđini «խոսպան» և šuli «անմշակ(*)» բառերի հոմանիշ¹⁵³: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

- (87) ...i-ni pi-i-li-e a-gu-ú-ni qi-ra-ni ši-ra-ba-e ma-nu ú-i a-i-ni-i iš-ti-ni a-i-u-ri - «...այս ջրանցքը անցկացրեց, հողը *անմարդարնակ* (*) էր մնում, ոչ ոք այստեղ չէր քնակվել(*)» [KYKH 187₃₋₅]:

Առաջարկվող «ծարավ, փափագ» թարգմանությունը միանգամայն համահունչ է վերոհիշյալ արտահայտությանը, մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ արձանագրության մեջ նախապես խոսվում է ջրանցքի կառուցման մասին (ini pile agune): Ամեն դեպքում «անմարդարնակ» իմաստի դեպքում մենք կունենայինք ebani «երկիր, երկրամաս», այլ ոչ թե՛ qira=ne «գետին, հող»: Մինչդեռ տեքստում առկա է հենց վերջինս (qira=ne širabae manu - «գետինը/հողը širabae է(ր)»): -Ae վերջավորության համար հմտ. durb=ae «ապստամբ», փի=ae «մեծ», tu=aie «մարտի(*), պարզ(*)» և այլն (տե՛ս VI.3 կետ 2):

28. [ka-] «հայտնվել, գտնվել»¹⁵⁴ - հայ. կա-մ < *g^ua «լինել, կանգնել, գտնվել»¹⁵⁵: Այս բառարմատից Վանի արձանագրություններում ունենք հետևյալ ձևերը (տե՛ս մակ VII.2).

28.1 [ka-] (ka- (p.), ka=ure (դրք.)) «կանգնել, լինել»: Վկայված են հետևյալ արտահայտություններում.

¹⁵³ Տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 462:
¹⁵⁴ Թարգմանությունը Ի.Գյակոնովի (ըստ համատեքստի) [1963, էջ 74]: Տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 451:
¹⁵⁵ Մեկնումը Գ.Ջահուկյանի [1987, էջ 432, 1988 էջ 142]:

(88) ú-i a-i-ni-e-i LUGÁL iš-ti-ni ka-ú-ri - «ոչ մի արքա այստեղ չէր հայտնվել (*)» [KYKH 2447].

(89) DINGIR^{MES} za-tú-me KASKAL-e ka-a-di ^{L0}A.SI^{MES}-š i URU^{URU}X-ka - «աստվածները սարքեցին-ինձ ճանապարհը, հայտնվեցի (ես) զորքի մեջ՝ X-քաղաքի առջև» [KYKH 24410-11]:

Հայ. կա-մ բայը լիովին համահունչ է վերոհիշյալ դրվագներին, որոնք համապատասխանաբար պետք է կարդալ (88) «ոչ մի արքա այստեղ չկար (բառացի՝ ոյ(չ) այլևե LUGÁL (արքա) իստի-ն կա(ց)-ող)» և (89) «աստվածները տվեցին-ինձ ճանապարհ, կանգնեցի զորքի մեջ՝ URU^{URU}X-ի առաջ»:

28.2 [-kay] (-kai) «առջև, մոտը, տեղը» - հայ. -կայ «տեղը, մոտը»: Ուրարտերենում հանդես է գալիս որպես ետդիր: Համապատասխանում է հայ. կա-յ «կանգնած տեղը և այլն» բառակին, որը հայերենում հաճախ հանդիպում է մաև բարդություններում իբրև երկրորդ արմատ/բաղադրիչ՝ -կայ տեսքով (մանրամասն տե՛ս VII.2)¹⁵⁶:

28.3 [ka=y=ani] (ka=i=ani) «կայան(*) (թարգմանությունը մերն է)» - հայ. կա-յ-ան, -ի «կայան, կայանելու վայր»: Մեկ անգամ վկայված է՝ šia=be kašani V ^mšepane ^{L0}ŠA.REŠI - «եկան նրանից 5 ներքին šepane (šepane-ին պատկանող)» արտահայտությունում (թարգմանությունը ըստ Ի.Դյակոնովի [1963, էջ 36, 72]¹⁵⁷. Ն.Հարությունյանը այն չի թարգմանում): Ի.Դյակոնովը kašani-ն վերլուծում է ka=ša=ne՝ -ša-ի մեջ տեսնելով երրորդ դեմքի դերանվանական մասնիկ՝ «նրա» նշանակությամբ, իսկ -ne-ն համարում է բացառական հոլովի ցուցիչ՝ բառն ամբողջությամբ թարգմանելով «նրանից»: Մակայն այս kašani-ն ձևով համապատասխանում է հայ. կայան («մնալու տեղ», «իր բուն տեղը, բնակարանը» և այլն) բառին, որը իմաստով ամբողջությամբ համահունչ է համատեքստին: Մեզ թվում է, որ kašani-ի «նրանից, նրա մոտից(*)» կասկածելի թարգմանության փոխարեն կարելի է ուղղակի կարդալ (ka=i=ani) [ka=y=ani] - հայ. կա-յ-ան, իսկ արտահայտու-

¹⁵⁶ Տե՛ս մաև Մ.Արվազյան, Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, II գիտաժողով, Երևան, 2005, (գեկուցումների հիմնադրույթներ), էջ 24-25:

¹⁵⁷ Նշված աշխատությունում հեղինակի կողմից սույն արտահայտությունը ընթերցված է որոշակի վրիպակներով (տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), 396 ծան. 17, 19): Մենք այստեղ բերում ենք Ն.Հարությունյանի կողմից ուղղված տարրերակը:

թյունը ամբողջությամբ թարգմանել՝ «եկան(*) կայան 5 ծեփան (և) ներքին»:

28.4 [ka=y/jo(=)k] (ka=i/gu(=)ke) «իմ առջև»: Կազմված է մույն արմատից՝ առաջին դեմքի - (i/g)u/e (=)ke ստացական դերանվանական մասնիկի միջոցով: Մույն բառածևի =i/g= բաղադրիչը, ըստ երևույթին, պետք է տարբերել -ka=i ետդիրի i-ից, քանզի i-ն այստեղ հերթագայում է ց-ին, մինչդեռ -ka=i-ի դեպքում այդպես չէ (տե՛ս մաև V.3 կետ 2.1):

29. [karmex(i)] (karmeš(i)e) - հայ. կամախ, -ի «պատարագ, ընծա»: Սովորաբար կասկածանքով թարգմանվում է «տոնակատարություն(*)»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(90) a] -še GEŠTIN^[ES] [šú]-ú-ḫi-e `a(?) -ḫu-li-e qar-me-ḫi ^dḫal-di-e áš-ḫu-li-ni ^dḫal-di-i-na-a KÁ [qa]r-me-ḫi ^dA-ru-ba-ni [qa]r-me-ḫi ^dḫal-di-i-e [p]u-ú-lu-si-ni-ka-i - «երբ նոր խաղողը հավաքեն (*) տոնակատարություն (*) Խալդիին թող կազմակերպեն (*)՝ Խալդիի դռների մոտ, տոնակատարություն (*) ^dArubani-ին, տոնակատարություն (*) Խալդիին՝ վիճագրի առաջ» [KYKH 8230-36]:

Պետք է ենթադրել, որ ռ-ն տվել է: Ինչ վերաբերում է իմաստին, ապա «տոնակատարություն(*)» թարգմանությունը մոտավոր է¹⁵⁸, իսկ «պատարագ, ընծա» նշանակությունը միանգամայն ընդունելի է, հատկապես ašḫ- բայի «զոհաբերել(*)» (F.König, 1955, էջ 175; И.Дьяконов, 1963, էջ 87), այլ ոչ թե «կազմակերպել(*)» (Г.Меликишвили, 1960 (УКН), էջ 451)) թարգմանության դեպքում¹⁵⁹: Նույն պատճառաբանությամբ Հ.Կարազոյանը karmeš(i)-ի համար առաջարկում է «զուխ(*)» թարգմանությունը [ԼՀԳ, 1984, I, էջ 64-65]:

30. [ke(i)]=an-] (keit=an-, ki/eṭ=an-) - հայ. կետ < *geid «կետ, կենտրոն»: Սովորաբար թարգմանվում է «ուղարկել»¹⁶⁰: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

¹⁵⁸ Թարգմանության համար տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 459:
¹⁵⁹ Ն.Հարությունյանը թեև տեքստում ašḫ- բայը թարգմանում է «կազմակերպել(*)», անել ¹⁶⁰ «», սակայն բառացանկում տալիս է «զոհաբերել» իմաստը [2001 (КУКН), էջ 437]:
¹⁶⁰ Տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 451:

- (91) i-ku-ú-ka-a-ni [šá-a-li]-e ^{L0}hu-ra-di-ni-li^{MES} ké-da-nu-ú-li... - «նույն տարի գորքեր *ուղարկեցի*» [KYKH 44_{pc4}].
- (92) i-ku-ka-ni [š]á-a-li ši-iš-ti-i-ni [k]i-e-i-da-nu-ú-li ^{L0}hu-ra-di-ni-e-l[i] ^{KUR}X-edi... - «նույն տարի՝ երրորդ անգամ (*) գորքեր *ուղարկեցի* դեպի X երկիրը...» [KYKH 241 B₂₇₋₃₁].
- (93) ^{L0}a-ú-[e]-ra-ši-li ki-d[a]-nu-bi ^{KUR}Aš-šur su-ú-i-[du-lu]-bi... - «օժանդակ գորքեր (*) *ուղարկեցի*, Ասուրը (եւ) շարտեցի...» [KYKH 173 III₃₀₋₃₁].

Հայերենում արմատը վկայված է կետ-, կիտ- տարբերակներով՝ ճիշտ այնպես, ինչպես ունենք ուրարտերենում: Առաջարկում ենք ուրարտ. բայը թարգմանել «կենտրոնացնել, ի մի հավաքել, կուտակել և այլն», որը միանգամայն համահունչ է բերված դրվագներին, և համապատասխան հատվածները կարելի է կարդալ. (91) «... գորք *կուտակեցի/հավաքեցի* ...», (92) «... գորքերը *կուտակեցի* դեպի X-երկիրը (կամ X-երկրի ուղղությամբ)», (93) «^{L0}auerašili/e *կուտակեցի* (կամ ի մի *հավաքեցի*), Ասուրը (եւ) շարտեցի»:

31. [košun] (kurune) «կողմից, կողմը, կողմ» - հայ. կող (կողն), -ուն-ս < *gol, «կող, կողմ և այլն»: Մանրամասն տե՛ս VII.3 կետ 2.2: Այնտեղ բերված արտահայտությունները հմմտ. նաև (331)-(333)-ի հետ, որտեղ kurune/(i=ne)-ի փոխարեն ունենք bedi(=ne) (peṭi=(ne))՝ «հետը, կողմից» նշանակությամբ:

32. [kor(u/o)-] (kul(u)=(ar/ub-š-)) «փախնել, փախչել» - հայ. կոր-ուս-ան-եմ «կորցնել, միջից ջնջել, հանել», կոր-նչ-իմ «կորչել, անհետանալ, միջից ջնջվել, դուրս գալ և այլն»: Երկու անգամ վկայված է «Մարդորիի տարեգրությունում» (328): Հնարավոր է նաև kulu arš- (երկու բառ) ընթերցումը: Ամեն դեպքում այն, որ սույն բայի արմատը kur-ն է երևում է kul i=e (< *kul (u)=u=li=e) բայաձևից (տե՛ս KYKH 275₁₅):

33. [košol] (kušul=ane¹⁶¹) «տաճար» - հայ. կոթող «կոթող, տաճար»: Գ.Ղափանցյանը այն նույնացնելով հայ. կոթող բառի հետ՝ թարգմա-

նում է «ըստ օրենի»՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կոթողների վրա սովորաբար գրվում են օրենքներ կամ անեծքներ [1940, էջ 145 ծան. 1]: «Տաճար» իմաստը տալիս է Ն.Հարությունյանը՝ նույնացնելով այն՝ Է. BAR «տաճար» գաղափարագրի հետ [1966, էջ 68]:

34. [kur=er] (kur=ele) «տարեր» (հոգնակի թիվ) - հայ. կրունկ < *կուր-ունկ < *gur «կրունկ»: Վկայված է միայն հետևյալ արտահայտությու-նում.

- (94) sulu=št=i=be šat=u=ale (^{ID}X-e=le) kur=ele - «գրկեց (^{ID}X-ի/(իմ)) *տարերը*» [KYKH 53₁₄, 241 C₃₇, 242B₁₃₀, 244₂₄]:

Վ.Մարգսյանը համեմատում է հայ. կոր «ծուռ, թեք», բառի հետ՝ պայմանով, որ ուրարտ. ձևի նախնական իմաստն է եղել «ծուռ, թեք» [1998, էջ 111-112]: Այլ հեղինակները համեմատում են խուռ. ukri «ոտք» բառի հետ:

35. [šayni=ṭ-] (zani=ṭ-) «խոսել, ձայն տալ» - հայ. ձայն, -ի < *g'huən-ji «ձայն, խոսք, բառ»: Արձանագրություններից մեկում համապատասխանում է INIM գաղափարագրին՝ «խոսք, բառ» իմաստով: Տե՛ս հետևյալ արտահայտությունները.

- (95) za-ni-da-(a)-bi TI.DINGIR gu-ni... [KYKH 429л.с.6, 432л.с.6, 433л.с.4, 446₅, 520л.с.4].
- (96) INIM.TI.DINGIR gu-ni... [KYKH 393л.с.5]:

(այս մասին տե՛ս նաև И.Дьяконов. ДВ, 5, էջ 142): Ըստ այդմ, zani=ṭ=a=be [šayni=ṭ=a=w] պետք է նշանակի «ձայն տվեց, խոսեց»: Արտահայտության ընդհանուր իմաստը առայժմ դժվար է ըմբռնել: Թեև TI և DINGIR գաղափարագրերի իմաստը հասկանալի է, սակայն պարզ չէ, թե ի՞նչ քերականական ձևով են դրանք հանդես գալիս այստեղ:

36. [mæk-] (mak=ul-) «նետել, շարտել (նետը)» - հայ. մկ-ունդ «զեղարդ, տեգ» (վերջինս կազմված է մկ- արմատից՝ -ունդ ածանցով): Իմաստի համար հմմտ. հայ. նետ (նետ-եմ) «նետել, շարտել»:

¹⁶¹ Վանի արձանագրություններում -ani/e վերջավորությունը հանդիպում է նաև զանազան շինություններ նշանակող մի քանի այլ բառերում, օրինակ՝ burgan=ani, iar=ani և այլն. հմմտ. հայ. -(ար)ան ածանցի հետ՝ հնձ-ան, կայ-ան, դար-ան, խոր-

ան և այլն: Մակայն այստեղ -ani/e-ն հավանաբար հոլովային վերջավորություն է, ըստ երևույթին՝ հոգ. բացառառական:

37. [mes(=in)/-] (meše, meši=ne, meš-) «հարկ, բաժին» - հայ. մասն, - ին < *mə-k' (*) «բաժին, մաս, կտոր և այլն»¹⁶²: Իմաստի համար հմնտ. հայ. հարկ, բաժին բառերը «հարկ, տուրք» իմաստով: Երկուսն էլ բառացի նշանակում են «մաս»: Այս արմատը վանի արձանագրություններում վկայված է նաև բայական ձևով, որը սովորաբար չի քարզմանվում: Տե՛ս հետևյալ արտահայտությունները.

(97) a-še^{GIŠ}ul-di me-šú-li^Dḫal-di-e 3 UDU TAG
...GEŠTIN me-ši-ú-li-ni -«(*)» [KYKH 38 I₃₀].

(98) a-še sa-li me-šú-li ka-am-ni-ni za-na-ni-ni
ḫa-i-ti-ni^Dḫal-di-na KÁ ... -«(*)» [KYKH 122₄]:

Հմնտ. հայ. մասն-եմ/իս «բաշխ(վ)ել, մասն մասն բաժան(վ)ել, մասնակից դարձնել/դառնալ, հաղորդ(վ)ել և այլն»: Ըստ երևույթին, խոսքը խաղողի որթի (^{GIŠ}ul-di-ի) և sale-ի բաշխվելու կամ հաղորդվելու (ծխական իմաստով) մասին է:

38. [nax-] (naḫ-) 1) «քերել, տանել, հեռացնել», 2) «զալ/քարձրանալ գահին» - հայ. նախ «առաջ, առաջինը, զվսավոր, հինը» (հմնտ. նախ-նի, նախ-կին և այլն): Առաջին իմաստով վկայված է հետևյալ արտահայտություններում.

(99) na-ḫu-ni ú-ri-iš-ḫi-[e] [ga]-z[u]-li ni-ri-bi
ga-zu-li na-ḫu-ni [URĪ.GAL]^{MEŠ} URUDU na-ḫu-ni
šá-ni URUDU na-ḫu-ni [] - «մատուցեց զենքեր հոյակապ (*), նախիր հոյակապ, մատուցեց դրոշ պղնձե, մատուցեց կարսա պղնձե, մատուցեց ... » [KYKH 30_{yp8-14}].

(100) X arše (išti=ne) naḫ=u=be - «X պատանիներ (այստեղ) տարա» [KYKH 241 A₂₆, B₄₂, C₁₂, D₅₃, E₂₇, F₂₉].

(101) `a-še^(MEŠ) SAL^{lu-tú}(^{MEŠ}) iš-ti-ni-ni pa-ru-(ú)-bi
X ár-še^{MEŠ} na-ḫu-bi - «տղամարդ, կին այստեղից հեռացրի, X պատանիներ տարա» [KYKH 241A_{9,23}].

(102) ni-ri-bi di-id-gu-ši iš-ti-ni-ni na-ḫu-bi `a-še
SAL^{lu-tú} pa-ru-bi ... X ár-še na-ḫu-bi - «հոտ (*) (և

¹⁶² Գ. Ղափանցյանը համեմատում է հայ. մես-ուլթյուն «նվիրվածություն», մես-իմ «նվիրեն» բառերի հետ (հայերեն բառերի մեկնաբանությունը ըստ Ղափանցյանի). 1940, էջ 39: Հ. Աճառյանը մես-ուլթյուն քարզմանում է «գիտություն, ուսում», իսկ մես-իմ «նեքս սպորդիլ» [ՀԱԲ, II, էջ 304]. Ն.Բ.Հ.Լ-ն մես-ուլթյուն բառի դիմաց տալիս է «ծեռներեցություն, միջամուխ լինելը» [Բ, 252]:

ուներցվացք(*) (ես) այստեղից տարա, տղամարդ, կին տարա, X պատանիներ տարա» [KYKH 242 C₁₅₋₁₉].

(103) na-ḫu-bi GUŠKIN KU.BABAR BI.BU di-id-gu-ši-i
KUR^X-di a-gu-bi - «տարա (ես) ոսկի, արծաթ: Նախիրը(*) (և) ուներցվածք(*) դեպի X երկիրը (ես) տարա» [KYKH 244₂₄₋₂₅]:

Կելիշինի երկրեզվյա արձանագրությունում naḫ- բայը համապատասխանում է ասուր. naši-ին՝ «կրել, տանել, հեռացնել և այլն» իմաստով: Որոշ արձանագրություններում հանդես է գալիս par- «հեռացնել, հեռանալ» բային զուգահեռ՝ «հեռացրի, տարա» իմաստով: Երկրորդ իմաստով վկայված է հետևյալ արտահայտություններում:

(104) ḫal-di-š[e] ^IX ^IX-ḫinie LUGÁL-tú-ḫi a-ru-ni
na-ḫa-bi ^{L0}AD-ni e-si-i - «Խալդին X-ին՝ X-ի որդուն արքայություն տվեց, քարձրացավ (նա) հայրական տեղը...» [KYKH 174 A₃₁₇₋₁₉].

(105) iu ḫaldi=š=me LUGÁL-tuḫe ar=u=ne naḫ=a=di
^{L0}AD-si=ne esi=i LUGÁL-tuḫi=ne - «երբ Խալդին ինձ արքայություն տվեց, քարձրացա հայրական տեղը արքայական...» [KYKH 241G₂, 274₄, 242AI+AI₂₇].

(106) i-ú-me ḫal-di-še LUGÁL-tú-ḫi a-ru-ni na-ḫa-
[di ^{L0}AD-si-ni?] e-si-I LUGÁL-tú-ḫi-ni-i še-er-
ḫi-ni - «երբ ինձ Խալդին արքայություն տվեց, (և) քարձրացա (ես) հայրական տեղը՝ արքայական, առանձնացված (*)...» [KYKH 424₃₋₄].

(107) ... a-lu-uš-me LUGÁL-tú-ḫi tar-a-g[i] a-ru-ni
na-a-ḫa-a-di LUGÁL-tú-ḫi-ni-na-a ^{GIŠ}GU.ZA-a -
«...ով-որ ինձ արքայություն մեծ/հզոր տվեց, (ու) քազմեցի (ես) արքայական գահին» [KYKH 406_{π.c.23-25}, 407_{π.c.18-19}].

(108) i-ú ^{L0}a-te-i-ni e-si na-ḫa-a-be ... - «երբ (նա) հայրական տեղը քարձրացավ...» [KYKH 148₇, 149₅]:

Այստեղ naḫ-ը, ըստ երևույթին, պետք է քարզմանել «առաջնորդել, զվսավորել»: Հայերենում նախ հիմքով կազմված բայական ձևեր չկան: Սակայն ուներք սրա հոմանիշից՝ յառաջ-ից կազմված հետևյալ բայերը՝ յառաջ-եմ «առաջ տանել, առաջն առնել», յառաջ-եմ/իս «առաջ գնալ,

առաջանալ, իշխել», յառաջ-եց-ուց-ան-եմ «առաջ տանել» և այլն (տե՛ս ՆԲՀԼ, Բ, էջ 337), որոնք իրենց իմաստներով գրեթե ամբողջությամբ համընկնում են ուրարտ. *naḥ*-ից կազմված բայաձևերի հետ: Ուրարտե-րենում *naḥ*-ից ունենք նաև *naḥi=ze* բառը, որի ինչ լինելը հայտնի չէ:

39. [n=ewš/i/e=ʔ-] (n=ebsi/e=ʔ-) «մորթել (°)»¹⁶³ - հայ. (յ)-աւշ-եմ, (յ)-աւշ-ատ-եմ «հոշոտել, (միսը) կտոր կտոր անել, կտրատել, մորթել և այլն»: Վկայված է հետևյալ արտահայտություններում:

(109) (UDU).MÁŠ.TUR Ծ^haldi=ie nebsi=d=u=li=(ne) GUD Ծ^haldi=ie TAG/urp=u=li=ne - «ուլ խալդիին քող մորթվի, ցուլ խալդիին քող զոհաբերվի» [KYKH 36, I₄, II₄, 270_{3,5}, 421_{19,23}, 424₁₀₋₁₁, 7,12].

(110) 6 UDU.MÁŠ.TUR Ծ^hal-di-e ni-ip-si-di-a-`a-li ... - «6 ուլ խալդիին քող մորթվի ...» [KYKH 38, I₃, II₄]:

Կազմված է [ewš/i/e-] - հայ. աւշ- բառարմատից՝ n(i)- հայ ն(ո)- նախածանցի հավելումով: Հայերենում առկա է նույնի յ-նախա-ծանցով ձևը, ի հակադրություն ուրարտ. տարբերակի: Հմնտ. նաև՝ ուրարտ. [(n)=uʔ=u=st-] «տղևորվել, գնալ, ուղարկել, առաջնորդել և այլն» - հայ. յ-դ-եմ < *յ-ուղ-եմ, յ-դու-մն < *յ-ուղու-մն, ուրարտ. [n=ord-] «ընդարձակել» - հայ. յ-որդ-եմ «աճել, ծավալել»: n(i)- նախածանցի մասին մանրամասն տե՛ս IV.3 կետ 1:

40. [n=ord-] (n=uld-) «ընդարձակել, ծավալել(°)» - հայ. յ-որդ-եմ/իմ, «առատանալ, ծավալել, աճել, առավելել և այլն»: Որոշ հետազոտողներ Թոփուզավայի երկլեզվյա արձանագրությունում ուրարտ. *nuld*- բայի դիմաց ասուր. տարբերակում ընթերցում են *ir-ti-`i* (*re`u*-ից) «զվխավորել, կռաավարել, առաջնորդել և այլն (բուն իմաստն է հովվել)»¹⁶⁴: Սակայն Մ.Մալվինին¹⁶⁵ համապատասխան հատվածը ընթերցում է

(111) (ուր.) šú-si-na MU^{MEŠ} [KUR^BBi]-a-i-ni-li nu-ul-du-ú-li KUR^Ulu-lu-i-ni-l[i] [z]i-el-du-bi - (ասուր.) ina lib-bi MU^{MEŠ}-ia KUR^UURI ir-ti-[paš]

¹⁶³ Հ.Կարազոյանը և Մ.Հմայակյանը թարգմանում են «ողջակիզել, այրել» [1990, էջ 92 ծան. 17], Ֆ.Ջյոնիզը՝ «պատռել» [1955, Hch I, էջ 54]:

¹⁶⁴ Տե՛ս, օրինակ, M. de Tseretheli, Études ourartéennes, RA, vol. XLV, արձ.4. էջ 195-208; Г.Меликишвили, 1960(УКХ), արձ. 264 և այլն:

¹⁶⁵ Տե՛ս B.André-Salvini, M.Salvini, SMEA, 44/1, 2002, էջ 22-23:

[^{KUR}UR^{MEŠ}] ú-si-iq - «իմ օրերի ընթացքում Բիայնիլ-ը ընդարձակեցի, հակառակորդ երկրները սեղմեցի/նեղեցի»:

Որտեղ նա *ir-ti-`i*-ի փոխարեն կարդում է *ir-ti*-[paš] (*rapašu*-ից) «ընդարձակել, ծավալել»: Ելնելով (111)-ում բերված նախադասության ընդհանուր իմաստից մեզ ևս առավել վստահելի է թվում «ընդարձակել, ծավալել» իմաստը: Հայերենում առկա է *nuld*-[n=ord-]-ի յ- նախածանցով ձևը, ի հակադրություն ուրարտ. տարբերակի: Հմնտ. նաև՝ ուր. [(n)=uʔ=u=st-] «տղևորվել, գնալ, ուղարկել, առաջնորդել և այլն» - հայ. յ-դ-եմ < *յ-ուղ-եմ, ուր. [n=ewš/i/e=ʔ-] «մորթել» - հայ. յ-աւշ-ատ-եմ «հոշոտել, կտրատել, մորթել» (տե՛ս նաև IV.3 կետ 1):

41. [o/ure] (ule, ule=še (երգ.)) «այլը (°), ուրիշը (°)» - հայ. ո(ւ)րիշ, ո(ւ)րոշ «ուրիշ, այլ»¹⁶⁶: Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում ուրարտ. «*alu=še ainei uli*[...]»-ը համապատասխանում է ասուր. «šummu meni-me[ni]»-ին «եթե ինչ-որ մեկը» իմաստով: Հանդիպում է նաև մի քանի անհասկանալի արձանագրություններում և հետևյալ կադապարային արտահայտությունում.

(112) *alu=še ainei/ule ine=le du=li=e (ti=u=li=e uli ture) alu=še ule=še ti=u=li=e ...* - «ով որ, ինչ-որ մեկին այն բաները կստիպի, (կասի գնա ջարդի,) մեկ այլ ուրիշը կասի ...» [...],

որտեղ այն վկայված է երկու անգամ՝ *ule* և *ule=še* (երգ. հոլ. *ule*-ից) ձևերով: Ինչ վերաբերում է *alu=še ule=še ti=u=li=e* արտահայտությանը, որտեղ *alu=še*-ն և *ule=še*-ն գործողության սուբյեկտներն են և դրված են երգ. հոլովով, ապա այն հայերենով բառացի պետք է թարգմանել «այլը, ուրիշը կասի (*ti=u-*)», այսինքն «մեկ այլ մեկը (որը)/ուրիշ մեկը (որը) (այսինչ կամ այնինչ բանը) կասի»:

42. [ort] (ulte) «խաղողի որթ» - հայ. որթ, -ոյ < *or-th-o «խաղողի որթ»: Հանդիպում է բազմաթիվ արձանագրություններում: Որոշ արձանագրություններում փոխարինվում է GEŠTIN գաղափարագրով «խաղողի այգի, խաղողի որթ», ինչից էլ որոշվում է իմաստը: Ուրարտ. *ulte* - հայ. որթ, -ոյ ձևերի հիմքային ձայնավորների տարբերության համար

¹⁶⁶ Անհասկանալի է մնում բառակերթի 2-ն: Միգուցե ուրարտ. *ule*-ն պետք է համեմատել հայ. որ, -ոյ < *k^u-ro «որ, ով որ» դերանվան հետ (°):

հմմտ. šuri [suri] «սուր» - հայ. սուր, -ոյ, šare[šar] «ծառ» - հայ. ծառ-ոյ և այլն (տե՛ս II.4.3 կետ 1.2):

43. [ost-] (ušt=, ušt=i/ebt(i=n)e, ušt=a=ku=ne) «արշավել, ուղևորվել, «մատուցել» - հայ. ոստ-ան-ում «ծավալվել, աճել», ոստ-եմ, ոստ-ուց-ան-եմ «ի դուրս տալ, արձակել», ոստ-ան-իմ, ոստ-ն-ում «ի վեր/դուրս/բաց վազել, ի բաց հեռանալ» և այլն < *ozd (Գ.Ջահուկյան, ՊԲՀ, 2001, 1, էջ 127): Այս արմատից ուրարտերենում ունենք հետևյալ բառաձևերը.

43.1 [ost-] (ušt=a/u-) «արշավել, ուղևորվել», «մատուցել, նվիրել»: Առաջին իմաստով վկայված է հետևյալ տեսքի արտահայտություններում)

(113) (^IX/^I/L⁰X^{MEŠ}) ušt=a=be/le/di (^{KUR/URU}X-edi) - «^IX /^I/L⁰X^{MEŠ} արշավե-ց/ցին/ցի դեպի X-երկիրը / քաղաքը» [...].

(114) uš-ta-di L⁰ú-e-li šú-si-ni-e ^{KUR}X-giedi - «արշավեցի (ես) մեկ գնդով դեպի X-երկիրը» [KYKH 241F₁₆].

(115) i-ú ^{di}hal-di-še ma-a-si DINGIR ^{di}i-ni-ri-a-še uš-tú-ni - «երբ Խալդին իր աստվածությունը *ցուցաբերեց*» [KYKH 174A₄₂].

(116) ^{URU}X-edi ušt=u=ne - «դեպի X-քաղաքը *ուղարկեց*» [...].

(117) ú-i a-i-ni-i LUGÁL iš-ti-n[i] uš-tú-ri - «ու մի քազավոր այնտեղ չէր *արշավեք*» [KYKH 241E₄₂₋₄₃]:

Երկրորդ իմաստով վկայված է զանազան առարկաների վրա գրված հետևյալ տեսքի արտահայտություններում.

(118) ^Dhal-di=ie EN.ŠU/euri=ie ini aše/kubuše/qarqara=ne ušt=u=ne (ulgu=š=ia=ne=edi=ne/ er(e)bu-ne=edi) - «Խալդիին՝ տիրոջը այն (վահանը /սաղավարտը/ զրահը) *նվիրեց* (իր կյանքի համար)/(դեպի Էրեբունի)» [...]:

Սույն համատեքստում ուսումնասիրողների կողմից քառին տրվող «նվիրել, ընծայել» իմաստը դժվար է կապել ընդունված «արշավել, ուղևորվել» իմաստին: Ըստ երևույթին, պետք է ենթադրել, որ «նվիրել, մատուցել» քարգմանությունը մոտավոր է, և վերը վկայված արտահայտությունները բառացի պետք է հասկանալ «դուրս բերեց/հանեց» կամ «բաց/դուրս բողեց»:

43.2 [ost=i/ewt(i=n)] (ušt=ebt(i=n)e) «արշավանք, հարձակում»: Կազմված է [ost] արմատից [-i/ew=ti] - հայ. -ոյթ, -ի < *-ի/ելթի

ածանցի հավելումով. այս ածանցի մասին մանրամասն տե՛ս IV.3 կետ 2 (հմմտ. մակ mer- և mer=ewti բառերը): Ըստ այդմ, հնարավոր է ենթադրել հայ. ոստ-ոյթ, -ի < *ոստ-ի/ելթի բառաձևը՝ «հարձակում, կտրուկ հեռացում/շարժում (ի դուրս/բաց) և այլն» իմաստով: Վկայված է հետևյալ արտահայտություններում:

(119) i-e-še i-ni-li ^{KUR}(ⁱ)e-ba-ni-li šú-si-ni-e uš-ti-ip-ti-ni á[š]-gu-ú-li - «ես այն երկրները մեկ *արշավում* գրավեցի» [KYKH 389₂₋₃].

(120) ...3-a e-sa-a [u]š-ti-ip-te za-du-ú-bi ... - «երեք տեղերում էլ *արշավանք* իրականացրի» [KYKH 241D₂₃]:

43.3 [osta=ku=n] (ušta=ku=ne) «(*)»: Թերևս կազմված է նույն [ost] արմատից [-v=ku=n/-v=ka=n] - հայ. -կ(ս), -ան, -ուս-ք/ս ածանցով (տե՛ս IV.3 կետ 2):

44. [ur] (uri/e=nei, ure) «վայր, տարածք» (այդպես՝ ըստ Մ.Մավլինիի) - հայ. ուր < *k^uur «տեղ»¹⁶⁷, հմմտ. ուրե-մս «մի տեղ», ընդ-հան-ուր «ամեն տեղ» [ՀԱԲ, III, էջ 42, 613] և այլն: Վկայությունների համար տե՛ս (78)-(79)-ը և հետևյալ արտահայտությունը.

(121) ^{di}hal-di-ni-ni-e ba-ú-ši-ni ^{KUR}ú-ri-e a-ú-e-i-tè-ni ši-ú-bi - «Խալդիի հրամանով թշնամական տարածքը գորք(*)¹⁶⁹ ուղարկեցի» [SMEA, XLIV/1, 2002, էջ 127]:

Իմաստը որոշելիս Մ.Մավլինիին հիմք է ընդունում Չելեքիբադի (79) արձանագրությունը, որտեղ u-ri-ni-ի փոխարեն կարդում է GÁN շումերոգրամը՝ «վայր, դաշտ, տեղ, տարածք» նշանակությամբ¹⁷⁰: Ըստ այդմ, մա ...šú-i-ni-i u-ri-ni-i/u-ri-ni-e-[i]/GÁN-i արտահայտությունը առաջարկում է քարգմանել «...ամբողջ տարածքի վրա» (šú(i) - «ամեն, ամբողջ»): Հաշվի առնելով u-ri-ni-e-[i] (u-ri-né-e-[i]) տարբերակի առկայությունը՝ բառն ու արտահայտությունը ամբողջությամբ պետք է կարդալ՝ ...šui=(i)=ne=i

¹⁶⁷ Ուր-ը հայերենում մակ դերանուն է:

¹⁶⁸ Ե.Գրեկյանն առաջարկում է *KUR* «հակառակորդ, թշնամի» գաղափարագրի փոխարեն այստեղ կարդալ *PAP* «ամբողջ, ամեն» [ՊԲՀ, 2004, 1, էջ 224-252]:

¹⁶⁹ Այդպես է քարգմանում Մ.Մավլինիին: Ն.Հարությունյանը ¹⁷⁰ aúeītène-ի համար ենթադրում է «քրմական ինչ-որ դաս, ծառայող» իմաստը [1966, էջ 44] (մանրամասն տե՛ս III.2.3 կետ 10):

¹⁷⁰ Sb' M.Salvini, SMEA, 44/1, 2002, էջ 129-130, 142-143:

uri=(i)=ne=i «ամեն տեղ» (հմմտ. հայ. ամեն-ուրե-ք բառաձևը):

45. [ur-] (ur=išhe, ur=išh=use, ^{L0}ur=urd=a=ne) - հայ. ուր-և «կռան, մտրճ, գամ»: Այս բառարմատից ունենք հետևյալ կազմությունները.

45.1 [ur=isx] (ur=išhe) «զենք, իր(մետաղյա)» (հիմնականում վկայված է զանազան մետաղյա առարկաների վրա): Կելիշինի երկրեզվյա արձանագրությունում ur=išhe-ն համապատասխանում է ասուրական bēlu-ին «զենք» նշանակությամբ, սակայն այն հանդիպում է ոչ միայն զինատեսակների, այլև զանազան մետաղյա առարկաների (թաս, զանգակ, դրան փական և այլն) վրա: Այդ պատճառով սովորաբար թարգմանվում է ոչ միայն «զենք», այլև ընդհանրապես «իր, առարկա»¹⁷¹: Հաշվի առնելով այն փաստը, որ ur=išhe-ն հանդիպում է միայն մետաղյա առարկաների վրա, առավել հավանական է հատկապես «մետաղյա իր, առարկա» իմաստը: [-isx] (-išhe) - հայ. -իսխ ածանցի համար տե՛ս IV.3 կետ 2:

45.2 [ur=isx=oc] (^Eur=išh=use) «զինագործարան, դարբնոց, մետաղամշակման արհեստանոց»: Նման թարգմանությունը մերն է (տե՛ս նախորդ կետը): Մասնագիտական գրականությունում սովորաբար թարգմանվում է «պահեստ». Մ.Սալվինին առաջարկում է «զանձարան» թարգմանությունը (տե՛ս ծան.171): Տեղացույց [-oc] (-use) - հայ. -ոց ածանցի համար տե՛ս IV.3 կետ 2:

45.3 [ur=ord] (^{L0}ur=urd=a=ne (հոգ. բացառ.)) «զինագործ, մետաղագործ, դարբին»: Նման թարգմանությունը մերն է: Ն.Հարությունյանը համարում է ինչ-որ մասնագիտության անվանում [2001(KYKH), էջ 473], Ֆ.Քյոնիգը թարգմանում է «beamte» (պետական ինչ-որ ծառայող) [1957, II, էջ 208], Հ.Կարազոյանը՝ «մարտակառք վարող, կառավար»՝ համեմատելով հայ. Վար-որդ բառի հետ [1998, էջ 44-46]¹⁷²: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

¹⁷¹ Տե՛ս J.Friedrich, Urartisch ^Eur-iš-ji- und ^Eur-iš-ḫusi-, AfO, XVII, 2, 1956, էջ 367-368; Г.Вильгельм, ДВ, 5, էջ 97; Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 473: Մ.Սալվինին, հիմնվելով ուրարտական տեքստերում առկա NIG.GA/ú-ri-iš-ḫi հեթրազայության վրա, առաջարկում է «ունեցվածք, զանձ» թարգմանությունը [SMEA, 22, 1980, էջ 186], այնուհետև նույնը պնդում է [SMEA, 43/2, 2001, էջ 252]-ում, բայց բոլորովին հաշվի չի առնում Կելիշինի արձանագրությունը, որ վերջինս համապատասխանում է ասուր. bēlu-ին «զենք» [KYKH 30s]:

¹⁷² Այս դեպքում միգուցե ur=urd=a-ն (վանկազիր ú-ru-ur-da-) պետք է կարդալ bar=urd=a- (վանկազիր ba,-ru-ur-da-): Սակայն նկատի ունենալով հայ. վար- արմատի իրանական ծագումը՝ նման ստուգաբանումը քիչ հավանական է թվում:

(122) ...X ^{G1S}GIGIR^{MES} X PIT.ḪAL.LÚ^{MES} X LÚZAB^{MES} ... LÚA.-
SI^{MES}-na-ni e-di-ni tú-ru-bi ... hu-šú-bi X
LÚUKU^{MES} X ANŠU.KUR.RA^{MES} X URUDU^{MES} X ERUM^{MES} LÚú-
ru-ur-da-a-ni e-di-ni tú-ru-ú-bi - «...X մարտա-
կառք, X ձի, X զինվոր... բանակի համար ոչնչացրի(*) ... , թա-
փեցի: X մարդիկ, X ձիեր ..., X պղինձ, X ստրուկներ
^{L0}ur=urd-ների համար ոչնչացրի(*)» [KYKH 241G₃-11]:

Հավանաբար [ur=ord] բառացի պետք է նշանակի *ուռ(ս)-որդ «դարբին, զինագործ, երկաթ ծեծող, մրճավոր»: Հմմտ. հայ. ուռն-ած «երկաթ ծեծող, մրճավոր»: [-ord] - հայ. -որդ, ի-ա ածանցի համար տե՛ս IV.3 կետ 2:

46. [u-] (ul-, (n=)ul=u=št-) - հայ. ուղի, յ-դ-եմ < *յ-ուղ-եմ, յ-դ-ու-մն < *յ-ուղ-ու-մն, (յ)ուղ-արկ-եմ < *ul- «ուղևորել, զնայ, ուղի դնել, առաքել և այլն»: Վկայված է հետևյալ տարբերակներով.

46.1 [u-] «ուղևոր(վ)ել, զնայ և այլն».

46.2 [u-] «ուղևոր(վ)ել, ուղղորդել, առաջնորդել», կազմված է նախորդից՝ [-u=st] - հայ. -ու-ստ մասնիկի հավելումով.

46.3 [n=u-] «ուղղորդել, առաջնորդել, գլխավորել, վարել»: Կազմված է [u-] «ուղևոր(վ)ել» (տե՛ս նախորդ կետը) բայաձևից՝ ո(i) - հայ. ո(ի)- նախածանցի հավելումով¹⁷³:

47. [peṭ(i), peṭu/o] (peṭi=(ne) (բացառ. հոլ.), peṭu/o=i=aše, peṭ-) (սովորաբար տառադարձվում է bedi/u) «հետ տալ, շրջ(վ)ել, վերադառնալ և այլն» - հայ. Յետ, (յ)ետ < *ped «հետ(ի), հետը, հետևի կողմը և այլն»: Արձանագրություններում վկայված է նախքան հայերենին հատուկ *p>h/- անցումը. հմմտ. նաև ուրարտ. [par] - հայ. առ, հեռի: Հանդիպում է հետևյալ ձևերով.

[peṭ-] (բ.) «հետ տալ, վերադարձնել, ետ դառնալ, շրջվել».

[peṭu/o=y=as] (մ.) «ետ դարձին, վերադառնալիս»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(123) ... bedu=i=a=še ušt=a=di... «...ետ դարձին արշավեցի»
[KYKH 241C₃₅, F₁₃]:

¹⁷³ Այնպես, ինչպես ունենք հայ. յ-դ-եմ < *յ-ուղ-եմ, որը կազմված է նույն բայարմատից մեկ այլ՝ ի/յ նախածանցի հավելումով: Հմմտ. նաև հայ. ի-այ-եմ/ն-այ-իմ. յ-ե-ց-եմ/ն-ե-ց-ուկ, յ-ստակ/ն-ստակ և այլն (մանրամասն տե՛ս IV.3 կետ 1):

[ֆեթ(i)] «կողմ (*)»: Վկայված է հետևյալ տեսքի արտահայտություններում.

(124) ^Dɣaldi=ne bedi=(ne) ^Dɣaldi=na=ne KÁ bedi=(ne) mani=ne... - «Խալդիի կողմից, Խալդիի դռների կողմից թող լինեն...» [...]:

Դրված է քացառական հոլովով և հանդես է գալիս իբրև ետադրություն (մանրամասն տե՛ս VII.3 կետ 2.2): Հայերեն (h)եր քառը չունի կողմ իմաստը: Ըստ երևույթին պետք է հասկանալ «կից, կողքին, հետը»:

48. [pił] (pile) «զրանցք» - հայ. պեղ < *bel «փոս, խոռոչ և այլն»: Համապատասխանում է շուներ. PA₅ «զրանցք» գաղափարագրին: Հայ. եղ հնչյունախումբը հաճախ գալիս է *իլ-ից (տե՛ս II.4.3 կետ 1.1): Հնարավոր է նաև կապը հայ. հեղ/ող < *pel/pol «հեղեղ, հոսող ջուր» քառարմատի հետ: Հմմտ. հ.-ե. *ped > ուրարտ. [ֆեթ] > հայ. (h)եր, հ.-ե *per > ուրարտ.. [ֆար] > հայ. առ, հեռի:

49. [patke/i=(t-)] (patke/i=(t)) - հայ. պատկե-նա-լ «հաստատել», «պնդել, կազդուրել»¹⁷⁴: Ի.Դյակոնովը ենթադրաբար, ըստ համատեքստի, թարգմանում է «վերականգնել(*)»¹⁷⁵: Ն.Հարությունյանը [2001 (KYKH), էջ 310] հղում է Ի.Դյակոնովին, բայց (126)-ում թարգմանում է «ոլնել, հինադրել (խոսքը տաճարի հիմքի մասին է)»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(125) a-li i-ru-ú-li-e lu-ru-qu-ú-li-e šú-bi ba-aṭ-qi-du-li-ni - «...ինչը որ փախցվել էր, ավերվել էր, նորից թող վերականգնվի» [KYKH 125_{5,7}].

(126) a-še-e šú-bi ba-aṭ-qi-du-li TEMEN - «երբ նորից դրվի հիմքը» [KYKH 392_{8,9}].

(127) a-lu-še ú-i-e šú-bi ba-aṭ-qi-i-a-ni... - «ով նորից չի վերականգնի (չի ցանկանա վերականգնել)...» [KYKH 478_{5,6}]:

Ինչպես երևում է բերված վկայություններից, այստեղ ակնհայտորեն խոսքը «հաստատելու, հիմնելու, ամրացնելու» մասին է, քանզի բոլոր դրվագներում սույն բային նախորդում է ՏսԷ «նորից» մակբայը: Հետևաբար թարգմանության մեջ «վերա-» բաղադրիչը ավելորդ է: Ըստ

այդմ, նշված դրվագներում ՏսԷ baṭqi--ն պետք է թարգմանել «նորից հաստատել/ամրացնել/ կանգնեցնել և այլն»:

50. [paṭ] (paṭ=use, paṭ=g-, paṭ=ari (*)) - հայ. պատ «պատ, շրջապատ, շրջակայք», պատ-եմ «պատել, շրջապատել»:

50.1 [paṭ=oc] (paṭ=use): Մինչև այժմ ստացել է տարբեր մեկնաբանություններ: Ըստ Ի.Մենշչանինովի [1939, էջ 119, ծան. 19], կասկածանքով նաև Գ.Մելիքիշվիլու [1960(YKH), էջ 392], նշանակում է «հոյակապ, վեհասքանչ», ըստ Բ.Պիտրովսկու՝ «հզոր ամուր» (տե՛ս նույն տեղում): Մ.Սալվինին հիմնվելով հետազայում հրատարակված քվազի երկլեզվյա մի արձանագրության վրա՝ այն նույնացնում է ասուրական adi limiddi-šu-ի հետ: Ասուրերենում adi նշանակում է «մինչև» կամ «հետը, միասին», Տս-ն «նրա, իր»: Սալվինին անձանոթ limiddi քառը մեկնաբանում է իբրև liwitung, limitu, որը նշանակում է «շրջապատ, շրջակայք», բայց չգիտես ինչու վերջինիս տալիս է նաև «կատարելիություն» կասկածելի իմաստը՝ ասուրական տեքստը այդ հատվածում թարգմանելով «մինչև իր կատարելիությանը»: Ի.Դյակոնովը կասկածի տակ է վերցնում Մ.Սալվինիի թարգմանությունը և առաջարկում է «իր հմտության շնորհիվ» թարգմանությունը [տե՛ս ԸԲ, 5, 1985, էջ 165]: Մակայն ասուրական տեքստի համար Մ.Սալվինիի առաջարկած liwitung/limitu ընթերցումը՝ իր հիմնական իմաստով «շրջապատ, շրջակայք», ոչ միայն ամբողջությամբ համապատասխանում է հայերեն պատ քառին և adi limiddi-šu-ն, պետք է պարզապես թարգմանել «իր շրջապատի հետ միասին», այլև միանգամայն հասկանալի է քառիս մյուս վկայություններում: Այսպես, «կառուցեցի այսինչ շինությունը pat=usi=(i)e» կադապարային արտահայտությունը կարելի է հասկանալ «կառուցեցի այսինչ շինությունը շրջակայքով կամ շրջապատված (պատով), պարսպապատված»: Հնում զանազան կառույցները, սովորաբար ունենում էին իրենց շրջապարիսպը և այլ պաշտպանիչ օժանդակ շինություններ: Իսկ ի դեմս usi մասնիկի այստեղ անկասկած գործ ունենք ուրարտ. -use [-oc] - հայ. -ոց ածանցի հետ (տե՛ս IV.3 կետ 2): Ինչ վերաբերում է -(i)e վերջավորությանը, ապա այն հնարավոր է նույնացնել -v-(i)e ածանցի հետ (տե՛ս VI.3 կետ 2): Մյուս կողմից, ինչպես որ առաջարկում է Գ.Վիլիելմը, սրա մեջ կարելի է տեսնել տրական հոլովի քարացած մասինկ [ԸԲ, 5, 1988, էջ 118 և ծան. 19]:

50.2 [paṭ=g-] «շրջապատել (*)» - հայ. պատ-եմ «պատել, շրջապատել»:

¹⁷⁴ Տե՛ս Բան. Երեն., էջ 266; Հ.Աճառյան, ՀԱԲ, II, էջ 8, 45:

¹⁷⁵ И.Дьяконов, 1963 (УПД), էջ 53, 88: Տե՛ս նաև Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ

50.3 [pač=ar] «քաղաք» - հայ. պատ «պատ, պարիսպ»¹⁷⁶. ըստ երևույթին, pač=are պետք է հասկանալ հատկապես, պարսպապատ ավան, քաղաք, բնակավայրի հակադրություն առանց պարսպի բնակավայրերի: Ինչ վերաբերում է -are վերջավորությանը, ապա այն թերևս կարելի է համեմատել հայ. -աղ ածանցի հետ (հմմտ հայ. բրբռ. ալթ-աղ «սենյակ» և այլն):

51. [jari/e=n(i)] (gari/e=ni/e) - հայ. ջառն «անձավ, կատակոմբ»: Ուրարտ. բառը սովորաբար կասկածանքով թարգմանվում է «ամբողջ (*)»: Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(128) ga(?!)/ga-ri-ni qar-bi a-gu-nu-ni ma-[nu] gu-nu-šá-a ha-ú-bi «ամբողջ (*) ժայռի վրա ամբացված (*) էր, մարտում (ես) գրավեցի» [KYKH 173 I₂₆, III₆₂₋₆₃].

Առաջարկվող «անձավ, կատակոմբ» իմաստը միանգամայն համահունչ է վերոհիշյալ արտահայտությանը: Հայաստանի տարածքում կամ պաշտպանական նպատակով փորված՝ արհեստական կամ հարմարեցված բնական բազմաթիվ անձավներ, որոնք հաճախ օգտագործվել են իբրև թաքստոցներ:

52. [jierd] (zielde) - հայ. լեարդ, լերդ < * iēk^uբ-տ «յարդ»: Հայ. լեարդ բառի հնդեվրոպական ծագումը հայագետների շրջանում կասկած չի հարուցում, սակայն անհասկանալի է մնում բառակազմի լ-ն՝ սպասվելիք ջ-ի կամ ծ-ի փոխարեն: Այս հանգամանքը տարբեր մեկնաբանությունների է արժանացել, որոնց մեծը այստեղ չենք անդրադառնալ¹⁷⁷: Նշենք միայն, որ ինչպես երևում է ուրարտ. սեպագրերում վկայված zieldē «յարդ» բառից, այս շրջանում հայերենում դեռ գործածական էր «յարդ» բառի սպասվելիք կանոնավոր *ջիարդ կամ *ծիարդ ձևը (ուրարտական տեքստերում հայ. ա-ի դիմաց e-ի առկայությունը սովորական երևույթ է, տե՛ս II.4.2 կետ 1): Հ.-ն. չ-ն հայերենում որպես կանոն տալիս է ջ, ծու բառում՝ ծ: Իր հերթին ուրարտ. z-ն համապատասխանում է հայ. զ-ին, ց-ին, ծ-ին կամ ջ-ին (հմմտ. ^{KUR}zabaḫa - հայ. «Չառախ-ք»¹⁷⁸), տե՛ս II.4.2 կետ 2.3: Այս հանգամանքները առայժմ թույլ

չեն տալիս միարժեքորեն որոշել ուրարտ. zieldē-ի ճշգրիտ արտասանությունը՝ [jierd] թե [jierd]:

53. [jutu/o=s(=in)] (gunu=š(in)e) «մարտ», «մարտիկ, մարտական» - հայ. *ջուն < *g^uhon «ջարդ, կոտորած և այլն» (հմմտ. համա-ջուն-ջ «կոտորած»): Նույն արմատից են նաև հայ. ջև-եմ «ծեծել, զարկել», գան-եմ «ծեծել» և այլ ձևերը: Թուփուզավայրի երկլեզվյա արձանագրությունում gunu=še-ն համապատասխանում է ասոր. tuquntu-ին «մարտ, կռիվ» իմաստով: Այս նույն արմատով են արտահայտվում նաև «մարտիկ, մարտական» իմաստները: Գ.Ջահուկյանը այն համեմատում է հ.-ե. *g^uen, *g^uono «մարտ» արմատի հետ [1963, էջ 32], Գ.Ղափանցյանը, «ուժ» իմաստով՝ հայ. գուն բառի հետ (ծագում է հ.-ե. նույն արմատից) [1940, էջ 86]: Պատերազմի հետ կապված հայերեն բառերից շատերը ուշ շրջանի փոխառություններ են և ըստ երևույթին ջուն-ը, որը բնիկ է, հնում լայնորեն գործածվել է «մարտ, կռիվ» իմաստով:

54. [sayt-] (šat-) - հայ. սայթ-աք-ել (*) «սահել, գայթել, շեղիլ, մոլորվել»: Սովորաբար կասկածանքով թարգմանվում է «բռնել, վերցնել, խլել»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(129) ... URU^{MEŠ} GIBÍL-bi X^{GIŠ} GIGIR gu-nu-ši-ni šá-tú-ú-bi - «...քաղաքներն այրեցի, X մարտակառքեր խլեցի» [KYKH 244₁₇].

(130) ... URU^{MEŠ} iš-ti-ni šá-tú-ú-li za-du-ú-bi L^UX^IX-naue - «քաղաքներ այստեղ *բնակեցրի*...» [KYKH 406_{o.c.2-3}].

(131) ... ^{GIŠ}ša-ri šú-hi-e iš-ti-ni te-ru-ú-bi URU šú-hi iš-ti-ni šá-tú-ú-ú-l[i] - «այգի՛ նոր այստեղ (ես) գցեցի, քաղաքը նորից (ես) այստեղ *վերցրի*...» [KYKH 421₁₁₋₁₃]:

Տե՛ս նաև՝ (94), (328): Բառի իմաստը որոշվում է հիմնվելով հիմնականում [KYKH 53₁₄, 241C₃₇, 242BI₃₀, 244₂₄] արձանագրությունների (տե՛ս (94)) վրա, սակայն բռնել իմաստը հարմար չէ հատկապես (130)-ում և (131)-ում: Այնքան էլ համոզիչ չէ և խրթին (130)-ը թարգմանել «քաղաքներ այստեղ *բնակեցրի*», իսկ (131)-ը՝ «քաղաքը նորից (ես) այստեղ *վերցրի*»¹⁷⁹: Մինչդեռ վերոհիշյալ հատվածների հա-

¹⁷⁶ Գ.Ղափանցյանը pat=are-ն համեմատում է նաև հայ. փաթ արմատի հետ [1940, էջ 39]: Իսկ Վ.Սարգսյանը՝ նաև բասկ. paita «պատ», «պարսպապատ տարածք» ձևի հետ [1998, էջ 114]:

¹⁷⁷ Հայ. «լեարդ» բառի ծագման և նկատվող անկանոնության մասին մանրամասն տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 52, 160, 173 և այլնտեղ նշված գրականությունը:

¹⁷⁸ Տե՛ս Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 530:

¹⁷⁹ Ի.Դյակոնովը «... URU šuhe išti=ne šat=u=le» արտահայտությունը համարում է պատճենահանում ասորական «ālu ana eššuti ašbat - քաղաքը

մեմատումը ուրարտ. արձանագրություններում հաճախակի հանդիպող՝
 G15 šare šuše išti=ne ter=u=be, G15 šare išti=ne ter=u=be, URU šuše išti=ne ter=u=be արտահայտությունների հետ
 պարզորոշ հուշում է, որ սույն համատեքստում šat- և ter- «դրեցի»
 բայերը արտահայտում են մանատիպ իմաստ և šat- պետք է
 մտաւովորապես մշանակի «հիմնեցի, դրեցի և այլն»: Կամ ուղղակի՝
 «զցեցի», համեմատեք հայ. այգի զցել կամ քաղաք զցել արտահայտու-
 րությունների հետ: զցել իմաստը միանգամայն համահունչ է մակ մյուս
 դրվագներում: Այսպես՝ «սողաց ընկավ/զցվեց (1D X-ի) ռոքերը» (94), «...
 X մարտակառքեր զցեցի (տապալեցի, շուռ տվի)» (129), «... փախնելով
 ընկան/զցվեցին X լեռը, X լեռը» (328): Եթե սույն ստուգաբանումը ճիշտ
 է, ապա հայերեն սայթ- բայարմատը սկզբնապես պետք է մշանակեր
 «ընկնել(»), զցել(«)»: Ըստ այդմ, (94)-ում šat=u- անցողական բայը
 քերես կարելի է ըմբռնել իր կրավորական իմաստով «զցվել(«)»: 180

55. [ser] (1) (šer=a=še (հոգ. էրգ.) - հայ. սեռ, -ի < *k'ér, «տոհմ, ազգ,
 ցեղ»): Մեկնաբանությունները տե՛ս հաջորդը:

56. [ser] (2) (šere) - հայ. սեռն < *k'ér «անխառն, զուտ, պարզ, մա-
 քուր», մակ՝ «ամուր, խիստ, հաստատուն»: Գ.Մելիքիշվիլին šer
 «առանձին, անջատ» արմատից քիսեցնում է šere «առանձին, անջատ,
 դրանից զատ», šer=aše «ուրիշ», šer=d=u=be «թաքցնել, ա-
 ռանձնացնել» և šer=ħini բառերը՝ տեքստում šerħini-ն թարգմա-
 նելով «ժառանգական» 181: Ավելի ուշ Ն.Հարությունյանը šer=aše-ն
 թարգմանում է «պապերը(«), մախնիները(«)» 182. Զննարկենք վերոհիշյալ
 ձևերը առանձին-առանձին:

56.1 [ser] «ուրիշը» (Գ.Մելիքիշվիլի), «պապերը (»), մախնիները (») (Ն.Հարությունյան): Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(132) ... še-ra-a-še LUGÁL^{MES}-še qa-ab-qa-ar-šú-ú/u-
 tú-ú/u ú-te a-i-še-e-i ha-a-ia-la-a-ni -
 «... մախնի(«) արքաները չէին տիրել, ոչ ոք (») երբեք (») չէր
 գրավել» [KYKH 148¹⁷⁻¹⁹, 149¹⁵]:

Այնհայտորեն խոսքը Վանի արքաների մասին է և šer=a=še
 LUGAL^{MES}-še ... պետք է հասկանալ «ցեղակից/մախնի արքաները ...»,
 բառացի «ցեղակիցները/մախնիները արքաները ...»՝ այն կապելով հայ.
 սեռ «տոհմ, ազգ, ցեղ» բառին:

56.2 [ser] - «անջատ, առանձին» 183 - հայ. սեռն < *k'ér: «անխառն,
 զուտ, պարզ, մաքուր» (տե՛ս վերը): Վկայված է հետևյալ արտահայտու-
 րություններում.

(133) me-i a-li L^OA.SI^{MES}-še pa-ar-tú/ir-bi-tú še-(e-
)ri pa-ar-tú i-ú^{KUR}e-ba-ni/KUR-ni-i áš-ú-la-
 a-bi - «այն, ինչ-որ զորքը տարավ, տարավ առանձին ...»
 [KYKH 241 A¹¹⁻¹², C⁴⁵⁻⁴⁶].

(134) 1D X-še a-li-e še-e-ri `a-še SAL^u-tú L^OA.SI^{MES}-ú-
 e a-ru-bi - «1D X-ը ասում է, առանձին՝ տղամարդ, կին
 տվեցի զորքին (ես)» [KYKH 241 F²⁸].

(135) bur-ga-la-li LUGÁL^M[^{ES}] ^{KUR}X-hi-ni-li za-ši-li ú-
 [...]ib ha-a-ri še-er-li DUB-te «» [KYKH 31^{π.c.} 31-
 33, o.c.12-13]:

Որոշ հետազոտողներ այս մույն արմատից են քիսեցնում մակ
 ուրարտ.šer(=)է- «առանձնացնել(«, թաքցնել(«)» բայաձևը, որը
 վկայված է հետևյալ արտահայտություններում.

(136) [a-l]u-še ^UTU-ka-i-ni še-er-du-li-i-[e] ... - «ով-
 որ արևից (բառացի արևային տեղը, կողմը) թաքցնի ...»
 [31^{o.c.}27].

(137) alu=še šer(=)d=u=li=e ... - «ով որ թաքցնի ...» [...]:

Այն հաճախ համեմատվում է հայ. շերտ-ել «շերտերի բաժանել,
 քերթել» բայի հետ՝ ելնելով բառիս «առանձնացնել» իմաստից: Այդ
 դեպքում արմատը պետք է լինի šerէ-ը, որը ոչ մի կապ չունի šere
 «առանձնացնել» բառի հետ: Եվ, ընդհանրապես, «շերտել» իմաստը

183 Ըստ Գ.Ղափանցյանի՝ šeri «ավելցուկ», šer «թարձր», որը մա համեմատում է
 հայ. սար բառի հետ [1940, էջ 39]:

նորից ես վերցրի» ձևից՝ «քաղաքը ես վերաբնակեցրի» փոխաբերական իմաստով. տե՛ս
 1963, էջ 53: Այդ դեպքում ինչպե՛ս բացատրել «URU^{MES} išti=ne šat-u=le» արտա-
 հայտությունը:

180 Միզուցե ուրարտ. šat-ը պետք է համեմատել հայ. ստ-ան-ամ բայի հետ, որը
 ունի երկու հիմնական իմաստ, 1. «նորոգել, կանգնեցնել, ստեղծել», 2. «ստանալ, ձեռք
 քերել և այլն»:

181 Տե՛ս Գ.Меликшивили, 1960(УКН), արձ. 448, տող 4 (կից թարգմանությունը):

182 Տե՛ս Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 463:

այնքան էլ հարմար չէ, հատկապես (137)-ում: Բացի այդ, ուրարտ. չե-ն այլուստ համապատասխանում է հայ. ս(ե)-ին, այլ ոչ թե շ(ե)-ին (տե՛ս հավելված II): Ինչ վերաբերում չerhini-ին (տե՛ս վերը), ապա այդպիսի բառ ուրարտերենում չկա (տե՛ս V.3 կետ 4):

57. [sor=isx] (^Éšur=išhe) (*) «ախոռ, ձիանոց»¹⁸⁴ - հայ. սոր-ա-կալ «ախոռապետ»: Հ.Աճառյանը հայ. սոր արմատը քիսեցնում է իրան. stor «ձի» բառից, որը պետք է տար ստոր, համարելով, որ տ-ն գրիչների կողմից բաց է թողնվել սխալմամբ: Գ.Ջահուկյանը այն տեղադրում է իրանական կասկածելի ծագում ունեցող բառերի ցանկում¹⁸⁵: [-isx] հայ. -իսիս վերջնածանցի համար տե՛ս IV.3 կետ 2: Սակայն Ֆ.Քյոնիգը [1955 (Hch I), 40 B] ^Éšur=išhe (վանկազիր ^Éšur-iš-ի/e)-ի փոխարեն կարդում է ú-ri-i[š]-ի: Նույն է պնդում նաև Մ.Սալվինին [SMEA 43/2, 2001, էջ 252]:

58. [suri] (^{GIS}šuri) «սուր»¹⁸⁶ - հայ. սուր, -ոյ: Համարժեք է շումեր. GIS-ին և ասուր. BE.LI-ին «զենք»: Սովորաբար քարգմանվում է «զենք» իմաստով: Սակայն անշուշտ համապատասխանում է հայ. սուր-ին՝ «սուր» իմաստով, ինչը վերահաստատվում է Այանիսից վերջերս հայտնաբերված մի նոր արձանագրությամբ: Այն գրված է բրոնզե սրի¹⁸⁷ քոնակին և պարունակում է հետևյալ տեքստը՝ ⁴hal-di-e EN-ŠÚ i-ni šu-ri ^mRu-sa-še ^mAr-giš-te, ⁴hi-né-še za-du-né uš-tú-ú-né ul-gu-ši-ia-né e-di-né «Խալդի-ին՝ տիրոջը-յուր այս սուրը Ռուսա-ն՝ Արգիշտի-ի որդին սարքեց, ընծայեց (յուր) կյանքի համար» [Ayaniš I, AyBr 12]:

¹⁸⁴ Թարգմանությունը ըստ Բ.Պիտրովսկու [1955, էջ 43], որը կրկնում է Ն.Հարությունյանը [2001(КУКН), էջ 466]. Ի.Գյակոնովը առաջարկում է «զինանոց(»)» կապելով այն šuri «զենք» բառի հետ [1963, էջ 91]:

¹⁸⁵ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, 4 էջ 247; Գ.Ջահուկյան, 1987, էջ 510:

¹⁸⁶ Հայերեն մեկնությունը Գ.Ղափանցյանի [Г.Капанян, О концептуально-идеологической стороне некоторых урартских слов и выражений, АрОр, XVII, համար 1, 1949, էջ 371]. տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 149. Н.Арутюнян, 2001 (КУКН), էջ 465 և այլն:

¹⁸⁷ Թեև արձանագրության հրատարակիչ Մ.Սալվինին համառոտն այն ուզում է ներկայացնել որպես «տեգ, միզակ», սակայն լուսանկարից ակնհայտորեն երևում է, որ դա «սուր» է: Պատահական չէ, որ վերջինիս համահեղինակ հնագետ Ա.Չիլինգիրոսից լի կիսում այդ տեսակետը՝ ^{GIS}šuri-ն աներկբայորեն համարելով «սուր» ("sword") [տե՛ս Ayaniš I, էջ 157-158]:

59. [s(u)k=ol] (šuk=ure) - հայ.՝ (h)սկ-եմ «հսկել, տքնել, ուշադիր լինել»¹⁸⁸, (h)սկ-ող «հսկող» և այլն: Գ.Մելիքիշվիլին կասկածանքով քարգմանում է «կանչված(*), կոչված(*)» (призванный (*), вызванный (*)) [1960 (УКН), էջ 407], որը կրկնում է Ն.Հարությունյանը [2001(КУКН), էջ 465]: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(138) i-e-še ^{L0}A.SI^{MES} ni-ku-li u-i-e a-i-ne-i ^{L0}EN.NAM^{MES} šu-ku-ri ma-nu-ri - «ես գորքին ջուր տվեցի(*) ոչ որ կառավարիչներից չէր կանչվեցի(*)» (призван (*) не был)» [КУКН 244₁₅₋₁₆]:

(139) i-ku-ka-ni (ճիշտ ձևն է՝ i-šù-ka-ni) MU šì-iš-ti-ni uš-ta-di ^{KUR}U-i-či-ru-hi-e-di III ^{L0}EN.NAM^{MES} šu-ku-ri ma-nu-li III-a e-sa uš-ti-ip-te za-du-bi «նույն տարի երրորդ(*) անգամ ուղևորվեցի Ուխտիբուխի, երեք կառավարիչներ կանչվեցին(*)», երեք տեղում էլ արշավեցի» [КУКН 241 D₁₉₋₂₃]:

Փաստորեն մասնագիտական գրականությունում կապ չի նկատվում սույն բառի վերջավորության և Վանի արձանագրություններում վկայված -ure/-aure (տե՛ս VI.3 կետ 2) դերբայական ածանցի միջև: Սակայն մեզ թվում է, որ իրականում մենք այստեղ գործ ունենք հիշյալ -ure/-aure (հայ. -ող/-աղ) մասնիկի հետ: Ըստ այսմ, առաջարկում ենք šuk=ure-ն քարգմանել «(h)սկող»՝ այն համարելով դերբայ: Այսպիսով վերոնշյալ արտահայտությունները համապատասխանաբար կարելի է քարգմանել.

- «ես գորք nikule (բայ) (չկար) ոչ մի հսկ-ող կառավարիչ (այստեղ) մնացող»:

- «այս նույն տարի šiištine արշավեցի դեպի Ուխտիբուխի, երեք հսկ-ող կառավարիչներ մնացին/թողնվեցին (*) (այնտեղ), երեք տեղում էլ արշավեցի»¹⁸⁹:

¹⁸⁸ ՆԲՀԼ-ն մեկնում է «տքնել, արթուն կալ, ուշ անել» [II, էջ 719]:

¹⁸⁹ Տառացի ընթերցմամբ կունենանք՝ «յես ^{L0}A.SI^{MES} (գորքեր) nik=ule ոյ(չ) այլտ ^{L0}EN.NAM^{MES} (կառավարիչներ) (h)սկող մող», «ի-սոկա-ն MU (տարի) šiištine (չեշտակի/սաստիկ (*)) ոստա=di(=) Ուխտիբուխե-(ե)ղ III ^{L0}EN.NAM^{MES} (3 կառավարիչներ) (h)սկող մՍ-ու-լե III-a es=a (երեք տեղերում) ոստ-իւթ գտու(լ) (կամ զատու(լ))»: Երկու արտահայտություններն էլ, ժամանակի ընթացքում կրած որոշ հնչյունական և քերականական փոփոխություններով հանդերձ, գրեթե ամբողջությամբ

60. [tira] (tira) «հզոր, շատ, մեծ և այլն» - հայ. տիր «հոյժ, շատ, խիստ, պինդ, բոլորովին, ամենա»: Կելիշինի երկկեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր. ma`du-ին՝ «բազում» իմաստով, իսկ որոշ արձանագրություններում հերթագայում է DAN.NU-ին «հզոր» իմաստով: Այս բառը մասնագետների կողմից սովորաբար կարդացվում է tar-a ձևով, պետք է կարդալ tır-a՝ կապելով հայ. տիր-ի հետ¹⁹⁰:

61. [toł-] (tur-) - հայ. թող-ում, թող-ուց-ուց-ան-եմ «թողել, նետել, ձգել, արձակել», «զիջել, շնորհել, լքել, թուլացնել, ի վայր կամ ի բաց դնել և այլն»: Վկայված է (122)-ում և հետևյալ տեսքի արտահայտություններում.

(140) tur=i=ni=ne ^Dhaldi=še (^DTešeba=še) (^DUTU-še) (DINGIR^{MEŠ}-še) - «թող ոչնչացնեն՝ Խալդին, (Թեյշեբան, Շիվինին,) աստվածները» [...].

(141) alu=še ... ti=u=li=e uli ture - «ով... կասի՝ գնա ոչնչացրու» [...].

Կելիշինի երկկեզվյա արձանագրությունում ture-ին համապատասխանում է ասուրական քեր-ն՝ «ջարդել, ոչնչացնել» իմաստով: Մակայն այդ դեպքում անհասկանալի է մնում (122)-ն, որը սովորաբար թարգմանվում է «երկրի (կայսրության) համար ոչնչացրի X մարտակառք, X ձի, X զինվոր ... գործի համար ոչնչացրի ... քափեցի (հսճ=-ube), X մարդ, X ձի, X պղինձ, X սարուկ ^{L6}ur=urd=ane-ի (թերևս «ղարբին, զինագործ») համար ոչնչացրի»: Պարզ չէ, թե ինչու պետք է արքան գահ բարձրանալիս մարտակառքեր, մարդիկ, ձիեր, պղինձ և այլ մմանատիպ բաներ ոչնչացնի երկրի, գործի կամ զինագործների համար: Ըստ երևույթին, խոսքը ոչ թե ոչնչացնելու, այլ թողնելու, բաշխելու, շնորհելու մասին է: Տե՛ս նաև նույն տեղում հանդիպող հսճ=u=be բայը՝ մմանատիպ իմաստով: Այդ դեպքում մյուս արձանագրություններում հանդիպող «ջարդել» իմաստը պետք է բացատրել այլ կերպ կամ ընդունել, որ գործ ունենք երկու տարբեր բառերի հետ: Միգուցե (140)-(141)-ում tur--ն պետք է թարգմանել «զցել, ձգել», «թուլացնել» ի վայր կամ ի բաց դնել՝ հայ. զուգահեռին համապատասխան:

62. [tu-, zə=t(u)-, ta- (*)] (tu-, za=t(u)-, ta=še (*)) «անել, կատարել, տալ» - հայ. տա-մ, տու(-ր), ե-տ < *dō, *dā, *d «տալ, ընծայել, հարվածել, կրել, անել (հատկապես բառակապակցություններում, օրինակ՝ թույլ տալ, գույժ տալ, պատերազմ տալ, հրաման տալ, մաս տալ և այլն) և այլն» (հայերենում մեծապես տարածված արմատ է)¹⁹¹: Մասնագետները հենց այս արմատն են առանձնացնում բազմաթիվ բայերում հանդիպող և լայն տարածում գտած -t-(-d-) բայածանցի մեջ, օրինակ aweli=t=u-, laqu=t=u-, suui=t=u-, zani=t=a- և այլն, որոնք հիշեցնում են հայ. «հույ տալ», «ման տալ», «վերջ տալ» և այլ մմանատիպ ձևերը: Մակայն մյուս կողմից այս -t-ով բայածանցի մեջ հնարավոր է տեսնել հայերենի -տ-, -ատ-, -ոտ- բազմապատկական ածանցները (մանրամասն այս մասին տե՛ս IV.4 կետ 1)¹⁹²:

62.1 [tu-] «անել, կատարել» - հայ. տու, ե-տ, տա-մ, «տալ, անել և այլն»:

62.2 [zə=t(u)] (za=t(u)) «անել, կատարել»: Նույն է նախորդի հետ՝ կազմված [z(ə)-] - հայ. զ- նախածանցի հավելումով (տե՛ս IV.3 կետ 1):

62.3 [ta=s] (ta=še) «նվեր (*)» - հմմտ. հայ. տա-լի, տու-ր(ք) «ընծա, պարգև, տուրք և այլն»¹⁹³: Վկայված է մեկ անգամ, խիստ վնասված ali bidi aštanulabi ali taše amani bidi... «(չի քարգմանվում)» [KYKH 1936] արտահայտությունում: Իմաստը որոշվում է լոկ խոռ. taše «նվեր, ընծա» բառի հիման վրա: Թեև բառը տեղ է գտել հայ-ուրարտական զուգահեռ բառերի մեր ցանկում, այնուամենայնիվ խիստ կասկածելի է այն ստուգաբանել միայն ենթադրվող զուգահեռ ձևի հիման վրա (լինի դա հայերեն, թե՛ խոտիերեն)՝ առանց հասկանալու արտահայտության ընդհանուր իմաստը, որտեղ այն վկայված է:

63. [wə=t-] (wal=t-) «հաղթել, հաղթահարել և այլն» - հայ. գալ-ար-եմ < *uəl- «զլորել, ոլորել», գլ-եմ, գլ-եց-ուց-ան-ել < *uəl- «զլորել, հաղթել, հաղթահարել (նաև վեճի մեջ՝ խոսքով), գերազանցել, գորել, առավելել, իշխել, շրջել, տապալել, կործանել և այլն», գել-ում < *uel- «տլորել, ճնշել, ճզմել», գիլ «քար» < *uel և այլն: Թոփուզավայի երկկեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուրական al ti`-š-u-ին, որի վերաբերյալ մասնագետների շրջանում կա տարածայնություն: Գ.Մելիքիշվիլին այն բխեցնում է še`u-ից՝ «փնտրել, հայթայթել և այլն»

¹⁹¹ Հայերեն մեկնաբանության համար տե՛ս Հ.Մանդալյան, 1900, էջ 351:
¹⁹² Տե՛ս նաև Վ.Մարգարյան, 1998, էջ 120-140:
¹⁹³ Այս մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 166:

հնչում են միանգամայն հասկանալի հայերենով:
¹⁹⁰ Tar նշանը այստեղ պետք է կարդալ tır տարբերակով (տե՛ս Л.Топин, 1964, էջ 137, նշան № 12):

իմաստով¹⁹⁴, Ի.Դ-յակոնովը՝ le`u-ից «հաղթել, հաղթահարել (մահ դատական վեճում) և այլն»¹⁹⁵, որը ընդունում է մահ Ն.Հարությունյանը¹⁹⁶: Այստեղ գերապատվությունը տրվում է երկրորդ վարկածին՝ կապելով այն հայ. գլ-եմ բայի հետ: Վանի արձանագրություններում վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (142) ^{URU/KUR}X/LUGÁL ^{URU}X wald=u=be meši=ne pei - «(X-քաղաքները/երկրները/քաղաքներին X-քաղաքի) հաղթահարեցի՝ հարկի տակ (լինելու պայմանով)» [KYKH 47₁₃, 53₁₅, 56₁₆, ...].
- (143) ^{URU}X andani wald=u=be - «... հետո(“) X-քաղաքը հաղթահարեցի (“)» [KYKH 174B₂₆, 173 I_{8,11} ...].
- (144) ^{URU}X an-da-ni `a-al-du-ni ^{URU}X ^{URU}X ^{URU}X - «X-քաղաքը andani `alduni, մահ X-քաղաքը, X-քաղաքը...» [KYKH 77₁₀].
- (145) ^IX-še ^{LÚ}ZÁ. [DIM.MA?] ^{NA4}pu-lu-si-ni-[li ?] `a-al-di-tú-ú-[li?] - «.. (և) ^IX-ը՝ քարտաշը(“), սահմանաքարերը թող հաղթահարեն(“))» [KYKH 428₁₂].
- (146) ^{ID}Hal-di-ERUM-a-ni ^IX `a-al-du-ú-lu-li «» [KYKH 520_{п.с.6}].
- (147) ti-e ^IX ^{LÚ}NA₄.DIB ^IX ^{LÚ}É.GAL ba-u-še `a-al-du LUGAL-li... - «ասա ^IX-ին՝ կնիք պահողին, (որ) ^IX-ի՝ ամրոցի մարդու (վերաբերյալ) հրաման եկավ LUGAL-li» [DB 5 ст. 142 (Bal)/KYKH 393₁₋₅]:

Թոփուզավայի արձանագրության դրվագը բերված չէ, քանիզի համապատասխան տեղը վնասված է, և նախադասությունը անընթեռնելի է: Հայերեն գլ-եմ բայի հիմնական իմաստն է «զորել, շրջել», իսկ արմատի գալ- տարբերակի դեպքում՝ «ծռել, ոլորել և այլն»: Հայերեն բառի «շրջել, տապալել, կործանել» իմաստը հնարավորություն է տալիս հասկանալու ուրարտ. տեքստերի այն հատվածները, որտեղ «հաղթել, հաղթահարել» իմաստը հարմար չէ: Օրինակ (142)-ը թարգմանվում է «... գցեցի (բառացի՝ զորեցի) հարկի տակ»: Ուշագրավ է մահ, որ հայերենը ունի մահ վեճում հաղթելու, գերազանցելու իմաստը, ինչպես

որ ուրարտերենում (տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, I, էջ 530, 555; ՆԲՀԼ, Ա, էջ 559): Ուրարտ. տեքստերում վկայված [wəl=ʔ=(or)-] բայաձևը փաստորեն ամբողջովին համընկնում է հայ. բրբռ./խոսակցական գլ-տոր-ել բային:

64. [wəl] (^Éware) «ամբար, պահեստ» - հայ. գաղ-տ(սի) < *uəl-d «քարուն, ծածուկ», գաղ-եմ < *uəl- «ծածկել, քարցնել» և այլն: Վանի արձանագրություններում վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (148) i-ni `a-(a)-ri-(e) (^É)šú=(u/ú)=ni-(e) X ka-pi-(e) iš-ti-(i)-ni - «այն ամբարը կառուցեց X կապիճ կար այստեղ» [KYKH 207₃, 182₄, 266₃...].
- (149) e-`a i-ni-li (^É)`a-ri-li šú-`a-li - «... և այն ամբարները կառուցեց» [KYKH 265₆₋₇, 278₆₋₇]:

Առաջարկվող ստուգաբանությանը (^Éware-ն թերևս պետք է նշանակի «քարստոց, պահեստ, ծածկած տեղ»:

65. [p(i)t-] (pit-) «ջարդել, փշրել» - հայ. փթ-ուր, փթ-ր-ել «փշրել, մանրել և այլն»¹⁹⁷: Թոփուզավայի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր. nabālu-ին «ջարդել, փշրել» իմաստով: Հայերենում ունենք մահ՝ փթուար, փթուղ, փթուբ, փթել ձևերը: Սրանց արմատը պետք է լինի *փիթ-ը կամ *փուլթ-ը: Եթե ճիշտ է վերջինիս նույնացումն ուրարտ. pit-ի հետ, ապա հավանաբար՝ *փիթ-ը:

66. [por=oc] (^{NA4})pul=use «վիճափոր արձանագրություն»: Կազմված է [por-] - հայ. փոր < *pho-ro քառարմատից և [-oc] - հայ. -ոց ածանցից (այս ածանցի մասին տե՛ս IV.3 կետ 2): Վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (150) ...ini (^{NA4})pul=use ku(i)g=u=ne/kuit=u=(ne) - «այն արձանագրությունը կանգնեցր-եց/եցին» [KYKH ...].
- (151) a-lu-še i-ni ^{NA4}pu-[lu-si]-ni su-ú-i-du-li-e - «ով որ այն արձանագրությունը շարտի» [KYKH 242 AI+ AII₁₅].
- (152) ... e-`a ^dHal-di-na-a K[Á] e-`a pu-lu-si-ni-ka-i ... [p]u-ú-lu-si-ni-ka-i - «... և Խալոյան դռներում, և

¹⁹⁴ Տե՛ս Գ.Меликишвили, (1960)УКН, էջ 387:

¹⁹⁵ Տե՛ս И.Дьяконов, ДВ 5, 1988, էջ 144:

¹⁹⁶ Տե՛ս Н.Арутюнян, 2001(УКН), էջ 439:

¹⁹⁷ Գ.Ջահուկյանը [1988, էջ 143] համեմատում է հայ. բրբռ. պտլ-իլ «փշացնել, ավերել» բայի հետ:

արձանագրության առաջ արձանագրության առաջ» [KYKH 8229,36] :

Հմնտ. փոր-եմ «փոսացնել, փորագրել, փորել», փոր-ա-գրություն, վիմ-ա-փոր/վիմ-ա-գիր (արձանագրություն) և այլ ձևերը («գրել» հմնտ նշանակել է քերծել, փորել): Ըստ այդմ, [^{NA}por=oc] բառացի կարող էր նշանակել «քարագիր, փորագրված քար», հմնտ. pul=use alzenei [YKH 301] - «վիմափոր արձանագրություն» արտահայտությունը, որը հայերենում գրեթե նույնությամբ գործածվում է ցայսօր՝ «վիմ(=NA₄)-ա-փոր արձան(=alzena/ei)-ա-գրություն» բառակապակցությունում: Գ.Ջահուկյանը ուրարտ. puluse-ն համեմատում է հայ. փողոց «փողոց, անցք» բառի հետ՝ նմանությունը համարելով պատահական [1987, էջ 436]: Մեզ այն նույնպես քիչ հավանական է թվում՝ իմաստի առումով: Ճիշտ ստուգարանությունը տալիս է Սամեդալյանը [1900, էջ 408]:

67. [paɣʰsan] (paršane) - հայ. փայծաղն, -ան < *փայղծան < *phəɬg'-niā (տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, IV, էջ 477) «փայծաղ»: Ն.Հարությունյանը մեկնում է «զոհաբերվող կենդանու ինչ-որ մի ներքին օրգան» [1962, էջ 32]: Ավելի ուշ հետևում է Ի.Դյակոնովին՝ կասկածանքով քարգմանելով «туша(°)» (տե՛ս Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 440): Հնում զոհաբերվող կենդանու որոշ ներքին օրգաներ, այդ թվում՝ փայծաղը, լայնորեն օգտագործվել են զանազան զուշակությունների համար:

68. [qɑɬ-] (qar-) - հայ. քաղ-եմ < *kəɬ «քաղել, պոկել, խլել, հանել, հնձել և այլն»: Սովորաբար քարգմանվում է «նվաճել, հաղթել, ենթարկել»: Վկայված է հետևյալ բնույթի արտահայտություններում.

(153) ^Dhaldi=ne ušt=a=be masi=ne ^{GI5}šuri kar=u=ne (... ^{KUR}ebani/URU/LUGÁL/^{LÚ}A.SI^{ME5}) - «Խալդին արշավեց իր սրով նվաճեց/ենթարկեց (այսինչ) երկիրը/քաղաքը/արքային/գորքը ...» [KYKH ...].

(154) LUGÁL ^{KUR}ú-e-li-ku-ḫi ka-ru-bi ERUM áš-tú-bi... - «X-ի արքային ենթարկեցի, ստրուկ դարձրի» [KYKH 3882-3]:

Հայ. քաղ- բայարմատի «հաղթել» իմաստի համար հմնտ. հայ. վիշապ-ա-քաղ (վիշապներից հաղթող) ձևի հետ: Գ.Ջահուկյանը ուրարտ. kar--ն համեմատում է հայ. կարախ «քաջ», կարախ-ել «քաջաճալ, զորանալ» բառերի հետ՝ նմանությունը համարելով պատահական [1987, էջ 435]: Վ.Սարգսյան համեմատում է հայ. կար-ել, կար-ող և այլն ձևերի և բասկ. karri/garri «կարող, ունակ» բառի հետ [1998, էջ 115]:

69. [qar=w] (qar=be) «ծայռ, քար» - հայ. քար, -ի < *kar «քար, ժայռ»¹⁹⁶: Բառավերջում առկա հավելյալ [-w]-ի համար հմնտ. zel(i)=be [ceɬ=w] «ցեղ, տոհմ» - հայ. ցեղ, -ի, թեքև նաև n=ir=w=be [n=ir=w] «իր, կահ» - հայ. իր, ի-ա (°):

70. [s-] (i=ša=(ḫi)ne, i=šu=ka=(ḫi)ne, a(i)še, i=šer=ḫine) «այս», «այս նույն», «այստեղի», «այս նույն» և այլն - հայ. սա, սո-յև, այս, այսր(էս): Բոլորի հիմքը u- < *k'o, *k'e «այս» դերանվանական հիմնային մասնիկն է (մանրամասն սրանց մասին տե՛ս V.3 կետ 3):

71. [n-] (i=na=(ḫi)ne, i=nu=ka=(ḫi)ne, a(i)ne, i=ner=ḫine, i=nu=se) «այն», «(այն) նույն», «այնտեղի», «(այն) նույն» և այլն - հայ. նա, նո-յև, այև, այևր(էս): Բոլորի հիմքը u- < *no «այն, այնտեղ» դերանվանական հիմնային մասնիկն է (մանրամասն սրանց մասին տե՛ս V.3 կետ 3):

72. [in(i)-] (ini/e) «ներձավոր առարկաների դերանուն/հոր» - հայ. -և < *no «ներձավոր առարկաների/որոշյալ հոր»: Ըստ երևույթին, ծագում մախող ցուցական դերանունից (տե՛ս նաև V.3 կետ 3):

73. [i/estʰi] (i/ešti) «այստեղ» - հայ. - աստ(և), աստի «այստեղ, այս պահին/վիճակին և այլն» (մանրամասն տե՛ս V.3 կետ 4):

74. [edi] (edi) «այդտեղ»¹⁹⁹ - հայ. - այդի/այտի «այդտեղ, այդ պահին և այլն» (մանրամասն տե՛ս V.3 կետ 4):

III.2.4 ԿԱՄԿԱԾԵԼԻ ԶՈՒԳԱՀԵՌ ԲԱՌԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորև ներկայացվում են հայ-ուրարտական կասկածելի զուգահեռ բառերի բառացանկում բերված որոշ բառ(արմատն)երի մեկնաբանությունները:

1. [ama=n(i)] (ama=ni/e) «աման(°)» - հայ. աման «աման»: Նման քարգմանությունը և համեմատումը հայ. աման բառի հետ՝ Հ.Սան-

¹⁹⁶ Տե՛ս H.Mapp, 3BO, 25 (1921), էջ 18: Գ.Ջահուկյանը հնարավոր համարելով zel(i)be «ցեղ, տոհմ» - հայ. ցեղ զուգորդումը [1988, էջ 150]՝ միևնույն ժամանակ qarbe-ն համեմատում է հայ. Կարբի տեղանվան հետ [1988, էջ 147], թեև երկուսն էլ ուրարտերենում ունեն միևնույն հավելյալ մասնիկը: Վ.Սարգսյան նույնպես այն համեմատում է հայ. Կարբի տեղանվան հետ՝ համարելով նաև բասկ. kar-be «քարի տակ» ձևի հետ [1998, էջ 115]:

¹⁹⁹ Ուրարտ. išti=di/ne - հայ. աստ(և) համապատասխանության համար տե՛ս Հ.Սամեդալյան, 1900, էջ 384:

դալջյանի [1900, էջ 327]: Նույն է պնդում նաև Ն.Հարությունյանը [2001 (KYKH), էջ 434]:

2. [aɛx] (arɛe): Ի.Դյակոնովը կասկածանքով առաջարկում է «ճանապարհ, ճակատագիր, հաջողություն» [ԸԲ, 5, էջ 160 և այլն], Ֆ.Քյոնիգը «կյանք» [1955, էջ 174] թարգմանությունը: Վկայված է անեծքի բանաձևերում՝

(155) me-i ar-ɛi/é(-e) ú-ru-li-a-ni(-e) me-i i-na-i-ni(-e) me-i (^{L0})na-a-ra-a a-ú-i-e ú-lu-li(-e) - «» [...]

կաղապարային, ինչպես նաև

(156) me-i ar-ɛi-e ú-ru-li-a-ni ^{ԳՄՄ}ni-ka-a-i-«»²⁰⁰
[KYKH 392₁₄]

արտահայտություններում, որոնք մասնագիտական գրականությունում, որպես կանոն, չեն թարգմանվում: Եթե նկատի ունենանք, որ անեծքի բանաձևերի՝ կից հատվածներում խոսվում է «ցեղ»-ի (zelbe - հայ. ցեղ), «զարմ»-ի (armu=zi - հայ. զարմ, -ոյ) և ^{L0}nara-ի «մարդու/մարդկանց ինչ-որ տեսակ/խումբ» մասին, ապա բացառված չէ, որ arɛe-ի տակ պետք է տեսնել հայ. աղիս բառը՝ «սերունդ, ցեղ, զարմ» իմաստով: (156)-ի հնարավոր թարգմանության համար տե՛ս IX.1 արձ. քիվ. 1:

3. [aw-] (ab-) (*) «կամենալ(*), ցանկանալ(*))» - հայ. հ-աւ < *au «հավանել, հավատալ, հաճենալ, ջանալ և այլն» - բասկ. opa-tu «ցանկանալ» (համեմատումը ըստ Վ.Սարգսյանի [1998, էջ 114]): Վկայված է հետևյալ կաղապարային արտահայտությունում.

(157) ɛuti=a=di ^Dɛaldi=e=di EN-di ^DIM-di ^DUTU-di
(DINGIR-aš=te ^{KOR}Bian=aš=te) alusi=ni=ne al-sui=ši=ne ali abadi - «աղոթեցի (*) Խաղիիին՝ տիրոջը ... տիրունական մեծությամբ, որ ցանկանում (*) էի [անել]»:

Ն.Հարությունյանը հետևելով Գ.Ղափանցյանին՝ ... ali aba=di հատվածը (տե՛ս (157)-ը) կարդում է միասին՝ aliaba=di տեսքով՝ բացատրելով նման բառի զոյությունն իսկ [2001(KYKH), էջ 433]:

4. [bura] (bura=ne (զ.), bura=šɛ- (բ.)) «սարուկ, ծառա», «սարկացնել, ծառա դարձնել» - խոտ. b/purame «ծառա» [I.Diakonoff, 1971, էջ 62, 77 և այլն]: Մյուս կողմից, հմնտ. նաև հայ. բուռն, -ան «բուռ», որից ունենք բռն-ան-ամ, բռն-ավոր և այլն:

5. [dɔn=aʃ] (dan=aʃe) «մոմակալ»²⁰¹ - հայ. *ղև-ած «հեճակալ (*)»: Վկայված է մեկ անգամ՝ պեղումներից հայտնաբերված մոմակալի ստորին մասում: Հավանաբար կազմված է ուրարտ. dan- - հայ. ղև-եմ «ղնել» < *dhē-ne բայից՝ -ած < *ag՝ մասնիկով: Այդ դեպքում բառի ուղիղ նշանակությունը պետք է լինի «հեճակալ (*), դրոց (*)»:

6. [ejo] (egu) «աջ(*)» - հայ. աջ-ոյ < *sədhio «աջ» (ըստ Հ.Կարապետյանի²⁰²): Վկայված է հետևյալ արտահայտությունում.

(158) a-lu-še ɛa-lu-li e-[g]u-di GÜB-di a-tu-li-i-e
- «ով կերակուրը(*) աջից, ձախից կուտի» [KYKH 122₃].

(159) a-lu-še e-g<u-di GÜB-di ɛa-lu-li a-tu-li-e?>
- «ով աջից, ձախից կերակուրը (*) կուտի» [KYKH 598₃].

(160) ... ɛa-lu-li ú-i-la(-)ti-ni a-lu-še e-gu-di na-di a-tú-li-e [Ay-susi V₁₀ (Ayanis I)]:

Գ.Մելիքաշվիլին «...ɛaluli egu-di...»-ը ընթերցում է «ɛalulie gu-di...»²⁰³: Ավելի ուշ՝ Ն.Հարությունյանը «e-gu-di na-di/GÜB-di»-ի փոխարեն (158)-(160), (266)-ում ընթերցում է «e-gu-di (-)ba-di»²⁰⁴, ինչը կասկածի տակ է դնում համադրումը հայ. բառի հետ:

7. [eɛ- (*)] (er- (*)) «եղեռն (*), կոտորած (*)» - հայ. եղեռն, սեռ. եղեռան < *el₅ «աղետ, փորձանք, ոճիր, շարիք և այլն»: Կարծես թե վկայված է Թոփուզավայի երկրեզվյա արձանագրությունում, որտեղ ere-li/e zašgube-ին (Ն.Հարությունյան կարդում է «...]rieda zašgubi [KYKH 387₁₈]) համապատասխանում է ասոր. [di]ik-tu aduka «կոտորած կազմակերպեցի» արտահայտությանը: Erelie/e-ն սովորաբար չի թարգմանվում, քանի որ zašg-u=be բային տրվում է բոլորովին այլ իմաստ՝ «կոտորեցի, սպանեցի», քան պահանջում է ասորական տարբերակը²⁰⁵: Ըստ երևույթին, erele/e zašgube-ն պետք է ընթերցել

²⁰¹ Գ.Վիլեյնը թարգմանում է «լամփ». տե՛ս ԸԲ, 5, 1985, էջ 97:

²⁰² Տե՛ս ԼՀԳ, 1978, № 10, էջ 71:

²⁰³ Տե՛ս YKH, էջ 395. YKH, արձ. 96:

²⁰⁴ Մերձ., XXIII, 2004, էջ 376-380:

²⁰⁵ Տե՛ս YKH, արձ. 264 տող 18:

²⁰⁰ Ի.Դյակոնովը առաջարկում է «пусть не сделаться ему пути перед Солнцем» ենթադրական թարգմանությունը [ԸԲ, 5, 1985, էջ 153], ինչը մեզ խիստ կասկածելի է քվում:

«աղետալի կոտորեցի»՝ մեկնաբանելով erele-ն (ըստ Ն.Հարությունյանի [] rieda-ն, հմմտ. հայ. աղետ «աղետ») իբրև մակբայ:

8. [kamn=ax] (kamn=ahe) «կանուխ(»), նախկինում(»), առաջուց(») - հայ. կա(ն)ուխ «կանուխ, ժամանակից առաջ, նախկինում, վաղ»: Անհասկանալի է մնում հավելյալ ու-ի առկայությունը ուրարտական բառում: Ուշագրավ է, որ հայերենում առկա է մահ կանևուխ տարբերակը՝ կրկնակի ն-ով: Սակայն այս դեպքում էլ անհասկանալի է մնում *ՄՆ > ՆՆ անցումը:

9. [y=ar=an(i)] (i=ar=ani/e): Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր. parakku-ին՝ «սրբավայր կամ ցեղա» (հին բաբելոնեերենում), «պաշտամունքային պատվանդան» (ուշ շրջանում) իմաստով (տե՛ս Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 94, 118 ծան. 17): Իսկ Թոփուրավայի արձանագրությունում՝ massakku-ին՝ «Աստծո քնակավայր» իմաստով [AHw-II, էջ 619]: Թերևս սրա մեջ հնարավոր է տեսնել հայ. *յ-ար-ան հնարավոր բառաձևը՝ կազմված յ-ար «կից, մոտ» հիմքից՝ -ան ածանցով: Այս *յ-ար-ան-ի համար կարելի է ենթադրել «հարակից կառույց» իմաստը: Ուրարտ. -ani/e - հայ -ան ածանցի համար տե՛ս IV.3 կետ 2:

10. [yo] (iu, iu=me) «որ, երբ, ինչպես» - հայ. ո < *k^hu-(ro) «հարցական-հարաբերական դերանուն», որից ունենք՝ յո «ուր, որտեղ», *ու (ու-կամ, ու-պետ), ո-ր «որ, եթե, ով որ և այլն», ու-ր «ուր, որտեղ» մահ «ինչու, ինչպես» և այլ ձևերը: Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում iu-ն համապատասխանում է ասուրական ki-ին՝ «ինչպես, երբ և այլն» նշանակությամբ: Հայ. ո դերանունը առանց ո մասնիկի ունի միայն անձի (ո՞վ) կամ տեղի (յո՞) իմաստ: Հնարավոր է մահ iu-ի կապը *յօ «որ» հնդեվրոպական հարաբերական դերանվան հետ, որը հայերենում չի պահպանվել՝ փոխարինվելով հարցական ո՞ր դերանունով (վերջինս հայերենում պիտի տար *ջո < *յօ)²⁰⁶:

11. [n=ir=w (")] (n=ir=be (")) «իր, առարկա, կահ» - հայ. իր, ի-ա < *k^hi-ro «իր, կահ»: Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուրական BI.BU-ին, որը մասնագետները քարգմանում են «անասուն(»), տավար(»)»։ Ի.Դ-յակոնովը BI.BU-ն կարդում է՝

²⁰⁶ Նման համեմատման համար որոշակի կասկած է առաջացնում այն փաստը, որ այն ուրարտ. տեքստերում վկայված է միայն iu տեսքով: Մինչդեռ եթե իրաք ուրարտեերենում առկա է հայ. *յ > ջ անցման վկայությունը՝ i/ց հերթագայության տեսքով, ապա ուշ շրջանի արձանագրություններում պետք է լիներ ցս՝ iu-ի փոխարեն:

KAS.PU՝ «հարստություն, ունեցվածք, իր և այլն» իմաստով [ДВ, 5, էջ 169-170]: Այդ դեպքում, թերևս, կազմված է հայ. իր «իր» բառարմատից՝ ուրարտ. ո (i) - - հայ. ն(ի)- նախածանցով (տե՛ս IV.3 կետ 1): -Be [-w] հավելյալ մասնիկի համար հմմտ. qar=be [qar=w] - հայ. քար, -ի, zel=be [ceł=w] - հայ. ցեղ, -ի:

12. [xu-] (hu-) - հայ. խու-եմ, «հարձակվել, հարստահարել, վրան վազել, եղջրել»²⁰⁷: Գ.Մելիքիշվիլին քարգմանում է «փախցնել(»), տանել(»), Ն.Հարությունյանը՝ «ջարդել(»), ոչնչացնել(»)»²⁰⁸: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

- (161) [a]-lu-[še i]-ni [D]UB-te pi-i-tú-li-e [a]-lu-še hu-li-i-e ... - «ով որ այս գիրը փչացնի, ով որ փախցնի...» [КУКН 31_{о.с.22-23}].
- (162) a-lu-še pa-ḫa-n[i-li] iš-ti-ni-ni ši-ú-li-a-li a-lu-š[e hu-l]i-a-li ... - «ով որ անասուններին այստեղից հեռացնի, ով որ փախցնի...» [КУКН 80₇₋₈]:

(162)-ը կասկածելի է, քանի որ, hu- բայը վնասված է և վերականգնվում է ենթադրաբար: Մինչդեռ «փախցնել(»), տանել(»)» իմաստը տրվել է ելմելով հենց այս արձանագրությունից: Համաձայն առաջարկվող քարգմանության (161)-ը պետք է կարդալ «ով-որ այն գիրը փչացնի, ով որ վրան հարձակվի (») ...»:

13. [karkar=an(i)] (karkar=ani/e) «զրահ» - հայ. կարկառ (») «քարակույտ, զրահան, պատ»: Մեկ անգամ վկայված է ուրարտական զրահի բրոնզե կոճակի վրա, որտեղից և «զրահ» նշանակությունը (հմմտ. խոտ.՝ karkarni, kerkerni «զրահ»²⁰⁹: Տե՛ս հետևյալը.

- (163) ^dḫal-di-e e-ú-ri-e i-ni qar-qa-ra-ni ¹X-še NÍG.BA - «խալդիին՝ տիրոջը այն զրահը ¹X-ը նվիրեց» [КУКН 227_{а.с.1-2}]:

Քացառված չէ, որ karkar=ani/e-ն պետք է քարգմանել «ճարմանդ, կոճակ» (հմմտ. հայ կառ- «կառչել»): Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ հայերենում կարկառ-ի հոմանիշն է զրահան-ը՝ «կույտ, դեզ» իմաստով:

²⁰⁷ Նման մեկնաբանման համար տե՛ս Հ.Մանգալջյան, 1900, էջ 374:
²⁰⁸ Վերջինս այն համեմատում է համանման համատեքստում հանդես եկող tu=li=e «ջարդել, ոչնչացնել» բառի հետ [Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 446]:
²⁰⁹ Տե՛ս Б.Пиотровский, КБ, III, էջ 35; М.Хачикян, 1985, էջ 48; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 459 և այլն:

տով, որը ՆԲՀԼ-ն [Ա, 1981, էջ 752] բխեցնում է գրահ «գրահ» բառից: ՀԱճառյանը [ՀԱԲ II, 1973, էջ 111-112] դրանք համարում է տարբեր բառեր՝ տարբերակելով այդ երկու իմաստները: Բայց ուրարտ. բառը կարծես թե հակառակն է հաստատում: Այս դեպքում ուրարտ./խոտ. qarqar=ane (karkar=an)/karkarni-ն հնարավոր է համեմատել հայ. կարկառ-ի հետ:

14. [ulx-] (ulh-) «հոսել(»), թափվել(»²¹⁰ - հայ. ուղխ- (») «հեղեղել»:
Գ.Մելիքիշվիլին թարգմանում է «հրամայել(»), կարգադրել(»)»:
Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(164) a-li A^[MES] [ID]Al-a-i-ni-i URUṭu-uš-pa-ni-[di?] [te-r]a-gi ul-ḫu-li-ni - «» [KYKH 391₃₁].

(165) iš-ti-di ul-ḫu-di URUX qa-ap-qa-ru-li-ni - «...այստեղ (»), սևիսի X քաղաքը թող նվաճվի(»)» [KYKH 242 B1₂₅, 244₂₂]:

«Հեղեղել» թարգմանությունը կասկածելի է թվում (165)-ում: Միգուցե խոսքը քաղաքը շրջապատող կամ մուտքը փակող (qap=qar=u=li=ne - հայ. կափ-եմ «փակել և այլն») ջրերի մասին է:

15. [mari] (mari) «ազնվատոհմիկ (»), իշխան (»)» - հայ. մար «տեր»(»): Սովորաբար համեմատվում է խոտ. marianne-ի «կառավար» և հայասական mariya-ի «քարճրաստիճան տիրոջ» ձևերի հետ: Դժվար է ասել՝ արդյոք հայերենի մար «տեր» բառը կապ ունի այս mari-ի հետ, թե այն ուշ շրջանի ասորական փոխառություն է, ինչպես որ սովորաբար համարվում է²¹¹:

16. [muš(i)] (muši/e) «ճշմարիտ, հավատարիմ» - հայ. հ-մուտ «հմուտ, գիտուն, լավ իմացող»: Վկայված է (289)-(290)-ում և հետևյալ արտահայտություններում.

(166) ^IX-ni ^Dḫal-di-e-[i] [^{L0}ER]UM ^{L0}si-e mu-ši ^{L0}UKU^{MES}-ú-e - «^IX-ը՝ Խալդիի ծառան, հովիվը ճշմարիտ՝ ժողովուրդի» [KYKH 387yp.25].

(167) ^Dḫal-di-e-[i] ^{L0}bu-ra-n[i]? [^{L0}s]i-e mu-ú-ši ^{L0}UKU^{MES} - «Խալդիի ծառան, հովիվը ճշմարիտ՝ ժողովուրդի» [KYKH 406_{o.c.32}].

(168) ú-e-še-la-a-še mu-ú-ši a-lu-ka-a ú-e-ši-ia-ú-li bur-ga-la-ni/KUR(կամ PAP) ^{KUR}šú-ri-l[i]/KUR-^{KUR}.KUR^{MES} - «» [KYKH 406л.с.28-30, 407л.с.21-23, Van re.11-12 (SMEA 44/1, 2001, էջ 112-143)]:

Թուրուգավայի երկրեզվյա արձանագրությունում համապատասխանում է ասուր. kienu (< kēnu)-ին՝ «ճշմարիտ, հավատարիմ, իսկական և այլն» իմաստով: Հայ. հ-մուտ ձևը կազմված է մուտ < *mōd «ներս մտել, մտնելու տեղ, եկամուտ և այլն» արմատից՝ հ- մասնիկով (հմմտ. հ-լու, հ-գոր): Եթե ճիշտ է սույն համադրումը, ապա այստեղ հայ. մուտ արմատը հանդես է գալիս իր մյուս՝ մուծ տարբերակով²¹²:

17. [pei(=n)] (pei(=ne)) «տակ» - հայ. հե-ն/ց- «հենել, կից, փխք. նակ ապավեն, ապաստանած և այլն»: Վկայված է հետևյալ տեսքի արտահայտություններում.

(169) wald=u=be (^{URU/KUR}X/LUGÁL X) meši=ne pei - ենթարկեցի(») (X-երկիրը/ քաղաքը/թագավորին) հարկի տակ լինելու պայմանով (»)» [...].

(170) turi=ni/e=ne ^Dḫaldi=še ^DIM=še ^DUTU=še DINGIR^{MES}=še (mane armuzi...) ^DUTU=ne pei=ne - «թող ոչնչացնեն Խալդին ... աստվածները իրեն, արմատներին... արևի տակ(ից)»,

ինչպես նաև հետևյալ արտահայտությունում.

(171) i-nu-ka-ni e-si-ni-ni ANŠU.KUR.RA [A]r-ši-bi-ni ti-ni ^IMe-nu-a-pi-i a-iš-ti-bi 22 1KUŠ - «այն տեղից Արծիվի անունով ձին, Մինուայի տակ, ցատկեց 22 1KUŠ» [KYKH 136л.с.7]:

Պարզ չէ արդյո՞ք հայերենում հե- բառարմատը կարող էր ունենալ «տակ» (») իմաստը: Ուրարտ. p[φ] - հայ. հ/- անցման համար տե՛ս II.4.3 կետ 2.6:

²¹⁰ Այդպես է թարգմանում Գ.Ղափանցյանը՝ համեմատելով այն հայ. ուղխ «հեղեղ, արագ հոսող ջուր» բառի հետ [1940, էջ 39]. նույնը կրկնում է Ն.Հարությունյան [2001(KYKH), էջ 472]:

²¹¹ Տե՛ս, օրինակ, Հ.Աճառյան, ՀԱԲ, III էջ 273:

²¹² Մ.Խաչիկյանը համեմատում է խոտ. muz-ի հետ՝ նմանատիպ նշանակությամբ [М.Хачикян, 1985, էջ 47]:

18. [šešti=n] (sesti=ne) - հայ. շեշտ (*) «շեշտակի, սրընթաց, ուժգնությամբ» կամ [sesti=n] (šešti=ne) - հայ. սաստ-ն «գորեղ, խիստ, ուժգին»: Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(172) i=ku=ka=ne MU/šale šešti=ne ušt=a=di - «նույն տարի *երրորդ անգամ* (*) արշավեցի» [KYKH 241 A₂₂, D₁₇, E₂₀, F₂₁].

(173) i=ku=ka=ne MU/šale šešti=ne ^{L0}A.SI^{MEŠ}/^{L0}buradi=ne=le^{MEŠ} ueli=d=u=be/keid=an=u=le - «նույն տարի *երրորդ անգամ* (*) գորք հավաքեցի/ուղարկեցի...» [KYKH 173 VI₁ 174 A₄₁₇, 241 B₂₇]:

Սովորաբար տրվում է «երրորդ անգամ» (*) իմաստը²¹³, որը որոշվում է [KYKH 241A] արձանագրությունից, որտեղ մախապես խոսվում է երկրորդ անգամ (ikukani MU/šale darane) արշավելու մասին: Մակայն հաջորդ [KYKH 241B, D, E, F] արձանագրություններում, որտեղ նույնպես առկա է ikukane MU/šale šešti=ne արտահայտությունը, երկրորդ անգամ արշավելու մասին ոչ մի հիշատակում չկա: Ըստ այդմ, վերջինիս «շեշտակի, սրընթաց» իմաստը շատ ավելի հավանական է թվում: Հակառակ դեպքում ստացվում է, որ արքան անընդհատ երրորդ անգամ է արշավում: Որտեղ. šešti=ne-ն հնարավոր է նաև համեմատել հայ. սաստ(-ն/իկ) բառի հետ (տե՛ս վերը): Ինչ վերաբերում է ուրարտերենի թվականներին, ապա դրանց ստույգ վկայություններ արձանագրություններում չկան (տե՛ս V.6):

19. [suš] (šule) - հայ. սուղ «սուղ, սակավ» (*): Վկայված է հետևյալ արտահայտություններում.

(174) ^{KUR}X hu-bi-i qi-ú-ra-a-ni šú-li-e ma-nu ú-i gi-e-i iš-ti-ni ma-nu-r[i] - «^{KUR}X-ի հովտի հողը *անմշակ* էր, ոչինչ այնտեղ չկար» [KYKH 421₇].

(175) ... e`a [E?].PAP^{MEŠ}-še gu-ni šú-li ma-nu ... «» [KYKH 391₇₋₈].

(176) ... e`a i-nu-s[i] [š]u-i-ni-i e-si gu-ni qu-ul-di-[ni] [šú]-li ma-nu ... «» [KYKH 391₁₃₋₁₅].

²¹³ Ըստ Ի.Գյակոնովի՝ «երկրորդ անգամ» (*) [ДВ, 5, 1988, էջ 171]:

(177) qar-bi-e šú-li ma-nu ú-i a-i-še-e-i LUGÁL-še za-da-la-ni «Ժայռը(*) լքյալ(*) էր, երբեք արքաները (այն) չէն կառուցապատել» [KYKH 427a₂]:

Գ.Մելիքիշվիլին կասկածանքով քարգմանում է «անցրդի(*)» հիմնվելով (176)-ի վրա, որտեղ, սակայն, սույն բառը վնասված է և վերականգնվում է ենթադրաբար: Ն.Հարությունյանը²¹⁴ քարգմանում է «լքյալ(*)», «անմշակ(*)»՝ համարելով širab=ae և guldi=ne բառերի հոմանիշ (տե՛ս III.2.3 կետ 27)²¹⁵:

20. [jar] (sale) «ուլ(*)» (այդպես ըստ Ն.Հարությունյանի [2001 (KYKH), էջ 126, 460]. Ֆ.Բյոնիզը առաջարկում է «զոհ» քարգմանությունը [1957 (Hchl, II), էջ 199]: Եթե Ն.Հարությունյանի քարգմանությունը ճիշտ է, ապա այն պետք է թերևս համեմատել հայ. ծար «արու այծ, նոխազ» բառի հետ: Սեպագիր s - հայ. ծ հնարավոր համապատասխանության համար տե՛ս նաև հաջորդը:

21. [juwi=(t)-] (suui=(t)-) «ձգել, նետել» - հայ. ձգ(տ)-եմ (< *ձուգ-*) < *g`hu-u-)²¹⁶ «ձգ(տ)ել, նետել»: Հայ. ձգ-եմ բայը կարող է գալ ինչպես ծիգ-ից, այնպես էլ՝ *ձուգ-ից: Վերջինս առանձին վկայված չէ, սակայն ըստ Հ.Աճառյանի [ՀԱԲ, II, էջ 161-162], *ձու- արմատը պահպանվել է ծոն < ծան < ձու-ան բառում: Սեպագիր s - հայ. ծ համապատասխանության համար տե՛ս նաև մախորդը: Մյուս կողմից՝ այս նույն բայի մեջ կարելի է տեսնել հայ. չու-եմ (առք. չոգ-այ) «չվել, շարժվել, հեռանալ» < *kj-u- (*kj-ou-) բայը:

22. [sor=er] (šur=e) (հոգ. ուղղ.) «աշխարհ, կայսրություն» - հայ. սորայ-ք «կայսրություն»²¹⁷: Կելիշինի երկրեզվյա արձանագրությունում ^{KUR}šur=e-ն համապատասխանում է ասորական kiššatu-ին «բազմություն, աշխարհ, կայսրություն, տիեզերք և այլն» նշանակությամբ²¹⁸: Որոշ արձանագրություններում ^{KUR}šur=a=ue-ին փոխարի-

²¹⁴ Այդ մասին տե՛ս Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 465:

²¹⁵ Եթե ենթադրենք, որ ուրարտ. š-ն կարող է արտացոլել հայ. չ հնչյունը, ապա šule-ի տակ կարելի է տեսնել հայ չոր «չոր» բառը:

²¹⁶ Այս նույն արմատի *g`hew- տարբերակից է ծագում հայ. ծեւ-եմ «թափել» բառը [ՀԱԲ, II, էջ 150]:

²¹⁷ Տե՛ս Բառ. Երեմ., էջ 289:

²¹⁸ Ի.Գյակոնովը այն կապում է šuri «սուր» արմատի հետ՝ «^{KUR}šure=le»-ն ըմբռնելով իրեն «զինված մարդկանց (ազատների) երկիր» [1963, էջ 80], ինչը, սակայն, հակասում է թե՛ KUR. KUR^{MEŠ} ձևին, թե՛ ասորական զուգորդին:

նում է KUR.KUR^{MEŠ}-ue գաղափարագիրը՝ «երկրների երկիր» բառացի նշանակությամբ: Տե՛ս հետևյալը.

(178) ...LUGÁL^{KUR}Bia(i)n=a=ue LUGÁL^{KUR}šur=a=ue (կամ KUR.KUR^{MEŠ}-ue) ...«արքա Բիայն-եր երկրի, արքա աշխարհի /երկրների երկրի/ ...» [...]:

Առաջարկված քարգմանությամբ ^{KUR}šur=ele-ն բառացի պետք է կարդալ «ընդարձակ, լայն երկիր», այսինքն՝ աշխարհ, կայսրություն, ինչպես որ պահանջում են ասուրական զուգորդը և KUR.KUR^{MEŠ} գաղափարագիրը²¹⁹:

23. [s(i)ʔ-] (šiti=šit-, šit-) «կառուցել»: Թերևս կարելի է համեմատել հ.-ե. stā-, sti «կանգնել, կանգնեցնել, դնել» արմատի հետ, որից հայերենում ունենք՝ սո-ան-ամ «հաստատել, ստեղծել, շինել, նորոգել», «ձեռք բերել, շահել», սոի «կարգ, պատշաճություն» և ստեղծ-ան-եմ «ստեղծել» բառերը [տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, IV, էջ 269-270; Գ.Ջահուկյան, 1987, էջ 151]: Այդ դեպքում šid(i)- բայարմատը պետք է հնչյունադարձել [sʔ(i)-]:

24. [wo(y)=s] (wu=še) «ապրուստ(»), (օրա)պարեն(«)» (ենթադրական քարգմանությունը ըստ Ի.Դյակոնովի [KBC, VIII, էջ 66 ծան. 34; էջ 65 ծան. 22]): Տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 126, 460: Թերևս կարելի է համեմատել հայ. գոյ-ք (< *vóse կամ *vos) «զույք, ինչք, հարստություն, եղած բան» [Հ.Աճառյան, ՀԱԲ, I, էջ 576; Գ.Ջահուկյան, 1987, էջ 156] բառի հետ:

Վանի արձանագրություններում վկայված են մի քանի տասնյակ, առայժմ չստուգաբանված բառեր: Դրանցից շատերը ունեն հայերեն զուգահեռներ, որոնք ոչ միայն հարմար են ձևով, այլև իմաստով համահունչ են համապատասխան համատեքստին: Սակայն դրանք տեղ չեն գտել հիշյալ բառացանկում:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում հնդեվրոպական այն բառարմատների հնարավոր արտացոլումը Վանի արձանագրություններում, որոնք զանազան պատճառներով չեն պահպանվել հայերենում²²⁰: Որպես հնարավոր օրինակ քերենք ուրարտ. uedia=ne «կա-

նայք, կին» հ.-ե. < *ved- «տուն տանել, ամուսնանալ», հին հնդ. vadhū «ժարս, երիտասարդ կին» [Г.Джаукян, 1967, էջ 45], lutu «կին» < *ludho «մարդիկ, ժողովուրդ» (գերմ. lūd, lut «կին, աղջիկ») [Г.Джаукян, 1967, էջ 21] և այլն:

III.2.5 ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուրարտերենում զուգահեռներ ունեցող ոչ բնիկ հայերեն բառերի շարքում առկա են տարբեր լեզուներից կատարված հետևյալ հնարավոր փոխառությունները.

Շուներական փոխառություններ: Առկա է մեկ բառ՝

- 1. պատ «պատ, շրջակայք» - շումեր. paš «պատ, ամրոց», աքքադ. puṣu(m) «սահման, շրջան»:

Իրանական փոխառություններ: Առկա է յոթ (հիմնականում կասկածելի) բառ՝

- 1. ավան «ավան, քնակավայր» - իրան. āvān «քնակատեղի»: Կասկածելի է, քանի որ որոշ հետազոտողները ուրարտ. eban-ի կապում են հայ. աշխարհագրական անունների վերջում հանդիպող -եւան բաղադրիչի հետ. այդ մասին տե՛ս ծան. 57.
- 2. հան-դերձ «..., պատրաստություն, արդ, սպաս» - իրան. handarj «զգեստ, հանդերձանք, կապել» (*) (այս բառ իրանական լինելու կասկածելիության մասին տե՛ս III.2.3 կետ 15).
- 3. ուժ(զիև) «ուժ, ուժզին» - իրան. dōz «ուժ, ուժզին».
- 4. դա(ր)ս, -ու «դաս, կարգ, խումբ և այլն» - իրան. das «քաժին, դաս, կարգ»: Կասկածելի է, քանզի հայերենում դաս-ի կողքին ունենք առավել հնագույն դարս ձևը (այն պահպանվել է նաև ներկայիս խոսակցական լեզվում): Վանի արձանագրություններում առկա է հենց այս daršu- ձևը (տե՛ս III.2.3 կետ 14).
- 5. կապիճ «քաշի միավոր» - իրան. kapīč «քաշի միավոր».
- 6. ման «քաշի միավոր» - իրան. *man (*) «քաշի միավոր». ենթադրվում է սեմական ծագում.

²¹⁹ Վ.Սարգսյանը համեմատում է հայ. շուռ (շուր-ք) բառարամատի հետ՝ «երկիր, շրջան, քնակավայր» իմաստով [1998, էջ 110-111]:

²²⁰ Հայերենը պատկանում է այն լեզուների թվին, որոնք բավականաչափ նվաղել են, այսինքն կորցրել են իրենց սկզբնական (բնիկ) բառապաշարի մի զգալի մասը՝ փոխարինելով այն եկամուտ բառերով: Հայերենի մեջ հատկապես շատ են իրանական

բառերը: Ուրարտական շրջանում դրանց մեծ մասը դեռևս մուտք չէին գործել հայերենի բառապաշար: Բնականաբար, Վանի արձանագրություններում հնարավոր է, որ պահպանված լինեն դրանց բնիկ համարժեքներից շատերը: Խոսքը վերաբերում է հատկապես այն բառերին, որոնց բնիկ հոմանիշները չեն պահպանվել:

7. Նախ- «առաջ, նախկին և այլն» - իրան. *naxv* «առաջին» (*) (տե՛ս III.2.3 կետ 38):

Խեթական փոխառություններ: Առկա է երկու բառ՝

1. *h*-ատ-ան-եմ «հատել, կտրել և այլն» - խեթ. *hattāi* «հատել, կտրել, ծակել».
2. (հ)սկ-եմ «հսկել, հետևել և այլն» - խեթ. *ušk* «տեսնել (*)», *hušk* «ասել»:

Խուրիական փոխառություններ: Առկա է ին բառ՝

1. դա(ր)ս «մարդիկ, մարդկանց խումբ» - խուռ. *tarzuann* «մարդիկ».
2. կարկառ «քարակույտ, պատ» - խուռ. *karkar/kirkir* «գրահ».
3. բարայ «բլուր» - խուռ. *fāvani* «սար».
4. ալրի-որդ «օրիորդ (տիրոջ որդի)» - խուռ. *ervə* «տեր, արքա» (դրափոխությամբ > *ewri).
5. խաղող «խաղող» - խուռ. *halūlu* «ինչ-որ պտուղ».
6. մար «տեր(*)» - խուռ. *mari-anna* «կառավար» (հմմտ. նաև *haya*. *mariya* «իշխան, տիրակալ և այլն»).
7. պախրե «տավար» - խուռ. *fāyə* «գլուխ» (*) (հմմտ. նաև *asur*. *baqrā* (*) «արջառ, կով»).
8. սան «աման, կաթսա» - խուռ. *sanə* «աման» (հմմտ. նաև *arḫa*. *šannu(m)* «աման»).
9. ո(ւ)րիշ «ուրիշ, այլ» - խուռ. *ulī* «այլ, ուրիշ», եթե հայ, բառը չի գալիս որ-ից:

Հայաստանյայց փոխառություններ: Առկա է մեկ կասկածելի բառ՝

10. մար «տեր(*)» - հայաս. *mariya* «իշխան, տիրակալ և այլն» (հմմտ. նաև խուռ. *mari-anna* «կառավար»). Հ.Աճառյանը հայ. բառը համարում է ասորական փոխառություն (տե՛ս III.2.4 կետ 15):

Ասորական փոխառություններ: Առկա է երկու բառ՝

1. կոթող «կոթող, նշանաբար, տաճար» - *arḫa*. *kudurrū* «սահմանաբար, սահման(*)».²²¹
2. սան «կաթսա» - *arḫa*. *šannu(m)* «աման» (հմմտ. նաև խուռ. *sanə* «աման»):

²²¹ Հաշվի առնելով Վանի արձանագրություններում սույն բառի «տաճար» նշանակությունը՝ ասորական փոխառությունը կասկածելի է թվում:

Ասորական փոխառություններ: Առկա է երկու բառ՝

1. բուրգ «բուրգ, աշտարակ» - *asur*. *burgā* «աշտարակ»
2. պախրե «տավար» - *asur*. *baqrā* (*) «արջառ, կով»²²² (հմմտ. նաև խուռ. *fāyə* «գլուխ»):

Ինչ վերաբերում է այս և այլ լեզուների հետ ուրարտերենի ունեցած բառական ընդհանրություններին ընդհանրապես, ապա այդ հարցը այստեղ չի քնարկվում²²³:

III.2.6 ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ուրարտերենի ստուգաբանված բառապաշարի և համապատասխան հայերեն զուգահեռ բառ(արմատ)ների (առանց հատուկ անուններում պահպանված, ինչպես նաև կասկածելի համարվող բառերի) ամփոփումը, որտեղ առանձին նշված են երկլեզվյա արձանագրություններով կամ համապատասխան գաղափարագրերի միջոցով ստուգաբանված բառերը (զուգորդման եղանակով ճշգրտված բառեր), ներկայացնում է հետևյալ պատկերը.

Ստուգաբանման եղանակը	Ստուգաբանված բառերի ընդհանուր թիվը	Հայերեն զուգահեռներ				Բառեր, որոնց համար առաջարկվել է նոր իմաստ՝ ամբողջությամբ կամ մասամբ
		ընդհանուր	թիվ	փոխառյալ	անհայտ ծագումով	
ընդհանուր	230-250	156 (62-68%)	95 (61%)	15	46	32
զուգորդման	65-68	47 (66-69%)	31 (69%)	6-7	12-14	1-2

²²² Վերջինս բավական կասկածելի է, քանի որ ուրարտ. *paḫ-ini/-ani* ձևը ցույց է տալիս, որ արմատը պետք է լինի պախ-ը:

²²³ Ուրարտերենի և խուրիերենի հետ ունեցած ընդհանրությունների մասին տե՛ս, օրինակ, I.Diakonoff, 1971; M Хачикян, 1985; G.Wilhelm, 2004 և այլն:

Ընդհանուր առմամբ բառացանկը պարունակում է մոտ 156 բառ, որը կազմում է ուրարտերենի ստուգաբանված բառապաշարի (230-250 բառ) 62-68%-ը: Ուրարտերենի բառապաշարում առկա և զուգորդման եղանակով ստուգաբանված 65-68 բառերից հայերեն զուգահեռներ ունեն 45-ը (66-69%): Այդ փաստը վկայում է, որ ուրարտական բառերի իմաստների հետագա ճշգրտմանը զուգահեռ հայերեն զուգահեռների թիվը ուրարտական բառապաշարում կարող է ավելանալ²²⁴: Նշված 156 զուգահեռներից բնիկ են 95-ը, մոտ 61%, որ բավական բարձր թիվ է, փոխառյալ են 15-ը՝ մոտ 9.5%, 27%-ը կազմում են անհայտ ծագման բառեր: Վերոհիշյալ 156 բառերից 32-ի համար սույն աշխատությունում, ամբողջությամբ կամ մասամբ, առաջարկված են նոր իմաստներ²²⁵: Դրանք հիմնականում, բացառությամբ մեկ երկուսի, չունեն իրենց զուգահեռները երկլեզվյա արձանագրություններում կամ շումերական/արքադական գաղափարագրերի տեսքով: Ընդ որում, այդ 32 բառերի մեծ մասի համար նախկին մեկնաբանությունները մոտավոր են և շատ հաճախ մասնագետները դրանք քերում են որոշակի կասկածանքով, իսկ շատ բառերի իմաստների համար դրանց միջև առկա է անհամաձայնություն:

2. Ըստ արձանագրություններում վկայված իմաստային խմբերի՝ զուգահեռ բառերը ներկայացնում են հետևյալ պատկերը.

1. **Ֆիզիկական աշխարհ**

arjena/i «արձան, ժայռ», qar=w «քար», arg=ani «սահման», ap=ti=n «ափ», baban «բլուր», šov «ծով», howi «հովիտ, դաշտ», jai(i)n «անձավ»:

2. **Մարդկություն. սեռ, ընտանիք**

a(y)r «այր», armo=ci «գարմ», darsu=an «մարդկանց խումբ», aš «ընտանիք» (*):

²²⁴ Բերնք հետևյալ օրինակները. 1) zani=d- նախկինում թարգմանվում էր «աղոթեցի (*), աղերսեցի (*)» - նոր թարգմանությունը «խոսեց, ասեց», ըստ INIM գաղափարագրի - հայ. ձայն, -ի «խոսք, բառ, ձայն», 2) quduł=ani նոր թարգմանությունը «տաճար», ըստ E.BAR գաղափարագրի - հայ. կոթող «կոթող, շինություն», 3) bad=usi- «հոյակապ (*), վեհաքանչ (*) և այլն», նոր թարգմանությունը «շրջապատ» ըստ ասուր. l.imiddi-ի - հայ. պատ «պատ, շրջապատ», 4) šer=aše նոր թարգմանությունը «նախնիները, պապերը», համապատասխանում է AD.AD-še գաղափարագրին - հայ. սեռ «տոհմ, ցեղ» և այլն:

²²⁵ Բոլոր այն ուրարտ. բառերը, որոնց համար առաջարկվում է իմաստային նոր (մասնակի կամ ամբողջական) արժեքներ, մանրամասն դիտարկված են ըստ համատեքստի:

3. **Կենդանիներ**

uša «ուղտ», pax=in «տավար, երինջ»:

4. **Մարմնի մասեր, մարմնական գործողություններ**

payšan «փայծաղ», jierd «լյարդ», kur=er «կրունկներ, ոտքեր», soš=u=st- «սողալ»:

5. **Կերակուր, ըմպելիք, ամանեղեն**

sani «կաթսա»:

6. **Բնակարան, կահկարասի, տուն**

dən=aš «մոմակալ»(*):

7. **Երկրագործություն, բուսականություն**

xor=isx «ջրավազան», piš «ջրանցք», šar «ծառ, այգի», xalot «խաղող», ort «խաղողի որթ», toli «վայրի խաղողի որթ», kordi=(i)n «խոպան», šeraw=a(ə) «անջրդի (հող)»:

8. **Ֆիզիկական տարրեր գործողություններ, առանձին արհեստներ և արվեստներ, դրանց հետ առնչվող նյութեր**

ar=n- «անել, արարել», aweli- «հատել», z=aš- «զատել», tu- «հարել, զարկել», xarxar- «խարխլել, քանդել», kotoš «կոթող, տաճար», n=ord- «ընդարձակել, ծավալել», š(u)toğ- «պոկել, բաժանել», ur=isx «զենք, մետաղյա իր», ur=isx=oc «դարբնոց, զինանոց», ur=ord «մետաղագործ, դարբին», paš=oc «շրջապարհսպ», sor=isx «ախոռ» (*), jerd- «ճգնել, ջարդել», waš «թաքսոց», por=oc «վիմափոր արձանագրություն», piš- «ջարդել, փշրել», paški/e(=t)- «հաստատել, ամրացնել», šep- «ծեփել», šep=ord, šepi=kani, šep=an «ծեփագործ», iwsu=s «հյուսն, դուրգար», imen «հիմք»:

9. **Շարժում, տեղափոխություն, փոխադրում**

as- «հասնել, հասցնել», z=as- «հասցնել», ar/ri=beri=t- «զտնվել, մեջ գալ», keit=an- «կենտրոնացնել, մի տեղ հավաքել», kor- «փախնել, կորել», hos- «հոսել, քափել», tep- «քափել, քաղել», nax- «առաջանալ, մոտենալ», ost- «ցատկել, արշավել, հարձակվել», uš(=u=st)- «ողևորել, առաջնորդել», n=uš=u=st- «առաջնորդել, վարել», paš=g- «շրջապատել», ʔeš- «հետ տալ, վերադարձնել», sayš- «զցել, ընկնել» (*), wəl=t- «զլորել», ʔar- «հեռացնել»:

10. **Ունեցվածք, սեփականություն և առևտուր**

ar- «տալ, կցել», (zə=)t(u)- «անել, տալ», erši- «ազատել, բաց թողնել», laq- «թաքցնել», kap- «կափել, կալանել», kapi «կապիճ (չափ)», mana «ման(չափ)»:

11. **Տարածական հարաբերություններ. տեղ, չափ, ճև**
 ai=nu- «հարել, միանալ», der/dən- «դնել, դիր», etp- «հափշտակել, քակարող զգել», toł- «բողնել», ka- «կալ, լինել», kołun «կողը, կողմը», mən- «մնալ, լինել», mes- «մասնատել, բաժանել», użg(i) «ուժգին, հզոր» (*), seř «անջատ, զուտ», juw- «նետել, շարտել» (*), ti=a(ə) «մեծ», tira «մեծ, հզոր, շատ», tuți «ծայր, եզր», barju/i- «քարձր», ur «տեղ, տարածք»:
12. **Քանակ և քիվ, ժամանակ**
 mes(in) «մաս, բաժին», dar=an «դարձյալ, կրկին», kamn=ax «կանոն»:
13. **Չզացմունք, զգայական ընկալումներ**
 aw- «ցանկանալ»(*), nay- «նայել, հետևել», et- «կոտորած, եղեն» (*), šešt- «շեշտակի» (*), arnəpaçg(*) «սրընթաց» (*), oļjo=s «տղջուրյուն, առողջուրյուն», arn(i) «առնական, արի»:
14. **Մտածողություն, միտք**
 h=as- «ըմբռնել, լսել», s(u)k=ol «(h)սկող»:
15. **Չայնական արտահայտություն, խոսք, գիր**
 ba=w=s «խոսք, բան», ti(w)- «ասել, խոսել», jayni=ı- «ձայն տալ, խոսել»:
16. **Տարածքային հասարակական և քաղաքական բաժանումներ**
 ewani «ավան, երկրամաս», pař=are «քերդաքաղաք», seř «սեռ, տոհմ», ceř=w «ցեղ», sor=er «աշխարհ, ընդարձակ (երկիր)» (*):
17. **Ռազմական գործ**
 at/t- «ուտել, հատել (երկիրը)», hař- «հատել(երկիրը)», burgan=an «քուրզ, աշտարակ», teq- «թեքել, տրորել (թշնամուն)», xařař «խաղաղ», mək- «շարտել (տեղը, նետը)», juu/o=s(in) «մարտ(ական)», suri «սուր», qał- «հաղթել, ոչնչացնել»:
18. **Օրենք, կրոն և մախապաշարմունք**
 ardi=s «կարգ, կանոն», an=y=ardu=(n) «ամարդար, անիրավ», derjo=s «պատրաստություն», ař=qa=na=n/t- «ընծա», «ընծանել, նվիրել», aweiti=n «ավետիս», karmex(i) «ընծա, պատարագ», n=ewši=ı- «մորթել, զոհաբերել», ei=a «էական», up=ardu- «օրինակացնել, իշխանություն տալ», ı=up=ardu=n «անիշխան, անօրեն»:
19. **Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ**
 in(i) «-ն», aynē «այն մեկը», na- «այն», aysē «այս մեկը», sa- «այս», iso=ka «այս նույն, սույն», ino=ka «այն նույն, նույն», iser=hin «(այս) նույն ժամանակ/տեղում», iner=hin «(այն) նույն ժամանակ/տեղում»,

e/isti=n «այստեղ, այստ», edi «այդտեղ», andani- «այն կողմը/պահին» (*), ayl «այլ», aylo/e «ով, որը», an- «ան-», ew «և», yes «ես», i/y «ի (մախդիր(*)/մախածանց)», z/j- «զ/-ձ- (մախածանց)», mi «մի», oy «ոչ», n(i)- «ն(h)- (մախածանց)», or «որը, ուրիշը», ı- «ժխտական մասնիկ», φαř «առ, մինչև (մախդիր)»:

III.3 ԱՄՓՈՓՈՒՄ

Հայ-ուրարտական ընդհանուր բառարմատների ցանկի ամփոփումը հանգեցնում է հետևյալ պատկերին.

1. Ուրարտերենի մինչև այժմ ստուգարանված 230-250 բառերից 156-ը ունեն գուգահեռներ հայերենում, որոնք կազմում են վերջիններիս 62-68%-ը:
2. Վերոհիշյալ 156 գուգահեռ բառերց 95-ը, շուրջ 61%-ը, քնիկ են և, հետևաբար, չեն կարող փոխառյալ լինել ուրարտերենից, եթե, իհարկե, այդպիսի առանձին լեզու եղել է:
3. Չուգահեռ բառերի մեջ մեծ տոկոս են կազմում այնպիսիները, որոնք սովորաբար հազվադեպ են մեկ լեզվից անցնում մյուսին (օրինակ, դերանուններ, մակբայներ, սպասարկու բառեր և այլն):
4. Ուրարտական տեքստերում առկա բառապաշարի առավել հավաստի ստուգարանված բառախմբի մեջ (դրանք այն բառերն են, որոնց իմաստները որոշվում են երկլեզվյա արձանագրությունների և համապատասխան գաղափարագրերի միջոցով) ընդհանուր առմամբ 62-68 բառ, 49-ը, շուրջ 66-69%-ը, ունեն հայերեն գուգահեռներ: Ընդ որում վերջիններից 31-ը՝ քնիկ են, 7-ը՝ փոխառյալ և միայն 11-ը անհայտ ծագում ունեն:
5. Բազմաթիվ են նաև հայերեն արմատները ուրարտերենում վկայված զանազան հատուկ անուններում²²⁶:

Քննելով վերոհիշյալ դրույթները՝ միարժեքորեն գալիս ենք այն եզրակացության, որ սխալ է գիտության մեջ իշխող այն կարծիքը, թե հայկական բառարմատները ուրարտերենում սակավաթիվ են, իսկ եղածն էլ մեծամասամբ կան պատահական բնույթ ունեն, կան փոխառյալ են

²²⁶ Ուրարտական տեքստերում հիշատակված տեղանուններում հայ. բառարմատների համար տե՛ս, օրինակ, Գ.Ջահուկյան, 1988, էջ 154-168 և այլն:

ուրարտերենից²²⁷: Ընդհակառակը, վերոհիշյալ փաստերը ապացուցում են, որ առավել հաճախ հանդիպող և ուրարտական արձանագրությունների հիմքը կազմող բառապաշարի մեծ մասը զուգահեռներ ունեն հայերենում: Իհարկե, զուգահեռ բառ(արմատն)երի ցանկում նշված ոչ բոլոր համեմատություններն են համարժեքորեն հավաստի, և հնարավոր է, որ նրանց մեջ լինեն պատահական զուգահայումներ, որոնք հետագայում դուրս կնդվեն այդ ցուցակից: Սակայն, մյուս կողմից, պետք է նկատի ունենալ նաև այն հազամանքը, որ.

1) քննակամարար ոչ բոլոր հայ-ուրարտական զուգահեռ արմատներն են նկատված: Հատկապես եթե նկատի առնենք այն փաստը, որ տակավին դեռ ուսումնասիրված չէ հայերենի բարբառներում պահպանված բազմաթիվ բառերի հնարավոր առկայությունը ուրարտերենում,

2) առկա են բազմաթիվ, առայժմ կասկածելի համարվող հայ-ուրարտական զուգահեռ բառ(արմատն)եր, որոնց մի մասը բերված է կասկածելի զուգահայումների ցուցակում և որոնք ներառված չեն վիճակագրական ամփոփման մեջ:

Այսպիսով, ի նկատի ունենալով, որ հայ-ուրարտական զուգահեռ բառ(արմատն)երը համատարած են, առկա են ստուգաբանված բառապաշարի բոլոր խմբերում, հիմնականում բնիկ հայկական բառեր են, միարժեքորեն կարելի է պնդել, որ ուրարտական տեքստերում պահպանված լեզվի, որը գիտությանը հայտնի է «ուրարտերեն» անվամբ, և հայերենի միջև կա ցեղակցական կապ կամ այդ լեզուները նույնական են:

IV. ՉԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

IV.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. **Քառակազմություն:** Ուրարտերենում քառարմատները հիմնականում միավանկ են: Հիմքը բաղկացած է արմատից կամ արմատից և հավելյալ մասնիկ(ներ)ից (ածանցներ, ածականներ): Վերջիններս կարող են հավելվել արմատին կամ մեկ այլ հիմքի ինչպես սկզբից (նախածանցներ), այնպես էլ վերջից (վերջածանցներ, ածականներ): Միջածանցներ ուրարտերենում չեն վկայված (ածանցների մասին մանրամասն տե՛ս ստորև՝ IV.3 և IV.4, բառափոխող ածանցների (մասնիկների) մասին տե՛ս նաև V.2 և VI.2):

Անվանական հիմքերը ուրարտերենում որպես կանոն բնավոր են՝ վերջանում են ձայնավորով (համեմայն դեպս՝ գրում): Դրանց մեջ գերակշռում են *i*-ով հիմքերը: Շատ բառերի ուղիղ ձևերը գրում ավարտվում են *e* ձայնավորով՝ վանկագիր՝ *-ci/e-(e)*, *-ce-(e)*, սակայն թեքվելիս կամ ածանցվելիս *e*-ի փոխարեն հանդես է գալիս *i*-ն, ինչպես՝ *ulguše - ulguši=ane*, *alsuiše - alsuiši=nine*, *gunuše - gunuši=ie*, *uštipte - uštipti=ne*, ^m*Minuaše - Minuaši=nele* և այլն²²⁸: Այս երևույթը թերևս պայմանավորված է շեշտակորույս դիրքում քառավերջի *i* ձայնավորի թուլացմամբ կամ անկմամբ (տե՛ս II.2): Այստեղ *e*-ն, ըստ երևույթին, պետք է արտասանել *ə* կամ *ø*²²⁹: Ինչ վերաբերում է բուն *e*-ով հիմքերին, ապա առայժմ վստահաբար կարելի է խոսել թերևս միայն *erele* «արքա» (երգ. հոլով՝ *erele=še*), *ule* «ուրիշ» (երգ. հոլով՝ *ule=še*) և *ale* «այլ, իսկ» (հմմտ. *ale=ke* «այլ») տարբերակի հետ՝ կազմված նույն *ale*

²²⁸ Մրանց թվին են պատկանում՝ *-he*, *-ibte (-ebte)*, *-(u)se*, *-še* ածանցներով կազմված (այս ածանցներով վերջացող) բոլոր բառերը: Եթե դրանք հոլովվում են կամ կրկնակի ածանցվում, ապա վերոնշյալ ածանցները հանդես են գալիս՝ *-hi-*, *-ebti-*, *-(u)si-*, *-ši-* տեսքով:

²²⁹ Մասնագիտական գրականությունում սովորաբար գերադասվում է *ə*-ն, մեծք հնչյունադարձն էլ *ø*:

²²⁷ Տե՛ս, օրինակ՝ Г.Джаукян, КНВ „Об урартских заимствованиях в армянском языке“, էջ 364-372:

արմատից՝ -ke մասնիկի հավելումով) բառերի մասին²³⁰: Ուրարտերե-
նում a-ով հիմնականում ավարտվում են հատուկ անունները, ինչպես՝
^dAdia, ^dAdaruta, ^dAia, ^mErimena, ^mMinua, ^{KUR}Baršua,
^{KUR}Eria, ^mKatarza և այլն: Ս-ով հիմքերը (ս-ն կարող է արտասան-
վել ինչպես [u], այնպես էլ [o]) շատ չեն:

2. **Բարդում և կրկնություն:** Կրկնության դեպքերը ուրարտերենում
շատ չեն: Վկայված են հետևյալները՝ qarqara=ne «գրահ» (հմմտ.
հայ. կարկառ «գրահան, քարակոյտ, պատ»), ħarħar(š)-
«խարխլել» (հայ. խարխար-եմ «խարխլել»), ħilħili «(°)», mur-
muri=aše «(°)»: Էլ առավել սակավ են բարդման դեպքերը: Որպես
այդպիսիք կարելի է դիտարկել ariberi- «աօրերել», թերևս նաև -
barzu/idibidu=(ne) բառերը (տե՛ս III.2.3 կետ 3, 11): Վերջինս
ամենայն հավանականությամբ բաղկացած է barzu/i (հմմտ. հայ.
բարձ, -ու «բարձր» (°)) և dibidu կամ dibi բառաբանման երկրորդ
(սակայն դրանք առանձին-առանձին ուրարտական տեքստերում
վկայված չեն): Առայժմ դժվար է կողմնորոշվել՝ qarqar(š)- <
qar(=) qar(š)- (°) «շրջափակել, շրջապատել» (հմմտ. հայ. կալի-եմ),
kulu=ar/ubšī- < kulu=ar/ub(=) šī- (°) «փախնել» (հմմտ.
հայ. կոր-ուս-ան-եմ, տե՛ս III.2.3 կետ 32) և այլ նմանատիպ բառերի
հարցում: Նշված բառերի երկրորդ բաղադրիչների մեջ կարելի է տեսնել
և՛ ինքնուրույն բառարմատներ, և՛ անականներ, ածանցներ: Վերջին
դեպքում դրանք կարող են լինել բաղադրյալ: Ուրարտերենի որոշ
ածանցներ և ետդիրներ նույնպես կարելի է դիտարկել որպես բառերի
երկրորդ արմատներ: Սրանք ունեն ինքնուրույն բառային արժեք, իսկ
որոշները՝ նաև գործածություն²³¹:

IV.2 ԱՄԱՆՃՈՒՄ

Այստեղ մանրամասն կանդրադառնանք ուրարտ. ածանցներին և
նրանց՝ հայերենի հետ ունեցած առնչությունների հարցին: Ընդ որում,
կղիտարկենք ոչ միայն այն ածանցները, որոնք զուգահեռներ ունեն

հայերենում, այլև ուրարտական ածանցները ընդհանրապես²³²: Բացա-
ռությամբ կկազմեն միայն հատուկ անուններին բնորոշ ածանցները: Բա-
յաժանցները և անվանական ածանցները կներկայացնենք առանձին-
առանձին:

Ստորև աղյուսակի տեսքով ամփոփ տրվում է ուրարտական
տեքստերում մինչ այժմ վկայված բոլոր ածանցները և համապատաս-
խան հայերեն զուգահեռները:

Աղյուսակ 4

Ուրարտերենի ածանցները և նրանց զուգահեռները հայերենում			
Ածանցներ		Նշանակությունը	
Ուրարտերենում	Հայերենում	Անվանական ածանցներ նախաձայններ	
z(a)-	[z(ə)-]	զ-, ձ- < *ghō	զորացուցիչ ածանց
h-		h-	-
i-		ի/յ- < *en	-
an-		ան- < *n	ծխտական մասնիկ
ī-		ա- < *dus	ծխտական մասնիկ
n(i)-		ն(ի)- < *ni, *nei	«ցած»
up-		h-ուպ < *sub-	«մտտ, մերձ»
վերջաձայններ			
-a=ni/e	[-a=n(i)]	-ան	կազմում է գոյականներ և ածականներ
-i=ne	[-i=n]	-ին < *-e-ni/o	կազմում է ածականներ, գոյականներ և այլն
-ne	[-n]	-ն < *-ni/o, *-en	կազմում է անուններ (հաճախ չի զի- տակցվում)
-(i)a=ne	[-(i)a=n]	-(ն)ան	հոգնակիակերտ-հավաքական ածանցներ
-ne(°)	[-n]	-ն (°)	բայաիմբերից կազմում է գոյականներ
-(u)aše	[-(u)aš]	-(ու)ած < ած-եմ (°) < *ag'- բայից	
-išħe, -išħi-	[-išx, -išxi-]	-իսխ	կազմում է անուններ
-ibte, -ibti-	[-iwt, -iwti-]	-նյթ, -ի < *-eu-ti	կազմում է վերացական անուններ
-urda/i	[-orda/i]	-որդ, ի-ա < *dhro(°)	մասնագիտություններ կամ մարդկանց խմբեր/տեսակներ

²³⁰ Ուրարտերենում բառերի ուղիղ ձևերը գրում վերջից հաճախ ստանում են
հավելյալ e, որի բնույթը պարզ չէ (տե՛ս V.2.3 կետ 2):

²³¹ Օրինակ, սրպես այդպիսիք կարելի է դիտարկել՝ up- (հայ. հուպ-) նախաձայնը՝
up=ardu-, Է=up=ardu- բառերում (տե՛ս III.2.3 կետ 4.4-(14)), -kai [-kay] ետդիրը
(հմմտ. հայ. -կա) արմատով կազմությունների հետ, մանրամասն տե՛ս VII.2) և այլն:

²³² Ուրարտերենի ածանցների մասին տե՛ս Գ.Меликишвили, 1960(УКН), էջ 51-52;
1964, էջ 28-30; I.Diakonoff, 1971, էջ 58-87, 139-147; М.Хачикян, 1985, էջ 57-69;
G.Wilhelm, 2004, էջ 119-137 և այլն:

Ածանցներ		Նշանակությունը
Ուրարտերենում	Հայերենում	
-use, -usi- [-oc, -oci-]	-ոց, ի-ա < *-sk'(sk)	տեղացույց, գործիք/միջոց, որով մի բան են անում
-(v)=ze/=zi- [-(v)=c/=ci-]	-ց(ի) < *-sk'(sk)	կազմում է անուններ
-ka=(ne) [-ka=(n)]	-կ(ն), -կան < *-kō-n	անձ ցույց տվող իմաստ, հայերենում մահ փոքրացուցիչ-փաղաքշական
-ku=ne [-ku=n]	-կ(ն), -կուն < *ko-n	կազմում է գործողության անուններ
-(u)mene [-(u)men]	-(ու)մն, -ման, -մում < *-men	կազմում է վերացական գոյականներ, ունի մահ հոգնակիակերտ-հավաքական իմաստ
-še, -ši- [-s, -si-]	-ք (°) < *-s (°)	-/-
-šine, -šini- [-sin, -sini-]	-քին (°), -քեան (°)	ուրարտ. հոգնակի ուղղականի վերջավորություն, հայ. հոգնակիակերտ-հավաքական ածանց
-e-le [-e-r]	-եր, -(ն)ար, -որ(ն)այ	պատկանելության ածանց (ծագում է սեռ. հոլովի մասնիկից (°))
-he, -hi- [-he, -hi-]	-ի (°) < *-hi < *-sio (°)	մակերայական մասնիկ (°)
-hine, -hini- [-hin, -hini-]	-ին (°), -ին (°)	կազմում է վերացական գոյականներ (°)
-(u)=tu=hi(=ne)	-	ցույց են տալիս այս կամ այն վայրից լինելը
-hali/e (°)	-	
-a=lhe, -u=lhe	-	
Բայանուններ, դերբայներ		
-ure, -aure [-ol, -awl]	-ուր, -աու (-որ), ի-ա < *-o-lo/i, *-a-tl (°)	ուրարտ. դերբայակերտ ածանց, հայ. կազմում է ենթակայական դերբայ
-u	-ու < *-ues (°)	ուրարտ. դերբայակերտ ածանց (°), հայ. կազմում է բայանուններ և բայածականներ
-u(ne) [-u(n)]	-ու(ն) < *-u/u-no/i	կազմում է բայածականներ, դերբայներ
-v=i/ge [-v=y/j(>č?) (ə)]	-ա(ն)չ (°), -(ն)չ (°) -իչ (°), -ուչ (°)	դերբայակերտ/ածականակերտ ածանց, հայ. մահ բայածանց
Բայածանցներ		
-v=št- [-v=st-]	-ա/ու/ի/ե-ստ < *-v-st	ուրարտ. բայածանց, հայ. բայահիմքերից կազմում է անուններ
-(v)=- [-(-v)=-]	-աւ-, -ստ -, -տ- (°)	ուրարտ. բայածանց(ներ), հայ. բազմապատկական բայածանցներ (°)
-an- [-an-]	-ան-	բայածանց
-nu- [-nu-]	-նու- < *-nu-	բայածանց

Ածանցներ		Նշանակությունը
Ուրարտերենում	Հայերենում	
-ul- [-or-(°)]	-որ- (°)	բայածանց, հայ. կազմում է մահ անուններ

Ինչպես երևում է բերված աղյուսակից Վանի արձանագրություններում վկայված ածանցները մեծամասամբ զուգահեռներ ունեն հայերենում: Ընդ որում, դրանց գերակշռող մասը հնդեվրոպական ծագմամբ բնիկ հայերեն ածանցներ է: Առավել մանրամասն ուրարտական ածանցների և նրանց հայերեն զուգահեռ ձևերի մասին տե՛ս ստորև:

IV.3 ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

1. Նախածանցներ: Մասնագետները ուրարտերենում սովորաբար նախածանցներ չեն առանձնացնում, բացառությամբ Ն.Հարությունյանի, որը հնարավոր է համարում ուրարտերենում z- նախածանցի գոյությունը՝ նշելով վերջինիս նմանությունը հայերենի q- նախածանցի (նախդրի) հետ [H.Арутюнян, 2001(КУКН), էջ 476]: Մակայն մեր կատարած դիտարկումները մեզ քերել են այն հաստատ համոզման, որ ուրարտերենում հստակորեն տարանջատվում է ոչ միայն z-, որն անշուշտ պետք է կապել հայ. q-ի հետ, այլև՝ h-, j-, an-, n(i)-, t- և up- նախածանցները, որոնք քոլորն էլ զուգահեռներ ունեն հայերենում: Դիտարկենք դրանք առանձին-առանձին:

1.1 z(a)- [z(ə)-] - հայ. q-, ձ- < *għō: Ինչպես արդեն նշվեց, ուրարտերենում նման նախածանցի գոյությունը հնարավոր է համարում Ն. Հարությունյանը, ինչը նա արդարացիորեն հիմնավորում է Վանի արձանագրություններում առկա aš(u/a) - «հետապնդել(°), քշել(°), հետևել(°), քայլել(°)»²³³ - zaš(u) - «հետապնդել(°)» և ašg(u) - «գրավել» - zašg(u) - «ոչնչացնել, սպանել» բայերի համեմատումից, որոնք հաճախ հանդես են գալիս համանման համատեքստերում: Ինչպես իրավացիորեն նշում է Ն.Հարությունյանը, aš- և zaš- բայերի՝ իմաստով

²³³ Այս բառերի համար նման քարգնանություն է առաջարկում Ն.Հարությունյանը [2001(КУКН), էջ 476]: Մովսեսյանից հայտնաբերված Թոփուզավայի երկլեզվյա արձանագրության նորահայտ կրկնօրինակում ուրարտ. aš=d- (aš=t-) բայը համապատասխանում է ասոր. erēbu-ին՝ «մտնել, հեռանալ, ներս քերել, դուրս տանել և այլն» իմաստով [տե՛ս B.André-Salvini, M.Salvini, SMEA, 44/1, 2002, էջ 5-66]: Հմմտ. հայ. հ-աս (հաս-և-եմ, հաս-ան-եմ, հաս-ուց-ան-եմ) բայի հետ (տե՛ս III.2.3 կետ 6.1):

մոտ լինելը հատկապես պարզորոշ երևում է «suui-dulubi aš-ubi pari²³⁴» և «suui-d[u] zaš-ubi pari[]...» արտահայտությունների համեմատումից²³⁴:

Ալեհայտորեն նույն ածանցն է առկա նաև zač(u) - [zə=č(u) -] «անել, տալ» բայում. հմմտ. č(u)- «անել, տալ» - հայ.՝ ետ, տու, տու-ր. տե՛ս III.2.3 կետ 62.2): Մյուս կողմից՝ որոշ համատեքստերում zač- բայը հնարավոր է որ կազմված լինի ač/t- «ծախսել, ուտել, հատել» (հայ. հ-ատ-(ան)-եմ) բայից՝ z- նախածանցի հավելումով (zač- < z=ač-) (տե՛ս III.2.3 կետ 7.4): Այդ պատճառով որոշ դեպքերում դժվար է որոշել, թե հատկապես ո՞ր բայն է թարգմանված zač- գրի տակ: Այսպիսով, կարող ենք փաստել, որ հետևյալ ուրարտական բայերում բառակերպի z-ի տակ պարզորոշ երևում է z- հայ. գ-/ծ- նախածանցը.

Առանց z-ի բայաձևեր		Z-ով բայաձևեր	
[i(u)-]	«անել, կատարել, տալ»	[zə-i(u)-]	«անել, ստեղծել, կատարել, տալ»
[ač-]	«հատել, ծախսել, մսխել»	[z=ač-] (*)	«առանձնացնել, զատել»
ašg-	«զրավել, նվաճել», «ռչնչացնել»	z=ašg-	«սպանել, ոչնչացնել, կոտորել»
[as-]	«զալ, մտնել, բերել, հասնել, հասցնել և այլն»	[z=as-]	«զալ, հասնել, հասցնել և այլն»

1.2 ɸ-[h-] - հայ. հ-: Հանդիպում է միայն մեկ անգամ վկայված ɸ=ač-[h=ač-]²³⁵ «հատել(*), ուտել(*)» և բազմիցս վկայված ɸ=aš-[h=as-] «խմանալ, լսել, տեղեկանալ» բայերում: Առաջինը համապատասխանում է հայ. հատ-(ան)-եմ «հատել, ծախսել, կտրել և այլն», իսկ երկրորդը՝ հաս-(ան)-եմ բային, որը հայերենում ունի նաև «տեղեկանալ, հաստ լինել, լսել» իմաստները²³⁶:

²³⁴ H.Арутюнян, 2001(КУКН), էջ 254, ծան.14:

²³⁵ Տե՛ս УКН 130₁₅: Ն.Հարությունյանը, ելնելով համատեքստից, ɸa-č-u-bi-ի փոխարեն առաջարկում է կարդալ za (?)-du (?)-[bi] [КУКН, 176₁₅ և ծան. 21]: Եթե նկատի ունենանք, որ z-ad-(=z-ač-) բայի հիմքում կարող է ընկած լինել նույն ač- արմատը, ինչից որ ունենք h-ač--ը, ապա նրանց միանման համատեքստում հանդիս գալը և իմաստով մոտ լինելը միանգամայն հասկանալի է, և կարիք չկա այդ պատճառով ɸa-č-u-bi-ն կարդալ za (?)-du (?)-bi:

²³⁶ Առավել մանրամասն այդ մասին տե՛ս III.2.3 կետ 6:

1.3 i-[y-] - հայ. ի/յ- <*en: Հանդիպում է մեկ անգամ an=i=ardu=(ne) [an=y=ardu=(n)] «մեղավոր, անարդար» բառում: Կազմված է an-(հայ. ան-) ժխտական մասնիկից և i=ardu [y=ardu] (հայ. յ-արդ, -ու) հիմքից, որն իր հերթին բաղկացած է ardu (հայ. արդ, ու) «արդ, կարգ, ձև և այլն» բառարմատից և y- (հայ. յ-) նախածանցից: Եթե ուրարտ. jarane [y=ar=an] «պատվանդան, ցեխ» կամ «սրբավայրին կից ինչ-որ կառույց» բառի մեջ հնարավոր է տեսնել է հայ. յար «կից» բառարմատը՝ -an - հայ. -ան ածանցով (այս ածանցի մասին տե՛ս IV.3 կետ 2.13), ապա սույն բառում կունենանք y- նախածանցի գործածման ևս մեկ վկայություն:

1.4 an- - հայ. ան- < *n: Վկայված է մեկ անգամ՝ an=i=ardu=(ne) «մեղավոր, անարդար» բառում (տե՛ս նախորդ կետը): Հայերենում ցայսօր տարածված և ակտիվ ժխտական մասնիկ է:

1.5 n(i) - - հայ. ն(h)- < *ni, *nei «ցած»: Այս մասնիկը հայերենում առավելապես հերթագայվում է h/յ-ի հետ, օրինակ՝ ն-իւթ/h-իւթ, ն-այ-իմ/h-այ-եմ, ն-ստակ/յ-ստակ, ն-ե-ց-ուկ/յ-ե-ն-ում, բայց ոչ միշտ, ինչպես՝ ն-շոյլ/շող, ն-ստ-եմ, նի-ստ ն-կուղ և այլն: Ուրարտերենում այս ածանցով ունենք հետևյալ բառերը. 1) n=uld-[n=ord-] «ընդարձակել» - հայ. յ-որդ-եմ «ընդարձակել, ծավալել», 2) n=ul=u=šč-[n=uš=u=sč-] «առաջնորդել, վարել», հմմտ. ul=u=šč-[uš=u=sč-] «ուղղորդել, առաջնորդել» կազմված է ul=[uš-] «ուղևորվել, զննալ» (հայ. ուղի, յ-ուղ-արկ-եմ, յղ-եմ < *յ-ուղ-եմ) բայահիմքից՝ -u=šč-[-u=sč-] ածանցի հավելումով (այս ածանցի մասին տե՛ս IV.4 կետ 1.1), 3) n=ebsi-[n=ewš-i-]²³⁷ «մորթել» - հայ. աւշ-եմ, յ-աւշ-ատ/ուտ-եմ «հոշոտել, մորթել, կտրատել, մարմինը կտոր-կտոր անել» (տե՛ս III.2.3 կետ 39), 4) n=a-[n=ay-] «սպասել(*), մայել(*)» - հայ. ն-այ-իմ «մայել, հետևել, սպասել և այլն» (տե՛ս III.2.3 կետ 2.2): Բացառված չէ, որ նույն ածանցն է վկայված նաև ուրարտ. n-un- (< n=un-(*)) «զալ, հայտնվել» բայում, որը սովորաբար համեմատվում է խոտ. un- «զալ, հայտնվել» բայի հետ²³⁸: Եթե nirbe ուրարտերենում իրապես նշանակում է «իր, առարկա», ինչպես որ առաջարկում է Ի.Դյակոնովը, ապա այս բառում ևս հնարավոր է տեսնել հայ. n(i) - նախածանցը՝ n(i)=ir=be վերլուծ-

²³⁷ Ուրարտ. e-ի դիմաց հայ. ա-ի համապատասխանությունը բավական հաճախակի է, տե՛ս II.4.2 կետ 1:

²³⁸ Տե՛ս օրինակ M.Хачикян, 1985, էջ 47:

մամբ (հմմտ. հայ. իր «իր, առարկա», քառավերջի -be-ի համար հմմտ. qar=be «քար, ժայռ» - հայ. քար «քար, ժայռ», zel=be «ցեղ, տոհմ» - հայ. ցեղ «ցեղ, տոհմ» զուգադիպումները²³⁹): Վերոնշյալ որոշ քառահիմքերում ([n=uz=st-], [n=ewši-], [n=ord-]) ուրարտերենի n(i)-ով ձևերի փոխարեն հայերենում պահպանվել են j-ով տարբերակները (j-ուղ-արկ-եմ, j-աւշ-(ատ/ոտ)-եմ, j-որդ-եմ):

1.6 up- - հայ. h-ուպ- < *sub- «կից, մերձ»: Ուրարտերենում այս ածանցից ունենք՝ up=ardu=ç-, up=ardu=i=ale/ge «հրամայել(»), կարգադրել(»), օրինական ուժ տալ(») բայաձևերը և նույն հիմքից կազմավորված ç=up=ardu=ne բառը (տե՛ս հաջորդը): Արմատի համար հմմտ. ուրարտ. ardi=še «հրաման, կարգ և այլն» - հայ. արդ, -ու/ի «կարգ, ձև և այլն»²⁴⁰:

1.7 ç- - հայ. տ- «ան-, ոչ-, չ-» < *dus: Ուրարտական տեքստերում այս մասնիկով ունենք միայն çupardune բառը: Ի.Դյակոնովը այն համեմատում է խուտ. tubue «ուժեղ», tib- «ամրացնել» բառերի հետ (նա çupardune-ն վերլուծում է çupar=d(u)- ձևով՝ d(u)-ի մեջ տեսնելով ուրարտ. -d- բայաձանցը) [I. Diakonoff, 1971, էջ 76]: Սակայն հմմտ. նախորդ upardu- «կարգադրել(»), օրինական ուժ տալ(»), լիազորել(») բառի հետ: Եթե վերջինիս նման քարգմանությունը ճիշտ է, ապա ç=up=ardu=ne պետք է մոտավորապես նշանակի «անօրեն(»), անկարգ(»), անիշխան(»)՝ ժխտական *up=ardu=ne-ից²⁴¹:

Ամփոփում: Այսպիսով, կարելի է պնդել, որ ուրարտերենի մի շարք բառերում հստակ առանձնանում են հայերենի q-, h-, j-, և(h)-, հուպ-, տ-, ան- նախաձանցներ: Ուշագրավ է նաև այն փաստը, որ վերոնշյալ ածանցները բոլորն էլ, հայերենում բնիկ են: Նկատվող առանձնահատկություններից կարելի է նշել որոշ ուրարտ. բառերում և(h)- մասնիկի գործածումը հայերենի j-ով տարբերակների փոխարեն: Ընդհանրապես այս մասնիկը ուրարտերենում ակնհայտորեն առավել հաճախ է գործածվում, քան հայերենում:

2. Վերջաձանցներ: Վերջաձանցները ուրարտերենում կարող են անմիջապես հավելվել քառահիմքի վերջի ձայնավորին (այս ածանցները

որպես կանոն սկսվում են քաղաձայնով) կամ փոխարինել դրան (այս ածանցները սկսվում են ձայնավորով): Ներկայացնենք ուրարտական տեքստերում վկայված հիմնական անվանական վերջաձանցները առանձին-առանձին:

2.1 -v=je/hi-²⁴², -v=ħine [-v=h/hi-, -v=hin] - հայ. ջ, -ի, -ել, -իս (*): Մասնագիտական գրականությունում համարվում է պատկանելություն ցույց տվող ածանց²⁴³: Գ.Մելիքիշվիլին²⁴⁴ այս ածանցի ձևն է համարում -ħi(ni)-ն՝ ենթադրելով -ħini/-ħi հերթագայում: Այն, ըստ նրա, կազմում է. 1) հայրանուններ, ինչպես՝ ^mMenuaħi(ni), ^mIšpuuini-ħi(ni), 2) ցեղանուններ, ինչպես՝ ^mAbeliani/eħi, ^mDiau(e)ħi, ^mErikuaħi, 3) որոշ գոյականներ, ինչպես՝ šuħi «սարք(»)»²⁴⁵, kamnaħe «(»), panitħe «(»), qarmeħi «տոն(»), urišħi «զենք» 4) տեղանուններ՝ հոգնակիակերտ -li մասնիկի հետ միասին, ինչպես՝ ^mMenuaħinili, ^mRusaħinili, ^{SAL}Taririaħinili և այլն: Ի.Դյակոնովը²⁴⁶ խուտ. -ħi/e-ն և ուրարտ. -ħi/-ħe-ն համարում է ածականակերտ ածանցներ, որոնք ածականներ են կազմում հատկապես էթնիկական և աշխարհագրական անուններից, ուրարտերենում՝ նաև հայրանուններ: Նա ուրարտական տեքստերում հանդիպող ^mDiau(e)ħe, ^mUelekūħe տեսքի տեղանունները արդարացիորեն համարում է ածականներ՝ առաջարկելով դրանք համապատասխանաբար քարգմանել «Դիաու(ե)-ական», «Ուելիկու-ական»՝ որպես ածական²⁴⁷, այլ ոչ թե՛ «Դիաու(ե)խի», «Ուելիկուխի»՝ որպես գոյական, ինչպես անում է, օրինակ, Գ.Մելիքիշվիլին²⁴⁸: Գ.Վիլիելմը այս նույն ածանցն է տեսնում նաև eguru=ħe/ħu «մաքուր, անարատ, անպիղծ», baba-na=ħe (< babanə «լեռնային շրջան») և որոշ այլ բառերում, ինչպես

²⁴² Բառավերջում միշտ առկա է -ħe, քառամիջում՝ -ħi-:
²⁴³ Sbu J.Friedrich, 1933, էջ 9:
²⁴⁴ Г.Меликишвили, 1960, էջ 51-52; 1964, էջ 29-30:
²⁴⁵ Իրականում šuħe նշանակում է «նոր» [տե՛ս F.König, 1957, էջ 202; Н.Арутюнян 2001(КУКН), էջ 465], հետևաբար ածական է:
²⁴⁶ Diakonoff, 1971, էջ 70:
²⁴⁷ И.Дьяконов, 1963, էջ 30:
²⁴⁸ Ըստ այդմ, օրինակ՝ ¹Uçupursini LUGAL ¹Diaueħi արտահայտությունը, որը Գ.Մելիքիշվիլին քարգմանում է «Ուտուպուրշի-ն՝ արքան (տոհմ) Դիաուելիխի-ի» [Г.Меликишвили, 1964, էջ 33], պետք է քարգմանել «...արքան (տոհմ) Դիաուեական/յան/ցի», որտեղ, բնականաբար, ¹Diaue անունը դրված է ուղիղ և ոչ թե սեռ. նախած, ինչպես որ սխալմամբ կարծում է Գ.Մելիքիշվիլին:

²³⁹ Այս մասին տե՛ս նաև III.2.4 կետ 11:
²⁴⁰ Այս մասին տե՛ս նաև III.2.3 կետ 4.1:
²⁴¹ Հաղիի [KYKH 406] և Չելեքիբաղի [KYKH 406] արձանագրություններում այս երկու բառերը վկայված են համատեղ՝ միևնույն արտահայտության մեջ՝ հակադրվելով մեկը մյուսին (մանրամասն տե՛ս VI.2.4):

նաև -i-ձիթ (այս ածանցի մասին տես ստորև) քաղաղրյալ (ըստ իրեն) ածանցում²⁴⁹:

Հիմնականում համաձայնելով Ի.Դյակոնովի հետ՝ նախ ուզում ենք նշել, որ ուրարտերենում սույն ածանցը գործածվում է նաև ցուցական դերանունների և նրանցից կազմված մակբայական ձևերում, ինչպես՝ ina=օյնե, inuka=օյնե, iša=օյնե, išuka=օյնե (նախկին ընթերցմամբ՝ ikuka=օյնե), išer=օյնե, ineri=օյնե²⁵⁰: Ինչ վերաբերում է -օյնե/-իթե հերթագայությանը, ապա բացի վերոնշյալ դերանունների և դերանվանական մակբայների, -իթե տարբերակը վկայված է միայն այն դեպքերում, երբ սույն ածանց ստացած բառը դրված է եզակի ուղղականով, այսինքն չի ստանում որևիցե հոլովային վերջավորություն: Դրան հակառակ, ցանկացած թեք հոլովի կամ հոգնակի ուղղականի դեպքում առկա է -օյնե: Գ.Վիլհելմը այս հավելյալ ne-ն նույնացնում է հոլովների համաձայնեցման -n(e)- շաղկապիչ մասնիկի հետ՝ ենթադրելով, որ այն հավելվում է -իթե ածանցով կազմված բառերին, երբ վերջինս հանդես գալով իբրև լրացում՝ հոլովով համաձայնում է լրացյալի հետ: Սակայն դա այդպես չէ: Իրականում հավելյալ ne-ն առկա է բոլոր այն դեպքերում, երբ -իթե-ով կազմված բառին հավելվում է որևիցե հոլովային վերջավորություն՝ լրացում-լրացյալ կապակցության մեջ լինելուց անկախ (այս մասին մանրամասն տես V.2.11): Այս ածանցի մյուս առանձնահատկությունն այն է, որ սույն ածանցով ածանցվելիս բնավոր i-ով բառերի i-ն փոխվում է e-ի, ճիշտ ինչպես սեռական հոլովի դեպքում (մանրամասն տես V.2.5): Ինչ վերաբերում է այս ածանցի հայերեն գուգահեռի հարցին, ապա ուրարտ. -իi--ն թերևս կարելի է նույնացնել հայ. -ի ածանցի հետ՝ hi > i անցումով: Հայերենում -ի-ն կարող է ծագել ինչպես հնդեվրոպական բնավոր հիմքերի սեռականի *-sio ցուցիչից (*-sio > *-hio > -hi > -i/y)²⁵¹, այնպես էլ -(i)ios/-(i)iom/-(i)ia ածանցից²⁵² (վերջինս հնդեվրոպական լեզվում հիմնականում կազմել է ածականներ և ածականակերպ գոյականներ): Մյուս կողմից պարզ չէ սեպագիր

²⁴⁹ G. Wilhelm, 2004, էջ 125:

²⁵⁰ Նման մեկնաբանման համար տես V.3.4:

²⁵¹ Եթե նկատի ունենանք նաև այն փաստը, որ սույն ածանցը և՛ ֆունկցիոնալ, և՛ գործածման առումով շատ մոտ է սեռական հոլովին, ապա ուրարտ. -իթե/-իi--ի համար առավել հավանական է թվում ենք այս ծագումը:

²⁵² Տես Գ.Ջահուկյան, 1987, էջ 231-232:

իi/e-ի ճշգրիտ հնչումը. այն կարող է հնչել ինչպես՝ x, h, այնպես էլ՝ y կամ մոտ որևէ հնչյունով:

2.2 -(u)tu=իթե/-իi=ne: Մասնագիտական գրականությունում այս ածանցը համարվում է վերացական անուններ կազմող քաղաղրյալ ածանց: Ուրարտական տեքստերում առկա են այս ածանցով կազմված հետևյալ բառերը՝ LUGÁL-túhi(ne) «թագավորություն»²⁵³, LÚ-ta(ú)-túhi «առնականություն», «հերոսություն»²⁵⁴, LÚ-túhi(ne) (նույնն է նախորդի հետ(*)), huṭutú(ú)hi «հաջողություն»: Ի.Դյակոնովը հնարավոր է համարում, որ LUGÁL-túhi(ne)-ին և LÚ-túhi(ne)-ին ընթերցվի LUGÁL.TÚ-իi(ne) (=SÁRRU.TÚ-) և LÚ.TÚ-իi(ne) (=AMÉLU.TÚ-) համեմատելով աքքադ. šarrūtu «արքայական կյանք» և amēlūtu «մարդիկ, մարդկություն» ձևերի հետ: Ըստ այդմ նա վերոնշյալ բառերը համապատասխանաբար թարգմանում է «արքայական իշխանություն/արժանապատվություն», «կենդանի ավար(*)»²⁵⁵: Հնարավոր համարելով, որ huṭutú(ú)hi-ի մեջ նույնպես կա -մtu աքքադական մասնիկ, որը տարածվել է տվյալ ուրարտական բառի վրա: Նման մոտեցման դեպքում huṭutú(ú)hi-ն թերևս պետք է ընթերցել huṭu-TÚ-իe(*): Առայժմ ստիպված ենք փաստել, որ այս ածանցի հարցում ամեն ինչ չէ պարզ:

2.3 -a-lhe, -u-lhe: Հանդիպում են մի շարք տեղանունների մեջ, ինչպես՝ URU Meliṭi(=)a=lhe, KOR Կuš(=)a=lhe և այլն: Գ.Մելիքիշվիլին²⁵⁶ երկրների և քաղաքների անվանումներում հանդիպող -hali վերջավորությունը համարում է բնակավայրերի անվանումներ կազմող -hinili ածանցի մի տարբերակ (տես վերը՝ կետ 2.1), որից և, ըստ իրեն, դրափոխությամբ կազմված է -alhe ածանցը: Միևնույն ժամանակ նա չի քաջառում, որ վերջինս կարող է լինել քաղաղրյալ ածանց՝

²⁵³ Տես Գ.Меликишвили, 1964, էջ 29; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 420:

²⁵⁴ Այդպես է ըստ Մ.Շերեքելու [RA, XXXII, էջ. 32], որն ընդունում է նաև Գ.Մելիքիշվիլին [1964, էջ 29]: Ն.Հարությունյանը [2001(КУКН), էջ 467] և Գ.Վիլհելմը [2004, էջ 125] կրկնում են Ի.Դյակոնովի թարգմանությունը (տես ստորև):

²⁵⁵ И.Дьяконов, 1963, էջ 63, ծան. 71:

²⁵⁶ Г.Меликишвили, 1960, էջ 51-52; 1964, էջ 29-30:

-իe/-իi քաղաղրիչով²⁵⁷: Մ.Սավլինին առաջ է քաշում այն տեսակետը, որ սույն ածանցներին վերագրվող a և u ձայնավորները պատկանում են հիմքին և հետևաբար իրական ածանցը 1իe-ն է [1971, էջ 95-96]: Նույնը կրկնում է նաև Գ.Վիլիելմը [2004, էջ 125]: Մեզ թվում է, որ Գ.Մելիքիշվիլու կողմից դիտարկվող դրափոխության տարբերակը քիչ հավանական է, քանզի անբացատրելի է մնում -ulիe տարբերակի ծագումը: Ինչ վերաբերում է Մ. Սավլինիի կողմից առաջ քաշված տեսակետին, ապա այստեղ թույլ կողմը *-i/e=1իe տարբերակի բացակայությունն է ուրարտական տեքստերում, քեև i հոլովման բառերը անհատարածվածն են այնտեղ: Միակ քանը, որ առայժմ հնարավոր է վստահաբար ասել, այն է, որ սույն ածանցը քաղաղրյալ է և որ նրա երկրորդ քաղաղրիչի տակ քաքնված է պատկանելության -իe/-իi-ածանցը (տե՛ս վերը): Դա հստակ երևում է ուրարտական տեքստերում սույն ածանցի վկայություններից, որոնցում -a/u=1իe ածանցը հերթագայում է պատկանելության -իe/-իi ածանցին կամ սեռական հոլովին (այս մասին տե՛ս V.2.5 կետ 3): Բացառված չէ, որ -u/a-1իe-ն պետք է տարանջատել բուն տեղանունից՝ դրանց մեջ տեսնելով ուրարտ. ule «ուրիշ, այլ» և ale «այլ» դերանունները: Հմմտ. օրինակ՝ ^{URU}Eratēlie-ule «երատելիե-ուրիշ» [KYKH 173 III₅₈] տեղանվան հետ, քայց այս դեպքում սպասվում էր՝ *-ule=իe, *-ale=իe, քեև չեն բացառվում՝ -ul=իe, -al=իe ձևերը:

2.4 -išիe, -išիi- [-isx, -isxi-] - հայ. -իսիս: Ուրարտական տեքստերում այս ածանցը կազմում է անուններ (Գ.Վիլիելմը այն համարում է քաղաղրյալ ածանց (-i=šիe/իi-), որի մեջ որպես երկրորդ քաղաղրիչ նա տեսնում է պատկանելության -իe/իi- ածանցը. տե՛ս վերը՝ կետ 2.1): Այս ածանցը ուրարտերենում հանդիպում է հետևյալ բառերում՝ hur=išիe [xor=isx] «ջրավազան(»)» (հմմտ. հայ. խոր «խոր, փոս», տե՛ս III.2.3 կետ 26), ur=išիe [ur=isx] «զենք, մետաղյա իր» (հմմտ. հայ. ուռն «կռան, մուրճ, գամ». հմմտ. նաև նույն արմատից կազմված՝ ^{L0}ur=urda- «մետաղագործ, դարբին», ur=išիe=use

²⁵⁷ Ի.Դյակոնովը սկզբնապես հնարավոր համարելով, որ սույն ածանցների մեջ -1-քաղաղրիչը ուրարտերենի հոգնակի ուղղակյանի -1e-ն է՝ հետագայում հրաժարվում է իր այդ տեսակետից [ДВ, 5, 1988, էջ 174-175, ծան. 22]:

«զինանոց, դարբնոց, մետաղամշակման արհեստանոց» բառաձևերը²⁵⁸): Թերևս նույն ածանցն է առկա նաև tu=išիe(») «մաքուր, պարզ(»)» (խոսքը գեռի մասին է²⁵⁹) (հմմտ. tu=ai/ge «մաքուր»՝ վերաբերում է ոսկուն), šur=išիe(») [sor=isx] «ախոռ»²⁶⁰ (հմմտ. հայ. սոր-ա-կալ «ախոռապան», տե՛ս III.2.3 կետ 57) բառերում: Առայժմ դժվար է ասել՝ արդյո՞ք այս նույն ածանցն է առկա նաև ^{L0}tardašիie(») < ^{L0}tarda=išիie(») անհայտ բառում: Հայերենում այս ածանցից ունենք խար-իսիս «խարիսիս, նավի երկաթ» և խոր-իսիս «մեղրահաց, մումով մեղր» բառերը²⁶¹:

2.5 -ibte, -ibti- [-iwt, -iwti-]²⁶² - հայ. -ոյթ, -ի (< *իլ-թի) < *եւլ-թի < *eu-ti: Գ.Մելիքիշվիլին համարում է բառակազմական ածանց՝ այն տեսնելով uštipt(e/ini) «արշավ» բառում, որը նա արդարացիորեն բխեցնում է ušտ- «արշավել» բայից²⁶³: Ի.Դյակոնովը²⁶⁴ բուն ածանցն է համարում -pti-ն, որը, ըստ նրա, կազմում է վերացական գոյականներ: Բացի վերոնշյալ բառից, նա այս նույն ածանցը տեսնում է նաև meri=pte «(»)», (հմմտ. mer- «(»)» բայի հետ²⁶⁵), DUB-te «զիր, ար-

²⁵⁸ Ur=išիe բառի և նրանից կազմված ձևերի նման քարգմանությունները տե՛ս III.2.3 կետ 45: Այլ հեղինակներ քարգմանում են՝ «զենք», «իր, առարկա, գույք» (այդ մասին տե՛ս Н.Арутюнян, KYKH (2001), էջ 475): Մ.Սավլինին, հիմնվելով ուրարտական տեքստերում առկա NIG.GA/ú-ri-iš-իi հերթագայության վրա, վերջինիս համար առաջարկում է «ունեցվածք, զանձ» քարգմանությունը [SMEA, 22, 1980, էջ 186], այնուհետև նույնը պնդում է [SMEA, 43/2, 2001, էջ 252]-ում, քայց բոլորովին հաշվի չի առնում Կելիշինի արձանագրությունը, որ վերջինս համապատասխանում է ասոր. bēlu-ին «զենք» [KYKH 30g]:

²⁵⁹ Այդպես՝ ըստ Մ.Վան Լոռնի [AnSt, Fs. Güterbock, 1974, էջ 189]: Ն.Հարությունյանը քարգմանում է՝ «ջրառատ(»), հորդառատ (»)» [2001 (KYKH), էջ 469]:

²⁶⁰ Այդպես՝ ըստ Բ.Պիտարովսկու [1988, KB III, էջ 43]: Ի.Դյակոնովը առաջարկում է «զինանոց(»)» կապելով այն šuri «զենք» բառի հետ [1963, էջ 91]: Մ.Սավլինին ^šsur-iš-իe (^šsur=išիe)-ի փոխարեն կարդում է ur-iš-իe [SMEA, 43/2, 2001, էջ 252]:

²⁶¹ Գ.Ջահուկյանը, հիմնվելով ուրարտերենում այս ածանցի գոյության փաստի վրա, հայ. խարիսիս և խորիսիս բառերի համար ենթադրում է ուրարտական հնարավոր ծագում [1987, էջ 438]:

²⁶² Սովորաբար ընթերցվում է -ip/b-ti-ne, -ip/b-te, հնարավոր է նաև ընթերցել՝ -ebti-ne[-ewti-n], -ebte[-ewt]: Վերջի i-ն պահպանվել է միայն հաջորդ -ne-ի առկայության դեպքում՝ շեշտի տակ:

²⁶³ Г.Меликишвили, 1964, էջ 30:

²⁶⁴ I.Diakonoff, 1971, էջ 146:

²⁶⁵ Այդ մասին տե՛ս նաև Н.Арутюнян, 1966, էջ 39 ծան. 143, 101; 2001(KYKH), էջ 455:

ճանազորություն» և իa=pti=ne «(*)» բառերում: Գ.Վիլհելմը²⁶⁶, - i(=)ptə վերլուծմամբ, սույն ածանցն է տեսնում ušt=i=ptə և mer=i=ptə բառերում՝ իմաստը համարելով անորոշ: Ուրարտ. [-iwte/i-]-ն անշուշտ համապատասխանում է հայ, -ոյթ-ը բաղադրյալ ածանցին, որը կազմված է հ.ե. -*ti մասնիկի հիմքի վրա: Հետագայում *eu > -ոյ անցման հետևանքով այն ստացել է -ոյթ, -ի տեսքը: Հայերենում, ինչպես և ուրարտերենում, այն կազմում է բայանուններ²⁶⁷, ինչպես՝ ծեր-ոյթ, -ի, գայր-ոյթ, -ի (գայր-ան-ամ), երև-ոյթ, -ի (երև-իմ) և այլն: Եթե ուրարտ. իa-pti-ne-ի մեջ իսկապես պետք է տեսնել ինչ-որ գոյական՝ կազմված իa- բայարմատից՝ -pti ածանցի հավելումով (ինչպես որ առաջարկում է Ի. Դյակոնովը), ապա վերջինս թերևս պետք է համեմատել հայ. նմանատիպ -լթ(-ա-լթ) ածանցի հետ, որը բայարմատներից կազմում է գոյականներ, ինչպես՝ ծակա-լթ «ծանոթ», ամա-լթ «ամոթ», աղա-լթ-ը «աղոթք» (հմմտ.՝ ճակա-լթ-ել, ամա-լթ-ել, աղա-լթ-ել բայերի հետ):

2.6 -u - հայ. -ու: Ի.Դյակոնովը համարում է դերբայակերտ ածանց, որը կազմում է նաև բայանուններ / բայածականներ: Եթե դա իրոք այդպես է, ապա այն անշուշտ համապատասխանում է հայ. -ու ածանցին, որը բայերից և բայահիմքերից կազմում է բայածականներ, ածականներ և մակբայներ: Այն, ըստ ամենայնի, ծագում է հ.ե. մերգործական սեռի կատարյալի *-ues դերբայական մասնիկից (առավել մանրամասն այս ածանցի մասին տե՛ս VI.3 կետ 2. տե՛ս նաև հաջորդը):

2.7 -u(=ne) [-u(=n)] - հայ. -ու(ս), -ոյ/-այ/-ի: Ըստ Ի.Դյակոնովի՝ դերբայներ կամ բայածականներ կազմող ածանց է, որը նա համեմատում է -u դերբայակերտ ածանցի հետ (տե՛ս նախորդը): Ուրարտերենում այս ածանցից ունենք՝ agunu=ne «ամուր, ամրացված», aniardu=(ne) [an=y=ardu=(n)] «մեղավոր» (հայ. *ան-յ-արդու-ս, որը պետք է նշանակել «անարդար», հմմտ. նույն արմատից կազմված յ-արդ-արու-ն «արդար», գ-արդ-(ար-ի)ն (< գ-արդու-ս) «գարդարուն») և tupaardu=ne [t=up=ardu=n] «անօրեն(*), անկարգ(*), անիշխան(*))» բառերը: Ուրարտ. [-u(=n)]-ն անշուշտ համապատասխանում է հայ. -ու(ս) ածանցին, որը առաջին հերթին բայահիմքերից կազմում է ածականներ, ինչպես նաև գոյականներ և մակբայներ (օրինակների համար տե՛ս VI.3

²⁶⁶ G.Wilhelm, 2004, էջ 125

²⁶⁷ Հազվադեպ՝ նաև այլ անուններ: Այս և հարակից հարցերի մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 240:

կետ 2): Գ.Ջահուկյանը այն համարում է բնիկ ածանց, որը մասամբ գալիս է հ.ե. *-o-mno-ից (միջին սեռի դերբայական ածանց), մասամբ՝ *-o-no/i, *-u-no/i (իզ. *-o-nā, *-u-nā) տիպի կազմություններից (այս *-no-ն, որի մեկ այլ տարբերակն է *-ni-ն, հնդեվրոպական լեզվում կազմել է ածականներ և բայանուններ)²⁶⁸:

2.8 -urde [-ord, -urd (*)] - հայ. -որդ, ի-ա, -ուրդ: Ի.Դյակոնովը այս ածանցի ձևը համարում է -o/urda-ն, որը նա առանձնացնում է L⁰ur=urda- և L⁰.GISga(?)r=urda բառերում՝ նշելով, որ այն ուրարտերենում կազմում է տարբեր մասնագիտությունների անվանումներ²⁶⁹: Բացի վերոնշյալ L⁰ur=urda= - «մետաղագործ, դարբին»²⁷⁰, L⁰.GISga(?)r=urda - «ինչ-որ մասնագիտության անվանում» (ըստ Մ.Մալվինիի՝ «ատաղձագործ»²⁷¹) բառերից, այս ածանցը հանդիպում է նաև L⁰purun=urda- «ինչ-որ մասնագիտություն» (Ն. Հարությունյանը ենթադրում է «տաճարի ինչ-որ ծառայող»²⁷²) բառում: Թերևս այս նույն ածանցն է առկա նաև šepurdi/e²⁷³ (=šep=urdi/e) բառում, հմմտ.՝ šep- «ծեփել», *šep=ane/L⁰šepi=kane «ինչ-որ մասնագիտության տեր մարդիկ (հավանաբար՝ ծեփագործներ)»: Ցավոք համատեքստից հնարավոր չէ պարզել վերջինիս հոլովը: Եթե մեր դիտարկումները ճիշտ են, ապա այն պետք է նշանակի «ծեփագործ», բառացի՝ *ծեփ-որդ և պետք է դրված լինի եզակի ուղղականով՝ ի հակադրություն -urda-ով կազմված բառերի, որոնք ամենայն հավանականությամբ դրված են որևիցե թեք հոլովի (առավել հավանական է քացառականի) հոգնակի թվով²⁷⁴:

²⁶⁸ Տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 234, 241:

²⁶⁹ I.Diakonoff, 1971, էջ 70 և 72:

²⁷⁰ Թարգմանությունը մերն է: Ն.Հարությունյանը համարում է ինչ-որ մասնագիտության անվանում [2001(КУКН), էջ 473], Ֆ.Ջոնիզը՝ «beamte» (պետական ինչ-որ ծառայող) [1957, II, էջ 208]: Հ.Կարապոզյանը թարգմանում է «մարտակառք վարող, կառավար»՝ համեմատելով հայ. վարորդ բառի հետ [1998, էջ 44-46]: Այս դեպքում միզուց ur=urda-ն (վանկազիր ú-ru-ur-da-) պետք է կարդալ bar=urda- (վանկազիր ba₈-ru-ur-da-): Մակայն նկատի ունենալով հայ. վար- արմատի իրանական ծագումը՝ նման ստուգաբանումը քիչ հավանական է:

²⁷¹ M.Salvini, 1988, (Bastam II), էջ 135:

²⁷² H.Арутюнян, 2001(КУКН), էջ 458:

²⁷³ Šep-՝ համաձայն հայ. ծեփ-եմ բայի (տե՛ս էջ 47), այլ հեղինակները կարդում են šip-:

²⁷⁴ Միզուց šepurdi/e-ն պետք է կարդալ հաջորդ ale-ի հետ միասին (տե՛ս [Ay-susi II₈])՝ šepurde(e)ale [šep=ord=ear] այս բառի մեջ տեսնելով հոգնակի

Այս ածանցն ակնհայտորեն պետք նույնացնել հայ. -որդ, ի-ա (մի-գուցե՝ նաև -ուրդ) ածանց(ներ)ի հետ, որոնք հայերենում նոր բառեր են կազմում բայահիմքերից, գոյականներից և ածականներից, դրանք հիմնականում, ինչպես և ուրարտերենում, նշանակում են զանազան մասնագիտություններ կամ մարդկանց խմբեր/տեսակներ, ինչպես՝ յետև-որդ, որս-որդ, փոխ-ան-որդ, նախ-որդ, առաջն-որդ, միջն-որդ, անց-որդ, ժողով-ուրդ, խորհ-ուրդ և այլն: -Որդ վերջավորությամբ բառերը հայերենում պատկանում են ի-ա խառն հոլովմանը²⁷⁵, որտեղ հնարավոր է որ պահպանվել են ուրարտական ածանցի -a/-i(°) ձայնավորները): Իսկ -ուրդ-ով բառերը պատկանում են տարբեր հոլովումների:

2.9 -(u)aše [-(-u)aš] - հայ. -(ու)ած: Ուրարտերենում -aše-ն սովորաբար համարվում է ետդիր՝ ներգոյական իմաստով կամ ներգոյական հոլովի ցուցիչ (locative-illative), տե՛ս V.2.9 կետ 3: Մակայն առնվազն ur-buaše «զոհ, զոհաբերություն» (կազմված է urbu- «զոհել, զոհ մատուցել բայից») և, քերես tanaš/i/e «կանթեղ կամ հենակ» (եթե միշտ է երկրորդ իմաստը, ապա այն հնարավոր է որ կազմված է tan- «դնել կամ հիմնել» բայից) բառերում (երկուսն էլ գոյականներ են), հանդես է գալիս որպես զուտ բառակազմական ածանց: Ըստ այդմ, այն պետք է տարբերել բառափոխիչ -(i)aše ածանցից (այս մասին տե՛ս V.2.9 կետ 3 և VII.2): Չեղծվ է իմաստով սույն ածանցը համապատասխանում է հայերենի -(ու)ած-ին, որը հայերենում կազմում է գոյականներ՝ հիմնականում բայերից (օրինակ՝ ասած, գործած, ծախած, որմած «պատ, ցանկապատ», անկած, կոտորած, աներած «ավեր», զոզած «զոզավորություն» և այլն) և ածականներ (արարած, ողորմած, ասած, ցաւած «հիվանդոտ», քնած կամ քնեած և այլն): Հետագայում այն փոխվել է դերբայակերտ ածանցի²⁷⁶: Մասնագիտական գրականությունում ընդունված է, որ հայ. -ած ածանցը ծագում է ած-եմ բայից, սակայն որոշ

հետազոտողներ տարբերակում են գոյականակերտ և ածականակերտ ածանցները, որոնց համար ենթադրում են տարբեր ծագում²⁷⁷:

2.10 -ure, -aure [-oɪ, -awɪ] - հայ. -ող, -աղ (-օղ), ի-ա: Ուրարտերենում այս ածանցները բայահիմքերից կազմում են դերբայներ: Անշուշտ համապատասխանում են հայ. ենթակայական դերբայի -ող/-աղ ածանցներին (կազմում են գործող անուններ): Մանրամասն տե՛ս VI.3 կետ 2.1:

2.11 -use/-usi-, -v=se/si-(°) [-oc/-oci-, -v=c/ci-(°)] - հայ. -ոց, ի-ա, -ց: Մասնագիտական գրականությունում այս ածանցի վերաբերյալ միակարծություն չկա: Նախկինում այն համարվում էր ածականակերտ ածանց, ինչի համար Գ.Մելիքիշվիլին²⁷⁸ քերում է հետևյալ օրինակները՝ badusi/e - «վեհաշուք(°)», LUGAL-(nu)si - «արքայական», ^(է)urišḫusi - «զինապահետ» (քառացի զինանոցային "оружейный" խոսքը շինության մասին է), inusi - «այդպիսի» և այլն: Գ. Վիլհելմը²⁷⁹ այն համեմատում է խուռ. հանդերձանք, պատշաճություն ցույց տվող -u/o=ssi ածանցի հետ, ինչպես՝ ašt=u/o=ss- «հագուստ» (ašti «կին»), šēn(a)=iffu=ssi «պատշաճ իմ երրորդ», pağ=u/o=ss- «զվարկ» (pağ/i/e «զլուխ»)՝ միևնույն ժամանակ նշելով, որ ուրարտերենում լավագույն դեպքում միայն մի քանի բառերում է հնարավոր տեսնել խուռիերեն ածանցին մոտ իմաստ²⁸⁰: Ուրարտերեն ածանցի իմաստը համարելով անորոշ՝ նա բերում է հետևյալ օրինակները՝ urišḫ=use - «զինանոց, զանձարան» (urišḫə «զենք», «գործիքի մաս»), aših=use «շինություն հացահատիկի համար», al=use «ղեկավար, տիրակալ», pul=use «կորոզ, ստելա», bad=use «կատարելություն(°)» և այլն: Մ.Մավլինին, անդրադառնալով այս հարցին, -use-ն համարում է գոյականներից վերացական գոյականներ կազմող ածանց՝ այս ածանցով կազմված բառերը թարգմանելով՝ urišḫ=use «հարստություն», LUGAL-(n=u)se «թագավորություն», bad=use «կատարելություն», daš=use «կանթեղ/լուսավորություն»,

նուղական šep=ordi/e-ից: Այդ դեպքում -eale [-ear]-ը կարելի է համեմատել հայ. հոգնակիակերտ -եար մասնիկի հետ:

²⁷⁵ Գ.Ջահուկյանը հնարավոր է համարում հայ. -որդ, ի-ա ածանցի ծագումը ի.ե. *dhro-ից՝ դրափոխությամբ [1987, էջ 237]:

²⁷⁶ Իրականում դեռ նախամաշտոցյան շրջանում -ած ածանց կարող էր հանդես գալ նաև դերբայական արժեքով: Դա են վկայում «վիպասանական» հայերենի մեզ հասած պատառիկները (այս մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 368):

²⁷⁷ Այս մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 249:

²⁷⁸ Г.Меликишвили, 1964, էջ 70:

²⁷⁹ G.Wilhelm, 2004, էջ 106, 126:

²⁸⁰ Ուշագրավ է, որ հայ. -ոց ածանցը ունի նաև խուռիերեն ածանցին համապատասխան իմաստ, ինչպես՝ կրկն-ոց, մեկն-ոց, թիկն-ոց. բոլորն էլ նշանակում են «թիկն-ոց, վերարկու, փիլոն», զլխ-ոց «զվարկ» (մնմ. խուռ. pağ=u/o=ss- «զվարկ»՝ pağ/i/e «զլուխ»-ից), ձեռն-ոց (արդի հայերենում) և այլն:

ird=use «պաշտպանություն»²⁸¹ (իրականում, հազվադեպ դեպքերում միայն՝ այս ածանցով կազմված բառերը կարելի է համարել ածականներ կամ վերացական գոյականներ): Հարցը պարզաբանելու համար քվարկենք բոլոր այն բառերը, որտեղ առկա է -(u)se/i- ածանցը՝ խմբավորելով դրանք ըստ իմաստի: Առաջին խմբում ընդգրկենք ակնհայտորեն զանազան շինություններ կամ առարկաներ/գործիքներ նշանակող բառերը, երկրորդում՝ դերանունները (դերանվանական հիմք ունեցող բառերը) և երրորդում՝ մնացածը:

1) ^Éadun=usi=ne - «ինչ-որ շինություն/տուն», ^Éaših=use/i=(ne) - «ինչ-որ շինություն/տուն», ^(É)su=use/i=(ne) - «սրբավայր, տաճար», ^(É)uriših=use/i=(ne) - «մետաղամշակման արհեստանոց, զինագործարան, դարբնոց»²⁸², ^(NA4)pul=use/i=(ne) - «արձանագրված սյուն/կոթող», paṭ=usi=(ne)/=ie²⁸³ (սովորաբար ընթերցվում է՝ bad=usi-) - «պարսպապատ, շրջապատ (գոյական) /պարսպապատ, (շրջա)պատված (ածական/մակբայ)»²⁸⁴: Այս վերջինը Ի.Դյակոնովը և Գ. Վիլհելմը արդարացիորեն վերլուծում են bad=usi=ie ձևով՝ համարելով, որ այն դրված է տրական հոլովով: Գ. Վիլհելմը, ելնելով այն փաստից, որ այն, որպես կանոն, չի համաձայնում մախադասության

²⁸¹ St'u M.Salvini, SMEA, 43/1, 2001, էջ 35-36:

²⁸² St'u III.2.3 կետ 45.2: Այլ հեղինակներ քարգմանում են՝ «պահեստ (զենքի/գործիքների)», «զանձատուն», այս մասին տես՝ Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 479:

²⁸³ Հմմտ. հայ. պատ «պատ» և ուրարտ. bad=g-(paṭ=g-) «շրջապատել» (տես՝ III.2.3 կետ 50.1):

²⁸⁴ Ուրարտական տեքստերում սույն բառը վկայված է մակ որպես գոյական, օրինակ՝ 1) ...^ušal-di-ni-e ba-du-si-e DUB-te te-ru-ú-bi a-li ^uAr-šu-ni-ú-i-ni DUB-te te-ru-ú-bi...- «Նաղդի-ին հոյակապ ձևով (՝) (մակբայ) արձանագրություն դրեցի ...» [KYKH 40օօօր.3; 41օօօր.2], 2) ... É-i-ni šī-di-šī-tú-ni i-nu-ki ba-du-si-ni ú-i gi-e-i šī-da-(g)u-ri «...տունն (É-ine) կառուցեց այդպիսի հոյակապ (՝), ոչինչ չէր կառուցված» [KYKH 18_{1,2} 19_{1,2}]: Տրված քարգմանությունները պետք է ուղղվեն, համապատասխանաբար՝ 1) «šaldi-ի badusi-ին արձանագրություն դրեցի ...», բառացի՝ «šaldi-ի-ին) badusi-ին», երկրորդում էլ դրված են տրական հոլովով (šaldi-ն հատկացուցիչն է, և -n(e)- մասնիկի միջոցով համաձայնվում է տրական հոլովով դրված հատկացուցիչ՝ badusi-ի հետ՝ ստանալով վերջինիս հոլովային վերջավորությունը), 2) «...տունը (É-ine) կառուցեց, այդ(պիսի) (՝) badusi-ne կառուցող չկար»: Այստեղ badusi-ne-ն հավանական է, որ գոյական է: Մտացվում է, որ ուրարտ. տեքստերում bad=usi--ից ունենք bad=usi=ie (տրական հոլով), bad=usi-ne (ուղղական հոլով) գոյականը և bad=usi=ie ածականը (մակբայը(՝)):

այլ անդամների հետ, այն համարում է մակբայ՝ գրված քարացած տրական հոլովով²⁸⁵, ինչն ընդունում է մակ Ի.Դյակոնովը²⁸⁶:

2) inu=se/i=(ne) - «այդ(պիսի), այն(պիսի)», šu=se/i=(ne/nele) - «ին», «սույն(՝)», ma=se/i=(ne/nele) - «իր, նրա» (սրանց մասին մանրամասն տես՝ V.3 կետ 1 և 2):

3) URU LUGAL-(n=u)se - «արքայական» (խոսքը քաղաքի մասին է) / «քազավորություն», ^{L0}AD-si=ni(ne) - «նախնյաց, հայրական», daš=use «կանթեղ/լուսավորություն», ird=use - «պաշտպանություն» (քերում ենք Սալվինիի քարգմանությունը, որը, սակայն, ոչնչով հիմնավորված չէ), alu=se «տեր, կառավարիչ», alu=si=ni/a=ne/EN-si=ni=ne - «տիրոնական», țiru=se - «չափի միավոր», ^(G15)šī=si=ne - «ինչ-որ առարկա/զենք»: Վերջին երկու բառերը ակնհայտորեն ածական չեն, țiru(=)se-ի մեջ -use-ն հավանական է, որ պատկանում է արմատին (՝), քեև չի բացառվում, որ այստեղ նույնպես գործ ունենք նույն ածանցի հետ: Al=use-ն քարգմանվում է «տեր, կառավարիչ», և հասկանալի չէ, քե ինչու պետք է aluse-ի մեջ առանձնացնել ածականակերտ -usi կամ -si ածանցը: Ինչ վերաբերում է alusi=ni=ne/EN-si=ni=ne-ին, ապա առաջինը բազմաթիվ անգամ վկայված է միայն alusi=ni=ne alsuišī=ne արտահայտությունում, որն ուղղակի նշանակում է «alusi--ի մեծությամբ»: Այստեղ alsui--ն գոյական է՝ դրված է սեռական հոլովով, և -n(e)- շաղկապող հարաբերական մասնիկի միջոցով համաձայնում է հատկացուցիչ՝ alsuišī--ի հետ և բնականաբար ոչ մի կապ չունի ածական անվան հետ: Նմանապես և՛ EN-sinine²⁸⁷-ն: Փաստորեն այս խմբից միայն LUGAL-(n=u)se և ^{L0}AD-si=ni(ne) բառերի մեջ է հնարավոր տեսնել ածականներ, այն էլ որոշ վերապահումներով, քանզի սյու երկու բառն էլ միայն մասնակի են գրված վանկազիր տեսքով, հետևաբար դրանց մեջ հնարավոր չէ արմատը վատահորեն առանձնացնել

²⁸⁵ Այս մասին մանրամասն տես՝ Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 98, 118-119, ծան. 19:

²⁸⁶ И.Дьяконов, ДВ, 5, 1988, էջ 165, 180, ծան. 64:

²⁸⁷ Այն վկայված է՝ ^ušal-di-ni-ni uš-ma-šī-ni/ba-ú-šī-ni/al-su-šī-ni EN-si-ni-ni համանման արտահայտություններում [KYKH 389₁, 241C₃₀, 406 և 407 և այլն]:

ածանց(ներ)ից²⁸⁸: Փաստորեն ուրարտերենում *-use/-usi-* ածանցով բառերը հիմնականում ակնհայտորեն գոյականներ են, որոնց մեջ գերակշռում են զանազան շինությունները (6 դեպք), ինչը պարզորոշ երևում է այս բառերը բնութագրող հատուկ նշանների՝ որոշիչների իմաստից (^Eadun=usi=ne, ^Eaših=usi/e=(ne), (^E)su=usi/e=(ne) և (^E)urišh=usi/e=(ne) բառերը բնութագրվում են *É* «տուն, շինություն», իսկ (^{NA4})pul=usi/e=(ne)-ն՝ NA₄ «քար» որոշիչով): Հետևաբար այս բոլոր բառերը պետք է նշանակեն ինչ-որ կառույցներ, այդ թվում՝ (^E)urišh=usi/e=(ne)-ն, որը Մ.Սավվինին քարզմանում է «հարստություն»: Սակայն լավագույն դեպքում այն կարող էր նշանակել «զանձարան», բայց ոչ երբեք «հարստություն»: Իսկ pač=usi=ne-ն պետք է նշանակի «պարսպապատ, շրջապատ» (գոյական է, չպետք է շփոթել pač=usi=ie «պարսպապատ» ածականի/մակերայի հետ), այլ ոչ թե «կատարելություն»: Ինչ վերաբերում է LUGAL-(nu=)se-ին, ապա այն տեքստերում հանդիպում է միայն URU LUGAL-(nu=)se բառակապակցությունում (հնարավոր է նաև ^{URU}LUGAL-(nu=)se) և ըստ երևույթին, պետք է քարզմանել «արքայանիստ քաղաք՝ վայր, որտեղ գտնվում է արքան»: Ակնհայտորեն խոսքը ինչ-որ կառույցի մասին է նաև irdu=se-ի դեպքում, քանզի տեքստում ունենք՝ šidi=št=u=be der=u=be ti=ne ^ašalde=i irdu=use «կառուցեցի, դրեցի անունը Խալդիի irdu=se» [shisheh₁₁ (SMEA, 43/1, էջ 36)]: Daš=use-ն վկայված է մեկ անգամ քրոնոգե կանթեղի վրա²⁸⁹, որտեղից և որոշվում է բառի իմաստը, և բնականաբար պետք է նշանակի «կանթեղ» և ոչ թե «լուսավորություն»: Այսինքն նույնպես գործ ունենք առարկայի և ոչ թե վերացական գոյականի հետ: Այսպիսով, *-use* մասնիկով ուրարտական տեքստերում ունենք 12 բառ՝ 10 գոյական և երկու դերանուն: Իսկ *-se-ով*՝ մեկ գոյական (^(GIS)š(i)=si=ne) և մեկ դերանուն (ma=si=ne²⁹⁰): ^{L0}AD-si=ni (ne)-ի և ^tiru (=) se -ի դեպքում պարզ չէ:

²⁸⁸ Մասնագիտական գրականությունում ^{L0}AD-si-ni բառաձևի արմատն է համարվում ^{L0}ate-ini «հայր» բառը, սակայն *-si-* ածանցով այն ոչ մի անգամ չի վկայված: Իսկ LUGAL-(nu)si ձևը Ն.Հարությունյանը համեմատում է *i/ernu-tuši-i* հետ՝ LUGAL-(nu)si-ի տակ տեսնելով *i/ernu-* արմատը:

²⁸⁹ St u M.Salvini, "Orientalia", 60, 1991, էջ 344-346:

²⁹⁰ Ի.Մեշչանինովը տալիս է ma-si-ni-ի այլ մեկնաբանում [1978, էջ 204]:

Հայերենում *-use/-usi-* ածանցին համապատասխան ունենք *-ng*, *ի-ա* ածանցը, որն ամենից առաջ կազմում է՝ 1) տեղ արտացոլող բառեր, ինչպես՝ թրծոց, խոհակերոց (խոհանոց), հալոց (հալելու աման), ծաղկոց (ծաղկանոց), հնոց, մարտկոց (կովելու տեղ, ամրություն), օթոց (մնջարան) և այլն, 2) ցույց է տալիս նաև՝ գործիք, միջոց, որով մի բան են անում, ինչպես՝ կտրոց, խայթոց, սղոց, մխոց (աման է), ջնջոց և այլն, 3) երբեմն արտահայտում է նաև այլ իմաստներ, այդ թվում նաև վերացական գոյականների. օրինակ՝ խտրոց «խտրակալություն»: Այս ածանցը իր իմաստով ամբողջությամբ համապատասխանում է ուրարտական *-use/-usi-*-ին:

2.12 *-v=ze/zi*, [*-v=c/ci*] - հայ. *-g(ի)* (°): Ի.Դյակոնովը ուրարտական *armu=zi* «սերունդ, զարմ» (հայ. *զ-արմ*, *-ոյ*), *našh=ze* «(°)» (հմմտ. *našh=be* «(°)», *naš-* «բերել, գլխավորել»), *harni=zi=nei* «(°)» բառերում հնարավոր է համարում առանձնացնել *-zi* մասնիկը, որը նաև համարում է անվանակերտ ածանց: Նա հնարավոր է համարում այս նույն ածանցի գոյությունը նաև *aš(a)ze* «հասույթ(°), ռոճիկ(°)»²⁹¹, *salzi/e* «զառիթափ(°)», ինչպես նաև *gal(a)zi/e* «(°)» և *zabzi/e* «(°)» բառերում²⁹²: Ըստ երևույթին, ինչպես երևում է ուրարտական տեքստերում վերոնշյալ բառերի վկայություններից, կարծես թե ուրարտերենում առկա են երկու տարբեր ածանցներ՝ *-ze[-c]* և *-zi[-ci]*: Առաջինը առկա է *armuzi* (զրում՝ *ar-mu-ze/i-(i)*), իսկ երկրորդը՝ *našh=ze* (զրում՝ *na-šh-ze/i-(e)*), *aš(a)=ze* (զրում՝ *aš-(a)-ze/i-(e)*) բառերում: Մյուսների համար պարզ չէ:

Սույն ածանց(ներ)ը թերևս պետք է համեմատել հայ. *-g/-gh* ածանց(ներ)ի հետ²⁹³, որոնք ծագում են *h.-h.* **-sk'* (*sk*)-ից (հնդեվրոպական լեզվում այն կազմել է ածականներ՝ մասամբ գոյականացված): Հայերենում առկա է *g-ով* կազմությունների երկու տիպ. 1) գուտ անվա-

²⁹¹ Եթե ճիշտ է Ի.Դյակոնովի կողմից *aš(a)ze* բառին տրվող «հասույթ(°), ռոճիկ(°)» իմաստը, որը կրկնում է նաև Ն.Հարությունյանը (2001(KYKH), էջ 437), ապա ամենայն հավանականությամբ այս բառի մեջ պետք է տեսնել *aš-[as-]* «զալ, հասնել, մտնել» (հայ. *ի-աս(-ան)-եմ* «զալ, հասնել և այլն») բայարմատը (հմմտ. հայ. *ի-աս*, *ի-աս-ույթ* «հաս, հասույթ, բաժին», տե՛ս IX):

²⁹² St u И.Дьяконов, 1963, էջ 70; I.Diakonoff, 1971, էջ 146, ծան. 153:

²⁹³ Հայերենում այս *-g/-gh* փոխարեն երբեմն առկա է *-u* կամ *-q*, ինչպես՝ *ել-ոյզ-ան-եմ*, *կոր-ուս-ան-եմ*, *փլ-ուզ-ան-եմ* փոխանակ՝ **ել-ուզ-ան-եմ*, **կոր-ուզ-ան-եմ*, **փլ-ուզ-ան-եմ*:

նական, որոնք զուգահեռներ չունեն քայական ց-ով ձևերի մեջ, 2) անվանա-քայական, որոնց մեջ նկատվում է անվանական և քայական ձևերի զուգահեռություն: Հաճախ -ց-ով քայական հիմքերը գործածվում են որպես ինքնուրույն անվանական ձևեր, ինչպես՝ ընթաց-ք՝ ընթանալ-ից, սառոյց՝ սառնալ-ից և այլն: Այս -ց-ից է գալիս հայերենի - (ա-, ե-)ցի ածանցը, որը ցույց է տալիս ինչ-որ տեղից լինելը կամ ծագելը²⁹⁴: Մրանից է կազմված նաև -ոց ածանցը, որն ուրարտական տեքստերում գրվում է -use/-usi- ձևով և ունի նույն իմաստը, ինչ որ հայերենում (տե՛ս նախորդ կետը): Ինչպես արդեն տեսանք, բացի -use/-usi-ից կազմվող բառերից, ուրարտերենում այս ածանցից ունենք ևս երեք-չորս բառ, որոնք քլորն էլ գոյականներ են: Փաստորեն ուրարտերենում -c(-g) մասնիկը, ի տարբերություն հայերենի, բացակայում է հոլովման և խոնարհման համակարգերում (այս մասին տե՛ս նաև V.2.10 և VI.2.5): Ըստ այդմ, կարելի է կարծել, որ ուրարտերենում այն հանդես է գալիս իր նախնական՝ բառակազմական գործառնությունով և ունի առավել նվազ գործածություն, քան այն ձեռք է բերում հետագայում հայերենում:

2.13 -(a, i)=ni/e [-a, i)=n(i)] - հայ. -ան, -ին, -ն: Ի.Դյակոնովը²⁹⁵ ուրարտական տեքստերում առանձնացնում է -(a)-ne/a- ածանց(ներ)ը՝ բերելով հետևյալ օրինակները. 1) -(a)na--ով՝ tarma=na/e=le «աղբյուրներ», burg=ana- «բուրգ, ամբոց, պաշտպանություն», ačq=ana- «զոհ, ընծա», 2) -a-nə-ով՝ baba=nə «կեռ», eba=nə «երկրամաս, երկիր», paša=nə «խոշոր եղջերավոր անասուն», 3) -ne-ով՝ paši=nə (տե՛ս նախորդը), ti=nə «անուն», ar(-a)=nə «բարություն», ĵara=nə «պատվանդան, ցեխ»: Նա նաև մատնացույց է անում, որ սույն ածանցները ձևով նմանվում են ուրարտերենի -nə որոշյալ հողին և պատկանելություն ցույց տվող -nə ածականակերտ ածանցին: Գ.Վիլհելմը²⁹⁶ -nə ածանցն է առանձնացնում ուրարտ. ti=nə «անուն» բառում՝ հնարավոր համարելով, որ այս նույն ածանցն է առկա նաև ebanə «երկիր», ĵaranə «կից կառույց», qarqaranə

²⁹⁴ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գ.Ջահուկյան, 1988, էջ 235-236: Բացառված չէ, որ հայերենի -ացի ածանցն է վկայված ուրարտ. ¹⁰tard=aš (=az/s)=he բառում՝ tard-ացի իմաստով, եթե իհարկե ուրարտ. -he/-hi- [-he/-hi-] - հայ, ի համապատասխանությունը ճիշտ է (տե՛ս վերը):

²⁹⁵ I.Diakonoff, 1971, էջ 66:

²⁹⁶ G.Wilhelm, 2004, էջ 125:

«զրահ»²⁹⁷, sirḫanə «ինչ-որ կառույց» բառերում, որոնց արմատները սակայն առանձին վկայված չեն: Նա գործառնությով՝ տարբեր, սակայն ձևով՝ նույն -nə ածանցն է տեսնում quldi=nə «խոպան» ածականում (պետք է ընթերցել՝ kuldi=ne - հայ. կորո): Նախ անդրադառնանք Ի.Դյակոնովի կողմից ենթադրվող -(a)-na- ածանցին: Նշենք, որ իր կողմից բերված tarmāna=le բառը սխալ ընթերցման արդյունք է և ներկայումս կարողացվում է tarmāne=le (հոգ. քիվ) և tarmāne (եգ. քիվ) տեսքով, իսկ burg=ana=ne և ačq=ana=ne բառերը, ըստ մեզ, պետք է վերլուծել՝ burga(=)na=ne, ačq(=)na=ne ձևով: Ačq(=)na=ne²⁹⁸-ի համար, որը սովորաբար թարգմանվում է՝ «զոհ, ընծա», «զոհաբերություն»^(*)²⁹⁹, Կելիշինի երկիզվյա արձանագրությունում ունենք հետևյալ համապատասխանությունը՝ [UDU.MÁŠ] GAL^{MEŠ} ačq-a-na-ne և [UDU].MÁŠ GAL^{MEŠ} e-qu-te «մեծ այծեր զոհաբերության (համար)» [KYKH 30 ուրարտ. 16/ատուր. 14], որտեղ e-qu-te (սեռ. հոլով e-qûtu (m)-ից) նշանակում է «զոհաբերության»: Ըստ այդմ, ačq(=)na=ne-ն կա՛ն պետք է դրված լինի սեռական հոլովով, կա՛ն լինի ածական՝ «զոհաբերության համար նախատեսված, մատաղացու» մոտավոր նշանակությամբ: Առավել հավանական է վերջինը: Ուրարտական տեքստերում -a-ni/e ածանցով ունենք նաև հետևյալ բառերը՝ kai=ani «կայան»³⁰⁰ (հայ. կայ-ան), am=ani «աման»^(*) (հայ. ամ-ան³⁰¹), alg=ani «սահման» (հայ. արգ, հմմտ. բք-արգ, արգ-ել-ան)³⁰²: Ինչ վերաբերում է իբր թե պատկանելություն ցույց

²⁹⁷ Հմմտ հայ. կարկառ «կույտ, զրահան, պատ» (տե՛ս III.2.4 կետ 13):

²⁹⁸ Ačqana հիմքից ուրարտերենում ունենք նաև ačqana=č- «զոհ մատուցել» բայը [տե՛ս H.Арутюнян, 2001(KYKH), էջ 439]:

²⁹⁹ Տե՛ս H.Арутюнян, 2001 (KYKH), էջ 439:

³⁰⁰ Թարգմանությունը մերն է (առավել մանրամասն այդ մասին տե՛ս VII.2): Ի.Դյակոնովը կասկածանքով թարգմանում է «նրա առաջ»^(*) [1963, էջ 72, 89]:

³⁰¹ Տե՛ս առանձին (III.2.1և III.2.2):

³⁰² Qu-du-la-ni/é (ku₃-tù-la-ni/é) «տաճար, կոթող» - հայ. կոթող, i-me-na-ni/é կամ i-mi-na-ni/é (գրվում է նաև ²URU₄-na-ni/é գաղափարագիր տեսքով) «հիմք» - հայ. հիմն բառերի մեջ բառավերջի -(a)-ni/e-ն ամենայն հավանականության հոլովային վերջավորություն է: Մրանք համապատասխանաբար վկայված են միայն հետևյալ բառակապակցություններում՝ qu-du-la-ni šú-hi-na-ši(e)-/GIBIL-ši [KYKH 36, L, II, 38b11; 270; 392; 4247] և i-na-(na)-ni i-me-na-ni/²URU₄-na-ni e-di-ni (հավանաբար դրված է քացառ. հոլովով, տե՛ս V.3 կետ 4) [KYKH 202, 247, Ay-susi II₄ (Ayani I)]:

տվող -i-ne ածանցին, որը համարվում էր լայն տարածում ունեցող ածականակերտ ածանց, ապա Գ.Վիլհելմը արդարացիորեն մերժում է այդ տեսակետը՝ այն համարելով շաղկապիչ մասնիկ, որը հավելվում է սեռական հոլովով դրված լրացմանը (հատկացուցիչին)՝ հոլովների համաձայնեցման ընթացքում ձայնավորների կուտակումներից խուսափելու նպատակով (այս մասին մանրամասն տես V.2.1 կետ 2): Այնուամենայնիվ ուրարտերենում առնվազն մի քանի բառերում կարելի է հստակ տեսնել -(i)ne/i ածականակերտ ածանցը, որը ոչ մի կապ չունի վերոնշյալ մասնիկի հետ: Ինչպես՝ alsu(i)=ne «մեծ» (հմմտ. alsu(i)=še «մեծություն»), urbi=ne «զոհաբերության համար նախատեսված, զոհաբերվող» (հմմտ. urb- «զոհել» բայը, ինչպես նաև urbi=ka=ni և urbi=ka=še անունները³⁰³) և այլն³⁰⁴: Ըստ երևույթին, այս բառերում նույնպես պետք է տեսնել նույն -(v)=ni/e ածանցը: Ուրարտերենում ունենք նաև -v=ne հոգնակիակերտ-հավաքական և -u=(ne) ածականակերտ ածանցներ, որոնց մեջ նույնպես հնարավոր է տեսնել նույն -ne տարրը (այս ածանցների մասին տես IV.3 կետ 2.7 և 2.14): Ըստ երևույթին, Ի.Գյակոնովի հիշատակած paḫi/a=nə «խոշոր եղջերավոր անասուն» օրինակը պետք է դիտարկել հենց այս՝ հոգնակիակերտ-հավաքական իմաստով (*):

Այսպիսով, ուրարտերենում -(a, i)=ni/e [-a=n(i), -i=n(i), -n(i)] ածանց(ներ)ով ունենում ենք հետևյալ բառերը՝ tarma=ni, «աղբյուր»³⁰⁵ կամ «թարմա»³⁰⁶, burgana=ni «բուրգ, ամրոց», atqana=ni «զոհաբերության համար նախատեսված» (ածական), baba=ni «կեռ», sirḫa=ni «ինչ-որ շինություն», eba=ni

«երկրամաս, երկիր»(*), ti=ni «անուն», ar(a)=ni «քարություն» կամ «առնական(ություն)»³⁰⁷, iar=ani «պատվանդան, ցեխ», alg=ani «սահման», kai=ani «կայան»³⁰⁸ (հայ. կայ-ան), ama=ni «աման(*)» (հայ. ամ-ան), qarqara=ni «գրահ» կամ «ճարմանք», kuldi=ne «խոսքան, խամ», alsu(i)=ne «մեծ» (ածական), urbi=ne «մատաղացու, զոհաբերվող(կենդանի)» (ածական): Այդ թվում՝ atqana=ne, urbi=ne, alsu(i)=ne, kuldi=ne, քերևս նաև՝ ar(a)=ni, baba=ni, tarma=ni, ti=ni, eba=ni բառերում բուն ածանցը -ni/e-ն է՝ kai=ani-ում, iar=ani-ում և alg=ani-ում ամենայն հավանականությամբ՝ -a=ni-ն: Մյուսների համար պարզ չէ:

Հայերենում համապատասխանաբար ունենք. 1) -ան, կազմում է գոյականներ և ածականներ՝ հատկապես բայահիմքերից (բայց ոչ միայն), ինչպես՝ կայ-ան, -ի, խոր-ան, ի-ա, հնձ-ան, ի-ա, շրջ-ան, ի-ա, ջնջ-ան, ի-ա, որդ-ան (կարմիր ներկ՝ որդև-ից) և այլն, 2) -ին, ի թիվս այլ գործածությունների կազմում է նաև ածականներ, ինչպես՝ վեր-ին, մթ-ին, ստոր-ին, խոր-ին, միջ-ին և այլն, 3) -ն, որպես ածանց գրաբարի բազմաթիվ բառերում արդեն չէր գիտակցվում, ինչպես՝ անձ-ն, առ-ն (հմմտ. ուրարտ. ar(a)ni), եզ-ն, արդ-ն և այլն: Մյուսը մասամբ գալիս են հ.-ե. *(-e, -o)-no/i, -*nā ածանցից, որն սկզբնապես կազմում էր ածականներ և բայանուններ, մասամբ՝ *-en/-on-ից, մասամբ էլ՝ այլ տեղերից³⁰⁹:

2.14 -(i)a=ne, -ne[-(i)a=n, -n] - հայ. - (ե)ան, -անի, -ն (հոգնակիակերտ-հավաքական ածանցներ): Ուրարտերենում ունենք հավաքական իմաստով գործածվող մի շարք բառեր, որոնք ստանում են -(i)ane, -ne վերջավորություններ: Առաջին հերթին այս բառերի մեջ պետք է առանձնացնել ^{L0}daršu=ane ^(MES) [^{L0}darsu=an] «մարդիկ, մարդկանց խումբ» (հայ. դա(ր)ս, -ու. տես III.2.3 կետ 14) և ^{L0/SAL}uedia=ne ^(MES) (սեռ. ^{L0}uedia=ne=i) «կանայք, կանանի» (հմմտ. ^{L0}uedia=չ- «կին դարձրեցի» բայի հետ) բառերը: Ամենայն հավանականությամբ այս

³⁰³ Վերջին երկուսի մասին տես IV.3 կետ 2.16:
³⁰⁴ Նմանատիպ ածանց է առկա նաև ուրարտական հատուկ անուններում, ինչպես՝ ⁴Airaini/e, ⁴ḫutuini/e, ²Iḫpuuini/e, ⁴Nalaini/e, ⁴Siuini/e, Waruba(i)ni/e, Ardini/e, ^{UR}Arḫuniuini/e, ^{KUR}Bia(i)ne=le, ^{KUR}Elaini/e և այլն: Ընդհանրապես ուրարտերենում -ni/e մասնիկը հանդիպում է տարբեր դիրքերում և ունի տարբեր ֆունկցիոնալ նշանակություն ու ծագում, որոնց տարբերակումը հաճախ դառնում է անհնար: Օրինակ՝ նույն տեսքի մասնիկ է առկա, որպես բաղադրյալ տարր, նաև -usine և -v=šine ածանցներում, որոնք հաճախ հանդես են գալիս -use-ի և -v=še-ի փոխարեն՝ հատկապես -kai(ne) ետդիրից և pei(ne) ետադրությունից առաջ: Սակայն հազիվ թե վերջինս կապ ունենա վերոնշյալ ածանց(ներ)ի հետ: Ուրարտերենում այս նույն տեսքն ունեն նաև բացառական և ուղղական (եզ. թիվ՝ որոշյալ առումով) հոլովների վերջավորությունները:
³⁰⁵ Այդպես՝ ըստ Ի.Գյակոնովի [1963, էջ 61, 91; 1971, էջ 66, 77, 85]:
³⁰⁶ Հմմտ. հայ. թարմա [Գ.Ջահուկյան, 1988, 143]:

³⁰⁷ Հմմտ. հայ. առև [Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 435]:
³⁰⁸ Ի.Գյակոնովը [1963, էջ 72, 89] կասկածանքով թարգմանում է «երս առաջ (*):»
³⁰⁹ Այդ մասին մանրամասն տես Գ.Ջահուկյան, 1987, էջ 234, 238, 241:

նույն ածանցն է առկա նաև ³¹⁰šep=ane/i «ծեփողներ, ծեփագործներ»³¹⁰, and=ane/i «հանդեր» (հայ. (h)անդ(“) ³¹¹) բառերում³¹²:

Հայերենում ունենք հոգնակիակերտ-հավաքական իմաստ արտահայտող՝ -(ե)ան, անի, ածանցները, ինչպես՝ կուս-ան, ի-ա «կուսանք», խուժան, -ի «խաժուռուժ ամբոխ», Մսան, -ի «մկանուճք», ազատ-անի, երից-անի, գլխ-անի «գլուխներ», ևամակ-անի, ավագ-անի, կան-անի և այլն (որպես կանոն -անի-ով բառերը պատկանում են ո-ա խառն հոլովմանը): Հայերենում վերոնշյալ -ան և -անի ածանցներով կազմված և հավաքական իմաստ արտահայտող բառերը հոլովվում են եզ. թվով, օրինակ՝ կանանի - սեռ. կանանույ, երիցանի - սեռ. երիցանույ և այլն: Նույն պատկերն է նաև ուրարտերենում, ինչը պարզորոշ երևում է ^{L0/SAL}uedia=ne=i բառաձևից (սեռական հոլով, եզ. թիվ): Իսկ այն, որ ^{L0/SAL}uedia=ne-ն պետք է ընկալել հոգնակիակերտ-հավաքական իմաստով, հաստատվում է ^{L0/SAL}uedia=ne^{MEŠ} գրությամբ, որտեղ MEŠ որոշիչ նշանը ցույց է տալիս հոգնակիություն (հմմտ. նաև ^{L0}darš=ane^{MEŠ} «մարդիկ, մարդկանց խումբ»): Հայագիտական գրականությունում այս ածանցների ծագման վերաբերյալ առկա են տարբեր կարծիքներ³¹³: Ուրարտական տեքստերում այս ածանցների վկայությունը խոսում է դրանց հին լինելու մասին:

2.15 -v=še, -v-ši(=ne) [-v=s, -v=si(=n)]: Ուրարտերենում տարածված ածանց է: Սրանով կազմված բառերը իրենց ուղիղ ձևերում ստանում են -še վերջավորություն, ս7ակայն եթե բառը հոլովվում կամ հավելյալ ածանցվում է, ապա՝ -ši-: Այն ունի հետևյալ հիմնական կիրառու-

³¹⁰ Ն.Հարությունյանը բարգմանում է «ինչ-որ մի շինարարական մասնագիտություն» [KYKH (2001), էջ 461-462] այն արդարացիորեն համեմատելով ^{L0}šipikani (= ^{L0}šepikani/e) և šip- (=šep-) (բայ) բառերի հետ: Ի.Դյակոնովը համարում է անձնանուն [1963, էջ 36, 94]:

³¹¹ Բառի ստուգաբանումը ըստ Գ.Ջահուկյանի [1988, էջ 149-150]:

³¹² Բացառված չէ, որ հավաքական իմաստով է պետք ընկալել նաև սրանց հետ միևնույն համատեքստում վկայված pahī=ne^{MEŠ} «խոշոր եղջերավոր կենդանիներ» (հայ. պախիտ), սլխս=ne^{MEŠ} «տղտղ» (հայ. ուղտ, -ու) բառերը: Թեև հնարավոր է բառավերջի -ne-ի այլ մեկնում:

³¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս Н.Мкртчян, “Армянские ареальные показатели множественности”, Уфрđ. 2000, էջ 369-377:

թյունները³¹⁴. 1) բայափոխներից կազմում է վերացական գոյականներ, ինչպես՝ ar=u=še «բարեգործություն, բարեգործություն»՝ ar- «տալ» բայից (հայ. յ-ար-եմ «հարել, միացնել» / առ-ն-ում «վերցնել, բերել» (Պ) (տե՛ս III.2.3 կետ 5)), izidu=še «կարգադրություն(“)»՝ izid=u- «կարգադրել, հրամայել(“)» բայից, manu=še «(“)»՝ man=u- «մնալ, լինել» բայից (հայ. մս-ամ, «մնալ») և այլն, 2) անուններից կազմում է վերացական գոյականներ (երբեմն միանգամայն կոնկրետ իմաստով), ինչպես՝ alsui=še «մեծություն»՝ alsui--ից (հմմտ. alsui=(i)ne- «մեծ»), ardi=še «հրաման, կարգադրություն»՝ *ardi--ից (հայ. արդ, -ի/ու «կարգ»), ulgu=še «ողջություն»՝ *ulgu--ից (հայ. ողջ, -ոյ «ողջ») և այլն, 3) արտահայտում է հոգնակիակերտ-հավաքական իմաստ, ինչպես՝ ^{L0}ar=še^{MEŠ} «պատանի(ներ)» կամ «այր(եր)» (հայ. այր, «այր»՝ հոգ. հայց. արս, տե՛ս էջ 42), ^{L0}wa(=)še^{MEŠ} «տղամարդ(իկ)»³¹⁵, kumemu=še (գաղափարագիր՝ ^{GTŠ}TUKUL^{MEŠ}) «զննքեր», ^{L0}tašmu=še «զերի(ներ)(“)», ^{L0}DUMU^{MEŠ}-ni=še «որդիներ», ԾՍԿՄ^{MEŠ}- =še «մարդիկ», III PIT.ԶԱԼ.ԼՍ=-š[e] (Պ) «3 հեծյալներ» և այլն³¹⁶, 4) ցույց է տալիս ինչ-որ տեղից լինելը, ինչպես՝ Biaini=še «Բիահին-(եցի)ներ», luluini=še «լուլուին-(եցի)ներ» (վերջին երկուսը վկայված են միայն ai-ի նախադաս հարադրմամբ):

Այս ածանցից է կազմավորված -ši=ne/-ši=ni- բաղադրյալ ածանցը, որն առկա է gunu=ši=ne «մարտիկ» բառում: Ուշագրավ ձև է III-še գաղափարագիր թվականը, որն ունի -še[-s] հնչյունական հավելումը: Վկայված է III-še UD^{ME} : na-ú-be - «երեք օր սպասեցի (Պ)» (թարգմ. ըստ Ի.Դյակոնովի) արտահայտությունում: Հմմտ.

³¹⁴ Այս ածանցի և նրա հնարավոր իմաստների մասին տե՛ս նաև Г.Меликишвили, 1964, էջ 29; I.Diakonoff, 1971, էջ 59; М.Хачикян, 1985, էջ 64; G.Wilhelm, 2004, էջ 125 և այլն:

³¹⁵ ^{L0}ar=še^{MEŠ} և ^{L0}wa=še^{MEŠ} բառաձևերի հավաքական իմաստի համար տե՛ս նաև I.Diakonoff, 1971, էջ 69:

³¹⁶ Բացառված չէ, որ այս նույն ածանցն է առկա նաև՝ ^{UDU}šusē/UDU-še, ÁB-še, GUD-še բառերում: Մասնագիտական գրականությունում համարվում է, որ ^{UDU}šusē-ի վերջի -še-ն պատկանում է հիմքին, իսկ UDU-še, ÁB-še, GUD-še ձևերը Յ.Ֆրիդրիխը առաջարկում է կարդալ՝ UDU.ŠE, ÁB.ŠE, GUD.ŠE՝ ŠE-ի տակ տեսնելով «պարարտ» գաղափարագիրը, ինչպես որ խեթական սեպագրերում է [1952, էջ 298]:

հայ.՝ երե-ք, չորե-ք թվականների հետ: Իր գործածությամբ և նշանակությամբ այս -še [-s] ածանցը հիշեցնում է հայ. հոգնակի ուղղականի -ք (հայց. -ս) մասնիկը, որը հայերենում հանդես է գալիս նաև բառակազմական իմաստով, ինչպես՝ անցք, գիրք, երեք, չորեք, միտք, վազք, զարմանք, հմայք, փուլք(փուլքս), մորուք(մորուս) և այլ բազմաթիվ բառերում (նման գործածությամբ գործում է նաև արդի հայերենում): Հայերենում -ք-ից ունենք նաև -քիս, -քեան ձևերը, ինչպես՝ երկոքիս «երկուսը միասին», երկոքեան և այլն: Հայերենում այս ածանցներով կազմված բառերը հոլովվում են հոգնակի թվով (անեզական բառեր են): Մինչդեռ ուրարտերենում [-s/-si-] ածանցը գիտակցվում է հիմքի մաս³¹⁷, համեմայն դեպս վերացական գոյականների իմաստով հանդես գալուց: Հայ. ք-ի ծագման հարցում մասնագետների շրջանում միասնություն չկա, ըստ առավել տարածված կարծիքի՝ այն ծագում է հնդեվրոպական լեզվի հոգնակի ուղղականի *-es/-*os վերջավորությունից³¹⁸:

2.16 -i=ka(=ne), -a=ku=ne [-i=ka(=n), -a=ku=n] - հայ. -կ(ս), -ուկ, -իկ, -իկ-ան: Ուրարտերենում այս ածանցներից ունենք՝ ^{L0}šepi=ka=ne [šepi=ka=n]³¹⁹ «ծեփագործ(ներ)(*)» (հմմտ. šep- «ծեփել» - հայ. ծեփ-եմ), ^{L0}urbi=ka=ne, «զոհաբեր(վ)ող(*), (զոհ) մատուց(վ)ող(*)», ^{L0}urbi=ka=še³²⁰ «*» (հմմտ. urb- «զոհել, զոհ մատուցել», urbi=ne (ածական) «զոհաբեր(վ)ող(*)»), ušt=ak=une [ošt=ku=n] «(*)» (հմմտ. ušt- [ošt-] «արշավել» - հայ. ոստ(ա)նում «ցատկել, ի բաց հեռանալ և այլն») ³²¹: Հայերենում -կ(ս) (հոգն. ուղղ./հայց. -կուս-ք/ս, թեք

հոլով. -կան) ածանցով ունենք բազմաթիվ բառեր, ինչպես՝ արմու-կն, դալու-կն, կրու-կն, մու-կն, արեգա-կն, կայծա-կն և այլն: Այս ածանցը գալիս է հ.-ե. -kōn/kon-ից (բաղադրյալ ածանց է՝ կազմված -ko/kō-ից՝ -ո մասնիկի հավելումով): -իկ, -ուկ ածանցները հայերենում բավական տարածված են: Դրանք հիմնականում ունեն փոքրացուցիչ-փառաբանական կամ անձ ցույց տվող իմաստ, ինչպես՝ աղջ-իկ (-կան), աստղ-իկ (-կան), խցիկ (-կան), ման-ուկ, մարգ-իկ, մարտ-իկ, ռազմ-իկ, մայր-իկ, փոքր-իկ (-կան) և այլն, իսկ մարդ-իկ (-կան) բառում՝ նաև հոգնակիակերտ: -իկ-ան ձևով ունենք ղըջ-իկ-ան «չղջիկ» բառը: Մրանք մասամբ գալիս են նախադրից՝ բառավերջի ս-ի անկումով³²², մասամբ ունեն իրանական ծագում, որոնք հայերենում խառնվել են: Բնիկ պետք է համարել հատկապես նրանք, որոնք հոգ. ուղղ./հայց. և թեք հոլովներում պահպանել են վերջին -ս-ն (-կան/-կուս-ք/ս)³²³: Ուրարտերենում այն վկայված է -ku=ne և -ka=ne ձևերով: Նյութի սակավության պատճառով առայժմ դժվար է խոսել այս երկու տարբերակների թեք կամ ուղիղ հոլովները ներկայացնելու մասին: Ելնելով համատեքստից՝ թերևս կարելի է ենթադրել, որ ^{L0}šepi=ka=ne բառը դրված է սեռական հոլովով³²⁴: Եթե դա իրոք այդպես է, ապա թերևս կարելի է մտածել, որ սույն ածանցի երկու տարբերակների (ձայնադարձերի) համար հոլովման համակարգում գործում է հայերենին համանման բաշխում: Մակայն դա մեզ քիչ հավանական է թվում:

2.17 -(u)=mene [-(-u)=men] - հայ. -(ու)մս (թեք հոլով. -(ու)ման, հոգ. ողղ./հայց. -(ու)մուս-ք/ս) <*-men: Ի.Դյակոնովը հնարավոր է համարում ուրարտ. sudumeniedi «(*)» (ըստ իրեն՝ պետք է վերլուծել՝ sud=umə=nedə³²⁵) բառի մեջ առանձնացնել -umə ածանցը, որը նա

³¹⁷ Ինչպես արդի հայերենում, օրինակ՝ խոսք (սեռ. խոսքի, գործ. խոսքով), օրենք (սեռ. օրենքի, գործ. օրենքով) և այլն:

³¹⁸ Մանրամասն տե՛ս Գ.Джаукян, 1982, էջ 139 և 222 ծան. 75:

³¹⁹ Ն.Հարությունյանը այն բաղադրում է ^{L0}šipi-kani ձևով՝ -kani-ի մեջ՝ տեսնելով ուրարտ. -ka (i) նաղիրը՝ «առջև» իմաստով, իսկ բառն ամբողջությամբ բարգմանում է «šipi-ի (šipi մարդու) առաջ» [Н.Арутюнян, 2001(КΥKH), էջ 462]: Մակայն հմմտ. համանման ^{L0}urbi=kani/e=kai «urbi=ka=ni/e-ի առաջ», որ միաժամանակ առկա է և -ka (i) նաղիրը, և -ik-ani/e բառակազմական ածանցը:

³²⁰ Այս ձևը վկայում է ուրարտերենում -v-ka ածանցի գոյության մասին, որը համապատասխանում է հայ. -ա/ու/ի-կ-ին: Վերջինս համարվում է իրանական փոխառություն, բայց ոչ միշտ:

³²¹ Բացառված չէ, որ այս ածանցն է առկա նաև ^{L0}ú-di-ku₉-né (^{L0}udi=ku=ne) (սովորաբար ընթերցվում է ^{L0}ú-di-qu-ni) «կառավարիչ(*), մարզպան(*)» բառում, հմմտ. ú-di-da-be «(*)» հնարավոր բայածիկի հետ: Այս դեպքում udi/e- արմատի մեջ՝ ստ.1/e- ընթերցմամբ, թերևս կարելի է տեսնել հայ. ուտ-եմ բայարմատը: Իմաստի համար հմմտ. հայ. կեր «թեմ, գավառ» բառի հետ, որի նման իմաստը գալիս է «ուտելու» գաղափարից [տե՛ս Հ.Աճառյան, ՀԱՐ, II, էջ 576]:

³²² Այս գործընթացը շարունակվել է նաև հետագայում, որի արդյունքում արդի հայերենում այս ածանցով կազմված շատ բառեր, որոնք գրաբարում դեռ պահպանում էին բառավերջի -ս-ն, կորցրել են այն:

³²³ Այս և հարակից այլ հարցերի մասին առավել մանրամասն տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 238-239; Ա.Արախամյան, 1976, էջ 27-34 և այլն:

³²⁴ Արձանագրության այն հատվածում, որ վկայված է ^{L0}šepi=ka=ne բառը, թվարկվում են զանազան մարդկանց խմբեր, որոնց մի մասը ակնհայտորեն դրված է սեռական հոլովով. տե՛ս Н.Арутюнян, КΥKH (2001), արձ. 412b ծան. 14:

³²⁵ Իրականում ուրարտերենի եզակի ուղևորական վերջավորությունը - (e) di է, և ոչ թե՛ -nedi, ինչպես որ ենթադրում է Ի.Դյակոնովը: Այս մասին տե՛ս V.2.8:

համեմատում է խուռ. -umme/-ume ածանցի հետ³²⁶: Մակայն ակնհայտ է, որ այստեղ գործ ունենք [- (u)men] - հայ. -(ու)մն (ար-մն «արմատ», քեղ-մն «քերք», գեղ-մն «քուրդ», հի-մն «հիմք», սեր-մն «սերմ» և այլն) ածանցի հետ: Ուրարտերենում այս ածանցով ունենք՝ imen- «հիմք» - հայ. հիմն, -ման/մուս-ք³²⁷ և վերոնշյալ՝ sud=u=mene («(*)» բառերը: Sud=u- արմատով կազմված վերոհիշյալ բառերը վկայված են միայն արձանագրություններից մեկում [KYKH 520 л.с.13, о.с.8, 8], մեկ անգամ sud=u=meni/e=edi գոյականի (ուղևորական հոլով *sud=u=me-ne/i-ից) և երկու անգամ sud=u=št=u (=ne) բայի տեսքով: Ուշագրավ է, որ հայերենում՝ -ու-ստ ածանցով ածանցվող բառերը -(ու)-մն-ով կազմություններում հանդես են գալիս հենց -ու-մն տարրերակով: Ինչպես ցույց են տալիս sud=u=št-/sud=u=meni- բառաձևերը, նույն պատկերն է առկա նաև ուրարտերենում (այս մասին տե՛ս նաև IV.4 կետ 1): Հայերեն -մն ածանցը ծագում է հ.ե. *-men/-mep-ից, որը հիմնականում կազմում է գործողության անուններ: Հայերենում այս ածանցի -ու-մն տարրերակը բայահիմքերից կազմում է բայանուններ, ինչպես՝ լք-ումն, հոլով-ումն և այլն. այն համարվում է համեմատաբար ուշ գոյացություն³²⁸ (տե՛ս նաև IV.4 կետ 1.1):

IV.4 ԲԱՑԱՄԱՆՑՆԵՐ

1. Ուրարտերենի բայաձանցները: Ուրարտերենի բայաձանցների դասակարգման մասին տե՛ս VI.1 կետ 1: Բայանուններ կազմող ածանցների մասին տե՛ս IV.3 կետ 2: Այստեղ մանրամասն կներկայացնենք այն բայաձանցները, որոնց քերականական իմաստը ուրարտերենում կան շատ թույլ է գիտակցվում, կան ընդհանրապես չի

³²⁶ Խոսելով խուռ. -umme, -ume ածանցի մասին՝ Ի.Դյակոնովը նշում է, որ բացառված չէ, որ ուրարտերենում այն վկայված է sud=ume-niedi («(*)», որը նա համեմատում է sud-u-št-u(ni) բայի հետ, ինչպես նաև kulme «պահուստ» բառերում: Վերջինը նա համեմատում է kul-u- «թողնել, փայլել» բայի հետ՝ ենթադրելով *kul-ume > kulme անցում [I.Diakonoff, 1971, էջ 146, ծան. 154]: Ավելի ուշ կրկին անդրադառնալով այս հարցին՝ նա նշում է, որ ուրարտերենում այս ածանցը ներկայացված է միայն մեկ կասկածելի բառով (հավանաբար նկատի ունենալով sudumeniedi-ն) [И.Дьяконов, 1979, էջ 75]: Գ.Վիլհելմը -umə-ն կասկածանքով նշում է որպես անորոշի ցուցիչ՝ բերելով հետևյալ օրինակները՝ ašhume «ընծայում(*)», sudumeniedi («(*)» [G.Wilhelm, 2004, էջ 125]:

³²⁷ Մտուգարաման համար տե՛ս IX:
³²⁸ Այդ մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 239:

գիտակցվում: Համեմայն դեպս եղած վկայություններում չի երևում:

1.1 -v-št- [-v-st-] - հայ. -ի/ա/ե/ու-ստ < *-v-s-ti: Ուրարտերենում տարածված բայաձանց է: Մինչ այժմ եղած բոլոր վկայություններում այն հավելվում է անմիջապես բայահիմքի քնավոր ձայնավորին, ինչպես՝ ama=št- «այրել» (հմմտ. am- «այրել»), šulu=št- «սողալ, գետին ընկնել» (հայ.՝ սող-ամ, սող-ու-մն), šidi=št- «կառուցել» (հմմտ. šid- «կառուցել»), sudu=št- («(*)» (հմմտ. sudu=meni- («(*)»)) և այլն³²⁹: Ուրարտ. տեքստերում այս ածանցի իմաստը պարզ չէ՝ չի երևում³³⁰: Հայերենում -v-ստ ածանցը բայարմատներից կազմում է բայանուններ (գործողության անուններ) և նույնպես հավելվում է բայարմատին (քնավոր ձայնավորին), ինչպես՝ ուտե-ստ (ուտ-ե-մ), հանգի-ստ (հանգ-չիմ <* հանգի-չի-մ), զգա-ստ (զգա-մ), իմա-ստ (իմա-նա-մ, իմա-ց), ելու-ստ (ելա-նե-մ, ել-ու-մն), փախու-ստ (փախ-չե-մ, փախ-ու-մն) և այլն: Այն ծագում է հ.ե. *-s-ti-ից, որը բաղադրյալ ածանց է³³¹: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայերենում սույն ածանցի -ու-ստ տարրերակից կազմված բառաձևերից շատերը նորակազմություններ են, որտեղ -ու-ն ունի նույն դերը, ինչ որ բայանուններ կազմող -(ու)-մն ածանցում³³²: Ինչպես երևում է ուրարտ. sudu=št- / sudu=men- ձևերի համեմատումից, նույն պատկերն է առկա նաև ուրարտերենում: Հմմտ. նաև՝ (n)=ulu=št- [(n)=ušu=sšt=-] «ուղևոր(վ)ել, առաջնորդել» - հայ. յղ-ու-մն < *յ-ուղ-ու-մն, šulu=št- [sošu=sšt=-] «սողալ, գետին ընկնել» - հայ. սող-ու-մն և այլն:

1.2 -(v)=t- (սովորաբար տառադարձվում է -(v)-d-) - հայ. -ատ-, -ոտ-, -տ- (*): Ուրարտերենում առավել հաճախ հանդիպող բայաձանցներից է: Կարող է դրվել ինչպես՝ u/o, a, i/e ձայնավորներից, այնպես էլ բաղաձայնից հետո: Տե՛ս, օրինակ՝ at=qa=na=(t=u)- «ընծայել, հատուցել», erš/i/e=t=u- «ազատել, քաղ թողնել», zani/e=t=a-

³²⁹ Գ.Վիլհելմը բուն ածանցն համարելով -v-št-ն ենթադրում է սրա ձայնավորի անմանում (նույնացում) նախորդող (արմատի/հիմքի) ձայնավորին (մանրամասն տե՛ս II.3 4 կետ 5):

³³⁰ Ի.Դյակոնովը, համեմատելով խուռ. -v-st- բայաձանցի հետ, հնարավոր է համարում, որ այն արտահայտում է գործողության ինտենսիվության, ավարտելիության իմաստ [1971, էջ 117] (տե՛ս նաև М.Хачикян, 1985, էջ 61): Մակայն եղած վկայություններից դա չի երևում: Գ.Վիլհելմը այն նույնպես համեմատում է խուռ. նշված բայաձանցի հետ՝ նշելով սակայն, որ ուրարտերենում սույն ածանցի նշանակությունը հայտնի չէ [G.Wilhelm, 2004, էջ 129]:

³³¹ Տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 240:
³³² Г.Джаукян, 1982, էջ 125-126:

[ʃajni/e=ɕ=a-] «ճայն տալ խոսել», n=ebši/ e=ɕ=u-[n=ew-ši/e=ɕ=u-] (հայ. յ-աւշ-ատ-եմ) և այլն: Վ.Սարգսյանը ուրարտ. - (v)=d- (ըստ իրեն -du-/-tu-) բայածանցը համեմատում է հայ. -ատ-, -ոտ-, -տ- բազմապատկական բայածանց(ներ)ի և բասկ. -tu «անել» վերջածանցի հետ, որոնց նախնական իմաստը նա համարում է «մի բան անել»-ն³³³: Գ.Վիլհելմը ուրարտերենում առանձնացնում է՝ -id-, -ud-, -ad- (մեկ անգամ), -d- բայածանցները, որոնք նա ձևով մտա է համարում խոտ. -ed- բայածանցին, նշելով սակայն, որ ուրարտերենում այս ածանցի իմաստը չի երևում³³⁴: Որոշ ուսումնասիրողներ այն բխեցնում են ուրարտ. d(u) - (=ɕ(u) -) «անել, տալ» (հմմտ. հայ. տա-մ, տու-ր, ե-տ, (ե)տու «տալ, անել») բայից³³⁵: Նման գործածություն ունենք նաև վերոնշյալ բայի հայ. գուգահեռի համար, որը նույնպես կարող է գործածվել այլ բայահիմքերի հետ (հատկապես՝ պատճառական իմաստով), ինչպես՝ մաս տալ, հուս տալ, ծայն տալ, զոռ տալ և այլն: Մակայն մեզ առավել հավանական է թվում, որ վերջինիս մեջ պետք է տեսնել հայերենի -ոտ-, -ատ³³⁶-, -տ- բազմապատկական բայածանցները, որոնցից ունենք, օրինակ՝ յ-աւշ-ատ-եմ (հմմտ. ուրարտ. [n=ewše/i=ɕ=u-] «մորթել, կտրել»), հաստ-ատ-եմ, կրճ-տ-եմ, բեկ-տ-եմ, խոց-ոտ-եմ և այլ բայածները:

1.3 -an- - հայ. -ան- : Ուրարտերենում վկայված է ke(i)ɕ=an- «կենտրոնացնել, ի մի հավաքել»³³⁷, ušh=an- «տալ(»), շնորհել(«)», թերևս նաև՝ ašt=an- «(»)» և hiš=an- «(»)» բայերում: Ի.Դյակոնովը, բերելով առաջին երկու օրինակները, հնարավոր է համարում, որ սույն ածանցն ունի պատճառական երանգ³³⁸: Այս հարցում դժվար է համաձայնվել նրա հետ: Համեմայն դեպս, եղած վկայություններից դա չի երևում, մանավանդ որ օրինակները սակավաթիվ են և ոչ հուսալի

³³³ Տե՛ս Վ.Սարգսյան, 1998, էջ 120-140:

³³⁴ G. Wilhelm, 2004, էջ 129:

³³⁵ Տե՛ս, օրինակ, Г.Меликшвили, 1964, էջ 45: Գ.Չախուկյանը վերջինս համեմատում է հ.-ե. *dhe-ի հետ, որից ունենք հայ. դիեմ բայը [1988, էջ 139]:

³³⁶ Այս ածանցը մասնագիտական գրականությունում սովորաբար կապվում է հատ-ան-եմ բայի հետ: Մակայն ոչ բոլոր դեպքերում է, որ դա արդարացված է: Այս մասին տե՛ս Գ.Չախուկյան, 1987, էջ 353:

³³⁷ Թարգմանությունը մերն է: Այլ հեղինակներ թարգմանում են «տղարկել» (տե՛ս III.2.3 կետ 30):

³³⁸ Նա այս նույն ածանցը, նմանատիպ իմաստով, տեսնում է նաև խոտիերենում (վերջինում նաև՝ -am- տարբերակով) [I. Diakonoff, 1971, էջ 114]: Այս մասին տե՛ս նաև М.Хачикян, 1985, էջ 60:

նման եզրակացության համար: Գ.Վիլհելմը նույնպես, ուրարտերենում առանձնացնելով նույն -an- բայածանցը, դրա նշանակությունը համարում է անհայտ³³⁹: Այս ածանցը, ըստ երևույթին, պետք է համեմատել հայ. -ան- բայածանցի հետ, որը հայերենում ունի լայն գործածություն: Վերջինս մասամբ ծագում է հ.-ե. *-ne-ից՝ նախորդող -a- կամ -ə- տարրով, ինչպես՝ առոգ-ան-եմ, հարց-ան-եմ և այլն, մասամբ գալիս է հ.-ե. -n- միջածանցից կամ այլ տեղից, ինչպես՝ արծ-ան-եմ, բեկ-ան-եմ, բոց-ան-եմ, մեծ-ան-ամ, հն-ան-ամ և այլն³⁴⁰:

1.4 -ul- [-or-(*)] - հայ. -որ- (*): Ուրարտերենում բազմիցս վկայված ածանց է, սակայն ոչ միշտ է, որ սրա տակ կարելի է տեսնել բայածանց: Ըստ դեպքերում այն հավանաբար պետք է դիտարկել որպես ուրարտական բայի անիրական եղանակների խոնարհման որոշ ցուցիչների տարր (այս մասին մանրամասն տե՛ս VI.2.3): Յ.Ֆրիդրիխը [1933, էջ 5] և Գ.Մելիքիշվիլին [1964, էջ 50-51] այս ածանցը համարում են անցողական բայերին հատուկ բայածանց, որի նշանակությունը չի զգացվում: Մ.Խաչիկյանը հնարավոր է համարում, որ այն կարող է արտահայտել իր (սուբյեկտի) օգտին կատարվող գործողություն՝ բերելով par=ul- «բերել, տանել (իրեն)» և badg=ul- «շրջապատել» բայերի օրինակները³⁴¹: Ըստ երևույթին այս ածանցը համապատասխանում է հայ. -որ- բայածանցին (հմմտ. գլ-(որ)-եմ, մոլ-(որ)-եմ և այլն): Հայերենում այն կազմում է նաև անուններ: Սույն ածանցով կազմված ուրարտ. այլ բայերից նշենք՝ der=(ul)-[der=(or)-] «դնել, տեղադրել» (հայ. դիր, դեր «դնել»), suui=(ɕ)=(ul)-[-ɕ=(or)-] «ձգել, շարտել» (հայ. ձգ-(տ)-եմ (*), տե՛ս III.2.4 կետ 21), wal(=)ɕ=(ul) [wəl(=)ɕ=(or)-] «հաղթահարել, զցել, գլորել» (հայ. գլ-(տ)-(որ)-եմ, տե՛ս III.2.3 կետ 63), թերևս նաև՝ mak=ul-[mæk=ol-] «նետել (նետը)» (հմմտ. հայ. մկ-ուևդ «տեգ, միզակ», տե՛ս III.2.3 կետ 36), ur=(ul)- «(*)» օրինակները: Ինչպես երևում է suui=(ɕ)=(ul)- բայածանցից (հմմտ. suui- բայի հետ) -ul-[-or-], ածանցը հաջորդում է -ɕ--ին³⁴² (վերջինիս մասին տե՛ս վերը):

³³⁹ G. Wilhelm, 2004, էջ 129:

³⁴⁰ Այս մասին մանրամասն տե՛ս Г.Джаукян, 1982, էջ 170-187:

³⁴¹ М.Хачикян, 1985, էջ 61:

³⁴² Եթե ենթադրենք, որ գլ-(տ)-(որ)-եմ բայում -տ- ն նույնն է, ինչ որ ուրարտ. -t--ն, ապա wal(-)ɕ-(ul)-[wəl(-)ɕ-(or)-] բայում ունենք ևս մի օրինակ, որտեղ -ul-[-or-]-ը հաջորդում է -t--ին:

2. Այլ հնարավոր քայածանցներ: Ի-Դյակոնովը ուրարտերենի քայածանցների շարքում նշում է մի քանի ածանցներ ևս, ինչպես. 1) -ar-, որը նա համարում է խուռիա-ուրարտական քայածանց՝ պատճառական (factitive) արժեքով: Գ.Վիլհելմը³⁴³, թերելով զարգ=ar=ul- «շրջապատել, փակել», up=ar(=)d=d-, փup=ar(=)d- օրինակները, այս -ar-ը նույնպես համեմատում է խուռիերենի համապատասխան քայածանցի հետ, սակայն վերջինիս նշանակությունը ուրարտերենում համարում է անհայտ (upardu=(d)- և փupardu- բառածևերի համար, որոնք, ըստ երևույթին, կազմված են ardu/i (հայ. արդ, -ու/ի «արդ, կարգ») արմատից, տե՛ս III.2.3 կետ 4.4, (14); VI.2.4: Ի-Դյակոնովը ուրարտերենում առանձնացնում է նաև -iy-, -uy- քայածանցը, որը, ըստ նրա, սովորաբար գործածվում է -ar--ի հետ և ունի նաև իր օգտին կատարած գործողության իմաստ, ինչը նա հիմնավորում է՝ թերելով bed=uy=a(r)=šə «ետղարձին», kul=uj=ar=š- «փախուստով փրկվել», an=iy=ar=d=u/o=(nə) «անհնազանդ(»)» օրինակները: Իրականում սրանցից առաջինը գրվում է be-du-i-a-šə, հետևաբար այստեղ բացակայում է -ar- մասնիկը, և ընդհանրապես այս բառի նման բաղդատումը մտացածին է և ոչ հուսալի: Երկրորդի դեպքում ունենք ku-lu-ar-ši-, որտեղ, թեև kul=uj=ar=ši- վերլուծումը հնարավոր է, բայց ոչ պարտադիր: Իսկ երրորդ բառը, որը նա ավելի ուշ թարգմանում է «մեղավոր», անկասկած կազմված է *y=ardu (հայ. (յ)-արդ, -ու «արդ, կարգ») արմատից՝ an- (հայ. ան-) ժխտականով (տե՛ս III.2.3 կետ 4.3), հետևաբար վերջինս նույնպես պետք է դուրս բողմել: Նմանապես կասկածելի է նաև իր կողմից նշվող -il ածանցը, որի համար նա նշում է abili- «հավելել» բայը: Նույնը կրկնում է նաև Գ.Վիլհելմը: Սակայն այս բառի արմատը անշուշտ abeli-[aweli]-ն է (հայ. աւելի, յ-աւել-ում): Եթե ուրարտ. ar(=)nu=iale «օգնության եկան/եկած» բայածևի մեջ պետք է տեսնել հայ. յ-ար-(նչ)-եմ/իմ «հարել, միանալ, առնչվել» բայի արմատը (տե՛ս III.2.3 կետ 5), ապա անկասկած ուրարտերենում պետք է առանձնացնել -nu-քայածանցը, որը թերևս պետք է համեմատել հայ. նմանատիպ -u(ու)-<*-nu- ածանցի հետ (առ-նու-մ <*ar-nu-mi, ջեռ-նու-մ <*g^her-nu-mi, լ-նու-մ <*plē-nu-mi, յառ-նու-մ և այլն):

³⁴³ G.Wilhelm, 2004, էջ 129:

IV.5 ԱՄՓՈՓՈՒՄ

Ընդհանրացնելով ուրարտերենի ածանցների քննարկումը՝ գալիս ենք հետևյալ եզրակացության:

1. Ուրարտերենում վկայված անվանական ածանցները, բացառությամբ մեկ երկուսի, իրենց հստակ զուգահեռներն ունեն հայերենում: Դրանք հաճախ հանդես են գալիս իրենց առավել հին տեսքով և գործածությամբ: Օրինակ՝ հայ. -ոյթ, -ի < *-eu-ti - ուր. [-ewt(i-)] կամ [-iwt(i-)], հայ. -կ(ս), -կա(ս), -կու(ս) < *-kō-n/ko-n - ուրարտ. -ka=(n)/ku=n և այլն: Դրանք մեծ մասամբ հայերեն քնիկ ածանցներ են և ունեն հնդեվրոպական ծագում:
2. Հայերենի հնագույն շերտը ներկայացնող քնիկ անվանական ածանցների մեծ մասը վկայված է ուրարտական տեքստերում:
3. Ուրարտերենում վկայված քայածանցները նույնպես իրենց զուգահեռներն ունեն հայերենում՝ երբեմն ուրարտերենից որոշակիորեն տարբերվող գործառնությամբ: Այստեղ հիմնական տարբերությունը հայերենում լայնորեն տարածված ցոյական (-ց- աֆրիկատով կազմված) քայածանցների բացակայությունն է ուրարտերենում: Փոխարենը՝ ց-ով ձևերը վկայված են իրենց սկզբնական՝ անվանական (բառակազմական) նշանակությամբ:
4. Որոշ ուրարտ. ածանցներ իրենց զուգահեռներն ունեն նաև այլ լեզուներում, մասնավորապես խուռիերենում:

V. ԱՆՈՒՆ

V.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուրարտերենում անունը ունի հոլով, թիվ (եզակի և հոգնակի), որոշյալ և անորոշ վիճակ: Սեռի կարգ ուրարտերենում չկա: Հոլովը և թիվը որոշվում են հատուկ վերջածանցների/մասնիկների միջոցով, իսկ որոշյալ վիճակը՝ ini (հոգն. թվում՝ inele) դերանվան/հոդի միջոցով (հիմնականում ունի նախադաս կիրառություն, բայց կարող է գործածվել նաև ետադաս) կամ -ne[-n] հոդի միջոցով: Ուրարտերենում հոլովվում են գոյական և ածական անունները, դերանունները, թերևս նաև՝ որոշ դերբայներ: Ուրարտերենի թվականների հուսալի վկայություններ չկան:

V.2 ՀՈՒՆՎՈՒՄ

V.2.1 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՀՈՒՆՎՈՒՄ ԿԱՍԿԱՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ³⁴⁴

1. Հոլովների կազմումը: Ուրարտերենը պատկանում է կցական լեզուների շարքին: Հոլովները առավելապես կազմվում են բառահիմքերին համապատասխան ածանցների (հոլովակերտ մասնիկների) հավելման միջոցով (ըստ Ի.Դյակոնովի՝ ուրարտերենի հոլովներից շատերը գտնվում են անունից ետդիր և ետդիրից հոլովային ցուցիչ անցման փուլում³⁴⁵): Ուրարտերենը տարբերում է երկու թիվ՝ եզակի և հոգնակի, որոնք հիմնականում կազմվում են միանման՝ նույն հոլովակերտ մասնիկների միջոցով, դրանք եզակիի դեպքում հավելվում են անմիջապես անվան հիմքին (քնավոր ձայնավորին), իսկ հոգնակիի՝ հոգնակիություն

³⁴⁴ Ուրարտերենի հոլովման համակարգին առավել մանրամասն անդրադարձել են Յ.Ֆրիդրիխը [1933, էջ 10-16], Գ.Մելիքիշվիլին [1960, էջ 55-56; 1964, էջ 33-34], Ի.Մեչչանինովը [1958, էջ 124-126], Ի.Դյակոնովը [1971, էջ 87-106; 1979, էջ 61-67], Մ.Խաչիկյանը [1988, էջ 71-78], Գ.Վիլեյը [1988, էջ 93-132; 2004, էջ 126-127] և այլք:

³⁴⁵ Տե՛ս Ի.Դյակոնով, 1979, էջ 61, 76:

ցույց տվող - (n) a³⁴⁶ - (ուղղականում՝ - (n) e-) մասնիկին, որն իր հերթին կցվում է անվան հիմքին (-n-ի բացակայության դեպքում՝ քնավոր ձայնավորի անկմամբ): Հոգնակիության մասնիկների և դրանց գործածության մասին առավել մանրամասն տե՛ս V.2.2 կետ 1:

Մասնագիտական գրականության մեջ ուրարտերենում տարբերակվում են e, i, u³⁴⁷ և a հոլովումները (ըստ անվան հիմքի վերջի ձայնավորի), որոնց պատկանող բառերը հիմնականում հոլովվում են ընդհանուր կարգով: Որպես միակ բացառություն դիտարկվում է a հոլովման բառերի եզակի տրականը (մանրամասն տե՛ս V.2.6 կետ 1): Ըստ Ի.Դյակոնովի՝ վերոնշյալ քնավոր ձայնավորները սեռական (եզակի), տրական (եզակի) և ուղևորական (ընդհանրապես) հոլովների հոլովակերտ մասնիկների հետ փոխազդելով՝ կարող են առաջացնել երկբարբառներ, որոնք հաճախ միաբարբառանում են՝ վերածվելով այս կամ այն ձայնավորի (մանրամասն տե՛ս V.2.2):

2. Հոլովների համաձայնեցումը: Անունները ուրարտերենում, որպես կանոն, պահանջում են համաձայնեցում, այսինքն՝ նախադասության մեջ գոյականի կամ գոյականաբար գործածված բառի հոլովի և թվի տարածումը լրացման վրա, եթե այդպիսին առկա է: Ընդ որում, հատկացուցիչի և հատկացյալի համաձայնեցումը կատարվում է հատուկ կանոնով (այս մասին մանրամասն տե՛ս V.2.11):

3. Հոլովների թիվը: Ուրարտերենի հոլովների թվի վերաբերյալ մասնագիտական գրականությունում առկա են որոշ տարաձայնություններ: Գ.Մելիքիշվիլին³⁴⁸ տարբերակում է 8 հոլով՝ չձևավորված, ուղղական, երգատիվ, սեռական, տրական, բացառական-գործիական, ուղևորական և ներգոյական³⁴⁹: Ի.Դյակոնովը ներմուծում է այսպես կոչված որոշյալ հոլովման գաղափարը՝ չընդունելով Գ.Մելիքիշվիլու կողմից առաջարկվող երկու ուղիղ հոլովների (չձևավորված և ուղղական) տեսակետը: Նա ենթադրում է մեկ ուղիղ հոլովի առկայություն, որը կոչում է բացարձակ հոլով (մանրամասն տե՛ս V.2.3): Միևնույն ժամանակ դրանց

³⁴⁶ Հոգնակի ուղևորականում երբեմն - (n) aš-, որը, ըստ տարածված կարծիքի, այս մասնիկի հնագույն ձևն է և պահպանվել է միայն մնացորդային ձևով: Այս մասին տե՛ս Ի.Դյակոնով, 1979, էջ 61; Մ.Խաչիկյան, 1985, էջ 75 և այլն:

³⁴⁷ Իրականում u հոլովմանը վերագրվող բառերը բաժանվում են երկու խմբի և պատկանում են երկու տարբեր [u] և [o] հոլովումների (տե՛ս V.2.2 կետ 3):

³⁴⁸ Գ.Մելիքիշվիլի, 1964, էջ 30-40:

³⁴⁹ Մեչչանինովը վերջինիս առկայությունը ուրարտերենում համարում է ոչ հուսալի, քանզի այն առանձնացվում է միայն մի քանի դեպքերում [1958, էջ 131-132]:

հավելում է ևս 7 հոլով. երկրորդ ուղևորական՝ ուղևորական բացառական (directive-ablative), երկրորդ ներգոյական՝ ներգոյական եզրափակիչ (locative-illative), մակրայական/ստատիվ (stative), ինչպես նաև իր կողմից երկրորդային անվանված՝ «ղիմակա» (предстоятельный), «ղիմակա բացառական» (предстоятельный отложительный), «սուրեսիվ (սուրեսիվ)» (субессивный) և «սուրեսիվ բացառական» (субессивный отложительный)՝ մերժելով վերջին չորսը որպես ետդիրներ դիտարկելու ավանդաբար ընդունված տեսակետ³⁵⁰: Նույնը կրկնում է Մ.Խաչիկյանը, որը հիմնականում հետևում է Ի.Գյակոնովին՝ նշելով, որ թեև վերջիններս, ի հակադրություն հիմնական հոլովների, համաձայնեցում չեն պահանջում, այնուամենայնիվ դրանք չի կարելի դիտարկել որպես ուղղական հոլովով դրված անուններին հավելվող ետդիրներ, քանի որ այդ դեպքում հոգնակի թվում դրանք պետք է կցվեին հոգնակի ուղղականի - (n) ele վերջավորությանը և ոչ թե թեք հոլովների հոգնակիության - (n) a- ցուցիչին³⁵¹: Գ.Վիլիելմը ուրարտերենում առանձնացնում է նաև «համատեղ» (comitative) հոլով՝ համեմատելով այն խուտիերենի համապատասխան հոլովի հետ³⁵²: Միևնույն ժամանակ նա մերժում է Ի.Գյակոնովի առաջ քաշած որոշյալ հոլովման գաղափարը, իսկ նրա կողմից առաջարկվող երկրորդային հոլովները համարում ետդիրներ կամ ետադրություններ³⁵³:

V.2.2 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՀՈՒՆՎԱՄՆ ՀԱՄԱՎԱՐԳԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՈՐՈՇ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Հոգնակի հոլովների կազմումը ուրարտերենում: Ա.Գյուտցեն³⁵⁴ Կելիշինի երկլեզվյա արձանագրության մշակման ընթացքում ուրարտերենի հոգնակի հոլովների համար առանձնացրեց -na- ցուցիչը, որը սակայն հետագայում մասնագետների կողմից մերժվեց, իսկ Յ.Ֆրիդրի-

³⁵⁰ Sh'u Г.Меликишвили, 1964, էջ 59-60:
³⁵¹ М.Хачикян, 1985, էջ 77: Այս պնդումը վիճարկելի է, քանզի բոլորովին պարտադիր չէ, որ ետդիրները հավելվեն հենց ուղղական հոլովին, դրանք կարող են հավելվել նաև թեք հոլովներին, հատկապես՝ ետադրությունները, որոնք հայերենում սովորաբար գործածվում են հենց թեք հոլովների հետ:
³⁵² Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 103-105:
³⁵³ G.Wilhelm, 2004, էջ 127, 134: Տե՛ս նաև նախորդը:
³⁵⁴ A.Götze, ZA, 39, 1930, էջ 115:

խը³⁵⁵ առաջարկեց այդպիսին համարել -a-ն, ինչը և արմատավորվեց ուրարտագիտությունում: Ինչ վերաբերում է հոգնակիով դրվող բառերի մեջ այս -a-ին հաճախակի նախորդող -n-ին, ապա այն մեկնվում էր տարբեր կերպ: Այսպես, ինքը՝ Յ.Ֆրիդրիխը այս -n-ի մեջ տեսնում է -ini ածանցը, որի վերջի i-ն ընկնում է a-ից առաջ: Մելիքիշվիլին³⁵⁶ այն համարում է ուղղական հոլովի վերջավորություն, որին, անվան մաքուր հիմքին զուգահեռ, կարող է հավելվել ցանկացած հոլովային վերջավորություն: Գ.Վիլիելմը³⁵⁷, անդրադառնալով սույն հարցին, նորից առաջարկեց ուրարտերենի թեք հոլովների հոգնակիի ցուցիչ համարել -na-ն, իսկ այն դեպքերը, երբ -na-ի փոխարեն առկա է -a-, նա բացատրում է խուտիերենի նմանությանը ուրարտերենում ենթադրվող -rvn- > -r(r)-, -lvn- > -l(l)- հնչյունափոխության օրենքով, այն տարբերությամբ, որ ուրարտերենում, ի հակադրություն խուտիերենի, այն չի տարածվում -nvn- հնչյունական կապակցության վրա՝ փոխարենը հնարավոր համարելով -svn- > -s(s)- անցումը artuwarasau բառում: Միևնույն ժամանակ նա չի բացառում, որ վերջինս դրված է եզակի թվով, իսկ բառի արմատն (հիմքը) է artuwarasau-ն, և այստեղ պարզապես գործ ունենք եզակի տրականով դրված u հոլովման բառի հետ: Վերջերս Մ.Սալվինին³⁵⁸, մատնանշելով իր կողմից հրատարակված Մովսեսայի և Մերգեհ Քարվանի արձանագրությունում վկայված šuiaše ձևը, որը նա համարում է հոգնակի երգատիվ՝ šui-ից (šuiaše < šui=a=še), կասկածի տակ է առնում Գ.Վիլիելմի վերոնշյալ տեսակետը՝ նշելով, որ կա՛մ պետք է ընդունել, որ na-ի կողքին ուրարտերենում առկա է նաև հոգնակիի a ցուցիչը, կա՛մ պետք է ընդլայնել Գ.Վիլիելմի կողմից ենթադրվող հնչյունափոխությունների ցանկը: Մյուս կողմից՝ ավելի ուշ Գ.Վիլիելմը որոշ ճշգրտումներ է մտցնում իր տեսակետի մեջ՝ ենթադրելով, որ ուրարտերենի հոլովների համաձայնեցման -na- և -ne- ածանցները (շաղկապիչ մասնիկներ) հանդես են գալիս նաև որպես հոգնակիի կազմավորման ածանցներ: Ընդ որում, եթե բառահիմքի վերջին ձայնավորին նախորդում է՝ r, n կամ l քաղաձայններից մեկը, ապա տեղի է ունենում -rvn- > -r-,

³⁵⁵ J.Friedrich, ZA, 40, 1934, էջ 274:
³⁵⁶ Г.Меликишвили, 1964, էջ 31-32:
³⁵⁷ Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 100-102:
³⁵⁸ M.Salvini, SMEA, 44/1, 2002, էջ 14-16:

-lvn- > -l-, -nvn- > -n- հնչյունափոխություն (սղում): Բայց եթե -na- և -ne- ածանցները համդես են գալիս որպես հոլովների համաձայնեցման մասնիկներ, ապա մնան հնչյունափոխություն չի լինում՝ ըստ նրա՝ վերջիններիս մախորդող սեռական հոլովի i ցուցիչի պատճառով³⁵⁹:

Անդրադառնալով Գ.Վիլհելմի կողմից առաջ քաշված տեսակետին՝ մախ ուզում ենք նշել, որ artuwarasaue-ի կողքին ուրարտական արձանագրություններում ունենք նաև՝ III-a e-sa-a (III-a esa=(a)) [u]š-ti-ip-te za-du-ú-bi - «...երեք տեղերում արշավանք անցկացրի» [KYKH 241 D₂₁] արտահայտությունը, որտեղ esi «տեղ» բառի հոգնակի թվի համար նույնպես ունենք a-ով տարբերակ: Նմանապես ունենք նաև՝ Կal-di-né-le še-iš-te-le (Կaldi=i-ne=le šeište=le) - «Ճալդիի դռներ» [KYKH 92₃] բառակապակցությունը, որտեղ արդեն ունենք -e=le հոգնակի ուղղականի վերջավորությունը, որտեղ արդեն ունենք -e=le հոգնակի ուղղականի վերջավորությունը, ինչը նույնպես հակասում է Գ.Վիլհելմի տեսակետին, համաձայն որի՝ վերոնշյալ օրինակներում պետք է լիներ (*III-a esi=na=(a)) և (*Կaldi=i-ne=le šeišt=v-ne=le): Իրականում, ինչպես ցույց են տալիս առ այժմ հայտնի ուրարտական տեքստերում եղած վկայությունները, հոգնակի հոլովի կազմավորման հարցում ուրարտերենում նկատվում են հետևյալ օրինաչափությունները:

ա) Թեք հոլովների հոգնակին կազմվում է ինչպես -a-, այնպես էլ -na- ցուցիչների միջոցով: Իսկ հոգնակի ուղղականը համապատասխանաբար ստանում է -e=le (առնվազն i և e հոլովման բառերը)³⁶⁰ կամ -ne=le վերջավորություններ: Ընդ որում, բոլոր այն բառերը, որոնց թեք հոլովների հոգնակիում առկա է -na- տարբերակը, հոգնակի ուղղականում ստանում են -ne=le վերջավորություն, և հակառակը: Այսինքն թեք և ուղիղ հոլովները կազմվում են միակերպ, լոկ այն տարբերությամբ, որ ուղիղ հոլովի դեպքում -na-ի փոխարեն առկա է -ne-, իսկ -a-ի՝ -e-, ինչպես՝ arniúš=i-ne=le/arniúš=i=na=ni, baúš=i-ne=le/baúš=i=na=ni, huradi=ne=le/huradi=na=ue/ huradi=na, babane=le/baban=a=ue/baban=a=ni/baban=a=di³⁶¹,

³⁵⁹ G. Wilhelm, 2004, էջ 123, 126:

³⁶⁰ Մյուս հոլովումներին պատկանող բառերը հոգնակի ուղղականում ստանում են -v-nele վերջավորությունը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս V.2.3:

³⁶¹ Այս բառի հիմքը babani/e-ն է, ինչը երևում է babani=edi եզակի ուղղականից:

eban=e=le/eban=a=idi/eban=a=(a), ^{KUR}šure=le/ ^{KUR}šur=-a=ni, tarmane=le/tarman=a և այլն:

բ) Մինչ այժմ վկայված բոլոր այն բառերը, որոնք վերջանում են -ri/e, -li/e և -ni/e վանկերով, հոգնակի թվում համապատասխանաբար ստանում են -r/l/n=a + հոլովակերտ մասնիկ (թեք հոլովներ) և - r/l/n=e + le (ուղղական հոլով) վերջավորությունները:

գ) Հոգնակի վերջավորությունների n-ով տարբերակների դեպքում հոլովող բառի բնավոր ձայնավորը պահպանվում է, իսկ առանց n-ի տարբերակներում՝ ոչ:

2. Ուրարտերենի հոլովների թվի հարցը: Ինչպես արդեն նշվեց, մասնագիտական գրականությունում այս հարցում առկա է տարաձայնություն՝ հիմնականում պայմանավորված անուններին հաճախակի հավելվող -kai/kai=ne, -pei/pei=ne մասնիկների ետդիրներ կամ հոլովային ցուցիչներ համարելու խնդրում: Մրանց ետդիրներ լինելու օգտին է խոսում այն փաստը, որ վերջիններս չեն պահանջում համաձայնեցում: Իսկ ինչ վերաբերում է այն տեսակետին, որ դրանք ետդիր դիտարկելու դեպքում՝ հոգնակի թվում պետք է կցվեին հոգնակի ուղղականի - (n)ele վերջավորությանը և ոչ թե թեք հոլովների հոգնակիության - (n)a- ցուցիչին, ապա պետք է նկատել, որ այս պահանջը բոլորովին էլ պարտադիր չէ: Այս մասնիկները կարող են հավելվել և թեք հոլովներին, օրինակ՝ բացառականին, ինչպես որ ունենք ետադրությունների դեպքում (տե՛ս VII.3 կետ 2): Այնուամենայնիվ, վերջիններիս դիտարկումը որպես հոլովային վերջավորություններ՝ նույնպես հնարավոր է, բացառությամբ pei (ne)-ի (այս մասին տե՛ս ստորև): Ուրարտերենում լիարժեք հոլով չի կարելի համարել նաև ուղղորականը, որը կազմվում է տրական հոլովից՝ edi- «այդտեղ» դերանվանական (տեղի) մակբայի հավելումով և նույնպես չի պահանջում համաձայնեցում: Ավելի ճիշտ՝ համաձայնող բառը (հատկացուցիչը) դրվում է տրական հոլովով (մանրամասն տե՛ս V.2.8): Այժմ անդրադառնանք Ի.Դյակոնովի կողմից առաջարկվող ուղղորական-բացառական (directive-ablative) հոլովին, որը, ըստ նրա, գործածվում է aptine «կողմ» ետդիրի հետ և ունի -dane (եզ. թիվ) և -áštani (հոգ. թիվ) վերջավորությունները: Հարկ է նշել, որ սրանք վկայված են միայն ^mšá-da-`a-li-e-ši-ni(-)da-a-ni aptini [KYKH 44 յ.ժ.6] և ^{NA4}qar-bi-e ap-ti-ni ^{KUR}ša-

ti-na-áš-ta-a-ni [KYKH 44 л.с.7] դրվագներում՝ մեկական անգամ, հետևաբար հուսալի չեն, մանավանդ որ ուրարտագետների շրջանում կան տարածայնություններ՝ կապված նշված հատվածների ընթերցման հետ: Այսպես, առաջինը հնարավոր է ընթերցել ³⁶² ʾá-da-a-li-e-ḫi-ni da-a-ni aptini, ինչպես որ անում են Գ.Մելիքիշվիլին և Ն.Հարությունյանը³⁶²: Իսկ երկրորդը վկայված է ^{KUR}ḫa-ti-na(-)áš-ta-a-ni տեղանվան մեջ (հետ), որը Գ.Մելիքիշվիլին վերլուծում է ^{KUR}ḫa-ti-na áš-ta-a-ni ձևով՝ áš-ta-a-ni-ն համեմատելով՝ išani, inani և dani դերանունների հետ³⁶³: Ամեն դեպքում մեկ վկայության վրա հիմնված որևիցե հոլովային վերջավորության առանձնացումը հուսալի չէ, հետևաբար մենք այն չենք քննարկի: Նույն պատճառով չենք քննարկի Ի.Դյակոնովի կողմից ներմուծված «մակբայական/ստատիվ (stative)» հոլովը³⁶⁴: Ինչ վերաբերում է Գ.Վիլիելմի կողմից առաջարկված «համատեղ» հոլովին, ապա ուրարտական տեքստերում այն առանձնացվում է միայն taršuanan=rani (< *taršuanan=a=rani) բառի հիման վրա, որը, ելնելով համատեքստից, Գ.Վիլիելմն առաջարկում է թարգմանել «մարդկանց հետ միասին»՝ -rani մեջ տեսնելով խոտիերենի «համատեղ» (комитатив) հոլովի -ra ցուցիչ ուրարտական մտանակը³⁶⁵: Սակայն իրականում բացառված չէ, որ այս -a=rani-ի տակ ուղղակի պետք է տեսնել ինչ-որ մի ածանց: Հստակ չէ նաև վերջինիս իմաստը: Ամեն դեպքում, ինչպես արդեն նշվեց, մեկական օրինակների վրա այս կամ այն հոլովի առանձնացումը և հոլովային ձևայինների վերականգնումը հուսալի չէ: Այդ պատճառով դրանք մենք բաց ենք թողել քննարկվողների ցանկից:

Եթե որոշ անվանական վերջավորությունների հոլովային ցուցիչներ կամ ետդիրներ լինելու հարցը թողնենք մի կողմ և պայմանականորեն դրանք համարենք երկրորդային հոլովներ (հոլովների վերջավորություններ), ապա ուրարտերենի հոլովները հստակորեն կարելի է բաժանել երկու խմբի:

1) **Բուն հոլովներ:** Մրանց վերջավորությունները (ձևայինները) որևէ անվանական արժեք չունեն և ըստ երևույթին կազմված են ուրարտերենի

³⁶² KYKH 44 л.с.6, УКН 28 л.с.6:
³⁶³ Տե՛ս Գ.Меликишвили, 1960(УКН), արձ. 28, ծան. 16:
³⁶⁴ Գ.Վիլիելմը այսպիսի հոլով ուրարտերենում չի նշում [2004, էջ 127]:
³⁶⁵ Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 103-105:

նի բուն հոլովակերտ մասնիկներից: Այս հոլովները պահանջում են համաձայնեցում: Այս խմբին են պատկանում ուղղական, էրգատիվ, սեռական, տրական, բացառական-գործիական և ներգոյական (*) հոլովները:

2) **Երկրորդային հոլովներ**³⁶⁶: Մրանց ցուցիչները ծագում են տարբեր բառարմատներից, որոնք գործածվում են նաև անկախաբար՝ տարբեր խոսքի մասերի տեսքով: Այս հոլովներով դրված բառերը համաձայնեցում չեն պահանջում: Ըստ այդմ, դրանք իրականում պետք է համարել ետդիրներ կամ ետադրություններ: Եզակի թվում դրանք կցվում են տարբեր հոլովներով դրված անվանը, իսկ հոգնակիում՝ թեք հոլովների հոգնակիության -(n)a- ցուցիչին: Եթե դուրս թողնենք մեկական վկայությունների հիման վրա առանձնացվող կասկածելի հոլովները, ապա ուրարտերենում հնարավոր է տեսնել հետևյալ երկրորդային հոլովները՝ դիմակա (բացառական)՝ «предстоятельный (отложительный)», «սուրեխիվ (բացառական)» (субессивный (отложительный)) և ուղևորական: Ինչպես պարզորոշ երևում է որոշ արձանագրություններում, Ի.Դյակոնովի և Մ.Խաչիկյանի կողմից հոլովային վերջավորություն համարվող pei(ni) մասնիկի հաջորդ տող ազատ տեղափոխումից այն պետք է համարել առանձին բառ՝ լավագույն դեպքում դիտարկելով որպես ետադրություն, ինչպես որ kurune-ն և peči-ն (մանրամասն տե՛ս VII.3 կետ 2): Հետևաբար «սուրեխիվ» և «սուրեխիվ բացառական» հոլովներ ուրարտերենում պարզապես չեն կարող լինել: Այսպիսով, ուրարտերենի համար հնարավոր է ենթադրել հետևյալ հոլովները.

- Բուն հոլովներ**
- ուղղական
- էրգատիվ
- սեռական
- տրական
- բացառական-գործիական
- ներգոյական, - (i) aše հոլով (*)

Երկրորդային հոլովներ (ետդիրներ)

- ուղևորական
- դիմակա (բացառական)՝ «предстоятельный (отложительный)»

Բուն և ուղևորական հոլովների կազմումը, գործածությունը և դրանց հետ կապված այլ հարակից հարցերը մանրամասն կքննարկենք ստորև՝

³⁶⁶ Մրանց համար «հոլով» անվանումը գործածում ենք պայմանականորեն:

առանձին-առանձին: Իսկ «դիմակա (բացառական)»-ը կդիտարկենք որպես ետդիր, որի մասին տե՛ս VII.2 կետ 1:

3. Հոլովման հիմքը և հոլովիչները ուրարտերենում: Ինչպես արդեն նշվեց, Գ.Մելիքիշվիլին ուրարտերենի անվան ուղիղ ձևի համար առանձնացնում է երկու տարբեր հոլովներ՝ չձևավորված (մաքուր հիմք) և ուղղական (մաքուր հիմք + ni)³⁶⁷: Նա ենթադրում է, որ այս երկու հոլովներով դրված բառերն էլ կարող են հիմք դառնալ այլ հոլովների (ինչպես եզակի, այնպես էլ հատկապես հոգնակի փվում) կազմավորման համար³⁶⁸: Այսպիսով, առաջ է քաշվում այն տեսակետը, ըստ որի՝ ուրարտերենի հոլովման համակարգում հիմքը կարող է հանդես գալ ինչպես իր մաքուր ձևով (չձևավորված հոլով), այնպես էլ ուղղական հոլովի ձևով: Ի.Դյակոնովը [1979, էջ 62-65] մերժում է այս տեսակետը և ընդունում է միայն մեկ ուղիղ (բացարձակ) հոլով՝ միևնույն ժամանակ ներմուծելով այսպես կոչված որոշյալ հոլովման գաղափարը, որով մաքացատրում է ուրարտերենի հոլովների ձևավորման կարգում առկա որոշակի երկակիությունը³⁶⁹: Գ.Վիլիելմը [ДВ 5, 1988, էջ 93-102], ընդունելով միայն մեկ՝ բացարձակ հոլովի առկայությունը, միևնույն ժամանակ ներժում է որոշյալ հոլովի Ի.Դյակոնովի գաղափարը՝ առաջարկելով նշված երկակիությունը բացատրող իր տեսակետը: Առավել մանրամասն այս մասին տե՛ս V.2.1 կետ 2, որտեղ ներկայացված են նաև մեր դիտարկումները այդ մասին: Այստեղ, ուրարտերենի հոլովները առանձին-առանձին քննարկելիս, մենք կանգ չենք առնի բառահիմքերի վրա՝ շեշտը դնելով բուն հոլովային ցուցիչների, դրանց կազմավորման և հոլովների գործածության վրա:

Ինչպես արդեն նշվեց, ուրարտերենում տարբերակվում են e, i, u և a հոլովումները: Հարկ է նշել, որ սովորաբար e հոլովմանը վերագրվող բազմաթիվ բառեր (սրանց ուղիղ ձևերը գրում վերջացնում են e-ով) իրականում հոլովվում են i հոլովումով: Այդ պատճառով դրանք պետք է դասել i հոլովման բառերի շարքին, ինչպես՝ ušmaše – ušmaši=e/ne, alsuiše – alsuiši=e/ne, uštipte – uštipti=ne և այլն: Վստահաբար e հոլովման են պատկանում քերևս միայն erele «ար-

³⁶⁷ Г.Меликишвили, 1964, էջ 30-32:

³⁶⁸ Շատ Գ.Մելիքիշվիլու՝ այս -ni-ն հնարավոր է, որ ծագում է i-ով ցուցական դերանունից, որն, ըստ իրեն, այստեղ ցուցաբերում է աճականի հատկություն՝ կազմելով մոր հիմքեր [Г.Меликишвили, 1964, էջ 31-32]: Այս մասին տե՛ս նաև Т.Гамкрелидзе, 1954, էջ 116:

³⁶⁹ И.Дьяконов, 1979, էջ 61-65: Իրականում երկակիություն կա միայն հոգնակի համար:

քա» և ule «ուրիշ» բառերը, որոնց համար երգատիվում համապատասխանաբար ունենք erele=še և ule=še՝ վանկազիր e-re-(e)-le-(e)-še և u-le-(e)-še: Այս բառերը եզակի փվի այլ հոլովներով վկայված չեն: Այդ պատճառով e հոլովումը մենք առայժմ չենք քննարկի: Ինչպես նշվեց (տե՛ս V.2.1 կետ 2), ուրարտերենում հատկացուցիչը հատկացյալի հետ հոլովով և փվով համաձայնում է հավելյալ -n(e)-/-n(a)- մասնիկների միջոցով՝ փաստորեն առաջացնելով հոլովման մոր տիպ, որը տարբերվում է մյուս հոլովումներից: Մենք այն պայմանակետներն անվանում ենք n (հատկացուցիչի) հոլովում (մանրամասն տե՛ս V.2.2): Մասնագիտական գրականությունում բազմիցս նշվել է, որ սեպագիր համակարգում o հնչյունի համար հատուկ նշան չկա և u հնչյունի կամ u-ով կազմված վանկերի համար նախատեսված նշանները ուրարտերենում արտացոլում են նաև o-ն³⁷⁰: Չնայած դրան, բոլոր այն բառերը, որոնց բնավոր ձայնավորը գրում արտացոլվում է u-ով, դասվել են նույն հոլովմանը՝ համարելով, որ դրանց համար գործում են միանման հոլովման կանոններ: Սակայն այս հոլովմանը վերագրվող առնվազն մի քանի բառ հոլովվելիս շեղվում են ընդհանուր կանոնից: Դրանց փվին պետք է դասել ^{KUR}Iš-qi-gu-lu-ú, ^{URU}A-li-iš-tú-ú տեղանունները: Տե՛ս հետևյալ օրինակները.

(179) ku-ṭè-i-a-di pa-a-ri-e ^{URU}A-li-iš-tú-ú [KYKH 174 A2₁₂].

(180) ḫa-ú-bi ^{URU}Ir-da-ni-u-ni pa-ri ^{KUR}Iš-qi-gu-lu-ú [KYKH 179₄₋₅]:

Եթե նկատի ունենանք, որ pari(e) նախդիրը անխտիր պահանջում է տրական կամ ուղեորական հոլով (տե՛ս VII.1), ապա պետք է համապատասխանաբար ունենայինք՝ ...*pare(e) ^{URU}Aliištú(ú)e(di), ...*pare(e) ^{KUR}Išqigulu(ú)e(di), մինչդեռ դա այդպես չէ: Հմմտ. օրինակ.

(181) ku-ṭu-ni pa-ri KURBu-uš-tú-ú-e [KYKH 148₁₅,149₁₃].

(182) ka-ru-ni ^{KUR}ṭu-a-ra-a-ši-ni-e-i hu-[bi] pa-ri ^{SADU}Gur-qu-ú-e [KYKH 173 V₁₂₋₁₃] և այլն³⁷¹.

³⁷⁰ Տե՛ս, օրինակ, И.Дьяконов, 1979, էջ 55:

³⁷¹ Pare նախդիրով կազմված քերականական կապակցությունների մասին տե՛ս VII.1:

Թերևս այս բառերի շարքին է պետք դասել նաև ^{KUR}Babiluս տեղանունը և ^dEiduru դիցանունը, որոնց համար ունենք.

(183) 𐎧𐎠-𐎠𐎡-𐎡𐎢𐎣 ^{KUR}Ba-bi-lu-ú ^{KUR}e-ba-a-ni [KYKH 241 A5].

(184) ...UDU ^d𐎧𐎠𐎡-𐎠𐎡-𐎡𐎢𐎣 KÁ UDU ^dE-i-du-ru UDU ^dba-ba-a... [Ay-susi I₁₁-II₁ (Ayanis I)]:

(184)-ում ^dEiduru դիցանունը անկասկած դրված է տրական հոլովով՝ «...ռչխար Խալդի աստծո դռներին, ռչխար Էդուրուին, ռչխար Բաբա-ին...», հետևաբար պետք է լիներ ^dEiduru(ú)ե կամ Eiduru(ú)ge (ուշ շրջան). մինչդեռ դա այդպես չէ: (183)-ում ^{KUR}Babiluս տեղանունը դրված է սեռական հոլովով, ինչը երևում է նրան հաջորդող ^{KUR}ebani բառից, որը վկայված է իր ուղիղ ձևով: Նման դեպքերում լրացումը, տվյալ դեպքում ^{KUR}Babiluս-ն, անխտիր դրվում է սեռական հոլովով, հակառակ դեպքում պետք է լիներ ^{KUR}ebani(i)e (այս մասին մանրամասն տես V.2.3): Այսպիսով, նշված նյութը մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ ուրարտերենում գոյություն են ունեցել երկու տարբեր հոլովումներ, որոնց բնավոր ձայնավորը գրում արտացոլվել է ս-ով, բայց որոնք հոլովվելիս տարբերվում են իրենց հոլովային վերջավորություններով՝ առնվազն գոնե տրական և սեռական հոլովներում: Առաջին խմբի բառերը նշված հոլովների եզակի թվում, ըստ կանոնի, ստանում են համապատասխանաբար՝ -ue, -ui վերջավորությունները, իսկ երկրորդինը՝ երկու հոլովների համար էլ միևնույն՝ u: Ընդ որում, ուշագրավ է, որ գրում այն առավել հաճախ արտացոլված է կրկնակի ս-ով (տես վերը քերված օրինակները):

V.2.3 ՈՒՐԱՐՏԵՐԵՆ (ԱՍՏՈՐՏԵՐԵՆ) ՀՈՒՈՎ

Ուրարտերենի ուղղական հոլովի ներկայացման հարցում ավանդական և նոր ուղղությունների ներկայացուցիչների տեսակետների մեջ կան որոշակի տարբերություններ: Ոստի հարցը քննարկելիս համառոտակի կներկայացնենք այդ երկուսն էլ: Լրացուցիչ կտրվեն մեր որոշ պարզաբանումները: Կքննարկենք նաև լրացում-լրացյալ կապակցությունները, որոնցում ուղղական հոլովով դրված անունները ցուցաբերում են որոշակի առանձնահատկություններ:

1. Ուրարտերենի ուղղական (քացարձակ) և չձևավորված (ըստ Գ.Մելիքիշվիլու) հոլովները մասնագիտական գրականությունում: Ինչպես արդեն նշվեց, ըստ Գ.Մելիքիշվիլու³⁷², եզակի թվում ուրարտերենի չձևավորված հոլովը համապատասխանում է բառի մաքուր հիմքին, ինչպես՝ pulusi «կոթող», pili «ջրանցք», qiura «հող, գետին», ^{KUR}Buštun «Բուշտու(երկիր)» և այլն: Հոգնակի թվում հիմքին հավելվում է հոգնակիության -li ցուցիչը, ինչպես՝ erelili «արքաներ», burgalali «ամրոցներ» (*): Իսկ ուղղական հոլովը կազմվում է բառի մաքուր հիմքին -ni մասնիկի հավելումով, որը, ըստ իրեն, հավանաբար ծագում է ini ցուցական դերանունից: Ուղղական հոլովի հոգնակին կազմվում է եզակիից՝ հոգնակիության -li ցուցիչի հավելումով՝ առաջացնելով հոգնակի ուղղականի -nili վերջավորությունը: Ըստ նրա՝ այս եկու հոլովները իրենց ֆունկցիոնալությամբ շատ մոտ են կանգնած իրար: Այսպես, չձևավորված հոլովով (դարձյալ ըստ իրեն) դրվում են. 1) անանցողական բայերի սուբյեկտը, թեև խիստ հազվադեպ, ինչպես՝ iu ^d𐎧𐎠𐎡𐎢𐎣 ^{URU}Ardinidi nunali ⁱIšpuini-ni ^{id}Sardurehe, ⁱMenua ^{id}Sardurehe - «երբ Խալդիի առջև Արդինի քաղաք եկան Իշպուինին՝ Սարդուրիի որդին, Մենուան՝ Սարդուրիի որդին», burgalali LUGÁL ^{MES} ^{KUR}Etiuhineli arnuiali - «համարումները (*) էթիուի երկրի թագավորների եկան օգնության», ^d𐎧𐎠𐎡𐎢𐎣 kuru-ni - «Խալդին հզոր (է)», 2) անցողական բայերի օբյեկտը (այս դեպքերը առավել շատ են), ինչպես՝ ⁱMenuaše ⁱIšpuinihiniše ini pili aguni - «Մենուան՝ Իշպուինիի որդին այս ջրանցքը անցկացրեց», ⁱMenuaše ali...terubi ini pulusi - «Մենուան ասում է ... դրեցի (ես) այս կոթողը» և այլն: Նմանապես, դարձյալ ըստ Գ.Մելիքիշվիլու, ուղղական հոլովով դրվում են. 1) անանցողական բայերի սուբյեկտը, ինչպես՝ uštabi ⁱArgišṭini - «արշավեց Արգիշտին», uluštaibi ^d𐎧𐎠𐎡𐎢𐎣 - «առաջնորդեց Խալդին», qiurani manu³⁷³ quldini - «զետինը (այստեղ) խոսպան(*) էր», 2) անցողական բայերի օբյեկտը՝ karuni Ašurnirarini Adadinirarehi LUGÁL ^{KUR}Aššurni KUR-ne, karuni ^{KUR}Manani ^{KUR}Buštuni - «հաղթեց նա (Խալդի աստվածը) Աշուրնիրարիին՝ Ադադինիրարիի որ-

³⁷² Г.Меликишвили, 1964, էջ 30-32:

³⁷³ Գ.Մելիքիշվիլին manu բայը համարում է անանցողական բայ, որն ունի անկանոն խոնարհում:

դուն՝ քազավորին Աշուր երկրի...», ¹⁶huradineli uelidubi - «գորքեր (ես) հավաքեցի», ^Dhaldia istine inanili arnušinili I MU zadubi - «Խաղի աստծո համար այս հերոսությունները (ես) մեկ տարում արեցի» և այլն:

Ինչպես արդեն նշվեց, Ի.Դյակոնովը մերժում է ուղղական և չձևավորված հոլովների առկայությունը ուրարտերենում՝ ընդունելով բառի ուղիղ ձևը ներկայացնող միայն մեկ՝ բացարձակ հոլովի առկայությունը: Որոշ դեպքերում (այդ թվում և թեք հոլովների համար), բառահիմքերի վերջում հավելյալ ո-ի առկայությունը բացատրելու համար նա առաջարկում է այսպես կոչված որոշյալ հոլովման գաղափարը, ըստ որի՝ ուրարտերենում անունները (ինչպես բացարձակ, այնպես էլ այլ հոլովների դեպքում) հոլովվում են երկակի՝ որոշյալ և անորոշ առումով: Նա այս բացարձակ հոլովի եզակի թվի ցուցիչն է համարում -ø-ն, իսկ հոգնակիինը՝ -lə-ն, որոշյալ հոլովման դեպքում՝ համապատասխանաբար -nə-ն և -nelə-ն³⁷⁴: Գ.Վիլհելմը³⁷⁵ մերժում է որոշյալ հոլովի գաղափարը՝ հոգնակի թվի համար առաջարկելով -ne-lə (ուղղականի համար) և -na- գումարած հոլովակերտ մասնիկ (թեք հոլովների համար) վերջավորությունները, որոնց ո բաղադրիչը սղվում է, եթե հիմքը վերջանում է l, r, n հնչյուններից որևիցե մեկով՝ գումարած ձայնավոր (այս մասին մանրամասն տես V.2.2 կետ 1, որտեղ ներկայացված է նաև մեր տեսակետը):

2. Ուրարտերենի ուղղական (բացարձակ) հոլովի որոշ պարզաբանումներ: Թեև ուրարտերենում հայցական հոլով չկա և անանցողական բայերի սուբյեկտը (ենթական) և անցողական բայերի օբյեկտը (ուղիղ խնդիրը) կազմվում են միակերպ, այնուամենայնիվ այս երկու դեպքերում նկատվում են որոշակի տարբերություններ: Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, ուրարտերենում որոշակի տարբերություն է նկատվում նաև ուղիղ ձևով հանդես եկող հատուկ և հասարակ անունների միջև: Ուղղականով դրված անվան վերջավորության ձևը կախված է նաև նրա լրացման բնույթից կամ դրա առկայությունից ընդհանրապես: Նշված հարցերը պարզաբանելու համար մանրամասն քննարկենք այդ դեպքերը առանձին-առանձին:

ա) Անանցողական բայերի սուբյեկտ (ենթակա): Նախ անդրադառնանք եզակի թվին: Ինչպես նշվեց վերը, ըստ Մելիքիշվիլու՝ ուրարտերենում

³⁷⁴ Տես, օրինակ, И.Дьяконов, 1979, էջ 62, աղ. 8; էջ 64, աղ. 9:
³⁷⁵ Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 93-102; G.Wilhelm, 2004, էջ 126-127:

նում անանցողական բայերի ենթական հիմնականում դրվում է ուղղական հոլովով, բայց կարող է դրվել նաև չձևավորված հոլովով, թեև խիստ հազվադեպ: Եզակի թվի համար նա մնան կիրառության համար քերում է iu ^Dhaldikai ^{URU}Ardinidi nunali ^IIšpuini-ni ^{ID}Sardurehe, ^IMenua ^{ID}Sardurehe օրինակը³⁷⁶, որտեղ ^IMenua-ն, որը հանդես է գալիս նախադասության սուբյեկտի դերում, դրված է չձևավորված հոլովով՝ ի հակադրություն նախադասության երկրորդ սուբյեկտի՝ ^IIšpuini-ի, որ դրված է ուղղական հոլովով: Մեզ հայտնի ուրարտական տեքստերի մեջ մենք կարողացանք գտնել ընդամենը մեկ այլ մնան դեպք³⁷⁷, akuke MU ^mRusaa URU ^mArgiš[eh]in[i] ^mŠaga DUMU tara ^(KUR!)Išqugulhie úlab[i] ^{KUR}Manaidi... «այն (*) տարի (երբ) Ռուսայի քաղաքից՝ Արգիշաի որդու, Շագան՝ որդին ավագ (երկրի) Իշքագուլիսի եկավ Մամա երկիրը... » [KYKH 421.3] արտահայտությունում, որտեղ ենթական (սուբյեկտը) կարծես թե դրված է չձևավորված հոլովով: Սակայն մասնագետների շրջանում, բերված արտահայտության ընթերցման հարցում առկա է խիստ անհամաձայնություն: Այսպես, մեզ հետաքրքրող հատվածը Ի.Դյակոնովը կարդում է...^mŠaga DUMU tara LUGÁL Išquguulhie... [YПД, № 12, л.ц. տող. 1-3], Գ.Մելիքիշվիլին՝ ...^mŠa-ga-aš-tar-a LUGÁL Iš-qu-gu-ul-hi-e... [YKH 286_{1,3}], Ֆ.Քյոնիգը՝ ...^mŠa-ga-`a (?) -tar-a ^{KUR}Iš-qu-gu-ul-hi-e... [F.König, 1955(HChI), 131_{1,3}], Մ.Սալվինին՝ ...^mŠa-ga-tur tar-a... [Bastam II, 1988, էջ 134], ավելի ուշ՝ ...^mŠa-ga-pu_x-tar-a... [Ayans I, 2001, էջ 262], Հ.Կարապոյազյանը՝ ^mŠa-ga-DUMU (մեկ բառ) tar-a LUGÁL Iš-qu-gu-ul-hi-e - «Սկայորդին³⁷⁸՝ մեծ արքան... »: Վերջինս, մնան ընթերցումը հիմնավորելիս, նշում է նաև այս օրինաչափությունը, որ ուրարտերենում անանցողական բայերի սուբյեկտը ըստ օրենքի ստանում է -ni վերջամասնիկը³⁷⁹:

³⁷⁶ Բերված է Կելիշինի երկլեզվյա արձանագրությունից [YKH 19₂₆₋₂₇, KYKH 30₂₆₋₂₇]:
³⁷⁷ Գ.Մելիքիշվիլու նշած մեկ այլ՝ ^Dhaldi kuruni - «Խաղին հզոր (է)» օրինակի (տես վերը) ճիշտ մեկնաբանման համար տես Г.Вильгельм, ДВ, 5, էջ 96-97: Տես նաև VII.3 կետ 2:
³⁷⁸ Նա այս ^mŠaga-DUMU-ի մեջ տեսնում է հայոց Սկայորդի քազավորին:
³⁷⁹ Հ.Կարապոյազյան, 1984, էջ 75-80: Նա արդարացիորեն նշում է, որ Վանի արձանագրություններում գաղափարագրերով փոխարինված բառի վերջավորության առկայությունը զրոյն բոլորովին պարտադիր չէ, հետևաբար մնան ընթերցման դեպքում բառավերջի -ni-ն (ինչպես և ցանկացած այլ վանկ) կարող է թաքցվել գաղափարագրի տակ:

Փաստորեն մինչև այժմ հայտի ուրարտական տեքստերում կա ընդամենը մեկ հուսալի վկայություն, որտեղ եզակի թվում անանցողական բայի սուբյեկտը դրված է առանց -ni (-ne) մասնիկի: Մինչդեռ հակառակ վկայությունների քիվը հասնում է մի քանի հարյուրի: Դրանց թվում են նաև հենց նույն Իշպուիհիի և Մինուայի կողմից համատեղ բողած մյուս արձանագրությունները, օրինակ՝ uš-ta-a-li ^mLu-šá-i-ni-e-di ^mIš-pu-ú-i-ni-ni ^{md}Sar₅-du-ri-e-hi ^mMe-nu-ú-a-ni ^mIš-pu-ú-i-ni-hi [KYKH 32₉₋₁₁, 33₉₋₁₁] (հմմտ. Կելիշիհի արձանագրության վերոնշյալ դրվագի հետ): Ըստ այդմ, առավել հավանական է, որ Կելիշիհի արձանագրության այդ դրվագը ուղղակի վրիպակ է, ինչը ուրարտական տեքստերում քացառությունն չէ: Այսպիսով, կարելի է պնդել, որ ուրարտերենում անանցողական բայերով կազմված նախադասության սուբյեկտը (ենթական) միշտ ստանում է -ne վերջամասնիկը՝ համեմայն դեպս հատուկ անունները: Հասարակ անունների համար հուսալի օրինակ մենք չենք գտել³⁸⁰ (մասնագիտական գրականությունում այդպիսին նույնպես չի նշվում):

Հոգնակիի համար Գ.Մելիքիշվիլու կողմից քերված օրինակներին (տե՛ս վերը) կարելի է հավելել ևս մի քանիսը: Բերենք դրանք բոլորը (ներառյալ Մելիքիշվիլու նշածները):

(185) t]a(?) -nu-bi ^mÚ-i-čè-ru-ḫi ^mLu-ú-šá-a ^mKa-tar-za-a [bur]-ga-la-li LUGAL^{MEŠ} [KUR]E-[ti]-ú-ḫi-[ni]-e-l[i] [a]r-nu-ia-l[i] - «ճանապարհ էի հարթում(») (ես)՝ Ուխտերուխիի դեմ, Լուսայի դեմ, Կաթարգայի դեմ, օժանդակ ուժերը(») Էթիունական թագավորներին օգնության եկան ...» [KYKH 31_{л.с.12}, 31_{о.с.3}].

(186) su-ú-i-du-tú ^mÚ-čè-ru-[hi] [^m]Lu-ú-šá-[a] ^mKa-tar-za-a bur-ga-la-li LUGAL-[l]i-l[i] /^{MEŠ} [^{KUR}]E-ti-ú-ḫi-ni-li za-ši-li - «...ես շարտեցիմ (նրանք)՝ Ուխտերուխին, Լուսան, Կաթարգան, օժանդակ ուժերը (») Էթիունական թագավորների: Ամբողջները (») ...» [KYKH 31_{л.с.30}, 31_{о.с.12}].

³⁸⁰ Եթե, իհարկե, որպես այդպիսին չդիտարկենք man- «մնա, լինել» վիճակի բայով կազմված որոշ նախադասություններ, ինչպես՝ qura=ne manu... «զետիմը մնաց(մնացել էր) ...» կամ կրավորական իմաստով՝ «զետիմը բողմվեց/բողմվել էր» (տե՛ս VI.2.1 կետ 3):

(187) [^mA]r-gi-iš-ti-še a-li-e a-li-e-li LUGAL^{MEŠ} [a]r-nu-i-a-li ^mDi-a-ú-hi-ni-e ši-ši-ni MU³⁸¹ [ha]-ú-bi KURLu-šá-e KUR-ni-e ^{KUR}Ka-tar-za-e KUR-ni-e... - «Արգիշտին ասում է՝ թագավորները, որոնք օգնության եկան Դիաուխիական թագավորին երեք(») տարի (անընդմեջ): Գրավեցի ես՝ Լուսա երկիրը, Կաթարգա երկիրը... » [KYKH 174 B1₃₃₋₃₇].

(188) ... a-[ru-me me-še?] ^{KUR}e-ba-ni-e a-li-li URU^(EŠ) ha-ši-a-li lu(?) -a(?) -u-li(?) e-si a-li-li gu-nu-ši-ni-e a-ri bi-ri- «...տվեց ինձ (իր) երկրի հարկը: Որոշ քաղաքները լսեցին ... տեղը, որոշ գորքեր ari biri» [KYKH 174 411 o.c.3-6].

(189) ...ha-ši-al-me DINGIR^{meš} -(l[i])... «...լսեցին ինձ աստվածները...» [...]:

Ուշագրավ է, որ քերված օրինակներում անանցողական բայը ստանում է անցյալ կատարյալի համապատասխան վերջավորության -ia-ով տարբերակը, որը, ըստ երևույթին, կարող է արտահայտել ինչպես անանցողական, այնպես էլ անցողական (ներգործական) բայերի իմաստ և երբեմն հերթագայում է համապատասխան անցողական բայածներին (տե՛ս VI.2.1 կետ 2): Հմմտ. սակայն (185)-ը և (186)-ը, որտեղ նմանատիպ համատեքստում մի կողմից ունենք arnušali (arn-u=ia=le), իսկ մյուս կողմից՝ zašili (zaš=i=le), որն անշուշտ կազմված է zaš- բայական հիմքից և նույնպես կարող է լինել անցյալ կատարյալի 3-րդ դեմքի հոգ. թվի անանցողական բայ (-i-ով տարբերակ)³⁸²:

բ) Անցողական բայերի օբյեկտ (ուղիղ խնդիր): Ուրարտերենում ուղիղ խնդրի դիրքում դրված հասարակ անունները եզակի թվում, որպես կանոն, ոչ մի հավելյալ հոլովային վերջավորություն կամ հոդ չեն ստանում, օրինակ՝

³⁸¹ Ըստ Գ.Մելիքիշվիլու՝ ŠE. ŠE. DÜ «ջարդ իրկանացրի» [1960 (YKH), 134 B1₃₅₋₃₇]:

³⁸² Միգուցե (185)-ում և (187)-ում որպես նախադասության բայ հնարավոր է դիտարկել ta(?)nube-ն և sušidutú-ն, իսկ [a]r-nu-i-a-le-ն համարել դերբայական մի ձև(») (տե՛ս նաև VI.2.4): Այդ դեպքում (185)-ը հնարավոր է թարգմանել «ta(?)n-եցի (ես)՝ Ուխտերուխի(ին), Լուսա(ին), Կաթարգա(ին), burgalale Էթիունական թագավորներ(ին) օգնության եկած (ar-nu=ia=le-ն հմմտ. հայ. յար-նշ-իմ «հարել, միանալ և այլն» (տե՛ս III.2.3 կետ 5):

- (190) ^mIš-pu-ú-i-ni-i-še ^{md}Sar₅-du-ú-ri-e-ḫi-ni-e-še i-ni É-e za-a-du-ú-ni - «Իշպուիինին՝ Սարդուրիի որդին այս տունը սարքեց» [KYKH 16_{1,2,3}].
- (191) a-lu-še i-ni DUB-te pi-tú-li-i-e... - «ով որ այս գրությունը կշարդի...» [KYKH 56₂₂₋₂₃].
- (192) ^mMe-i-nu-ú-a-še ^mIš-pu-u-i-ni-ḫi-ni-še i-ni ^{NA4}pu-lu-si ku-ú-gu-ú-ni - «Մենուան՝ Իշպուիինի որդին այս կոթողը կանգնեցրեց(*)» [KYKH 59 II_{5,8}].
- (193) ^mMe-nu-a-še ^mIš-pu-ú-i-ni-ḫi-ni-še i-ni pi-li-e a-gu-ni «Մենուան՝ Իշպուիինի որդին այս ջրանցքը անցկացրեց» [KYKH 64₂].
- (194) ^{L0}ir-di iš-ti-i-ni a-šú-ú-bi - «կայազոր(*) այստեղ (ես) բողեցի(*)» [KYKH 241D₂₉₋₃₀].
- (195) I UD^{ME} ^{KUR}e-ba-ni-i áš-gu-bi É.GAL^{MEŠ} ḫar-ḫar-šú-b[i] [U]RU^{MEŠ} GIBÍL-bi ^{KUR}e-ba-a-ni a-tú-ú-bi `a-a-š[e] [^{SA}L]lu-tú iš-ti-ni pa-ru-bi - «մեկ օրում երկիրը (ես) գրավեցի, ամրոցները փլեցի, քաղաքները այրեցի, երկիրը հատեցի, տղամարդկանց, կանանց այստեղից բռնեցի» [KYKH 241 C₈₋₁₀] և այլն:

Ինչպես երևում է քերված օրինակներից, այս դիրքում հանդես եկող հասարակ անունները կարող են լրացվել մերձավոր առարկաներ ցույց տվող ini ցուցական դերանունով, որը ամենայն հավանականությամբ այստեղ արտահայտում է որոշյալ իմաստ և, որպես կանոն, դրվում է նախադաս դիրքում: Հավանաբար դրանք ստանում են -ne վերջամասնիկը, ինչպես՝

- (196) a-lu-še ti-ni-ni tú-li-e ma-a-si ti-ni te-li-e - «ով որ անունն ոչնչացնի (և) իր անունը դնի» [KYKH 412b₁₄₋₁₅].
- (197) LUGÁL-ni ^{URU}Bu-i-ni-al-ḫi ^{L0}bu-ra áš-tú-bi - «Բուինիալիսի արքային³⁸³ ստրուկ դարձրի» [KYKH 412b₁₄₋₁₅] և այլն:

³⁸³ Բառացի պետք է քարգմանել «արքա-ն Բուինիա-ական»: Բայց այստեղ բառավորի -ni (-ne)-ն կարող է պատկանել հիմքին, հմմտ. LUGÁL-nu-se (LUGÁL-n=use):

Հատուկ անունների դեպքում գործում է ճիշտ հակառակ օրինակափոթյունը, այսինքն՝ հատուկ անունները, ուղիղ խնդրի դիրքում դրվելիս, որպես կանոն ստանում են -ne վերջամասնիկ, ինչպես՝

- (198) ^mAr-gi-iš-ti-še ^mMe-nu-a-ḫi-ni-še a-li-e [^{URU}Er-bu-ú-ni-ni šì-i-di-iš-tú-ú-bi-e - «Արգիշահին՝ Մենուայի որդին ասում է՝ (քաղաք) Էրեբունին կանուցեցի» [KYKH 174 A₂₁₄₋₁₅].
- (199) ḫa-ú-bi ^{URU}Lu-ḫi-ú-ni-ni `a-al-du-bi ^{URU}Lu-ḫi-ú-ni-ni me-e-šì-ni pi-i-«գրավեցի (քաղաք) Լուխիունին, գեցի (քաղաք) Լուխիունին հարկի տակ» [KYKH 47₁₂₋₁₄].
- (200) ...ma-si-ni ^{GIS}šú-ri-e ka-ru-ni ^{KUR}E-ti-ú-ni-ni - «...իր սրին ենթարկեց (երկիր) Էթիունին» [KYKH 177₁₋₂]
- և այլն, իսկ առավել հազվադեպ հանդես են գալիս անվան մաքուր հիմքով, օրինակ՝
- (201) [m]a-si-ni-e ^{GIS}šú-ri-e ka-ru-ni ^mU-i-ṭè-ru-[ḫi] [k]a-ru-ni ^mLu-ú-šá-a ka-ru-ni ^mKa-a-tar-za-[a] - «իր սրին ենթարկեց Ուիտերուիսի(ին), ենթարկեց Լուսա(ին), ենթարկեց Կատարզա(ին)» [KYKH 32₅₋₆].
- (202) za-áš-gu-ni ^{URU}Qu-ṭu-me-e ḫa-ú-ni ^{KUR}Al-zi-e ḫa-ú-ni ^{KUR}šá-áš-nu-ú-i-ni-i ^{KUR}e-ba-a-ni šì-di-iš-tú-ni É.GAL ^{URU}Qu-ṭu-me-e - «ոչնչացրեց (նա) (քաղաք) Կուտուն-ն, գրավեց (քաղաք) Ալզի-ն, Շաշնուինի երկիր-ն³⁸⁴, կանուցեց ամրոցը (քաղաք) Կուտունի³⁸⁵» [KYKH 148₂₄₋₂₅, 149₂₂₋₂₄] և այլն³⁸⁶:

³⁸⁴ Ճշգրիտ քարգմանությունն է «Սասնուին(ի)-ի (սեռ. հոլով) երկիր(ն)»:

³⁸⁵ Անկասկած տեղանունը այստեղ դրված է տրական և ոչ թե սեռական հոլովով, ինչպես որ քարգմանում է Ն.Հարությունյանը: Ըստ այդմ, պետք է քարգմանել «կանուցեց ամրոց Կուտուն(ն)-ին («Կուտուն» քաղաքի համար)» (տե՛ս V.2.5 կետ 2):

³⁸⁶ Բացառված չէ, որ նման դեպքերում իրականում անունը դրված է ոչ թե ուղիղ, այլ տրական հոլովով: Հմմտ. օրինակ՝ ... ḫa-a-ú-bi ^{KUR}Ur-me-i-e - «գրավեցի (երկիր) Ուրմե-(ն)» [KYKH 58 C_{4,5}] արտահայտության հետ, որտեղ հնարավոր է, որ Ur-me-i-e (Մրմի-ի) տեղանունը դրված է հենց տրական հոլովով «գրավեցի/տիրեցի (երկիր) Ուրմե-ին»:

Ini ցուցական դերանվան (հողի) հետ հատուկ անունները որպես կանոն չեն գործածվում³⁸⁷: Հոգնակի թվում անունները ստանում են - (v-n)ele վերջավորությունը, որը հավելվում է անվան հիմքին, օրինակ.

(203) i-ú ^dyal-di-i-ni-li KÁ ši-di-iš-tú-ú-a-li - «երբ Խալոյան դռները կառուցեց» [KYKH 82_{5,7}].

(204) ^mMe-nu-a-še ^mIš-pu-u-ni-ḫi-ni-še i-ni-li ta-ar-ma-ni-li at-ḫu-a-li ši-di-iš-tú-a-li - «Մեմուան՝ Իշպուիհիի որդին այս աղբյուրները գտավ (և) կառուցեց» [KYKH 118a,b,c_{3,4}].

(205) ^{lú}[ḫu]-ra-di-ni-e-li ú-e-li-du-ú-bi - «մարտիկներ (ես) հավաքեցի» [KYKH 173 III₁] և այլն:

Ընդ որում, -nele/-ele բաշխումը միշտ նույնն է, ինչ որ թեք հոլովների հոգնակիության -na-/-a- ցուցիչների դեպքում: Բերված օրինակները վերաբերում են i և e հոլովման բառերին: A և u հոլովման բառերի համար, ըստ ընդունված կարծիքի (տե՛ս վերը), հոգնակի ուղղականի համապատասխան վերջավորությունը պետք է լիներ -ale կամ -ule (խոսքը չի վերաբերում n-ով տարբերակներին. այդպես հոլովվող բառերը անշուշտ ստանում են -a=nele և -u=nele վերջավորությունները): Սակայն ուրարտական տեքստերում նման հոլովման հուսալի վկայություններ չկան: Թերևս կարելի է որպես այդպիսիք համարել միայն մեկ անգամ վկայված a-su-li-e (ընթերցումը և մեկնաբանումը Ն.Հարությունյանի³⁸⁸)՝ հոգնակի թիվ՝ asu-ni-ḫg(“) («մարգ(“)») և երկու անգամ վկայված [bur]-ga-la-li՝ հոգնակի թիվ՝ burgala-ni-ḫg(“) («ախոյան, հակառակորդ(“)»³⁸⁹) բառերը: Բայց առաջինի ընթերցումը հուսալի չէ. այն տարբեր հետազոտողներ տարբեր ձևով են կարդում (տե՛ս ծան. 388): Ինչ վերաբերում է երկրորդին, ապա ելնելով հա-

³⁸⁷ Որպես բացառություն կարելի է նշել ^dyal-di-ni-li KÁ ši-di-iš-tú-a-li ^dyal-di-ni/^{urú}Ar-ḫu-ni-ú-i-ni-e URU ba-du-si-e i-ni ^dú-a-(i) ṭè-ri-bi šú-zi [KYKH 20a I/II, 42 I/II] արտահայտությունները, սակայն այստեղ i-ni-ն ավելի շուտ վերաբերում է ṭè-ri-bi (-) šú-zi-ին և ոչ թե ^dú-a-(i)-ին:

³⁸⁸ Н.Арутюнян, 1981(ДВМК), էջ 74-76; 2001 (KYKH), էջ 83, ծան. 6: Լեման-Հաուպտը կարդում է *Su-li-e, Գ.Մելիքիշվիլին՝ [?]-su-li-e, Ֆ.Զյունիզը՝ *Su-li-e- (տե՛ս նույն տեղում):

³⁸⁹ Նման բարգմանության համար տե՛ս M.Salvini, SMEA 44/1, 2002, էջ 143: Ե.Գրեկյանն առաջարկում է KUR «բշմամի, հակառակորդ» գաղափարագրի փոխարեն կարդալ PAP «ամբողջ», Մերձ., 2004 թիվ 1, էջ 225, 232:

մատքստից (տե՛ս (185)-ը)՝ այն կարծես պետք է ըմբռնել որպես հոգնակի թվով դրված ածական, որը թվով և հոլովով համաձայնում է գոյականի (որոշյալի) հետ: Սակայն, մյուս կողմից, սրա եզակին համարվող bur-ga-la-ni ձևը, որը վկայված է (168) անհասկանալի արտահայտությունում, նույնպես հանդես է գալիս հոգնակի թվով դրված գոյականի (^{KUR}šúre=le/^{KUR.KUR}MEŠ) հետ: Հետևաբար, այստեղ առավել սպասելի էր burgalale ձևը, բայց դա այսպես չէ: Մյուս կողմից՝ ուրարտական տեքստերում ածականը միշտ չէ, որ թվով համաձայնում է գոյականի հետ: Ամեն դեպքում այս օրինակը նույնպես հուսալի չէ:

Հատուկ անունները հոգնակի թվում հանդես են գալիս հոգնակիակերպ գրված տեղանունների ձևով (անեզական անուններ): Դրանք ուղղական հոլովում ստանում են -(n)ele վերջավորությունը, ինչպես՝ ^mArgište=ḫi=ne=le, ^{md}Sardure=ḫi=ne=le, ^{SAL}Tariria=ḫi=ne=le, ^{KUR}Bia(i)ne=le և այլն:

Ամփոփում: Այսպիսով, եթե ամփոփենք վերոշարադրյալ նյութը, ապա ուրարտերենի ուղղական (բացարձակ) հոլովի վերջավորությունների համար ստանում ենք հետևյալ պատկերը.

Անուն	Վերջավորություն (գրում)	
	եզ. թիվ	հոգ. թիվ
	Սուրյեկա (ենթակա)	
հասարակ	(“)	-(v=n)e=le(“)
հատուկ	-v=ne	(“)
	Օրյեկա (ստիղ խնդիր)	
հասարակ	-v=ne (հազվադեպ), -v=∅	-(v=n)e=le ³⁹⁰
հատուկ	-v=ne, -v=∅ (հազվադեպ)	

Ընդհանուր առմամբ ուղղական հոլովին հատուկ են հետևյալ առանձնահատկությունները:

³⁹⁰ Հոգնակիի -ele ձևը տրված է i, e և n հոլովման բառերի համար: Ինչպես արդեն նշվեց, a և u հոլովման բառերի համար հուսալի վկայություններ չկան: Եթե, ինչպես, իբրև այդպիսին չհամարենք ale=le/alu=še տարբերակների առկայությունը: Սակայն ուրարտերենում al- բառարմատը հանդես է գալիս ինչպես ale, այնպես էլ a.lu հիմքով (տե՛ս V.3 կետ 6):

1) Եզակի ուղղականով դրված բառերը չեն պահանջում համաձայնեցում:

2) Եզակի թվում հասարակ անունները, որպես կանոն, հանդես են գալիս մաքուր հիմքով: Փոխարենը մնան դեպքերում մեծամասամբ լրացվում են *ini* մերձավոր առարկաների ցուցական դերանունով (հանդես են գալիս վերջինիս հետ՝ հարադրմամբ): Հատուկ անունները, ընդհակառակը, հիմնականում ստանում են *-ne* վերջավորությունը և, որպես կանոն, գուրկ են վերոնշյալ դերանվանական լրացումից:

3) Հոգնակի թվում ուղիղ խնդիրը ստանում է *-(v-n)ele* վերջավորությունը: Նման դեպքերում հասարակ անունները կարող են լրացվել մերձավոր առարկաների հոգնակի թվի *inele* ցուցական դերանունով:

4) Ուղղականով դրված ենթական (սուրյեկաը) եզակի թվում միշտ ստանում է *-ne* վերջավորությունը, իսկ հոգնակիում կարծես թե *-(v-n)ele*:

զ) Լրացում-լրացյալ կապակցություններ: Ինչպես արդեն նշվեց, լրացում-լրացյալ կապակցություններում ուղիղ խնդրի ձևը կախված է լրացման բնույթից:

Այսպես, եթե ուղիղ խնդրի լրացումը դրված է սեռական հոլովով, ապա ուղիղ խնդիրը հանդես է գալիս իր մաքուր հիմքով՝ չստանալով որևիցե լրացուցիչ վերջամասնիկ: Բայց եթե ուղիղ խնդիրը ստանում է որևիցե այլ լրացում(ներ), ապա պատկերը փոխվում է: Նման դեպքերում այն բառավերջում ստանում է *-e* հավելյալ մասնիկը (վկայված են միայն *i* հոլովման բառեր, այլ հոլովումներով օրինակներ չկան): Այս երևույթը հատկապես ցայտուն երևում է *ebani* «երկիր, մարզ» բառի գործածություններում: Օրինակ՝

(206) *ha-ú-ni* ^{URU}*še-be-te-ri-a-ni* ^{KUR}*e-ba-ni-e* *ha-ú-ni* ^{URU}*hu-za-a-na-ni* ^{KUR}*e-ba-ni-e* *ha-ú-ni* ^{KUR}*šu-ú-pa-a-ni* [KYKH 56₈₋₁₀].

(207) *ka-ru-bi* ^m*Ar-qù-qi-i-ni* *KUR-ni-e* ^m*A-da-ju-ni* *KUR-ni-e* ^m*Lu-ib-ru-ni* *KUR-ni-e* ^m*E-šú-mu-a-i* (սեռ. հոլով) *KUR-ni* ^m*Ka-am-ni-ú-i* (սեռ. հոլով) ^{KUR}*e-ba-ni* ^{KUR}*Qu-a-al-ba-ni* ^{KUR}*ú-ju-ni-ni* *KUR-ni-e* ^{KUR}*Te-ri-a-ni* *KUR-ni-e* [KYKH 241 F₂₂₋₂₄].

(208) *ha-ú-ni* ^{KUR}*ú-lu-a-ni-e-i* (սեռ. հոլով) ^{KUR}*e-ba-ni* ^{URU}*Da-a-ra-ni* *KUR-ni-e* [KYKH 177 F₆₋₇].

(209) ^{KUR}*e-ba-ni a-tu-(ú)-bi* [...].

(210) *ka-ru-ú-ni* ^{KUR}*Ma-na-a-ni* ^{KUR}*e-ba-ni-i-e* *ka-ru-ú-ni* ^{KUR}*Bu-uš-tú-ni* [KYKH 173 IV₄₄] և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, նախադասության ուղիղ խնդիրը (տվյալ դեպքում *ebani* բառը) հանդես է գալիս իր ուղիղ ձևով բոլոր այն դեպքերում, որտեղ նա չունի լրացում կամ այդ լրացումը դրված է սեռական հոլովով: Ի հակադրություն դրան՝ այն ստանում է *-(i)ie* վերջավորություն, երբ ունի լրացում և այդ լրացումը դրված չէ սեռական հոլովով: Ի.Մեշչանինովը³⁹¹ այս *ebanie* բառաձևի հավելյալ *-e-i* մեջ տեսնում է երրորդ դեմքի դերանուն՝ «նրա» իմաստով (տե՛ս նաև V.3 կետ 2): Նման բացատրությունը միանգամայն հնարավոր է, սակայն մեզ առավել հավանական է թվում, որ այստեղ գործ ունենք միանգամայն այլ երևույթի հետ³⁹² (օրինակ՝ տրական հոլովով հանդես եկող ուղիղ խնդրի հետ): Ցավոք, ինչպես արդեն նշվեց, այլ հոլովումներին պատկանող բառերի նման վկայություններ չունենք, ինչը թույլ չի տալիս ճշգրտելու այս վերջավորության բնույթը³⁹³: Ինչ վերաբերում է լրացմանը, ապա այն նման կապակցություններում կարող է հանդես գալ իր մաքուր հիմքով կամ ստանալ *-ne* կամ *-e* վերջամասնիկներ: Տե՛ս հետևյալ օրինակները՝

(211) [*ha*]-*ú-bi* ^{KUR}*Lu-šá-e* *KUR-ni-e* ^{KUR}*Ka-tar-za-e* *KUR-ni-e* [^m*E-ri-a-ji* *KUR-ni-e*] [KYKH 174 B₁₄₄].

(212) *ka-ru-[b]i-e* ^{KUR}*ú-šú-lu-ni-i* *KUR-ni* ^{KUR}*Bu-qu-ú-e* *KUR-ni* [... [KYKH 409 3,4].

(213) *a-lu-si-(e)* ^{URU}*tu-uš-pa(e)* *URU/pa-ta-ri-(e)* [...]:

(214) X *ma-na(-e)* GUŠKIN *tú-a-g[i]* X *ma-na(-e)* KU. BABBAR [KYKH 241 E₅₄₋₅₅. 174 B₁₂₀].

³⁹¹ И. Мещанинов, 1958, т. 2 80-85:

³⁹² Ի.Մեշչանինովի առաջարկին հարմար չեն, օրինակ՝ *ha-a-ú-bi* ^{KUR}*Ur-me-i-e* [KYKH 55c₄] և այլ նմանատիպ արտահայտությունները, որտեղ ենթադրվող «նվաճեցի/տիրեցի Ուրմի/ե-(ն)-նրա» թարգմանությունը իմաստազուրկ է:

³⁹³ Ուշագրավ է, որ նման գործածությամբ, բայց հոգնակի թվով դրված բառերը կարծես թե ստանում են *-iase* վերջավորությունը (այս մասին տե՛ս V.2.9 կետ 3):

(215) X ma-na(-e) GUŠKIN [KYKH 241 G₁₁, 174 B1₂₁] և այլն³⁹⁴:

Հմտ. օրինակ (185)-(186)-ը և (211)-ը, որոնցում մի կողմից ունենք [m]Lu-ú-šá-[a] ^mKa-tar-za-a, իսկ մյուս կողմից ^{KUR}Lu-šá-e KUR-ni-e ^{KUR}Ka-tar-za-e KUR-ni-e: Նյութի սակավության և միատիպության պատճառով առայժմ դժվարանում ենք տալ նմանօրինակ լրացում-լրացյալ կապակցություններում անունների գործածության համապարփակ պատկերը:

V.2.4 ԵՐԳԱՏԻՎ ՀՈԼՈՎ

Ուրարտերենը պատկանում է երգատիվ կառուցվածք ունեցող լեզուների թվին, ինչը ենթադրում է, որ անցողական բայերի օրյեկտը (ուղիղ խնդիրը) և անանցողական բայերի սուրյեկտը (ենթական) կազմվում են միանման, իսկ անցողական բայերի սուրյեկտը ստանում է հատուկ հոլով, որը գիտական գրականությունում ստացել է «երգատիվ» անվանումը:

1. Ուրարտերենի երգատիվ հոլովը մասնագիտական գրականությունում: Մասնագիտական գրականությունում այս հոլովի ցուցիչն է համարվում -še-ն կամ -š-ն³⁹⁵: Այն եզակի թվում հավելվում է անվան հիմքին, իսկ հոգնակիում՝ հոգնակիության -(n)a- ցուցիչին, օրինակ՝ ^mIšpuini=še ^{md}Sardurehini=še ini é-e zadune - «Իշպուինին՝ Սարդուրիի որդին այս տունը սարքեց» (եզ. թիվ), ale ^{LD}A.SI^{MES}-(a)=še partu šere partu - «ինչը զինվորները քշեցին քշեցին առանձին» (հոգ. թիվ) և այլն³⁹⁶:

2. Ուրարտերենի երգատիվ կառուցվածքին վերաբերող որոշ դիտարկումներ: Ուրարտերենի երգատիվ կառուցվածքում նկատվում են հետևյալ առանձնահատկությունները և շեղումները. 1) եզակի թվում անանցողական բայերի սուրյեկտը, որը բնականաբար դրվում է ուղղական հոլովով, բառավերջում միշտ ստանում է -ne[-n] մասնիկը: Մինչդեռ անցողական բայերի օրյեկտի համար այդ մասնիկը պարտադիր չէ, այսինքն այն հանդես է գալիս երկակի՝ ի հակադրություն անանցողական

³⁹⁴ Այս հավելյալ -e-ի համար հմտ. նաև նւ «ոչ» բառը, որը հաճախ գրվում է նաև úe ձևով:

³⁹⁵ Հիմնականում վկայված է -še ձևով: Երկու դեպքում էլ պետք է ընթերցել [-s]:

³⁹⁶ Այս հոլովի մասին տե՛ս, օրինակ, Г.Меликишвили 1960, էջ 55; 1964, էջ 32-33 և այլն:

բայերի սուրյեկտի (օրինակների և հավելյալ քացատրությունների համար տե՛ս V.2.3). 2) որոշ դեպքերում երգատիվ հոլովով դրված սուրյեկտին մախադասության մեջ համապատասխանում է անանցողական բայ, համեմայն դեպս՝ ձևով: Եվ հակառակը, ուղղական հոլովով դրված սուրյեկտին համապատասխանում է անցողական բայ, օրինակ՝ a-še LUGAL-ni ^ošal-di-ni a-šú-me [KYKH 412₄], ^ošal-di-še si-li-iš-ti-li ma-si-ni-li KÁ al-zi-na-i ^ošal-di-na-a KÁ bi-di (եթե, իհարկե, si-li-iš-ti-li-ն բայ է) [KYKH 424₉, Ay-susi II₂ (Ayanis I)] և այլն: Այնուամենայնիվ հարկ է նշել, որ շեղումներով օրինակները սակավաթիվ են և այնքան էլ հուսալի չեն:

V.2.5 ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

Այս հոլովը ներկայացնելիս կքննարկենք նաև սեռական հոլովի հետ սերտորեն առնչվող պատկանելության -je/-ji- ածանցի հարցը:

1. Ուրարտերենի սեռական հոլովը մասնագիտական գրականությունում: Գ.Մելիքիշվիլին³⁹⁷, հիմնականում հետևելով Յ. Ֆրիդրիխին³⁹⁸, ուրարտերենի սեռականի եզակի թվի հոլովակերտ մասնիկ է համարում i-ն, որը հավելվում է a-ով կամ u-ով հիմքերին՝ կազմելով համապատասխանաբար -ai և -ui, իսկ -i-ով հիմքերի դեպքում -i վերջավորությունները: Վերջինս գրում կարող է ներկայացվել ինչպես մեկ (-i), այնպես էլ կրկնակի (-i-i) i-ով: Ընդ որում, հաճախ -(i)-i-ի փոխարեն սեռական հոլովը ստանում է -e կամ -iei վերջավորություններ: Ի.Դյակոնովը եզակի թվի համար սեռական հոլովի մասնիկ է համարում i-ն³⁹⁹, որի տեսքը սակայն, ինչպես ինքն է պնդում, հաճախ կախված է հիմքի բնավոր ձայնավորից: Նա -a, -u/o և -i հիմքերով բառերի համար որպես սեռական հոլովի եզ. թվի վերջավորություններ տեսնում է, համապատասխանաբար՝ -a-i-ն, -u/o-i-ն և -e-i-ն, միևնույն ժամանակ նշելով, որ վերջիններս ձուլման հետևանքով կարող են տալ մոր վերջավորություններ՝ -a (< a-i), -u/o (< -u/o-i) և -e (<

³⁹⁷ Г.Меликишвили, 1960, էջ 55-56; 1964, էջ 23-24, 33-34:

³⁹⁸ J.Friedrich, 1933, էջ 12:

³⁹⁹ Նա նաև հնարավոր է համարում, որ ^{KUR}X-ue edia [128A4₂₅, 155A1₄ և այլն] տեսքի բառակապակցություններում -ue-ի տակ պետք է տեսնել սեռական հոլովի արխաիկ ձևույթ [1979, էջ 95, ծան. a]:

e-i)⁴⁰⁰: Մասնագիտական գրականությունում ուրարտերենի հոգնակի բլի սեռականի հոլովակերտ մասնիկ է համարվում -ue/i-ն, որը միանում է թեք հոլովների հոգնակիության -a ցուցիչին՝ կազմելով -aue/-aui վերջավորություն, որը, որպես կանոն, հավելվում է ուղղական հոլովով դրված բառերին, ինչպես՝ ^{KUR}ebaninaue (< ebanini-aue) DINGIR «երկրների աստծուն», ^Dsuininaue DINGIR «լճերի աստծուն»: Երբեմն՝ մաքուր հիմքին, ինչպես՝ LUGÁL erilaue «արքայից արքա»⁴⁰¹:

Եթե փորձենք ընդհանրացնել վերոշարադրյալը, ապա ստացվում է, որ ուրարտերենի եզակի բլի սեռական հոլովի հոլովակերտ մասնիկն է i-ն (համեմայն դեպս՝ գրում): Այն հավելվում է բառահիմքի -a, -u և -i ձայնավորներին՝ համապատասխանաբար կազմելով -ai, -ui և -i (գրվում է -ci կամ -ci-i) վերջավորությունները: Առավել հազվադեպ սեռական հոլովի հոլովակերտ մասնիկի դերում հանդես է գալիս -e-ն, ըստ Ի.Գյակոնովի՝ նաև -a-ն և -u/o-ն, ինչը, ըստ նրա, ենթադրաբար արդյունք է i/e հերթագայության կամ բնավոր ձայնավորի հետ սեռականի i մասնիկի ձուլման:

2. Ուրարտերենի սեռական հոլովի որոշ պարզաբանումներ: Ուրարտական արձանագրություններում առկա -i/e հերթագայության դերի գերազանահատուճը հաճախ հանգեցնում է հոլովային վերջավորությունների թյուրըմբռման: Կարծում ենք, որ իրականում ուրարտերենում առկա է սեռական հոլովի առավել կանոնավոր համակարգ, քան ներկայացվում է: Այսպես, ուրարտական տեքստերի՝ մեր կողմից կատարված դիտարկումները մեզ թույլ են տալիս պնդելու, որ i հիմքով բառերի սեռական հոլովի վերջավորությունն է -ei-ն՝ գրում -ce(e)i (պետք է ենթադրել, որ հիմքակազմ -i-ին հոլովակերտ i-ից առաջ վերածվում է e-ի), իսկ a և u[o] հիմքերով բառերի համար, համապատասխանաբար՝ -ai-ն և -ui[o]i-ն: Ինչ վերաբերում է հազվադեպ հանդիպող շեղումներին, ապա դրանք կա՛մ արդյունք են սեռական/տրական հերթագայման (տե՛ս ստորև՝ կետ 4), կա՛մ պայմանավորված են սեպագիր հա-

մակարգի անկատարելությամբ, բայց ոչ լեզվում առկա իրական հնչյունափոխություններով: Հարցը պարզաբանելու համար քննարկենք այն դեպքերը, ուր նկատվում են շեղումներ նշված կանոններից: Բերենք մի քանի օրինակներ զանազան առարկաների վրա գրված կարճ արձանագրություններից.

(216) ^{md}Sar₅-du-ri-e-i NÍG.GA - «Մարդուրի-ի սեփականություն» [KYKH 308-309].

(217) ^mMe-nu-a/^{md}Sar₅-du-ri-(e/i) / ^mAr-gi-iš-ti-e/i NÍG - «N-ի սեփականություն» [KYKH 169-171, 231, 234, 310-381] և այլն:

Առաջին հայացքից (217)-ում քերված օրինակները հակասում են վերոհիշյալ պնդմանը, քանզի այնտեղ արքայի անվան համար ունենք -ci/e-(i/e) վերջավորություններ՝ ի հակադրություն (216)-ում ներկայացված ձևի (-ce-ei): Բայց (216)-ում ունենք NÍG.GA «սեփականություն» գաղափարագիրը, իսկ (217)-ում՝ NÍG: Ենթադրվում է, որ այս NÍG-ը NÍG.GA-ի կրճատ տարբերակն է, հետևաբար բացառված չէ, որ արքայի անունը նույնպես կրճատ է գրված (զանազան առարկաների վրա գրված կարճ արձանագրություններում այդպես հաճախ է լինում): Մյուս կողմից՝ NÍG գաղափարագիրը, ի հակադրություն NÍG.GA-ի, կարելի է կարդալ իր սովորական՝ GAR ձևով (ասուր. šaknu(m)- «տիրակալ, կառավարիչ»), որը ուրարտական տեքստերում արդեն վկայված է, իսկ Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում համապատասխանում է ուրարտ. aluse-ին և վերաբերում է Իշյուիինի արքային [KYKH արձ. 30 սու. 3/ ուր. 4]: Նման ընթերցման դեպքում (217)-ում քերված արձանագրությունները կարելի է թարգմանել՝ «տիրակալ/կառավարիչ Մինուա/Արգիշտի/Մարդուրի»⁴⁰², ուր արքայի անունը դրված է ուղիղ ձևով և ոչ թե սեռական հոլովով: Բերենք մի քանի օրինակներ ևս, որտեղ կարծես թե առկա է շեղում վերոնշյալ օրինաչափությունից.

(218) ...LUGÁL ^{KUR}Bi-a-i-na-ú-e (LUGÁL e-ri-e-la-ú-e) a-lu-si-(e) ^{URU}Tu-uš-p-a-(a)-(e) pa-ta-ri-

⁴⁰⁰ I.Diakonoff, 1971, էջ 87-113; 1979, էջ 61-67, 95 ծան. c: Գ.Վիլիեմսը սեռական հոլովի ձևույթ է համարում -i-ն, -ei-ն և -e-ն [DB, 5, 1988, էջ 95], ավելի ուշ նշում է միայն -i-ն [2004, էջ 126-127]: Մ.Խաչիկյանը հիմնականում կրկնում է Ի.Գյակոնովին [1985, էջ 71-78]:

⁴⁰¹ Տե՛ս եզ. բլի համար նշված գրականությունը: Օրինակները և նրանց թարգմանությունները տրված են ըստ Գ.Մելիքիշվիլու:

⁴⁰² Նման ընթերցմանը կարծես թե հակասում է KYKH 231 արձանագրությունը, որտեղ ունենք «NÍG ^mAr-gi-iš-ti-i u-[ri-iš-ḫi]», բայց իրականում ենթադրյալ ur-iš-ḫi բառից այստեղ պահպանված է միայն առաջին նշանը՝ այն էլ այդ բառի համար անսովոր ս տեսքով (մյուս բոլոր դեպքերում առկա է ú), հետևաբար այս օրինակը հուսալի չէ:

(e) /URU-(e) - «...արքա Բիսին(ներ)ի, (արքա արքաների) տիրակալ Տուշպա քաղաքի» [KYKH 30_{3,18}, 36 I₂, 39₁, 45₁₃, 46₉ 56₁₇...].

(219) ^{me-n-u-a-i-ni-ei} ^{SAL}si-la-ie ^{SAL}Ta-ri-ri-a-i ini ^{GIS}ul-di ^{SAL}Ta-ri-ri-a-ḫi-ni-li ti-i-ni - «...Մենուայան կնոջ՝ Թարիրիաի այս այգին, Թարիրիախինիի (t) անունը» [KYKH 137 I₁] և այլն:

Որոշակի հակասություն ունենք (218)-ում ներկայացված արտահայտությունում, ուր patare «քաղաք, բերդաքաղաք» բառը ունի -ri (e) (=re (e)) վերջավորությունը, թեև համատեքստը կարծես թե պահանջում է սեռական հոլով («...տիրակալ տուշպա քաղաք-ի»): Սույն դրվագի նման ընթերցման համար վճռորոշ դեր ունի aluse բառի ճշգրիտ թարգմանությունը: Այն կազմված է al- «տեր» արմատից և -use ածանցից: Բայց եթե նկատի ունենանք, որ սույն ածանցը այլուր անձ ցույց տվող նշանակությամբ ոչ մի անգամ վկայված չէ (ուրարտերենում այն հիմնականում ունի տեղացույց նշանակություն, տե՛ս IV.3 կետ 2.11)⁴⁰³, ապա aluse-ի «տիրակալ» թարգմանությունը դառնում է կասկածելի: Այս տեսանկյունից aluse-ն ավելի շուտ պետք է նշանակի «տիրուհական վայր», քան «տեր, կառավարիչ» (հմտ. aluse (e) ^{URU}Tušpa (e) URU և նմանատիպ՝ URU LUGÁL-(nu)se (e) - «քաղավորանիստ (նման թարգմանության համար տե՛ս IV.3 կետ 2) քաղաք» արտահայտությունները⁴⁰⁴ [KYKH 173 I₂, 241 A₁₆₋₁₇, 244₁₉ այլն]: Իսկ (219)-ը պետք է թարգմանել «Մինուա-ի կին՝ Թարիրիա-ի այգին ...», որտեղ արքայի անունը դրված է սեռական հոլովով և համաձայնում է նրա կնոջ՝ Թարիրիայի անվան հետ, որը նույնպես դրված է սեռական հոլովով: Ինչ վերաբերում է ^{SAL}silae «կին» բառածին, ապա այն, ամենայն հավանականությամբ, դրված է իր ուղիղ ձևով: Սեռական հոլովի դեպքում ակնհայտորեն պետք է լիներ ^{SAL}silai, ինչպես որ a հոլովման մյուս բոլոր բառերի դեպքում (եթե, իհարկե, բառահիմքը silai-

⁴⁰³ - (u) se-ով ածանցվում են նաև որոշ դերանուններ (տե՛ս IV.3 կետ 2): Սակայն այստեղ al(u)- արմատի տակ ուրարտ. alu/e դերանվան առկայությունը թեև հավանական է:

⁴⁰⁴ Այդ դեպքում, (218)-ի նշյալ հատվածը թերևս կարելի է թարգմանել «տիրանիստ Տուշպա[Տոսպա] քաղաք(»): Patare «(բերդա)քաղաք» բառի սեռականը անկասկած պետք է լիներ patar=ei, ինչը որ ունենք KYKH 182₁₋₃-ում:

չ): Հնարավոր է նաև, որ այստեղ գործ ունենք սեռական/ տրական հերթազայության հետ (մանրամասն տե՛ս ստորև՝ կետ 4):

Այլ սակավաթիվ դրվագներում որտեղ առաջին հայացքից նույնպես կարծես առկա է շեղում վերոնշյալ օրինաչափությունից, իրականում կա՛մ մեզ հետաքրքրող բառը դրված է այլ հոլովով, կա՛մ գործ ունենք սխալ ընթերցման հետ, ինչպես՝ X L^{UMES} gunušine eršidube eštine ^{KUR}ḫate (ḫa-te-e) ^{KUR}šupane (šu-ú-pa-a-né) «Խաթի երկրի և Շուպանի երկրի X զինվորներ ես այնտեղ բնակեցրի» արտահայտությունում միանգամայն անհասկանալի է ^{KUR}ḫa-te-e և ^{KUR}šu-ú-pa-a-né տեղանունների համար սեռական հոլովի ենթադրումը: Այն առանց դժվարության կարելի է կարդալ՝ «X զինվորներ այստեղ-ից (eštine=ne՝ քացառ. հոլով) թողեցի (երկիր)Խաթե, (երկիր) Շուպանե» կամ «X զինվորներ այստեղ թողեցի Խատե-ից (քացառ. հոլով), Շուպանե-ից (քացառ. հոլով)»: Կասկածից վեր է, որ, օրինակ, ^{KUR}šupa (ne) տեղանվան համար սեռական հոլովում կունենայինք ^{KUR}šupa (a) i (^{KUR}šupa=i) կամ ^{KUR}šupane (e) i (^{KUR}šupan=ei):

Ինչ վերաբերում է հատկացուցիչի (n) հոլովմանը (տե՛ս V.2.2 կետ 3), ապա համաձայնեցման -n (e) - մասնիկի հավելումից հետո այն հոլովվում է -i հոլովման բառերի տիպով, ինչպես՝ ^mIšpuuini=i=n=ei/^mMenua=i=n=ei/^mRusa=i=n=ei urišḫ=usin=ei - «Իշպուինի-ի/Մինուա-ի/Ռուսա-ի պահեստ-ի» [KYKH 391₄, 392₁₀, 27-29, 152, 154...], ^{md}Sarduri=i=n=ei ^{GIS}udul=ei «Մարդուրի-ի խաղողի այգու» [KYKH 273₆₋₇], ^dḫaldi=i=n=ei patar=ei - «Խալդի-ի քաղաք-ի» [KYKH 282_{1,3}] և այլն: Ոչազրավ է, որ հատկացուցիչի դերում հանդես եկող i հոլովման բառերի բնավոր i-ն e-ի չի հնչյունափոխվում, ինչպես որ ունենք սեռական հոլովի գործածման այլ դեպքերում: Այսինքն, մենք ունենք՝ ^mIšpuuini=i=n=ei, ^dḫaldi=i=na=ne և այլն, և ոչ թե՛ *^mIšpuuine=i=n=ei, *^dḫalde=i=na=ne:

Հոգնակի թվում, ինչպես սեռական, այնպես էլ տրական հոլովի համար ներկայացվող -aui տարբերակը հուսալի չէ: Այն վկայված է միայն՝ ^{KUR}Biain=aue ušmaše ^{KUR}luluin=au (i) napaḫiaidi - «Բիայն(եր)-ին հզորություն, թշնամի երկրներ-ին հնազանդություն(»)^(*) [KYKH 173 II₃₃, 174 AII₁₄, 200₅, 200₅ և այլն] կաղապարային արտահայտությունում, որի նման մեկնաբանումը հուսալի չէ՝ ^{KUR}luluinaui/

^{KUR}luluinau հերթագայության և napahiaidi բառի կասկածելի բարգմանության պատճառով:

Եթե ի նկատի ունենանք վերոշարադրյալ նյութում արված դիտարկումները, ապա ուրարտերենի սեռական հոլովի համար ստացվող պատկերը հնարավոր է ներկայացնել հետևյալ աղյուսակի տեսքով.

Հիմք	Վերջավորություն		հոգ. քիվ
	եզ. քիվ		
i	- e(e)i	[-e=y(-ē)]	
a	- a(a)i	[-a=y]	-(n)a=(u)e
u [o]	- u(u)i	[-o=y]	
u [u] ⁴⁰⁵	- u(u)	[-u]	
n	- ne(e)i	[-ne=y(-nē)]	-na=(u)e

3. Ուրարտերենի -իե /-ի- ածանցին վերաբերող որոշ պարզաբանումներ: Այս ածանցի մասին մանրամասն տես IV.3 կետ 2.1: Այստեղ մենք կանգ կառնենք սույն ածանցի և սեռական հոլովի հնարավոր կապի վրա: Դիտարկենք հետևյալ օրինակները.

(220) ...ka-ru-ni LUGÁL ^ME-ri-a-ի ^{KUR}e-ba-ni-e ka-ru-n[i] ^A-bi-li-a-ni-ի ^{KUR}e-ba-ni-e-«... ենթարկեց (իրեն) արքային (ցեղ) Էրիախի երկրի, ենթարկեց (ցեղ) Աբիլիանիսի երկիրը» [KYKH 241 C₂₀].

(221) ka-ru-ni ^MDi-ú-ši-ni-ni ^MI-ga-ni-e-ի LUG(ÁL) ^{KUR}E-ti-ú-ի ^{KUR}e-ba-ni-e-«... ենթարկեց (իրեն) Իզանիի որդի Դիուծին արքային՝ Էրիախի երկրի» [KYKH 241 C₄₉].

(222) [k]a-ru-ni ^MMu-ri-nu-ni LUGÁL ^{KUR}ú-e-li-ku-ի KUR-ni-e-«... ենթարկեց (իրեն) Մուրինուին՝ Վելիկուխի երկրի արքային» [KYKH 242 DI+DII₃].

(223) LUGÁL ^{KUR}ú-e-li-ku-ի ka-ru-bi-«... Վելիկուխի արքային ենթարկեց (իրեն)» [KYKH 388₂].

(224) ka-ru-ni ^Mhi-la-ru-a-da-ni ^Mšá-ju-ի LUGÁL ^{URU}Me-li-tē-al-ի-e⁴⁰⁶ KUR-ni-e-«... ենթարկեց (իրեն)

⁴⁰⁵ Մ[u] հոլովման համար տես V.2.2 կետ 3:

⁴⁰⁶ Որոշ տեղանուններում -իե-ի փոխարեն առկա է -alիե կամ -ulիե (տես IV.3 կետ 2.3):

Շախուի որդի Խիլարուադի արքային՝ Մելիտեախի երկրի» [KYKH 244₂] ... և այլն:

Բերված արտահայտությունների և օրինակ (253)-(254)-ի համեմատումը ցույց է տալիս, որ փաստորեն նույն համատեքստում մի կողմից ունենք karuni (...) LUGÁL ^MX-իե (արքայի անունը ստանում է -իե ածանցը), մյուս կողմից՝ karuni (...) LUGÁL ^MX-i (արքայի անունը դրված է սեռ. հոլովով): Ուշագրավ է, որ i քնավոր ձայնավորով վերջացող անուններին -իե ածանցի հավելման դեպքում քնավոր i-ն վեր է անվում է -e-ի՝ առաջացնելով -eիե[-eh] վերջավորությունը, ինչպես՝ ^MArgište(e)=իե (տրգ. ^MArgišti(i)=šē), ^MIšpuine(e)=իե (տրգ. ^MIšpuuini(i)=šē), ^MAbeliane(e)=իե և այլն, ճիշտ ինչպես սեռական հոլովի դեպքում (հմմտ. i հոլովման բառերի սեռականի -ei[-ey] վերջավորության հետ): Պատկանելության -իե/-ի- ածանցի նման պահվածքը վկայում է վերջինիս և սեռականի հոլովակերտ մասնիկի սերտ կապի մասին⁴⁰⁷: Հավանական է նաև, որ դրանք ունեն ընդհանուր ծագում:

4. Սեռական/տրական հերթագայման փաստերը ուրարտերենում: Երբեմն ուրարտական տեքստերում հանդիպում ենք սեռական հոլովով դրված բառերի, որոնք կրկնօրինակներում վկայված են տրականով: Բերենք օրինակներ Մեերի Դոան կրկնօրինակ արձանագրությունից՝ ^dUTU ITU a-šu-še ma-nu-še ^dhal-di-e-i ^dIM ^dUTU DINGIR^{MES} UKKIN^{MES}/^dUTU-ni-ni ITU a-šu-ú-še ma-a-nu-še ^dhal-di-e ^dIM ^dUTU DINGIR^{MES} UKKIN^{MES} [KYKH 38 I₂₋₃ / II₃₋₄], ^dhal-di-ni ni-ri-bi-e IV UDU^{MES}/[IV UDU ^dhal-di-ni ni]-ri-bi-i [KYKH 38 I₂₀ / II₃₅], a-še GIS^{MES} ú-i al-di-ni-i-e gu-du-ú-li/a-še GIS^{MES} ú-i al-[di]-ni-i [gu-du-ú-li] [KYKH 38 I₂₉/II₅₉]: Բերված հատվածների առաջին օրինակներում ունենք՝ ^dhal-di-e-i, ni-ri-bi-e, al-di-ni-i-e, իսկ երկրորդներում՝ ^dhal-di-e, ni]-ri-bi-i, al-[di]-ni-i բառակերտ: Եթե ni]-ri-bi-i-ի և al-[di]-ni-i-ի համար դեռ կարելի է ենթադրել տրական հոլովի համառոտ ձև, ապա ^dhal-di-e-i/^dhal-di-e հերթագայումը վկայում է, որ այստեղ գործ ունենք սեռական/տրական հերթագայման հետ: Տարբեր քերականական ձևերի գոր-

⁴⁰⁷ Այն, որ այս ածանցը գործառնությամբ մտա է սեռական հոլովին, նշում է նաև Ի.Մեչլանիանովը [1958, էջ 93]:

ծածունը Մեերի Դռան արձանագրության 1-ին և 2-րդ օրինակներում հատուկ է նաև բայերի խոնարհմանը, ինչը կասկած չի բողոքում, որ տարբերությունները այստեղ քերականական (ոճական) են և ոչ թե գրային:

Հավանաբար նույն երևույթն է առկա նաև այլ արձանագրություններին և րից վերցված հետևյալ արտահայտություններում.

- (225) ...^{md}Sar₅-du-ri-ni-i ti-i-ni ^{md}Sar₅-du-ri-ni-i ^{GIS}u-du-li-e-i - «...Սարդուրյան անունը՝ Սարդուրյան խաղողի այգու» [KYKH 273 6-7].
- (226) ^dHal-di-ni-i URU-i-e pu-lu-si ... ^dHal-di-ni-e-i URU-e-i - «... Խաղյան քաղաքին կոթող ... Խաղիի քաղաքի» [KYKH 282₁₋₃].
- (227) ^mMe-nu-a-i-ni-e-i ^{SAL}si-la-i-e ^{SAL}Ta-ri-ri-a-i i-ni ^{GIS}ul-di ^{SAL}Ta-ri-ri-a-ի-ni-li ti-i-ni - «...Մենուայան կնոջ՝ Թարիիայի այս այգին, Թարիիայիսինի-լի (t) անունը» [KYKH 137 I₁].
- (228) ^mRu-sa-a-ni-i URU TUR-gi - «Ռուսայան փոքր քաղաքին» [KYKH 423].
- (229) ^dHal-di-ni-i a-ma-ni(-)⁴⁰⁸i-gi-di ip-ի-e (^dHal-di-ni-i ba-du-si-ni i-ն ur-zi-e) - «» [KYKH 415₁₀, Ay-susi IV_{8.9} (Ayanis I)] և այլն⁴⁰⁹:

Եթե ^{md}Sar₅-du-ri-ni-i ^{GIS}u-du-li-e-i (^{md}Sarduri=i=-ne=i ^{GIS}udule=i) և ^dHal-di-ni-e-i URU-e-i (^dHal-di=i=-ne=i *patare=i) դրվագներում հատկացուցիչը ըստ կանոնի համաձայնում է սեռական հոլովով դրված հատկացյալի հետ, ապա ^{md}Sar₅-du-ri-ni-i ti-i-ni (^{md}Sarduri=i=n=ei tin=e/i),

⁴⁰⁸ Մ.Սալվինին կարդում է «^dHal-di-ni-i a-ma-ni i-gi-di...», ինչը, ըստ մեզ, քիչ հավանական է, քանզի այդ դեպքում պետք է լիներ *^dHalde(e) i aman i (ուղական հոլով) igidi..., եթե իհարկե aman-ի տակ չենք հասկանում տրական հոլովով դրված բառ՝ aman (e) =e ընթերցմամբ:

⁴⁰⁹ Դե-ri-bi(-) ճն-zi հատվածի անհասկանալի լինելու պատճառով առայժմ պարզ չէ «i-ni ^dU-a-i Դե-ri-bi(-) ճն-zi ku-gu-ն-(ni)» [KYKH 20 I/II], և «i-ni ^dU-a Դե-ri-bi(-) ճն-zi ku-gu-ն-ը» [KYKH 42 I/II] զուգահեռ հատվածներում առկա ^dU-a/^dU-a-i հերթագայման բնույթը: Պարզ չէ նաև վերջինիս հոլովը: Բացառված չէ, որ այստեղ նույնպես գործ ունենք սեռական/տրական հերթագայման հետ:

^dHal-di-ni-e-i URU-i-e (^dHal-di=i=n=ei patar=ie) (225)-(226) և ^mRu-sa-a-ni-i URU TUR-gi (228) դրվագներում առկա է անհամաձայնություն, քանզի հատկացուցիչը հատկացյալի հետ համաձայնելիս ստանում է սեռական հոլովի վերջավորություն, մինչդեռ հատկացյալը դրված է տրական կամ ուղղական հոլովով⁴¹⁰: Եթե (227)-ում նույնպես գործ ունենք սեռական/տրական հերթագայության հետ, ապա ^{SAL}silae-ի փոխարեն պետք է լիներ ^{SAL}sil(a), եթե իհարկե այստեղ արմատը ^{SAL}silai-ն չէ⁴¹¹ (հմմտ. նաև ^{LGOD}p[a-ի-ni ^{UDU}ճն-ճե]? ^dHal-di-e ur-bu-li-ni ^{GOD}AB ^dHal-di [^{SAL?}si-la-i-e «ցուլ (և)ոչխար Խաղիին թող զոհաբերվի, կով Խաղիի կնոջը» [KYKH 39a₅], որտեղ համատեքստը ^dHal-di-[x?⁴¹²]-si-la-i-e-ի համար անշուշտ պահանջում է տրական հոլով): (229)-ում կարծես թե ունենք ուղևորական հոլովով դրված հատկացյալ, մինչդեռ հատկացուցիչը դրված է սեռական հոլովով: Բայց վերջինիս ընթերցումը հուսալի չէ, հնարավոր է նաև՝ ^dHal-di-ni-i a-ma-ni-i gi-di(-)ip-ի-e (հատկացուցիչը թվով և հոլովով համաձայնում է հատկացյալի հետ) կամ ^dHal-di-ni-i a-ma-ni-i-gi di-ip-ի-e (առկա է տրական/սեռական հերթագայություն): Ըստ երևույթին, սեռականի իմաստով հանդես եկող տրական հոլով է առկա նաև՝ tն-ri-ni-ni ... ma-ni ti-i-ni ar-mu-zi-i ar-mu-zi-gi ar-mu-zi... - «թող ոչնչացնեն ... նրան, անունը, զարմը, զարմի (armuzi=ge) զարմը...» [Ay-susi,

⁴¹⁰ Առավել հավանական է տրական հոլովը, քանզի եզակի թվի ուղղական հոլովով դրված հատկացյալը համաձայնություն չի պահանջում: Ինչ վերաբերում է ti-i-ni «անուն» բառին, ապա այս դեպքում այն պետք է կարդալ tin=e (ti=in=e)՝ տրական հոլով (-ine ածանցով կազմված անունների տրականի մասին տե՛ս V.2.6 կետ 2):

⁴¹¹ Մյս արտահայտության մեկնաբանության համար տե՛ս վերը՝ կետ 2: Բացառված չէ նաև, որ ի դեմս -ie-ի՝ այստեղ գործ ունենք դերբայներ և ածականներ կերտող -i/ge ածանցի հետ: Այդ դեպքում միգուցե ^{SAL}sil(a)i-ն պետք է հասկանալ որպես ածական (?): Տե՛ս նաև ծան. 412:

⁴¹² ^dHal-di [^{SAL?}si-la-i-e-ն անհաջող վերականգնություն է: Պետք է լինի ^dHal-di- [ni-i ^{SAL?}]si-la-i-e, որտեղ հատկացուցիչը համաձայնվում է հատկացյալի հետ՝ -n(e)- մասնիկի միջոցով կամ ^dHal-di-[i?]-si-la-i-e՝ մեկ բառ: Ամեն դեպքում համատեքստը ^dHal-di-[x?]-(-)si-la-i-e-ի համար պահանջում է տրական հոլով, ինչը թելադրում է, որ արմատը silai-ն է: Ինչ վերաբերում է արձանագրություններից մեկում համոզիպող sila տարբերակին, ապա այն հեշտությամբ բացատրվում է ուրարտական սեպագրին բնորոշ -ai/-a հերթագայությամբ (հմմտ., օրինակ, միևնույն [-kay] ետդիրի -kai և -ka տարբերակները գրում):

VIII_{8,9} (Ayanis I)] արտահայտությունում: Եթե ճիշտ է Թուփրախ-Կալեի արձանագրության [KYKH 412 л.с.] Ի.Դյակոնովի ընթերցումը⁴¹³, որտեղ նա ma-ri-ge-ի մեջ տեսնում է ուրարտական mari «իշխան, ազնվական» բառը՝ դրված սեռական հոլովով, ապա այստեղ գործ ունենք տրական հոլովի վերջավորության՝ -i=ge-ի սեռականի իմաստով հանդես գալու ևս մեկ վկայության հետ:

V.2.6 ՏՐԱԿԱՆ ՀՈՒՈՎ

1. Ուրարտերենի տրական հոլովը մասնագիտական գրականությունում: Գ.Մելիքիշվիլին⁴¹⁴ i, e, u հոլովման բառերի տրական հոլովի եզակի թվի ցուցիչն է համարում e-ն, որը հավելվում է անմիջապես բառահիմքին, ինչպես՝ ^dḡalde eure «Խալդի-ին՝ տիրոջը», ^dšebitue «Շերիթու-ին», իսկ a հոլովման բառերի համար a-ն, որը ձուլվում է հիմքակազմ a-ի հետ և գրվում է -a կամ -aa, ինչպես՝ ^dQuera «Քուերա-ին», ^dMenua «Մենուա-ին», ^dAnapšaa «Անապշա-ին» և այլն: Երբեմն (դարձյալ ըստ Մելիքիշվիլու) նկատվում է -i/e հերթագայում, ինչպես՝ ^dIphari/^dIpharie «Իպխարի-ին», ^dDiduaini/^dDie-duainie «Դի(ն)դուաինի-ին» և այլն: Բոլոր հիմքերի համար նա տրականի հոգնակի թվի ցուցիչ է համարում -aue/-aui-ն, որը նույնաճանաչ է սեռ. հոլովի հոգ. թվի վերջավորության հետ և հիմնականում հավելվում է բառի ուղղականով դրված հիմքին: Ըստ նրա՝ ուրարտերենում տրական հոլովը կարող է հանդես գալ նաև ներգոյականի իմաստով, ինչպես՝ terube manine esine LUGÁL-tuḫine - «ղրեցի նրան արքայական տեղում», eršidube ^{KUR}ebaniuke - «քնակեցրի ես (նրանց) իմ երկրում», GUD II UDU ^DIM KA ^{URU}Irdia... «ցուլ և երկու ոչխար Թեշերա աստծո դռներին Իրիդիա քաղաքում...» և այլն⁴¹⁵: Ի.Դյակոնովը⁴¹⁶ տրական հոլովի եզակի թվի ցուցիչն է համարում -(i)ə-ն (որոշյալ հոլովման դեպքում՝ -nīə-ն),

⁴¹³ И.Дьяконов, 1963, т. 2, с. 81:
⁴¹⁴ Г.Меликишвили, 1960, т. 2, с. 56-57; 1964, т. 3, с. 34-35:
⁴¹⁵ Գ.Մելիքիշվիլին տրական հոլով է տեսնում նաև՝ ikukani sale «այդ նույն տարի», susine sale «մեկ տարի» արտահայտություններում, ուր, ըստ իրեն, այն հանդես է գալիս ժամանակի ցուցիչի դերում [1964, էջ 35]:
⁴¹⁶ I.Diakonoff, 1971, т. 2, с. 94-95, уш. 3; И.Дьяконов, 1979, т. 2, с. 62:

որի տեսքը, ըստ իրեն, կախված է նախորդ հիմքակազմ ձայնավորից և որում հնարավոր են -i-(i)ə > ī, -u/o-(i)ə > ū/ō և -a-(i)ə > ā անցումները: Նա հոգնակի թվի ցուցիչ է համարում -a-wə-ն (որոշյալ հոլովման դեպքում -na-wə-ն), որը երբեմն կարող է տալ -ā (-a-wə > ā), ինչպես որ ^{URU}ṭušpa(a)ue կանոնավոր ձևի կողքին առկա են նաև ^{URU}ṭušpa(a) և ^{URU}ṭušpa(a)e տարբերակները: Գ.Վիլիելմը տրական հոլովի եզ. թվի ցուցիչն է համարում -ə-ն (գրում -e)⁴¹⁷:

2. Ուրարտերենի տրական հոլովի որոշ պարզաբանումներ:
ա) Ուրարտական տեքստերի մեր դիտարկումները ցույց են տալիս, որ i և u [o] հոլովման բառերը տրականի եզակի թվում (գրում) համապատասխանաբար ստանում են -i-(i)-e, -u-(u)-e (ուշ շրջանում հաճախ՝ -i-g(i/e)-e(-i=ge), -u-g(i/e)-e(-u=ge)), իսկ a հոլովման բառերը՝ -a(a) վերջավորությունները, օրինակ՝ GUD ^dḡal-di-i-e TAG ... UDU ^dḡal-di-e TAG ... UDU.MÁŠ.TUR ^dḡal-di-i-e ni-[ip-si-du-li-ni]... «ցուլ, Խալդի-ին թող գոհաբերվի, ... ոչխար Խալդի-ին թող գոհաբերվի, ... ուլ Խալդի-ին թող մորթվի ...» [KYKH 270₃₋₅], I GUD I UDU ^dše-bi-tú-e TAG ... «մեկ ցուլ, մեկ ոչխար Շերիթու-ին թող գոհաբերվի» [KYKH 392₉], i-nu-ka-hi-ni-e ^mRu-sa-i-ni-e ḫu-bi-gi ... UDU.MÁŠ.TUR ^dḡal-di-e ni-ip-si-du-li-ni UDU ^dḡal-di-e TAG UDU ^dIM-a UDU ^dUTU-ni-e še-ḫa-di-e ^dA-ni-qu-gi-e - «այս⁴¹⁸ Ռուսայի հովտին⁴¹⁹ ... ուլ Խալդիին թող գոհաբերվի, ցուլ Թեշերային, ցուլ Շիվինին, šehadie Ամիթուին» [KYKH 421₁₆₋₂₁] և այլն:

⁴¹⁷ G. Wilhelm, 2004, էջ 127:
⁴¹⁸ Իրականում inu=ka- դերանունը պետք է թարգմանել «այն, այն նույն, այդ նույն և այլն», բայց ոչ «այս» (այս մասին մանրամասն տես V.3 կետ 3):
⁴¹⁹ Երեք բառերն էլ դրված են տրական հոլովով՝ inuka=ḫi-n(e)=e ^mRusa=i-n(e)=e ḫu-bi-ge: Այստեղ inuka=ḫi-n(e)=e-ն հոլովով համաձայնում է տրական հոլովով դրված ḫubi գոյականի հետ, իսկ Rusa անձնանունը հանդես է գալիս հատկացուցիչի դերում և գոյականի (հատկացյալի) հետ համաձայնում է -n(e) - շաղկապիչ մասնիկի միջոցով՝ անցնելով n հոլովման բառերի շարքը: Հետևաբար տրականում ստանում է -ne-e(-n(e)=e) վերջավորությունը, ի տարբերություն ḫu-bi-ի որն ստանում է -i-ge(-i=ge) (համապատասխանում է վաղ. շրջանի -i-īe-ին) վերջավորությունը:

բ) Ինչպես արդեն նշվեց, տրական հոլովի վերջավորություններում (մաս որոշ այլ դեպքերում) հանդիպող -g/i- հերթագայումը մասնագիտական գրականությունում համարվում է զուտ գրին բնորոշ առանձնահատկություն և հետևաբար երկու դեպքում էլ ընթերցվում է միանման՝ i (y): Սակայն այստեղ հավանական է մաս ենթադրել ինչ-որ հնչյունափոխություն⁴²⁰, որի հետևանքով տրականի -i(i)e[-iy(ə)] և -ue[-oy(ə)] վերջավորությունները ուշ շրջանի արձանագրություններում հաճախ ներկայացվում են -ige[-ij(ə)] և -uge[-oj(ə)] տեսքով:

գ) N հոլովման տրականը, որպես կանոն, վկայված է -ni/e-(e) (-ne) ձևով, օրինակ՝ ^dǰal-di-ni i-ni-ri-a-ši-e GUD II UDU^{MEŠ} ^dǰal-di-ni al-su-i-ši-e GUD II UDU^{MEŠ} ^dǰal-di-ni di-ru-ši-i-e - «ցույ, 2 ոչխար Խալդյան⁴²¹ աստվածությանը(*), ցույ, 2 ոչխար Խալդյան մեծությանը, ցույ, 2 ոչխար Խալդյան բարեգրությանը (*)» [KYKH 38 I₁₂₋₁₃, II₂₁₋₂₂], GUD II UDU ^dǰal-di-ni ar-ni-i-e GUD II UDU ^dǰal-di-ni uš-ma-ši-i-e - «ցույ, 2 ոչխար Խալդյան ուժին, ցույ, 2 ոչխար Խալդյան հզորությանը» [KYKH 38 I₁₆₋₁₇, II₂₉₋₃₀]: Նույնը վերաբերում է մաս -ine ածանցով վերջացող բառերին (սեռականում ստանում են -ei վերջավորությունը և հիմնականում հատուկ անուններ են), որոնք նույնպես տրական հոլովում ստանում են -ne(e) և ոչ թե կանոնավոր -ni(i/g)e վերջավորությունը: Տե՛ս, օրինակ, տրական հոլովով դրված հետևյալ դիցանունները՝ ^dDi(e)-dua-ini/e-(e), ^dWaruba-(i)ni/e-(e), ^dǰuṣu-ini/e-e և այլն⁴²² (բայց ոչ երբեք՝ *^dDi(e)dua-ini/e-i-e, *^dWaruba-(i)ni/e-i-e, *^dǰuṣu-ini/e-i-e): Ուրարտերենի u[u] հոլովման բառերը տրականում, ըստ երևույթին, ստանում են -u-(u) վերջավորությունը (տե՛ս V.2.2 կետ 3):

⁴²⁰ Տե՛ս մաս II.3 կետ 6ա:

⁴²¹ Իրականում պետք է լինի՝ Խալդիի, -ni(-ne)-ն այստեղ ոչ թե ածականակերտ ածանց է, այլ համաձայնեցման մասնիկ, որի հավելումով սեռականով դրված ^dǰal-di դիցանունը անցնում է n հոլովման բառերի շարքը և ստանում տրականով դրված հատկացյալի հոլովային վերջավորությունը (հոլովների համաձայնեցման մասին տե՛ս V.2.11): Ըստ այդմ, քերված օրինակում «^dǰal-di-ni di-ru-ši-i-e» դրվագը պետք է բարձրաննել «Խալդի-ի diruše-ին»:

⁴²² Նմանապես և -ri/e-ով և -ni/e-ով վերջացող որոշ բառեր, որոնք երբեմն հոլովվում են n հոլովման տիպով, օրինակ՝ ^dIṣḫari(e) (^dIṣḫare(e)) «Խալսարին»:

Ամփոփում: Այսպիսով, ուրարտերենում տրական հոլովի համար ստանում ենք հետևյալ պատկերը:

Հոլովում	Վերջավորություն		
	եզ. թիվ		հոգ. թիվ
a	- a(a) [-a]	-	
i	- i(i)e [-i=y(ə)]	վաղ	- (n)a=(u)e
	- ige(e) [-i=j(ə)]	ուշ	
u[o]	- u(u)e [-o=y(ə)]	վաղ	
	- uge(e) [-o=j(ə)]	ուշ	
u[u] n ⁴²³	- u(u) [-u]	-	- na=(u)e
	- ne(e) [-n=(ə)]	-	

3. Տրական հոլովի կիրառությունը ուրարտերենում: Ուրարտերենում տրականին հատուկ են հետևյալ կիրառությունները:

ա) Ուղևորական հոլովի հետ միասին հանդես է գալիս *pare* (հայ. առ) նախդրի հետ (տե՛ս VII.1):

բ) Ուղևորական հոլովով դրված հատկացյալի դեպքում հատկացուցիչը, որպես կանոն, դրվում է ոչ թե հատկացյալի (տվյալ դեպքում ուղևորական) հոլովով, այլ՝ տրականով (տե՛ս V.2.8 կետ 2):

գ) Հաճախ արտահայտում է ներգոյականի իմաստ:

զ) Երբեմն հերթագայում է սեռական հոլովին (տե՛ս V.2.5 կետ 4):

V.2.7 ԲԱՅԱՌԱԿԱՆ-ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Ուրարտերենի քացառական-գործիական հոլովը մասնագիտական գրականությունում: Ուրարտերենում առանձին քացառական և գործիական հոլովներ չկան, այլ առկա է մեկ քացառական-գործիական հոլով, որը պատասխանում է՝ «որտեղի՞ց», «տմի՞ց», «ինչո՞վ», «տմո՞վ» հարցերին: Գ.Մելիքիշվիլին⁴²⁴ այս հոլովի հոլովակերտ մասնիկ է համարում -ni-ն (զրում), որը եզակի թվում հավելվում է բառահիմքին՝ i, a և u հոլովումների համար համապատասխանաբար կազմելով -ini, -ani և -uni վերջավորությունները, ինչպես՝ ^dǰaldinini baušini «Խալդի աստծո հզորությամբ», ^dǰaldinini alsušini «Խալդի աստծո

⁴²³ Ինչպես արդեն նշվեց, նույն կերպ են հոլովվում մաս -ine ածանցով վերջացող որոշ այլ բառեր ևս:
⁴²⁴ Г.Меликишвили, 1960, էջ 57-58; 1964, էջ 35-36: Տե՛ս մաս J.Friedrich, 1933, էջ 13:

մեծությամբ», šusinie uštiptini «մեկ արշավով», ^{ID}munani IV PA₅^{MES} aguli «գեախից» չորս ջրանցքներ անցկացրի», ^dHal-dini bedini «Խալդի աստծո կողմից», inukani esi(ni)ni «այս տեղից»: Հոգնակի թվում, ըստ նրա, -ni-ն հավելվում է հոգնակիության -a- ցուցիչին՝ կազմելով -ani վերջավորությունը, ինչպես՝ inani arniušinani/INIM^{MES}-ni/baušinani (ուղղ. հոլ. inani arniušinili/baušinili): Ըստ Գ.Մելիքիշվիլու՝ -edini տողիբը միշտ պահանջում է քացառական հոլով, այդ պատճառով քացառական հոլովով դրված բառերը հաճախ ստանում են -edini վերջավորությունը, ինչպես՝ ^{L0}ipriunanedini (< ^{L0}ipriuni-ani-edini), ^{KUR}biananedini (< ^{KUR}biani-ani-edini), ^{KUR}šuranedini, ^{L0}A.SI^{MES}-nanedini և այլն: Նա որոշ բառերի վերջում երբեմն առկա -iani⁴²⁵ վերջավորությանը, որը ըստ նրա արդյունք է i-ի երկրաբառացման (i>ia), նույնպես վերագրում է եզակի քացառական-գործիականին: Ի.Դյակոնովը, Մ.Խաչիկյանը և Գ.Վիլհելմը քացառական-գործիականի ցուցիչն են համարում -ne-ն (գրում՝ -ne)⁴²⁶:

2. Ուրարտերենի քացառական-գործիական հոլովի որոշ պարզաբանումներ: Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, ուրարտերենում քացառական-գործիական հոլովով դրված բառերի համար ինչպես եզ. թվում, այնպես էլ հոգնակիում -ne[n] հոլովակերտը կարող է և քացակայել: Փաստորեն այս հոլովի ցուցիչ համար ունենք -ne/-ø հերթագայում: Ասվածը հաստատելու համար բերենք մի քանի օրինակ կրկնակի գրված Մեերի Դռան [KYKH 38] արձանագրությունից. GUD II UDU^{MES} DINGIR^{MES} ^dHal-di-ni-ni URU-ni [I₁₄₋₁₅]/GUD II UDU^{MES} DINGIR^{MES} ^dHal-di-ni URU [II₂₅] - «ցուլ, երկու ոչխար Խալդյան քաղաքի աստվածներին», ^dIM KÁ ^{URU}E-ri-di-a-ni GUD II UDU^{MES} ^dUTU KÁ ^{URU}Š-i-ši-ni-ni GUD II UDU [I₁₆]/^dIM] KÁ ^{URU}Er-di-ia GUD II UDU ^dUTU KÁ ^{URU}Š-i-ši-ni GUD II UDU [II₂₈] - «Էրիդիա(նի) քաղաքի թեշերայան դարպասներին՝ ցուլ, երկու ոչխար, Ուիշինի(նի) քաղաքի շիվինիյան դարպասներին՝ ցուլ, երկու ոչխար»: Երբ ^{URU}E-ri-di-a-ni/^{URU}E-ri-di-a, ^{URU}Š-i-ši-

⁴²⁵ Իրականում -ia-(ne) վերջավորությունը հատուկ է նաադրությունների հետ հանդես եկող բառերին (նախադրության/նաադրության խնդրին): Այս մասին առավել մանրամասն տե՛ս VII.3 կետ 2:
⁴²⁶ Št'u I.Diakonoff, 1971, էջ 92-94, աղ. 3; 1979, էջ 62-64; М.Хачикян, 1985, էջ 72; G.Wilhelm, 2004, էջ 127:

ni-ni/^{URU}Š-i-ši-ni հերթագայության դեպքում երկրորդ կրկնօրինակում քաղաքների անվան վերջում հավելյալ -ni(-ne)-ի առկայությունը կարելի է քացատրել նրանց անունների երկու տարբերակների, հավելյալ -ne-ով և առանց -ne-ի, գոյության կամ -ne-ի մեջ կարելի է տեսնել որոշյալ հող, ապա ^dHal-di-ni-ni URU-ni/^dHal-di-ni URU հերթագայությունը այդ հնարավորությունը չի տալիս: Այստեղ ^dHal-di-ni-ni-ն կարող է լինել միայն հատկացուցիչ, որը հոլովով և թվով համաձայնում է թեք հոլովով դրված հատկացյալի՝ URU-ni-ի հետ (^dHal-di=i=ni=ne pašare=ne/^dHal-di=i=ne=ø pašare=ø): Հետևաբար, նշված դրվագները համապատասխանաբար պետք է քարզմանել՝ «...աստվածներին Խալդիի քաղաքից», «...Թեշերայի/Շիվինիի դռներին՝ Էրիդիա/Ուիշինի քաղաքից»: Բերենք այլ օրինակներ (այստեղ քացառականով դրված գոյականը գործածված է peš-i=(ne) (սովորաբար ընթերցվում է՝ bedi=(ne)) տողիբի հետ)⁴²⁷:

- manini ^dHal-di bedini ^dHal-dinani KÁ bedini [KYKH 14]yp₁,247₈, Ay-susi I₆, (Ayanis I),
- manini ^dHal-di-ni bedini ^dHal-dinani KÁ bedini [KYKH 20 I/III₁₀, 271₇]
- կամ՝
- ^dHal-dini bedini ^dHal-dinani KÁ bedini ^dŠa-ni bedini manulini [KYKH 20a I₁₄],
- ^dHal-dini bedini ^dHal-dinani KÁ bedini ^dŠa bedini manulini [KYKH 42 II₁₄]
- կամ՝
- ^dHal-dini bedini ^dHal-dinani KÁ bedini ^dŠra-ni bedini manulini [KYKH 38a I₁₅],
- ^dHal-dini bedini ^dHal-dinani KÁ bedini ^dŠra bedini manulini [KYKH 172a₁₄]:

Ինչպես տեսնում ենք, նույն համատեքստում քացառական հոլովով դրված դիցանունների համար մի կողմից ունենք՝ ^dHal-di/^dŠa/^dŠra, մյուս կողմից՝ ^dHal-di-ni/^dŠa-ni/^dŠra-ni⁴²⁸: Բերենք ևս մի քանի օրինակներ, վերցված հոգնակի թվի համար, Այանիսի [Ay-susi (Ayanis I)] և նրան զուգահեռ Արմավիրի [KYKH 270] ու Կարմիր-Բլուրի [KYKH 424] արձանագրություններից, որտեղ ունենք ^dHal-di=i=na/^dHal-di=i=na=ne) հերթագայություն:

- ... šini zadini ŠUM ^dHal-dina KÁ-kai [Ay-susi III₁₋₂],
- ... šini zadini TAG ^dHal-dina KÁ-kai [KYKH 270₁₀],
- ... šini zadini TAG ^dHal-dina-ni KÁ-ka [KYKH 424₁₇]

⁴²⁷ Այս մասին տե՛ս V.3 կետ 3:
⁴²⁸ Այս երևույթի մասին տե՛ս նաև Н.Арутюнян, 1966, էջ 18:

կամ՝

- ... ^dHaldina KÁ UDU erašini úli [Ay-susi II_{8.9}],
- ... ^dHaldina-ni ^{GIS}KÁ UDU erašini úli [KYKH 424₁₄],
- ... ^dHaldina-ni ^{GIS}KÁ] UDU erašinie úli [KYKH 270₇]:

Ամփոփում: Վերոշարդրայից կարելի է եզրակացնել, որ ուրարտերենում առկա է բացառական-գործիական հոլովի երկու տարբերակ: Առաջինում որպես հոլովային ցուցիչ հանդես է գալիս ne-ն, իսկ երկրորդում՝ Յ-ն: Բայց ի տարբերություն ուղղական(բացարձակ) հոլովի՝ բացառական-գործիականով դրված բառերը, անկախ ne ցուցչի առկայությունից, հատկացուցիչի դերում հանդես գալուց՝ անխտիր ստանում են համաձայնեցման -n (e) - (եզ. քիվ) կամ -na- (հոզ. քիվ) մասնիկներ, ինչպես՝ ^dšaldi=i=ne=Ø URU (=paṭar(e)=e) «Խալդիի քաղաքից», ^dšaldi=i=na KÁ - «Խալդիի դարպասներից» և այլն (տես վերը): Այսպիսով, ուրարտերենի բացառական-գործիական հոլովի համար ստանում ենք հետևյալ պատկերը.

Հոլովում	Վերջավորություն	
	եզ. քիվ	հոզ. քիվ
i	- i(i)=ne [- i=n ⁴²⁹] - i(i)=Ø [- i=Ø]	
u(o)	- u(u)=ne [- o=n] (վկայված չէ)	-(n)a=ne -(n)a=Ø
a	- a(a)=ne [- a=n] - a(a)=Ø [- a=Ø]	
n	- ni(i) ⁴³⁰ =ne [- ni=n] - ne(e)=Ø [- n=Ø]	-na=ne -na=Ø

3. Բացառական-գործիական հոլովի կիրառությունը ուրարտերենում:

ա) Ըստ ընդունված կարծիքի՝ ուրարտերենում առանձին բացառական և գործիական հոլովներ չկան: Դրանց փոխարինում է մեկ՝ բացառական-գործիական հոլովը, որն արտահայտում քե՝ բացառականի, քե՝

⁴²⁹ Գրում ունենք -ne, որը մենք ներկայացնում ենք n-ով: Իրականում e-ի փոխարեն հնարավոր է նաև քույլ հնչող ձայնավոր, ասենք՝ -ə, ինչպես որ առաջարկում է Ի.Գյակոնովը (տես վերը):

⁴³⁰ Այդպես՝ -ni- համաձայն KYKH 241 B₃₇₋₃₈-ի, որտեղ ունենք ^dšal-di-ni-i-ni al-su-ú-i-ši-ni (^dšaldi=i=ni=ne alsui=ši=ne) (այլ վկայություններ չկան): Այստեղ համաձայնեցման -n (e) - մասնիկը բացառական հոլովի -ne ցուցիչից առաջ հանդես է գալիս -ni- (գրում՝ -ni- (i) -) տեսքով:

գործիականի իմաստ: Սակայն ուշագրավ է, որ բացառական-գործիականի ձևույթի -ne/-Ø հերթագայումը առկա է միայն այն դեպքերում, երբ համատեքստը պահանջում է բացառականի իմաստ: Համենայն դեպս, մինչ այժմ հայտնի ուրարտական տեքստերում գործիականի արժեքով դրված անունը անխտիր ստանում է -ne վերջավորություն: Եթե նման բաշխումը պատահական չէ, ապա բացառված չէ, որ ուրարտերենում իրականում առկա են երկու առանձին հոլովներ՝ բացառական (-ne/-Ø) և գործիական (-ne):

բ) Բացառական-գործիականով դրված բառերը ուրարտերենում հաճախակի հանդես են գալիս ետադրությունների և դերանվանական (տեղի) մակբայների հետ, որպես ետադրության խնդիր՝ ցույց տալով շարժման, գործողության ելակետը (մանրամասն տես VII.3 կետ 2 և V.3 կետ 4):

V.2.8 ՈՒՐԵՎՈՐԱԿԱՆ ՀՈՒՆՎ

Ինչպես արդեն նշվեց, այսպես կոչված երկրորդային հոլովները, այդ թվում և ուղևորականը, միայն պայմանականորեն կարելի է համարել այդպիսիք: Այդ պատճառով դրանք մենք քննարկում ենք ետադրությունների և ետադրությունների վերաբերող բաժիններում (տես VII.2 և VII.3)՝ բացառությամբ ուղևորականի, որը կդիտարկենք այստեղ:

1. Ուրարտերենի ուղևորական հոլովը մասնագիտական գրականությունում: Գ.Մելիքիշվիլին⁴³¹ նշում է, որ ուղևորական հոլովը ուրարտերենում պատասխանում է «ուր» հարցին և հիմնականում կիրառվում է նպատակի նշանակման համար: Ըստ նրա՝ ուղևորականի եզակի թվի հոլովակերտ մասնիկն է -e/idi-ն, որը հավելվում է բառահիմքին, ինչպես՝ uštadi ^{KUR}Urme-edi «ուղևորվեցի (արշավեցի) դեպի Ուրմե (երկիրը)»: Ընդ որում, եթե հիմքը վերջանում է i-ով կամ e-ով, ապա ուղևորականի ցուցիչի -e/i- տարրը ձուլվում է հիմքի ձայնավորի հետ և գրում կարող է չեքևալ, ինչպես՝ iu ^dšaldi-kai ^{URU}Ardinidi nunalı... «երբ Խալդիի առջև Արդինի (քաղաք) եկան...», ^{KUR}Urmeuḫi-di «դեպի Ուրմեուխի (երկիրը)», ^{KUR}Diauhinidi «դեպի Դիաուխինի (երկիրը)» և այլն: Երբեմն այն կարող է և չձուլվել, ինչպես՝ ^dšaldiedi, ^MLušainiedi, ^{KUR}Urmeiedi, որոնք պետք է համապատասխանա-

⁴³¹ Г.Меликишвили, 1960, էջ 57-59; 1964, էջ 36-38:

բար կարդալ՝ ^dHaldedi, ^mLušainedi, ^{KUR}Urmedi: Իսկ որոշ դեպքերում (ըստ Գ.Մելիքիշվիլու) հիմքակազմ ձայնավորի և -e/i-di-ի միջև առկա է հավելյալ ց⁴³², ինչպես՝ uštadi ^{KUR}Babilunie ^{KUR}ebanigidi «ուղևորվեցի (արշավեցի) դեպի Բաբելոն երկիրը»: Իսկ եթե հիմքը վերջանում է a-ով կամ u-ով, ապա -e/i-di մասնիկը հիմնականում հավելվում է առանց փոփոխության, բայց առկա են նաև -iedi և -di ձևերը, օրինակ՝ ^{URU}šudaladi, zainuadi և այլն: Հոգնակի թվում (դարձյալ ըստ Գ.Մելիքիշվիլու) առկա է ուղևորական հոլովի կազմավորման երկակի կարգ: Առաջինով կազմվելիս՝ այն ստանում է -aidi (<a-idi), -aedi (<a-edi), -adi (<a-i/edi) վերջավորություններ, որոնք հիմնականում հավելվում են ուղղական հոլովին, ինչպես՝ ^{KUR}Biainaidi (<^{KUR}Biaini-aidi), ^mRušāināidi (^mRušāini-aidi), ^{KUR}Etiuahinadi (^{KUR}Etiuahini-aidi), իսկ երկրորդով՝ -ašte վերջավորությունը, ինչպես՝ ^{LÚ}A.SI^{MEŠ}-ašte, ^{KUR}Biainašte (<^{KUR}Biaini-ašte): Ըստ Ի.Դյակոնովի՝ ուրարտերենի ուղևորական հոլովը եզակի թվում կազմվում է -(i)edə, -(i)də, իսկ հոգնակիում՝ -a(i)də, հազվադեպ՝ -ašte մասնիկների միջոցով⁴³³: Վերջինը նա համարում է արխաիկ ձև⁴³⁴:

2. Ուրարտերենի ուղևորական հոլովի որոշ պարզաբանումներ:

ա) Ուրարտական տեքստերի մեր դիտարկումները ցույց են տալիս, որ u[ο] հոլովման բառերը (զրում) ուղևորական հոլովի եզակի թվում ստանում են -uedi, i հոլովմանը՝ -iedi (ուշ շրջանում հաճախ -igedi), իսկ a հոլովման բառերը՝ -a(i)di (վաղ շրջանում -a(i)-edi) վերջավորություններ, օրինակ՝

- (230) uš-ta-di ^{KUR}A-bu-ni-i-e-di/^{KUR}E-ti-ú-ni-i-e-di/^{KUR}A-bi-li-a-ni-ḫi-ni-e-di/^{KUR}ú-e-li-ku-ni-gi-di - «ուղևորվեցի (արշավեցի) դեպի Արունի/Էթիունի/Արեւիանիսիսի/Վելիկունի (երկիրը)...» [KYKH 173 I₁₁ / 241 A₁₃, F₄ / 241 C₃₅ / 241 F₁₆]:

⁴³² Ըստ Գ.Մելիքիշվիլու՝ թույլ բաղաձայն, որը միշտ չէ, որ զրում երևում է [1964, էջ 23]:

⁴³³ I. Diakonoff, 1971, էջ 93-95, աղ. 3; И. Дьяконов, 1979, էջ 62-64:

⁴³⁴ Shu նաև M. Хачикян, 1985, էջ 76; G. Wilhelm, 2004, էջ 127:

- (231) uš-ta-di ^{KUR}Ma-na(a)-i-di... - «ուղևորվեցի (արշավեցի) դեպի Մանա (երկիրը) ... » [KYKH 173 III₆₀, IV₃₄, V₂₄, 174 B₂₆, 241 B₁₄].

- (232) uš-ta-di ^{KUR}Bu-uš-tú-(ú)-e-di... - «ուղևորվեցի (արշավեցի) դեպի Բուշտու (երկիրը)...» [KYKH 173 II₃₆, IV₅₃, 174 B₂₃] և այլն:

բ) Ինչպես նշվեց, a հոլովման բառերը վաղ շրջանում (խոսքը վերաբերում է Իշպուինի արքայի միանձնյա, և նրա որդի Մինուայի հետ՝ համատեղ թողած արձանագրություններին) ուղևորական հոլովում ստանում են -a(i)edi վերջավորությունը, օրինակ՝

- (233) uš-ta-li ^{URU}Me-iš-ta-a-e-di... - «ուղևորվեցին (արշավեցին) դեպի Մեիշթա (երկիրը) ... » [KYKH 35 I₆, II₃₆, III₁₀]:

- (234) ^dHal-di-[i]-e ... i-na-i-na-e-di GIŠ^{BA}-edi na-ḫi-tú e-e-ṭu - «» [KYKH 39₂].

- (235) ...zi-il-be/i qi-(ú)-ra-(a)-e-di... - «... ցեղը գետնի վրա...» [KYKH 30_{yp 35, 40}]:

(235)-ը հմնտ. ուշ շրջանի նմանատիպ՝ ...ziilbi/e qiura=idi... [KYKH 421₄₂] արտահայտության հետ: Փաստորեն, սկսած Մինուայի միանձնյա գահակալման շրջանից, ուրարտական արձանագրություններում a հոլովման բառերի համար կանոնավորապես հանդիպում է ուղևորական հոլովի միայն -a-(i)di վերջավորությունը:

գ) N հոլովման բառերը եզակի ուղևորականում ստանում են -ne(e)di (-nedi) վերջավորություն, որոնք ուշ շրջանում, ինչպես տրական հոլովի դեպքում, ց-ով չեն ներկայացված: Նման ձևով են հոլովվում նաև -ine ածանցով վերջացող բառերը⁴³⁵:

դ) Հոգնակի թվում ուղևորականը հիմնականում վկայված է -a(i)di վերջավորությամբ, որը կազմավորված է թեք հոլովների հոգնակիության - (n)a- ցուցիչին -edi մասնիկի հավելումով՝ - (n)aedi > - (n)a-(i)di անցումով: Ըստ որոշ ուսումնասիրողների՝ ի դեմս ուրարտերենի ուղևորական հոլովի հոգնակիի երկրորդ ձևում (-aš=te) առկա -aš-տարրի պահպանված է այդ լեզվի հոգնակիության -a- ցուցիչի առավել

⁴³⁵ Հմնտ. տրական հոլովի հետ: Ինչպես և տրականի դեպքում, վերջավորության այս ձևը երբեմն հանդիպում է նաև -ni/e-ով և -ri/e-ով վերջացող որոշ այլ բառերում:

վաղ ձևը, որն այլուր չի պահպանվել⁴³⁶: Եթե դա իրոք այդպես է, ապա պետք է ենթադրել, որ հենց այս ձ[s]-ի ազդեցությամբ է, որ ուղևորականի բուն ցուցիչը այստեղ հանդես է գալիս -te տեսքով՝ sd > st/st անցումով⁴³⁷:

Ե) Հատկացուցիչը ուղևորականով դրված հատկացյալի հետ համաձայնելիս -n(e) - շաղկապող մասնիկի հավելումից հետո ստանում է ոչ թե հատկացյալի հոլովային վերջավորությունը, ինչպես բուն հոլովների դեպքում, այլ դրվում է տրական հոլովով, օրինակ՝

(236) i-šá-a-ni bi-di-i-a-di uš-ta-a-di ^{KUR}Iš-te-lu-a-ni-gi-di ^{KUR}Qa-di-a-i-ni-e-di ^{KUR}A-bu-ú-ni-ni-e (Abuni=i=n(e)=e՝ տրական հոլով) ^{KUR}e-ba-ni-i-e-di (ebani=i(e)=edi՝ ուղևորական հոլով) mA-bi-li-a-ni-hi-ni-e-di [KYKH 241 F₁₃₋₁₅].

(237) uš-ta-a-di ^{KUR}Ba-bi-lu-ni-e (Babilu=i⁴³⁸=n(e)=e՝ տրական հոլով) ^{KUR}e-ba-ni-gi-di (ebani=g(e)=edi՝ ուղևորական հոլով) [KYKH 241 A₄].

(238) uš-ta-di ^{KUR}Bu-zu-ni-a-i-ni-e (Buzunia=i=n(e)=e՝ տրական հոլով) ^{KUR}e-ba-ni-e-di (ebani=i(e)=edi՝ ուղևորական հոլով) ^{URU}Al-qa-ni-a-i-di ^{URU}Šu-da-la-di [KYKH 241 F₁₁] և այլն:

զ) Նախադասության մեջ ուղևորական հոլովը հերթագայում է edī-«այդտեղ» դերանվանական մակրային: Հմնտ. օրինակ (230)-(233)-ը և հետևյալ արտահայտությունները՝

(239) uš-ta-di ^{KUR}Ur-me-ú-e e-di-a -«ուղևորվեցի (արշավեցի) դեպի Ուրմե (երկիրը)» [KYKH 241 A₂₂].

(240) uš-ta-di ^{KUR}E-ti-ú-ni-e-di ^{KUR}Li-qi-ú-e e-di-a -«ուղևորվեցի (արշավեցի) դեպի Էթիումի (երկիրը), դեպի Լիքիու (երկիրը)» [KYKH 241 A₁₃].

(241) uš-ta-d[i ^{KUR}]Ha-ḥi-a-ú-e e-di-a -«ուղևորվեցի (արշավեցի) դեպի Խախիա (երկիրը)» [KYKH 173 II A₄₃]:

⁴³⁶ Տե՛ս, օրինակ, И.Дьяконов, 1979, էջ 61; М.Хачикян, 1985, էջ 77 և այլն:
⁴³⁷ Ի.Դյակոնովը ուրարտերենի ուղևորականի բուն ցուցիչն է համարում -tə-ն, որը քստ քրա, պահպանվել է միայն -ašte տարրերակում [И.Дьяконов, 1979, էջ 61-62]:
⁴³⁸ Կամ՝ Babilu=n(e)=e, եթե վերջինս պատկանում է u[ʷ] հոլովմանը:

Նշված օրինակներում գոյականը կա՛մ դրվում է ուղևորական հոլովով (230)-(233)՝ ստանալով համապատասխան վերջավորություն, կա՛մ հանդես է գալիս edīa «այդտեղ» դերանվանական (տեղի) մակրայի հետ կապակցված (239)-(241)՝ ստանալով -ue վերջավորություն, որի բնույթը հայտնի չէ՝⁴³⁹: Հմնտ. նաև՝

(242) me-i ... zi-il-be/i qi-(ú)-ra-(a)-e-di ku-lu-di-i-[a-ni?] - «...ցեղը գետնի վրա թող չթողնեն» [KYKH 30 ԿՐ.30,40].

(243) me-i ... zi-il-bi-i qi-ú-ra-i-di ku-li-e-tú-ú-n[i] - «...ցեղը գետնի վրա թող չթողնեն» [KYKH 421₄₂] և

(244) ...[tú]-ru-ti-ni-e-ni ma-a-ni e-`a [zi]-li-bi-qi-ú-ra-a-ni e-di-ni - «թող ոչնչացնեն մրան և ցեղը՝ գետնի վրա» [KYKH 40 o.c. 11, 41 o.c. 10]

արտահայտությունները⁴⁴⁰: Քերականական մման կառույցը հիշեցնում է հայերենի դերանվանական մակրայների գործածությունը (այս մասին տե՛ս նաև V.3 կետ 4):

Ամփոփում: Նկատի ունենալով վերոնշյալ փաստերը՝ ուրարտերենի ուղևորական հոլովի համար ստանում ենք հետևյալ պատկերը.

Հոլով-ում	Վերջավորություն			
	եզ. քիվ		հոգ. քիվ	
i	- i(i)edi	[-i=yedi]	վաղ	
	- ig(e)edi	[-i=jedi]	ուշ	
u[o]	- u(e)edi	[-o=yedi]	վաղ	- a(i)di [- a=ydi],
	(վկայված չէ)		ուշ	- ašte [- as=i(ə)]
a	- a(i)edi	[-a=yedi]	վաղ	
	- a(i)di	[-a=ydi]	ուշ	
n	- n(e)edi	[-n(e)=edi]	-	- na(i)di [- na=ydi]

Փաստորեն եզակի թվում ուղևորական հոլովը կազմվում է եզակի տրականից՝ edī տեղի մակրայի հավելումով, առաջացնելով համապա-

⁴³⁹ Ի.Դյակոնովը այն համեմատում է խուիերենի սեռ. հոլովի -we/a ցուցիչի հետ՝ ենթադրելով, որ այն կարող է ներկայացնել ուրարտերենի սեռական հոլովի հնագույն մի ձև [И.Дьяконов, 1979, էջ 62-64]:

⁴⁴⁰ Ուրարտերենում edīa «այդտեղ» մակրայի մման կիրառության մասին տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 443:

տասխանաբար՝ -aidi<-aedi⁴⁴¹ (<-a+edi), -i(i/g)edi/(<-i(i/g)e+edi), -uedi(<-ue+edi), -ne(e)di(<-ne+edi) հոլովային վերջավորությունները⁴⁴²:

3. Ուղևորական հոլովի կիրառությունը ուրարտերենում: Ուրարտերենում ուղևորական հոլովին հատուկ են հետևյալ կիրառությունները:

ա) Այն, ինչպես և տրական հոլովը, կարող է հանդես գալ *pare* նախդրի հետ:

բ) Նախադասության մեջ հերթագայում է *edi*- «այդտեղ» դերանվանական (տեղի) մակրային՝ ցույց տալով շարժման, գործողության նպատակը (արտահայտում է տրականի իմաստ) կամ վայրը (տե՛ս նաև VII.3 կետ 2 և V.3 կետ 4):

գ) Հատկացուցիչը ուղևորական հոլովով դրված հատկացյալի հետ համաձայնելիս, ի հակադրություն բուն հոլովների, չի համաձայնում նրա հետ, այլ դրվում է տրական հոլովով:

4. Եզրակացություն: Վերոնշյալ բոլոր փաստերը վկայում են ուղևորական և տրական հոլովների սերտ կապի մասին: Ըստ երևույթին իրականում ուրարտերենում ուղևորական հոլովի ցուցիչի փոխարեն ուղղակի պետք է հասկանալ -*edi* դերանվանական (տեղի) մակրայից ծագող հոդ (ետդիր)՝ ցուցական իմաստով:

V.2.9 ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

1. Ուրարտերենի ներգոյական հոլովը մասնագիտական գրականությունում: Գ.Մելիքիշվիլին⁴⁴³ ուրարտերենի ներգոյական հոլովի ինչպես եզակի, այնպես էլ հոգնակի թվի ցուցիչն է համարում *a*-ն, որը եզակի թվում, որպես կանոն, հավելվում է բառահիմքին, իսկ հոգնակի թվում հիմնականում՝ ուղղական հոլովին: Ըստ նրա՝ ներգոյականով դրված *a* հոլովման բառերի հոլովային ցուցիչը ձուլվում է հիմքակազմ *a* ձայնավորին, ինչպես՝ ^{URU}Ildamuša (DUB-te ^{URU}Ildamuša terubi «գիր Իլդամուշաում դրեցի»), ^{URU}šebiteria (^{URU}šebiteria ^dHal-di iarani šidištuni «Շեբիթերիայում Խալդիի iarani կառուցեց»): Նմանապես և հոգնակի ներգոյականով դրված բոլոր

⁴⁴¹ Մեկ անգամ, վաղ շրջանի վնասված մի դրվագում, ունենք -*aiedi* ([*me-i ti-i*]-*ni me-i zi-li-b[i]* [*q1-ú-ra*]-*i-e-di* [... [KYKH 31 օժ.Շ.33-34]]):

⁴⁴² Մ[u] հոլովման բառերի համար կարելի է ենթադրել -*u(e)di* վերջավորությունը:

⁴⁴³ Г.Меликишвили, 1964, էջ 38:

բառերի դեպքում, որտեղ վերջինս ձուլվում է հոգնակիության -*(n)a* ցուցիչին, ինչպես՝ ^dHal-dina KÁ-kai «Խալդիի դռներում», *gunuša* «մարտերում(»)»: Մյուս դեպքերում հիմքակազմ ձայնավորը պահպանվում է, ինչպես՝ ^dHal-dia, ^{KUR}Etiunia, *šuinia*, *esia*, *babania* (i հոլովում): Ի.Մեշչանինովը⁴⁴⁴ ներգոյական հոլովի առկայությունը և նրա ձևային առանձնացումը ուրարտերենում համարում է պայմանական և ոչ հուսալի: Ըստ տարածված կարծիքի՝ ուրարտերենում ներգոյականի իմաստ է արտահայտում նաև -*aše*⁴⁴⁵ ետդիրը/մասնիկը, ինչպես՝ *šuhinaše*, *ebaniāše*, *šatināše*⁴⁴⁶: Ի.Դյակոնովը -*aše*-ն, որոշյալ հոլովման դեպքում՝ -*naše*-ն, համարում է հոլովային վերջավորություն՝ ներգոյական իմաստով (locative-illative)⁴⁴⁷: Գ.Վիլհելմը, -*še* տեսքով, այն համարում է ետդիր⁴⁴⁸:

2. Ուրարտերենի ներգոյական հոլովին վերաբերող որոշ պարզաբանումներ:

ա) Քանի որ ըստ ընդունված կարծիքի (տե՛ս վերը) հոգնակի թվով, իսկ *a* հոլովման դեպքում նաև եզակիով դրված բառերում ներգոյականի *a* ցուցիչը ձուլվում է հոգնակիության -*(n)a*- ցուցիչի կամ հիմքակազմ *a* ձայնավորին, իսկ ներգոյական հոլովով դրված *u* հոլովման բառերի որևէ վկայություն ուրարտական տեքստերում չկա, ապա միակ տեղը, ուր հնարավոր է հստակ առանձնացնել ուրարտերենի ներգոյական հոլովի համար առաջարկվող *a* ցուցիչը, *i/e* հոլովման եզակի թվով դրված բառերն են: Սրանց թիվը մեծ չէ: Զննարկենք դրանք՝ խմբավորելով ըստ վերջավորության ձևի:

Նախ դիտարկենք -*ia*-ով վերջացող բառերը (այն բառերը, որոնցում -*ia* վերջավորությունը ակնհայտորեն պատկանում է հիմքին, ինչպես՝ ^{URU}Eridia, ^{URU}NA₄ANŠU-nia, E.GAL-ria/^Ešuluria, բաց կրողները):

(245) ^dHal-di-a iš-ti-ni-(i)-e i-na-ni-(e)-li ar-ni-ú-ši-ni-(e)-li šú-si-ni/I MU za-du-(ú)-bi -

⁴⁴⁴ И.Мещанинов, 1958, էջ 131-132, 137:

⁴⁴⁵ Որոշ հետազոտողներ սրա ձևն են համարում -*še*-ն՝ այն տարանջատելով նախորդը -*a*--ից:

⁴⁴⁶ Տե՛ս Г.Меликишвили, 1964, էջ 59:

⁴⁴⁷ I. Diakonoff, 1971, էջ 94-95, աղ. 3; И.Дьяконов, 1979, էջ 62 աղ. 8:

⁴⁴⁸ G. Wilhelm, 2004, էջ 134:

«Խալդիի շնորհիվ(*) այս արարքները մեկ օրում արեցի» [KYKH 173 I₁₆, 173 II_{2, 23}, 173 III_{18, 44}, 173 IV₉ և այլն].

(246) ú-la-di ^{KUR}E-ti-ú-ni-e-di a-li áš-ta-a-di ^{KUR}E-ti-ú-ni-a iš-ti-ni-i-e ... - «ուղևորվեցի Էթիունի: Երբ (ես) դա արեցի(*)» Էթիունիի շնորհիվ(*)...» [KYKH 241 F₅].

(247) ha-a-ú-bi ^{URU}Qi-đu-ni KUR si-lu-ni-ni šu-i(?) - ni-a bi-di-e... - «գրավեցի Քիխունի (քաղաքի) երկիրը, ծովի silunini կողմում...» [KYKH 173 II₃₀, 174 A₂₁].

(248) a-li-li ^{SADU}ba-ba-ni-li šu-ni-a bi-di-i-e - «» [KYKH 407 և III₃₅₋₃₆].

(249) XIX LUGAL^{MES} i-šá-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni ^{SADU}ba-ba-ni-a [k]u-ru-ni-e - «19 քաղաքներ ծովի այն կողմից՝ քարձր լեռներում» [KYKH 389₁₂₋₁₃].

(250) ^{LÚ}EN.NAM e-di-a te-ru-bi - «կառավարիչ այդտեղ դրեցի» [KYKH 389₁₂].

(251) me-še e-di-a te-ru-bi - «հարկ այդտեղ դրեցի» [KYKH 389₁₂].

(252) ^{LÚ}E]N.NAM^{MES} e-si-a te-ru-bi - «կառավարիչ տեղում դրեցի» [KYKH 389₁₂].

Այստեղ (245)-(249)-ը փաստորեն peṭi (bedi), kurune ետադրություններով կամ ištine դերանվանական (տեղի) մակբայով կազմված նախադասություններ են: Դրանցում ետադրությունները և մակբայը դրված են տրական հոլովով, իսկ ետադրության խնդիրը ստանում է -ia (ne) վերջավորություն: Այս տիպի նախադասություններում -ia (ne) վերջավորությանը բառերի մեջ ներգոյական հոլով տեսնելը բոլորովին պարտադիր չէ (մանրամասն այս մասին տես՝ VII.3 կետ 2 և V.3 կետ 4), հատկապես երբ խոսքը «Խալդի աստծո» (245), «ծովի» (247)-(249) և «լեռան» (249) մասին է: Բնական է, որ պետք է լինի՝ «Խալդիին (տրական հոլով)» կամ «Խալդիի շնորհիվ», բայց ոչ երբեք «Խալդիի մեջ»: Նմանապես և՛ «ծովի կողմը», «ծովի հետևը»: Ամեն դեպքում նշված օրինակները իրենցից ներկայացնում են ետադրություններով կազմված բառակապակցություններ և հետևաբար չեն կարող հուսալի հիմք լինել որևիցե հոլովի, այդ թվում և ներգոյականի, առանձնացման համար: Իսկ (250)-ում և (251)-ում վկայված edia-ն տեղի մակբայ է, հետևաբար տեղացույց արժեք ունենալու համար պար-

տադիր չէ (թեև բացառված չէ), որ դրված լինի ներգոյական հոլովով, մանավանդ որ նման ձևով այս բառը գոյականի հետ գործածվելիս հերթագայում է ուղևորական հոլովին⁴⁴⁹: Բացառված չէ, որ որպես տեղի մակբայ պետք է ընկալել նաև (252)-ում վկայված esia բառը: Այսպիսով, եթե ամփոփենք հարցի քննարկումը, ապա ստիպված ենք այն առայժմ թողնել բաց, համենայն դեպս որևէ հուսալի ապացույց -ia վերջավորությանը բառերի ներգոյական իմաստ արտահայտելու վերաբերյալ մենք չենք գտնում: Իսկ ինչ վերաբերում է եզակի ներգոյականի -a-ով տարբերակին, ապա այստեղ, թերևս, վերջինիս միակ հուսալի վկայությունը gunuša (<*gunuše=a) «մարտում» և ^{GIS}GU.ZA-a «գահի վրա, գահին» բառերն են: Առաջինը բազմաթիվ անգամ վկայված է gu-nu-šá-a ha-ú-bé - «մարտում գրավեցի» կադապարային բառակապակցությունում⁴⁵⁰, որի համար Գ.Մելիքիշվիլին առաջարկում է «մարտերում (հոգնակի թիվ) գրավեցի⁴⁵¹» բարգմանությունը (տես՝ վերը): Իսկ ^{GIS}GU.ZA-a-ն վկայված է na-a-ha-(a)-di LUGÁL-tú-bi-ni-na-(a)⁴⁵² ^{GIS}GU.ZA-(a) - «քաղմեցի (ես) արքայական գահին» (քառացի՝ եկա արքայական գահի մեջ/վրա(*)» արտահայտությունում [KYKH 406 և c.24-25, 407 և c.19, Van recto, (SMEA 44/1, 2001, էջ 112-143)]: Փաստորեն սա միակ դեպքն է, որտեղ հնարավոր է տեսնել եզակի ներգոյականի վկայություն:

բ) Ըստ ընդունված կարծիքի՝ հոգնակի ներգոյականի վերջավորությունը գրում ընդհանրապես չի տարբերվում թեք հոլովների հոգնակիության ցուցիչից, ուստի և հոգնակի ներգոյականի ցուցիչի հարցը նույնպես մնում է բաց: Օրինակ, պարզ չէ, թե, ասենք, ebana «երկրներում»⁴⁵³ քառաձևը ինչպես պետք է բաղդատել՝ ebani+(n)a+a >

⁴⁴⁹ Հմմտ. uštadi X-ue e-di-a/uštadi X-edi տիպի հերթագայությունների հետ (տես՝ V.2.8):

⁴⁵⁰ Տես՝ KYKH 173 V_{38, 75}, 241 A_{7,14}, 241 B₂₀, 241 E₁₂, 49 ... և այլն:

⁴⁵¹ Gunuša-ն հնարավոր է բարգմանել նաև բացառական-գործիական հոլովով՝ «մարտերով»:

⁴⁵² Այն, որ «գահ» բառը այստեղ դրված չէ տրական հոլովով, երևում է հատկացուցիչի (LUGÁL-tuḫina-h) հոլովային վերջավորությունից: Այդպես կլինեի *LUGÁL-tuḫinine (e): Այստեղ հնարավոր է նաև հոգ. բացառական, սակայն համատեքստում դա որևէ իմաստ չի տալիս:

⁴⁵³ Այն մեկ անգամ վկայված է՝ ali LÚ-tú-je III ^{KUR}e-ba-na I MU za-du-bé [KYKH 241 A₂₅₋₂₆] արտահայտությունում: Պետք է նկատի ունենալ, որ ^{KUR}ebana-ն այստեղ կարող է լինել հոգնակի բացառական: Այդ դեպքում նշված հատվածը հնարավոր է բարգմանել «...երեք երկրներից...»:

ebana, քն ebani+ (n) a+Ø > ebana: Հոգնակի ներգոյականը իր տեսքով նմանվում է մակ հոգնակի բացառական-գործիականի երկրորդ (ne ցուցիչից զուրկ) ձևին⁴⁵⁴: Եթե կրկնօրինակ տեքստ(եր)ում կամ մեկ համատեքստերում - (n) a-ին զուգահեռ առկա է - (n) a=ne տարբերակը, ապա կարելի է համոզված լինել, որ բառը դրված է բացառականով: Մյուս դեպքերում հնարավոր է տարբերել թերևս միայն շարահյուսությամբ: Բայց միշտ չէ, որ դա հնարավոր է. օրինակ՝ ...III-a e-sa-a u]š-ti-ip-te za-du-ú-bé «...երեք տեղերում էլ արշավեցի» [KYKH 241 D₁₉₋₂₃]» արտահայտությունը հնարավոր է բարգմանել «...երեք տեղից (կամ տեղով) էլ արշավեցի»: Ընդհանրապես, հոգնակի ներգոյականի վկայությունները սակավաթիվ են, իսկ եղածները այնքան էլ համոզիչ չեն և բացառված չէ, որ դրանք դրված են այլ հոլով(ներ)ով:

3. -aše ածանցի ներգոյական հնարավոր իմաստի մասին: Ինչպես արդեն նշվեց (տե՛ս վերը), որոշ ուրարտագետներ - (a) še վերջամասնիկի մեջ տեսնում են ներգոյական հոլովի ցուցիչ կամ ներգոյականի իմաստով ետդիր: Հարցը պարզաբանելու համար դիտարկենք բոլոր հնարավոր մեծ դեպքերը՝ դասակարգելով դրանք ըստ համատեքստի (հնարավոր իմաստի) և բաց թողնելով - (a) še-ի այն վկայությունները, որոնցում այն ակնհայտորեն ունի այլ արժեք. օրինակ, բառակազմիչ ածանց է (սրանց մասին տե՛ս VII.2 և IV.3 կետ 2):

ա) Ուրարտական տեքստերում առնվազն մի քանի անգամ նկատվում է եզակի թիվ՝ -i=ie, հոգնակի թիվ՝ - (i) a=še հերթազայում: Տե՛ս հետևյալ արտահայտությունները.

- (253) ...ma-si-ni-e ^{GIŠ}šú-ri-e ka-ru-ni (^mN-ni ^mN-ի) LUGÁL ^{URU}X-i/ի KUR-ni/e-ba-ni-(i)-e - «...իր սրին ենթարկեց N-ին՝ որդուն N-ի՝ թագավորին X-ի (քաղաքի/երկրի/ ցեղի անվանում) երկրի» [KYKH 241C_{8,49}, F₆, 242DI + DII₅, 244₂ և այլն].
- (254) ...ma-si-ni-e ^{GIŠ}šú-ri-i-e ka-ru-a-li IV LUGÁL ^{MEŠ} ^{KUR}ú-e-du-ri-E-ti-u-ni-i ^{KUR}e-ba-a-ni-a-ši-e - «...իր սրին ենթարկեց 4 թագավորներին՝ Ուրուրի-Էթիունի երկրներում» [KYKH 241C₄₇].
- (255) ^{KUR}Aš-šur ^{LÚ}hu-ra-di-i-e ^{KUR}e-[ba]-ni-ú-ki áš-du - «Ասուրական զորքը իմ երկրում ոչնչացրի(»)» [KYKH 173 III₂₅].

⁴⁵⁴ Այս մասին մանրամասն տե՛ս V.2.7 կետ 2 :

- (256) ^{K[UR]}Aš-[šur ^{LÚ}A.S]I? ^{MEŠ}-ši-e ^{KUR}e-ba-ni-[ú]-ki áš-du - «Ասուրական զորքին իմ երկրում ոչնչացրի(»)» [KYKH 173 III₂₅ - IV₁].
- (257) II LUGÁL ^{MEŠ}-li-li e-di-ni su-ču-qu-[ú]-bi ^mBa-al-tú-ú-ul-ի-e ^{KUR}e-ba-a-ni-i-e ^{URU}ha-al-di-ri-ul-ի ^{KUR}e-ba-a-ni-i-e É.GAL ^{MEŠ}-a-ši-li a-gu-ú-nu-ni-e-li ^{KUR}e-ba-ni-a-ši e-di-ni su-ču-qu-bi - «երկու թագավորներ այնտեղից (ես) հեռացրի՝ Բաթրուլի (ցեղ) երկրի, Խադիրիուլի (ցեղ) երկրի: Ամուր ամրոցները երկրների այնտեղից (ես) պոկեցի» [KYKH 53₂₄₋₂₈].
- (258) áš-ta-a-di ^{KUR}E-ti-ú-ni-a iš-ti-ni-i-e - «...ես արեցի(») Էթիունի երկրի համար» [KYKH 241 F₃].
- (259) a-[x?-]šá-di [^{KUR}Ar-իu]-ú?-e iš-ti-ni-a-ši - «» [KYKH 409₂, Shisheh₃ (SMEA 43/1, 2001, էջ 25-37)]:

Ինչպես երևում է (255)-ի և (256)-ի համադրումից, նույն համատեքստում եզակի թվի համար ունենք ^{LÚ}huradi=ie, իսկ հոգնակիի՝ ^{LÚ}A.S]I? ^{MEŠ}-še (վերականգնված լինելու պատճառով այս վերջինը հուսալի չէ): Նմանապես (253)-ի և (254)-ի համադրումից՝ karu=ne ... LUGÁL ... ^{KUR}enani=(i)e և kar=u=ale 4 LUGÁL ^{MEŠ} ... ^{KUR}ebani=aše: Նման պատկեր է առկա մակ (257)-ում, որտեղ միևնույն համատեքստում մի կողմից առկա է II LUGÁL ^{MEŠ} ... ^mX-իe ^{KUR}ebani=ie, ^{URU}X-իe ^{KUR}ebani=ie «երկու թագավորներ ... X ^{KUR}ebani=ie, X ^{KUR}ebani=ie» (երկու թագավորների երկրները նշվում են առանձին-առանձին՝ երկու անգամ, հետևաբար դրված են եզակի թվով), մյուս կողմից՝ É.GAL ^{MEŠ} ... ^{KUR}ebani=aše - «ամրոցներ ... ^{KUR}ebani-aše (ամրոցների երկրները (դրված է հոգնակի թվով))»: Մնում է ենթադրել, որ կա՛մ եզակի տրականն այստեղ արտահայտում է ներգոյական իմաստ, կա՛մ -aše-ն՝ հոգնակի տրականի⁴⁵⁵: (258)-ի մեկնաբանության համար տե՛ս VII.3 կետ 2⁴⁵⁶: Հետաքրքիր է մակ (259)-ում առկա տեքստը (ցավոք այստեղ iš-ti-ni-a-ši/e-ին նախորդող

⁴⁵⁵ Միզուցի ցի/e-ն այստեղ պետք է կարդալ՝ zí/é [տե՛ս Л.Линин, 1964, էջ 137-148, նշան № 102]՝ -(i)aze-ի մեջ տեսնելով հայերենի մի շարք թեք հոլովների հոգնակի թվի -(ե)աց վերջավորություն:

⁴⁵⁶ Տրված բարգմանությունը ակնհայտորեն սխալ է, քանզի áš-ta-a-di (ášt=a-di) քայլ անանցողական է:

բառը վնասված է): Բացառված չէ, որ նման քերականական ձևերը պետք է բոլորովին այլ կերպ մեկնաբանել: Համատեքստը հնարավորություն չի տալիս հստակ կողմնորոշվելու:

բ) -aše մասնիկով կազմված բառերը մի քանի դրվագներում կարծես թե հանդես են գալիս այնպիսի դիրքում, որտեղ սովորաբար ունենում ենք ուղևորական հոլովով դրված բառեր: Բերենք հետևյալ օրինակները.

(260) uš]-ta-ia-di KUR¹ha-ti-i-na-a-ši-e - «ուղևորվեցի Խաթինայի (երկիրը)» [KYKH 176 III₁₅].

(261) ka-a-di L⁰A.SI^{MES}-ši URU¹Tu-me-iš-ki-ni-ka-i - «հայտնվեցի (ես) գորքի մեջ Տուսեիշկինիի (քաղաքի) առջև» [KYKH 241 B1₁₂, 244₁₁].

(262) ...a-li-a-ba-di KUR.KUR^{MES}-ši šú-i-a-ši-e ha-ši-al-me DINGER^{MES} za-tú-me ha-a-ri-e - «...aliabadi բոլոր երկրներում լսեցին-ինձ աստվածները, սարքեցին ճանապարհ» [KYKH 241 E_{6,47}].

(263) ...a-li-a-ba-di KUR¹lu-lu-i-na-ši ha-ši-al-me DINGER^{MES} - «...aliabadi թշնամական (Լուլուինական) երկրներում լսեցին-ինձ աստվածները» [KYKH 241 F₃]:

Եթե (261)-ում -(a)še-ն իրոք կարծես թե ունի ներգոյական իմաստ, ապա նույնը հնարավոր չէ պնդել (262)-ի համար. վերջինս հմմտ., օրինակ, ուղևորականով դրված ...KUR.KUR^{MES}-di šú-ia-i-di... - «...բոլոր երկրների վրա...» [KYKH 271₁₁] նմանատիպ արտահայտության հետ: Նույնն է նաև (260)-ում, որտեղ ուղևորականի իմաստը առավել հավանական է, թեև չի բացառվում նաև ներգոյականի իմաստ՝ «ուղևորվեցի/արշավեցի Խաթինում (Խաթե երկրում) (*)»: Ինչ վերաբերում է qudul(=)ane(=kutul(=)ane⁴⁵⁷) šuhi=na=(a)še/GIBIL-še բառակապակցությանը, որը սովորաբար քարգմանվում է «նոր տաճար(ներ)ում», ապա այստեղ նույնպես հստակություն չկա: Մասնավորապես այնքան էլ հասկանալի չէ, թե ինչ հոլովով է դրված qudulane «տաճար» բառը. եթե հիմքը kutul-ն է, ապա թերևս՝ հոգնակի բացառականով: Ամեն դեպքում «նոր տաճար(ներ)ում» քարգմանելիս որոշիչը՝ šuhi=naše (šuhinaše) (šuhina=(a)še)-ն հոլովով չի համա-

⁴⁵⁷ Հմմտ. հայ. կոթող «կոթող, տաճար» բառի հետ (տե՛ս III.2.3 կետ 33):

ձայնում որոշյալի՝ qudul(a=ne)-ի հետ: Ընդհանուր առմամբ այս -aše ածանց/մասնիկի դերի և իմաստի ըմբռնման հարցում ամեն ինչ չէ, որ պարզ է (համաձայնություն չկա նաև մասնագիտական գրականությունում): Թերևս կարելի է հուսալ, որ նոր արձանագրությունների հայտնաբերմամբ հետագայում հնարավոր կլինի հստակություն մտցնել այս հարցում:

V.2.10 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ՀՈՒՈՎՍՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՍԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏ

1. Ուրարտերենի հոլովման համակարգի ընհանուր պատկերը: Ուրարտերենի անվանական հոլովման ամփոփ պատկերը ըստ առանձին հոլովումների ներկայացված է Աղյուսակ 5-ում (մեկնաբանությունները տրված են ներքևում): Առավել մանրամասն տե՛ս V.2.2՝ համապատասխան հոլովների վերաբերող կետերը: Երկրորդային հոլովների համար, որոնք այստեղ դիտարկվում են որպես ետդիրներ և ետադրություններ, տե՛ս VII.2 և VII.3:

Աղյուսակ 5

Ուրարտերենի հոլովային վերջավորությունները

Հոլով	Եզակի թիվ		Հոգնակի թիվ
	հոլովում		
	a, i, o, u	n	
Ուղղական	-(v)=∅, -v=n, -v=e/ə	-	-(v=n)=er
Երգատիվ	-v=s	-v=i=ne=s	-(v=n)a=s
Սեռական	-a=y, -e=y(-ē), -o=y, -u	-v=i=ne=y	-(v=n)a=(u)e
Տրական	-a, -i=y/j(ə), -o=y/j(ə), -u	-v=i=n(ə)	
Բացառական-գործիական	-v=n, -v=∅	-v=i=ni=n -v=i=n(e)	-(v=n)a=(n)
Ներգոյական	-a (*)	-(*)	-(v=n)a (*)
-aš հոլով (*)	-(*)	-	-(v=n)a=aš -i=aš

ա) Հոլովային վերջավորությունները այդուսակում ներկայացված են ննչյունական տառադարձությամբ: Որոշ հոլովային ցուցիչների վերջում

գրվող -e ձայնավորը, որը մասնագիտական գրականությունում սովորաբար հնչյունադարձվում է e կամ ə, այստեղ ներկայացրել ենք Ø-ով: Մետական-տրականի հոգնակին կարող էր հնչել -a (w) (ə) . պարզ չէ:

բ) Գրում ս բնով ներկայացվող բառերը բաժանված են երկու մասի: Առաջինում ընդգրկված են այն բառերը, որոնք հոլովվում են ըստ կանոնի՝ մյուս հոլովումներին պատկանող բառերի նման, երկրորդում՝ այն բառերը, որոնք եզակի սեռականում և տրականում (գրում) ունեն -u (-ս) վերջավորություն: Առաջինում բնավոր u-ն հնչյունադարձված է օ՝ հիմնվելով հայերենի վրա (այս մասին մանրամասն տե՛ս ստորև՝ կետ 3):

զ) V-ով ներկայացվում է հիմքակազմ ձայնավորը:

դ) Եզակի տրականի յ-ով ձևերը (գրում ց) վկայված են միայն Արգիշտի I-ից հետո:

ե) Հոգնակի ուղղականում -er-ով (գրում -ele-ով) վկայված են միայն e և i հոլովման բառերը: Մյուսների համար հուսալի վկայություններ չկան, եթե իբրև այդպիսին չհամարենք ale=le դերանունը (տե՛ս ծան. 390):

զ) N հոլովման երգատիվի համար հնարավոր է մակ -v=i=ni=s (պարզ չէ):

է) -i=aş միայն i հոլովման բառերի համար. մյուսների համար վկայություններ չկան:

ը) Եզակի ուղղականում -v=e վերջավորություն (գրվում է -v-(e)) ստանում է միայն ուղիղ խնդրի լրացումը: Ճշգրիտ հնչումը պարզ չէ:

թ) Տեքստերում սեռականն երբեմն փոխարինվում է տրականով և հակառակը:

ժ) N հոլովման եզակի տրականի և բացառականի գրում -ne-ով ներկայացված վերջավորության իրական հնչողությունը պարզ չէ: Կարող է և լինել -n (ə) :

2. Հայերենի հոլովման համակարգի ամփոփ պատկերը: Հայերենի արտաքին թեքման հոլովների հիմնակն վերջավորությունները ներկայացված են ստորև՝ Աղյուսակ 6-ում (մեկնաբանությունները տրված են ներքևում):

Հայերենի արտաքին հոլովման բառերի հոլովային վերջավորությունները

Հոլով	Եզակի թիվ	Հոգ. թիվ
Ուղղական	-Ø (որոշյալ առումով -ն)	-ք
Հայցական	-Ø	-ս
Մետական	-այ, -ոյ, -ի, -ու, -(ն)ջ	-ա/ո/ի/ու-ց, -(ն)ա-ց
Տրական	-այ, -ոյ, -ի, -ու, -(ն)ջ, -ում	-ա/ո/ի/ու-ց, -(ն)ա-ց
Բացառական	-այ, -ոյ, -է, -(ու)է, -(ն)ջէ, -ումէ	-ա/ո/ի/ու-ց, -(ն)ա-ց
Գործիական	-աւ, -ով, -իւ, -ու, -ք	եզ. + ք, -(ն)աւ-ք

ա) Ռ-Ա խառն հոլովման բառերի համար եզ. սեռական/տրական/բացառական-ում ունենք -ւոյ:

բ) -Ոււ-ով ձևերը ամուսններին են անցել դերանվանական հոլովման համակարգից և հանդիպում են խիստ հազվադեպ:

գ) Անկանոն հոլովման ձևերը աղյուսակում հիմնականում տրված չեն:

3. Համեմատությունը: Նախ ցշենք ուրարտերենի և հայերենի հոլովման համակարգերի հիմնական տարբերությունները: Հոլովների թվի հարցում (խոսքը վերաբերում է ուրարտերենի բուն հոլովներին) առկա են հետևյալ տարբերությունները:

ա) Ուրարտերենում, երգատիվ համակարգի առկայությամբ պայմանավորված, երգատիվ հոլովի գոյությունը և, համապատասխանաբար՝ հայցականի բացակայությունը⁴⁵⁸:

բ) Ուրարտերենում առանձին գործիական հոլովի բացակայությունը. գործիականի իմաստն արտահայտվում է բացառականի միջոցով, թեև հնարավոր է, որ դրանք առանձին հոլովներ են:

Ուրարտերենի հոլովման համակարգում, ի տարբերություն հայերենի, առկա է միայն արտաքին (ձայնավորային) հոլովում, ինչը հիմք է տալիս մտածելու, որ հայերենի ներքին (ձայնորդային) հոլովման կարգը դեռ չէր ձևավորվել: Այս փաստը հստակ երևում է հայերենում ներքին հոլովման պատկանող մի շարք բառերի ուրարտական գուգահեռների

⁴⁵⁸ Նորագույն հետազոտությունները (C. Watkins, 2006 (WAL), էջ 560, 564) ցույց են տալիս, որ խեթերենում և որոշ այլ հնդեվրոպական լեզուներում (ամատուլիական նշում) առկա է երգատիվ հոլով (որպես ինքնուրույն գարգացման արդյունք): Բնչը նշանակում է, որ ուրարտական շրջանում հայերենը մույնպես կարող էր երգատիվ հոլով ունենալ:

հոլովումից, օրինակ՝ 1) imen- «հիմք», հոգ. բացառ. imen=ane - հայ. հիմն, հոգ. բացառ. հիման-ց, 2) *sudu=meni- («^(*)»), եգ. ուղևոր. sudu=meni/e=edi⁴⁵⁹ (հայերենում -(ու)մն ածանցով կազմված բոլոր բառերը պատկանում են ներքին և հոլովմանը), 3) kurune «կողմ», եգ. տրակ. kuruni/e=e - հայ. կող(և), հոգ. հայց. կողուն-ս, եգ. տրակ. կողան-ց և այլն: Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ -ni/e, -ri/e, -li/e վանկերով վերջացող բառերից շատերը հոլովվում են ո հոլովման տիպով, ինչը հնարավոր է, որ արտացոլում է հայերենի ներքին հոլովման կազմավորման մասնական վիճակը:

Ուրարտերենի և հայերենի հոլովման համակարգերի համեմատությունը առավել մանրամասն քննարկենք առանձին-առանձին՝ ըստ հոլովների: Նախ անդրադառնանք եզակի քվին:

3.1 Ուղղական հոլով: Ուրարտերենում ուղղական հոլովը եգ. քվում ներկայացված է գրո ցուցիչով, այսինքն ուղղականում բառը հանդես է գալիս իր մաքուր հիմքով: Որոշյալ առումի դեպքում հիմքին կարող է հավելվել [-n] (գրում՝ -ne) հոդը/ցուցիչը⁴⁶⁰: Նույն պատկերն է առկա նաև հայերենում, ուր եգ. քվում ուղղական հոլովը ներկայացված է գրո ցուցիչով, իսկ որոշյալ առումով՝ -ն հոդով:

3.2 Սեռական հոլով: Ուրարտերենում օ և a հոլովման եգ. քվի սեռականի [-ay] և [-oy] (գրում՝ -ai և -ui) հոլովային վերջավորություններն անշուշտ համապատասխանում են հայ. եգ. սեռականի -այ և -ոյ վերջավորություններին: Իսկ ս հոլովման [-u] (գրում՝ -u-(u)) վերջավորությունը՝ հայերենի նույն հոլովման -ու-ին: Այստեղ միակ տարբերությունը վերաբերում է i հոլովման բառերին, որոնց համար ուրարտերենում ունենք [-ey (=ē)], իսկ հայերենում՝ -ի վերջավորությունը⁴⁶¹: Ուրարտերենում որոշ բառեր սեռականում ունեն [-j] ցուցիչ (գրում -ge, վաղ շրջանում -ie), որը տրականի վերջավորությունն է: Այն անշուշտ համապատասխանում է հայ. սեռական-տրականի ջ-ով ձևերի ջ-ին: Մակայն եթե հայերենում ջ-ով ձևերի հարաբերակցությունը սեռա-

⁴⁵⁹ Հմմտ. նույն հիմքից կազմված sud=u=št- («^(*)» բայի հետ):

⁴⁶⁰ Որոշյալ առումը ուրարտերենում կարող է արտահայտվել նաև մերձավոր առարկաների i ու ցուցական դերանունով, որը կատարում է որոշյալ հոդի դեր (տե՛ս V.3 կետ 3):

⁴⁶¹ Հայերենում սակավաթիվ բառեր եգ. սեռականում ստանում են -(<-եյ) վերջավորություն, օրինակ՝ տուե «ցերեկվա», որոնք համարվում են հնագույն Ե հոլովման մնացորդներ:

կանում և տրականում գրեթե նույնն է, ապա ուրարտերենում դրանք տրականում ակնհայտորեն գերակշռում են (տե՛ս նաև հաջորդ կետը):

3.3 Տրական հոլով: Ուրարտերենում օ և i հոլովման ուշ շրջանի եգ. քվի տրականի [-j] ցուցիչը, որը համապատասխանաբար կազմում է [-oj] և [-ij] (գրում -uge՝ վաղ շրջանում -ue և -ige՝ վաղ շրջանում -(i)ie) վերջավորություններ, ամենայն հավանականությամբ համապատասխանում է հայերենի տրական-սեռականի ո և անկանոն հոլովման որոշ բառերի -ոջ և -(ն)ջ վերջավորությունների ջ բաղադրիչին: Ըստ այսմ, պետք է ենթադրել, որ հայերենի տրական հոլովի եգ. քվի բուն ցուցիչը եղել է հենց այս ջ-ն: Հայտնի է, որ հայերենում տրականը հիմնականում կորցրել է իր բուն ձևը և մեծամասամբ նմանվում է սեռականին: Պետք է ենթադրել, որ այս փոփոխության արդյունքում սեռականի վերջավորությունը տարածվում է տրականի մեծ մասի վրա: Բացառություն են կազմում ջ-ով ներկայացված բառերը, որոնց համար տեղի է ունեցել հակառակ գործընթաց, այսինքն տրականի վերջավորությունը տարածվել է սեռականի վրա: Ինչպես երևում է ուրարտերենում առկա սեռական-տրական հերթագայությունից (տե՛ս V.2.5 կետ 4) և այն փաստից, որ ուրարտերենում հոգնակի սեռականը ձևով չի տարբերվում հոգնակի տրականից, այս գործընթացն սկսվել էր արդեն Վանի քաղաքության շրջանում: Հայագիտական գրականությունում հայերենի տրական-սեռականի ջ-ի ծագման հարցում միակարծություն չկա. ոմանք այն բխեցնում են հ.-հ. *dhi մասնիկից, սակայն ուրիշները մերժում են այդ տեսակետը⁴⁶²: Եթե ճիշտ է եզակի տրականի հայ. ջ-ի և ուրարտ. [j]-ի մեր նույնացումը, ապա, ինչպես երևում է վաղ շրջանի ուրարտական տեքստերի եգ. տրականի [j] մասնիկի փոխարեն [y]-ի առկայությունից, հայերենի այս ջ-ն պետք է որ ծագեր y-ից՝ հայերենին հատուկ y > j անցումով (եթե, իհարկե, ուրարտերենի i/ց հերթագայումը արտացոլում է իրական հնչյունափոխությունը, այլ ոչ թե ունի լուրջագրական բնույթ՝ հատուկ միայն գրին): Ինչ վերաբերում է ուրարտերենի ս հոլովման բառերի [-u] վերջավորությանը, ապա, ինչպես և սեռականի դեպքում, այն անշուշտ համապատասխանում է հայերենի նույն հոլովման սեռական-տրականի ու-ին:

3.4 Բացառական հոլով: Բացառականը ուրարտերենում կազմվում է [-n]-ով (գրում -ne) կամ գրայով: Հայերենում բացառական հոլովը,

⁴⁶² Մանրամասն այս մասին տե՛ս, օրինակ, Г.Джаукян, 1982, էջ 139:

ինչպես որ տրականը, հիմնականում կորցրել է իր բուն հոլովային վերջավորություն(ներ)ը և հոլովվում է սեռականի պես: Այստեղ բացառականը, բացառությամբ ի և ու հոլովման բառերի, սեռականից գանազանվում է միայն ի/յ նախդիրով: Իսկ ի և ու հոլովիչներով հոլովվող բառերը ստանում են նաև է ցուցիչ, որը համապատասխանաբար փոխարինում է հիմքակազմ -ի-ին կամ -ու-ին (ու հոլովման որոշ բառերի դեպքում այն հավելվում է հիմքակազմ -ու-ին՝ առաջացնելով -ուէ վերջավորություն): Նմանապես և եզակի սեռական-տրականում ջ-ով հոլովվող բառերի համար եզակի բացառականում ունենք -(v)-ջէ վերջավորությունը: Այս է-ի ծագման շուրջ հայագետների շրջանում միակարծություն չկա: Կարծիքներ են հայտնվել, որ այն ծագում է հ.-ե. *-tes/-tos-ից (մակբայական ձև է), *-eti-ից, *-ti-ից և այլն⁴⁶³: Ուշագրավ է, որ հայերենի ի հոլովման բառերի բացառականի այս է-ն համընկնում է ուրարտերենի նույն ի հոլովման բառերի եզ. սեռականի [-ei(-ē - հայ. է)] ցուցիչի հետ: Եթե նկատի ունենանք, որ մյուս հոլովիչների դեպքում հայերենի բացառականը կրկնում է սեռականին, ապա բացատված չէ, որ է-ն, ինչպես որ մյուս հոլովման բառերի դեպքում, բացառականին է անցել հենց սեռականից, որը հետագայում երկրորդաբար (համաբանությամբ) տարածվել է նաև ու հոլովման և ջ-ով հոլովվող որոշ բառերի վրա՝ հավելվելով համապատասխան վերջավորություններին: Ինչ վերաբերում է հայերենի բացառականի բուն վերջավորությանը, ապա, ինչպես ցույց է տալիս ուրարտերենի բացառականի [n] ցուցիչը, այն կարող էր լինել *ս-ն, որը, ըստ Գ.Ջահուկյանի, պահպանվել է հայերենի և հոլովման որոշ բառերում⁴⁶⁴: Այդ դեպքում, ինչպես ցույց է տալիս ուրարտերենի բացառականի [-n/ø] հերթագայումը, այս *ս-ի անկումը պետք է որ սկսված լինել դեռ ուրարտական շրջանում:

3.5 Գործիական հոլով: Ուրարտերենում առանձին գործիական հոլով գոյություն չունի. գործիականի իմաստն արտահայտվում է բացառականի միջոցով, եթե, իհարկե, բացառականի իմաստով վկայված բացառական-գործիականի ցուցիչի [-n/ø] հերթագայումը՝ ի հակադրություն գործիականի իմաստով եղած վկայությունների, որի դեպքում ունենք միայն [-n], երկու տարբեր հոլովների գոյության արդյունքը

⁴⁶³ Մանրամասն այս մասին տե՛ս Գ.Ջահուկյան, 1982, էջ 224, ծան. 83:
⁴⁶⁴ Գ.Ջահուկյան, Ուրարտական արձանագրությունների ներածական բանաձևերի հնարավոր հայկական բնույթի մասին, ՊԲՀ, 2001, 1, էջ 124-129:

չէ⁴⁶⁵: Հայերենում գործիականն իր կազմությամբ տարբերվում է մյուս թեք հոլովներից, որոնք հիմնականում կազմվում են միատիպ սխեմայով: Մինչդեռ գործիականը եզակի թվում կազմվում է -բ, -վ, -ւ ցուցիչների միջոցով, որոնք հավելվում են բառի հիմքին (խառը հոլովման դեպքում՝ -ա-ին): Ուրարտերենում, ինչպես արդեն նշեցինք, գործիական հոլովը նույնանում է բացառականի հետ և արտահայտվում է [-n]-ով, հետևաբար որևէ առնչություն հայերենի գործիականի -բ, -վ, -ւ ցուցիչների հետ չունի⁴⁶⁶: Մյուս կողմից՝ հայերենի գործիականի վերոնշյալ հոլովակերտ մասնիկները ծագում են հ.-ե գործիականի *-bhi(s) ցուցիչից, որը հնդեվրոպական լեզվում հերթագայվում էր -mi(s)-ի հետ: Վերջինս հնդեվրոպական լեզուներում ունի լայն տարածում և հայերենում պետք է տար *ս-ն, ուստի բացատված չէ, որ ուրարտերենի գործիականի [-n] ցուցիչը ծագում է հենց այս -mi(s)-ից(*):

3.6 Ներգոյական հոլով: Հուսալի օրինակների բացակայության պատճառով ուրարտերենում ներգոյական հոլովի եզակի թվի ցուցիչի հարցում պարզություն չկա: Հոգնակի թվում, ըստ երևույթին, այն ներկայացված է -ø-ով (*) կամ -a-ով (*):

3.7 -(i)aze(*) հոլով: Այս մասնիկի հարցում հստակություն չկա: Մասնագիտական գրականությունում ոմանք այն համարում են ներգոյականի մի ձև, ուրիշները՝ ետդիր: Ուրարտական մի շարք տեքստերում այն փոխարինում է հոգնակի տրականի վերջավորությանը: Այս ածանցը ուրարտերենում կարելի է կարդալ նաև -(i)aze: Այդ դեպքում միզուցե այն պետք է նույնացնել հայերենի մի շարք թեք հոլովների -(ե)աց վերջավորության հետ (*):

3.8 Հոգնակի թիվ: Հոգնակի ուղղականը ուրարտերենում կազմվում է բառահիմքին [-(n)e=r] (գրում -(n)e=le) ածանցի հավելումով: Ընդ որում, [-er] տարբերակը հավելվում է միայն i հոլովմանը պատկա-

⁴⁶⁵ Բացատված չէ նաև, որ alepi (<ale=pi) բառակերպում -pi-ի տակ նույնպես պետք է տեսնել գործիական հոլովի ցուցիչ:
⁴⁶⁶ Հնարավոր է, որ որ հայերենի՝ -բ, -վ, -ւ մասնիկները միայն հնագույն բացառական-գործիական հոլովի բուն վերջավորության՝ [n]-ի կորստից և բացառականի վրա սեռականի-տրականի վերջավորությունների տարածումից հետո են սկսել լայնորեն կիրառվել: Միզուցե հենց դրանով է պայմանավորված այն համազանգը, որ հայերենում գործիականն իր կազմավորման ձևով տարբերվում է մյուս թեք հոլովներից:

նող բառերին՝ քնավոր ձայնավորի անկմամբ⁴⁶⁷: A և o/u հոլովման բառերի համար պարզ չէ: Այս բառերի համար [-er]-ով կազմված հոգնակիի հուսալի վկայություններ չկան. առկա են միայն [-ner]-ով տարբերակներ: Հայերենում հոգնակի ուղղակամը հիմնականում կազմվում է համապատասխան բառահիմքին -ք հոգնակիակերտի⁴⁶⁸ հավելումով, երբեմն մակ հավաքական իմաստ արտահայտող -(u)եար, -եր, -որ(ե)այ, -անի, -ուի, -ան, -եան, -տի, -ոտի, -իկ, -ական ածանցների միջոցով⁴⁶⁹: Ուրարտական տեքստերում -անի, -ան, -եան հավաքական-հոգնակիակերտ ածանցների կիրառության մասին տե՛ս IV.3 կետ 2.14: Ինչ վերաբերում է ուրարտերենի հոգնակի ուղղակամի [-(-n)er] վերջավորությանը, ապա այն անշուշտ պահպանվել է հայերենի -եար, -(u)եր, -որ(ե)այ հոգնակիակերտ ածանցների մեջ: Մրանցից -(u)երը արդի հայերենում հանդես է գալիս որպես հոգնակի ուղղակամի հիմնական ձև⁴⁷⁰: Ինչ վերաբերում է հայերենի հոգնակիի ք-ին, ապա, ըստ երևույթին, ուրարտական տեքստերում այն առկա է ի դեմս վերացական գոյականներ կազմող [-s]-ի, որը հանդես է գալիս մակ հոգնակիակերտ-հավաքական արժեքով (տե՛ս IV.3 կետ 2.15):

Թեք հոլովների հոգնակին ուրարտերենում կազմվում է միատիպ՝ քնավոր ձայնավորին հավելվող հոգնակիության - (n) a- ցուցիչի (-a-ի դեպքում քնավոր ձայնավորի անկմամբ) միջոցով, որին, իր հերթին, հավելվում է եզակի թվի համապատասխան հոլովակերտ մասնիկ: Մասնակիորեն բացառություն է կազմում հոգնակի սեռական-տրականը, որի դեպքում հոգնակին կազմվում է -(n)a- ցուցիչին -(u)e մասնիկի հավելումով: Հայերենի սեռական, տրական և բացառական հոլովներին հատուկ է երկու սխեմա: Այսպես կոչված պարզ հոլովման դեպքում հոգնակին կազմվում է համապատասխան բառահիմքին -ց-ի, իսկ խառն հոլովման դեպքում՝ -(ե)աց-ի հավելումով: Վերջինս փոխարինում է հիմ-

⁴⁶⁷ Հավանաբար հոգնակիի բուն ցուցիչը r-ն է, իսկ e-ն գալիս է հիմքակազմ i-ից, ինչպես որ ունենք սեռականի և -ի i (ne) ածանցի դեպքում:

⁴⁶⁸ Ըստ առավել տարածված տեսակետի՝ հայերենի այս -ք-ն ծագում է հնդեվրոպական անբուն հիմքերի հոգնակի ուղղակամի -es/ōs մասնիկից: Բայց կամ և այս տեսակետը մերժողներ: Այս մասին տե՛ս Г.Джаукян, 1982, էջ 224, ծան. 85:

⁴⁶⁹ Հայերենում այս ածանցների կիրառման և հնարավոր ծագման մասին մանրամասն տե՛ս Н.Мкртчян, Армянские ареальные показатели множественности, Уфр.д. 2000, էջ 369-377; Գ.Ջահուկյան, 1987, էջ 375-376 և այլն:

⁴⁷⁰ Թեև գրաբարում այս ձևն ունի սահմանափակ կիրառություն, այնուամենայնիվ հնարավոր է, որ խոսակցական լեզվում ունեցել է առավել լայն կիրառություն: Մասնավորապես հանախակի հանդիպում է Ղազար Փարպեցու մոտ:

քային ձայնավորին: Պետք է կարծել, որ հայերենի խառն հոլովների այս -(ե)աց-ի մեջ պահպանվել է ուրարտերենի թեք հոլովների հոգնակիության -a- ցուցիչը⁴⁷¹: Հայերենում հոգնակի գործիականի կազմավորման սխեման տարբերվում է մյուս թեք հոլովներից: Ե՛վ պարզ, և՛ խառն հոլովման դեպքում այն կազմվում է միատիպ՝ եզակի գործիականի համապատասխան վերջավորությանը -ք-ի հավելումով:

3.9 Եզրակացություն: Ինչպես երևում է վերոշարադրյալ նյութից, ուրարտերենի և հայերենի հոլովման համակարգերը, չնայած որոշակի տարբերությունների, հիմնականում պայմանավորված ուրարտերենում երգատիվ կառուցվածքի առկայությամբ, ունեն զգալի մասնություններ: Դա հատկապես վերաբերում է ուղղական, սեռական և տրական հոլովների եզակի թվին, որոնք գործնականում կրկնում են մեկը մյուսին: Իհարկե եթե ընդունենք, որ հայերենի տրականի հնագույն ցուցիչը (մասնիկը), մինչև սեռական հոլովի վերջավորության տարածումը վերջինիս վրա, եղել է սեռական-տրական հոլովի ջ-ն: Հոլովման համակարգում հայերենի և ուրարտերենի մյուս տարբերությունը ինքնուրույն գործիական հոլովի բացակայությունն է ուրարտերենում. այն արտահայտվում է բացառականի և գործիականի համար ընդհանուր ձևով (ցուցիչով): Իրականում, սակայն, չի բացառվում, որ ուրարտերենում առկա են երկու առանձին՝ բացառական և գործիական հոլովներ, որոնց համար համապատասխանաբար ունենք [-n/Ø] և [-n] հոլովակերտ մասնիկները: Ինչ վերաբերում է բացառականին, ապա այստեղ հայերենը հիմնականում կրկնում է սեռական-տրականի ձևերը՝ բացառությամբ ի, ի-ա և ու հոլովման բառերի, որոնք կազմվում են է (< էյ) ցուցիչի միջոցով: Այն հանգամանքը, որ ուրարտերենում նկատվում է բացառականի բուն ցուցիչի՝ [-n]-ի հերթագայում [-Ø]-ի հետ, այսինքն առկա է բացառականի քայքայման գործընթաց, հիմք է տալիս կարծելու, որ արդյունքում բացառականը կարող էր վերջնականապես կորցնել իր նախնական ձևը, և ինչպես ցույց է տալիս հայերենի նյութը, վերջինիս վրա տարածվել է սեռականի վերջավորությունը: Ընդ որում, ինչպես երևում է ուրարտերենի i հոլովիչով հոլովվող բառերի սեռականի -ei վերջավորությունից, բացառված չէ, որ հայերենում այդ նույն ի հոլովիչով հոլովվող բառերի բացառականի է-ն գալիս է հենց այս -ei-ից: Ուրարտերենի հոգնակի ուղղականի [r] տարրը ամենայն հավանականությամբ պահպանվել է

⁴⁷¹ Այս մասին տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1987, էջ 427-428:

հայերենի -ր-ով հոգնակիակերտ մասնիկների մեջ: Թեք հոլովների հոգնակի թիվը ուրարտերենում, ի հակադրություն հայերենի, բոլոր հոլովումների համար կազմվում է միատիպ՝ -(n) a- հոգնակիության ցուցիչի միջոցով: Սակայն հայերենում վստահաբար կարելի է տեսնել այս վիճակի հետքերը, որտեղ թեք հոլովների հոգնակիի -ա- քաղադրիչով կազմավորվող վերջավորությունները ակնհայտորեն գերակշռում են մյուսների վրա: Ուրարտերենի թեք հոլովների հոգնակի թվի մյուս տարբերությունը հայերենից ց մասնիկի քացակայությունն է ուրարտերենի հոլովման համակարգում⁴⁷²:

Այսպիսով, եթե մի կողմ թողնենք ուրարտերենում էրգատիվ կառուցվածքի առկայությունը և ինքնուրույն գործիական հոլովի քացակայությունը, ինչպես նաև հաշվի առնենք հայերենում սեռական հոլովի վերջավորության տրականի ու քացառականի վրա տարածման փաստը, ապա կարելի է պնդել, որ հայերենի և ուրարտերենի հոլովման համակարգերը հիմնականում նույնանում են:

V.2.11 ՀԱՄԱԶԱՅՆՅՈՒՄ

1. Անունների համաձայնեցումը ուրարտերենում: Ուրարտերենում անվանական լրացումը, որպես կանոն, հոլովով և թվով համաձայնում է լրացյալի հետ: Գ.Մելիքիշվիլին⁴⁷³ խոսելով այդ մասին, բերում է հետևյալ օրինակները՝ ^mMenuaše ^mIšpuiniḫiniše, ^dḪaldinie DUB-te, ^dḪaldinili šištili, inili ebanili և այլն: Իսկ քացառություններից նշում է հետևյալները՝ šusine (տրակ. հոլով) uš-tiptini (քաց-գործ. հոլով) - «մեկ արշավով», ^sADU babania (նեք. հոլով) kuruni (տրակ. հոլով) - «հզոր լեռներում»⁴⁷⁴: Միևնույն ժամանակ

⁴⁷² Եթե, իհարկե, ուրարտ. որոշ թեք հոլովների հոգ. թվի -(1) aše վերջավորության մեջ - (1) aze ընթերցմամբ չտեսնենք հայերենի համանման -(ե)աց վերջավորություն: Ց-ն քացակայում է նաև ուրարտերենի խոնարհման համակարգում (տե՛ս VI.2.5) և, հավանաբար, այդ շրջանում հանդես է եկել իր հին՝ գուտ ածանցական (քառակազմական) արժեքով, որը և վկայված է մի շարք ուրարտական ձևերում (տե՛ս IV.3 կետ 2.11 և 2.12): Այս մասին տե՛ս նաև Գ.Ջահուկյան, 1988, էջ 150:

⁴⁷³ Г.Меликишвили, 1964, էջ 63:

⁴⁷⁴ Իրականում այս օրինակում գործ ունենք տրական հոլովով դրված kurune «կողմ» նաադրության հետ, որը հանդես է գալիս -ia վերջավորությամբ գոյականի (նաադրության խնդրի) հետ: Այս և այլ նաադրությունների և դրանց գործածության մասին տե՛ս VII.3 կետ 2:

նա նկատում է, որ ուրարտերենում պատկանելությունն արտահայտվում է երկակի՝ սեռական հոլովի կամ -ini ածանցի միջոցով, ընդ որում, այն դեպքերում, երբ որոշյալ բառը դրված է չձևավորված հոլովի եզրով պատկանելությունն արտահայտվում է սեռական հոլովի միջոցով, այլ դեպքերում՝ -ini ածանցի միջոցով: Նման տատանման պատճառը նա համարում է այն հանգամանքը, որը ըստ կանոնի սեռական հոլովով դրված լրացումը պետք է համաձայնի իր լրացյալի հետ՝ իր վրա կրելով վերջինիս հոլովային ցուցիչը, հետևաբար երկու հոլովների վերջավորությունների կուտակումներից խուսափելու նպատակով պատկանելությունն արտահայտվում է -ini ածանցի միջոցով: Իսկ քանի որ չձևավորված հոլովի եզր. թիվը գուրկ է որևէ հոլովային ցուցիչից, ապա նման կուտակում չի առաջանում. հետևաբար պատկանելությունն արտահայտվում է սեռական հոլովով: Հետագայում Գ.Վիլիելմը⁴⁷⁵ մերժեց այս տեսակետը՝ պնդելով, որ ուրարտերենում գոյություն չունի պատկանելության -ini (-ine) ածանց և որ թե՛ ուրարտերենում, թե՛ խուտիերենում գոյություն ունի հատկացուցիչի (այսինքն՝ սեռական հոլովով դրված լրացման) և հատկացյալի համաձայնեցման հատուկ ձև, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ հատկացյալը դրված է որևէ թեք հոլովով կամ հոգնակի ուղղականով, հատկացուցիչը համաձայնում է վերջինիս հետ հատուկ կարգով: Ըստ այդ կարգի՝ հատկացյալի հոլովային ցուցիչը փոխանցվում է հատկացուցիչին՝ վերջինիս վրա համաձայնեցման հատուկ շաղկապող մասնիկի (եզակի թվի համար -n(e)⁴⁷⁶, իսկ հոգնակիի՝ -na-) հավելումից հետո: Ինչպես՝ ^dḪal-di-i i-a-ra-ni šī-di-iš-tú-ni «Մալդիի պատվանդանը կառուցեց», ^mMe-nu-a-i pi-li ti-ni «Մինուայի ջրանցք (t) անունը (նրա)», քայց՝ ^dḪal-di-ni-ni al-su-i-šī-ni (^dḪaldi=i=ni=ni alsu-išī=ni) «Մալդիի մեծությամբ», ^dḪal-di-ni-e ba-du-si-e DUB-t[e te-r]u-ú-bi (^dḪaldi=i=ni=e badusi=e...), ^dḪal-di-ni-a-ú-e BE.LI^{MES} (^dḪaldi=i=na=ue BE.LI=*ue) «Մալդիի

⁴⁷⁵ Տե՛ս Г.Вильгельм, ДВ, 5, 1988, էջ 93-132:

⁴⁷⁶ Գ.Վիլիելմը խուտիերենի համար այդ մասնիկն է համարում -ne-ն՝ ուրարտերենի համար հարցը թողնելով անորոշ -ne- կամ -ni- [ДВ, 5, 1988, էջ 122 ծան. 42]: Հետագայում նշում է միայն -ne-ն [2004, էջ 126]:

զենքերին» և այլն⁴⁷⁷: Փաստորեն այն տարանջատիչ դեր է խաղում հատկացուցիչի սեռական հոլովի բուն ցուցիչի և իր վրա ընդունած հատկացյալի հոլովային վերջավորության միջև: Ըստ Գ.Վիլհելմի՝ նույն պատկերն է նաև այն դեպքերում, երբ լրացումը դրված չէ սեռական հոլովով, քայց ստանում է պատկանելության -ի (-իե) ածանց, ինչպես՝ ^mRusa-ni Argišti-ի (ուղղ. հոլով), քայց ^mRusa-i Argišti-ի-ni-i (սեռ. հոլով), ^mIšpuini-e ^{md}Sardiri-ի-ni-e (տր. հոլով): Այսպիսով նա մերժում է ուրարտերենում -ի և -ի-ni (-իե, -ի-ne) ածանցների միաժամանակյա գոյությունը՝ վերջինիս -ne տարի մեջ տեսնելով վերոնշյալ շաղկապող մասնիկը: Անդրադառնալով Մեհրի Դոան հայտի արձանագրությունում վկայված ^{AB}su-i-ni-na-ú-e DINGIR, ^{URU}Qu-me-nu-na-ú-e DINGIR, ^{KUR}e-ba-ni-n[a-ú-e] DINGIR և այլ դրվագների, հատկապես ^{md}[Sar₅-du-ri]⁴⁷⁸-i-na-ú-e DINGIR-i-e [KYKH 242 AI+AI₉] արտահայտությանը՝ նա հնարավոր է համարում, որ հոգնակի հոլով պահանջող հատկացուցիչը թվով չի համաձայնում եզակի թվով դրված հատկացյալի հետ՝ չտալով, սակայն, հարցի վերջնական պատասխանը⁴⁷⁹:

2. Ուրարտերենում անունների համաձայնեցմանը վերաբերող որոշ դիտարկումներ: Գ.Վիլհելմի վերոնշյալ տեսության դրույթը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, դա -ի-ni (-ի-ne) ածանցի գոյության հարցն է ուրարտերենում: Նա այս ածանցի -ne բաղադրիչը նույնացնում է համաձայնեցման -n(e)- շաղկապող մասնիկի հետ, որը, ինչպես նշվեց վերը, հատկացուցիչ-հատկացյալ կապակցություններում հավելվում է հատկացուցիչին՝ նախորդելով վերջինիս վրա փոխանցվող հատկացյալի հոլովային ցուցիչին՝ այդպիսով կատարելով երկու հոլովային ցուցիչների տարանջատման դեր: Ըստ Գ.Վիլհելմի՝ նույն պատկերն է առկա նաև -ի-i-ով կազմված տեղանունների և հայրանունների դեպքում, եթե վերջիններս հանդես են գալիս լրացման դերում և իրենց վրա կրում են լրացյալի հոլովային վերջավորությունը, ընդ որում, ինչպես և նախորդում, միայն հոգնակի ուղղական և թեք հոլովների դեպքում: Առաջին հայացքից այս պնդումը կարծես թե հիմնավորվում է

⁴⁷⁷ Օրինակները բերված են Գ.Վիլհելմի նշված աշխատությունից (տե՛ս ծան. 475):
⁴⁷⁸ Նման մեկնարկմամբ դեպքում ակնհայտորեն պետք է վերականգնել ^{md}[Sar₅-du-ri-ի-i-na-ú-e՝ ենթադրելով, որ խոսքը քաղաքի (դրվում է հոգ. թվով) և ոչ թե անձի մասին է:
⁴⁷⁹ Г.Вильгельм, 1988, էջ 123, ծան. 51:

իբ կողմից բերվող օրինակներով՝ ^mRusa-ni ^mArgišti-ի «Ռուսան Արգիշտիի որդին» (ուղղ. հոլով), ^mIšpuini-e ^mSardure-ի-ni-e «Իշպուինիին Արգիշտիի որդուն» (տրակ. հոլով), ^mRusa-i ^mArgište-ի-n-ei «Ռուսայի Արգիշտիի որդու» (սեռ. հոլով), որոնցում լրացումը (ավյալ դեպքում՝ հայրանունները) իսկապես ստանում է -ի վերջավորությունը բոլոր այն դեպքերում, երբ լրացյալը դրված է եզ. թվի ուղղական հոլովով, և -ի-n-՝ թեք հոլովների դեպքում⁴⁸⁰: Սակայն ուրարտական տեքստերում -իe (-ի-i) ածանցը ընդհանրապես միշտ վկայված է -ի-ne/i- տարբերակով բոլոր այն դեպքերում, երբ ստանում է հոլովային որևիցե վերջավորություն՝ անկախ նախադասությունում նրա ունեցած դիրքից (անկախ կամ կապակցված հանդես գալուց)⁴⁸¹, ինչպես՝ uš-ta-di ^{KUR}A-bé-li-a-ni-ի-né-e-di (ušta=di ^{KUR}A-beliane=ի-n(e)=edi), uš-ta-a-di ^{KUR}E-ri-a-ի-né-e-d[i] (...^{KUR}Eria=ի-n(e)=edi) և այլն: Հակառակ պարագայում պետք է լիներ՝ *^{KUR}Abeliane=իe(e)di, *^{KUR}Eria=իe(e)di և այլն: Մինչդեռ, ինչպես արդեն նշեցինք, այդպիսի վկայություններ ուրարտական տեքստերում ընդհանրապես գոյություն չունեն: Իսկ՝ uš-ta-a-di ^{KUR}ú-e-le-ku-ի-ni-ni-e ^{KUR}e-ba-ni-i-e-di (...^{KUR}úe-lieku=ի-ni=n(e)=e ^{KUR}ebani=i(e)=edi) և այլ նմանատիպ արտահայտություններում, որտեղ -իe ածանցով կազմված լրացումը հոլովով համաձայնում է լրացյալի հետ, վկայված են ինչպես -ի-i-ին հաջորդող -ne/i--ն, այնպես էլ համաձայնության -n(e)- մասնիկը: Բացի այդ, -ի-ne տարբերակը առկա է նաև անկախաբար գործածվող -tuš-i(ne) ածանցի կազմում, ինչպես նաև ցուցական դերանունների և դրանցից կազմված ձևերում: Այսպիսով, մնում է ենթադրել, որ ուրարտերենում իսկապես առկա են ինչպես -իe/-ի-i-, այնպես էլ -ի-ne/i- ածանցները (-ի-ne/i--ն մասնավորապես հանդես է գալիս

⁴⁸⁰ Ի.Դյակոնովը մնամ քաշխումը բացատրում է նրանով, որ -իe ածանցով կազմված ածականների՝ գոյականի հետ գործածության դեպքում -ne հոլը կիրառվում է մեկ անգամ՝ առաջին դեպքում անվան վրա, իսկ երկրորդում՝ ածականի [1971, էջ 100, ծան. 104]:
⁴⁸¹ Այս երևույթը նկատել է դոն Ի.Մեշյանինովը: Նա գտնում է, որ իրական ածանցը -ի-ne-ն է, որը կորցնում է վերջի -ne-ն, եթե նրան չի հաջորդում որևէ հոլովային վերջավորություն [1958, էջ 91]:

բոլոր այն դեպքերում, երբ սույն ածանցով կազմված բառը, անկախ նախադասությունում ունեցած իր դիրքից, ստանում է որևէ հոլովային վերջավորություն): Բացառված չէ, որ $-hi=ne/i-$ ածանցի $-ne/i-$ տարրը ծագում է համաձայնեցման $-n(e)-$ մասնիկից և կատարում է նույն դերը, ինչ որ $-n(e)--ն$ ՝ կապելով $-he-$ ն հոլովային ցուցչի հետ: Իսկ ինչպես ցույց են տալիս ^{KUR}Úelieku=ħini=n(e)=e ^{KUR}ebani=*i*(e)=edi և այլ մնանատիպ արտահայտությունները (տե՛ս վերը), սրանք երկուսն էլ կարող են հանդես գալ միաժամանակ՝ հաջորդելով մեկը մյուսին:

3. Անունների համաձայնեցումը հայերենում և համադրումը ուրարտերենի հետ: Հայերենում անվանական լրացումը, ինչպես որ ուրարտերենում, հոլովով և թվով հիմնականում համաձայնում է իր լրացյալի հետ: Այստեղ առավել ակնառու տարբերությունը, հատկացուցիչի և հատկացյալի $-n(e)-/-na-$ շաղկապող մասնիկի միջոցով, համաձայնեցման հատուկ կարգի առկայությունն է ուրարտերենում: Հայերենում հատկացուցիչը, որպես կանոն, չի համաձայնում հատկացյալի հետ, այլ հանդես է գալիս իրեն հատուկ սեռական հոլովով: Իսկ եթե որոշ դեպքերում համաձայնում է, ապա կորցնում է սեռականի մասնիկը՝ փոխարենը ստանալով հատկացյալի հոլովային վերջավորություն՝ առանց որևիցե միջանկյալ շաղկապող մասնիկի: Մյուս կողմից՝ ուշագրավ է, որ հայերենում որոշ բառերի հոլովման ընթացքում համապատասխան հոլովակերտ մասնիկը բառահիմքին հավելվում է ոչ թե անմիջապես, այլ հավելյալ և մասնիկի միջնորոշյալ, ինչպես՝ *նո-ցա - ի նո-ցա-ն-է* (փոխ.՝ **ի նո-ցա-է*), *ս-մ-ա - ի ս-մ-ա-ն-է* (փոխ.՝ **ի ս-մ-ա-է*), *մե-ք - ի մե-ն-է* (փոխ.՝ **ի մե-է*) և այլն: Գ. Ջահուկյանն անդրադառնալով այս երևույթին՝ նշում է, որ *ն-ն* այստեղ ունի ձայնավորների կուտակումը կանխող դեր⁴⁸²: Եթե նկատի ունենանք, որ ուրարտերենի հոգնակի թվի համաձայնեցման $-na-$ շաղկապող մասնիկի $-a-$ բաղադրիչի մեջ ակնհայտորեն պետք է տեսնել ուրարտերենի հոգնակիության $-a-$ ցուցիչը, ապա անկասկած հայերենի վերոնշյալ և մասնիկը կարելի է կապել ուրարտերենի $-n(e)-$ համաձայնեցման մասնիկի հետ, որոնք երկուսն էլ իրականացնում են մնանատիպ գործառույթ:

⁴⁸² Տե՛ս Գ.Джаукян, 1982, էջ 148:

V.3 ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

Ուրարտերենում դերանունները հիմնականում հանդես են գալիս որպես անկախ բառեր: Միևնույն ժամանակ՝ ցուցական, ստացական և անձնական որոշ դերանուններ հանդես են գալիս կցույթի տեսքով՝ հավելվելով տարրեր խոսքի մասերին՝ վերջից⁴⁸³: Մասնագիտական գրականության մեջ ուրարտերենում առանձնացվում են՝ անձնական, ստացական, ցուցական, որոշյալ, հարաբերական և անորոշ դերանունները⁴⁸⁴: Քննարկենք դրանք առանձին-առանձին:

1. Անձնական: Վկայված է եզակի թվի առաջին և երրորդ դեմքում:

1.1 *ieše* [yes] «ես»: Առաջին դեմքի եզակի թվի անձնական դերանուն, որը վկայված է անցողական քայերի սուբյեկտի դերում (էրգատիվ հոլով), օրինակ՝ *ieše ini pile agube* «ես ջրանցք-ն անցկացրի»: Համապատասխանում է հայ. եզակի թվի առաջին դեմքի ես «ես» անձնական դերանվանը⁴⁸⁵:

1.2 $-me$ «ինձ»: Առաջին դեմքի անձնական դերանվանական մասնիկ է, կարող է ազատորեն հավելվել նախադասության տարրեր անդամներին (ենթակային, ստորոգյալին (քային), լրացմանը): Օրինակ՝ *iu* ⁴*ħaldiš=me* LUGÁL-tuħe arune «երբ Խալդը-ինձ արքայություն տվեց» և *iu=me* ⁴*ħaldiše* LUGÁL-tuħe arune «երբ-ինձ Խալդը արքայություն տվեց», ⁴*ħaldiš=me* ušħanune «Խալդը-ինձ նվիրեց (*)» և *ušħanu=me* ⁴*ħaldiše* EN-še «նվիրեց-ինձ(*) Խալդը՝ տերը»: Գ.Ջահուկյանն այս մասնիկը համեմատում է հնդեվրոպական 1-ին դեմքի անձնական դերանվան թեք հոլովների * (e)me հիմքի հետ (որից ունենք հայ. առաջին դեմքի՝ իմ, ինձ, իս անձնական դերանունները) [1985, էջ 365; 1988, էջ 139]:

⁴⁸³ Այս երևույթը հատուկ է նաև հայերենին ի դեմս ս, դ, և դերանվանական հոդերի, որոնք արտահայտում են ցուցական, ստացական և անձնական դերանունների իմաստ: Այս մասին տե՛ս Գ.Ղափանցյան, 1940, էջ 25:

⁴⁸⁴ Ուրարտերենի դերանունների մասին հանգամանորեն տե՛ս Գ.Меликишвили, 1960, էջ 60-64; 1964, էջ 40-44; I.Diakonoff, 1971, էջ 107-113; И.Дьяконов, 1979, էջ 65-67; М.Хачикян, 1985, էջ 79-80; G.Wilhelm, 2004, էջ 127-128: Դերանուններին մեր կողմից տրվող համառոտ վերաշարադրանքը հիմնականում հիմնված է վերոհիշյալ աղբյուրների վրա:

⁴⁸⁵ Տե՛ս A.Mordtmann, ZDMG, Bd, XXVI, 1872, էջ 255; J.Sandaljian, էջ 370 և այլն: Որոշ հետազոտողներ այն համեմատում են խոտ. *iste* (ուղղ. հոլով) /*izas* (երգ. հոլով) նույնիմաստ դերանվան հետ. տե՛ս Ն.Աղոնց, 1972, էջ 269; М.Хачикян, 1985, էջ 49; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 448 այլն:

1.3 mane «մա»: Երրորդ դեմքի եզակի քվի անձնական դերանուն է և վկայված է միայն ուղղական (բացարձակ) հոլովով՝ mane տեսքով⁴⁸⁶: Սովորաբար այս դերանունը կապվում է խոռոչերենի երրորդ դեմքի mana ցուցական դերանվան հետ [տե՛ս И.Дьяконов, 1963, էջ 89; М.Хачикян, 1985, էջ 47; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 453 և այլն]: Այն հայերենի հետ զոգահետ չունի: Հայերենը, ինչպես և հնդեվրոպական մախալեզուն, երրորդ դեմքի համար անձնական դերանուն չունի և այդ մախալեզով գործածում է երրորդ դեմքի ևս ցուցական դերանունը⁴⁸⁷:

1.4 Այլ հմարավոր անձնական դերանուններ: Վերջերս Ք.Գիրբալը⁴⁸⁸ կարծիք հայտնեց, որ Թուփուզավայի արձանագրությունում վկայված ուրարտ. ištedi բառին ասուրական տարրերակում համապատասխանում է anaku-ն (առաջին դեմքի անձնական դերանուն)՝ «ես» նշանակությամբ, որն ընդունում են նաև Մ.Սալվինին⁴⁸⁹ և Գ.Վիլհելմը⁴⁹⁰: Գ.Մելիքիշվիլին այդ նույն արձանագրությունում ištedi-ի ասուրական զուգահետն է համարում ասուր. erēbu «մտնել, գալ» բայը⁴⁹¹, իսկ Ֆ. Բյոնիզը⁴⁹², իր հերթին, ištedi-ն թարգմանում է «հապճեպ, շտապ»՝ չբացատրելով վերջինիս կապը ištini «այստեղ» մակբայի հետ: Ն.Հարությունյանը այն նույնպես կապում է išti-ni-ի հետ՝ սրա մեջ տեսնելով հայ. աստ(և) «այստեղ» մակբայը⁴⁹³: Իսկ բառավերջի -edi-ն նա համարում է ուրարտերենի ուղևորական հոլովի ցուցիչ՝ բառը ամբողջությամբ թարգմանելով «այստեղ(»), դեպի այստեղ(»)»: Վերջերս վերստին անդրադառնալով այս հարցին և ոչ առանց հիմքի մերժելով Ք.Գիրբալի առաջարկը՝ նա կրկին վերահաստատում է իր տեսակե-

⁴⁸⁶ Յ.Ֆրիդրիխը սույն դերանվան արմատն է համարում ma-ն [1933, էջ 17]:
⁴⁸⁷ Նման պատկեր է նաև խոռոչերենում, որտեղ այդ նպատակով հիմնականում գործածվում է mane/a ցուցական անկախ դերանունը կամ -na մասնիկը: Վերջինս հմտ. հայերենի երրորդ դեմքի ևս ցուցական/անձնական դերանվան և -li դերանվանական հոդի (ստացական և անձնական իմաստով) հետ:
⁴⁸⁸ C.Girbal, Selbständige Pronomina der ersten Person Singular im urätaischen, "Kulturgeschichten: Altorientalistische Studien für Volkert Haas zum 65. Geburtstag", Saarbrücken, 2001, էջ 139-144:
⁴⁸⁹ B.Andre-Salvini, M.Salvini, The Bilingual Stela of Rusa I from Movana. SMEA, 2002, fasc. XLIV/1, էջ 10:
⁴⁹⁰ G.Wilhelm, 2004, էջ 127-128:
⁴⁹¹ Г.Меликишвили, 1960, էջ 399:
⁴⁹² F.König, 1957 (HchI), էջ 122, § 8, տող 14 և ծան. 5:
⁴⁹³ Н.Арутюнян, ДВ, 4, էջ 207-208:

տը⁴⁹⁴: Մենք նույնպես հակված ենք պաշտպանելու Ն.Հարությունյանի տեսակետը: Միևնույն ժամանակ ուզում ենք նշել, որ Սարգուրիի գանձատան արձանագրության iš-te-(e)-di uš-ta-(a)-di^{KURX}-edi [KYKH 241 A₂₂, E₈₋₄₈] տեսքի դրվագներում հմարավոր է, որ այն հանդես է գալիս ժամանակի մակբայի իմաստով (հայերենում աստ մակբայը ունի ինչպես տեղի՝ «այստեղ, այս աշխարհում», այնպես էլ ժամանակի՝ «ներկա պահին, այս ժամանակ, հիմա» իմաստ): Որպես ասվածի հիմնավորում, նշենք այն փաստը, որ ուրարտական տեքստերում, նմանատիպ արտահայտություններում iš-te-(e)-di-ի փոխարեն հաճախ ունենում ենք ժամանակի իմաստով հանդես եկող բառեր/բառակապակցություններ, ինչպես՝ i-ku-ka-ni šá-a-li-e/MU/UD^{ME}-ni(e) ... uš-ta-di «այս նույն տարի/ժամանակ ... ուղևորվեցի» [KYKH 241 A_{13, 22}, E_{20...}], bi-du-ia-še uš-ta-(a)-di «վերադարձին ուղևորվեցի» [KYKH 241 C₃₅, F₁₂], me-ši-ni šá-a-li nu-na-di «հարկի տարում եկա» [KYKH 389₁₅] և այլն: Ընդ որում, ժամանակը բնորոշող վերոնշյալ բառերի/բառակապակցությունների հետ միասին iš-te-(e)-di-ն ոչ մի անգամ վկայված չէ, ինչը նույնպես չի խոսում վերջինիս անձնական դերանուն լինելու օգտին, քանի որ, ասենք՝ *ikukane šále/MU ištedi uštadi - «*այս նույն տարի ես ուղևորվեցի...» տիպի արտահայտությունները միանգամայն սպասելի էին: Ի.Դյակոնովը և Մ.Խաչիկյանը ուրարտ. տեքստերում վկայված šuke բառը⁴⁹⁵ համարում են ուրարտերենի առաջին դեմքի անձնական դերանվան տրականի ձև⁴⁹⁶: Գ. Վիլհելմը⁴⁹⁷ այն համարում է նույն դերանվան բացարձակ հոլով, որով դրվում է անցողական բայերի օբյեկտը: Մեզ առավել հավանական է քվում, որ šuke-ն պետք է համենատեղ i=nu=ke ցուցական դերանվան հետ (ինչպես որ ունենք šu=se և i=nu=se), սրա մեջ տեսնելով նմանատիպ մի դերանուն: Սակայն չի

⁴⁹⁴ Տե՛ս Ն.Հարությունյան, Ուրարտերեն ištedi բառի ստուգաբանությունը, Մերձ. XXIV, 2005, էջ 484-494:
⁴⁹⁵ И.Дьяконов, 1979, էջ 66; М.Хачикян, 1985, էջ 79: Տե՛ս նաև Մ.Խաչիկյան «ուրարտերեն կերպի/ժամանակի քերականական կարգի շուրջ (նոր դիտարկումներ)», Մերձ., XXIV, 2005, էջ 476, որտեղ վերջինս այս նույն դերանունն է տեսնում նաև šuguke բառաձևում:
⁴⁹⁶ Գ.Մելիքիշվիլին [1960, էջ 407] և Ն.Հարությունյանը [2001, էջ 465] թարգմանում են «ինչպես (որ)», Մ.Սալվինին «եհնց (որ)» [SMEA XLIV/1, 2002, էջ 125]:
⁴⁹⁷ G.Wilhelm, 2004, էջ 127-128:

բացառված, որ վերջինս կարող էր ունենալ նաև ստացական կամ/և անձնական իմաստ: Հմտ. Տu=si (ne)-ի հետ, որը հավանաբար նույնպես ունի և՛ ցուցական, և՛ ստացական իմաստ (տե՛ս ստորև՝ կետ 2):

2. **Ստացական:** Ուրարտերենում վկայված են միայն եզակի թվի առաջին և երրորդ դեմքի ստացական դերանուններ:

2.1 -ke⁴⁹⁸: Մասնագիտական գրականությունում -u-ke-ն, որը երբեմն գրվում է -e-ke տեսքով, համարվում է առաջին դեմքի եզակի թվի դերանվանական մասնիկ, որը հավելվում է քառահիմքին՝ կցույթի տեսքով: Օրինակ՝ ¹Uṣuršine ... nunabe ka=iu=ke «Ուտուպուրշին ... եկավ իմ առջև», eršidube ^{KUR}ebani=(i)u=ke «բնակեցրի իմ երկրում», KUR-ni ^{KUR}ebani=(i)u=ke=di abeliṭube «երկիրը իմ երկրին հավելեցի»: Գ.Ղափանցյանը այն համեմատում է խեթ. uka (ugu, uggu) < h.-h. *ego «ես» դերանվան հետ [1940, էջ 29-30]:

2.2 mase «իր, իրեն»: Երրորդ դեմքի եզակի թվի ստացական դերանուն⁴⁹⁹: Օրինակ՝ aluše tinine tulie mase tine telie «ով ամուսն ունի/չացնի, իր ամուսնը դնի»: Հայերենում զուգահեռ չունի: Այն մի քանի անգամ վկայված է նաև հոգնակի ուղղականով՝ (ma=si=ne=le⁵⁰⁰)՝ հետևյալ արտահայտություններում.

(264) ^dḡal-di-še ma-si-ni-li ḡu-ru-ni-li e-si-di-ni... - « » [KYKH 174 A4₁₀].

(265) ^dḡal-di-še si-li-iš-ti-li ma-si-ni-li KÁ al-zi-na-i ^dḡal-di-na KÁ bi-di su-ú-i-u-li-e... - «Վսալը sil-iš-t-ili յուր դռները alzina-i...» [Ay-susi II, (Ayanis I); KYKH 424, (տեքստը տրված է համաձայն Այանիսի արձանագրության)]:

⁴⁹⁸ Իրականում, ինչպես երևում է ka-1/g-u-ke քառանկից, որն անշուշտ պետք է վերլուծել ka=1/gu=ke [ka=1u/o=k] ձևով, այստեղ բուն ստացական մասնիկը -ke-ն է ([=1u/o=]-ի դերը պարզ չէ. քիչ հավանական է, որ -1/g-ն այստեղ պատկանում է քառահիմքին, քանզի վերջինս, որպես ետդիր հանդես գալով, վկայված է միայն -kai տեսքով): Մրա օգտին է խոսում նաև *hḡur* + e=ke տարրերակի առկայությունը՝ *hḡur* + u=ke-ի կողքին:

⁴⁹⁹ Մ.Խաչիկյանն այն համարում է դերանվանական ածական (masi < ma (nə) + (u) sə) [1985, էջ 83-84]:

⁵⁰⁰ Որոշ ուրարտագետներ masine (le)-ի մեջ տեսնում են միանգամայն այլ քան՝ նմանությունը masi «յուր» բառի հետ համարելով պատահական: Գ.Ջահուկյանն այն քարգմանում է «հզոր» բխեցնելով h.-h. *magh-ti-no-ից, որը հայերենում, ըստ նրա պիտի տար *մածին, -ոյ [ՊԲՀ, 2001, 1, էջ 127]:

2.3 Այլ ստացական դերանունների հնարավոր առկայության հարցը: Ի.Դյակոնովը⁵⁰¹, անդրադառնալով ուրարտերենի դերանուններին, առաջին դեմքի (-ukə) ստացական դերանվանական մասնիկի կողքին ենթադրում է նմանատիպ մասնիկ երրորդ դեմքի համար (-i'ya, -'iyə), որը, ըստ նրա, նույնպես հավելվում է քառահիմքին՝ կցույթի տեսքով: Մ. Խաչիկյանը, ընդունելով Ի.Դյակոնովի տեսակետը, բերում է հետևյալ վկայությունները՝ KA-ye-y (գրում՝ KA-ei) - «նրա դռներին», zilbi-ye (zelbi-i) - «նրա ցեղը», luluinaw/və napahi-yá-ydə (napahiaidi) - «թշնամի երկրները հնազանդեցնելու համար»: Գ.Վիլիելմը նշում է՝ -iyə, -iya- -i(-) դերանունները՝ քերելով հետևյալ վկայությունները՝ ulguš=ya=nə edinə «իր կյանքի համար», ebani-i-e «նրա երկրին», ti-i-né ... ar-mu-zi-i ... zi-il-bi-i (=աքքաղ. NUMUN-ՏՄ) «նրա ամուսն, նրա ընտանիքը(»), նրա ցեղը», e-ú-ri-i-e (=աքքաղ. EN-ՏՄ) «իր տիրոջը»: Մասնագետները՝ այս դերանունն առանձնացնելիս հիմնականում հիմնվում են ^dḡaldi(i)e euri(i)e/^dḡaldi(i)e EN. (ՏՄ) և ar-mu-zi-i ... zi-il-bi-i/NUMUN-ՏՄ (ենթադրվող) հերթագայությունների վրա, որտեղ ՏՄ-ի տակ քարգմված է ասուրերենի 3-րդ դեմքի «նրա, իր» դերանունը: Մակայն ցանկանում ենք նախ նշել, որ NUMUN-ՏՄ-ին ուրարտական տեքստերում հերթագայում է միայն ar-mu-zi-i-ն և ոչ թե ar-mu-zi-i-ն կամ zi-il-bi-i-ն⁵⁰²: Դա այս քառի ուղիղ ձևն է, հետևաբար այստեղ քառավերջում դժվար է տեսնել որևիցե հավելյալ -i կամ -y մասնիկ: Ինչ վերաբերում է euri-(i)-e-ին, ապա մեզ թվում է, որ սրա -(i)e վերջավորության մեջ պետք է տեսնել միայն ու միայն տրական հոլովի ցուցիչ: Դրա օգտին է խոսում նաև այն փաստը, որ ուրարտական տեքստերում EN-ի կողքին ունենք նաև EN-ri/EN-gie /EN-di/EN-še վկայություններ, մինչդեռ EN.ՏՄ-ն միշտ գրվում է

⁵⁰¹ I.Diakonoff, 1971, էջ 107-113:

⁵⁰² Ուրարտական տեքստերում NUMUN-ՏՄ-ն վկայված է tûrinini ^dḡaldiše ... mani armuzi-i NUMUN NUMUN.ՏՄ [KYKH 173 VIII₁₄] արտահայտությունում, որին զուգահեռ տեքստերի համապատասխան հատվածներում ունենք՝ ... mani (tini) (armuzi-i armuzi-ge) armuzi [KYKH 174 A3₁₂, 244₃₇, 412₁₅.427₇, Ay-susi VIII₈, (Ayanis I) ...], որտեղ, ինչպես տեսնում ենք, NUMUN.ՏՄ-ն համապատասխանում է ar-mu-zi-i-ին:

առանց հնչյունական որևիցե հավելման: Հնարավոր է, որ այս ՏՄ-ն ուրարտերենում ուղղակի գուգահեռ չունի և հետևաբար ուրարտ. տեքստը գաղափարագիր ներկայացվելիս՝ փոխարինում է տրականի ցուցիչին: Հուսալի չեն մակ ենթադրվող մյուս վկայությունները: Այսպես եթե վերոնշյալ ulguš=ya=nə edinə «իր կյանքի համար» դրվագում ulguš=ya=nə բառի մեջ փորձենք տեսնել -ya- դերանվանական մասնիկ՝ «իր, յուր» նշանակությամբ, ապա անհասկանալի են մնում մասնատիպ՝ ^{mc}Sar₅-du-ri-še a-li-e ú-la-di ^{KUR}E-ti-ú-ni-e-di a-li áš-ta-a-di ^{KUR}E-ti-ú-ni-a iš-ti-ni-i-e... [241 F₄₋₅] «Սարդուրին ասում է՝ ուղեորվեցի դեպի էթիունի, Երբ (ես) (դա) արեցի(») էթիունիի շնորհիվ(»)», XIX LUGAL^{MES} i-šá-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni ^{SADU}ba-ba-ni-a [k]u-ru-ni-e «19 երկրներ այս արևին՝ ծովի(ծովային), լեռ(ների/ան) կողքին...» [KYKH 389₁₃] արտահայտությունները, որտեղ ^{KUR}E-tiuni=a, šu=i(=)ni=a=ne, ^{SADU}ba-bani=a բառերում նույնպես ունենք -ya- ենթադրյալ դերանվանական մասնիկը, սակայն համատեքստը թույլ չի տալիս դրա տակ տեսնել «իր» դերանվանական իմաստը: Իրականում ուրարտերենի գոյականները =i=a=(ne) վերջավորությունն ստանում են դերանվանական մակբայների կամ ետադրությունների հետ հանդես գալուց (մանրամասն այս մասին տե՛ս V.3 կետ 4 և VII.3 կետ 2): Ինչ վերաբերում է e-ba-ni-(i)-e բառաձևին, որտեղ նույնպես որոշ ուսումնասիրողներ տեսնում են երրորդ դեմքի դերանվանական մասնիկ, ապա այստեղ անհասկանալի են մնում, օրինակ՝ [ha]-ú-bé ^{KUR}Lu-šá-e KUR-ni-e ^{KUR}Ka-tar-za-e KUR-ni-e և այլ մանատիպ արտահայտությունները, որտեղ «*գրավեցի (երկիր)Լուշան, երկիրը-նրա, (երկիր) Կատար-գան, երկիրը-նրա» քարգմանությունը ըմբռնելի չէ (ուրարտական տեքստերում ուղիղ հոլովով դրված բառերի վերջում հաճախ առկա հավելյալ -e-ի մասին մանրամասն տե՛ս V.2.3 կետ 2գ): Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ երրորդ դեմքի համար առաջարկվող՝ -ya-, -yə-, -i (-) դերանվանական մասնիկի առկայությունը ուրարտերենում մեզ հուսալի չի թվում: Այդ պատճառով այն չենք ներառել ուրարտական տեքստերում վկայված ստացական դերանունների շարքում:

2.4 šu=se(/i=ne) 1) «մեկ(»), առաջին(»), 2) «ին»: Այս բառի քարգմանությունը մասնագետների տարակարծությունների առիթ է տա-

լիս⁵⁰³: Ուրարտական տեքստերում այն, մի կողմից, հերթագայում է I «մեկ» գաղափարագիր թվականին, որտեղից էլ բառի «մեկ, առաջին» իմաստը, մյուս կողմից՝ Թոփուզավայի արձանագրությունում ուրարտ. «šú-si-na MU^{MES}»-ն համապատասխանում է ասուր. «ina libbi MU^{MES}-ia»-ն՝ «ին օրերում» քարգմանությամբ: Ի.Դյակոնովը⁵⁰⁴ ժամանակին մանրամասն քննարկելով այս հարցը և նշելով, որ Թոփուզավայի արձանագրությունում սույն բառի համար առավել ընդունելի է «ին» իմաստը, այնուամենայնիվ վերջինիս համար առաջարկում է «մեկ» քարգմանությունը: Նա այդ եզրակացությանն է գալիս նկատի ունենալով, որ Թոփուզավայի արձանագրությունը բավականին մաշված է և այդ պատճառով հավաստի աղբյուր չէ: Հիմնվելով վերջերս հայտնաբերված և իր կողմից հրատարակված Մովանայի (որը Թոփուզավայի կրկնօրինակն է և հաստատում է վերոնշյալ հատվածի ստույգ լինելը) և Այանիսի արձանագրությունների վրա՝ Մ.Սավլինին այն վստահաբար համարում է դերանուն՝ «ին» իմաստով, որը մա համեմատում է խուռ. առաջին դեմքի անձնական դերանվան թեք հոլովների šu- հիմքի հետ⁵⁰⁵: Սակայն «ին» իմաստը համահունչ չէ šu=si=ne/I UD^{ME}-ne և šu=si=ne/I MU/šale արտահայտություններում, որոնք մասնագիտական գրականությունում համապատասխանաբար քարգմանվում են «մեկ օրում», «մեկ տարում»: Այս դեպքում ստիպված ենք ընդունել, որ սույն բառի համար ունենք երկու տարբեր իմաստներ կամ ընդհանրապես գործ ունենք երկու տարբեր բառերի հետ: Մյուս կողմից՝ բացառված չէ, որ ի դեմս այս šu=si(ne)-ի գործ ունենք ուրարտերենի առաջին դեմքի մերձավոր առարկաների i=šú-[i=so-] (հին ընթերցմամբ iku-, տե՛ս ստորև՝ կետ 3) - հայ. սո-յև ցուցական դերանվան հետ: Եթե դա իրոք այդպես է, ապա šu=si(ne)-ն կարելի է համեմատել i=nu=se(/i=ne) դերանվան հետ⁵⁰⁶ (հմմտ. մակ šuke և i=nuke

⁵⁰³ Ավանդաբար šusi=(ne) քարգմանվում է «մեկ» [տե՛ս օրինակ՝ Г.Меликишвили, 1960(УКН), էջ 408; Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 466]: Իսկ šusinile-ն (հոգնակի թիվ)՝ «մեկը(»), յուրաքանչյուրը(»)» [Т.Гамкрелидзе, В.Иванов, 1984, II, էջ 844, ծան.1]: Ֆ.Զյունիզը այս բառը համարում է ածական, որը կազմված է šu(i)- հիմքից՝ -usi ածանցով՝ «բոլոր, ամենայն» նշանակությամբ:

⁵⁰⁴ И.Дьяконов, 1963, էջ 53-53:

⁵⁰⁵ M.Salvini, SMEA 44/1, 2002, էջ 20 և 2001 (Ayanis I), էջ 258:

⁵⁰⁶ Հմմտ. "Argištiše ali šúsi-ni šuni-ni esi ... [KYKH 407_{лиц.40}] և ...ewe i-nusi šuni-i esi [KYKH 391₁₃] արտահայտությունները: Թերված օրինակը քարգմանվում է՝ «Արգիշտին ասում է՝ šúsi-ni ծովի/ծովային տեղը», որտեղ

դերանունները. տե՛ս վերը՝ կետ 1.4): Լրացուցիչ *i*-ի առկայության համար հմմտ., օրինակ, մամնատիպ համատեքստում մի կողմից՝ *i=ša=ni/a*, մյուս կողմից՝ *ša=na* դերանունների վկայությունների հետ: Իսկ ստացական իմաստի համար հմմտ. հայերենի սո- դերանվանական հիմքից ձայնավորի անկումով առաջացած -*u* հոդի հետ, որն ունի ոչ միայն ցուցական, այլև անձնական ու ստացական արժեք⁵⁰⁷: Նման մեկնաբանման դեպքում *šusine UD^{ME}-ne* և *šusine MU/šale* արտահայտությունները հնարավոր է համապատասխանաբար քարզմանել «սույն օրը/ժամանակ», «սույն տարի» (հմմտ. բազմիցս վկայված՝ *išu=kane MU/šalie/UD^{ME}* «այս նույն տարի (տարում)/օրը/ժամանակ» արտահայտությունների հետ):

3. Ցուցական: Գ.Մելիքիշվիլին ուրարտերենի ցուցական դերանունների համար տալիս է հետևյալ պատկերը⁵⁰⁸:

ini: Ցույց է տալիս մերձավոր առարկաներ՝ «սա, այս» նշանկությանը: Վկայված է մակ *ine-li* «սրանք» (բացարձակ հոլով, հոգնակի թիվ), *ina-ni* «սրանցից» (բացառական հոլով, հոգնակի թիվ), *ini-ni* (ուղղական հոլով, եզակի թիվ(*)) ձևերով (առավել հաճախ հանդիպող դերանունն է):

ina- (*ini*-ի ներգոյական հոլովն է (*)): Սրանից կառուցված են հետևյալ դերանունները. 1) *ina-ni* «այս կողմից» -*ni* մասնիկի հավելումով (բացառական հոլովի վերջավորություն), օրինակ՝ *inani aptin šuiniani* «ծովի այս կողմից», 2) *ina-ini* < **ina-ini*, *ina-ḫini* «այսպիսի», «այս»՝ պատկանելության *-ini/-ḫini* ածանցների հավելումով, օրինակ՝ *inani burganani* «այս ամրոցը (*)» (եզակի թիվ), *inane-li arnušine-li/baušine-li* «այս արարքները/իրերը» (հոգնակի թիվ), *inahinaue URU^{ME} ini PA₅ ḫurišhi manini* «այս քաղաքներին՝ այս ջրանցքը ռոռգիչ թող լինի» (հոգնակի թիվ, տրական հոլով):

inuki < **ini-uki*: Ունի հաստատող, նույնություն ցույց տվող իմաստ՝ «այդ նույն», «նույն ինքը» և այլն: Կառուցված է *ini* ցուցա-

ձև*si-ni* բառի համար ոչ «մեկ», ոչ էլ «ին» իմաստները հարմար չեն:

⁵⁰⁷ Ստացական իմաստով գործածվելիս նշանակում է՝ «իմ», «մեր», օրինակ՝ եկիև լցին գաշխարիս հայոց (Քուզմազ, 5-րդ, ՄԵ) = «եկան լցվեցին մեր հայոց աշխարհը» և այլն:

⁵⁰⁸ Ցուցական դերանունների մասին տե՛ս մակ И.Дьяконов, 1979, էջ 65-67; М.Хачикян, 1985, էջ 79-88; G.Wilhelm, 2004, էջ 127-128:

կան դերանվանը -*uki* առաջին դեմքի ստացական դերանվանական մասնիկի հավելումով:

inuka- (*inuki*-ի ներգոյական հոլովն է (*)): Սրանից կառուցված են հետևյալ դերանունները. 1) -*ni* մասնիկի հավելումով (բացառական հոլովի վերջավորություն)՝ *inuka-ni* «այս նույն տեղից, այստեղից», օրինակ, *inukani esinini* «այս տեղից». 2) -*ini/-ḫini* ածանցների հավելումով՝ *inuka-ni* < **inuka-ini*, *inuka-ḫini* «այս նույն, այս», «այսպիսի»: Առաջինից կազմվում է *inukani edini* դարձվածը՝ «դրանից հետո» մտավոր իմաստով, իսկ երկրորդը վկայված է հետևյալ դրվագում՝ *inuka-ḫine* ³*Rusaine ḫubi* «Ռուսայի այսպիսի հովտին»:

Չուգահեռաբար կան *ikukani* < **ikuka-ini*, *ikuka-ḫini* «նույն», «այդ նույն» դերանուններ, որոնք ենթադրաբար առաջացել են **ikuka* (ներգոյական հոլով՝ **ikuki-ից*) դերանունից: Վերջինս իր հերթին առաջացել է (այդպես է ենթադրվում) **iki* չվկայված դերանունից՝ -*uke* մասնիկի հավելումով: Այսպիսով, *ini*-ի հետ զուգահեռ ենթադրվում է մեկ այլ՝ **iki* դերանվան գոյությունը, որը պետք է ցույց տար հեռավոր առարկաներ: **iki*-ի կողքին ենթադրվում է մակ **aki-* հիմքը, որից կազմվում է *akuki* դերանունը (վկայված է մեկ անգամ): Մեկ այլ՝ **iši* դերանվան գոյությունն է ենթադրվում *išani* < *iša+ini* «այդ կողմից» դերանվանական ձևում, որը կազմված է *iša* (ներգոյական հոլով՝ **iši-ից*) հիմքի վրա -*ini* (բացառական հոլովի ցուցիչ) մասնիկի հավելումով, նման *inani-ին* (*inani* < *ina + ini*): Նույն *ini* դերանունից, ածական անունների (ինչպես որ ինքն է կարծում) -*usi* ածանցի հավելումով, կազմվում է *inusi(ni)* < *ini-usi(ni)* «այսպիսի (*)» ձևը⁵⁰⁹:

3.1 Պարզաբանումներ ուրարտերենի ցուցական դերանունների վերաբերյալ: Եթե ամփոփենք վերոհիշյալ շարադրանքը, ապա ստացվում է, որ ուրարտերենում առկա են՝ *ini*, **iši*, **iki* ցուցական դերանունները (վկայված է միայն *ini-ն*), որոնց վրա -*uke* և -*use* մասնիկների հավելումով կազմվում են *inuke*, **išuke*, **ikuke* և *inuse*

⁵⁰⁹ Գ. Վիլհելմը [2004, էջ 128] ուրարտերենում առանձնացնում է *ini* և *ina* անկախ գործածվող հիմնական ցուցական դերանունները, որոնցից կազմվում են մակ այլ դերանուններ, ինչպես՝ *ina-ḫe* «այդպիսինը, նմանը», *in-uke* «այս նույն», *in-uka-ḫe*, *in-use* «հենց այս, նախապես նշված», *in-uke* «նույն»:

ձևերը (վկայված են միայն inuke-ն և inuse-ն): Այս երկու խմբերը ներկայացնող դերանուններից (ըստ Գ.Մելիքիչվիլու՝ ներգոյական եռյուզներից) համապատասխանաբար կազմվում են՝ ina/iša/*ika- և inuka-/*išuka-/ikuka- հիմքերը: Սրանցից բացառական հոլովի -ne ցուցիչի և -ine/ħine ածանցների միջոցով կազմվում են ուրարտերենի հետևյալ ցուցական դերանունները:

Հիմք	Դերանուն			
ina-, inuka-	ina=ne	ina=ħine	inuka=ne	inuka=ħine
iša-, -	iša=ne	iša=ħine	-	-
- , ikuka-	-	-	ikuka=ne	ikuka=ħine

Ինչպես պարզորոշ երևում է աղյուսակից, արձանագրություններում պակասում են *išuka- և *ika- հիմքերով դերանունները: Նման բաշխումը հազիվ թե պատահական լինի, և, իսկապես, iku- (վանկազիր՝ i-ku-) հիմքը, որից կազմվում են՝ ikukane, ikukaħine, դերանունները, նույն հաջողությանը կարելի է կարդալ išu- (վանկազիր՝ i-šù-)⁵¹⁰: Այսպիսի ընթերցման դեպքում այլևս կարիք չի լինի արհեստականորեն ներմուծել ոչ մի տեղ չվկայված *iki- ենթադրյալ դերանունը: Իսկ išukane, išukaħine ընթերցմամբ՝ նշված դերանունները կապվում են արդեն հիշատակված iša- դերանվանական հիմքին՝ լրացնելով պակասող շարքը (տե՛ս վերը): Այսպիսով, ցուցական դերանունների համար ստանում ենք հետևյալ համադիր պատկերը:

Հիմք	Դերանուն			
ina-, inuka-	ina=ne	ina=ħine	inuka=ne	inuka=ħine
iša-, išuka-	iša=ne	iša=ħine	išuka=ne	išuka=ħine

Հաշվի առնելով այս ամենը՝ կարող ենք եզրակացնել, որ ուրարտերենում բացակայում է *iki ենթադրյալ դերանունը և ցուցական դերանունների համար առկա են հետևյալ հիմքերը:

1. iša-, ina-: Սրանցից համապատասխանաբար կազմված են iša=ne, ina=ne և iša=ħine, ina=ħine դերանունները⁵¹¹:

⁵¹⁰ Տե՛ս Л.Липин, 1964, էջ 137-148, նշան № 282:

⁵¹¹ Հմմտ. օրինակ՝ ...4 LUGAL^{MEŠ} i-na-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni ... 19 LUGAL^{MEŠ} i-ša-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni ^{šadu}ba-ba-ni-a ku-ru-ni-e- «... (թվարկվում են 4 երկրների անուններ) 4 թագավորները ծովի այս կողմը ... (թվարկվում են

2. išu-, inu-: Սրանցից ունենք՝ išu=ka=ne, inu=ka=ne և išu=ka=ħine, inu=ka=ħine դերանունները: Inu- հիմքից ունենք նաև inu=ke և inu=si (ne) դերանունները:

3. Ini: Յույց է տալիս մերձավոր՝ անմիջաբար հիշատակվող առարկաներ, ունի որոշյալ հողի իմաստ և հերթագայում է ուղղական հոլովով դրված բառերի -ne վերջավորությամբ (հողին(?)) (տե՛ս ստորև):

Եթե ի դեմս մեկ անգամ վկայված akuke (a-ku-ki/e) բառի իրապես գործ ունենք ինչ-որ դերանվան հետ, ապա այն անշուշտ պետք է ընթերցել ašuke (a-šù-ke)՝ վերոհիշյալ հիմքերին հավելելով նաև ašu-ն:

3.2 Ծուցական դերանունները հայերենում: Հայերենում գործում է չորս (ներառյալ ցուցական հողերը) շարքից բաղկացած ցուցական դերանունների համադիր եռադան համակարգ: Դրանք ներկայացնում են հետևյալ պատկերը:

Դեմք	Դերանուն			Հող
I	սո-յն	սա	այս	ս
II	դո-յն	դա	այդ	դ
III	նո-յն	նա	այն	ն

Համեմատելով այն ուրարտական ցուցական դերանունների հետ՝ միարժեքորեն կարելի է պնդել, որ Վանի արձանագրություններում ի դեմս iša-, ina-, išu-, inu- դերանվանական հիմքերի վկայված են հայերենի սա, նա և սո-, նո- ցուցական դերանվանական հիմքերը: Ընդ որում, ո-ով տարբերակները հայերենում ունեն նույն իմաստային նրբերանգները (հաստատող, նույնություն ցույց տվող), ինչ ուրարտերենում: Հմմտ. օրինակ՝ inu=ka=ne, inu=ka=ħine «այս նույն, նույն ինքն, նույն» - հայ. նույն «նույն, միևնույն, ինքն», «նույն այն, նույն այս», išuka=ne, išuka=ħine (նախկին ընթերցմամբ՝ ikuka=ne, ikuka=ħine. այսուհետև կներկայացնենք առաջարկվող

են 19 երկրների անուններ) 19 թագավորներ ծովի այն կողմը՝ լեռան կողքին (Ն.Հարությունյանը թարգմանում է՝ «հզոր լեռներում»)» [KYKH 389⁵⁻¹³] արտահայտությունը, որտեղ ունենք i-na-ni/i-ša-ni հստակ արտահայտված հակադրություն: Ուրարտական տեքստերում ունենք նաև i-ša-na և ša-na ձևերը:

ընթերցմամբ) «այս նույն, նույն ինքն» - հայ. սոյն «նույն այս, էլի այս»: Ինչպես ուրարտերենում, այնպես էլ հայերենում սույն դերանուններից կազմվում են համանման դարձվածներ: Օրինակ, ուրարտ. արձանագրություններում առավել հաճախ հանդիպող *išukane MU/šalie/UD^{ME}* «այդ/այս նույն տարի/օրը/ժամանակ» և հայերենի (ի) սոյն/սոյն օրին/ժա-մայն «այսօր իսկ, այսօր, իսկույն» դարձվածները և այլն:

Սույն դերանունների սկզբնական *i* հնչյունի մեջ թերևս կարելի է տեսնել հայերենի ի/յ նախդիրը: Սրա օգտին է խոսում համանման համատեքստում *šana* տարրերակի առկայությունը՝ *išane/a* դերանվան կողքին (տե՛ս (44)-(47)): Մակայն հնարավոր է, որ ի դեմս այս *i*-ի ուրարտական տեքստերում վկայված է հայ.՝ այն, այս, այդ (< ա-յ-ն, ա-յ-ս, ա-յ-դ) ցուցական դերանունների -յ- տարրը: Հմմտ. մակ ուրարտ.՝ *aišei, ainei* համանման բառերի հետ (սրանց մասին տե՛ս ստորև՝ կետ 4.1): Ինչ վերաբերում է *-ke/a* ածանցին, ապա ենթադրվող կապը ուրարտ. *-uke* «իմ» դերանվանական վերջամասնիկի հետ քիչ հավանական է՝ իմաստային առումով⁵¹²: Այն մնամություն ունի հայ. *-v*-կ ածանցի հետ, որը, ի թիվս այլ կիրառությունների, կազմում է մակ ցուցական դերանուններ և դերանվանական մակբայներ. օրինակ՝ աւադիկ, ավասիկ, ավանիկ: Հմմտ. մակ այս, այդ, այն ցուցական դերանունների երկար հոլովածները (այսոցիկ, այսոցիկ և այլն), ինչպես մակ այլակ- դերանունը (վերջինիս մասին տե՛ս ստորև՝ կետ 6): Ուշագրավ է, որ ուրարտերենում բացակայում են ենթադրելի **a(i)dei, *ida(ne), *idu=ke, *iduka=ne/hine* դերանունները, որոնք պետք է համապատասխանեին հայերենի երկրորդ դեմքի՝ դա, այդ, դոյն դերանուններին: Այս փաստը թերևս խոսում է այն մասին, որ վանի թագավորության շրջանում հայերենում դեռևս չէր ձևավորվել ցուցական դերանունների եռադեմ համակարգը, և գործում էր հնդեվրոպական նախալեզվի առարկաները ըստ դիրքի՝ մոտ կամ հետո, նախապես հիշված (հայտնի, ծանոթ) կամ չհիշված, տարրերակելու համակարգը: Բայց բացառված չէ, որ առայժմ անհասկանալի *dani/e, idani/e* բառերի մեջ պետք է տեսնել հայերենի երկրորդ դեմքի դա ցուցական դերանունը: Մյուս կողմից, ակնհայտորեն, հայերենի երկրորդ դեմքի դ ցուցական հոդն է արտացոլված ուրարտերենի ուղևորական հոլովի *-(e)di*

⁵¹² Գ.Ղափանցյանը այս մասնիկը համարելով դերանվանական ածանց՝ անորոշ առումով, համեմատում է հնդեվրոպական որոշ լեզուների համանման մասնիկների հետ՝ խեթ. *-ki*, լատին. *-que*, արիական *-ča*, հայ. *-ք* (ի-ք, ո-ք) [1940, էջ 29]:

ցուցիչի մեջ: Դա հատկապես ցայտուն երևում է ուղևորական հոլովի և *edi=a/ne* «այդտեղ» տեղի մակբայի հերթագայության մեջ, օրինակ՝ *išukani MU ušta=di^{KUR}Uburda=ue edi=a* «այս նույն տարի արշավեցի դեպի Ուրուրդա» և *išukani MU ušta=di^{KUR}Manai=di* «այս նույն տարի արշավեցի դեպի Մանա» և այլն⁵¹³: Հմմտ. հայերենի դերանվանական մակբայները, որոնք գոյականի հետ գործածվելիս նշանակությամբ փոխարինում են ս, դ, և ցուցական հոդերին. օրինակ՝ Էջ դու վաղվադակի ի ծիոյ այտի, փոխանակ՝ Էջ դու վաղվադակի ի ծիոյ-դ յայդմանե - «ցած իջիր իսկույն այդ ձիուց (կամ, ձիուց)» և այլն⁵¹⁴ (տե՛ս մակ ստորև՝ կետ 4):

3.3 Հայերենի ցուցական հոդերի արտացոլումը վանի արձանագրություններում: Հայերենի հոդերը՝ ս, դ և ն (համապատասխանաբար՝ առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի համար) գործածվում են ցուցական, դիմորոշ, ստացական և որոշյալ իմաստներով (որոշյալ առումով գործածվում է միայն ն հոդը): Ինչպես արդեն նշեցինք, հայերենի երկրորդ դեմքի դ հոդը ուրարտերենում հանդես է գալիս ուղևորական հոլովի ցուցիչի դերում: Ընդ որում, ինչպես և հայերենում այն կարող է փոխարինվել համապատասխան դերանվանական մակբայով (օրինակները տե՛ս վերը): Հայերենի երրորդ դեմքի և հոդը (որն ունի մակ որոշյալ իմաստ) ուրարտերենում ունի հետևյալ կիրառությունները:

1) Հավելվում է անվան մաքուր հիմքի վրա՝ կազմելով ուրարտերենի ուղղական հոլովը (արտահայտում է որոշյալ իմաստ). օրինակ՝ *ieše^{URU}Luhuni=ne haube* «ես Լուխունի-ն գրավեցի»: *ᵈᶜaldi=ne uluštabe* «Խալդի-ն առաջնորդեց», *uštali^{URU}Meštaedi^mIšpuuini=ne^{md}Sardurehe^mMinua=ni^mIšpuuinehe* «արշավեցին դեպի Մեստա՝ Իշպուինի-ն Սարդուրիի որդին, Մինուա-ն Իշպուինիի որդին»:

2) *Ini (i-ni)* տեսքով անկախաբար գործածվում է որպես մեծավոր առարկաների ցուցական դերանուն (նույնպես արտահայտում է որոշյալ իմաստ): Օրինակ՝ *ᵐIšpuuiniše^{md}Sardurehineše ini É-e zadune* «Իշպուինի-ն՝ Սարդուրիի որդին այս տունը կառուցեց», *ᵐIšpuuiniše^{md}Sardurehineše É-ini/e* (նտադաս)⁵¹⁵ *šidi-*

⁵¹³ Այս հերթագայության մասին տե՛ս մակ Մ.Арутюнян, 2001(КΥKH), էջ 442:
⁵¹⁴ Այս մասին տե՛ս Հ.Ավետիսյան, 1986, էջ 140:
⁵¹⁵ Ն.Հարությունյանը այս *É-ini*-ի տակ հասկանում է *susi-ini*՝ կապ չտեսնելով այս *-i-ni*-ի և *ini* դերանվան միջև [КΥKH արձ. 19, ծան. 5]: Եթե նույնիսկ

šitune, "Minuaše inele tar(a)manele tešiane «Մինուան այս քարմաները(°)/աղբյուրները(°) tešiane (բայ է)»⁵¹⁶:

3) Հավելվում է անցողական բայերի վերջում որպես գործողության օրյեկտի երրորդ դեմքի եզակի թվի ցուցիչ՝ այն, նրա նշանակությամբ: Օրինակ՝ terune «Haldei patare tine «դրեց Խալդիի քաղաք-ամրոց անունը-նրա»:

Փաստորեն այն նախադասության մեջ ազատորեն կարող է հավելվել ինչպես ստորոգրյալին (բային) և խնդրին (օրյեկտին), այնպես էլ ենթակային (ստրյեկտին)⁵¹⁷: Այս առումով շատ նման է մեկ այլ՝ -me «ինձ» դերանվանական մասնիկին [տե՛ս Գ.Меликишвили, 1964, էջ 40]: Բայց ի տարբերություն -me-ի, որը տարբեր խոսքի մասերի հետ գործածվելիս վերջամասնիկի ձևով հավելվում է վերջիններին, -ne-ն կարող է հանդես գալ նաև ինքնուրույն, որպես անկախ դերանուն՝ ini ձևով: Հայերենի առաջին դեմքի ս հոդը ուրարտերենում չի վկայված: Փոխարենը լայնորեն գործածվում են հնդեվրոպական ծագում ունեցող -me «ինձ» և -(ju)-ke «ին» վերջամասնիկները (- (ju)-ke-ն ուրարտերենի է անցել հավանաբար խեթերենի միջնորդությամբ [Գ.Ղափանցյան, 1940, էջ 29, 30]), որոնք արտահայտում են ստացական դերանունների իմաստ:

այդպես է, ապա այս երկու տիպի արտահայտությունների համեմատությունը (ini susi(e) šidištuni և susi-ni šidištuni), որտեղ ուղղական հորվով դրված գոյականը կա՛մ օժտվում է ini դերանունով, կա՛մ ստանում -ne վերջամասնիկը (հոդը), ակնհայտորեն վկայում է ini դերանվանական նշանակման հոդովի -ne մասնիկի կապի մասին: Այս երկու ձևերի հնարավոր կապի մասին տե՛ս նաև Գ.Меликишвили, 1964, էջ 31, ծան. 55: Հայերենում այս ini-ն պահպանվել է միայն ետադաս կիրառությամբ՝ հոգի տեսքով, այն, ինչպես և ուրարտերենում, կարող է դրվել և՛ գոյականի, և՛ բայի վրա: Օրինակ. որ սիրեն զքեզ (= նա, որ սիրում է քեզ) [Հ.Ավետիսյան, 1986, էջ 12], որ շարժին եւ փոփոխիս (= նա, որ շարժվում և փոփոխվում է) [Ա.Աբրահամյան, 1976, էջ 161-162] և այլն:

⁵¹⁶ Առաջին ձևով հիմնականում դրվում են հատուկ անունները, իսկ եկրորդով՝ հասարակ (մանրամասն տե՛ս V.2.3 կետ 2): Բայց եթե ուրարտերենում -ne-ի հավելումը բային համատարած է, ապա հայերենում մասնակի բնույթ է կրում:

⁵¹⁷ Հոդերի նման ազատ կիրառությունը հատուկ է նաև հայերենին: Այս մասին տե՛ս նաև Գ.Ղափանցյան, 1940, էջ 24: Որոշ ուսումնասիրողներ այս ne-ն համեմատում են խուտիերենի 3-րդ դեմքի -nna ոչ ինքնուրույն դերանվան հետ: Տե՛ս, օրինակ, G.Wilhelm, 2004, էջ 127 և այլն:

3.4 Հայերենի այս, այն ցուցական դերանունների հնարավոր առկայությունը ուրարտական տեքստերում: Ամենայն հավանականությամբ ցուցական դերանունների հետ պետք է կապել ուրարտական տեքստերում վկայված՝ a(i)še(i) «ինչ-որ բան(°)⁵¹⁸», a(i)ne(i) «ինչ-որ մեկը, որևիցե մեկը(°)» բառերը. հմմտ հայ. այս, այն ցուցական դերանունները⁵¹⁹: Այս երկու բառերը Վանի արձանագրություններում հիմնականում հանդես են գալիս նմանատիպ արտահայտություններում, երբնմ նաև համատեղ: Տե՛ս օրինակ՝ ...ali(e) úi(e) aišei ainei qabqaršúlalani [KYKH, 52₃, 47₁₀], ...qarbie šuli manu ui aišei LUGÁL-še zadalani [KYKH, 427_{a4}] և ^{1D}Puranadi tuišhi manu ui ainei LUGÁL ištini kauri [KYKH, 174 B1₇, 244₇]: Ըստ երևույթին, այս երկու բառերն ունեն մոտ իմաստ՝ aine(i) «ինչ-որ մեկը, ինչ-որ բան (նրանցից)», aiše(i) «ինչ-որ մեկը, ինչ-որ բան (սրանցից)»:

4. Դերանվանական մակբայներ: Ուրարտերենում հնարավոր է առանձնացնել հետևյալ դերանվանական մակբայները՝ ešti-[ešti-]⁵²⁰ «այստեղ», edi-[edi-] «այդտեղ»: Օրինակ՝ ^{L0}EN.NAM edia terubi «կառավարիչ այնտեղ դրեցի» [YKH, 265₄], X LU^{ME5} gunu-šini eiršidubi ištini - «X մարտիկներ բնակեցրի այստեղ» [YKH, 127II₃₄, 128A2₂₁] և այլն: Առաջինը հմմտ. հայ. աստ «այստեղ», աստի «այստեղից»⁵²¹, իսկ երկրորդը՝ այդի/այտի «այդտեղ», «այդտեղից» մակբայների հետ⁵²²: Ընդ որում, ինչպես ուրարտերենում, այնպես էլ հայերենում դերանվանական մակբայները արտահայտում

⁵¹⁸ Այդպես՝ համաձայն Մ.Սավիինիի [SMEA, 44/1, 2002, էջ 17]: Այլ հեղինակները բարգմանում են՝ «երբեք(°)» «երբևիցե(°)» կապելով այն aše «երբ» բառի հետ: Մակայն այս նմանությունը ամենայն հավանականությամբ պատահական բնույթ է կրում, քանզի a(i)še(i)-ն միայն մեկ անգամ է վկայված ašei ձևով, մյուս բոլոր դեպքերում սկզբնական a-ից հետո առկա է i: Մինչդեռ aše «երբ» բառը առանց քացառության հանդես է գալիս միայն aše ձևով:

⁵¹⁹ Ուրարտ. ainei «ինչ-որ մեկը» բառակի և հայ. այն դերանվան համեմատման համար տե՛ս Գ.Ջառուկյան, 1963, էջ 110: Վ.Սարգսյան վերջիններս համեմատում է նաև բառի a ina դերանվան հետ [1998, էջ 115];

⁵²⁰ Հնարավոր է նաև ištī-[ištī-] ընթերցումը:

⁵²¹ A.D.Mordtmann, Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und Umgegend, ZDMG, Bd. XXVI, 1872, էջ 528; J.Sandaljian, 1900, էջ 384 և այլն:

⁵²² Գ.Ղափանցյանը edi-ն համեմատում է հայ. անդէս՝ «այնտեղ», «այն ժամանակ» մակբայի հետ [1940, էջ 38]:

են և՛ տեղի, և՛ ժամանակի իմաստ⁵²³: Ուրարտերենում ժամանակի իմաստով գործածվելիս՝ դրանք հաճախ դրվում են ցուցական դերանունների հետ համատեղ⁵²⁴, օրինակ՝ *inuka=ne edi=ne* «դրանից հետո, այնուհետև», *išuka=ne edi=ne* «սրանից հետո, այսուհետև»: Դերանվանական մակրայների մասն կիրառությունը խորք չէ մահ հայերենին, օրինակ՝ ի ժամանակի անդ այնմիկ «այդ նույն ժամանակ» [Բուզանդ, IV, ԻԵ] և այլն:

Հայերենում դերանվանական սույն մակրայները հանդես գալով տարբեր հոլովներով դրված գոյական անունների հետ համատեղ՝ կարող են փոխարինել ցուցական դերանուններին կամ հոդերին: Նման կիրառության դեպքում վերջիններս արտահայտում են դադարի, շարժման ելակետի կամ նպատակակետի իմաստներ⁵²⁵: Այսպես.

ի(յ) նախդրով տրականի հետ (արտահայտում է ներգոյականի իմաստ): Օրինակ՝ Արկեք զոա ի գուք մի յանապատի աստ: Գրեցի ծեզ ի թղթի այրի:

Ի(յ) նախդրով հայցականի հետ (ուղևորման հայցական): Օրինակ՝ Գայր հասաներ ի տեղի անդր: Եւ ձկուք, որ ի գետ անդր էի՝ սատակեցան (արտահայտում է ներգոյականի իմաստ):

Բացառական հոլովի հետ: Օրինակ՝ Ե՛լ ի տապանե այտի: Ի մերոց զօրաց աստի: Առաքեցից զմի յաշակերտաց աստի իմոց:

Ճիշտ նույն պատկերն ունենք մահ ուրարտերենում, որտեղ դերանվանական մակրայները գոյականների հետ գործածվելիս համարվում են ետդիրներ և արտահայտում են հետևյալ իմաստները⁵²⁶.

- *edia* «դեպի», «(ինչ-որ քնակավայրի) ուղղությամբ»: Օրինակ՝ *ašta=di* ^{KUR}*Uburda=ue edia* «արշավեցի դեպի Ուրուրդա» [KYKH, 173 II₄₀], *uštadi ...* ^{KUR}*Arhaue edia* «արշավեցի ... դեպի Արխա» [KYKH, 173 III₃₃₋₃₄] (*edia*-ն մմանատիպ արտահայտություններում հաճախ փոխարինվում է ուղևորական հոլովով. տես վերը):

⁵²³ Հայերենի դերանվանական մակրայներն են՝ աստ «այստեղ, այս ժամանակ», անդ «այնտեղ, այն ժամանակ», այդի (այտի) «այդտեղ, այդտեղից», այսր (սեռական հոլովը այս-ից) «այստեղ, դեպի այստեղ» և այլն: Դրանց նշանակությունների և հարակից հարցերի մասին մանրամասն տես Ա.Արքախանյան, 1976, էջ 83-84; Հ.Ավետիսյան, 1986, էջ 140-141:

⁵²⁴ Տես Գ.Меликишвили, 1964, էջ 59-60:

⁵²⁵ Հայերենի ցուցական դերանունների՝ հոլովների հետ գործածության մասին տես Ա.Արքախանյան, 1976, էջ 83; Հ.Ավետիսյան, 1986, էջ 140-141 (մեջբերումները գրաբարից վերցված են նույն տեղից):

⁵²⁶ Տես Գ.Меликишвили, 1964, էջ 59:

- *edine* «-ից», «-ին, համար, վրա»: Գործածվում է բացառական հոլովի հետ. օրինակ՝ *LUGAL* ^{KUR}*Uelikubi ... KUR-ni edini tamhubi* «Վելիկուբի երկրի բազավորին (իր) երկրից հեռացրի» [YKH, 265₂₋₃]: *turutineni ... qurani edini* «թող ոչնչացնեն ... գետնի երեսից» [KYKH, 40 o.c. 11, 41 o.c. 10], ^D*galdie ... uštuni ulgušiani edini* «Խալդի աստծո ողջությանը ... նվիրեց» [KYKH 282₁, 396₁...] և այլն:

- *i/eštini=ie*⁵²⁷ «-ին, համար»: Օրինակ՝ ^D*galdia eštini(i)e* «Խալդի-ին/Խալդի-ի համար» [KYKH, 173 I₁₆, II₂...], *ali aštadi* ^{KUR}*Etiunia eštini(i)e* «երբ հաստատվեցի Էթիունի երկրի շնորհիվ» [KYKH, 241 F₅] և այլն:

Ինչպես նշեցինք, հայերենում դերանվանական մակրայները հաճախ փոխարինում են գոյականի համապատասխան ցուցական հոդին: Ուրարտերենում *edi-* դերանվանական մակրայը փոխարինում է ուղևորական հոլովին, որը կազմվում է նույն մասնիկով (- (e)di), ինչ որ հայերենի երկրորդ դեմքի ցուցական հոդը (դ): Օրինակները և բացատրությունները տես վերը՝ կետ 3.2: Այսպիսով, կարող ենք փաստել, որ ուրարտերենի դերանվանական մակրայները ոչ միայն իրենց ձևով և իմաստով, այլև գործառնությամբ գրեթե նույնությամբ առկա են հայերենում: Այսինքն, թե՛ ուրարտերենում, թե՛ հայերենում համապատասխան դերանվանական մակրայները կարող են գործածվել ինչպես ինքնուրույն՝ տեղի կամ ժամանակի մակրայների իմաստով, այնպես էլ գոյականի հետ՝ արտահայտելով դադարի, շարժման (ուրարտերենում՝ առավել լայն իմաստով) ելակետի կամ նպատակակետի իմաստներ:

4.1 Հայերենի այսր-(ե)ս, այր-*(ե)ս դերանվանական մակրայների առկայությունը Վանի արձանագրություններում: Վերջերս Այանիսից

⁵²⁷ Ն.Հարությունյանը այս *eštini*-ի մեջ տեսնում է առանձին բառ՝ «շնորհիվ (?)» պայմանական իմաստով [KYKH, էջ 273 ծան. 11]: Նման հետևության համար նա երևնվում է այն հանգամանքի վրա, որ վերջինս միշտ հանդես է գալիս *-i(i)e* վերջավորությամբ (տրական հոլով): Մեզ թվում է, որ այն հաստատապես պետք է կապել *ešti-* «այստեղ» դերանվանական մակրայի հետ, ինչպես որ անում է Գ.Մելիքիշվիլին: Հմուտ մմանատիպ համատեքստում մեկ այլ՝ *edi-* «այդտեղ» մակրայի նույն իմաստով գործածությունը: Ինչ վերաբերում է բառավերջի *-i(i)e-*ին, որ անկասկած տրական հոլովի ցուցիչն է, ապա հայերենում դերանվանական մակրայները նույնպես կազմվում են ցուցական դերանունների տարբեր հոլովներից. օրինակ՝ այսր «այստեղ» (սեռ. հոլով այս-ից) և այլն (*eštini*-ի մման գործածության մասին տես նաև VII.3 կետ 2):

հայտնաբերված ուրարտական մի ընդարձակ արձանագրություն հնա-
 րավորություն տվեց ուրարտերենում կատարել որոշ ուղղումներ և
 ճշգրտումներ: Այսպես, պարզվեց, որ նախկինում որոշ արձանագրու-
 թյուններում ընթերցվող *šer=ħine բառը իրականում գոյություն չունի
 և դրա փոխարեն պետք է կարդալ išer=ħine (նախկինում բա-
 ռասկզբի i-ն սխալմամբ վերագրվում էր նախորդ բառին): Այս արձա-
 նագրության հրատարակիչ Մ. Սալվինին, արձանագրությունը ամբող-
 ջությամբ հիմնականում բողոնելով առանց բարգմանության, išer-
 =ħine-ի համար ենթադրում է մակբայական արժեք⁵²⁸: Ն.Հարություն-
 ըյանը, մանրամասն քննարկելով սույն հարցը, ոչ միայն հաստատում է
 Մ. Սալվինիի ենթադրությունը, այլև փորձում է ճշգրտել išer=ħine-ի
 իմաստը: Այն համեմատելով ikukane MU «այն նույն տարի» (իրա-
 կանում պետք է կարդալ išukane MU «սույն տարի, այս նույն տարի».
 տե՛ս վերը՝ կետ 3.1) դարձվածի հետ՝ նա սույն բառին տալիս է «այն
 ժամանակ» բարգմանությունը՝ համարելով ժամանակի մակբայ⁵²⁹:
 Ուրարտական տեքստերում ունենք մեկ անգամ վկայված մանատիպ
 ineri=ħine բառը (267), որ Ի.Դյակոնովը բարգմանում է «աստվա-
 ծային»՝ այն համեմատելով ^diniri=aše «աստվածայնություն(ը)»
 գոյականի հետ⁵³⁰: Սակայն մեզ թվում է, որ այն նույնպես պետք է հա-
 մարել մակբայ՝ համեմատելով išer=ħine-ի հետ, մանավանդ եթե
 մկատենք, որ ineri=ħine-ն վկայված է առանց աստվածություն բնու-
 թշն ու որոշի: Այս երկու բառերի իմաստով մոտ լինելը հատկապես
 պարզորոշ երևում է հետևյալ արտահայտություններից.

(266) ^dhal-di-na KÁ i-še-er-ħi-ni ħa-lu-li ú-i-la(-
)ti-ni a-lu-še e-gu-di na-di⁵³¹ a-tú-li-e [Ay-susi
 V₁₀ (Ayanis I)]:

(267) ^dhal-di-na KÁ i-ne-ri-ħi-ni t[i]-ni a-lu-še
 ha-lu-li e-[g]u-di GÜB-di a-tú-li-e [KVKH 122₃]:

Փաստորեն վերոնշյալ բառերը վկայված են մանատիպ համա-
 տեքստում՝ հերթագայելով միմյանց: Ինչ վերաբերում է ineri=ħine

⁵²⁸ M. Salvini, 2001 (Ayanis I), էջ 259 (Ay-susi I):

⁵²⁹ Ն.Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Այանիսի նորա-
 հայտ ուրարտական սեպագրում, Մեթ. 2000, էջ 219-232:

⁵³⁰ И. Дьяконов, 1963, էջ 88:

⁵³¹ Ն.Հարությունյանը «e-gu-di na-di/GÜB-di»-ի փոխարեն (266)-(267) ընթերցում է
 «e-gu-di ba-di» [Մեթ., XXIII, 2004, էջ 376-380]:

գրությանը՝ սպասվելիք *iner=ħine-ի փոխարեն, ապա նման տա-
 տանումները ուրարտերենում տարածված երևույթ են, հմմտ. օրինակ՝
 zile=be/zil=be, nire=be/nir=be և այլն (տե՛ս I.3 կետ 4): Վերոն-
 շյալ išer=ħine-ն ակնհայտորեն պետք է համեմատել հայերենի
 այսրեն «դեպի այստեղ, նորից դեպի այստեղ, նորից և այլն»⁵³² մակբայի
 հետ, որը կազմված է այսր դերանվանական մակբայից և արտահայ-
 տում է ինչպես տեղի, այնպես էլ ժամանակի իմաստ: Նմանապես
 ineri=ħine-ն պետք է համեմատել հայ. *այսրեն (< այս-ր-են) մակ-
 բայի հետ, որը հայերենում նման ձևով չի պահպանվել (առկա է միայն
 այս-ր մակբայը), բայց որի գոյությունը ենթադրելի է այնպես, ինչպես որ
 ունենք՝ այսրեն (< այս-ր-են), այդրեն (< այդ-ր-են):

Ամփոփում: Ամփոփելով վերոհիշյալ փաստերը՝ գալիս ենք այն հաս-
 տատ եզրակացության, որ ուրարտերենում ցուցական դերանունների
 հիմքում ընկած են s (գրում š) և n հիմնային հնչյունները, որոնք համըն-
 են գալիս so-, no- (գրում՝ šu-, nu-)⁵³³, sa-, na- (գրում՝ ša-,
 na-), թերևս նաև՝ ays-, ayn- (գրում՝ a(i)š-, a(i)n-) դերան-
 վանական հիմքերի տեսքով, որոնք պետք է համեմատել հայ.՝ սա, դա,
 նա / տո-յն, դո-յն, նո-յն / այս, այդ, այն ցուցական դերանունների հետ:
 Եթե ընդունենք, որ Վանի թագավորության շրջանում հայերենում դեռ
 գործում էր հնդեվրոպական նախալեզվի ցուցական դերանունների՝
 առարկաները ըստ դիրքի՝ մերձավոր և հեռավոր, տարբերակելու համա-
 կարգը, ապա s-ով հիմքերը պետք է ցույց տան մերձավոր, իսկ n-ով
 հիմքերը՝ հեռավոր առարկաներ: Այս հիմքերի վրա -ki/a-, -se/i-
 ածանցների հավելումով կազմվում են ուրարտերենի մյուս ցուցական
 դերանունները (տե՛ս վերը՝ կետ 3.1):

Ըստ երևույթին, հայերենի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերի ս, դ,
 և հոդերի համակարգը դեռ չէր ձևավորվել, և ուրարտերենում սրանցից
 յուրաքանչյուրը տարբեր կերպ և աստիճանի էր արտացոլված: Երկրորդ
 դեմքի դ հոդը ուրարտերենում վկայված է ուղևորական հոլովի ցուցիչի
 տեսքով⁵³⁴: Իմաստային առումով այս երկուսը շատ մոտ են իրար և

⁵³² Ա.Արրահամյան, 1976, էջ 452-453; ՆԲՀԼ, Ա, էջ 96:

⁵³³ Մեպագիր Յ-ն համապատասխանում է հայ. ս-ին, իսկ ս-ն՝ ու-ին, ո-ին և ւ-ին: Տե՛ս
 II.4.2 կետ 2.2; II.1 կետ 3.2բ; Г.Меликишвили, 1964, էջ 22-23 և այլն:

⁵³⁴ Ուղևորական հոլովը եզակի թվում կազմվում է արական հոլովի վրա - (e) di
 մասնիկի (տեղի մակբայի) հավելումով: Հոգնակի թվում - (e) di-ի փոխարեն հավելվում
 է -aš-ṭe (-st- < -sd- ()): Ըստ որոշ ուսումնասիրողների՝ այս -aš- մասնիկը

ինչպես ուրարտերենում, այնպես էլ հայերենում նախադասության մեջ հերթագայում են համապատասխանաբար ուրարտ. *edi* և հայ. այդի դերանվանական մակրայներին: Մերձավոր առարկաների երրորդ դեմքի և հոդը ուրարտերենում հանդես է գալիս որպես ուղղականի ցուցիչ. ունի որոշյալ իմաստ, ազատորեն, ինչպես որ հայերենում, հավելվում է նախադասության տարբեր անդամներին: Այն, ի տարբերություն հայերենի, հանդես է գալիս նաև ինքնուրույն՝ *i ni* ձևով, որպես մերձավոր առարկաներ ցույց տվող դերանուն (ունի որոշյալ իմաստ)⁵³⁵: Այս կերպ կիրառվելիս կարող է դրվել գոյականից թե՛ առաջ, թե՛ հետո՝ նախադաս կամ ետադաս: Հայերենի առաջին դեմքի ս հոդը ուրարտական տեքստերում վկայված չէ, փոխարենը գործածվում են *-me* «ինձ» և *-ke* «իմ» (ստացական իմաստով) դերանվանական վերջամասնիկները, որոնք հավանաբար ունեն հնդեվրոպական ծագում:

Ուրարտերենի *e/išti-* [*e/isti-*] և *edi-* [*edi-*] մակրայական հիմքերում արտացոլված են հայերենի *աստ/աստի*, այդի (*այտի*) դերանվանական մակրայները: Սրանք հայերենի հետ ունեն նույն իմաստը: Այս մակրայները գոյականների հետ դրվելիս փոխարինում են համապատասխան ցուցական դերանուններին և հոդերին (ինչպես որ հայերենում): Հայերենի և ուրարտերենի ցուցական դերանվանական հիմքերի և դրանց հետ առնչվող հոդերի ու մակրայների համեմատական պատկերը ներկայացնում է Աղյուսակ 7-ը:

Աղյուսակ 7^o

Ուրարտերեն	Հայերեն
(դերանուններ)	
<i>i=so-</i> (<i>i=so=k-</i>)	սո-յն
<i>i=no-</i> (<i>i=no=k-</i> , <i>i=no=s-</i>)	նո-յն
<i>i=sa-</i>	սա
<i>i=na-</i>	նա
<i>ays=e/ei</i>	այս

ուրարտերենի հոգնակիության *-a-* ցուցիչի առավել հնագույն ձևն է, որն այլ հոլովներում չի պահպանվել (տե՛ս V.2.8 կետ 1):
⁵³⁵ Թերևս ամենևին պատահական չէ, որ ուրարտերենում մերձավոր առարկաների *i ni* ցուցական դերանունը գործածվում է միայն անորոշ (առանց *-ne-*ի) ուղղականով դրված անունների հետ (այս մասին տե՛ս նաև V.2.3 կետ 2): Ըստ երևույթին, ուրարտ. *i ni-*ն գտնվում է դերանունից հոդ անցման փուլում:

Ուրարտերեն	Հայերեն
<i>ayn=e/ei</i>	այն
(հոդեր)	
<i>-di</i> (ուղղական հոլովի ցուցիչ)	-դ (հոդ)
<i>-n</i> (ուղղական հոլովի ցուցիչ/որոշիչ հոդ)	-ն (հոդ)
<i>ini</i> (մերձավոր առարկաների ցուցական դերանուն/հոդ) ⁵³⁶	-
(դերանվանական մակրայներ)	
<i>e/isti-</i> (< <i>e/is=ti-</i>)	աստ, աստի (<*այս-տի)
<i>edi-</i> (< <i>ed=ti-</i>) ⁵³⁷	այդի/այտի (<*այդ-տի)
<i>iser=hin</i>	այսք-(ե՛ն)
<i>iner=hin</i>	այնք-*(ե՛ն)

* Դերանունները աղյուսակում տրված են զուգահեռաբար՝ ըստ շարքերի: Ուրարտերենի դերանուններն ու մասնիկները ներկայացված են հնչյունական տառադարձությամբ՝ վերականգնված հայ. զուգահեռների հիման վրա:

5. **Որոշյալ:** Վկայված է միայն *ule* (տրգ. *ule=še*) «ուրիշ մեկը» դերանունը: Օրինակ՝ *aluše ule (e) še tiulie ieše^{URU} luhiunine haube* «մեկ ուրիշը կասի՝ ես Լուխիունին (քաղաք) գրավեցի», *aluše ule inele dulie* «ով որ ուրիշին կստիպի անել այդ (գործերը)»: Վերջին արտահայտությունում *ule-*ն հերթագայում է *ainei* «այն մեկը», «ինչ-որ մեկը» դերանվանը (տե՛ս վերը՝ կետ 4.1): Մասնագիտական գրականությունում այս դերանունը սովորաբար համեմատվում է խոտ. *uli* «ուրիշ» դերանվան հետ⁵³⁸: Որոշ ուսումնասիրողներ այն համեմատում են նաև հայերեն ուրիշ (տարբերակներ՝ որիշ, ուրոշ, որոշ) «ուրիշ, այլ» բառի հետ⁵³⁹ (ծագումը անհայտ է), ինչը հնարավոր է, եթե հայ. բառի արմատն ենք համարում ուր-ը կամ որ-ը: Գ.Ջահուկյանը ուրարտերեն *ule=še-*ն կապում է հ.ե.**al-/*ol-* արմատի հետ, որից

⁵³⁶ Կամ *ine* [i.n], պարզ չէ: Արտահայտում է որոշյալ իմաստ, հերթագայում է ուղղական հոլովի *-ne* [-n] վերջամասնիկին: Հայերենում ունենք միայն ետադաս գործածությամբ՝ մերձավոր առարկաների երրորդ դեմքի ցուցական հոդի տեսքով:

⁵³⁷ Ամենայն հավանականությամբ այստեղ ունենք *d* > *d* անցում, ինչպես որ հայերենում:

⁵³⁸ Տե՛ս H.Арутюнян 2001(КУКН), էջ 472 և նշված գրականությունը:

⁵³⁹ Տե՛ս, օրինակ, Հ.Աճառյան, ՀԼՊ, I, էջ 172:

ունենք հայ. այլ, -ոյ < *al-jo դերանունը [1988, էջ 139]: Մենք առաջարկել ենք, որ միգուցե սույն բառի մեջ պետք է տեսնել հայ. որ դերանունը: Սակայն ուրարտ. բառի ճշգրիտ իմաստը հետևաբար և հնարավոր կապը այս կամ այն արմատի հետ առայժմ դժվար է որոշել, քանզի հասկանալի համատեքստում այն վկայված է միայն վերոնշյալ օրինակներում, ինչը հնարավորություն չի տալիս վստահել բառի ճշգրիտ թարգմանությանը⁵⁴⁰:

6. Հարաբերական: Հարաբերական դերանուններից մասնագիտական գրականությունում նշվում է al-ը՝ «ով որ», «ով, ինչ», «ինչպիսի» նշանակությամբ, ինչպես՝ ale waše manu arube^{LUGAL} huradina-ue^{ME5} «ով որ այր էր (գերիներից) տվեցի զինվորներին», inane LUGAL-e nunabe mi ale^{LUGAL} A.SI^{ME5}-še partu šere partu «այս հասավ արքային, քայց ինչ որ զինվորները տարան՝ տարան առանձին»⁵⁴¹: Արձանագրություններում այն հանդես է գալիս ale⁵⁴²- և alu- հիմքերով: Առաջին հիմքից վկայված են՝ ale, ale=le (ուղղական հոլով, եզակի և հոգնակի թիվ), իսկ երկրորդից՝ alu=še (երգատիվ հոլով, եզակի թիվ) դերանունները: Այս երկու հիմքերից՝ -ke/a և -pi մասնիկների հավելումով համապատասխանաբար ձևավորվում են. ale=ke/a «ոմանք». ale=ke ... ale=ke «ոմանք ... ոմանք» կամ «մեկը ... մյուսը» (օրինակ՝ ale(e)=ke zašgube ale(e)=ke šehere agube «ոմանց մեզրի, ոմանց կենդանի քշեցի»), ale=pi («(?)»⁵⁴³, aluke (< ale-uke(?)) «այն, ով(?)» կամ «ով-իմ(?)»⁵⁴⁴ (հմմտ. inuke < *inu/o=ke) դերանունները (տես վերը):

⁵⁴⁰ Տե՛ս նաև III.2.3 կետ 41:

⁵⁴¹ Տե՛ս Г.Меликишвили, 1964, էջ 43-44:

⁵⁴² Գրում ունենք a-li/e-(e) (-), հետևաբար սրանից կազմված բառերը պետք է կարդալ ale(e)ke (=aleke), ale(e) (=ale), ali(e)le (=alele), alepi և այլն: Ինչ վերաբերում է մեկ անգամ վկայված a-li-i տարբերակին, որը Ն.Հարությունյանը ընթերցում է [a¹-li(?)]-i¹՝ չբացատրելով նաև [a¹-ri-i¹] ընթերցումը [KYKH 406 օժ.12, ծան. 52], ապա մնան ընթերցումը կասկածելի է, եթե, իհարկե, խոսքը սեռականի մասին չէ:

⁵⁴³ Ն.Հարությունյանը կասկածանքով թարգմանում է "под которым(?)" -pi-ն նույն անցնելով pe(e) i «տակ» բառի (տողիի՝ ըստ իրեն) հետ [2001(KYKH), էջ 433]:

⁵⁴⁴ Այդպես է թարգմանում Ի.Դյակոնովը [1963, էջ 87]: Գ.Մելիքիշվիլին չի բացատրում alu=ke-ի առաջացումը alu- հիմքից՝ -ke մասնիկի հավելումով, ինչպես որ ale-ից ունենք ale=ke: Այս դեպքում նա հնարավոր է համարում alu=ke-ի դիտարկումը որպես ale=ke-ին զուգահեռ ձև՝ համամասն իմաստով [1964, էջ 44 ծան. 62]: Նույնն է առաջարկում նաև Գ.Վիլիելմը [2004, էջ 128]:

6.1 Որոշ պարզաբանումներ: Ուրարտական տեքստերում ale-ն վկայված է բազմաթիվ արտահայտություններում, որտեղ ստանում է «եթե», «իսկ», «այլ» և այլ նմանատիպ իմաստներ (իբրև շաղկապ): Դա մեզ հիմք է տալիս վերջինս նույնացնել հայ. այլ կամ այդ շաղկապի հետ⁵⁴⁵: Հայերենում այլ-ի մյուս ձևն է *այլակ-ը, որը պահպանվել է մի շարք բառերում, ինչպես՝ այլակարանել «այլարանել», այլակուրյուն «տարբերություն», այլայլակ «զանազան» և այլն⁵⁴⁶: Այն անշուշտ պետք է համեմատել ուրարտական aleke/a-ի հետ: Ինչ վերաբերում է alu-ին, ապա այն բազմիցս վկայված է

(268) a-lu-še ini DUB-te pi-(i)-tú-li-e... a-lu-še ... a-lu-še a-i-ni-(e)-i/u-li-e i-ni-(e)-li du-li-e (ti-u-li-e u-li-i tú-ri-e) a-lu-še u-li-(e)-še ti-u-li-e i-e-še... - «ով-որ այս գիրը փլի, ով-որ ..., ով-որ ինչ-որ մեկին /ուրիշ մեկին դրանք կտտիպի, (կասի զնա ջարդի,) մեկ ուրիշը կասի ես ...» [...]

կադապարային, ինչպես նաև՝

(269) ^mRu-sa-ni ^{md}Sar₅-du-ri-ի LUGAL DAN.NU a-lu-še ^{KUR}Bi-a-i-ni-li nu-ul-du-a-li - «Ռուսան՝ Սարդուրիի որդին՝ արքան հզոր, ով-որ Բիայնիլին էր կառավարում» [KYKH 388₈]

արտահայտություններում: Եթե առաջին դրվագում առաջարկվող «այլը, ուրիշը» իմաստը միանգամայն ընդունելի է, ապա երկրորդում առավել գերադասելի է «ով, որը» իմաստը: Ինչպես նշվեց, alu=ke/a ձևի -(u)ke/a բաղադրիչի մեջ Ի.Դյակոնովը տեսնում է ուրարտական -(u)ke- ստացական դերանվանական մասնիկը՝ *ale=uke/a > aluke/a անցումով՝ բառն ամբողջությամբ բառացի թարգմանելով «այն-իմ(?)»: Սակայն առավել հավանական է, որ այս -ke/a-ն պետք է նույնացնել նախորդ՝ ale=ke տարբերակում առկա -ke-ի հետ, ինչպես որ առաջարկում է Գ.Մելիքիշվիլին (տես ծան. 544): Այսպիսով, ուրարտերենում և հայերենում նույն արմատից ունենք հետևյալ բառերը/հիմքերը:

⁵⁴⁵ Տե՛ս նաև III.2.3 կետ 1:

⁵⁴⁶ Այս մասին տես Հ.Աճառյան, ՀԱՐ, I, էջ 168-169:

Ուրարտերենում		Հայերենում
ale	[ayle/ale]	այլ/դ, աղա-ւ-աղ-ել(°) ⁵⁴⁷
ale=k-	[ayle=k-]	այլակ-
alu-	[aylo-]	այլ, -ոյ
alu=k-	[aylo=k-(°)]	-

7. Անորոշ: Գ.Մելիքիշվիլին⁵⁴⁸ ուրարտերենի համար նշում է aini (տարրերակ ainiei) «ինչ-որ մեկը», gi(e)i «ինչ-որ քան» (ըստ Ա.Գյոտցեի՝ «ինչ-որ ժամանակ, երբևիցե»⁵⁴⁹) անորոշ դերանունները՝ քերելով հետևյալ օրինակները. aluše ainiei ini-li dulie «ով, ինչ-որ մեկը, կատիպի անել այդ (գործերը)», qirani širabae manu ui giei aini ištini aiuri «հողը ամայի (°) էր, ոչ ոք այնտեղ չէր ապրում», ui gi(e)i ištini šidauri «ուշինչ այնտեղ չէր կառուցված», aluše giei inukani esinini šiulie «ով որ ինչ-որ քան այստեղից կտանի» և այլն: Aine(i)-ն անշուշտ պետք է համեմատել հայ. այլ դերանվան հետ (տե՛ս վերը՝ կետ 3.4): Ինչ վերաբերում է gi(e)i (պետք է կարդալ ge(e)i)⁵⁵⁰ «ինչ-որ քան(°)» / «երբևիցե(°)» քառին, ապա տրված քարգմանությունները հուսալի չեն, և առայժմ հնարավոր չէ որևիցե ճշգրիտ համեմատություն անցկացնել⁵⁵¹:

V.4 ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՈՎՈՒՄԸ

1. Դերանունների հոլովումը և գործածությունը ուրարտերենում: Ուրարտերենում դերանունները, որպես կանոն, հոլովվում են ընդհանուր անվանական (տե՛ս V.2) հոլովմամբ: Ի.Դյակոնովը⁵⁵², անդրադառնալով ուրարտերենի դերանուններին, ենթադրում է դերանվանական հոլովման

⁵⁴⁷ Տե՛ս Հ.Աճառյան, ՀԱԲ, I, էջ 122:

⁵⁴⁸ Տե՛ս Г.Меликишвили, 1964, էջ 44:

⁵⁴⁹ A.Goetze, RHA, 22, էջ 179:

⁵⁵⁰ Ի.Դյակոնովը [1971, էջ 112] և Մ.Խաչիկյանը [1985, էջ 85] ընթերցում են [yei]՝ համեմատելով խոտ. [iye/a] դերանվան հետ: Մակայն այդ դեպքում վաղ շրջանի արձանագրություններում պետք է լիներ ieı, քանի որ ինչպես արդեն նշել ենք, ուրարտերենում i/ց հերթագայությունը ունի հստակ ժամանակային քաշխում: Մինչդեռ ուրարտական տեքստերում ինչպես վաղ, այնպես էլ ուշ շրջանում ունենք միայն ge(e)i ձևը:

⁵⁵¹ Միգուցե այն պետք է կապել հայ. ինքն (< ին-քն) դերանվան հետ (°):

⁵⁵² Տե՛ս И.Дьяконов, 1979, էջ 64, աղ. 9:

համակարգի գոյությունը, որը տարրերվում է անվանականից: Մակայն մնան պնդումը, ըստ մեզ, արդարացված չէ: Ընդհանրապես, տարրեր հոլովներով դրված դերանունների վկայությունները ուրարտերենում շատ չեն, այնուամենայնիվ եղած սակավ մյուսը մեզ պարտադրում է խոսել դերանունների առայժմ միայն ստանդարտ՝ անվանական հոլովմամբ հոլովվելու մասին՝ չբացառելով, իհարկե, առանձին դերանունների հատուկ ձևով հոլովվելու հնարավորությունը: Բերենք տարրեր հոլովներով դրված դերանունների մի քանի օրինակներ՝ ina=(na)=ne⁵ URU₄ (-na=ne)/imen=ane edi=ne - «այն հիմքերից՝ այդտեղ» (հոգնակի քացառ.) [KYKH 202₅, 247₇, 270₁, 424₉...], ina=ne arniuš-i=na=ne/INIM^{MES}-ne - «այն արարքներից/քաններից» (հոգնակի քացառ.) [KYKH 275₁₇₋₁₉, 276₃, 414₇...], ina=nele arniuš-i=nele - «այն արարքները» (հոգնակի ուղղ.) [KYKH 173, I₁₆, II_{3,24,50}, III_{19,45}, IV_{1141,66}...], ina=nele IV É.GAL^{MES} - «այն 4 ամրոցները» (հոգնակի ուղղ.) [KYKH 241A₁₈], inu=ka=hin(e)=e^m Rusa=i=n(e)=e hu-bi=ge - «այն (նույն) Ռուսայի հովտին» (եզակի տր.) [KYKH 421₁₆], ale=le^{SADU} babane=le šu=ni=a bedi=ie «մյուս լեռները՝ ծովի հետևում» (հոգնակի ուղղ.) [KYKH 407_{ЛИИ.35}] և այլն:

Դերանուններն ուրարտերենում գործածվում են ինչպես անկախ, այնպես էլ գոյականի հետ միասին: Գոյականների հետ գործածվելիս՝ նրանք, որպես կանոն, թվով և հոլովով համաձայնում են վերջիններիս հետ (օրինակները տե՛ս վերը):

2. Դերանունների հոլովումը և գործածությունը հայերենում: Ընդհանուր առմամբ, հայերենի դերանունների հոլովումը և գործածությունը նույնն է, ինչ որ ուրարտերենում: Այսինքն նրանք ունեն նույն հոլովները, ինչ որ անունները, կարող են գործածվել անկախ կամ գոյականի հետ միասին, վերջին դեպքում հոլովով և թվով հիմնականում համաձայնում են գոյականի հետ: Անկախ դերանունների կողքին կան մաև իբրև կցորդ հանդես եկող դերանվանական մասնիկներ՝ հողեր (հայերեն և ուրարտերեն դերանունների համեմատությունները մանրամասն տե՛ս V.3): Հիմնական տարրերությունն այն է, որ հայերենում որոշ դերանուններ հոլովվում են հատուկ՝ անվանականից տարրեր հոլովմամբ (դերանվանական հոլովում): Այս երևույթը ուրարտերենում կարծես թե չի

նկատվում⁵⁵³, թեև նյութի սակավությունը թույլ չի տալիս վերջնական պատասխան տալ այս հարցին:

V.5 ԱՇԱԿԱՆ ԱՆՈՒՆ

1. Ընդհանուր տեղեկություններ: Ամփոփ ներկայացնենք ուրարտերենի ածական անվան կազմավորման և գործածման կարգը⁵⁵⁴:

ա) Ածականն ուրարտերենում հոլովվում է գոյականի պես՝ ընդհանուր անվանական հոլովման համակարգով: Այն, որպես կանոն, հոլովով և թվով համաձայնում է գոյականի հետ, թեև երբեմն կարող է և չհամաձայնել կամ համաձայնել մասնակի:

բ) Ածականը կազմվում է ինչպես հատուկ ածանցների միջոցով, այնպես էլ առանց դրանց՝ վերջին դեպքում գոյականից տարբերվելով միայն շարահյուսությամբ:

գ) Ուրարտերենում որոշ դերբայներ կարող են հանդես գալ նաև որպես որակական ածականներ:

դ) Ածականի աստիճանների կազմավորման մասին ուրարտական տեքստերում հուսալի տվյալներ չկան:

2. Ածականակերտ ածանցները ուրարտերենում: Մասնագիտական շրջանակներում ուրարտերենի առավել տարածված ածականակերտ ածանցներ էին համարվում -(u)se և -ini մասնիկները: Սակայն ինչպես հետազայում հաստատեց Գ.Վիլհելմը⁵⁵⁵, ուրարտերենում -ini ածականակերտ ածանց գոյություն չունի, այլ առկա է հոլովների համաձայնեցման հատուկ կարգ, որտեղ վերոնշյալ ածանցը/մասնիկը (-n(e)-, -na- տեսքով) կատարում է հատկացուցիչի սեռական հոլովի և նրա վրա տարածված հատկացյալի հոլովային վերջավորության շաղկապող մասնիկի դեր (տե՛ս V.2.11 կետ 1): Ներկայումս մասնագետների կողմից կասկածի տակ է առնվում նաև -use-ի ածականակերտ ածանց լինելը: Այսպես, Մ.Սավլինին առաջ քաշեց այն տեսակետը, որ -use-ն կազմում է վերացական գոյականներ (իրականում այն

ունի տեղացույց նշանակություն և համապատասխանում է հայ. -ոց ածանցին. մանրամասն այս ածանցի մասին տե՛ս IV.3 կետ 2.11)⁵⁵⁶: Եթե հաշվի առնենք վերոնշյալը, ապա ուրարտերենում հնարավոր է տեսնել հետևյալ ածականակերտ ածանցները:

-hē/-hī-[-hə/-hi-]: Պատկանելություն ցույց տվող ածանց է, որը հիմնականում ցույց է տալիս այս կամ այն տեղից/տոհմից/ցեղից, կամ՝ այս կամ այն մեկի որդի լինելու հանգամանքը: Գ.Մելիքիշվիլին համարում է նաև ածականակերտ ածանց: Այն թերևս կարելի է համեմատել հայ. -ի (< *-hiո < *-sio) ածանցի հետ (մանրամասն այս ածանցի և նրա հնարավոր ծագման ու առանձնահատկությունների մասին տե՛ս IV.3 կետ 2.1):

-ae/-a(i)e: Ըստ Ի.Դյակոնովի՝ այս ածանցը ուրարտերենում և խոտիերենում, լինելով դերբայակերտ մասնիկ, կազմում է նաև ածականներ⁵⁵⁷: Ինչպես ցույց են տալիս ուրարտական տեքստերի մեր դիտարկումները, հավանական է, որ դերբայներ և բայածականներ կերտող -a(i)e (ուշ շրջանում -age) ածանցի կողքին առկա են նաև -ue/-uge, թերևս նաև՝ -i(i)e/-i(g)e տարբերակները, ինչից հետևում է, որ բուն ածանցը այստեղ կարող է լինել -i/ge-ն, որը միանում է հիմքական ձայնավորին՝ առաջացնելով համապատասխան վերջավորությունները: Առայժմ պարզ չէ, թե արդյո՞ք šerab(=)ae «անջրդի, ծարավ» - հայ. ծարաւ և շի(=)ae «մեծ» - հայ. տի- «մեծ» (հմմտ. տի-կիև «մեծ կիև», տի-եզերը «մեծ եզերք» և այլն) բառերում, ի դեմս -ae-ի, գործ ունենք նույն ածանցի հետ (նշված բառերը վկայված են միայն -ae վերջավորությամբ): Եթե հնարավոր համարենք, որ հայ. չ-ն կարող է ծագել հին չ-ից՝ անմիջապես կամ միջնորդավորված, ապա այս ածանցները թերևս պետք է համեմատել հայերենի ածականակերտ դերբայներ կազմող -իչ, -ուչ և -(u)չ, -ա(u)չ բայածանցների հետ⁵⁵⁸ (տե՛ս VI.3 կետ 2.2):

⁵⁵³ Առայժմ պարզ չէ ուրարտերենի išer=šine - հայ. այսր(-են), ineri=šine - հայ. այլր(*-են) դերանվանական մակբայներում վկայված r-ի հարցը. սրանց հայերեն գուգահեռներում ռ-ն գալիս է այս, այև ցուցական դերանունների՝ այսր, այլր սեռականներից, որտեղ ռ-ն հայերենի դերանվանական հոլովման սեռականի ցուցիչն է:
⁵⁵⁴ Այս հարցին տարբեր ժամանակներում անդրադարձել են՝ Յ.Ֆրիդրիխը [1933, էջ 8-10], Ի.Մեշյանինովը [1958, էջ 91-93], Գ.Մելիքիշվիլին [1964, էջ 29], Ի.Դյակոնովը [1971, էջ 105; 1979, էջ 64-65], Մ.Նաշիկյանը [1988, էջ 69] և այլք:
⁵⁵⁵ Г.Вильгельм "К хурритской и урартской грамматике", ДВ, 5, 1988, էջ 93-132:

⁵⁵⁶ Գ.Վիլհելմը նույնպես մերժում է -use ածանցի ածականակերտ լինելը [2004, էջ 126]:
⁵⁵⁷ Ըստ նրա՝ այս ածանցով կազմված բառերից շատերը կորցրել են իրենց բայական իմաստը կամ ընդհանրապես չեն ունեցել [И.Дьяконов, 1979, էջ 74-75]: Տե՛ս նաև М.Хачикян, 1985, էջ 69:
⁵⁵⁸ Սրանք հնում նույնպես եղել են դերբայակերտ մասնիկներ: Այդ մասին տե՛ս Г.Джаукян, 1982, էջ 186-187:

-ine [-in] (չպետք է շփոթել հոլովների համաձայնեցման =n (e) = մասնիկի հետ, տե՛ս V.2.11): Ածականակերտ ածանց, որն անշուշտ պետք է համեմատել հայ. նույնիմաստ -իս ածանցի հետ (մանրամասն տե՛ս IV.3 կետ 2.13):

-u(ne) [-u(n)]: Ի.Դյակոնովը համարում է դերբայական ածականներ կերտող ածանց⁵⁵⁹: Այն անշուշտ համապատասխանում է հայ. -ու(ս) ածանցին, որը նույնպես քայերից կերտում է ածականներ և հնում ունեցել է դերբայակերտ իմաստ⁵⁶⁰ (այս մասին մանրամասն տե՛ս VI.3 կետ 2.7):

V.6 ԹՎԱԿԱՆ ԱՆՈՒՆ

Ուրարտական տեքստերում թվականները հիմնականում գրված են հատուկ նշաններով (գաղափարագիր են), այդ պատճառով դրանց մասին մեզ քիչ բան է հայտնի⁵⁶¹:

1. Քանակական թվականներ: Հուսալի վկայություններից ունենք քերես միայն šuse(/i=ne) «մեկ(°)» և atibe «քյուր, տասը հազար» բառերը⁵⁶²:

2. Դասական թվականներ: Յ.Տրիդրիխը և Ի.Սեչչանինովը նշում են šišṭini «երրորդ» և tarani «երկրորդ» թվականները⁵⁶³, որոնք Գ.Մելիքիշվիլին ներկայացնում է որպես մակրայներ՝ «երկրորդ անգամ(°)», «երրորդ անգամ(°)» իմաստներով՝ երկու քարգմանություններն էլ համարելով կասկածելի⁵⁶⁴: Ի.Դյակոնովը šišṭini-ն քարգմանում է «երկրորդ անգամ»՝ փորձելով կապ տեսնել šiši⁵⁶⁵-ի հետ, որը նա քարգմանում է «երկու(°)» կապելով խուտ. šin- «երկու» թվականի

⁵⁵⁹ И.Дьяконов, 1963, т. 73-76; 1977, т. 74 ծան. 102 և այլն:

⁵⁶⁰ Št'u A.Meillet, Esquisse a'une grammaire comparée de l'arménien classique, 1936, Vienn, т. 48, 130; Г.Джаукян, 1982, т. 186; 1987, т. 241 և այլն:

⁵⁶¹ Այս մասին տե՛ս И.Дьяконов, 1977, т. 65; G.Wilhelm, 2004, т. 133 և այլն:

⁵⁶² Št'u Г.Меликишвили, 1964, т. 44-45; И.Дьяконов, 1971, т. 106; 1979, т. 65;

G.Wilhelm, 2004, т. 133 և այլն:

⁵⁶³ J.Friedrich, 1933, т. 18; И.Мешанинов, 1958, т. 97-98: Այս բառերի հնարավոր իմաստների և հայերենի հետ ունեցած առնչությունների մասին տե՛ս III.2.3 կետ 12; III.2.4 կետ 18:

⁵⁶⁴ Г.Меликишвили, 1964, т. 44-45:

⁵⁶⁵ Ըստ Ի.Դյակոնովի՝ այս նույն արմատից է ծագում նաև šišuhane «երկրորդ անգամ(°)» բառը, որը, սակայն, քիչ հավանական է համարում Ն.Հարությունյանը [2001, т. 465]:

հետ՝ šišə < *šin-šə անցումով⁵⁶⁶: Šin- արմատից ուրարտերենում ունենք մեկ անգամ վկայված šinamdini «կրկնակի, երկու անգամ» բառը, որն անշուշտ փոխառյալ է խուտ. šinam- «կրկնապատկել» ձևից (հմնտ, նաև աքքադ. šinā «երկու»): Ինչ վերաբերում է ենթադրյալ šišə < *šin-šə անցմանը, ապա այն խիստ անհավանական է թվում, մանավանդ որ առանձին šin թվական ուրարտերենում չի վկայված: Չկա նաև ենթադրյալ nš < š անցումը հաստատող որևէ այլ վկայություն:

Այսպիսով, եթե ամփոփենք եղած նյութը, ապա որպես ուրարտական թվական անունների քիչ թե շատ հուսալի վկայություններ կարելի է համարել šusi(ne)⁵⁶⁷ «մեկ(°)» և atibe «քյուր, տասը հազար» բառերը:

⁵⁶⁶ Ն.Հարությունյանը šišə քարգմանում է «երեք(°)» [2001, т. 465], ավելի ուշ առաջարկում է «նորից» քարգմանությունը [Մերձ. XXI, 2002, т. 227-230]:

⁵⁶⁷ Իրականում կասկածելի է նաև šuse(/i=ne)-ի «մեկ» քարգմանությունը: Այս մասին մանրամասն տե՛ս V.3 կետ 2.4:

VI. ԲԱՅ

VI.1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բայի կառուցվածքը ուրարտերենում⁵⁶⁸: Ուրարտերենում բայը կազմված է հիմքից, ածանցների շարքից և ստացական/ցուցական հոդից: Վերջին երկուսը կարող են և բացակայել: Այն ընդհանուր առմամբ հնարավոր է ներկայացնել $R(f_1)(f_2)(z)$ սխեմայով: Հիմքը (R) քաղկացած է արմատից և ածականների ու քառակազմական ածանցների շարքից, որոնք կարող են բացակայել: Բայարմատն ուրարտերենում մեծամասամբ միավանկ է: Երբեմն այն կրկնվում է, օրինակ՝ *har=har*-«խարխլել»: F₁-ով ներկայացված են այն ածանցները, որոնց քերականական իմաստը կամ շատ թույլ է գիտակցվում, կամ ընդհանրապես չի գիտակցվում: Այս խմբին պետք է դասել՝ -št-, -t⁵⁶⁹-, -ul- և -an- ածանցները (մանրամասն այս ածանցների մասին տես IV.4): F₂-ը ներկայացնում են բայի քերականական իմաստը փոխող ածանցները, որոնց միջոցով ուրարտերենում իրականացվում է բայի խոնարհումը (այս մասին մանրամասն տես VI.2): Ինչ վերաբերում է z-ով նշված հոդերին/մասնիկներին, ապա վերջիններս սերտորեն կապված են f₂-ի հետ: Մենք դրանք մանրամասն կդիտարկենք խոնարհման համակարգը քննարկելիս: Ընդհանուր առմամբ դրանք ցույց են տալիս գործողության օբյեկտի թիվը և դեմքը:

2. Բայի քերականական կարգը ուրարտերենում: Բայն ուրարտերենում ունի եղանակ, կերպ (*), սեռ (անցողական/անանցողական), ժամանակ, դեմք և թիվ: Մինչ այժմ հայտնի տեքստերում հստակ տարբերակվում են սահմանական, հրամայական և ստորադասական (անիրական) եղանակները: Ուրարտերենին հատուկ է երեք դեմք և երկու թիվ՝ եզակի և հոգնակի: Ուրարտերենում որոշ բայեր տարբերակում են ոչ միայն գործողության սուբյեկտի (ենթակայի), այլև, իրենց վերջին հավելված

⁵⁶⁸ Նոր շրջանում ուրարտերենի բային առավել մանրամասն և ամբողջական անդրադարձել են Գ.Մելիքիշվիլին [1964, էջ 45-58], Ի.Մեշչանինովը [1962], Ի.Գլյակոնովը [1971, էջ 113-138; 1979, էջ 67-74], Մ.Խաչիկյանը [1985, էջ 69-112] և Գ.Վիլինյը [2004, էջ 128-133]:

⁵⁶⁹ Մասնագիտական գրականությունում այս ածանցը տառադարձվում է d:

հատուկ հոդերի/մասնիկների (z) միջոցով, օբյեկտի թիվն ու դեմքը: Քերականական կարգերը մանրամասն կներկայացնենք խոնարհման համակարգը քննարկելիս:

VI.2 ԽՈՆ-ՀԱՐՈՒՄ

Ուրարտերենի խոնարհման համակարգը կքննարկենք ըստ առանձին եղանակների՝ մանրամասն անդրադառնալով յուրաքանչյուր եղանակին հատուկ բոլոր ձևերին: Ընդհանուր առմամբ, պայմանավորված մեզ հասած ուրարտական տեքստերի սահմանափակությամբ և կաղապարայնությամբ, ուրարտերենի խոնարհման համակարգը մեզ հայտնի է թերի վիճակով, իսկ եղած պատկերացումների մի մասի համար մասնագիտական գրականությունում առկա են տարածայնություններ՝ հատկապես ստորադասական (անիրական) եղանակի բայերի դեպքում:

VI.2.1 ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

1. Ներկա: Մասնագիտական գրականությունում որպես ներկա ժամանակի վկայություն սովորաբար նշվում է ale «ասում է (*)» (գրում՝ a-le-(e)) բայը⁵⁷⁰: Մակայն հայտնի չէ, թե որն է այստեղ հիմքը, որը վերջավորությունը⁵⁷¹, քացի այդ ոչ բոլոր ուրարտագետներն են այն համարում բայ⁵⁷²: Որոշ ուսումնասիրողներ բայի ներկա ժամանակի հնարավոր վկայություններ են համարում մի քանի այլ բայաձևեր ևս, ինչպես՝ *tiane* [ti=ya=nə] «այն ասում է(*)» և այլն: Մակայն այս բոլոր ձևերը հուսալի չեն, և մենք առայժմ ստիպված ենք փաստել, որ ուրարտական տեքստերում ներկա ժամանակի հավաստի վկայություններ չկան:

2. Անցյալ կատարյալ: Անցյալ կատարյալը ուրարտական տեքստերում առավել հաճախակի հանդիպող և լավ հայտնի ձևն է⁵⁷³: Անցյալ կատարյալին հատուկ է խոնարհման երկու տիպ: Առաջին տիպով խո-

⁵⁷⁰ Այն բազմիցս հանդիպում է ներածական բանաձևերում՝ «այսինչը/այնինչը ale ...», որին հետևում է տվյալ անձի անունից շարադրվող տեքստը:

⁵⁷¹ Ի.Մեշչանինովը հնարավոր է համարում, որ ale բառի տակ թարգմանված է ուրարտ, ar- «տալ» բայարմատը, իսկ բայական վերջավորությունն է -le-ն (ale < *ar=le)՝ զուգահեռ անցկացնելով *teli=e* բայաձևի հետ, որի բայարմատը մասնագիտական գրականությունում համարվում է *ter-* «դնել» բայը (*teli=e* < *ter=li=e) [1962, էջ 34, ծան. 28]:

⁵⁷² Այս մասին տես Գ.Меликишвили, 1964, էջ 47, ծան. 67:

⁵⁷³ Տես ծան. 568-ում նշված գրականությունը:

նարկվում են անանցողական, իսկ երկրորդով՝ անցողական րայերը: Իր հերթին, առաջին՝ անանցողական տիպը բաժանվում է երեք ենթատիպի (տե՛ս Աղյուսակ 8):

Աղյուսակ 8

Անցյալ կատարյալ ի I (անանցողական) խոնարհում

Դեմք	Ենթատիպեր					
	I		II		III	
	եզ.	հոգ.	եզ.	հոգ.	եզ.	հոգ.
1-ին	*-i=di	-	-a=di	-	-i=a=di	-
2-րդ	-	-	-	-	-	-
3-րդ	-i=be	-j=le(*)	-a=be	-a=le	-i=a=be	-i=a=le

Ինչպես երևում է աղյուսակից, I խոնարհման մեջ անցյալ կատարյալի վերջավորությունները հստակորեն բաժանվում են երկու մասի: Առաջին բաղադրիչը տարբերակվում է ըստ խոնարհման ենթատիպերի, մինչդեռ երկրորդը ընդհանուր է խոնարհման բոլոր ենթատիպերի համար և նշանառում է գործողության սուբյեկտի դեմքն ու թիվը⁵⁷⁴:

Ինչպես արդեն նշվեց, II տիպով խոնարհվում են միայն անցողական րայերը, րացառությամբ man- «լինել, մնալ» վիճակի րայի (տե՛ս ստորև՝ կետ 3): Անցյալ կատարյալի խոնարհման այս տիպում րայական վերջավորության առաջին բաղադրիչը u-ն է: Մասնագիտական գրականությունում այն համարվում է անցողականության ցուցիչ՝ ի հակադրություն -a-ի⁵⁷⁵: Ինչ վերաբերում է 3-րդ դեմքի հոգնակի թվի -tu՝ վերջավորությանը, ապա այն նույնպես պետք է րադղատել երկու մասի՝

⁵⁷⁴ Տեքստերում III ենթատիպի ձևերի փոխարեն երբեմն հանդես են գալիս անցողական րայեր (համեմայն դեպս՝ ձևով), ինչպես օրինակ՝ կսլ=i=a=di րայը, որը նույն համատեքստում հերթազայում է կսլ=u=be անցողական րային: Ըստ Գ. Մելիքիչվիլու՝ -ia-ով կազմված անանցողական րայերն ունեն ներգործական սեռի հատկանիշներ [1964, էջ 46-47]:

⁵⁷⁵ Ի. Դյակոնովը որոշ դեպքերում u-ի տակ տեսնում է [o] հնչյունը, որը նա համարում է անանցողականության ցուցիչ՝ ի հակադրություն u[u]-ի: (И. Дьяконов, 1979, էջ 68-70):

⁵⁷⁶ Մեզ առավել հավանական է թվում, որ ուրարտերենում հոգնակի սուբյեկտի ցուցիչը -t-ն է, և ոչ թե -it-ն, որի ձևը րադարձիչը, ինչպես որ կարծում են ոմանք, երբեմն սղվում է (տե՛ս ծան. 577): Այս -t-ն հավելվում է րայահիմքին՝ առաջացնելով -(v)-t- տեսքի վերջավորություններ:

գործողության սուբյեկտի երրորդ դեմքի հոգնակի թվի՝ -t- և անցողականության -u(-) ցուցիչների⁵⁷⁷:

Աղյուսակ 9

Անցյալ կատարյալ ի II (անցողական) խոնարհում

Թիվ	Սուբյեկտ		Օբյեկտ	
	Դեմք	եզ. թիվ	եզ. թիվ	հոգ. թիվ
եզակի	1-ին	-u=be	-	-u=ule
	2-րդ	-	-	-
	3-րդ	-u=(ne)	-	-u=ale
հոգնակի	1-ին	-u=še	-	-u=uše (*)
	2-րդ	-	-	-
	3-րդ	-(i)t=u	-	-(i)t=u=le

Մեկնաբանություններ Աղյուսակ 8-ին և Աղյուսակ 9-ին:

ա) Բայական վերջավորությունները այստեղ տրված են ըստ գրի: Դրանց հմարավոր հնչողության հարցին կանոնադառնաճք հայերենի համապատասխան ձևերի հետ համեմատելիս (VI.2.5):

բ) Խոնարհման II տիպում զանազանվում են ոչ միայն սուբյեկտի, այլև օբյեկտի թիվը և դեմքը: Ինչպես երևում է Աղյուսակ 9-ից, բոլոր դեմքերում հոգնակի օբյեկտի ցուցիչն է -(a/u)le-ն (-ule և -ale՝ համապատասխանաբար 1-ին և 3-րդ դեմքի եզակի թվի սուբյեկտի դեպքում և -le՝ 3-րդ դեմքի հոգնակի սուբյեկտի դեպքում), որը հավելվում է համապատասխան րայաձևի վերջին: Եզակի օբյեկտի ցուցիչը -ne-ն է, որը գործածվում է միայն 3-րդ դեմքի եզ. թվի (սուբյեկտի) րայի դեպքում:

գ) 3-րդ դեմքում անցյալ կատարյալի վերջավորությանը հաճախ հավելվում է 1-ին դեմքի -me ստացական է և նախադասության մեջ «ինձ» նշանակությամբ: Այն շարժական է և նախադասության մեջ կարող է հավելվել ոչ միայն րային, այլև գոյականին կամ այլ անդամին: Նման դեպքերում րայի օբյեկտային մյուս ցուցիչներն ընկնում են (եթե

⁵⁷⁷ Մասնագիտական գրականությունում այդպիսի բաժանում չի կատարվում՝ համարելով, որ -itu-ն հավելվում է անցողականության -u- ցուցիչին, որը սակայն սղվում է -itu-ից առաջ (*-u-itu > -itu): Երբեմն նաև i-ի հետ միասին (*-u-itu > -tu): Որոշ դեպքերում, ընդհակառակը, սղվում է i-ն (*-u-itu > -utu), ընդ որում սղման պատկերը կախված է -u-ին նախորդող հնչյունից: Այս մասին մանրամասն տե՛ս, օրինակ, Г. Меликишвили, 1964, էջ 49:

այդպիսիք կան), ինչպես՝ (II խոնարհում) սժhan=u=me «(նա) կարգադրեց(°)-ինձ», ter=u=me «(նա) դրեց-ինձ», ar=t=u=me «(նա) տվեց-ինձ», (I խոնարհում) իaš=ia=l=me «(նրանք) լսեցին-ինձ» և այլն (տե՛ս նաև V.3 կետ 2):

դ) Հաճախ, չնայած նախադասությունում հոգնակի օրյեկտի առկայությանը, երկրորդ խոնարհման քայերն այն չեն զանազանում և դրվում են եզակի օրյեկտի համապատասխան ձևով: Օրինակ՝

- (270) ^{L0}A.SI^{MEŠ} (MEŠ - հոգ. քիվ) ú-e-li-du-bi (-u=be - եզ. քվի օրյեկտ) [KYKH 173 V₂₃].
- (271) ^mAr-gi-iš-ti-še a-li-e i-ku-ka-ni MU ši-iš-ti-ni ^{L0}A.SI^{MEŠ} (MEŠ - հոգ. քիվ) ú-e-li-du-ú-bi (-u=be - եզ. քվի օրյեկտ) [KYKH 174 A₄₁₆].
- (272) ^mAr-gi-iš-ti-še a-li-e ^mD[i]-i-a-ú-ḫi [š]i-šú-ḫa-ni du-ur-ba-bi ^{[L]0}ḫu-ra-a-di-ni-li (-ne=le - հոգ. քիվ) ú-e-li-du-bi (-u=be - եզ. քվի օրյեկտ) [KYKH 174 A₁₁₂]:
- Նմանապես երբեմն չի տարբերվում և սուրյեկտի քիվը, օրինակ՝
- (273) ^mIš-pu-ú-i-ni-še ^{md}Sar₅-du-ri-e-ḫi-ni-še ^mMe-nu-ú-a-še ^mI[š]-pu-ú-i-ni-ḫi-ni-še (N-še, N-še - հոգ. քիվ) i-ni-li KÁ za-a-du-ú-a-li (-u=ale - եզ. քվի սուրյեկտ) te-ru-ni (-u=ne - եզ. քվի սուրյեկտ) ar-di-še... [KYKH 38 I₁].
- (274) ^mIš-pu-ú-i-ni-še ^{md}Sar₅-du-ri-ḫi-ni-še ^mMe-nu-ú-a-še ^mIš-pu-ú-i-ni-[ḫi-ni-še] (N-še, N-še - հոգ. քիվ) ^{GIS}ul-di-e šú-ḫé te-ru-ni (-u=ne - եզ. քվի սուրյեկտ) ^dḫal-di-e ku-ú-e ^{GIS}ša-a-ri šú-ḫé te-ru-ni (-u=ne - եզ. քվի սուրյեկտ)... [KYKH 38 I₂₇] (հմմտ. հաջորդի հետ).
- (275) [^mIš-pu-ú-i-ni-še ^{md}Sar₅-du-ri-[ḫi-ni-še ^mMe-nu-ú-a-še] [^mIš-pu-ú-i-ni]-ḫi-ni-še (N-še, N-še - հոգ. քիվ) ^{GIS}ul-[di-e šú-ḫé te-er]-tú (-t=u - հոգ. քվի սուրյեկտ) [dḫal-di-e ku-ú-e ^{GIS}ša-ri-e [šú-ḫé te]-er-tú (-t=u - հոգ. քվի սուրյեկտ)... [KYKH 38 II₅₄] և այլն:

ե) II (անցողական) խոնարհման առաջին դեմքի հոգնակի սուրյեկտի համար ունենք միայն հետևյալ վկայությունը՝

- (276) ^{md}Sar₅-du-ri-ḫi-ni-še i-e-še ^mMe-nu-ú-a-še ^mIš-pu-ú-i-ni-ḫi-ni-še ^mI-nu-uš-pu-a-še ^mMe-nu-a-ḫi-ni-še (N-še, i-e-še N-še - հոգ. քիվ, I-ին դեմք) ^dḫal-di-e-i su-si ši-di-iš-tú-še (-u=še - հոգ. քվի սուրյեկտ, I-ին դեմք) ^dḫal-di-ni-li [KÁ-li(?) ba]-du-si-e ka-a-ni ^{URU}ṭu-uš-[pa pa-ta-ri]-e? ši-di-iš-tú-ú-še (-u=še - հոգ. քվի սուրյեկտ, I-ին դեմք) [KYKH 20 I-III₁]:

Ուշագրավ է, որ (276)-ում առկա եզակի քվի օրյեկտի համար (suse) ունենք -cú-še վերջավորությունը, իսկ հոգնակիի (^dḫaldi=i=ne=le [KÁ(?)])՝ -cú-ú-še: Սակայն մեկ օրինակի վրա հուսալի հետևություն անել հնարավոր չէ: Իրականում հավելյալ u-ն կարող է լինել ճայնավորի սովորական կրկնություն:

զ) I (անանցողական) խոնարհման I ենթատիպի ձևերից հուսալի վկայություններ ունենք եզակի առաջին դեմքի (-i=be) և քերևս հոգնակի երրորդ դեմքի (-i=le) համար միայն:

3. man- «լինել» քայի խոնարհումը: Այս քայի խոնարհումը անցյալ ժամանակում տարբերվում է մյուս քայերից: Գ.Մելիքիշվիլին⁵⁷⁸ այն համարում է անկանոն քայ, որի համար ուրարտական տեքստերում առկա է. manu - «եղել է»՝ 3-րդ դեմք, եզ. քիվ, անցյալ ժամանակ. manule - «եղել են»՝ 3-րդ դեմք, հոգ. քիվ, անցյալ ժամանակ. ui ... manure - «չի եղել, չկար եղած»՝ 3-րդ դեմքի եզ. քվի անցյալ ժամանակի արգելական. manule - «կլինի»՝ 3-րդ դեմքի եզ. քվի ապառնի ժամանակ. manine - «թող լինի»՝ 3-րդ դեմք, եզ. քիվ, հրամայական եղանակ և այլ ձևերը: Ի.Դյակոնովը ենթադրում է, որ man - «լինել» քայը, չլինելով անցողական քայ, խոնարհվում է II՝ անցողական քայերին հատուկ խոնարհման տիպով: Նա, manu քայաձևում, u-ն [o] հնչմամբ համարում է անանցողականության/վիճակի ցուցիչ, որը գրում չի տարբերվում անցողականության u ցուցիչից⁵⁷⁹ (այս քայի մասին տե՛ս նաև VI.2.5 կետ 2բ):

⁵⁷⁸ Г.Меликишвили, 1964, էջ 57-58:

⁵⁷⁹ Տե՛ս И.Дьяконов, 1979, էջ 68, ժամ. 96: Ըստ նրա՝ հնարավոր է, որ անանցողականության այս նույն ցուցիչն (o-ն) է առկա նաև պայմանական-ըզձական եղանակի և որոշ այլ քայաձևերում: Այս մասին տե՛ս նաև М.Хачикян, 1985, էջ 96-97:

VI.2.2 ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

1. Հրամայական եղանակի ներկա կամ բուն հրամայական: Մասնագիտական գրականությունում ուրարտերենի հրամայական եղանակի ներկայի ցուցիչներն են համարվում -e-ն և -i-ն, որոնք անմիջապես հավելվում են հիմքակազմ ձայնավորից զուրկ բայահիմքին: Մրանց միջև տարբերություն սովորաբար չի դրվում⁵⁸⁰: Հրամայական եղանակի բայերը թեև հաճախ չեն հանդիպում ուրարտական տեքստերում, սակայն շնորհիվ Կելիշի ներկեզվյա արձանագրությունում առկա a-lu-še a-i-[ni-e-i] [i-ni]-li du-li-i-e ti-i-ú-li-i-e ú-l[i-i] (հրամայական եղ.-ի բայ) [tú-ri-e] (հրամայական եղ.-ի բայ) - «ով որ կանի, կասի՝ զնա ոչնչացրու»⁵⁸¹ արտահայտության աստիճանական տարբերակի, հուսալիորեն առանձնացվում են: Ցավոք, հրամայականը վկայված է միայն եզակի թվում: Հոգնակիի որևիցե վկայություն ուրարտական տեքստերում կարծես թե չկա: Բացի վերոնշյալ ներկեզվյա արձանագրությունից հայտնի ul=i «զնա» և tur=e «ոչնչացրու» բայերից, ուրարտական տեքստերում հրամայական եղանակով ունենք ti=e «ասա», der=e «դիր», šat=e «բռնի(«)», ar=e «տուր», atb=e «գտիր(«)», us=e «(«)» և այլ վկայություններ: Ինչպես երևում է քերված բառերից, բոլոր դեպքերում հրամայականի վերջավորությունը -e-ն է: Բացառություն է կազմում միայն ul-i «զնա» բայը, որի համար ունենք -i: Եթե նկատի առնենք այն հանգամանքը, որ e-ով վկայվածները բոլորը միայն անցողական բայեր են, իսկ i-ով վկայված միակ բառը անանցողական է, ապա ստացվում է, որ -i-ն հատուկ է միայն անանցողական բայերին (°): (Այս հարցին հնարավոր կլինեք առավել հստակ պատասխանել, եթե ունենայինք հրամայական եղանակով դրված անանցողական բայերի այլ վկայություններ ևս):

Աղյուսակ 10

Հրամայական եղանակի ներկայի խոնարհման աղյուսակ

Դ-ներ	Անցողական		Անանցողական(°)	
	եզ. թիվ	հոգ. թիվ	եզ. թիվ	հոգ. թիվ
2-րդ	-e	-	-i	-

Մեկնաբանություններ Աղյուսակ 10-ին:

ա) Հրամայական եղանակի ներկայի վերջավորությունները այստեղ տրված են ըստ գրի: E-ն հնարավոր է արտասանել ինչպես [e], այնպես էլ [ə] կամ ø: Ինչ վերաբերում է i-ին, ապա այն, ըստ երևույթին, պետք է արտասանել [i] կամ [i] (գրում միշտ առկա է ú-li-i-i՝ կրկնակի i-ով): Մրանց հնչողության հարցին կանդրադառնանք մակ հայերենի համապատասխան ձևերի հետ համեմատելիս (VI.2.5 կետ 2գ):

բ) Աղյուսակում i-ն ներկայացրել ենք որպես անանցողական բայերի հրամայականի վերջավորություն, թեև ինչպես նշվեց վերը, մնացած տեքստերում հիմնված է ընդամենը մեկ օրինակի վրա և հետևաբար հուսալի չէ:

2. Հրամայական եղանակի այլ ձևեր: Մասնագիտական գրականությունում մեզ ուրարտական տեքստերում, բացի հրամայական եղանակից հատուկ երկրորդ դեմքից, նշվում է մակ երրորդ դեմքի առկայությունը: Սակայն այն ունի ակնհայտ ըղձական-պատվիրական երանգ և համարվում է յուսիվ⁵⁸²: Մենք դրան կանդրադառնանք ստորադասական (անիրական) եղանակի բայերի շարքում:

VI.2.3 ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ (ԱՆԻՐԱԿԱՆ) ԵՂԱՆԱԿ

1. Ստորադասական (անիրական) եղանակի բայերը մասնագիտական գրականությունում: Եթե ուրարտական բայի սահմանական և հրամայական եղանակի հարցում մասնագիտական գրականության մեջ տարածայնություններ գրեթե չկան, ապա նույնը չի կարելի ասել ստորադասական (անիրական) եղանակի ձևերի մասին⁵⁸³: Նման տարա-

⁵⁸⁰ St'ü, օրինակ, Г.Меликишвили, 1964, էջ 53-54; G.Wilhelm, 2004, էջ 131 և այլն:
⁵⁸¹ Այս կադապարային արձանագրությունը բազմիցս վկայված է մակ այլ արձանագրություններում, ինչը հնարավորություն է տալիս վերականգնել Կելիշի արձանագրության ուրարտական տարբերակի համապատասխան վնասված հատվածները:

⁵⁸² St'ü M.Хачикян, 1985, էջ 107, 110; G.Wilhelm, 2004, էջ 131 և այլն:
⁵⁸³ Ուրարտերենի բայական այդ ձևերի մասին առավել մանրամասն տե՛ս I.Diakonoff, 1971, էջ 113-138; 1979, էջ 67-74; M.Хачикян, 1985, էջ 104-112; G.Wilhelm, 2004, էջ 131-134, ավանդական ուղղության ներկայացուցիչներից՝ Г.Меликишвили, 1964, էջ 51-58; И.Мещанинов, 1962, էջ 33-53 և այլն:

ձայնությունը պատահական չէ, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ բայական այս ձևերից շատերը ուրարտական տեքստերում վկայված են միայն որոշակի կադասայրային արտահայտություններում, իսկ որոշները վկայված են դեռևս անհասկանալի մնացած արտահայտություններում: Մյուս կողմից՝ այն արտահայտությունները, որոնք ունեն նման վկայություններ, հաճախ հնարավոր է լինում բարգմանել միայն ընդհանուր՝ մոտավոր իմաստով, ինչը նույնպես խոչընդոտում է նշված բայական ձևերի միարժեք մեկնարանմանը: Օրինակ. «... GUD ^dgal-di-e ur-bu-ú-li-ne» հատվածը Գ.Մելիքիշվիլին բարգմանում է «ցուլ Խալդիին թող զոհաբերվի», իսկ Ի.Դյակոնովը՝ «(նա) ցուլ Խալդիին թող զոհաբերի»: Համատեքստում երկու բարգմանություններն էլ ընդունելի են: Բայական այս ձևերի խոնարհման հստակ պատկերի ստացմանը խոչընդոտում է նաև այն հանգամանքը, որ վերջիններս վկայված են միայն երրորդ դեմքով: Այս բայաձևերի խոնարհման ընդհանուր պատկերը (աղյուսակի տեսքով), հիմնված մասնագիտական գրականությունում եղած տվյալների վրա, տե՛ս հավելված I-ում:

2. Ստորադասական (անիրական) բայերին վերաբերող որոշ պարզաբանումներ: Այժմ առավել հանգամանալի անդրադառնանք ուրարտական տեքստերում ստորադասական (անիրական) եղանակի բայական ձևերի վկայություններին և ֆիքսելով նկատվող օրինաչափությունները՝ փորձենք հնարավորինս դասակարգել դրանք ըստ ձևի և համատեքստի (հավանական իմաստի):

2.1 -i=ni=ne, -u=ti=ne=ne, -i=ti=ne: Մասնագիտական գրականությունում⁵⁸⁴ -i=ni=ne-ն համարվում է հրամայական եղանակի 3-րդ դեմքի (յուսիվ՝ ըստ Մ.Խաչիկյանի և Գ.Վիլիելմի) բայական վերջավորություն, ինչպես՝ tur(u)=inine «թող ոչնչացնի (նա)», man=ine <*man(u)=ine <*man(u)=inine «թող լինի» և այլն: Ըստ Գ.Մելիքիշվիլու՝ հավելվում է բայահիմքին՝ անցողականության և ցուցիչի անկմամբ: Ի.Դյակոնովը և Մ.Խաչիկյանը այն վերլուծում են =i/e=ne=(nə) ձևով, որտեղ (ըստ նրանց) =i/e=-ն հրամայական եղանակի ցուցիչն է, իսկ վերջին =nə-ն՝ եզակի թվի օրյեկտի: Գ.Վիլիելմը սույն վերջավորությունը վերլուծում է =in=i=nə ձևով,

⁵⁸⁴ Դիտարկվող բայաձևերի համար տե՛ս Գ.Меликишвили, 1964, էջ 53-54; I. Diakonoff, 1971, աղ. 8, էջ 136-137; М.Хачикян, 1985, աղ. II, էջ 107, 110; G. Wilhelm, 2004, էջ 131:

որտեղ =in=-ը նա համարում է յուսիվի բուն ցուցիչ, իսկ =nə-ն՝ եզակի թվի օրյեկտի, որը =i= ձայնավորի միջոցով հավելվում է յուսիվի ցուցիչն: Ըստ նրա՝ հանձնի man=nə «կարող է լինել» բայի հնարավոր է, որ գործ ունենք անանցողական բայերի յուսիվի ինչ-որ մի ձևի հետ: Մասնագետները ուրարտերենի հրամայական եղանակի 3-րդ դեմքի (յուսիվի) հոգնակի թվի վերջավորությունն են համարում -u=ti=ne=-ne-ն (Գ.Մելիքիշվիլի, Ի.Դյակոնով, Մ.Խաչիկյան⁵⁸⁵, Գ.Վիլիելմ(“)) կամ =(i)ti=ne-ն (Ա.Գյոնգե [Revue Hittite et Asianique (Paris), 22, էջ 195-198], Գ.Վիլիելմ), որոնցում -(i)t- մասնիկը, ըստ ընդունված կարծիքի, արտահայտում է գործողության սուբյեկտի հոգնակիությունը: Հարկ է նշել, որ -u=ti=ne=ne տարբերակի համար բերվող միակ օրինակը tur=utinene «թող ոչնչացնեն (նրանք)» բայն է: Ընդ որում, ենթադրվում է, որ եթե սույն բայը կանգնած է գործողության սուբյեկտից (ենթակայից) առաջ, ապա դրվում է եզակի թվով՝ անկախ սուբյեկտի թվից: Այն վկայված է հետևյալ արտահայտությունում.

(277) ^dgal-di-še ... qi-ú-ra-a-še DINGIR^{MEŠ}-še [tú]-ru-ti-ni-e-ni ma-a-ni e-`a [z]i-li-bi qi-ú-ra-a-ni e-di-ni - «Խալդը, ... գետնի աստվածները թող ոչնչացնեն իրեն և ցեղը գետնի վրա» [KYKH40.с 9-12, 41.с.с8-11] :

Բերված օրինակից երևում է, որ բայի սկզբամասը վնասված է, այն վերականգնվում է՝ հիմնվելով նույն բայի եզակիի (tur=une/ine «թող ոչնչացնի (նա)») վկայության վրա (տե՛ս (325)-ը), որտեղ թեև գործողության սուբյեկտը նույնպես հոգնակի է, սակայն բայը հանդես է գալիս եզակիով, ինչպես ենթադրվում է նախադաս գործածվելու պատճառով (տե՛ս վերը): Հարկ ենք համարում նշել, որ նման եզրահանգումը հուսալի չէ՝ (277)-ում բայի թերի վկայության և համեմատվող նախադասությունների միջև առկա որոշակի տարբերությունների պատճառով: Ինչ վերաբերում է =(i)ti=ne-ին, ապա սրանից ունենք՝ ha=i=ti=ne, ašha=št=i=ti=ne և այլ վկայությունները: Մյուս կողմից՝ ուշագրավ է նաև, որ ուրարտական տեքստերի որոշ դրվագներում man- «լինել, մնալ» բայը մերթ հանդես է գալիս man=ine, մերթ man=uline ձևով: Գ.Մելիքիշվիլին այս =uline-ն համարում է այս նույն բայաձևի (հրա-

⁵⁸⁵ Ի.Դյակոնովը և Մ.Խաչիկյանը այն վերլուծում են -(i/e>)u=(i)t(u/o>)ə-ne=nə ձևով, որտեղ -t-ն համարում են հոգնակիության, -i/e-ն՝ հրամայական եղանակի, իսկ -nə-ն՝ 3-րդ դեմքի եզակի թվի օրյեկտի ցուցիչներ:

մայականի 3-րդ դեմքի) կրավորական սեռի, իսկ Ի.Դ-յակոնովը, Մ.Խաչիկյանը և Գ.Վիլիելմը՝ ըղձական եղանակի եզակի թվի վերջավորություն (մանրամասն տե՛ս ստորև):

2.2 -u=li=ne / -u=le / -i=ne: Ինչպես արդեն նշվեց (տե՛ս վերը), Գ.Մելիքիշվիլին -u=li=ne-ն համարում է հրամայական եղանակի 3-րդ դեմքի կրավորական սեռի բայական վերջավորություն, իսկ Ի.Դ-յակոնովը, Մ.Խաչիկյանը և Գ.Վիլիելմը՝ ըղձական եղանակի, որտեղ -ne-ն համարվում է 3-րդ դեմքի եզ. թվի օբյեկտի ցուցիչ, որը կարող է և բացակայել: Նման պնդման համար հիմք է ծառայում ուրարտական տեքստերում (միևնույն համատեքստում) երբեմն մակ գուգահեռ տեքստերում, հանդիպող -u=li=ne/-u=le հերթագայումը: Ինչպես օրինակ՝

(278) UDU.MÁŠ.TUR ^dHal-di-e ni-ip-si-du-li-ni - «ուլ Խաղիին թող մորթվի» [KYKH 36 I₄] և

(279) MÁŠ.TUR ^dHal-di-e ni-ip-si-du-li - «ուլ Խաղիին թող մորթվի» [KYKH 424 7]:

Սակայն ուրարտական տեքստերում ունենք մակ -uli=ne/-i=ni հերթագայում, ինչպես՝

(280) ...e-`a NU-ni ^d[Hal-di-ni ar-a-ni] [m]a-a-nu-li-ni e-['a ^dNa-la-i-ni] - [KYKH 40 I₂₂₋₂₃ II₄₅₋₄₆] և

(281) e-`a NU-ni ^dHal-di-ni ar-a-ni ma-a-ni-ni e-`a ^dÚ-a-ni - [KYKH 42 I₂₀₋₂₁, II₂₀₋₂₁].

(282) ^dHal-di-i-ni bi-e-di-(i)-ni ^dHal-di-(i)-na-a-ni KÁ bi-e-di-ni ma-a-ni-ni ul-gu-še... - «խալղիի կողմից, Խաղիի դռների կողմից թող լինի կյանք...» [KYKH 28 I₁₀ II₁₀, III₁₀...] և

(283) ^dHal-di-ni be-di-ni ^dHal-di-na-ni KÁ be-di-ni ^dÚ-a-ni/^dNa-la-i-ni be-di-ni ma-nu-li-ni ul-gu-ú-še... - «Խալղիի կողմից, Խաղիի դռների կողմից, Ուանիի /Նալահինիի կողմից թող լինի կյանք ...» [KYKH 20 a1₁₄ a2₁₄ 40 I₁₅ II₁₅...] և այլն:

Նման հերթագայումները վկայում են այդ երկու բայական ձևերի իմաստով մոտ լինելը: Չի բացառվում, որ իրականում գործ ունենք միևնույն ձևի հետ: Այդ դեպքում ընդհանուր վերջավորությունը թերևս պետք է համարել (=ul)=i=(ne)-ն, որտեղ իրական ցուցիչը =i(=)-ն է: Իսկ

-ul-ի տակ հնարավոր է տեսնել -ul-[-or-] բայածանցը, որը տվյալ դեպքում կարող է և ունենալ ինչ-որ քերականական արժեք, թեև պարտադիր չէ⁵⁸⁶: Առայժմ դժվար է ասել արդյո՞ք սույն բայածևի հետ կապ ունի -ule (e) վերջավորությունը, որը հիմնականում հանդիպում է aše «երբ(») մակբայով կազմված նախադասություններում, ինչպես՝ a-še ^{GIS}ul-di me-šú-li... - «երբ խաղողի որթը me-šú-li» [KYKH 38 I_{29,59}], a-še GUD/ni-qa-li ši-i-du-li... - «երբ ցուլը⁵⁸⁷/ni-qa-li-ն կառուցվի(»)» [KYKH 122_{2,5}], a-še ^{GIS}ul-di te-šú-li-e... - «երբ խաղողի որթը te-šú-li-e ...» [KYKH 82₂₃] և այլն: Գ.Մելիքիշվիլին այն համարում է ստորադասական եղանակի ապառնու ձև՝ նույնացնելով -u=li=(i) e-ի հետ (տե՛ս ստորև): Ի.Դ-յակոնովը, Մ.Խաչիկյանը և Գ.Վիլիելմը այս երկու ձևերն էլ համարում են ըղձականի վերջավորություններ (-u=le/-u=li=ne) (տե՛ս Հավելված I):

2.3 -i=la=ni/e=(ne), -i=la=ti=ne: Գ.Մելիքիշվիլին ենթադրում է, որ այս վերջավորություններով համապատասխանաբար կազմվում են ստորադասական-ըղձական եղանակի ապառնի ժամանակի ներգ. սեռի 3-րդ դեմքի եզակի և հոգնակի թվի բայեր: Ի.Դ-յակոնովը և Մ.Խաչիկյանը համարում են մպատակ արտահայտող եզակի և հոգնակի թվի բայական ցուցիչներ (տե՛ս Հավելված I): -i=la=ne-ով կազմված բայածևերի քերականական արժեքի որոշման համար մասնագիտական գրականությունում, որպես կանոն, քերվում է՝ a-le me-e-še e-si-(ri!)-i-[a?] [^mDi]-a-ú-hi-nè-di te-ru-be MU.MU-ne ar-di-la-ne - «հապա/մակ հարկ տեղում(») Դիաուական ցեղի վրա (ես) դրեցի, որպեսզի (նրանք) տան ամեն տարի» արտահայտությունը⁵⁸⁸, որի թարգմանությունը սակայն հուսալի չէ: Վստահություն չկա մակ սրա հոգնակի ձևը համարվող -i=la=ti=ne վերջավորության հարցում: Համենայն դեպս, եղած սակավաթիվ վկայություն-

⁵⁸⁶ Հմմտ., օրինակ, սահմանական եղանակի՝ ter=ul-/ter- «դնել, տեղադրել», suu=t-ul-/suu=t- «ձգել, շարտել», wal=t-ul-/wal=t- «հաղթահարել, գցել, գլ(տ)որել» և այլ բայածևերի հետ, որոնցում -ul-ը քերականական որևէ արժեք չունի, կամ շատ թույլ է և տեքստերում չի գրացվում:

⁵⁸⁷ Հավանաբար այստեղ խոսքը ցույի ինչ-որ արձանի մասին է, հակառակ դեպքում պետք է ենթադրել, որ šid- բայը ունի մակ այլ՝ երկրորդ իմաստ կամ գործ ունենք մեկ այլ համանման (նույն ձևով գրվող) բայի հետ:

⁵⁸⁸ Տե՛ս, օրինակ, Г.Меликишвили, 1964, էջ 55-56; I.Diakonoff, 1971, էջ 136; М.Хачикян, 1985, էջ 111:

ներից ոչինչ չի երևում: Բացառված չէ, որ $-i=la=ti=ne$ -ն պետք է համեմատել ուրարտական տեքստերում հանդիպող $-i=ti=ne$ բայական վերջավորության հետ (ըստ Ա.Գյոտցեի և Գ.Վիլիելմի՝ երամայականի 3-րդ դեմքի/յուսիսի հոգ. քվի վերջավորություն. տե՛ս վերը), իսկ $-la$ -ի տակ կարելի է տեսնել բայածանց⁵⁸⁹: Այդ դեպքում հնարավոր է, որ նույն բայածանցն է առկա նաև $-i=la=ni/e=(ne)$ վերջավորության մեջ, որը կարելի է համեմատել երամայականի 3-րդ դեմքի (յուսիսի) ցուցիչ համարվող $-i=ni/e=(ne)$ -ի հետ: Եթե դա իրոք այդպես է, ապա ուրարտերենում հնարավոր կլինի առանձնացնել $-(la)=ni/e=(ne)$ (եգ. քիվ) / $-(la)-ti=ni/e=(ne)$ (հոգ. քիվ) բայական վերջավորությունները, որոնք ըստ եղած վկայությունների, ընդհանուր առմամբ, պետք է ունենան ստորադասական ապառնու իմաստ (3-րդ դեմք):

2.4 $-u=li=e, -u=li=ale$: Այս վերջավորություններով կազմված բայերը հանդիպում են միայն $alu=še$ (երգ. հոլով $*alu$ -ից) «ով որ, ինչ-որ մեկը» դերանունով կազմվող նախադասություններում, օրինակ՝

(284) $a-lu-še i-ni DUB-te t\acute{u}-li-i-e a-lu-še pi-t\acute{u}-li-i-e a-lu-še e-si-i-ni su-u-i-du-li a-lu-še KI^{TIM} me-pu-li-i-e a-lu-še A^{MES} hu-šu-li-e a-lu-še \acute{u}-li-še ti-\acute{u}-li-e i-e-še za-du-\acute{u}-bi$ - «ով այս գիրը ոչնչացնի, ով ջարդի, ով տեղից շարտի, ով գետինը քաղի, ով ջուրը քափի, ով՝ ուրիշը ասի՝ նս արեցի...» [KYKH 421₃₂₋₃₆]:

Գ.Մելիքիշվիլին այն համարում է ստորադասական եղանակի ապառնու, Ի.Դյակոնովը՝ ըղձական-պայմանականի, իսկ Գ.Վիլիելմը՝ պայմանական եղանակի բայածև (տե՛ս Հավելված I): Եթե գործողության օրյեկտը հոգնակի է, ապա ունենք $-u=li=ale$ վերջավորություն, որը, սակայն, վկայված է մեկ անգամ՝ $a-lu-še pa-ħa-n[i-li] iš-ti-ni-ni ši-\acute{u}-li-a-li a-lu-š[e ħu-l]i-a-li$ «ով կովերին այստեղից տանի, ով ոչնչացնի (*)...» արտահայտությունում, որը $pa-ħa-n[i-li]$ բառածևի վերականգնության պատճառով՝ այնքան էլ հուսալի չէ: Հմմտ., օրինակ, բազմիցս վկայված $\acute{u}-le-e/a-i-né-(e)-i i-né-(e)-li du-li-(i)-e$ կադապարային արտահայտության հետ, որտեղ նույնպես ունենք հոգ. քվով դրված օրյեկտ

⁵⁸⁹ Ի.Դյակոնովը նմանատիպ $-al-$ բայածանցի գոյությունը հնարավոր է համարում իր կողմից առանձնացվող կարողական-պարտավորական եղանակի (Debativ-Posibilitiv) բայական ձևերում [1971, աղ. 8]:

($ine=le$), մինչդեռ բայն ունի $-u=li=e$ վերջավորությունը: Այժմ անդրադառնանք $te=li=e$ և $tu=li=e$ բայերին, որոնց համար մասնագիտական գրականությունում ենթադրվում է $-rul-$ > $-l-$ անցումը ($teli=e < *ter=u=li=e, tuli=e < *tur=u=li=e$), ինչը հակադրվում է $ur=u=li=e$ բայական ձևին (վկայված է $a-[l]u-še ħa-\acute{u}-li-e \acute{u}-ni \acute{u}-ru-li-e$ [KYKH 273₁₀] արտահայտությունում), որի փոխարեն պետք է լիներ $*uli=e < ur=u=li=e$, եթե, իհարկե, ուրարտերենում առկա է վերոհիշյալ անցումը⁵⁹⁰ (տե՛ս II.3 կետ 2բ):

2.5 $-(ul)=a=la=ne$: Այս վերջավորությամբ բայածևերը վկայված են միայն՝ $...ú-i/te a-i-še-i$ (LUGAL^{MES}-še) $ħa-ıa-la-a-ni/za-da-la-ni$ - «...երբևիցե (արքաները) չէին տիրել/կառուցել» [KYKH 148₁₇, 149₁₅, 241C₂₇, 427a₂], $\acute{u}-i-e a-i-še-e-i a-ni-e-i qa-ab-qa-ar-š\acute{u}-la-la-ni$ - «...ոչ ոք երբևիցե չէր տիրել» [KYKH 47₁₀, 52₃] արտահայտություններում: Այս բայածևերը, փաստորեն, բոլոր դեպքերում հանդես են գալիս ui «ոչ» ժխտական մասնիկի հարադրմամբ: Ի.Դյակոնովը և Մ.Խաչիկյանը $-(ul)alane$ -ն վերլուծում են $-(ul)=al=a=ne$ [$-(ol)=al=ay=n\acute{e}$] ձևով՝ այն դիտարկելով կարողական-պարտավորական (debative-possibilitive) եղանակի բայական վերջավորություն, որտեղ [=ay=]-ն բուն ցուցիչն է, որին հավելվում է եզակի օրյեկտի [=n\acute{e}] ցուցիչը: Իսկ $=ul=$ և $=al=$ բաղադրիչները նրանք համարում են բայածանցներ⁵⁹¹: Գ.Վիլիելմը այս վերջավորությամբ բայերը դասում է ոչ հստակ վկայված կամ դժվար ըմբռնելի բայածևերի շարքին⁵⁹², իսկ Գ.Մելիքիշվիլին դրանց մեջ տեսնում է երկու առանձին բայածևեր՝ $-alane$ (անցյալ ժամանակի ներգ. սեռի ստորադասական՝ անցողականության $-u-$ ցուցիչի անկումով) և $-u=lalane$ (ներգ. սեռի հարակատար) վերջավորություններով⁵⁹³: Սակայն ինչպես երևում է քերված օրինակներից (տե՛ս վերը), որտեղ նշված բայածևերը փաստորեն վկայված են միևնույն համատեքստում, դա քիչ հավանական է: Բացի այդ, ուրարտերենում $-ul-$ բայածանցը հստակ երևում է այլ բայածևերում ևս (տե՛ս IV.4 կետ 1.4):

⁵⁹⁰ Գ.Մելիքիշվիլին այս հանգամանքը բացատրում է $ur(u)-$ բայածևի միավանկությամբ [1964, էջ 27]:
⁵⁹¹ I.Diakonoff, 1971, էջ 134-135, աղ. 8; М.Хачикян, 1985, էջ 107, աղ 11, 111:
⁵⁹² G.Wilhelm, 2004, էջ 133:
⁵⁹³ Г.Меликишвили, 1964, էջ 56, 58;

2.6 -ia=ne: Ի.Գյակոնովը և Մ.Խաչիկյանը ([-eya=nə] վերլուծմամբ) համարում են ցանկալիություն, մտադրություն արտահայտող բայական վերջավորություն (desiderative), որտեղ =ne-ն եզակի օրյեկտի ցուցիչն է⁵⁹⁴: Իսկ որպես այս նույն բայածևի օրյեկտային ցուցիչը գուրկ տարրերակ, նրանք նշում են [-eyə]-ն: Ասենք, որ ուրարտական տեքստերում սույն բայածևը վկայված է միայն mi «մի» կամ ui «ույ» ժխտական մասնիկի հարադրմամբ (տե՛ս նաև նախորդը), ինչպես՝

- (285) me-i a-še-e-i pi4-ur-ta-a-ni Կա-i-di-a-ni [KYKH 237₅].
- (286) me-i a-i-še-e-i e-di-ni su-ṭi5-a-ni me-i i-bi-ri-ia-ni me-i gi-e-i i-na-a-ni ba-ú-ši-na-a-ni še-pu-ia-ar-di-a-ni [Ay-susi VI₃ (Ayanis I)].
- (287) a-lu-še ú-i-e šú-Կի ba-aṭ-qi-i-a-ni [KYKH 478₆].
- (288) me-ku ú-i⁵⁹⁵ ... qi-ú-ra-a-e-di ku-lú-di-i-[a-ni?] [KYKH 30yp.36,41] և այլն:

Գ.Մելիքիշվիլին՝ Կա-i-di-a-ni, še-pu-ia-ar-di-a-ni, ku-lú-di-i-[a-ni?] և այլ նմանատիպ բառերում առանձնացնում է -diani բայական վերջավորությունը, որը, ըստ նրա, համընդ է գալիս mi «մի» ժխտական մասնիկի հետ և որը նա համարում է արգելական-հրամայականի ձև: Գ.Մելիքիշվիլին սրա հոգնակի ձևն է համարում -etuni-ն, որը նա տեսնում է ku-ú-li-(e)-tú-ni բայում⁵⁹⁶:

VI.2.4 ԲԱՅԱԿԱՆ ԱՅԼ ՀՆԱՐԱՎՈՐ ՉԵՎԵՐ

Վերջերս հայտնաբերված Գյոլվեյքի արձանագրության

- (289) a-lu-uš-me šú-i-ni e-si-i-ni mu-ú-ši ú-e-še-la-a-še⁵⁹⁷ ú-e-ši(-)i-gi a-lu-uš-me ṭu-bar-du-

⁵⁹⁴ I.Diakonoff, 1971, էջ 134-135, աղ. 8; 1979, էջ 73; М.Хачикян, 1985, էջ 107, աղ 11, 111:

⁵⁹⁵ Սովորաբար ընթերցվում է «me ku-ú-i» ձևով: Մեզ առավել հավանական է թվում ընթերցված ընթերցումը:

⁵⁹⁶ Г.Меликишвили, 1964, էջ 55:

⁵⁹⁷ Իրականում հնարավոր է, որ ú-e-še-la-a-še-ն պետք է տարանջատել երկու մասի՝ ú-e-še, la-a-še: Այդ դեպքում ú-e-še-ն ակնհայտորեն պետք է կապել նույն

ni ú-bar-du-gi a-lu-uš-me LUGÁL-tú-Կи DAN-NU a-ru-ni ... [Van recto₆ (SMEA 44/1, 2001, էջ 112-143)]

հատվածի դիմաց այլ նմանատիպ արձանագրությունների համապատասխան զուգահեռ մասերում ունենք.

- (290) a-lu-uš-me šú-i-ni e-si-i-ni mu-ú-ši ú-e-še-la-a-še ú-e-ši[xx] a-lu-uš-me ṭu-bar-du-ni-(e) ú-bar-(a)-du-ia-a-li a-lu-uš-me LUGÁL-tú-Կи tar-a-gi a-ru-ni ... [KYKH 406_{п.с.18-24}, 407_{п.с.15-18}]:

Արդյունքում ստանում ենք ubardu=ge/ubardu=ı=ale հերթագայում: -Ge-ն (վաղ շրջանում՝ -(i)e) ուրարտերենում վկայված է կամ որպես տրական հոլովի վերջավորություն, կամ որպես ածականակերտ/դերբայակերտ ածանց (տե՛ս V.2.6 և VI.3 կետ 2.2): Նկատի ունենալով, որ ubardu-ից ուրարտերենում ունենք ubardu=ṭ- «երամայել(»), կարգադրել(«)» բայը, առավել հավանական է, որ այս ge-ն այստեղ դերբայական կամ բայական ածանց է: Ինչ վերաբերում է -ı=ale-ին, ապա այն համընկնում է ամանցողական բայերի անցյալ կատարյալի 3-րդ դեմքի հոգնակի թվի վերջավորության հետ (տե՛ս VI.2.1 կետ 2): Ն.Հարությունյանը, նմանապես նկատել տալով այդ հանգամանքը և ú-bar-(a)-du-ia-a-le-ն համեմատելով ubardu=ṭ-բայի հետ, այնուամենայնիվ այն համարում է գոյական՝ դրված հոգնակի թվով՝ «երամաններ(», կարգադրություններ(«)» նշանակությամբ⁵⁹⁸: Սակայն վերոնշյալ նորահայտ արձանագրությունում ubar(a)du=ı=ale-ի փոխարեն ubardu=ge-ի առկայությունը ստիպում է մեզ մտածել, որ առավել հավանական է ubar(a)du=ı=ale-ի բայական/դերբայական ձև լինելը: Մ.Խաչիկյանը⁵⁹⁹ այս -ge-ի մեջ տեսնում է 3-րդ դեմքի եզ. թվի սուբյեկտային ցուցիչ (էրգատիվ շարքի), որի ձևույթը նա համարում է (y)e/(y)a-ն՝ համապատասխանաբար անշեշտ և շեշտակիր դիրքերի համար, որը կարող է հավելվել ինչպես անմիջապես

դրվագում վկայված ueši- բայածևի հետ, որի իմաստը առայժմ մեզ մնում է անհասկանալի: Ե.Գրեկյանն առաջարկում է այն բարգամանել «իշխել, տիրել» [ՊԲՀ, 2004, 1, էջ 231-232]:

⁵⁹⁸ Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 470: Այդ դեպքում մի գուցե -iale-ի տակ պետք է տեսնել հայերենի -եար հավաքական-հոգնակիակերտ մասնիկը:

⁵⁹⁹ Մ.Խաչիկյան, Մերձ. 2005, XXIV, էջ 473-476:

բայափոխման, այնպես էլ անցողականության ցուցիչին: Համապատասխանաբար, նա (289)-ում *ú-e-ši-i-ge* բայաձևի մեջ տեսնում է ներկա ժամանակի բայ՝ կազմված *ueši-* բայափոխից՝ վերոնշյալ *-(y)e* վերջավորությամբ, իսկ *ú-bar-du-ge* և *ar-u-né* ձևերի մեջ անցյալ կատարյալ ժամանակի/կերպի բայեր, որոնք նա վերլուծում է *ubard=o=ye* և *ar=o=Ø=ne*՝ վերջին բայի մեջ տեսնելով նույն բայական վերջավորության *=Ø=*-ով ենթատարբերակը, իսկ *ú-bar-du-ia-le-ն* նա վերլուծում է *ubard=o=ia=lə* ձևով՝ *-lə*-ի մեջ տեսնելով հոգնակի օրյեկտի ցուցիչ: Ըստ այդմ, վերոնշյալ հատվածը թարգմանում է «որը-ինձ ... իշխում է(°), որը-ինձ հզորություն(°)/ամրություն(°) հաղորդեց/հանձնեց(°), որը-ինձ հզոր արքայություն տվեց»: Չբացանելով նման մոտեցման ճշմարտացիությունը՝ այն մեզ, այնուհանդերձ, հուսալի չի թվում տարբեր պատճառներով: Մասնավորապես հասկանալի չէ, թե նախադասության ի՞նչ հոգնակի օրյեկտին է վերաբերում *-lə* մասնիկը (տե՛ս վերը): Ինչ վերաբերում է *ú-bar-du-ge/ú-bar-du-ia-le* բայաձևերին, ապա առավել հավանական է, որ դրանց մեջ բայափոխը պետք է համարել *ubardu=ն* (հմմտ. նույն արմատից կազմված *ubardu=տ(u)* - բայը և՛ *tu-bar-du-né* [*տ=ub=ardu=ն*]) «անօրեն, անիշխան»⁶⁰⁰, *a-ni-ia-ar-du-(né)* [*an=i=ardu=(ն)*]

⁶⁰⁰ Տեքստում նախապես խոսվում է Ռուսա արքայի՝ Խալդի աստծո ծանան/ստրուկը լինելու մասին, այդ պատճառով մեզ թվում է, որ այնուհետև տեքստում խոսվում է այն բոլոր բարենաստությունների մասին, որ ինքը չունենալով ստացել է Խալդիի կողմից՝ ընդգծելով, թե հատկապես ումից է նա ստացել զանի և մյուս բարենաստությունները: Ըստ իս՝ *tu-bar-du-[տ=up=ardu=-]* և *ú-bar-du-[up=ardu=-]* բայա(փոխ)երը ուրարտերենում ծագում են միևնույն *ardu-* «կարգ, ձև, օրենք և այլն» արմատից՝ *տ=* (հայ. տ-) և *(=)up=* (հայ. ու-ու-) նախածանցներով և համապատասխանաբար մտավորապես պետք է մշակակեն «անարդար, անօրեն, անկարգ, անիշխան և այլն» և «արդարացի, օրինական, կարգավորյալ»: Ըստ այդմ և ըստ մեզ, նախադասության այս հատվածը պետք է թարգմանել «(նրա) ով որ ինձ՝ անարդարին/անօրենին (տրակ. հոլով (°)) արդարացրեց/օրինական ուժ/իշխանություն տվեց...»: Այս նույն արմատից *an=* (հայ. ան-) և *y=* (հայ. յ-) նախածանցներով ուրարտերենում ունենք *aniardu=ne* [*an=y=ardu=ն*] «մեղավոր, անարդար», իսկ սրա երկրորդ ձևից՝ *ardi=še* «օրենք, կարգ» բառերը, հմմտ. հայ. արդ, -ու/ի «արդ, կարգ, ձև և այլն» (տե՛ս III.2.3 կետ 4) բառի հետ: Փաստորեն [*տ=up=ardu=ne*] և [*an=y=ardu=ne*] բայածանցները կազմված են համապատասխանաբար *up=ardu=ne* և **y=ardu=ne* բառ(ափոխ)երից (վերջինն առանձին վկայված չէ) մի դեպքում՝ *տ=*, մյուս դեպքում՝ *an=* ժխտական մասնիկների հավելումով: Մրանք երկուսն էլ ունեն մտ իմաստ և հանդես են գալիս նմանատիպ համատեքստերում, որտեղ խոսվում է ուրարտ. արքայի՝ Խալդի աստծո ստրուկը լինելու և նրա առջև ունեցած «անօրեն/մեղավոր» վիճակի/դիրքի մասին:

«մեղավոր, անկարգ» բայածանցները): Ամփոփելով ասվածը՝ նշենք, որ եթե *-iale-*ի տակ հնարավոր է տեսնել դերբայակերտ ինչ-որ ածանց, ապա այն թերևս պետք է համեմատել հայ. անցյալ ժամանակի դերբայի *-եալ* վերջավորության հետ: Սակայն այս բայական ձևի ճշգրիտ քերականական իմաստը մեզ առայժմ պարզ չէ:

Ուրարտական տեքստերում առկա են նաև այլ՝ սակավ հանդիպող բայական վերջավորություններ, ինչպես՝ *-iline*, *-udi(°)* և այլն, որոնց մասին առայժմ դժվար է որևիցե ստույգ քան ասել:

VI.2.5 ՈՒՐԱՐՏԵՐԵՆԻ ԽՈՆՀԱՐԱՄԱՆ ՀԱՍՆԱԿԱՐԳԻ ՀԱՄԵՍԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ՀԵՏ

1. Հայերենի խոնարհման համակարգի ամփոփ պատկերը: Հայերեն բայը բաղկացած է բայափոխից և համապատասխան ածանց(ներ)ից, որոնք, որպես կանոն, հավելվում են բայափոխին վերջից՝ կազմելով համապատասխան բայաձևեր: Արգելական հրամայականը որոշվում է համապատասխան բայի և «մի» բացասական մասնիկի հարադրությամբ, որը դրվում է բայից առաջ: Աորիստում եզ. քվի 3-րդ դեմքի որոշ միավանկ բայեր ստանում են *ե-/-* նախածանց: Միջածանցներ հայերենում չկան: Բայափոխը կարող է լինել պարզ կամ ածանցական: Հայերեն բայը ունի երեք եղանակ՝ սահմանական, հրամայական և ստորադասական (վերջինս համապատասխանում է արդի հայերենի՝ ըղձական, պայմանական և հարկադրական եղանակներին), սեռ՝ ներգործական, պատճառական, կրավորական և չեզոք, խոնարհման տեսակ(ձև), կերպ, ժամանակ (ժամանակը ըստ կազմության լինում է պարզ և բաղադրյալ), դեմք և քիվ: Ի հակադրություն ուրարտերենի՝ հայերենը չունի երգատիվ կառուցվածք, և այդ պատճառով նրան հատուկ չէ անցողական ու անանցողական բայերի հակադրությունը, ինչպես որ ուրարտերենում: Հայերենում անցողական բայերի դասին են պատկանում ներգործական և պատճառական բայերը, իսկ անանցողականին՝ չեզոք և կրավորական: Հայերենին հատուկ է խոնարհման երկու տեսակ՝ անցյալ կատարյալի ու ներկայի հիմքով: Ըստ բայի փոփոխման արտաքին ձևի՝ խոնարհումը լինում է ներգործաձև⁶⁰¹, կրավորաձև և խառն⁶⁰²

⁶⁰¹ Խոսքը փոփոխման արտաքին ձևերի մասին է, որոնք միշտ չէ, որ համընկնում են 18-45

(պատճառական բայերն ունեն իրենց հատուկ խոնարհման ձևը⁶⁰³): Հայերեն բայն ունի հետևյալ հիմնական ածանցները. 1) բաղադրության-քերականական (-ան-, -են-, -ն-, -(ն)չ-, -ա(ն)չ-), բազմապատկական (-ատ-, -ոտ-, -տ-) և պատճառական (-ոյց՝ շեշտակոորույս -ուց-):

2. Հայերենի և ուրարտերենի խոնարհման համակարգերի համեմատությունը: Այժմ առանձին-առանձին անդրադառնանք ուրարտերենի սահմանական, հրամայական և ստորադասական (անիրական) եղանակի բայերի և հայերենի համապատասխան բայական ձևերի համեմատությանը:

ա) Սահմանական եղանակի ներկա: Սահմանական եղանակի ներկայով ուրարտերենում ունենք ընդամենը մեկ-երկու, այն էլ ոչ այնքան հուսալի վկայություններ: Հետևաբար, որևէ համեմատություն հայերենի հետ դառնում է անհնար:

բ) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ (աորիստ): Սահմանական եղանակի անցյալ կատարյալը ուրարտական տեքստերում առավել հաճախ հանդիպող և լավ հայտի ձևն է: Ինչպես արդեն նշվեց, այս ձևին ուրարտերենում բնորոշ է խոնարհման երկու տիպ՝ անցողական և անանցողական (տե՛ս վերը): Հայերենի անցյալ կատարյալ ժամանակի/կերպի խոնարհման պատկերը ներկայացնում է հետևյալ աղյուսակը⁶⁰⁴:

Դեմք	Խոնարհման տիպը					
	ներգործածև		կրավորածև		խառն	
	եզ.	հոզ.	եզ.	հոզ.	եզ.	հոզ.
1-ին	-ի	-ա-ք	-ա-յ	-ա-ք	-եա-յ	-եա-ք
2-րդ	-ե-ր	-ի-ք, էք (*ե-յք)	-ա-ր	-ա-յք	-եա-ր	-եա-յք
3-րդ	-	-ի-ն	-ա-ւ	-ա-ն	-եա-ւ	-եա-ն

Աղյուսակից դժվար չէ նկատել, որ հայերենի անցյալ կատարյալի վերջավորությունների առաջին բաղադրիչը ամբողջությամբ համընկնում է ուրարտերենի անցյալ կատարյալի I (անանցողական) խոնարհման համապատասխան վերջավորությունների մույն բաղադրիչի հետ (տե՛ս Աղյուսակ 8): Փաստորեն հայերենի -ի/ե-, -ա- և -եա- (< *իա) բաղադրիչների դիմաց ուրարտերենում համապատասխանաբար ունենք -i-, -a- և -ia-: Իսկ ուրարտերենի մեզ հայտնի 1-ին դեմքի եզակիի (-di), 3-րդ դեմքի եզակիի (-be) և հոգնակիի (-le) դիմային վերջավորություններից հայերենում մույնությամբ ունենք միայն 3-րդ դեմքի եզակին (-ւ) (ուրարտ. -be-ն այստեղ անկասկած պետք է արտասանել [w]): 3-րդ դեմքի հոգնակիի համար հայ. -ւ-ի դիմաց ունենք ուրարտ. -le, որն ուրարտերենում առավելապես հանդես է գալիս անցողական բայերի հոգնակի թվի օրյեկտային ցուցիչի դերում: Եթե ենթադրենք, որ այն ծագումնաբանորեն կապված է ուրարտ. ուղղական հուլի հոգնակի թվի -le մասնիկի հետ, որն անշուշտ արտացոլված է հայերենի հոգնակիակերտ-հավաքական՝ -(ւ)եար, -եր, -որ(ե)այ ածանցների -ր-ում (այս մասին մանրամասն տե՛ս V.2.10 կետ 3), ապա բայական այս -le մասնիկը մույնպես պետք է արտասանել [x] (հայ. ր): Այս դեպքում այն պետք է համեմատել հնդեվրոպական մի շարք լեզուների (խեթերեն, լատիներեն, գերմաներեն և այլն) անցյալ ժամանակի երրորդ դեմքի հոգնակիի x մասնիկի հետ, որը, ըստ որոշ հայագետների, հայերենում նախապես եղել է, որի հետ և ծագումնաբանորեն կապված են հայերենի հոգնակիակերտ-հավաքական -(ւ)եար, -եր, -որ(ե)այ ածանցները [Մ.Ղազարյան, 2006, էջ 41, 46-47]: Ինչը և, կարծես թե, հաստատվում է ուրարտերենի միջոցով:

Ինչ վերաբերում է ուրարտերենի 1-ին դեմքի եզակի թվի -di (հնարավոր է նաև՝ -ti, քի) դիմային վերևավորությանը, ապա առայժմ

բայի սեռի հետ:

⁶⁰² Խառն խոնարհումը հատուկ է միայն անցյալ կատարյալի երկրորդ կազմվող բայաձևերին: Այս ձևով են խոնարհվում այն բայերը, որոնք անցյալ կատարյալի երկրորդ ունեն ի թույլ բաղադրիչ, որը հանդիպելով կրավորածև խոնարհման վերջավորության ա ծայնավորին՝ հնչյունափոխվում է ե-ի, օրինակ՝ թռչել (թռչիւ) անց. կատ. թռի + ալ > թռեայ, փախչել (փախչիւ) անց. կատ. փախի + ալ > փախեայ և այլն:

⁶⁰³ Առավել մանրամասն հայերենի խոնարհման համակարգի մասին տե՛ս, օրինակ, Ա.Արքանյան, 1976, էջ 94-226; Գ.Джагян, 1982, էջ 160-169 և այլն:

⁶⁰⁴ Լինել բայի խոնարհման մեջ -ա- առաջնային վերջավորության փոխարեն առկա է -ե-, որի համար համապատասխանաբար ունենք՝ եղե, եղել, եղեն և այլն:

դժվար է որևիցե ստույգ բան ասել այդ մասին: Եթե հնարավոր է, որ հայերենի 1-ին դեմքի եզակիի -j վերջավորությունը ծագում է հին *t-ից, ապա ուրարտերենի առաջին դեմքի -di դիմային ածանցի մեջ թերևս կարելի է տեսնել հայերենի համապատասխան -j ածանցի հին վիճակը՝ նախքան հայերենի *t > j/l/- անցումը⁶⁰⁵:

Սահմանական եղանակի ուրարտական բայերի անցյալ կատարյալին հատուկ է I-ից տարբերվող խոնարհման այլ՝ II տիպ ևս, որով խոնարհվում են անցողական բայերը (տե՛ս VI.2.1): Խոնարհման այս (II) տիպին հատուկ է մեկ միասնական կարգ: Այսինքն բոլոր բայերը խոնարհվում են մեկ միասնական կարգով՝ անցողականության և ցուցիչի միջոցով, որը հավելվում է բայափոփոխին՝ քնավոր ձայնավորի անկումով: Ընդ որում, այս ս-ն կարող է հավելվել ինչպես անցողական, այնպես էլ անանցողական բայերի հիմքերին՝ վերջինիս հաղորդելով անցողական բնույթ, ինչպես՝ aš=a- «հասնել, գալ» և aš=u- «հասցնել, քերել» (հմմտ. հայ. հ-աս-(ան)-եմ «հասնել» և հ-աս-ուց-ան-եմ «հասցնել, քերել»), ušt=a- «տստնել, արշավել, դուրս գալ, ի բաց հեռանալ» և ušt=u- «տղարկել, տալ, ընծայել» (հմմտ. հայ. ոստ-ան-եմ, ոստ-ն-եմ և ոստ-(աց)-ուց-ան-եմ) «դուրս հանել/տալ», peçi=a- «(ետ) դառնալ» և peç=u- «(ետ) դարձնել, շրջել, ետ տալ» և այլն: Ուրարտ. անցողական բայերի մնան վարքը հիշեցնում է հայերենի պատճառական բայերը, որոնք կարող են կազմվել ինչպես ներգործական, այնպես էլ չեզոք սեռի բայերից: Ընդ որում, առաջին դեպքում բայը ստանում է հստակ արտահայտված պատճառական երանգ, մինչդեռ երկրորդ դեպքում կարող է ձեռք բերել լոկ ներգործական իմաստ: Հայերենի պատճառական բայերը կազմվում են բայափոփոխի -ոյ-ց՝ շեշտագուրկ դիրքում -ու-ց- բաղադրյալ ածանցի հավելմամբ, որը փոխարինում է քնավոր ձայնավորին (ինչպես որ ուրարտերենում): Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ց աֆրիկատը ուրարտերենի խոնարհման (մակ հոլովման) համակարգում բացակայում է, ապա պետք է կարծել, որ ուրարտերենի անցողականության և ցուցիչը ամենայն հավանականությամբ պահպանվել է հայերենի պատճառական

բայերը կազմող վերոնշյալ -ու/ոյ-ց ածանցի -ու/ոյ- բաղադրիչի մեջ: Ինչ վերաբերում է II խոնարհման դիմաթվային վերջավորություններին, ապա թերևս պետք է մտածել, որ հայերենում, երգատիվ կառույցի բացակայությամբ պայմանավորված, անցողական և անանցողական բայերի հակադրության թուլացմամբ, դրանք դուրս են մնացել գործածությունից և չեն պահպանվել (արտացոլված չեն): Հատկապես եթե նկատի ունենանք, որ ուրարտերենում նկատվում է խոնարհման այս տիպի հոգնակի թվին հատուկ դիմաթվային (օրյեկտային և սուրյեկտային) որոշ վերջավորությունների անկում (1-ին դեմքի հոգ. օրյեկտի և 3-րդ դեմքի հոգնակիի՝ ընդհանրապես): Իսկ 1-ին դեմքի եզ. թվի -be[w] վերջավորությունը կարող էր ձուլվել նախորդ ս-ի հետ [-uw > -u], դրանով իսկ չտարբերվելով 3-րդ դեմքի համապատասխան վերջավորությունից (տե՛ս Աղյուսակ 10): Ինչ վերաբերում է 1-ին դեմքի հոգ. սուրյեկտի - (u) še[-(u) s] վերջավորությանը, ապա այն թերևս կարելի է համեմատել հայերենի 1-ին դեմքի հոգնակի որոշ ձևերի -(ու)ք ցուցիչի հետ: Հայերենի և ուրարտերենի սահմանական եղանակի անցյալ կատարյալի համապատասխան վերջավորությունների համադրական պատկերը ներկայացվում է հետևյալ աղյուսակով:

Աղյուսակ 12

Թիվ		Խոնարհման տիպ (ուրարտ./ հայ.)					
		եզ.	հոգ.	եզ.	հոգ.	եզ.	հոգ.
I եզու	1-ին	անցողական / պատճառական		անանցողական I / ներգործական		անանցողական II, III / կրավորական, խառն	
	3-րդ	-u-w/ur		-u-s/us	-i-di	-	-(i)a-di
Ուրարտերեն	1-ին	-u-w/ur	-u-s/us	-i-di	-	-(i)a-di	-
	3-րդ	-u-(n/ar)	-t-u-(r)	-i-w	-i-r	-(i)a-w	-(i)a-r
Հայերեն	1-ին	-ու-ց- -ոյ-ց		-ի (<*իj)	-ա-ք	-(ե)ա-յ	-(ե)ա-ք
	3-րդ			-(*ի-ու)	-ի-ն	-(ե)ա-ու	-(ե)ա-ն

⁶⁰⁵ Այս անցման վերաբերյալ հուսալի վկայություններ ուրարտական տեքստերում չկան: Միակ բառը, որտեղ ունեք այս անցումը արտացոլող վիճակ, ¹⁰⁰tuarašinel Իսի «տուարածա-տափ» տեղանունն է, որտեղ առկա -araš- - հայ. *արած < *trəg՝ արմատի համար ունենք t>- անցումը, եթե, իհարկե, այն չենք վերլուծում տուար-ած-ա-տափ ձևով՝ -ած-ի մեջ տեսնելով հայ. ած-եմ բայի արմատը:

Ինչպես նշվեց (տե՛ս վերը), անցյալ ժամանակում *man* - «լինել, մնալ» անանցողական բայը խոնարհվում է անցողական բայերին հատուկ ձևով: Մակայն բացառված չէ, որ իրականում *man*= բայը խոնարհվելով անցողական բայերի տիպով՝ համդես է գալիս կրավորական (անանցողական) իմաստով (հմմտ. հայ. պատճառական բայերի հետ, որոնք ձևով մնալով անփոփոխ՝ արտահայտում են նաև կրավորական իմաստ⁶⁰⁶): Այդ դեպքում ուրարտական տեքստերում հաճախակի հանդիպող *man*=*u* բայաձևը կարելի է թարգմանել «թողնվեց», այլ ոչ թե «մնաց, եղավ» կամ «կար», իսկ, ասենք *qi-ú-ra-né qu-ul-di-né ma-nu* դրվագի «հողը անմշակ էր» թարգմանության փոխարեն կարելի է տալ «հողը անմշակ թողնվեց» կամ «հողը անմշակ էր թողնվել (անկատար)» թարգմանությունը: Հմմտ. *man*=*u*=*be* [*mæn*=*u*=*w*] բայաձևի հետ, որը մասնագիտական գրականությունում արդարացիորեն համարվում է անցողական բայ՝ «մնացրի, թողեցի որ լինի, լինել տվեցի» թարգմանությամբ:

գ) Հրամայական եղանակի ներկա (թուն հրամայական): Հրամայական եղանակի ներկան հայերենում կազմվում է անցյալ կատարյալի հիմքից՝ հետևյալ վերջավորությունների հավելումով:

Դեմք	Խոնարհման տիպը					
	Մերզործածակ		կրավորածակ		խառն	
	եզ.	հոզ.	եզ.	հոզ.	եզ.	հոզ.
2-րդ	-ժ	-էք (*-ե-յ-ք)	-ի-ր	-ա-յ-ք -ա-րու-ք	-ի-ր	-եա-յ-ք -ե-րու-ք (*-եա-րու-ք)

Ինչպես երևում է բերված աղյուսակից, հայերենի հրամայական եղանակի եզակի թվի -ժ վերջավորությունը համընկնում է ուրարտերենի համապատասխան ձևի -e ցուցիչի հետ (տե՛ս Աղյուսակ 10): Պետք է նկատի ունենալ, որ ուրարտերենում բառավերջի e-ն կարող է արտասանվել նաև ժ կամ թ (մասնագիտական գրականությունում հաճախ ընթերցվում է թ⁶⁰⁷): Մյուս կողմից՝ չի բացառվում, որ տվյալ դեպքում ուրարտ. e-ն պետք է ընթերցել e (հայ. է): Հմմտ. հայերենի հրամայականի ներգործածակ խոնարհման հոգնակիի -է-ք վերջավորության հետ, որն անկասկած գալիս է *-ե-յ-ք նախնական ձևից, որի մեջ ի դեմս -ե--ի

⁶⁰⁶ Ինչպես օրինակ՝ մն-աց-ուց «թողեց» / «թողնվեց»:

⁶⁰⁷ Տե՛ս, օրինակ, G. Wilhelm, 2004, էջ 131:

հնարավոր է, որ պահպանվել է եզ. թվի հրամայականի բուն ցուցիչը: Հոգնակի հրամայականի համար ուրարտերենում վկայություններ չունենք: Հայերենի և ուրարտերենի հրամայական եղանակի ներկայի եզ. թվի վերջավորությունների համադրական պատկերը ունի հետևյալ տեսքը:

		Խոնարհման տիպ (ուրարտերեն/հայերեն)	
Լեզու	Դեմք	անցողական / ներգործածակ	անանցողական / կրավորածակ, խառն
Ուրարտերեն	2-րդ	-e [e/ə/ø]	-i
Հայերեն	2-րդ	-ժ (-ե (ʔ))	-ի-ր

Փաստորեն միակ տարբերությունը հայերենի կրավորածակ խոնարհման դեպքում հավելյալ ռ-ի առկայությունն է (ուրարտերենում այն բացակայում է, ներկայացված է ժ-ով), եթե իհարկե ընդունում ենք, որ ի դեմս ուրարտ. տեքստերում վկայված *u*l=*i* (*i*) բայի գործ ունենք հրամայական եղանակի անանցողական բայերին բնորոշ բայաձևի հետ⁶⁰⁸:

դ) Ստորադասական (անիրական) եղանակի ձևեր: Ստորադասական եղանակը հայերենում ներկայացված է առաջին և երկրորդ ապառնիով: Հայերենում ստորադասականին մոտ իմաստ ունի նաև հորդորական հրամայականը: Ինչ վերաբերում է ուրարտերենի ստորադասական (անիրական) եղանակի ձևերին, ապա ինչպես արդեն նշվեց, այստեղ ամեն ինչ չէ, որ պարզ է: Մասնավորապես միշտ չէ, որ հնարավոր է լինում տարանջատել մի ձևը մյուսից, և այս հարցում մասնագիտական գրականությունում առկա են տարաձայնություններ: Մյուս կողմից՝ հստակ չէ նաև բուն վերջավորությունների և բայաձանցների տարանջատումը: Շատ հաճախ ձևով տարբերվող բայերը արտահայտում են միևնույն կամ շատ մոտ քերականական իմաստներ, որոնք հնարավոր չի լինում համատեքստում իրարից զանազանել, իսկ մի մասը ընդհանրապես հնարավոր չի լինում թարգմանել անհասկանալի համատեքստի

⁶⁰⁸ Ինչպես երևում է հայերենի հրամայական եղանակի կրավորածակ խոնարհման -ա-րու-ք երկար ձևի կողքին առկա -ա-յ-ք կարճ ձևից, հնարավոր է, որ սրա եզակին նույնպես ունեցել է կարճ տարբերակ, որը ենթադրաբար պետք է լիներ -ի-ն:

պատճառով (մանրամասն այս ամենի մասին տե՛ս VI.2.3 կետ 2): Նկատի ունենալով այս ամենը՝ առայժմ ձեռնապահ ենք մնում ուրարտերենի ստորադասական (անիրական) եղանակի բայերի հետ հայերենի համապատասխան բայաձևերի որևէ համեմատությունից: Առայժմ հնարավոր է խոսել միայն հայերենի ստորադասական եղանակի որոշ բայաձևերին բնորոշ ց աֆրիկատի՝ ուրարտերենի համապատասխան վերջավորություններում բացակայության մասին (ինչը հատուկ է ուրարտերենի խոնարհման և հոլովման համակարգերին ընդհանրապես):

Ե) Բայի արգելական ձևերը: Հայերենում առկա է արգելական հրամայականի հատուկ ձև, որը կազմվում է ներկա ժամանակի բայահիմքին համապատասխան ցուցիչների (-ր՝ եզակիի և -լք՝ հոգնակիի համար) հավելմամբ՝ նախադաս դրվող «մի» արգելական մասնիկի հարադրմամբ:

Ինչպես արդեն նշվեց վերը (VI.2.3 կետ 2.6), Գ.Մելիքիշվիլին ուրարտերենում առանձնացնում է արգելական հրամայականի հատուկ ձև, որը կազմվում է բայահիմքերին - (d) iane ցուցիչի հավելմամբ և բայից առաջ դրվող mi «մի» ժխտական մասնիկի հարադրությամբ: Այլ հեղինակներ - iane-ի մեջ տեսնում են այլ բայական ձև(եր): Մակայն ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, ուրարտական տեքստերում - iane-ով կազմված բայերին բոլոր դեպքերում նախորդում է mi «մի» կամ ui [oɪ] «ոչ» ժխտական մասնիկը (տե՛ս VI.2.3 կետ 2.6), ինչը մեզ թույլ է տալիս մտածելու, որ ուրարտերենում կարող էր գոյություն ունենալ բայի արգելական ինչ-որ մի ձև, որը կազմվում էր - i=a=ne ցուցիչով՝ mi «մի» կամ/և ui [oɪ] «ոչ» ժխտական մասնիկների հարադրմամբ: Եթե դա իրոք այդպես է, ապա կազմավորման ձևով այն անշուշտ նմանվում է հայերենի արգելական-հրամայականին:

VI.3 ԳԵՐԱՅ

1. Ուրարտերենի դերբայները մասնագիտական գրականությունում: Այս հարցում մասնագետների շրջանում միասնական կարծիք չկա: Գ.Մելիքիշվիլին⁶⁰⁹ դերբայական մասնիկ է համարում -a(i)e-ն (գրվում է նաև -age), որը, ինչպես ինքն է պնդում, հավելվում է անցողականության/անանցողականության ցուցիչից զուրկ բայահիմքերին՝ կազմելով կրավորական սեռի դերբայներ, ինչպես՝ ter=aie/ter=age

⁶⁰⁹ Г.Меликишвили, 1964, էջ 56-57:

«որված», հոգ. ter=aie⁶¹⁰ «որվածներ» < ter- «դնել», durb=aie «ապստամբ, ապստամբած» < durb- «ապստամբել» և այլն: Նա նաև հնարավոր է համարում, որ ուրարտական տեքստերում հանդիպող -ue վերջավորությամբ որոշ բառեր նույնպես կարող են դիտարկվել որպես դերբայներ, ինչպես՝ urp=ue «զոհաբերված» կամ «զոհ» < urp- «զոհել», šedi=ue «հոսող (*), դուրս ցայտող(*)» < ši=d- «տանել, հեռացնել»: Ի.Դյակոնովը, անդրադառնալով սույն հարցին, վերոնշյալ -a(i)e /-age մասնիկով կազմվող ձևերը համարում է գերունդիտմացված նպատակի դերբայներ, որոնք սովորաբար ունենում են «ինչ-որ բանով արված լինելու» իմաստ և կարող են գործածվել նաև որպես մակբայ կամ ածական, ինչպես՝ tu=aie «մաքրված», ar=(e)d=aie «քերվող, բերված», tar=aie «հզոր» և այլն՝ նշելով նաև, որ թե՛ ուրարտերենում, թե՛ խուռիերենում -ae-ով կազմվում են բազմաթիվ ածականներ⁶¹¹: Խոսելով խուռիա-ուրարտական դերբայների մասին՝ նա հնարավոր է համարում, որ R=i, R=u տեսքի ուրարտական որոշ բառեր նույնպես դերբայական ձևեր են: Առաջինը (-i-ով ձևը) նա նշում է ենթադրաբար, որպես խուռիերենի ակտիվ (անցողական) դերբային զուգահեռ ձև, որի համար դժվարանում է ուրարտերենում հստակ օրինակներ բերել⁶¹²: Հետագայում հիշատակում է ha=i=ne «խլող(*)», qarq=ar=i=le=ne «շրջապատող (նրան)(*)» բառերը⁶¹³: Որպես երկրորդ (-u-ով) ձևի հնարավոր դերբայներ նա նշում է at=u/o «նկած, եկող», aš=u/o «փախած, փախստական», kar=u/o «ենթարկված, նվաճված» և այլ բայական ձևերը, որոնք համարում է պասիվ կամ վիճակի (անանցողական) դերբայներ՝ համեմատելով խուռիերենի հետ⁶¹⁴: Նա անհիմն է համարում -ue վերջավորությամբ որոշ բառերի՝ դերբայներ լինելու Գ.Մելիքիշվիլու կարծիքը (տե՛ս վերը): Միևնույն ժամանակ դերբայներ

⁶¹⁰ Կելիշինի երկեզվյա արձանագրությունում terainele-ն համապատասխանում է առար. šaknāte-ին՝ «որվածները» իմաստով:

⁶¹¹ И.Дьяконов, 1963, էջ 73-76, 1979, էջ 75:

⁶¹² И.Дьяконов, 1963, էջ 75-76:

⁶¹³ I.Diakonoff, 1971, էջ 139-142; 1979, էջ 74-76:

⁶¹⁴ Խուռիերենի համար Ի.Դյակոնովը նշում է հետևյալ երեք դերբայական ձևերը. 1) վիճակի դերբայ՝ -a ածանցով, 2) գործողության դերբայ (ակտիվ)՝ -i ածանցով, 3) վիճակի դերբայ՝ որպես գործողության օրյեկտ (պասիվ)՝ -u (=o(*)) ածանցով, որոնցից, ըստ իրեն, ուրարտերենում առկա են -i-ով և -u-ով ձևերը. տե՛ս И.Дьяконов, 1979, էջ 74:

կամ դրանց շատ մոտ կանգնած ձևեր է համարում նաև R=ure (անանցողական բայերից) և R=a=(j)ure (անցողական բայերից) տեսքի ուրարտական բառերի մեծ մասը, որոնք, ըստ իրեն, զուգահեռներ չունեն խոտիերենում: Նման տեսակետ է հայտնում նաև Մ. Խաչիկյանը՝ նշելով, որ երկու լեզուներում էլ դերբայները կազմվում են բայական հիմքին անցողականության/անանցողականության/վիճակի ցուցիչների հավելմամբ⁶¹⁵: Ի.Մեշչանինովը⁶¹⁶ գտնում է, որ ուրարտերենում առկա են՝ -ini, -a=ini ածականակերտ ածանցները, որոնք կարող են կազմել նաև դերբայները: Այդպիսիք նա համարում է Կելիշինի երկլեզվյա արձանագրությունում վկայված ter=aine=le (հոգ. քիվ) և ծա=ine բառերը՝ կազմված ter- և ծա- բայերից: Նույն կերպ նաև agun=uni=le «ապստամբներ, ապստամբածներ» բառը՝ կազմված -uni ածանցով: Այլ հեղինակներ terainele-ի մեջ տեսնում են -a(i/g)e դերբայական մասնիկը՝ այն վերլուծելով ter=a_i=ni=li(=nele) (տե՛ս վերը): Գ.Վիլհելմը⁶¹⁷ -aure և -ure մասնիկները համարում է սուբյեկտային (-aure) և օբյեկտային (-ure) ուղղվածությամբ դերբայական, իսկ -aye-ն ածականներ և գոյականներ կազմող ածանցներ: Այսպիսով, եթե փորձենք անփոփել վերոշարադրյալ նյութը, ապա ստացվում է, որ ուրարտերենում կարող են լինել հետևյալ դերբայակերտ ածանցները.

-aye (գրվում է -a(i)e կամ -age): Այս դերբայական ածանցի առկայությունը հաստատվում է Կելիշինի երկլեզվյա արձանագրությանը, համաձայն որի էլ այն համարվում է կրավորական սեռի դերբայներ կազմող մասնիկ (Ի.Դյակոնով, Գ.Մելիքիշվիլի): Ըստ Ի.Դյակոնովի՝ կազմում է նաև ածականներ: Գ.Վիլհելմը [-aye]-ն համարում է ածականներ և գոյականներ կազմող ածանց:

-u: Ըստ Ի.Դյակոնովի՝ կազմում է վիճակի (անանցողական) դերբայներ:

-i: Ըստ Ի.Դյակոնովի՝ կազմում է ակտիվ (անցողական) դերբայներ:

-ini/-a=ini/-u=ni: Ըստ Ի.Մեշչանինովի՝ կազմում են ածականներ՝ դերբայական իմաստով: Ի.Դյակոնովը դերբայակերտ/ածականակերտ ածանց է համարում -u(=ne)-ն:

⁶¹⁵ М.Хачикян, 1985, էջ 112:
⁶¹⁶ И.Мещанинов, 1962, էջ 47-48:
⁶¹⁷ G.Wilhelm, 2004, էջ 126:

-ure/-a(j)ure: Ըստ Ի.Դյակոնովի՝ կազմում է կրավորական կամ միջին սեռի հարակատար դերբայներ: Գ.Վիլհելմը -aure/-ure-ն համարում է սուբյեկտային/օբյեկտային ուղղվածությամբ դերբայական ածանցներ: Ավանդական ուղղության ներկայացուցիչները համարում են բայական ձևեր կազմող ածանց(ներ) (տե՛ս ստորև՝ կետ 2.3):

-ue: Ըստ Գ.Մելիքիշվիլու՝ դերբայակերտ ածանց, որը սակայն չի ընդունում Ի.Դյակոնովը:

2. Ուրարտերենի դերբայներին վերաբերող պարզաբանումներ: Հաշվի առնելով եղած փաստական նյութը և արտահայտված կարծիքները՝ առավել մանրամասն (առանձին-առանձին) քննարկենք ուրարտերենի վերոնշյալ և այլ հնարավոր դերբայական ձևերը՝ զուգահեռ անցկացնելով հայերենի համապատասխան դերբայների և դերբայական իմաստով հանդես եկող այլ քայանունների հետ⁶¹⁸:

2.1 -u, -une [-u(*), -un] - հայ. -ու(ս): Ինչպես արդեն նշվեց, Ի.Դյակոնովը քննելով -u վերջավորությամբ ուրարտական մի շարք բառեր, ինչպես՝ anicu (կամ niqu), ašdu, aštü, ašu, aču, hupadu, hušu, karu, naru, nuluštu, waḥu, waldu և այլն, դրանցից որոշների մեջ տեսնում է համապատասխան քայահիմքերից կազմված դերբայներ: Որպես այդպիսիք նա դիտարկում է՝ ašu «փախած, փախստական», aču «եկած, եկող (*)), hušu «(*)», karu «ենթարկված, նվաճված», suduštu «(*)», waḥu «(*)» [1963, էջ 73-76; 1979, էջ 74 ծան. 102], nuluštu «կառավարող, կառավարումը ստանձնող» [ԴԵ, 5, 1988, էջ 141] բառաձևերը (թարգմանությունները իրենն են), որոնք, ըստ Ի.Դյակոնովի, կազմված են համապատասխանաբար՝ aš-, ač-, huš-, kar-, nulušt-, sudušt-, waḥ- բայահիմքերից⁶¹⁹ -u

⁶¹⁸ Ի.Դյակոնովի ենթադրած -i (ակտիվ՝ անցողական) դերբայական մասնիկի հարցը մենք այստեղ չենք քննարկի: Նա վերջինիս հնարավոր առկայության մասին խոսում է՝ հիմնվելով հիմնականում խոտիերենի տվյալների վրա, սակայն իր բերած օրինակներում (տե՛ս վերը) որևիցե դերբայ տեսնելը ոչնչով հիմնավորված չէ: Առավել կասկածելի է դրանցում -i դերբայակերտ մասնիկի առանձնացումը:

⁶¹⁹ Anicu, naru և hupadu բառերի բայական բնույթը նա արդարացիորեն համարում է կասկածելի: Ašdu-ն, որը նա կապում է ašdu- բայի հետ (թարգմանում է «մախատեսել»)՝ մատնացույց անելով թուփուզավայի երկլեզվյա արձանագրությունը, համարում է ետդիր «համար, հանուն» նշանակությամբ: Նմանատիպ նշանակություն է ենթադրում նաև aštü-ի համար [И.Дьяконов, 1963, էջ 74-76], իսկ waldu-ն՝ համարում հրամայական եղանակի (imperative) անանցողական բայ [И.Дьяконов, ДБ, 5, 1988, էջ 144-145]:

մասնիկի հավելումով և հանդիսանում են դերբայական ձևեր կամ քայանուններ: Նա նաև հնարավոր է համարում, որ -u(ne) վերջավորությունն ունեցող agunu=ne «ամրացված» և aniardu=(ne) «մեղավոր(»)»⁶²⁰, բառերի մեջ պետք է տեսնել նույն -u դերբայական մասնիկը՝ -ne-ի հավելումով, իսկ այդ բառերը համարել դերբայներ կամ քայածականներ: Նշենք, որ ašu բառի առկայությունը ուրարտական տեքստերում մերժվում է մասնագետների մի մասի կողմից⁶²¹, ուստի մենք այն բաց կթողնենք: Միևնույն ժամանակ, շնորհիվ Թոփուզավայի արձանագրության նոր հայտնաբերած կրկնօրինակի, այժմ արդեն հաստատված է, որ ašd- բայը ուրարտերենում նշանակում է «զալ, հասնել, մտնել»⁶²² և ոչ թե «նախատեսել», ինչպես ենթադրում էր Ի.Դյակոնովը, ուստի ašdu բառի համար նրա առաջարկած «համար, համուն»⁶²³ քարգմանությունը (որպես ետդիր) խիստ կասկածելի է, հետևաբար այն նույնպես կարելի է դասել մեզ հետաքրքրող բառերի շարքին: Եթե ամփոփենք ասվածը, ապա ստացվում է, որ ուրարտերենում պետք է գոյություն ունենա -u/-u(ne) դերբայական վերջամասնիկը, որը հիմնականում քայահիմքերից կազմում է անանցողական (վիճակի) դերբայներ կամ քայանուններ (քայածականներ): Հարցը քննարկենք առավել մանրամասն: Դրա համար բերենք ուրարտական տեքստերի այն հատվածները, որ վկայված են մեզ հետաքրքրող բառաձևերը.

- (291) ^mAr-giš-ti-še ^mMe-nu-a-ḫi-ni-še a-li-e ^{KUR}Aš-[šur ^{L0}A.S]I? ^{MEŠ}-ši-e ^{KUR}e-ba-ni-ú-ki aš-du ^{L0}[ḫu]-ra-di-ni-e-li ú-e-li-du-bi... - «Արգիշտին՝ Մենուայի որդին ասում է՝ ասուրական զորքին իմ երկրում ջարդեցի(»), զորք հավաքեցի ... » [KYKH 173 II₅₇].
- (292) ^{KUR}šu-ri[...]li[...]i iš-pu-ú-i-ú-bi ^{KUR}Aš-šur ^{L0}ḫu-ra-di-i-e ^{KUR}e-[ba]-ni-ú-ki aš-du - «աշխարհը ... išpuuubi ասուրական զորքին իմ երկրում ջարդեցի(»)» [KYKH 173 III₂₅].
- (293) i-nu-ka-ni e-di-ni na-ḫi-di-ni/tar(?)ni a-ṭu [KYKH 241 B₅₉, D₅₅].

⁶²⁰ Նման քարգմանության համար տե՛ս И.Дьяконов, ДВ, 5, 1988, էջ 160: Ավելի վաղ նա քարգմանել է «անհնազանդ(»), անկախ(»)» [1963, էջ 87]:
⁶²¹ Այս մասին տե՛ս Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 257, ծան. 4:
⁶²² Sb'u M.Salvini, ZU, էջ 87, 91, 93; SMEA XLIV/1, 2002, էջ 131:
⁶²³ Sb'u И.Дьяконов, 1963, էջ 73, 75:

- (294) i-nu-ka-ni e-di-ni a-zi-bi-e da-ni ha-ra-ri a-ṭu [KYKH 241 E₅₇].
- (295) ^mU-ra-di-ni : ka-ru-ú ḫu-tú-ni-pi... «Ուրադին՝ ենթարկված (») հարցաքննման (»)»...» (քարգմանությունը՝ ըստ Ի.Դյակոնովի. Ն.Հարությունյանը բաց է թողնում) [УПД 7₁₄ / KYKH 520лиц₁₄].
- (296) ...^mMe]-nu-a-i ga-la-zi šu-i-ni-ni ḫu-šú mu-[x... [KYKH 123₄].
- (297) ...] ^{UZU}ḫu-šú DUB-ni i-ni e-si-ni XX kur-ni ^{L0}še-lu-i-ni [KYKH 193₄].
- (298) a-lu-še ú-i-e šú-ḫi ba-aṭ-qi-a-ni nu-lu-uš-tú ú-i-ni-ni... - «(եթե) որևիցե մեկը նորից չի ցանկանա վերանորոգել այն, (ապա) կառավարումը ստանձնողը (կառավարողը) թող փոխհատուցի(») դա ... » [KYKH 478₇]:

Ն.Հարությունյանը իսկուհի համարում է գոյական՝ UZU «միս, ճարպ» որոշիչով, ինչը միանգամայն հնարավոր է: Ամեն դեպքում մենք (296)-ը և (297)-ը չենք քննարկի, քանզի համատեքստը ընդհանուր առմամբ անհասկանալի է, ուստի դժվար է որևիցե ստույգ բան ասել իսկուհի իմաստի մասին: Ինչ վերաբերում է ašdu-ին (< aš=d=u), ապա, ինչպես արդեն նշեցինք, ուրարտերենում այն արտահայտում է «զալ, հասնել, մտնել» անանցողական և «բերել, հասցնել» անցողական իմաստ, ուստի վերոնշյալ դրվագները (291)-(292)-ում թերևս պետք է քարգմանել «Ասուրը (իր) զորքը (կամ զորքին՝ եթե ^{L0}ḫuradiie-ն դրված է տրական հոլովով) իմ երկիր հասցրեց/մտցրեց...» (տե՛ս նաև IV.3 կետ 2): Ըստ այդմ, առավել հավանական է, որ ašdu-ն այստեղ հանդես է գալիս որպես բայ, թեև դերբայական իմաստ նույնպես հնարավոր է (հմմտ. հայ. հասու «հասնող, ժամանող»): Ամեն դեպքում (291)-ը և (292)-ը մենք նույնպես չենք քննարկի: Nuluštu բառը, համաձայն Ի.Դյակոնովի քարգմանության (298), ունի ներգործական իմաստ՝ «կառավարումը ստանձնող, կառավարող», ուստի պետք է դիտել որպես ներգործական դերբայ: Ինչ վերաբերում է (295)-ին, ապա ḫutuni-pi-ին Ի. Դյակոնովի կողմից տրված «հարցաքննման տակ (»)» քարգմանությունը համոզիչ չէ, հետևաբար պարզ չէ նաև karu-ի նշգրիտ իմաստը: Այսպիսով, միակ բառը, որը թերևս կարելի է համարել վիճակի դերբայ, a-ṭu-ն է, որի իմաստը սակայն պարզ չէ (Ի. Դյակոնովի

կողմից առաջարկված քարգմանությունը ենթադրական է): Այն վկայված է միայն Սարգուրի II-ի գանձատան արձանագրության առանձին հատվածների ավարտը հայտարարող ոչ այնքան հասկանալի միանման արտահայտություններում (293)-(294), որոնք Ի. Դյակոնովը համեմատում է նույն արձանագրության մեկ այլ հատվածի վերջում և Թոփուզավայի երկլեզվյա արձանագրությունում հանդիպող համանման արտահայտությունների (299)-(300) հետ՝ կապ տեսնելով դրանցում վկայված terage/teraie «դրված» դերբայի և aču-ի միջև.

(299) i-nu-ka]-ni e-di-ni a-zi-bi sal-ma-[at-hi-ni ha-ra-ri t]e-ra-i-e [KYKH 241 C₃₄].

(300) i-nu-k]a-ni e-di-ni sal-ma-at-hi-ni ha-ra-ri te-ra-ge «այսուհետև(») ... խաղաղություն դրվեց» (քարգմանությունը ըստ Ի.Դյակոնովի [1963, էջ 75-76]) [KYKH 387yp₃₁]:

Ընդհանուր առմամբ, քերված արտահայտությունները այնքան էլ հասկանալի չեն, և դժվար է միարժեքորեն պնդել դրանցում aču-ի և terag/ie-ի միանման քերականական արժեքով հանդես գալը, հատկապես որ (300)-ում քերված հատվածը Մովսեսայի (Թոփուզավայի կրկնօրինակ) արձանագրությունում Մ.Սալվինին կարդում է՝ ikukani edini salmathini harari [x], որտեղ, ինչպես ինքն է նշում, արձանագրության վերջում terag/ie-ի համար տեղ չկա⁶²⁴: Հաշվի առնելով վերոնշյալ փաստերը՝ մենք առայժմ դժվարանում ենք միարժեք պատասխան տալ ուրարտական տեքստերում վկայված -u վերջավորությանը բառերի՝ որպես դերբայներ կամ բայածականներ դիտարկելու հարցին: Էլ ավելի կասկածելի է դրանց՝ վիճակի դերբայ լինելը:

Համեմատությունը հայերենի հետ: Հայերենում ունենք մամատիպ-ու ածանց, որը հիմնականում բայերից կամ բայահիմքերից կազմում է. 1) բայածականներ, ինչպես՝ հասու «հասնող, ժամանող, իմանալի և այլն», հատու «հատող, կտրիչ, սուր, կտրուկ և այլն», յաղթ(կ)ու «յաղթող, յաղթիչ», լսու «լսող», քսու, 2) ածականներ՝ կծու, մոու, թթու և այլն, 3) գոյականներ՝ ածու, դակու, քաղցու, 4) մակբայներ՝ ժամու, վաղու «վաղուց», տարածամու «ուշ» և այլն: Այս նույն ածանցը հանդես է գալիս նաև մի շարք բարդ ածանցների կազմում, ինչպես՝ -ածու՝ ակլա-ածու, -արբու՝ գիս-արբու, -արկու՝ ահ-արկու, բանս-արկու, -(կ)ացու՝

⁶²⁴ M.Salvini, SMEA, 44/1, 2002, էջ 10 (face I, obvers, 61):

վերա-կացու, հարսև-ացու և այլն: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հավանական է, որ այն ծագում է հ.-ե. ներգործական սեռի կատարյալի *-ues դերբայական մասնիկից⁶²⁵: Ինչպես երևում է քերված օրինակներից, հայերենում այս ածանցը հիմնականում կազմում է գործող անուններ/իրեր (հաճախ՝ -ող/-աղ, -իչ/-ուչ դերբայական մասնիկներին զուգահեռ), ինչպես նաև ածականներ, գոյականներ և մակբայներ: Նկատի ունենալով, որ -u ածանցի քերականական իմաստը ուրարտերենում պարզ չէ, մենք առայժմ դժվարանում ենք հայ. -ու և վերոնշյալ ուրարտ. -u- ածանցների միջև միարժեք կապ տեսնել:

Ինչ վերաբերում է ուրարտ. -u (ne)-ին, որից ունենք՝ agunu=ne «ամբացված, ամուր», an=j=ardu=(ne) «մեղավոր(»)» և ք=up=ardu=ne «անկարգ(»), անօրեն(»), անիշխան(») և այլն» բառերը, ապա անկասկած այն պետք է համեմատել հայերենի -ու(և) ածանցի հետ, որը առաջին հերթին բայարմատներից կազմում է ածականներ (աճեցուն «աճեցող», կարկատուն, խոսուն, իմաստուն, յարդարուն, զարդ(ար)ուն և այլն), ինչպես նաև գոյականներ և մակբայներ (թռչուն, սողուն, ցողուն, առաւօտու(և) և այլն) (տե՛ս նաև IV.3 կետ 2.7):

2.2 -v-ի/g-e [-v-j (կամ -v-չ (»))]: Ինչպես արդեն նշվեց, Գ.Մելիքիշվիլին ուրարտերենի դերբայակերտ մասնիկներ է համարում -a(i/g)e-ն (կրավորական սեռի) և -ue-ն՝ միևնույն ժամանակ կապ չտեսնելով այս երկու ձևերի միջև: Ի.Դյակոնովը կասկածի տակ է առնում -ue դերբայական մասնիկի գոյությունը, իսկ -a(i/g)e-ն համեմատում է խուռիերենի հետ՝ նշելով, որ այս լեզուներում առկա են նպատակի (գերունդիումացված) դերբայներ կազմող -ae, -a(i) մասնիկները՝ հավելելով, որ -ae-ով կազմվում են նաև բազմաթիվ ածականներ⁶²⁶: Մ. Խաչիկյանը -a(y)ə-ն նշում է որպես ուրարտերենի որակական ածականներ կազմող արդյունավետ ածանց՝ քերելով. tuw/v=ayə «մաքուր», tar=ayə «մեծ», d/čurb=ayə «ապստամբ» և այլն օրինակները⁶²⁷, իսկ Գ.Վիլիելմը այն դասում է ածականներ և գոյականներ կազմող ածանցների շարքին՝ տալով հետևյալ օրինակները. du-ur-ba-i-e «ապստամբ», širab=ae «չջրված», tu-a-i-e/tu-a-y[x] «մաքուր, անխառն», tar=ayə «մեծ, հուժկու,

⁶²⁵ Տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 241:

⁶²⁶ И.Дьяконов, 1963, էջ 73-76; 1979, էջ 75:

⁶²⁷ М.Хачикян, 1985, էջ 69:

հզոր», al=ayə «վճիռ» (al- «ասել» քայից)⁶²⁸: Վերոշարադրյալից ստացվում է, որ ուրարտերենում ունենք -a(i/g)e և -ae դերբայակերտ/ածականակերտ մասնիկները, որոնց հիմքերը հաճախ չունեն քայական իմաստ կամ կորցրել են այն: Ընդ որում, -a(i/g)e և -ae մասնիկների տարբերակման հարցը հստակ չէ: Հստակություն չկա նաև ուրարտերենի -ue մասնիկի դերբայական արժեք ունենալու հարցում: Նշված հարցերը պարզաբանելու համար անդրադառնանք ուրարտական տեքստերում մեզ հետաքրքրող ձևերի առավել վստահելի վկայություններին: Նախ քննարկենք -a(i/g)e և -ae ձևերի տարանջատման հարցը: Մրանցով կազմված առավել վստահելի բառերից ունենք հետևյալները. 1) միայն -ae-ով՝ փի=ae «մեծ», ֆիրաբ=ae «ծարավ» (երկուսն էլ ածականներ են), ֆերևս մակ՝ աֆաե «(*)», 2) միայն -aie-ով՝ դուրբ=aie «ապստամբ կամ ապստամբած», արդ=aie «ընծա/ընծայում(*), տուրք(*)», ֆերևս մակ՝ շու=aie «(*)», 3) միայն -age-ով՝ ֆուժ=age «(*)», ԴԻԴ=age «բաժին(*)», հնարավոր է նաև՝ շու=age «(*)», ֆուտուն=age «(*)», 4) -aie/-age հերթագայությանը՝ ֆու=aie/age «մաքուր, պարզ», փիր=aie/age «մեծ, հուժկու, հզոր», ֆեր=aie/age «դրված», 5) բառեր, որոնցում առկա է -aie/-age/-ae հերթագայություն՝ փիր=aie/age/ae (մակ փիրա): Եթե նկատի ունենանք ուրարտական տեքստերում առկա i/g հերթագայությունը, ապա նշված օրինակներում քերված բառերը բաժանվում են երկու խմբի՝ բառեր, որոնք ունեն -ae և բառեր, որոնք ունեն -aie/age վերջավորություններ: Փաստորեն միակ բառը, որը վկայված է վերոնշյալ երկու խմբերում էլ, դա փիրա-ն է: Մակայն այն միանման համատեքստերում հանդես է գալիս միայն փիր=aie/age հերթագայությանը, իսկ փիր-a-e ձևով առկա է բոլորովին այլ համատեքստում (վկայված է միայն [na-ֆու]-ni ni-ri-be փիր-a-a-e a-da-ni «ընծայեցի շատ նախիր») նորից» [KYKH 30թ.11.] արտահայտությունում՝ «շատ» նշանակությանը), հետևաբար հնարավոր չէ այս բառում վստահորեն տեսնել -a/-aie/-age հերթագայություն: Մյուս կողմից՝ փի=ae «մեծ», ֆիրաբ=ae «ծարավ» բառերը նույնպես վկայված են մեկական անգամ, ուստի առայժմ անհնար է վստահաբար խոսել նաև -aie և -ae տարբերակների մասին: Դրանց առկայությունը կարող է պայմանավորված լինել ինչպես զուտ զրի առանձնահատ-

⁶²⁸ G.Wilhelm, 2004, էջ 125:

կությանը, այնպես էլ երկու տարբեր ածանցների առկայությանը: Ինչ վերաբերում է Գ.Մեխիքիշվիլու կողմից նշվող -ue դերբայակերտ մասնիկին, ապա բացառված չէ, որ սրա մի տարբերակն էլ -u=ge-ն է, որը հնարավոր է առանձնացնել ubardu=ge (հմմտ. ubardu- քայի հետ) քայածնում՝ վկայված վերջերս հայտնաբերված Գյովելեքի արձանագրությունում⁶²⁹: Համանման այլ արձանագրությունների միևնույն հատվածում ubardu=ge-ի փոխարեն առկա է ubardu=iале ձևը: Եթե ենթադրենք, որ այն ներկայացնում է դերբայական մի ձև, ապա ստացվում է, որ ուրարտերենում -a(i)e/-age-ի կողքին ունենք նաև -ue/-uge դերբայակերտ մասնիկ, որտեղ, ինչպես երևում է ubardu=փ- քայի և ubardu=ge/ubardu=iале բառաձևերի համեմատումից, բուն դերբայական մասնիկը (կամ քայական վերջավորությունը, եթե վերջին երկուսը նույնպես քայեր են) -ge-ն է: (Մ.Խաչիկյանը ubardu=iале-ն բաղդատում է ubardu=iա=le ձևով՝ ubardu=iա-ի մեջ տեսնելով դիմավոր քայածն՝ հոգնակի թվի =le օբյեկտային ցուցիչով. այս մասին տե՛ս VI.2.4): Իսկ urp=u=e-ի համար հմմտ. urp=u- (անցողական քայ) և urp=u=aֆե ձևերը: Եթե tar(a)=a(i)e/-age-ի կողքին նաև նկատի ունենանք tara բառաձևի գոյությունը (տե՛ս վերը), որտեղ բառավերջի a-ն անկասկած պատկանում է հիմքին, ապա ստանում ենք -je/-ge դերբայակերտ/ածականակերտ մասնիկ, որը մախորդող (ֆերևս հիմնականում) ձայնավորին հավելվելով՝ կազմում է -a=(i/g)e և -u=(/g)e դերբայական վերջավորություններ:

Համեմատությունը հայերենի հետ: Ինչպես երևում է վաղ շրջանի ուրարտ. արձանագրություններում -ge-ի -(i)e ձևից, այստեղ ց-ն պետք է ընթերցել [j] (հայ. ջ), իսկ i-ն՝ [y] (y > j)⁶³⁰: Հայերենում նման դերբայակերտ (կամ ածականակերտ) ածանց չունենք, քայց փոխարենը առկա են դերբայներ և քայանուններ կազմող -ի-չ և -ու-չ ածանցներ⁶³¹, ինչպես նաև՝ -ա(և) -չ, -(և)չ քայածանցներ (ճանա-չ-ել, մեղա-ևչ-ել, փախ-չ-ել և այլն⁶³²), որոնք, ըստ Գ.Ջահուկյանի՝ սկզբնա-

⁶²⁹ Տե՛ս SMEA 44/1, 2001, էջ 112-143 (Van recto):
⁶³⁰ Մյուս կողմից՝ եթե նկատի ունենանք, որ գիրը սովորաբար առավել պահպանողական է, քան բանավոր խոսքը, ապա չի բացառվում, որ նշված հենչունափոխությունը տեղի էր ունեցել ավելի վաղ:
⁶³¹ Այս ածանցների նշանակության և գործածության մասին տե՛ս, օրինակ, Ա.Արթուրյան, 1976, էջ 161:
⁶³² Հմմտ. նաև՝ առամա-չ «աճամոք», հիասքա-ևչ, մա-ևչ (< *մա-չ) և այլն:

պես եղել են դերբայական ածանցներ և -ի-ի ու -ու-ի հետ ներկայացնում են հնագույն * -չի (*-չի) ձևը⁶³³: Ուրարտերենում է հնչյունի առկայությունը վկայող հուսալի օրինակ չկա: Սակայն վերջինիս գոյությունը միանգամայն հնարավոր է: Կասկած չի հարուցում նաև չ-ի՝ սեպագիր ց-ով ներկայացված լինելու հնարավորությունը (տե՛ս Աղյուսակ 3 և II.4.2 կետ 2.3): Միակ խոչընդոտը ուրարա. -v-ge-ի և հայ. *-v-չ(ի)-ի նույնացման համար, հայ. ածանցի ծագման հարցն է: Մասնագետների շրջանում այս հարցում միակարծություն չկա. եղել են տարբեր առաջարկներ⁶³⁴, բայց ոչ -y(i/e)-ից, ինչը որ ունենք ուրարտերենում (եթև, իհարկե, ուրարտական սեպագրերում առկա -(i)/ց- հերթագայումը արտացոլում է այս լեզվում իրականում տեղի ունեցող հնչյունափոխության գործընթացը, այլ ոչ թե հետևանք է գրի առանձնահատկության): Կ-ն հայերենում տալիս է ջ (ծու բառում՝ ձ), բայց ոչ «չ», թեև հայերենում ունենք հաճախակի հանդիպող ջ/չ հերթագայության դեպքեր, ինչպես՝ տեսչ/տեսչ, յօրանջ/յօրանջ, կանաչ/կանաչ և այլն: Կասկածի տեղիք է տալիս նաև այն փաստը, որ ուրարտերենում բացակայում է -i=ge տարբերակը, մինչդեռ հայերենում գերակշռում է -ի-ի ածանցը, եթե, իհարկե, այդպիսի մի օրինակ չէ վերը հիշված Գյովկեթի արձանագրությունում վկայված ն-e-ձi-i-ge բայաձևը (հմմտ. ն-e-ձi-իa-ն-le):

2.3 -ure, -aure⁶³⁵ [-oչ, -awչ] – հայ. -ող, -աղ (-օղ): Գ.Մելիքիշվիլի-

⁶³³ Г.Джаукян, 1982, էջ 180:

⁶³⁴ Այս մասին տե՛ս Г.Джаукян, 1982, էջ 180-181:

⁶³⁵ Մասնագիտական գրականությունում ունենք այն ընթերցում են -a:ure: Նման ընթերցման համար հիմք է ծառայում արձանագրություններից մեկում (КУКН 19/УКН 17) վկայված *šid=a=gure* բառաձևը (դերբայը): Բայց առավել հավանական է, որ այստեղ գործ ունենք վրիպակի կամ սխալ ընթերցման հետ: Դրա օգտին է խոսում այն փաստը, որ ուրարտական տեքստերում այլուր *šid=a=gure* ձևը չի հանդիպում: Եվ ընդհանրապես այս ածանցի -a=gure կամ նույնիսկ -a:iure տարբերակները ուրարտական տեքստերում չեն հանդիպում (մինչդեռ ուրարտերենում առկա է հենց -i/ց- և ոչ թե -ø-/ց- հերթագայություն): Բացի այդ, -ց-ով տարբերակները ուրարտական տեքստերում հանդիպում են միայն Մարդուրի Բ-ի թղթի և ավելի ուշ շրջանի արձանագրություններում, իսկ վերոնշյալ արձանագրությունը թվագրվում է զգալորեն ավելի վաղ շրջանով և պատկանում է Իշպուիմի արքային (այս մասին տե՛ս նաև II.3 կետ 6ա): Երկու տողից բաղկացած այս պակասավոր արձանագրությունը պարունակում է նաև այլ միայն իրեն հատուկ շեղումներ ևս (այս մասին տե՛ս նաև Г.Меликишвили, 1960 (УКН), արձ. 17, ծան. 1) և կարիք ունի ճշգրտման: Բնավ պատահական չէ, որ Ն.Հարությունյանն առաջարկում է դարձյալ միայն այս արձանագրությունում ընթերցվող *sui «ոչ»* բառը կարդալ սւ, ինչպես որ ունենք այլուր (Н.Арутюнян, 2001(КУКН), արձ. 19, ծան. 7):

լին, եղում կատարելով Յ.Ֆրիդրիխին և Ա.Գյոտցեին, ուրարտերենում -(a)ure-ով կազմված բառերը համարում է եզ. թվի 3-րդ դեմքի անցյալ ժամանակի միջին կամ կրավորական սեռի բայաձևեր՝ դիտարկելով -ure-ով տարբերակները որպես անանցողական (*ai=ure, ušt=ure, man=ure* և այլն), իսկ -aure-ովները՝ անցողական (*aga=ure, šida=ure*)⁶³⁶ բայերից կազմված ձևեր: Նման եզրակացության է գալիս նաև Թ.Գամկրելիձեն՝ պնդելով, որ դրանք միշտ դրվում են սւ «ոչ» բացասական մասնիկի հետ և արտահայտում են բացասական իմաստ⁶³⁷: Գ.Մելիքիշվիլին, համաձայնվելով Թ.Գամկրելիձեի այս պնդման հետ, միևնույն ժամանակ մատնացույց է անում ուրարտերենում առկա -ure վերջավորությամբ բայց սւ «ոչ» մասնիկից անկախ գործածվող որոշ բառեր, որոնց քերականական կարգը, սակայն, դժվարանում է որոշել⁶³⁸: Ի.Դյակոնովը իր մի շարք աշխատություններում անդրադառնալով այս հարցին՝ հանգում է այն եզրակացության, որ վերջիններս ուրարտերենում դերբայական մասնիկներ են և հավելվելով բայարմատներին՝ նրանցից կազմում են կրավորական կամ միջին սեռի հարակատար դերբայներ, ինչպես՝ *man=ure* «եղած», *ag=a=ure* «անցկացված», *šid=a(g)=ure* «կառուցված» և այլն⁶³⁹: Նա նույնպես նշում է, որ դրանք հիմնականում հանդիպում են սւ «ոչ» բացասական մասնիկի հետ: Մ.Խաչիկյանը կրկնում է սրանց դերբայական մասնիկներ լինելու Ի.Դյակոնովի տեսակետը, իսկ սւ «ոչ» մասնիկի հետ պարտադիր հանդես գալու հարցը համարում է անորոշ⁶⁴⁰: Գ.Վիլիելմը⁶⁴¹ -aure և -ure ածանցները համարում է սուբյեկտային (-aure) և օբյեկտային (-ure) ուղղվածությամբ դերբայական մասնիկներ, որոնք համապատասխանաբար ցույց են տալիս կատարված գործողության սուբյեկտին, ինչպես՝ *man=ure* «եղած (արքա, կառավարիչ)», *ušt=ure* «արշաված (արքա)» կամ կատարված ինչ-որ գործողության օբյեկտին, ինչպես՝ *ag=aure* «անցկացված (ջրանցք)», *šid=aure* «կառուցված (շինություն)»⁶⁴²:

⁶³⁶ Г.Меликишвили, 1960, էջ 71-72; 1964, էջ 52-53:

⁶³⁷ Т.Гамкрелидзе, ВДИ №4, 1956, էջ 143-145:

⁶³⁸ Նույն տեղում:

⁶³⁹ И.Дьяконов, 1963, էջ 75-76; 1971, էջ 141-142; 1979, էջ 75:

⁶⁴⁰ М.Хачикян, 1985, էջ 95-96:

⁶⁴¹ G.Wilhelm, 2004, էջ 126:

⁶⁴² Գ.Վիլիելմը -aure տարբերակը համեմատում է խոտ. -aure անվանական

Համեմատությունը հայերենի հետ: Անկասկած ուրարտերենի սույն դերբայական ածանցները՝ -oš, -awš արտասանությամբ իրենց ճշգրիտ զուգահեռներն են գտնում հայերենում ի դեմս ներկա ժամանակի (ենթակայական) դերբայը կազմող -ող, -աւղ (-օղ), ի-ա ածանցների, չնայած մասնագիտական գրականությունում վերոնշյալ ուրարտական ածանցների համար առավել տարածված է դրանց հարակատար դերբայ լինելու տեսակետը⁶⁴³ (տե՛ս վերը): Այդ տարբերությունը պարզաբանելու համար դիտարկենք ուրարտական տեքստերում առ այսօր վկայված բոլոր այն արտահայտությունները, որոնցում կան մեզ հետաքրքրող դերբայները՝ վկայված սի «ոչ» ժխտական մասնիկի հարադրմամբ.

- (301) ...ú-i gi-(e)-i (iš-ti-ni) ši-da-ú-ri - «... (չկար) ոչինչ (այստեղ) կառուցված» [KYKH 18_{1,2}, 19_{1,2}, 20a I, II₈, 37 I₂₈, II₅₇, 42 I, II₈ և այլն] .
- (302) ...ú-i a-i-ni-e-i LUGÁL iš-ti-ni ka-ú-ri - «... ոչ մի արքա, այստեղ չի հայտնվել(»)» [KYKH 174B₁₇, 244₇] .
- (303) ...ú-i a-i-ni-i LUGÁL iš-ti-ni uš-tú-ri - «... ոչ մի արքա այստեղ չի արշավել» [KYKH 241 E_{1,42}] .
- (304) ...ú-i a-i-ni-i iš-ti-ni a-i-ú-ri - «... ոչ ոք այստեղ չէր գտնվում(»)» [KYKH 187₃] .
- (305) ...ú-i a-i-ni-i L⁰EN.NAM^{MS} šu-ku-ri ma-nu-ri - «... ոչ ոք կառավարիչներից կոչված(») չէր եղել» [KYKH 241 F₁₆] .
- (306) ...ú-i gi-(e)-i ab-si-(e)-i ... iš-ti-ni ma-nu-ri ú-i PA₅ (iš-ti-ni) a-ga-ú-ri - «... ոչինչ absi(e)i ... (այստեղ) չի եղել, ոչ էլ ջրանցք է եղել (այստեղ) անցկացված» [KYKH 406_{π39}, 407_{π28}, 40] .

ածանցի հետ, բերելով խուռ. Խաշ=aure «սահմանափակված մեկը (օր. բանտարկյալը) օրինակը:

⁶⁴³ Արդի հայերենում հարակատար դերբայը կազմվում է -ած ածանցի միջոցով: Գրաբարը հարակատար դերբայի համար առանձին ձև չունի, իսկ իմաստը արտահայտվում է անցյալ ժամանակի դերբայի միջոցով:

- (307) ...ú-i ab-si-(e)-i ... iš-ti-ni ma-nu-ri ... ú-i PA₅ a-ga-ú-ri ú-i ta-ar-ma-na-ni iš-ti-ni ma-nu-ri - «... (չկար) ոչ մի ab-si-(e)-i ... այստեղ եղած, ոչ ջրանցք (այստեղ) անցկացված, ոչ աղբյուր այստեղ եղած» [SMEA 44/1, 2002, էջ 117, տող 20-33] :

Ուրարտական տեքստերում ունենք մակ արտահայտություններ, որոնցում -ure-ով կազմված/վերջացող բառերը հանդես են գալիս սի «ոչ» մասնիկից զատ.

- (308) III L⁰EN.NAM^{MS} šu-ku-ri ma-nu-li - «երեք կառավարիչներ կոչված(») էին ...» [KYKH 241D₂₁] .
- (309) i-e-še šu-si-ni KA[SKAL?] [za-du?/pa-ru?]-ú-bi ka-ú-ri šu-i-a-še LUGÁL^{MS} [-še]... - «ես մեկ արշավ կատարեցի (կամ մեկ արշավի ընթացքում բերեցի) ka-ú-ri բոլոր արքաները ...» [Movana, Face 1₅₇₋₅₈ (SMEA 44/1, 2002, էջ 9)] .
- (310) ka-še URU⁰še-ú-i-li-a-ni a-še za-ú-ri-e a-mu-li-ni aš-ḫu-li-ni - «(»)» [Ay-susi VI₃ (Ayanis I)] .
- (311) su-lu-uš-ti-bi ša-tú-a-li (^{ms}Sar₅-du-ri-ni-li) ku-ri-(e)-li si-lu-a-di ma-ku-ri - «սողաց բռնեց (Մարդուրի-ի) (իմ) ոտքերը, վերաբերեցի (») ես նրան զբասիրտ (») ... » [KYKH 53₁₄, 241C₃₆, 244₂₂] :

Եթե փորձենք բերված արտահայտություններում -(a)ure-ով կազմված բառերի տակ տեսնել հայ. ներկա ժամանակի (ենթակայական) դերբայ կամ դրան շատ մոտ կանգնած դերբայական ինչ-որ ձևեր, ապա վերոնշյալ արտահայտությունները կարելի է բառացի թարգմանել հետևյալ կերպ. (301) «... (չկար) ոչինչ(») (այստեղ) կառուցվող»⁶⁴⁴, (302) «... (չկար) ոչ մի արքա, (ոչ մեկը՝ արքաներից) այստեղ եղող/գտնվող», (303) «... (չկար) ոչ մի արքա (ոչ մեկը՝ արքաներից) այստեղ արշավող», (304) «... (չկար) ոչ մեկը այստեղ հայող (ուշ դարձնող)⁶⁴⁵», (305) «... (չկար) ոչ մի կառավարիչ՝ հսկող, մնացող⁶⁴⁶», (307) «... (չկար) ոչինչ(»)»

⁶⁴⁴ Հնարավոր է մակ «... ինչ-որ մեկը այստեղ կառուցող» թարգմանությունը:

⁶⁴⁵ A1- բայի «հայ-ել» թարգմանության համար տե՛ս III.2.3 կետ 2.1:

⁶⁴⁶ Տառացի «ո(չ) այնէ կառավարիչ (հ)սկող Մ(աց)ող» (šuk-ure-ի նման թարգմանության համար մանրամասն տե՛ս IX):

absi(e)i ... (այստեղ) եղող/մնացող, ոչ (էլ) ջրանցք (այստեղ) անցնող» և այլն: Ինչպես տեսնում ենք, ուրարտական - (a) ure ածանցի տակ հայ. -ող, -աւղ ածանցների դիտարկումը բոլոր դրվագներում տալիս է միանգամայն հասկանալի համատեքստ: Դեռ ավելին (305)-ում և (308)-ում šuk=ure-ի «հսկող» քարգմանությունը (հայ. (h)սկ-ող «հսկող») առավել լավ է ընկալվում, քան նախկինում առաջարկվող «կոչված(°)» իմաստի դեպքում: Բացառված չէ նաև, որ (311)-ում հիշատակվող mak=ure բառի մեջ նույնպես պետք է տեսնել նույն դերբայական մասնիկը՝ համապատասխան հատվածը քարգմանելով «ներող գտնվեցի(°)» մտաւոր իմաստով, ինչը միանգամայն համահունչ է ընդհանուր համատեքստին: Հարկ է նշել, որ հայերենում ենթակայական դերբայի -ող և -աւղ (-ող) մասնիկները իմաստային որևէ տարբերություն չունեն: Դրանք երկուսն էլ արտահայտում են ներգործական կամ չեզոք սեռի իմաստ: Պետք է ենթադրել, որ առավել վաղ շրջանում այս երկու ձևերը ունեցել են որոշակի իմաստային տարբերություն: Եթե դա իրոք այդպես է, ապա բացառված չէ, որ -աւղ տարբերակը ունեցել է կրավորական սեռի իմաստ, ինչը կարծես թե ունենք ուրարտերենում⁶⁴⁷: Հայերենում -աւղ, -ող մասնիկները քնիկ են, դրանց ծագման մասին մանրամասն տե՛ս Գ.Ջահուկյան, 1987, էջ 239-240:

Աղյուսակ 13

Ուրարտերենի դերբայներ / քայածականներ կազմող ածանցները հայերեն համապատասխան ձևերի համադրմամբ.

Ուրարտ.	Հայ.	Նշանակությունը
-(a)ure -u (°)	-ող, -աւղ (-ող) -ու	դերբայակերտ ածանց(ներ) դերբայներ (°) և քայանուններ կազմող ածանց
-u(ne)	-ու(ն)	քայանուններ և քայածականներ կազմող ածանց
-v-i/ge	-ա(ն)-չ, -(ն)-չ (°) -ու-չ, -ի-չ (°)	ուրարտ. կազմում է քայածականներ, դերբայներ (°). հայ. քայածանց, դերբայներ/ածականներ կազմող ածանց (եին դերբայական մասնիկ)

⁶⁴⁷ Ուրարտերենում -a-ure-ով դերբայների կրավորական սեռի իմաստը հատկապես պարզորոշ երևում է՝ u1 gi(e)i (ištī-ne) šid-a-ure - «... (չկար) ոչինչ (այստեղ) կառուցվող» արտահայտությունում, եթե իհարկեցի gi(e) i-ն նշանակում է «ինչ-որ բան» և ոչ թե «ինչ-որ մեկը»:

VI.4 ՄԱԿԱՍ

1. Ուրարտերենի մակրայները մասնագիտական գրականությունում: Գ.Մելիքիշվիլին⁶⁴⁸ ուրարտերենում առանձնացնում է հետևյալ մակրայները. ա) ձևի՝ šišuhani «նորից(°)», բ) ժամանակի՝ iu «ներք», aše «ներք», a(i)še «երևիցե», mei a(i)še «ոչ մի անգամ, երևիցե ոչ», absiei «նախկինում(°)», ini/inukani/ikukani edini «հետտ, արդյունքում(°)», գ) տեղի՝ auie «որտեղ», auiei «ինչ-որ տեղ», ištini «այնտեղ», ištīnini «այնտեղից», edia «այնտեղ», edini «այնտեղից», դ) չափի և քանակի՝ tarani «կրկին(°)», šīštīni «երրորդ անգամ(°)»: Նա ուրարտերենում մակրայակերտ հատուկ ածանցներ չի նշում: Մ.Խաչիկյանը⁶⁴⁹ առանձնացնում է -nə և -šə մակրայակերտ ածանցներ, որոնցից, ըստ իրեն, ուրարտերենում կազմավորված են šišuha=nə (<šiš- (°) «նորից(°)», šīšti=nə («(°) (<šiš- (°)), tara=nə «կրկին(°)», MU.MU-nə «ամեն տարի», biduia=šə (< *bid=ui=a(r)=šə) «հետդարձին, վերադառնալիս» մակրայները: Իսկ դերանվանական մակրայներից նշում է հետևյալները՝ ištīnə «այնտեղ», ištēdə «(դեպի) այնտեղ»⁶⁵⁰, edinə «(այնտեղ)-ից», away «այստեղ(°)», awe(y) «ինչ-որ տեղ(°)», այլ մակրայներից՝ hənə «այժմ», kamnašə «նախկինում, առաջուց»: Գ.Վիլհելմը⁶⁵¹ նշում է ainey «ինչ-որ մեկը», yey «ինչ-որ բան», hənə «այժմ», ištīnə «այնտեղ», ištīni=nə «այդտեղից» մակրայները: Եթե ճիշտ է a-ri-be բառին Ն.Հարությունյանի տված «խսկույն(°), անմիջապես(°)» քարգմանությունը (Մ.Սալվինին կարդում է տեքստում նախորդող e-ri-da-be-ի հետ միասին՝ a-ri-bi-(e)-ri-da-be), ապա մակրայների թվին պետք է դասել ինչպես վերոնշյալ, այնպես էլ su-lu-uš-ti-(i)-be բառերը: Այդ դեպքում, միգուցե, հաշվի առնելով naš=a=be ամանցողական քայի առկայությունը ուրարտական տեքստերում, որպես մակրայ պետք է ընկալել նաև na-ši-(i)-be քայածևը: Մյուս կողմից՝ բացառված չէ, որ միևնույն անանցողական

⁶⁴⁸ Г.Меликшвили, 1964, էջ 58-59:
⁶⁴⁹ М.Хачикян, 1985, էջ 113-114:
⁶⁵⁰ Որոշ ուսումնասիրողներ ištēdə-ը համարում են 1-ին դեմքի եզ. թվի անձնական դերանուն, բացարձակ հոլով (այս մասին տե՛ս V.3 կետ 1):
⁶⁵¹ G.Wilhelm, 2004, էջ 133:

բայը կարող է խոնարհվել երկու տարբեր ենթատիպերով⁶⁵² (ամանցողական բայերի անցյալ կատարյալ ժամանակի/կերպի խոնարհման մասին տե՛ս VI.2.1 կետ 2):

2. Համեմատությունը հայերենի հետ: Ուրարտերենի *edi-* և *išti-* դերանվանական մակբայների և նրանց հայերեն զուգահեռների մասին տե՛ս V.3 կետ 4: Նմանապես և *a(i)šei* և *a(i)nei* բառերի համար: Իսկ *iu* «երբ», *aše* «երբ», *šistinə* («^(*)»), *henə* «այժմ» և *taranə* «կրկին(^(*))» բառերի իմաստների և նրանց հնարավոր հայերեն զուգահեռ ձևերի մասին տե՛ս էջ 54, III.2.3 կետ 6.4 և 12; III.2.4 կետ 10 և 18: *Peṭu=-i(=)aše* [φετο=y=-] «հետդարձին, վերադառնալիս» մակբայը անշուշտ կազմված է [φετο=]- հայ. (h)ետ, -ոյ «(h)ետ, հետո» (տե՛ս III.2.3 կետ 47) բառարմատից, սակայն անհասկանալի է մնում - (i)aše-ն⁶⁵³: *Auie, auiei* ենթադրյալ մակբայների համար որևիցե համեմատություն չենք անում՝ դրանց տրված թարգմանությունների անհուսալիության պատճառով: Եթե մեր ենթադրությունը ճիշտ է և ուրարտերենում իսկապես գոյություն ունի *-ibe* [-ib/w/v] մակբայակերտ մասնիկ, ապա այն անշուշտ պետք է համեմատել հայերենի *-(v)-ը/վ/ւ* գործիականի վերջավորության հետ, որը հայերենում կազմում է նաև մակբայներ, ինչպես՝ կամավ, ճեպով, կանխավ, ճշտով, ստոյգիւ, լրիւ և այլն: Եթե ճիշտ է *kamnaḫə* բառին մասնագիտական գրականությունում տրվող «մախկիւնում, առաջուց» ենթադրական թարգմանությունը, ապա այն թերևս կարելի է համեմատել հայ. կանուխ մույնիմաստ մակբայի հետ (տե՛ս III.2.4 կետ 8):

⁶⁵² Մ.Խաչիկյանը հնարավոր է համարում, որ *naḫ=i-be*-ն կրավորական սեռի բայ է [Մերձ., XXIV, 2005, էջ 478]:

⁶⁵³ Եթե ուրարտերենում իսկապես առկա է *-še* [-s] մակբայակերտ մասնիկը, ինչպես որ առաջարկում է Մ.Խաչիկյանը, ապա ամենայն հավանականությամբ այն պետք է համեմատել հայերենի *ս* մակբայակերտ մասնիկի հետ:

VII. ՆԱԽԴԻՐՆԵՐ/ԵՏԳԻՐՆԵՐ, ՆԱԽԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ/ԵՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

VII.1 ՆԱԽԴԻՐՆԵՐ

Մասնագիտական գրականությունում ուրարտերենի համար հավաստիորեն նշվում է միայն *pare* նախդիրը՝ «մոտ, մինչև» իմաստով⁶⁵⁴: Գ.Մելիքիշվիլին հնարավոր է համարում *ka(i)* ետդիրի գործածումը նաև որպես նախդիր: Նա որպես մնաց կիրառության հնարավոր օրինակ բերում է *ka=(i)u=ke* «իմ առջև» բառածը⁶⁵⁵:

Հայերենում նախդիրները չորսն են՝ առ, ի, գ, ըստ և ընդ, որոնք ունեն լայն գործածություն: Հանդես գալով տարբեր հոլովների հետ՝ դրանք արտահայտում են զանազան իմաստներ: Մենք կանգ չենք առնի այդ բոլոր նախդիրների կիրառության, ծագման կամ առանձնահատկությունների վրա, այլ կքննարկենք միայն նրանք, որոնք այս կամ այն ձևով վկայված են Վանի արձանագրություններում⁶⁵⁶: Անդրադառնանք դրանց առանձին-առանձին:

1. *pare* [φaɪ] «մոտ, մինչև» - հայ. առ «մոտ, մինչև»: Մասնագիտական գրականությունում ուրարտերենի *pare* նախդիրը համեմատվում է հնդեվրոպական **per-*ի (> հայ. առ) հետ⁶⁵⁷: Ուրարտերենում այն հիմնականում գործածվում է տրական հոլովի հետ՝ արտահայտելով «մինչև, մոտ» իմաստը: Տե՛ս հետևյալ օրինակները.

- (312) *ku-ṭu-ni pa-ri* ^{KUR}*Bu-uš-tu-u-e* (u[o] հոլովում)
pa-ri ^{SADU}*Ma-al-ma-li-i-e* (i - հոլովում) - «հասավ
մինչև Բուշտու, մինչև Մալմալի (լեռը)» [KYKH 148₁₅₋₁₆].

⁶⁵⁴ Տե՛ս, օրինակ, Г.Меликишвили, 1960(УКН), էջ 78; 1964, էջ 60:

⁶⁵⁵ Տե՛ս նախորդը:

⁶⁵⁶ Հայերենի նախդիրների և նրանց կիրառության մասին տե՛ս, օրինակ, Հ.Ավետիսյան, 1986, էջ 214-235:

⁶⁵⁷ Այս մասին տե՛ս ծան. 82, 84 և այնտեղ նշված գրականությունը:

- (313) ku-ṭe-a-di⁶⁵⁸ pa-ri^{KUR}ḡu-šá-u-e (u[o] հոլովում) pa-ri^{KUR}Bi-a-u-e (u[o] հոլովում) - «հասա մինչև Խուշաու (երկիրը), մինչև Բիաու (երկիրը)» [KYKH 174 C₅₋₆].
- (314) [k]u-ṭe-i-a-di pa-a-ri-e^{URU}A-li-iš-tú-u (u[u] հոլովում⁶⁵⁹) - «հասա մինչև Ալիսթու (երկիրը)» [KYKH 174 A2₁₂].
- (315) ku-ṭe-i-a-di pa-a-ri-e^{KUR}Iš-qi-gu-lu-[u] (u(u) հոլովում) - «հասա մինչև Իշքիգուլու (երկիրը)» [KYKH 173 V₄₉].
- (316) [ku-ṭu]-bi pa-ri^{KUR}A-bu-ni-i-e (i հոլովում) «հասա մինչև Աբունի (երկիրը)» [KYKH 174 B1₃₇].
- (317) ku-ṭe-i-a-di pa-a-ri-e^{SADU}A-la-ṭe-i-e (i հոլովում) ^{SADU}ba-ba-ni - «հասա մինչև Ալասե լեռ» [KYKH 174 B2₂₇].
- (318) ku-ṭe-a-di pa-r[i^U]Pu-ti-e (i հոլովում) - «հասա մինչև Պուտի (երկիրը)» [KYKH 173 17].
- (319) ku-ṭe-a-di pa-ri^{URU}U-i-ḡi-ka-a (a - հոլովում) ^{KUR}Bu-uš-tú-e (u(o) - հոլովում) «հասա մինչև Ուիսիկա (քաղաք), Բուշտու (երկիր)» [KYKH 173 V₂₅].
- (320) za-šu-u-[bi pa-ri?] ^{KUR}Ri-ḡi-ša-a (a - հոլովում) ^{KUR}[e-ba-ni?] «հետապնդեցի(?) մինչև Ռիսիշա (երկիրը)» [KYKH 242 C₆] և այլն:

Գ.Մելիքիշվիլին հնարավոր է համարում սույն նախդիրի գործածումը նաև ուղիղ (չձևավորված կամ ուղղական) և ներգոյական հոլովների հետ: Նա բերում է հետևյալ օրինակները. 1. (ներգոյական) pari al-zina [YKH 279₃] (Ն.Հարությունյանը կարդում է pari alzina [KYKH 418₃]), kuṭēadi pari^{KUR}Baruatainia⁶⁶⁰ [YKH 155 A₆], 2.

⁶⁵⁸ Պետք է ընթերցել ku-ṭl-(i)-a-di: Ամանցողական բայ է, որի փոխարեն (312)-ում և (316)-ում առկա է ku-ṭu-be/ne անցողական բայը: Ամանցողական բայերի անցյալ կատարյալի -i-a- խոնարհմամ (հայ. չեզոք սեռի -եա- խոնարհում) մասին առավել մանրամասն տե՛ս VI.2.1 կետ 2:

⁶⁵⁹ Պետք է հստակորեն տարբերակել [o] և [u] հոլովումները: Առաջինը տրականում ստանում է -ue, իսկ երկրորդը՝ -u(u) վերջավորությունը: Վանի արձանագրություններում [u] հոլովման բառերի վկայության մասին տե՛ս V.2.2 կետ 3:

⁶⁶⁰ Ըստ երևույթին, տրական հոլովով դրված տեղանուն՝ ^{KUR}Baruatainia ուղիղ ձևից (<^{KUR}Baruatainia=a):

(ուղիղ) kuṭēadi pari^{KUR}Išqiguluu (այստեղ առավել հավանական է, որ է դեմս ^{KUR}Išqiguluu-ի՝ գործ ունենք [u] հոլովմանը պատկանող տրական հոլովով դրված տեղանվան հետ), kuṭubi pari^{URU}Ištikuniu, kuṭubi pari^{KUR}Urtēḡini (Ն.Հարությունյանը կարդում է «pari^{KUR}Urtēḡi KUR-ni» [KYKH 250₅, ծան. 3]): Սակայն այս բոլոր օրինակները կասկածելի են տարրնթերցումների և այլ պատճառներով և չեն հաստատվում այլ՝ առավել վստահելի վկայություններով: Մինչդեռ կասկած չի հարուցում pare նախդիր կիրառումը մեկ այլ՝ ուղևորական հոլովի հետ հետևյալ դրվագներում:

(321) ku-ú-ṭè-a-di pa-ri^{UD}mu-na-i-di - «հասա մինչև գետը» [KYKH, 409₄, 410₄].

(322) ...pa-ri-e^{KUR}Ar-ṭè-ni-e du-di-gi-e-di «...մինչև Արտեմիական սահմանաքարին(?)» [УПД № 12 л.с.11 / KYKH 520 л.с.11]:

Թերևս նաև հետևյալում՝

(323) ma-ku-lu-[ni] ... pa-ri^MIš-pi-li-ni^MBa-tú-ḡi-ni-ni GIŠNU.SAR₂-ni-di «նետեց ... մինչև Բատուայի որդի Իշպիլինիի այգին» [KYKH 408₃₋₁₀]:

(323)-ում ունենք տրական հոլովով հատկացուցիչ՝ ուղևորականով դրված հատկացյալի դեպքում (pare ^MIšpili=i=n(e)=e ^MBatu=(i=)ḡini=n(e)=e ^{GIŠ}NU.SAR₂-n(e)=edi) (տե՛ս V.2.8 կետ 2b): Այլ վկայություններից ուշագրավ են հետևյալ արտահայտությունները՝ «kuṭēadi pari^{KUR}Aššurni-ni^{KUR}algani» - «հասա մինչև ասուրական սահմանը(?)» [KYKH 137 IV₃₆, 174 B2₈] (քացառված չէ, որ այստեղ գործ ունենք քացառական-գործիական հոլովի հետ. քացառական և գործիական հոլովները հայերենում առ նախդիրի հետ կարող են արտահայտել տեղի իմաստ, տե՛ս ստորև), kuṭube pari^{KUR}Uduri-Eti<u>ni - «հասա մինչև Ուդուրի-Էթիունի» [KYKH 249₇], kuṭēadi pari ...pari^{KUR}Uduri^{KUR}Etiu-hini - «հասա մինչև ... մինչև Ուդուրի-Էթիունի» [KYKH 173 I₂₁]: Pare նախդիրը վկայված է նաև մի քանի այլ դրվագներում, որոնց մասին այժմ անհնար է որևիցե հավաստի բան ասելը:

Հայերենում առ նախդիրը գործածվում է հայցական, տրական, քացառական և գործիական հոլովների հետ:

Հայցական հոլովի հետ արտահայտում է. ա) «դեպի, մոտ» իմաստը, բ) վերաբերության իմաստ, գ) տրական հոլովի իմաստ (նախդրիկ տրական), դ) «յուրաքանչյուր», «ամեն մի» իմաստը, ե) առանձին կամ ի նախդրի հետ արտահայտում է նպատակ կամ պատճառ, զ) կազմում է մի շարք ոճեր:

1. Տրական հոլովի հետ արտահայտում է. ա) պատճառ, բ) մի քանի մոտ լինելը, գտնվելը:

2. Բացառական հոլովի հետ արտահայտում է. ա) պատճառ, բ) նպատակ, գ) «մոտ» իմաստը, դ) միայն բացառականի իմաստ:

3. Գործիական հոլովի հետ ցույց է տալիս. ա) տեղ, բ) ժամանակ, գ) համեմատություն:

Վերոնշյալից կարելի է եզրակացնել, որ եթե զրաբարում առ նախդիրը տրական հոլովի հետ արտահայտում է որևիցե մի քանի, առարկայի մոտ գտնվելը⁶⁶¹ (օրինակ՝ Ընկեցին զևա ի գուր առ դրան (դռան մոտ) քաղաքին [Յեսու., Ը, 29]), ապա Վանի արձանագրություններում այն հանդես է գալիս առավել լայն իմաստով՝ արտահայտելով ընդհանրապես ինչ-որ մի տեղում գտնվելու կամ հասնելու իմաստ: Նյութի սակավության պատճառով մյուս հոլովների հետ զործածության վերաբերյալ ստույգ համեմատություններ անել հնարավոր չէ:

2. i [y/i] - հայ. ի/յ < *en (°): Վանի արձանագրություններում որոշ դերանուններ համանման համատեքստում հանդես են գալիս երկու տարբերակով՝ սկզբնական i-ով և առանց նրա, օրինակ՝ šana և išana (տե՛ս V.3 կետ 3): Այս հանգամանքը թույլ է տալիս մտածելու, որ ի դեմս այս i-ի հնարավոր է, որ մենք գործ ունենք հայ. ի նախդրի հետ (տե՛ս III.2.3 կետ 22) (հմմտ. հայ. ի ևո-յն, ի սո-յն դարձվածները): Սակայն նյութի սակավության պատճառով այս հարցում առայժմ դժվար է վստահ լինել, հնարավոր է նաև, որ քերված օրինակում գործ ունենք նախածանցի հետ՝ բառակազմական արժեքով: Ակնհայտորեն հենց այս i-ն է՝ նախածանցի տեսքով, վկայված aniardune [an=y=ardu=n] «մեղավոր, անարդար»⁶⁶² և թերևս նաև՝ iarane [y=ar=an] «սրբավայր կամ սրբավայրերին կից ինչ-որ կառույց(°), պաշտամունքային

⁶⁶¹ Հայ. առ նախդրի զործածության մասին առավել մանրամասն տե՛ս, օրինակ, Հ.Ավետիսյան, 1986, էջ 214-216:

⁶⁶² aniardune-ն այդպես է բարգձմանում Ի.Դյակոնովը [ДВ, 5, 1988, էջ, 160]: Այն ակնհայտորեն կազմված է ardu - հայ. արդ, -ոս/ի «կարգ, ձև» (հմմտ. նաև ուրարտ. ardi=še «կարգ») արմատից՝ աՆ- և յ- նախածանցների միջոցով (տե՛ս III.2.3 կետ 4, 4.1):

պատվանդան(°)» հայ. *յ-արան (III.2.3 կետ 9) բառերում: Հայերենում ի/յ-ն կարող է հանդես գալ թե՛ որպես նախդիր, թե՛ որպես նախածանց⁶⁶³:

3. z (a) - [z (ə) -] - հայ. զ/ձ < *ghō: Վանի արձանագրություններում վկայված է միայն նախածանցի տեսքով (տե՛ս IV.3 կետ 1.1): Համեմայն դեպս որպես նախդիր վերջինիս զործածությունը հաստատող որևիցե ստույգ վկայություն չկա:

VII.2 ԵՏԴԻՐՆԵՐ

Գ.Մելիքիշվիլին ուրարտերենում առանձնացնում է -ka (i), -pi, -ši/e, -ištinie⁶⁶⁴ (Ն.Հարությունյանը⁶⁶⁵ համարում է առանձին բառ՝ «շնորհիվ(°)», «համար(°)» նշանակությամբ), -edia, -edini նադիրները: Վերջին երկուսի և -ištinie-ի մասին տե՛ս V.3 կետ 4, իսկ -pi-ի համար տե՛ս VII.3 կետ 2.1: Մյուսները ներկայացնենք ստորև առանձին-առանձին:

1. -kai [-kay] - հայ. -կայ «առջև, մոտ»⁶⁶⁶: Իմաստը որոշվում է Թոփուզավայի և Կելիշինի երկլեզվյա արձանագրություններից, որտեղ ուրարտ. -ka (i) -ին համապատասխանում են ասոր. ina pan-ն և IGI շումերական գաղափարագիրը՝ «առջև» իմաստով [տե՛ս H.Арутюнян, КУКН, էջ 417, 451]: Գ.Մելիքիշվիլին համարում է նադիր, որը հավելվում է չձևավորված կամ ուղղական հոլովով դրված զանազան գոյականների՝ արտահայտելով «առջև, մոտ» իմաստը⁶⁶⁷, ինչպես՝ iu «Al-di=kai^{URU} Ardinidi nunali... - «երբ (Խ)ալդիի առջև, դեպի Արդինի եկան...» (չձևավորված հոլով), «Rusaše^M Argišteḫiniše ini É.GAL badusiie šidiištúni^{KUR} eiduru=kai⁶⁶⁸ «Ռուսան՝

⁶⁶³ Օրինակ՝ յ-ած-եմ «տատանել, հուզել», յ-ատ-եմ «երկարել, ձեռքը մեկնել» և այլն:

⁶⁶⁴ Տե՛ս Г.Меликишвили, 1960 (УКН), էջ 77-78; 1964, էջ 59-60:

⁶⁶⁵ Տե՛ս H.Арутюнян, 2001 (КУКН), էջ 450:

⁶⁶⁶ Գ.Ղափանցյանն այն համեմատում է խեթ. kâ «այստեղ, ահա» բառի հետ՝ հնարավոր համարելով սրանց կապը հայ. բրբռ. «կու»-ի (կու զնամ = ահա զնում եմ > կզնամ) հետ [1940, էջ 30]: Ուրարտական (-)ka -ի և խեթ. kâ-ի հնարավոր կապի մասին տե՛ս նաև J.Friedrich, 1952, էջ 141:

⁶⁶⁷ Г.Меликишвили, 1960(УКН), էջ 71-72; 1964, էջ 59:

⁶⁶⁸ Համանուն քաղաքները իրարից տարբերելու նպատակով այս ձևով մշվում է կառուցման վայրը: Հմմտ. օրինակ՝ Rusaḫina^{KUR} eiduru=kai [Ay-susi I, (Ayanis I)] և Rusaḫina^{KUR} Qilbani=ka [КУКН 412лиц.з]:

Արգիշտիի որդին այս պալատը հռայկապ(°) կառուցեց Էդուրու երկրի առջև» (չձևավորված հոլով), ...e`a ^dHaldina KÁ e`a pulusi=ni=kai «...և Խալդի աստծո դռներում և արձանագրության առջև» (ուղղական հոլով) [KYKH 82₂₉] և այլն: Ի.Գյակոնովը -kai (=ne) համարում է հոլովային ցուցիչ՝ «դիմակա», «դիմակա բացառական» (տե՛ս V.2.2 կետ 2): Գ.Վիլհելմը չի կիսում այդ տեսակետը՝ այն համարելով ետդիր⁶⁶⁹: Ուրարտերենում այս նույն արմատից ունենք ka-բայարմատը՝ «կանգնել», «լինել, գալ» իմաստով [տե՛ս И.Дьяконов, 1963, էջ 74; Н.Арутюнян, 2001(KYKH), էջ 451], որը համապատասխանում է հայ. կա-մ բային «կենալ, կանգնել», «երևալ, գալ», «լինել» և այլն (III.2.3 կետ 28), որից և կազմված է հայ. կալ բառը: Ինչ վերաբերում է սույն արմատի որպես ետդիր գործածմանը, ապա հմմտ. նույն արմատից կազմված հայերեն բառերի հետ, օրինակ՝ ոտև-կայ, մերձ-ա-կայ, մոտ-ա-կայ, ջր-կայ, կեր-կայ, արել-կայ «ուր կայ լոյս արևու [ՆԲՀԼ Ա, էջ 555]» և այլն: Վերջինը հմմտ. Վանի արձանագրություններում հաճախակի հանդիպող նույնանման ^dUTU-ni=kai (^dUTU-ni «արևի՝ լույսի աստված», «արև, լույս») ⁶⁷⁰ ձևի հետ: Ուրարտերենում ka- արմատից ունենք նաև՝ ka=(i/g)u=ke «իմ՝ առջև, մոտ», ka=i=ani/e և, թերևս՝ ka=ni/e բառերը: Առաջինը կազմված է ka «կա-լ» արմատից՝ -ke «-իմ» ստացական դերանվանական մասնիկի հավելումով (տե՛ս V.3 կետ 2.1): Երկրորդը վկայված է մեկ անգամ և թերևս համապատասխանում է հայ. կա-յ-ան «կայան»-ի (տե՛ս III.2.3 կետ 28.3):

Ինչ վերաբերում է kani/e բառաձևին, ապա, թեև Ն.Հարությունյանը այն ներկայացնում է որպես նախդիր՝ «առջև, առաջ» իմաստով [2001(KYKH), էջ 451], սակայն արձանագրությունների թարգմանություններում բաց է բողնում [նույն տեղում, էջ 19, 21 ծան. 12]: Վերջինս նույնպես կարելի է կապել հայ. կա(յ) բառարմատի հետ, սակայն հատվածի վնասված լինելու և ոչ այնքան հասկանալի համատեքստի պատճառով մենք այն բողնում ենք առանց մեկնաբանության:

⁶⁶⁹ G. Wilhelm, 2004, էջ 127, 134:

⁶⁷⁰ Մասնագիտական գրականությունում (^dUTU-ni=kai)-ն, որպես կանոն (այդպես է պահանջում համատեքստը), թարգմանվում է «արևի տակ (փխր. այս/լույս աշխարհում)» [Н.Арутюнян, 2001(KYKH) 277₆, 278₇, 419₁₂ և այլն]: Այսպիսի իմաստով այն ամբողջությամբ համապատասխանում է հայ. արել-կայ բառին:

Այսպիսով, կարող ենք պնդել, որ Վանի արձանագրություններում վկայված (-)ka- բառարմատը, թե՛ ինքնուրույն, թե՛ բարդություններում գործածվելիս, ձևով և իմաստով համապատասխանում է հայ. կա բառարմատին և նրանից կազմված ձևերին: Համեմատությունները տե՛ս հետևյալ աղյուսակում.

Ուրարտերեն		Հայերեն	
ka-	«կանգնել, լինել, հայտնվել»	կա-լ	«կանգնել, երևալ, գալ»
ka=i=ani	«կայան» (°) (թարգմ. մերձ է)	կա-յ-ան	«կայան»
ka=(i/g)u=ke	«իմ՝ առջև, մոտ» (-i/g-u=ke «-իմ»)	կա-յ-	«կենալու տեղ, կայան, դիրք»
-kai	«առջև, մոտ, տեղ»	-կա-յ	«տեղ, դիրք»

Եզակի թվում բառահիմքերին հավելվելիս -kai [-kay] ետդիրը կցվում է կա՛մ անմիջապես մաքուր հիմքին, կա՛մ -ni/e- մասնիկի միջնորդությամբ, իսկ հոգնակի թվում՝ միայն -na- մասնիկի (հոգնակիության ցուցիչի) միջնորդությամբ, համեմայն դեպս՝ մինչ այժմ հայտնի բոլոր վկայություններում:

2. -aše [-aš] (այսպես՝ ըստ Յ.Ֆրիդրիխի): Գ.Մելիքիշվիլին սկզբնական -a-ն տարանջատում է բուն ածանցից՝ այն համարելով ներգոյական հոլովի ցուցիչ: Մասնագիտական գրականությունում սույն մասնիկի նշանակության հարցում միակարծություն չկա: Գ.Մելիքիշվիլին դիտարկելով որպես ետդիր՝ համարում է, որ այն արտահայտում է ներգոյական հոլովի իմաստ՝ որպես օրինակ նշելով šuhinaše, ebaniaše բառերը և ^{KUR}šatināše տեղանունը [1960, էջ 77; 1964, էջ 59]: Ի.Գյակոնովը համարում է ներգոյական հոլովի ցուցիչ [1979, էջ 62], Գ.Վիլհելմը [2004, էջ 134]՝ ետդիր: Սակայն այս ածանցը ակնհայտորեն գոյականակերտ իմաստ ունի զոնե urbuāše և թերևս նաև tanaše բառերում: Եվ, ընդհանրապես, միշտ չէ, որ -aše-ի մեջ հնարավոր է տեսնել ներգոյական հոլովի ցուցիչ կամ ներգոյականի իմաստով ետդիր: Հարցը պարզաբանելու համար քննարկենք -aše-ի բոլոր վկայությունները՝ դրանք բաժանելով երեք խմբի: Առաջին խմբում ընդգրկված են այն բառերը, որտեղ -aše-ն ակնհայտորեն հանդես է գալիս որպես բառակազմական ածանց՝ կազմելով գոյականներ, երկրորդում՝ այն բառերը, որոնց համար ներգոյական իմաստը միանգամայն հնարավոր է, և երրորդ խմբում՝ այն բառերը, որոնց ընթերցումը կասկածելի է և/կամ իմաստը անհասկանալի:

-Առաջին խումբ. urbuase «զոհ, զոհաբերություն» (կազմված է urb=u- «զոհել, զոհ մատուցել» բայից), քերևս մակ՝ tanaše «կանթեղ կամ հենակ» (եթե ճիշտ է երկրորդ իմաստը, ապա այն հավանաբար կազմված է tan-(dan-) «դնել կամ հիմնել» բայից)⁶⁷¹: Այս երկու բառերում էլ -(u) aše-ն հանդես է գալիս որպես զուտ բառակազմական ածանց: Դրանք երկուսն էլ գոյականներ են՝ համապատասխանաբար կազմված urb=u- և tan-(dan-) (*) բայահիմքերից: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ urbuase - «զոհ, զոհաբերություն» (գոյական), քերևս մակ tanaše - «կանթեղ կամ հենակ(*)» (գոյական) բառերում ի դեմս ուրարտական -(u) aše ածանցի գործ ունենք հայերենի Վ (ու)ած համանման ածանցի հետ (մանրամասն տե՛ս IV.3 կետ 2.9):

-Երկրորդ խումբ. ^{KUR}ebaniase «երկրում(*)», ^{KUR}ḫatinaše «Խաթի երկրում/դեպի Խաթի երկիրը», ^{LÚ.A.SI}MEŠ-še «գործեր (*)»⁶⁷², qudulane šuḫinaše/GIBIL-še «նոր տաճարում(*)», ^{KUR}luluinaše «թշնամական (Լուլուական) երկրում» և ^{KUR.KUR}MEŠ-še šūiaše «ամբողջ աշխարհում (տիրությունում)»: Այս խմբում ընդգրկված բառերում -aše մասնիկի գործածության և հնարավոր մշամակության մասին մանրամասն տե՛ս V.2.9 կետ 3:

-Երրորդ խումբ. Այս խմբում ընդգրկել ենք մեկական անգամ վկայված հետևյալ բառերը՝ i(?) šiaše «(*)», Iašinaše «(*)», alāše «(*)»: Անհասկանալի և ստույգ չլինելու պատճառով այս խմբի բառերը չենք քննարկի:

VII.3 ԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՆԱԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախադրությունները և ետադրությունները հայերենում: Հայերենում նախդիրների հետ միասին կամ մնամատիպ դերում հանդես եկող այլ բառեր ևս, որոնք կոչվում են նախադրություններ/ետադրությունները: Դրանք հիմնականում տարբեր խոսքի մասերից ծագող քարացած հոլովածներ են, որոնք պահանջում են որևէ հոլովով դրված խնդիր (նախադրության խնդիր) և այդ դեպքում հանդես են գալիս իրենց որո-

⁶⁷¹ Գրված է բրոնզե կանթեղի ճռի (հենակի) վրա: Մասնագիտական գրականությունում քարզանվում է «կանթեղ, մոմակալ» [I.Diakonoff, 1971, էջ. 81, ծան. 85], «կանթեղ, լապտեր» [Г.Вильгельм, ДВ, 5, էջ. 97], «հենակ, դրոց» (տե՛ս III.2.4 կետ 5) և այլն: Տե՛ս նաև Н.Арутюнян, 2001(КУКН), էջ 310 ծան. 1, 468:
⁶⁷² Այդպես է քարզանվում Ն.Հարությունյանի՝ կասկածի տակ առնելով -a=še-ի ներգոյական իմաստը [2001(КУКН), էջ 162 և 165, ծան. 59]:

չակի իմաստով: Նախադրությունները, ի տարբերություն նախդիրների, չեն կորցրել իրենց բառային անկախությունը և հոլովական կապակցություններից դուրս էլ գործածվում են իրենց բառային նշանակությամբ: Նախադրությունների մեծ մասը հայերենում նախադաս գործածություն ունի, որոշները գործածվում են քե՛ նախադաս, քե՛ ետադաս, իսկ մի քանիսը միայն ետադաս (ետադրություններ են): Հայերենում նախադրությունները գործածվում են հայցական, սեռական, քացառական և գործիական հոլովներով դրված խնդիրների հետ⁶⁷³:

2. Ետադրությունները ուրարտերենում: Մասնագիտական գրականությունում ուրարտերենի համար ետադրություններ կամ նախադրություններ, որպես այդպիսիք, չեն առանձնացվում: Այստեղ սովորաբար խոսքը ետդիրների մասին է, որոնք կցվում են բառին՝ հանդես գալով որպես մեկ միասնական բառածև, միևնույն ժամանակ նշվում է, որ դրանցից որոշները հնարավոր է, որ հանդես են գալիս առանձին⁶⁷⁴: Այսինքն դրանք կարելի է համարել ետադրություններ կամ նախադրություններ: Դրանցից կարելի է նշել առնվազն հետևյալները՝ peṭi (սովորաբար ընթերցվում է bedi), kurune, pei (=ne) բառերը, վերջինս մասնագիտական գրականությունում սխալմամբ համարվում է ետդիր կամ մույնիսկ հոլովային վերջավորություն, ինչը ճիշտ չէ (մանրամասն տե՛ս ստորև): Դրանք ներկայացնենք առանձին-առանձին:

2.1 pei(=ne), -pi/e «տակ»: Թարգմանությունը տալիս է Յ.Ֆրիդրիխը՝ չգանազանելով երկու տարբեր գրությունները⁶⁷⁵: Ի.Դյակոնովը p(e)i-ն համարում է ինչ-որ մի քանի տակ գտնվելու, իսկ p(e)i=ne-ն՝ ելքի (ինչ-որ մի քանի տակից) իմաստ արտահայտող հոլովային վերջավորություններ ("субессивный (отложительный)")՝ մույնպես չգանազանելով երկու գրությունները: Մակայն p(e)i=ne-ի ետդիր կամ հոլովային վերջավորություն դիտարկումը անհնար է, քանի որ մի շարք արձանագրություններում (КУКН.58b₁, 58d₉, 78₄, 118a,b,c₁₆ և այլն) այն հստակորեն տարանջատվում է ենթադրյալ բառահիմքից, որին իրր քե կցված է՝ գրվելով առանձին, մոր տողից: Մինչդեռ ուրարտերենում բառերը, ներառյալ նրանց հոլովային վերջավորությունները, չեն տողադարձվում: Ուստի այս

⁶⁷³ Հայերենում նախադրությունների և դրանց կիրառման մասին առավել մանրամասն տե՛ս Ա.Արքախանյան, 1976, էջ 261-266; Հ.Ավետիսյան, 1986, էջ 237-243 և այլն:
⁶⁷⁴ Տե՛ս, օրինակ, G.Wilhelm, 2004, էջ 134:
⁶⁷⁵ J.Friedrich, "Caucasica", 8, Leipzig, 1931, էջ 133 և ծան. 1:

pei-ն պետք է համարել առանձին բառ: Այն իր գործածությամբ շատ մոտ է kurune և peṭi ետադրություններին (տե՛ս ստորև): Ինչ վերաբերում է pei (=ne) և -pi/e տարբերակներին, ապա հարցը պարզաբանելու համար նշենք դրանց բոլոր վկայությունները՝ բաժանելով երկու խմբի՝ առաջին խմբում ներառնելով «անեծքի» և «հարկման» կաղապարային բանաձևերը, իսկ երկրորդում՝ մնացած բոլորը:

- Առաջին խումբ.

(324) 'al-du-bi (^{DRU/KUR}X/LUGAL X)me-ši-ni pi-(e)-i եմ-բարկեցի(*) (X-երկիրը/քաղաքը/քազավորին/հարկի տակ լինելու պայմանով (*)) [KYKH 47₁₃, 53₁₅, 174 B1₁₈ և այլն] .

(325) tú-ri-ni-ni Դgal-di-še ԴIM-še ԴUTU-še DINGIR^{MES}-še (ma-ni ar-mu-zi...) ԴUTU-ni pi-(e)-i-(ni)⁶⁷⁶ - «բող ոչնչացնեն Խալդը, ... աստվածները՝ իրեն, արմատներին... արևի տակ(ից)» [KYKH 242 AII-AI₂₀, 244₃₇, 273₁₀ և այլն]:

- Երկրորդ խումբ.

(326) i-nu-ka-ni e-si-ni-ni ANŠU.KUR.RA ar-ši-bi-ni ti-ni ԴMe-nu-a-pi-i a-iš-ti-bi 22 1KUŠ - «այն տեղից արծիվի անունով ձին, Մենուայի տակ, ցատկեց 22 1KUŠ» [KYKH 136_{5,9}] .

(327) ...i-ni Է 'a-ri šu-ni Է a-ši-ḫu-si-ni pi-i - «... այս շտեմարանը լցրեց՝ a-ši-ḫu-si-ni-ի (ինչ-որ շինություն) տակ» [KYKH 148₂₇, 149₂₈] .

(328) - a-li LÚ^UKU^{MES} GÍŠ^Ssur-gi-ni-ka-i-ni ku-lu-ár-ši-bi ša-tu-ni ŠADU^Uš-ki-a-ni ŠADU^UBam-ni ba-ad-gu-lu-bi za-aš-gu-bi a-li-pi ku-lu-ár-ši-bi ԴIM-še GIBÍL-ni - «... այն մարդկանց խումբը, որը սրի առջև փախավ՝ բռնեց Ուսկիանի լեռը, Բամնի լեռը (ես) շրջապատեցի, ոչնչացրի, մյուսը, որը փախել էր, Թեշեբան այրեց» [KYKH 241F₂₇] .

(329) a-li A^{8(A)} [m]Ru-sa-ḫi-na-ú-e ip-šá-du-li-e [ab]-si-la-ti-ni a-li-pi a-bi-li-ú-[li?] - «» [KYKH 391₃₃] .

⁶⁷⁶ Միայն մեկ անգամ ունենք pi-né, մյուս բոլոր դեպքերում առկա է pi-(e)-i-(né): Պետք է ընթերցել՝ pe-(e)-i-(ne) (pei(=ne)):

(330) ... GÍŠ^Sul-di-e na-ḫi-be KUR^Sú-ri-li-pi⁶⁷⁷ za-di-a-li ԴMe-nu-a-i-ni-e er-nu-tú-ḫi-e - «» [KYKH 148₂₇, 149₂₈] :

Եթե բազմաթիվ անգամ կրկնվող (324)-(325) կաղապարային արտահայտություններում, թերևս նաև (326)-(327)-ում, -pei-ի «տակ» իմաստը միանգամայն ընդունելի է, ապա նույնը դժվար է պնդել մյուսների համար՝ հատկապես (328)-(329)-ի, որտեղ ali=pi-ի «որի տակ(*)» թարգմանությունը⁶⁷⁸ համոզիչ չէ: Կասկածի տեղիք է տալիս նաև այն փաստը, որ այստեղ ունենք -pi/e, և ոչ թե -pi/e-(e)-i, ինչպես մյուսներում: Ըստ այդմ, մեզ առավել հավանական է թվում, որ այս երկու ձևերը պետք է տարանջատել միմյանցից, առաջինի՝ pei (=ne)-ի տակ անկասկած տեսնելով ետադրություն, «տակ», «տակից» իմաստով: Ինչ վերաբերում է երկրորդին, խոսքը հատկապես ali=pi/e բառաձևում առկա -pi մասնիկի մասին է, ապա նյութի սակավության պատճառով առայժմ դժվար է որևիցե ստույգ բան ասել այդ մասին: Բացառված չէ, որ ի դեմս այս -pi/e-ի գործ ունենք ինչ-որ հոլովային վերջավորության հետ:

2.2 peṭi [փեթի] – հայ. (h)ետ < *ped (սովորաբար տառադարձվում է bedi)⁶⁷⁹: (Այս բառարմատից ուրարտերենում ունենք նաև peṭia-/peṭu- «հետ տալ, շրջվել, վերադառնալ և այլն»⁶⁸⁰ բայը): Համապատասխանում է հայ. հետ, ետ < *ped «հետ, շրջել, դառնալ և այլն» բառարմատին (տե՛ս նաև III.2.3 կետ 47): Քննարկենք ուրարտ. տեքստերի բոլոր այն հատվածները, որտեղ peṭi-ի մեջ հնարավոր է տեսնել ետադրություն՝ բաժանելով դրանք երկու խմբի:

- Առաջին խումբ.

⁶⁷⁷ Գ.Մելիքիշվիլին կարդում է որպես տեղանուն՝ «Շուրիխախ...»: Զ.Գիրբալը [SMEA, XLVIII, 2002, էջ 25-26] և Մ.Խաչիկյանը [Մեթ. XXIV, 2005, էջ 477, 482 ծան. 22] առաջարկում են ^{KUR}šú-ri-le pišadiale ընթերցումը:

⁶⁷⁸ Г.Меликишвили, УЖН, էջ 388; Н.Арутюнян, 2000, էջ 433 և 466:

⁶⁷⁹ Իրականում այստեղ, նաև որոշ այլ դեպքերում, սեպագիր p-ի ճշգրիտ արտասանությունը հնարավոր չէ պարզել, քանզի պարզ չէ, թե h.-ն. *p-ն, որը հայերենում տալիս է h/, ինչպես էր հնչում ուրարտական շրջանում: Հնարավոր է, օրինակ, որ այն ունեցել է միջանկյալ f (ֆ) հնչողություն (տե՛ս, օրինակ, Գ.Չառուկյան, 1987, էջ 227): Պարզ չէ նաև, թե ինչպես է այն հնչել նաև մախաբեզվում (այս մասին տե՛ս, օրինակ, Յ.Գաբրիելյան, 2001, էջ 55-70, 120):

⁶⁸⁰ Տե՛ս. Н.Арутюнян, 2001 (KYKH), էջ 441:

- (331) ^dHal-di-ni be-di-ni ^dHal-di-i-na-ni KÁ be-di-ni ^dÁa-(ni)/^dÁ-ra-(ni)/^dNa-la-i-ni be-di-ni ma-nu-li-(ni)... - «Խալդի աստծո կողմից, Խալդի աստծո դռների կողմից, Ուա(նի)/Ուրա(նի)/Նալաիսի աստծո կողմից թող լինի...» [KYKH 20a I₁₄, II₁₄, 40 I₁₅, II₁₅, 42 I₁₄, II₁₄, 38a I₁₅, 172a₁₃].
- (332) ^dHal-di-(ni) be-di-(ni) ^dHal-di-i-na-ni KÁ be-di-(ni) ma-ni-ni - «Խալդի աստծո կողմից, Խալդի աստծո դռների կողմից թող լինի» [KYKH 20 I₁₀, II₁₀, III₁₀, 38b₅, 141yp₁, 247₈, 271₇, 278₃, 424₄, Ayanis I, Ay-susi I₆ և այլն].
- (333) ^dHal-di-ni be-di-ni DINGIR^{ME3} UKKIN be-di-ni ma-ni-ni... - «Խալդի աստծո կողմից, բոլոր աստվածների կողմից թող լինի...» [KYKH 38 I₂₄, II₄₄].
- (334) pi-li-e a-gu-bi-e ^{KUR}e-ba-ni-i-e ^{URU}A-li-a be-di-ni ^dQu-e-ra-i-na ta-ra-ma-na be-di-ni - «երկրին ջրանցք անցկացրի, Ալիա քաղաքի կողմից, Ջուերա աստծո աղբյուրների (*) կողմից» [KYKH 75₂₂].
- (335) a-še gi-i su-si-ni bi-di Խar-Խa-ru-li ta-nu-li-i-ni - «» [KYKH 392₆].
- (336) ^dHal-di-še si-li-iš-ti-li ma-si-ni-li KÁ al-zi-na-i ^dHal-di-i-na KÁ bi-di su-ú-i-ú-li-e ta-nu-li-ni - «...Խալդի աստծո դռների կողմից...(*)» [KYKH 270₁, 424₉, Ay-susi II₂ (Ayanis I)].
- (337) ^dHal-di-ni bi-di šá-ni qa-ab-qa-ri-li-ni - «Խալդի աստծո կողմից ...» [KYKH 38 I₂₅, II₄₈].
- (338) ma-ni-ni ^dHu-ṭu-i-ni-ni/^dŠi-ú-i-ni/[^dQu-ú-e]-ra bi-di-ni - «թող լինի Խուտուիի/Շիուիի/Ջուերա աստծո կողմից» [KYKH 120₄, 121₄, 277_{x1}]:

- Երկրորդ խումբ.

- (339) Խa-u-bi ^{URU}Qi-Խu-ni KUR si-lu-ni-ni šu-i(?)ni-i-a bi-di-e - «նվաճեցի Ջիխունի (քաղաքի) երկիրը silunini կողմը ծովի» [KYKH 173 II₃₀, 174A₂₁₁].
- (340) ...a-li-li ^{SADU}ba-ba-ni-li šu-ni-ia bi-di-i-e ^{SADU}A-mú-ni-ni ^{SADU}Bu-du-a-ni ^{SADU}Na-gi-li-a-ni

^{SADU}Šá-la-ta-ra-ni [^{SADU}Á-ra-e - «...Մյուս լեռները ծովի կողմը՝ Ամունիցի, Բուդուանի ...» [KYKH 407лиц.35]:

Բերված դրվագներում, ինչպես որ ընդունված է մասնագիտական գրականությունում, *bedi* (*peṭi*)=*ne*-ն քարգմանված է քացառական հոլովով՝ «կողմից» նշանակությամբ (քառավերջի -*ne*-ն ընկալվում է որպես քացառական հոլովի ցուցիչ): Մակայն ինչպես պարզորոշ երևում է առաջին խմբի օրինակներից, համանման համատեքստում առկա են *N*-(*ne*) *peṭi*=*ne*/*peṭi* և ^d*Hal**di*=*ina*=*ne* KÁ *peṭi*/^d*Hal**di*=*ina* KÁ *peṭi* հերթագայումներ. ինչը հակասում է ուրարտերենի մինչ այժմ ընդունված կանոններին, որոնց համաձայն քացառական հոլովի համար -*ne* մասնիկի առկայությունը պարտադիր է⁶⁸¹: Մյուս կողմից՝ ինչպես երևում է հոգնակի թվով դրված օրինակներից, խոսքն այստեղ, անտարակույս, քացառականի մասին է: Իրականում, ինչպես արդեն համոզվեցինք, ուրարտերենում քացառականը վկայված է ոչ միայն -*ne*, այլև -*Ø* ցուցիչով (մանրամասն տե՛ս է V.2.7): Ինչ վերաբերում է երկրորդ խմբին, ապա այստեղ ետադրության խնդիրը ստանում է -*ia* վերջավորություն, իսկ ետադրությունը՝ *peṭi*-ն դրվում է տրական հոլովով, ինչպես՝ *šui*(?)*n*=*ia* *peṭi*=*e* (339), *šu*=*n*=*ia* *peṭi*=*ie* (340): Ստացվում է, որ *peṭi* ետադրությունը տրական հոլովով դրվում է միայն այն դեպքերում, երբ նրա հետ կապակցված խնդիրը ստանում է -*ia* վերջավորություն (մանրամասն այս մասին տե՛ս հաջորդ կետը):

2.3 *kurune* [*koḥun*]⁶⁸² - հայ. կող(ս), -ուՆ-ս: Մասնագիտական գրականությունում սույն բառի նշանակության հարցում միակարծություն չկա: Գ. Մելիքիշվիլին համարում է ածական՝ «հզոր, բարձր» իմաստով, Գ. Վիլիեմսն առաջարկում է այն դիտարկել իբրև ետդիր՝ «կողմը, մտքը», «կողմից» նշանակությամբ, որը, ըստ նրա, ինչպես և *pare* մախդիրը, կարող է զործածվել զանազան հոլովների հետ⁶⁸³: Հավանաբար *kuruni*-ի մեջ պետք է տեսնել հայ. կող(ս), -ուՆ-ս <**gol* «կողմ, մտք և այլն» բառը (տե՛ս III.2.3 կետ 31), քնն հայերենում այն որպես մախադ-

⁶⁸¹ Այս մասին տե՛ս նաև Н.А.Рытунян, 1966, էջ 18, 12, ծան. 6:

⁶⁸² Հնարավոր է նաև *kuruni* ընթերցումը:

⁶⁸³ Գ. Վիլիեմսն քերտում է հետևյալ օրինակները՝ 1) *manu* *Išpušini *kuruni* **Menua*-(*ni*) *kuruni* *ḫuradi*-*na* 106 ^{CT8}GIGIR^{ME3} - «կար Իշպուիցի-ի հետ, Մի-նու-ի հետ զորքերում 106 մարտակառքեր» (*ḫuradina*՝ ներգոյական հոլով), 2) ^d*Hal**di*-(*i*) *kuru*-*ni* ^d*Hal**di*-*ni* ^{CT15}šúri-(*i*) (^{CT15}šúri-(*i*)՝ սեռական հոլով) *kuru*-*ni* - «Խալդիի կողմից, Խալդիի սրի կողմից» [ДБ, 5, 1988, էջ 96-97]:

րություն հանդես չի գալիս: Մինչդեռ ուրարտերենում կարծես թե միշտ հակառակ պատկերն է. kurune-ի անկախ գործածման վկայություն չունենք: Բերենք սույն բառի բոլոր վկայությունները՝ բաժանելով դրանք, ինչպես նախորդ դեպքում, երկու խմբի (թարգմանությունները ուղղված են մեր կողմից՝ համաձայն kurune-ի «կողքին, մոտը» իմաստի):

-Առաջին խումբ.

(341) manu ^mIš-pu-ú-i-ni ku-ru-ni ^mMe-nu-a-(ni) ku-ru-ni hu-ra-di-na x ^{GIS}GIGIR^{MES} x PIT.ĜAL.LU^{MES} ... - «Թողմվեց/մնացել էր Իշպուիինի կողմից/մոտ, Մենուայի կողմից/մոտ՝ քանակում X մարտակառքեր, X հեծյալներ...» [KYKH 32₁₃, 33₁₂, 35π. c. I₁₃, II₄₅, o. c. III₁₄, 172a₁₃].

(342) ^dĜal-di-i ku-r[u-ni] DINGIR^{MES}-na ku-ru-ni ma-ni-ni iš-ti-n[i ⁱX ar-di-še... - «Խալդիի կողմից, աստվածների կողմից թող լինի այստեղ (արքային) իշխանություն...» [KYKH 115₅].

(343) ^dĜal-di-(ni) ku-ru-ni-(ni) ^dĜal-di-ni-(ni) ^{GIS}šú-ri-(ni) ku-ru-ni-(ni) - «Խալդի աստծո կողմից, Խալդի աստծո սրի կողմից» [KYKH 33₄, 34₄, 35 I₁, II₃₁, III₃₁, 47₁, 53₁, 56₁, 173I₁₆, II₅...].

-Երկրորդ խումբ (ունենք միայն մեկ վկայություն).

(344) XIX LUGAL^{MES} i-šá-ni ap-ti-ni šu-i-ni-a-ni ^{SADU}ba-ba-ni-a [k]u-ru-ni-e - «19 երկրներ այս ասիին՝ ծովի(ծովային), լեռների/լեռան կողմը (մոտ)...» [KYKH 38913]:

Առաջին խմբի համար, ինչպես որ peči-ի դեպքում, թե՛ գոյականը (ետադրության խնդիրը), թե՛ ետադրությունը (տվյալ դեպքում՝ kurune-ն) դրված են մաքուր հիմքով, որոնց ազատորեն կարող է հավելվել -ne մասնիկը: Ըստ այդմ, ինչպես նախորդ դեպքում, առավել հավանական է, որ այստեղ գործ ունենք բացառական հոլովի հետ: Երկրորդ խմբում գոյականն ստանում է -ia-(ne) վերջավորություն, իսկ նախադրությունը (kurune-ն), ինչպես որ նախորդ (peči-ի) դեպքում, դրվում է տրական հոլովով (kuruni/e=e):

3. Ամփոփում: Այսպիսով, եթե փորձենք ամփոփել վերոշարադրյալ փաստերը, ապա ստացվում է, որ ուրարտերենում կ' peči (հայ. (h)ետ)

և՛ kurune (հայ. կող(ս), -ուս-ս) բառերը կազմում են միանման հոլովային կապակցություններ (նախադրություններ/ետադրություններ⁶⁸⁴): Նման դերում դրանք

